# ՀԱՅ ԱՋԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԲԱՂԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

14


ՀԱՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

# АРМЯНСКАЯ ЭТНОГРАФИЯ И ФОЛЬКЛОР

МАТЕРИАЛЫ И ИССЛЕДОВАНИЯ

14

РОЗА ГРИГОРЯН

# ГЕГАРКУНИК

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН • 1983

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՀԱՅ ԱՋԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՂԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14

ՌՈՋԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 1983

ԳՄԴ 82.3Հ—6
Գ 888

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ գիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա
Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ, է. Տ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ, Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆ, Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Հատորի պատասխանատու խմբագիր
բանասիրական գիտ. դոկտոր
Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գիրքը հրատարակության են նրաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտ. թեկնածուներ
Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆԸ և Վ. Գ. ՍՎԱԶԼՅԱՆԸ

Գրիգորյան Ռ. Հ.
Գ 888 *Գեղարքունիք /Հատորի պատ. խմբ. Ս. Բ. Հարությունյան.— Եր.։ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983... էջ, 1 թերթ նկ. (Հայ ազգագր. և բանահյուս., Նյութեր և ուսումնասիր. /ՀՍՍՀ ԳԱ Հնագիտ. և ազգագր. ինստ. [Պր. 14]).*

*Ժողովածուն ընդգրկում է հարուստ բանահյուսական նյութ, գրառված XIX դարում Ալաշկերտից, Մուշից, Բայազետից և Խոյից Սևանի ավազան գաղթած հայ վերաբնակիչների շառավիղներից։ Ժողովածուն բովանդակում է հեքիաթներ, զրույցներ, առակներ, ավանդություններ, ինչպես նաև «Սասնա ծռեր» և «Րոստոմ Զալ» էպոսների նոր տարբերակներ, բազմաթիվ երգեր, առած-ասացվածքներ, հմայական բանահյուսության նմուշներ և ազգագրական այլ նյութեր։ Ժողովածուն ունի ընդարձակ ներածություն, ծանոթագրություններ, նոտագրություններ, բառարան և ցանկեր։ Նախատեսված է բանասերների, ժողովրդական բանահյուսությամբ զբաղվողների և ընթերցող լայն շրջանների համար։*

Հ 0508000000 / 703(02)—83 23—82

ԳՄԴ 82.3Հ—6
Արփ

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983



Տեսարան Սևանա կղզուց

# ԱՌԱՋԱԲԱՆ

*Սևանա լճի ավազանի հյուսիսարևմտյան, հարավարևմտյան և հարավարևելյան մասերում են ընկած ներկայիս Սևանի, Կամոյի (նախկին Նոր Բայազետ), Մարտունու և Վարդենիսի (նախկին Բասարգեչար) շրջանները, որոնք մտնում էին պատմական Սյունյաց աշխարհի Գեղարքունիք և Սոդք գավառների կազմում։ Տվյալ շրջանների հայկական հոծ ազգաբնակչության հիմնական կազմը սերում է 1827—28 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Արևմտյան Հայաստանի այլևայլ վայրերից և Պարսկաստանի հայաբնակ գավառներից զանգվածաբար Արևելյան Հայաստան գաղթած հայերից, որոնք պատկանում էին ազգագրական տարբեր խմբերի, իրենց սոցիալ-բարբառային խայտաբղետ բազմազանությամբ։*

*Այդ ազգագրական տարբեր խմբերի բնավորության և հոգեբանության, ինչպես նաև բարբառային ու խոսվածքային բազմազանությունը շատ կողմերով պահպանվում է և այսօր։ Վարդենիսի շրջանի 35 գյուղերից հայաբնակ են 6-ը՝ Ակունք, Կարճաղբյուր, Նորակերտ, Ծովակ, Զիլակլու, Յարփղլու, իսկ 5 գյուղեր ունեն հայ և ադրբեջանցի խառն բնակչություն։*

*Շրջանի հայությունը խոսում է Մշո, Խլաթի, Կարնո, Վանի, Բիթլիսի, Ռշտունիքի, Երզնկայի, Բայազետի, Դիադինի բարբառներով ու խոսվածքներով։*

*Մարտունու շրջանի խոսվածքների մասին առաջին տեղեկությունը հաղորդում է Հր. Աճառյանը, տակավին 1911 թ.։ «Վերջին երկու ռուս-տաճկական պատերազմներու ժամանակ,— գրում է նա,— Մուշեն և Ալաշկերտեն երկու խումբ մեծ գաղթականություն դուրս գալով՝ հաստատվեցավ Երևանի նահանգը, այն է՝ Ապարան, Նոր Բայազետի հարավային կողմերը՝ Սևանա լճին եզերքներուն վրա»[1]։*

*Ներկայումս Մարտունու շրջանն ունի 19 գյուղ, ուր գերիշխողը Ալաշկերտի ենթաբարբառն է, խոսում են նաև Մշո բարբառով, Չլկանի, Համոկանի, Դուդաղի, Թոփրաղ կալեի, Մանգասարի խոսվածքներով։*

*Կամոյի շրջանն ունի 14 բնակավայր, որոնցից չորսի (Արծվաքար, Հացառատ, Բատիկյան, Կարմիր) բնակիչները նախկին հինքայազեցիներ են և լավ պահպանել են մայրենի խոսվածքը։ Կան գյուղեր, որոնց բնակչության հիմնական մասը Ալաշկերտից, Սալմաստից, Խոյից եկած վերաբնակիչների շառավիղներն են։*

*Սևանի շրջանի ազգագրական կազմը թեպետ հիմնականում բաղկացած է XIX դ. առաջին քառորդին Մակուից տեղահանված հայ ազգաբնակչությունից, այնուհանդերձ մի քանի գյուղերում կան նաև Մուշից, Ալաշկերտից, Խլաթից, Բիթլիսից, Բասենից, Խոյից եկած վերաբնակիչներ։*

*Շրջանում կան 12 բնակավայրեր, մեկ բանավան և մեկ քաղաք։ Որոշ բնակավայրերում հայերն ապրում են ռուսների և ադրբեջանցիների հետ խառն, իսկ Սևան քաղաքում հայ ազգաբնակչությունը հավաքված է տարբեր գյուղերից և խոսում է տարբեր բարբառներով[2]։*

*Գեղարքունիքի հայ բնակչության ազգագրական և բարբառային խայտաբղետ բազմազանությունը իր նկատելի կնիքն է դրել նրա հոգևոր մշակույթի, մասնավորապես բանահյուսության վրա, որն աչքի է ընկնում ժանրային ու ոճաբարբառային պեսպեսությամբ, հյութերի առատությամբ, բնաշխարհիկի և տեղականի, բնիկի*

---

[1] Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն էաժԸ, Մոսկվա, Նոր Նախիջևան, 1911, էջ 112։

*Գեղարքունիքի (Սևանի ավազան) կազմի մեջ մտնող Կրասնոսելսկի շրջանի ազգաբնակչությունը կազմված է հիմնականում Ղարաբաղի, Շամշադինի, Արդահանի և Կարսի հայ վերաբնակիչներից, որոնք իրենց ազգագրական և բարբառային յուրօրինակություններով առանձնանում են, ուստի և չեն ընդգրկվել սույն ժողովածուում։*

[2] Ռ. Հ. Բաղրամյան, Հայերեն բարբառներ, Սևանա լճի ավազանի խոսվածքները, Երևան, 1972։

և եկամտի, նորի և ավանդականի փոխազդեցությամբ և փոխմիաձուլմամբ։

Տարիներ շարունակ զբաղվելով Գեղարքունիքի հյուսիսարևմտյան և հարավարևելյան շրջանների (Սևան, Կամո, Մարտունի, Վարդենիս) հայ բանահյուսության նյութերի գրառմամբ (տե՛ս քարտեզը), հիմնականում նպատակ ենք ունեցել ժամանակի կորստից փրկել տվյալ տեղավայրի հայ ազգաբնակչության բանավոր ավանդության մեջ տակավին գոյատևող հարուստ և բազմազան ստեղծագործությունները, միաժամանակ փորձել ենք պարզել ազգագրական տարբեր խմբերի բանահյուսական ավանդապահության աստիճանը, գրառված նյութերի բանահյուսական որակը, կապված աշխարհագրական որոշակի տեղաշարժերի հետ, բանասացների սեռատարիքային հատկանիշներն ու դրանց կապը սոցիալ-պատմական ու հոգեբանական որոշ իրողությունների հետ։

Այս խնդիրները շոշափելիս և գրառված նյութերը արխիվավորելիս առաջնորդվել ենք բանասիրական գիտությունների դոկտոր Ի. Գ. Լևինի հայ բանահյուսական արխիվի վերլուծական վավերագրման համար մշակած և այժմ կիրառվող կոդավորման համակարգից և քանակական վերլուծումների եղանակից։

Հիմք է ընդունված Լևինի առաջադրած հարցաթերթիկը, որի տասը կետից մենք նախընտրեցինք առաջին վեցը.

a. *Որտե՞ղ է պահվում նյութը (ֆոնդի համարը)*

b. *Նյութի գրառման վայրը և ծագումը*

c. *Ե՞րբ է գրառված (տարեթիվը)*

d. *Ումի՞ց է գրառված (ասացողի սեռը՝ f—կին, m—տղամարդ և տարիքը)*

e. *Գրառողը՝ բանահավաքը, սեռը և տարիքը*

f. *Ի՞նչ է գրառված՝ ժանրը*

| Ասացողի տարիքը | Թուհարը |
|---|---|
| 8—15 | 1 |
| 16—20 | 2 |
| 21—29 | 3 |
| 30—39 | 4 |
| 40—49 | 5 |
| 50—59 | 6 |
| 60—69 | 7 |
| 70—79 | 8 |
| 80— | 9 |

Գրառված բոլոր նյութերը պահվում են ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության արխիվի FG ֆոնդում (Ռոզա Գրիգորյանի ֆոնդ), № 0001—6080 համարակալման տակ։

Բանահյուսական և ազգագրական յուրաքանչյուր միավոր մշակված է և քարտագրված. քարտերի ընդհանուր թիվը 4273 է, որից բանահյուսականը 3000, իսկ մնացյալ 1273-ը ազգագրական և լեզվական նյութերն են։ Գրառված տեքստերը մշակելիս պարզվեց, որ քարտագրված և ֆոնդ են հանձնված հետևյալ նյութերը (տե՛ս աղ. № 1)։

Հավաքված նյութերի բազմաժանրայնության այս պատկերը պայմանավորված է հավաքչական աշխատանքի ընդհանուր և կայուն սկզբունքով, այն է՝ գրառել և կորստից փրկել բոլոր ժանրերի ստեղծագործությունները։

Ինչպես երևում է № 1 աղյուսակի տվյալներից, ազգագրական վերնհիշյալ խմբերից գրանցված ժողովրդագիտական նյութերի մեջ ազգագրությունը փոքր քանակ է կազմում (FG 5695. 5763)։ Պատճառը եղել է ոչ թե ազգագրական նյութերի սակավությունն այդ շրջաններում, այլ բանահավաքի առավել որոշակի նպատակադրումը։ Մեր նպատակն է եղել գրառել սոսկ ժողովրդական բանահյուսությունը և անդրադարձել ենք ազգագրական նյութերին այնքանով, որքանով դրանք առնչվել են բանահյուսական որոշակի ստեղծագործությունների հետ կամ ունեցել են ընդհանուր ժողովրդագիտական արժեք։ Մեսերն, օրինակ, գրառվել են այն դեպքում, երբ դրանք կապված են եղել որոշ տեսակի երգերի (հարսանեկան, սգո) հետ, կամ ինչ-որ չափով մեկնաբանել բանահյուսական նյութերի կիրառական-կենցաղային հատկանիշները։ Հավատալիքներին համեմատաբար առավել նշանակալից տեղ ենք հատկացրել, քանզի դրանք հավասարապես ունեն թե՛ բանահյուսական և թե՛ ազգագրական արժեք։

Ժողովրդագիտական նյութերի գրառման ընթացքում մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել, թե ասացողը ումի՞ց է լսել, սովորել, որտեղի՞ց, ի՞նչ ճանապարհով են այս նյութերը հասել մինչև մեր օրերը։ Բազմաբնույթ ասացողների մեծաքանչուն մասը առաջադրված այդ հարցին պատասխանում էր. «մեր ջոջերից, պապերից, հանցըվորներից ենք լսած», «պապըս կըսեր,—ասում է Մարտունու շրջանի բազմաշնորհ բանասաց 96-ամյա Գեղամ Ավետիսյանը,—էտ պատմութիններ լսած ա սանախեր Սրքեչից հլա Մանկասար* ապրած ժամանակ...», կամ, մեկ այլ ասացող, դարձյալ Մարտունու շրջանից, վիպա-

* Ալաշկերտի գյուղերից։

| Նյութի տեսակը | | Գրառված նյութերն ըստ տարեթվերի | | | | | | | Ընդամենը | % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1971 | 1972 | 1973 | 1974 | 1975 | 1976 | 1977 | | |
| Ժող. բժշկ. | F 6.2.2 | 10 | 24 | 11 | 8 | 32 | 15 | — | 100 | 2.3 |
| Գերբ. գիտելիք | F 6.4.0 | 2 | 7 | 5 | 13 | — | 18 | 15 | 60 | 1.4 |
| Դևեր և չար ոգիներ | F 6.4.2 | — | 2 | 4 | — | 3 | 1 | — | 10 | 0.2 |
| Սուրբ մարդիկ | F 6.4.4 | 1 | 1 | — | — | 3 | — | 1 | 6 | 0.1 |
| Սուրբ իրեր և նշաններ | F 6.4.5 | 10 | 5 | 8 | 10 | 10 | 3 | 4 | 50 | 1.2 |
| Սուրբ արարողություն | F 6.5.3 | 3 | — | 3 | 3 | — | — | 4 | 13 | 0.3 |
| Բառային ֆոնդ | F 7.0.2 | 101 | 105 | 98 | 116 | 53 | 97 | 96 | 666 | 15.6 |
| Բանաձևեր | P 7.1.0 | 1 | 3 | — | 4 | 2 | — | — | 10 | 0.2 |
| Մաղթանք, օրհնանք | F 7.1.3 | 5 | 4 | — | 20 | 11 | 8 | 18 | 66 | 1.5 |
| Աղոթք | F 7.1.4 | — | — | 4 | — | 3 | 2 | 1 | 10 | 0.2 |
| Անեծք | F 7.1.5 | 29 | — | 41 | 35 | 46 | 26 | 33 | 210 | 4.9 |
| Պատմողական բանաձևեր | F 7.1.8 | 15 | 19 | 14 | 17 | 14 | — | 32 | 111 | 2.6 |
| Պատմողական վերջաբաններ | F 7.1.9 | 10 | 7 | 6 | 11 | 8 | 13 | 10 | 65 | 1.5 |
| Առած-ասացվածքներ | F 7.2.1 | 103 | 91 | 87 | 68 | 123 | 69 | 59 | 600 | 14.0 |
| Ոչխար | F 7.2.4 | — | 3 | 2 | — | 10 | — | — | 15 | 0.3 |
| Շուտասելուկ | F 7.2.5 | 1 | — | 2 | — | 3 | 2 | 2 | 10 | 0.2 |
| Դարձվածներ | F 7.2.8 | 67 | 133 | 161 | 135 | 149 | 118 | 127 | 890 | 20.8 |
| Հանելուկներ | F 7.3.0 | 15 | 27 | 31 | 4 | 16 | 12 | 45 | 150 | 3.5 |
| Հիմար հանելուկներ | F 7.3.1 | 2 | — | 7 | — | — | 1 | — | 10 | 0.2 |
| Հուշապատում | F 8.1 | — | — | — | — | — | 2 | 2 | 4 | 0.1 |
| Ավանդություններ | F 8.2 | 1 | 1 | 1 | 1 | 3 | — | 1 | 8 | 0.2 |
| Առակներ | F 8.3 | 5 | 9 | 7 | 5 | 11 | 6 | 7 | 50 | 1.2 |
| Հեքիաթներ | F 8.4 | 11 | 15 | 9 | 19 | 8 | 16 | 2 | 80 | 1.9 |
| Սիրավեպ | F 8.5 | — | 2 | — | 3 | — | — | — | 6 | 0.1 |
| Սառնա ծռեր | F 9.1.6 | 2 | — | — | — | 3 | 2 | — | 7 | 0.1 |
| Ժող. վեպեր | F 9.1.7 | 1 | 1 | — | 2 | 1 | 1 | — | 6 | 0.1 |
| Աշուղական երգեր | F 9.3 | 17 | 41 | 22 | 15 | 27 | 49 | 29 | 200 | 4.7 |
| Ծաղրիչներ | F 9.5 | 87 | 123 | 93 | 75 | 151 | 119 | 2 | 650 | 15.2 |
| Երգեր | F 9.6 | 31 | 43 | 27 | 18 | 41 | 17 | 33 | 210 | 4.9 |
| | Ընդամենը | 530 | 666 | 643 | 582 | 730 | 597 | 524 | 4273 | 100 |
| | Տոկոս | 12.4 | 15.6 | 15.0 | 13.6 | 17.1 | 14.0 | 12.3 | | |

սաց Հայկազ Մկրտչյանը մեր առաջադրած հարցին, թե ումի՞ց, ի՞նչ ճանապարհով են նրան հասել իր հաղորդած նյութերը, պատասխանեց. «Պապերս Ալաշկերտա Բաթնոս գյուղից են, ես չըմտեսի էնոնց, հըմա բաթնոսցի Ծղոյ Արշակ լսել էր իմ պապերուց «Ծուռերու» պատմութենն, էնորից էլ ես եմ լսած ու սովրած»։

Հիմք ընդունելով բանասացների հաղորդումները, մենք, երբ լրացնում էինք «Նյութերի գրառման վայրը» հարցը, նկատեցինք, որ այն չի համընկնում ծագման վայրի հետ, ուստի և նյութերի վավերագրման ընթացքում անհրաժեշտորեն այդ կետում նշվեց երկու տեղավայր՝ նյութի գրառման և ծագման վայրը։ Ինչո՞վ է բացատրվում այս երևույթը. եթե մի կողմից այն առնչվում և պատճառաբանվում է XIX դ. հասարակական, քաղաքական և ազգային տեղաշարժերով, գաղթով, վերաբնակեցմամբ, ապա մյուս կողմից խորանալով նյութերի ծագման բուն հայրենիքի հարցի մեջ, մեր առաջ հնարավորություն է բացվում պարզելու, թե ի՞նչ է բերված նոր հայրենիք և ավանդապահության ի՞նչ մակարդակի վրա է տվյալ ազգագրական խումբը, հարցեր, որոնց անդրադառնալիս նկատում ենք ավանդապահության երկու մակարդակ։ Գրառված նյութերի 80%-ը բաժին է ընկնում Մուշ, Ալաշկերտ, Դիադին հատվածներին։ Սա նյութերի քանակային ընդհանուր պատկերն է։

Նկատվում է նաև, որ վիպական բանահյուսությունը ազգագրական այս գոտիներում է գերակշռում և հենց այս՝ Մուշ, Ալաշկերտ, Դիադին, տեղավայրերի վերաբնակիչների շառավիղներից է, որ գրառվել է ժողովրդական «Սասնա ծռեր» վեպը։

Ազգագրական այս խմբերի ավանդապահության աստիճանը որոշելիս, իբրև դրական հանգամանք պետք է նշել նաև իրանական և քրդական վեպերը ևս պահպանելն ու մինչև մեր օրերը հասցնելը։ Եթե «Սասնա ծռերը» իբրև հոգեհարազատ, սեփական մասունք են պահպանել, ապա օտար, հարևան ժողովուրդների բանահյուսական արժեքները, որոնք, ամենայն հավանականությամբ, հին Հայրենիքում պատմվող ավանդույթ են եղել, սրբությամբ պահպանելը և հաղորդելը խոսում է տվյալ ազգագրական գոտու ընդհանուր ավանդապահական մակարդակի և վերազգային կերտվածքի մասին։

Նյութերը գրառվել են տարբեր սեռատարիքային խմբերից (տե՛ս բանասացների սեռատարիքային խմբերի աղ. № 2)։ Աղյուսակում պատկերված են 1971—1977 թթ. տվյալները, ըստ որոնց նկատվում է անհամամասնություն տղամարդ և կին բանասացների տոկոսային հարաբերությունում։

Բանասացների սոցիալական կազմը միատարր է, հիմնականում գյուղացիներ, մասնագիտական պատականելիության հարցում ևս նկատվում է միատարրություն, համարյա բոլոր ասացողներն էլ հողագործությամբ կամ անասնապահությամբ զբաղվող գյուղացիներ են՝ բաց առյալ 1—2 դեպք, որ գյուղական ուսուցիչներ էին։

Աղյուսակից (№ 2) երևում է, որ ասացողների սեռային խմբերի մեջ գերիշխողը բոլոր տարիներում եղել է կին բանասացը (75 %), իսկ մնացյալ 25 %-ը կազմել են տղամարդ ասացողները։

Այս անհամամասնությունն ունի իր առարկայական և անձնական պատճառները։

Հարցին բավարար պատասխան տալու համար դիմենք № 1 աղյուսակին, ուր տրված են հավաքված նյութերը ըստ քանակի և տարիների։ Տախտակում նկատվող ժանրերի քանակային անհամամասնությունը խոսում է այն մասին, որ բանահյուսության որոշ տեսակներ քանակապես գերիշխում են հատկապես կին բանասացների շրջանում։

Այդպիսին է, օրինակ, ժողովրդական խաղիկը, որն առկա է բոլոր կին բանասացների երգացանկում և կազմում է մեծ տոկոս, իսկ տղամարդ բանասացների մոտ կամ իսպառ բացակայում է, կամ շատ քիչ տոկոս է կազմում (բացառություն է կազմում բոլոր ժանրերի համար Գեղամ Ավետիսյանը)։ Այդպիսի ժանրերից են նաև անեծքը, օրհնանքը, մասամբ նաև հմայական աղոթքը, որոնց հիմնական կրողներն այսօր կանայք են և տղամարդկանց շրջանում հազվադեպ են ասվում։ Սա հարցի առարկայական կողմն է։

Աղյուսակ № 2

| Գրառման տարեթիվը | Նյութերի քանակը | Բանասացի սեռը | Բանասացների սեռատարիքային խմբերը | | | | | | | | | Ընդհանուրի %-ը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | |
| 1971 | 530 | m | | | | | | 1 | 7 | 19 | 26 | 38 % |
| | | f | | | | | 10 | 9 | 18 | 52 | 24 | 62 % |
| 1972 | 666 | m | | | | | | | 1 | 16 | 12 | 26 % |
| | | f | | | | | 9 | 8 | 11 | 38 | 16 | 74 % |
| 1973 | 643 | m | | | | | | | 2 | 13 | 11 | 25 % |
| | | f | | | | 2 | 6 | 7 | 9 | 38 | 15 | 75 % |
| 1974 | 582 | m | | | | | | 1 | 1 | 10 | 8 | 24 % |
| | | f | | | | | 4 | 6 | 8 | 31 | 14 | 76 % |
| 1975 | 730 | m | | | | | | | 1 | 8 | 8 | 20 % |
| | | f | | | | 1 | 4 | 4 | 6 | 38 | 14 | 80 % |
| 1976 | 597 | m | | | | | | | 2 | 12 | 14 | 28 % |
| | | f | | | | | 3 | 9 | 9 | 36 | 15 | 72 % |
| 1977 | 524 | m | | | | | | 1 | 1 | 10 | 8 | 25 % |
| | | f | | | | 1 | 3 | 8 | 8 | 30 | 13 | 75 % |

Անձնականն այն է, որ բանահավաքը լինելով կին, կին բանասացների հետ գործնական ու հոգեբանական առավել սերտ կապեր ու շփումներ է կարողացել հաստատել։ Կին երգասացից ավելի հեշտ է դուրս կորզել «աղջկա խաղեր» (խաղիկներն այդպես են անվանվում Սևանի ավա-

| Նյութի տեսակը | Ընդհանուրը | Բանասացի սեռը | | | |
|---|---|---|---|---|---|
| | | f | | m | |
| | | քանակը | % | քանակը | % |
| F 6.2.2 | 100 | 80 | 80 | 20 | 20 |
| F 6.4.0 | 60 | 55 | 92 | 5 | 80 |
| F 6.4.2 | 10 | 6 | 60 | 4 | 40 |
| F 6.4.4 | 6 | 6 | 100 | — | — |
| F 6.4.5 | 50 | 40 | 80 | 10 | 20 |
| F 6.5.3 | 13 | 7 | 54 | 6 | 46 |
| F 7.1.0 | 10 | 4 | 40 | 6 | 60 |
| F 7.1.3 | 66 | 50 | 76 | 16 | 24 |
| F 7.1.4 | 10 | 6 | 60 | 4 | 40 |
| F 7.1.5 | 210 | 190 | 90 | 20 | 10 |
| F 7.1.8 | 111 | 80 | 72 | 31 | 28 |
| F 7.1.9 | 65 | 35 | 54 | 30 | 46 |
| F 7.2.1 | 600 | 303 | 51 | 297 | 49 |
| F 7.2.4 | 15 | 10 | 67 | 5 | 33 |
| F 7.2.5 | 10 | 8 | 80 | 2 | 20 |
| F 7.3.0 | 150 | 80 | 53 | 70 | 47 |
| F 7.3.1 | 10 | — | — | 10 | 100 |
| F 8.1 | 4 | 2 | 50 | 2 | 50 |
| F 8.2 | 8 | 2 | 25 | 6 | 75 |
| F 8.3 | 50 | 15 | 30 | 35 | 70 |
| F 8 4 | 80 | 16 | 20 | 64 | 80 |
| F 8.5 | 6 | 2 | 33 | 4 | 77 |
| F 9.1.6 | 7 | 2 | 29 | 5 | 71 |
| F 9.1.7 | 6 | 1 | 17 | 5 | 83 |
| F 9.3 | 200 | 126 | 63 | 74 | 37 |
| F 9.5 | 650 | 425 | 65 | 225 | 35 |
| F 9.6 | 210 | 132 | 63 | 78 | 37 |

զանում) երգատեսակը, քան տղամարդկանցից, որոնք արհամարհանքով և ծաղրով են վերաբերվում «աղջկա խաղեր» երգատեսակին։

Գեղջուկ կանայք, մանավանդ երիտասարդները, անգամ մեր օրերում, դժվար են բացվում տղամարդ բանահավաքների մոտ, այն էլ քաղաքից եկած անծանոթների։ Մինչդեռ կին բանահավաքների նկատմամբ, թեկուզ օտար և անծանոթ, դյուրին և հոժարակամությամբ են դրսևորում իրենց իմացությունները։ Մյուս կողմից՝ կին բանահավաքն ինքն է գրեթե նույն դժվարությանը հանդիպում տղամարդ բանասացների հետ շփվելիս, որոնք պատշաճի և անպատշաճի սահմանները նկատի ունենալով, ամեն ինչ չէ, որ կարող են ասել-պատմել մի անծանոթ կնոջ, կամ կին բանահավաքն ինքը, միևնույն հոգեբանական արգելքով, չի կարողանում տղամարդկանցից կորզել այն ամենը, ինչ անհրաժեշտ է այսօրվա ժողովրդագիտին։ Այնուհանդերձ, մեր տևական գրառումների ընթացքում, որքան հնարավոր է եղել, աշխատել ենք հաղթահարել այդ հոգեբանական արգելքները և երկու սեռերից էլ հավասարապես գրանցել բանահյուսական բոլոր կարգի արժեքավոր նյութերը։

Եվ եթե մեր գրառած բանահյուսական տեսակների միջև քանակական որոշակի անհամամասնություններ կան, ապա դրանք, կրկնում ենք, հիմնականում արդյունք են առարկայական իրողության։

Բանահյուսական կենսունակ ժանր է առած-ասացվածքը, որը կենցաղավարում է թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց շրջանում հավասարապես, այդ են վկայում նաև № 3 աղյուսակի տվյալները։ Վիպական երկարաշունչ ստեղծագործությունների (հեքիաթ, ղրույց, վեպ) կրողներն հիմնականում տարիքային 7. 8. 9. խմբերին պատկանող տղամարդ բանասացներն են։

Այսպես, գրառված 80 հեքիաթի 80 %-ը բաժին է ընկնում 8.9 տարիքային խմբերին պատկանող տղամարդ ասացողներին, կանայք ավելի հակված են երգային բանահյուսությանը, մանր ժանրեր և ղրույցներ հաղորդելուն (տե՛ս աղյուսակ № 3)։

Տարիների մեր բանահավաքչական դիտումները (տե՛ս նյութերի գրառման վայրերի սխեմատիկ քարտեզը) մեզ բերել են այն համոզման, որ Սևանում և Կամոյում ավանդական բանահյուսությունը իր տեղը աստիճանաբար զիջում է նոր քաղաքային տիպի երգարվեստին, անեկդոտին, ղրույցին և զվարճախոսությանը։

Քաղաքային կենցաղի ներթափանցումը ևս պետք է մղել կամ մոռացության մատնել գյուղաշխարհի կենցաղն իր վարքուբարքով և ավանդական սովորություններով։ Նյութերը տոկոսային գերակշռություն են կազմում Մարտունիում և Վարդենիսում։ Վարդենիսի և Մարտունու բնակիչները Ալաշկերտից, Դիադինից, Մուշից գաղթած վերաբնակիչների շառավիղներն են, որոնք իրենց ազգագրական նկարագրով ավելի պահպանողական են ու ավանդապահ։

Մինչև 1972 թ. Վարդենիսում և բոլորովին վերջերս (1976—77 թթ.) Մարտունիում կային հեքիաթասերներ, որոնք օդաններում ձմռան երկար գիշերներին պատմում էին հեքիաթներ։ Այս փաստը եթե մի կողմից վկայում է հիշյալ բնակավայրի հայ ազգաբնակչության բանահյուսական ավանդապահության մասին, ապա մյուս կողմից հավաստում է բանահյուսական որոշակի ժանրերի տվյալ ազգագրական գոտում ակտիվ կենցաղավարելու պրոցեսը, որի արդյունքը քա-

նակային և որակային արտահայտությամբ տըրված է № 1 աղյուսակում։

Բանահյուսական այս հնամենի ավանդույթի պահպանումը հիմնականում նկատվում է Ալաշկերտից, Մուշից, Դիադինից եկած ազգագրական խմբավորումների սերունդների շրջանում։ Ազգագրական այս գոտիների սեռատարիքային 7, 8, 9 խմբերի բանասացներից են գրի առնվել ավանդական բանահյուսության բազմաթիվ նմուշներ։

Սևանի ավազանի հայ բնակչության բազմատարբերության պայմաններում նկատվում է ազգագրական առանձին խմբերի համակենտրոնացում շրջաններում։ Կամոյի հիմնական բնակիչներն, օրինակ, բայազետցիներ են, Մարտունինը՝ ալաշկերտցիներ, Վարդենիսինը՝ դիադինցիներ։ Այս հանգամանքը մի կողմից նպաստում է տըվյալ ազգագրական խմբի հոգևոր մշակույթի մասին հստակ ու որոշակի պատկերացում կազմելուն, մյուս կողմից համեմատության եզր բացում ազգագրական տարբեր հատվածների բանահյուսական ավանդույթների պահպանման գործակիցը բացահայտելու տեսակետից։

Ուշագրավ հարց է այն, թե ավանդական բանահյուսությունից ինչ է պահպանվել և ինչպես, եղածի մեջ ինչ փոփոխություններ են տեղի ունեցել և տարբեր ու հարևան ազգագրական խմբերից ինչ է փոխանցվել միմյանց, այլ կերպ ասած, մեզ հետաքրքրում է բանահյուսական կոնսոլիդացիայի և ինտեգրացիայի ողջ պրոցեսը Սևանի ավազանի բնակչության ազգագրական խմբերի միջև։

Ավանդական բանահյուսության լավագույն նմուշներից է «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը։ Մեր բանահավաքչական աշխատանքների ընթացքում հաջողվեց գրառել վեպի 6 պատում՝ ազգագրական երեք խմբավորումներից, նախկին ալաշկերտցիների, դիադինցիների և մշեցիների սերունդներից։ Վեպի առկայության փաստը ազգագրական այս խմբերում խոսում է այն մասին, որ գործ ունենք ավանդապահ ժողովրդի մի հատվածի հետ, որը նոր հայրենիքում անգամ պահպանում ու հաղորդում է այդ ավանդական մասունքները տարբերակայնացման և տեղայնացման որոշ գծերով։ Վեպի ասացողները ազգագրական տարբեր խմբերի պատկանող ծերունիներ են (տե՛ս ծանոթագրությունների աղյուսակ)։ Վեպը նոր հայրենիքում՝ Մարտունիում և Վարդենիսում, ասացողների կողմից գիտակցվում է թեպետ իբրև «խնքիաթ», սակայն վիպական իրադարձությունների և հերոսների նկատմամբ բանասացի խոր հավատով ու ակնածանքով, իբրև իրական դեպքերի ու դեմքերի։

Վեպի աշխարհագրական միջավայրը նույն Սասունն է իր շրջակա գյուղերով ու բնակատեղիներով՝ Խլաթ, Ճապաղջուր, Մարութա սար, Փրեբաթման և այլն։

Վեպը դրառված է բացառապես տարեց վիպասացներից, երկարատև փնտրտուքից հետո որի ընթացքում պարզ դարձավ, որ վեպը այժմ պատմվում է սակավ. այն բռնել է մոռացության ճանապարհը, նրանով հետաքրքրվողների շրջանակները սեղմվելով ու փոքրանալով հասել են հատուկենտ անհատների, որոնցից շատերն հիշում են, բայց դժվարությամբ են պատմում, անգամ եթե պատմում են էլ՝ շատ դեպքեր ու դեմքեր աղճատված կամ մոռացված։

Մեր դրառած բոլոր պատումներում վեպի չորս ճյուղերն ու դրանց ավանդական հաջորդականությունը պահպանված են։

Հավաքչական աշխատանքի ընթացքում ոչ միշտ էր, որ վեպը մեզ հանդիպում էր իր կուռ ամբողջականության մեջ, բոլոր չորս ճյուղերով։ Եղան դեպքեր նաև, երբ հաղորդվում էր հատվածաբար, այս կամ այն ճյուղը, հերոսների որևէ մի սխրագործության կամ մի դրվագ վեպից, իբրև առանձին պատմություն։

Հաճախ բանասացը մեր այն հարցին, թե գիտե՞ արդյոք «Սասնա ծռերի» պատմությունը, պատասխանում էր բացասաբար, բայց հետագա գրառումների ընթացքում բացահայտվում էր, որ գիտի առանձին հատվածներ Մհերի, Դավթի «կռիվներից»։

«Սասնա ծռեր» ժողովրդական վեպը Գեղարքունիքում ապրում է մասնատման գոյավիճակ, որը վեպի աստիճանական մոռացման վտանգ է ստեղծում։

Ինչպես արդեն նշել ենք, արևմտահայ հատվածում պատմվող ավանդույթ են եղել իրանական «Ռոստամ Զալ», քրդական «Աբուսեթե Բինալը» վեպերը։ «Ռոստամ Զալի» առաջին գրառումներն ու հրատարակման մենաշնորհը պատկանում է բազմավաստակ բանագետ Բագրատ Խալաթյանցին[3], ապա տակավին դարասկզբին «Էմինյան ազգագրական ժողովածուի» Ե հատորում (1904 թ.) բանահավաք Ս. Հայկունին զետեղում է Ռոստամ Զալի չորս պատում և նույն ժողովածուի Բ հատորում քրդական «Ապուզեթե» վեպը. ճիշտ է, այս պատումներից և ոչ մեկն է Ալաշկերտից, Դիադինից կամ Մուշից, այսուհանդերձ արևմտահայության այն հատվածների սերունդներից է գրառված,

[3] «Բանասեր», Փարիզ, 1901 թ.։

որոնք XIX դարի սկզբին վերաբնակեցվեցին Արևելյան Հայաստանում։

Իրանական («Ռոստամ Զալ») և քրդական («Աբուսեթե Ինալալ» և «Ալիֆն ու Քլեֆը») վեպերը գրի են առնված անգրագետ վիպասացներից, որոնք բացառիկ հիշողությամբ և պատմելու վիպական ավանդական շնորհքով օժտված անձնավորություններ են։ Ինչու հատկապես այս վեպերն են պահպանվել և հասել մեր օրերը. նախ այն պարզ պատճառով, որ հայ ժողովրդի այս հատվածը տարիներ շարունակ ապրել է քուրդ և այլազգի ժողովուրդների հարևանությամբ, որն իր հետքը անտարակույս պետք է թողնար բազմաթիվ մշակույթի, կենցաղի և բանավոր ստեղծագործության մեջ, և ապա օտար լծի տակ տառապող հայ ժողովրդի համար հանապազօրյա հոգևոր սնունդ են եղել իր պատմության հերոսական դրվագները, «Սասնա ծռեր» վեպի հերոսները, ինչպես նաև Իրանի ազգային հերոս Ռոստամի պայքարն ու սխրագործությունները։ Պատմվել են այդ բոլորը, անցել սերնդեսերունդ, սիրվել ժողովրդի կողմից ու հասել մինչև մեր օրերը։

Եվ ահա այդ մասունքները ասացողները մեծ սիրով հաղորդեցին մեզ. այսպես, 96-ամյա Գեղամ Ավետիսյանը, որի նախնիները Ալաշկերտի Մանգասար գյուղից են եղել, պատմում է. «Զալօղլի Ռըստամ իմ պաբ շատ կսիրեր, էմալ կպատմեր օր դուռ հերթիկ կընգոտեր, կժողվին, կթափին մեր օդեն, հըմլա ձենով կերգեր օր կըշիվարինք, իմ խեր Մալջուտ էնորից էր սորված, էնի նիկոլի զինվոր էր հեղած, ես էլ իմ խորից», ահա այս պատմվող ավանդույթը հասնելով մեր օրերը, իր վրա կրել է ասացողի սոցիալական պատկանելիության կնիքը. այն հանգամանքը, որ Գեղամի հայրը «նիկոլի զինվորն» է եղել, իր արտացոլումն է գտել վեպում. այսպես, բանասացը, նկարագրելով Ռոստամի քաջագործությունները, նշում է, թե ինչպես կռվողները իրար ձայն տալով, հաղորդակցվելով ավելի էին գոտեպնդում և ապա կռվի ելնում ճիշտ այնպես, «ինչպես օր Նիկոլայ թագավոր սալդին էրաղ կխմցուցեր, օր էրթին կռիվ, չվախնին...»։ Այս արդեն ավանդական վեպ ներթափանցած նոր միջավայրի, նոր կյանքի, ինչպես նաև նոր ասացողի հավելում է։

Իրանական վիպական զրույցները, ինչպես հայտնի է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»[4] հայ իրականության մեջ շատ են պատմվել։ Մեծ պատմահոր մոտ ենք հանդիպում նաև Իրանի վիպաշխարհի հերոսներից՝ Ռոստամի անվան ամենավաղ հիշատակությանը. «Ռոստամի անունը,— գրում է արևելյան գրականության լավագույն մասնագետներից էդ. Բրաունը,— գտնվել է ուշ շրջանի պահլավական գրություններ մեջ մեկ կամ երկու տեղ, մինչդեռ նրա հուժկու գործերը հայտնի են եղել հայազգի Մովսես Խորենացուն»[5]։

Խորենացին քաջ տեղյակ է եղել ինչպես առհասարակ իրանական վիպական զրույցներին, նույնպես և Ռոստամի առասպելին, նրա հերոսական գործերին, նշելով, որ պարսիկները նրա մասին ասում էին, որ «120 փղի ուժ է ունեցել»[6]։

Հայ իրականության մեջ XI դարում Գրիգոր Մագիստրոսն է հիշատակում ևս մեկ առասպել պահլավական «Ռոստամ Սագեիկի, Ռաշի և Դյուղեղի» մասին, և քանի որ այն պահպանված է միայն Գ. Մագիստրոսի «Թղթեր» աշխատությունում և ոչ այլուր, ուստի և «պետք է եղրակացնել,— գրում է հայ-իրանական գրական կապերի մասնագետ Բարկեն Զուզասզյանը,— որ Մագիստրոսը այս առասպելը քաղել է իր ձեռքի տակ եղած ուրիշ աղբյուրներից և կամ հավանարար լսել ու գրի է առել ժողովրդից»[7]։

Այնուհետև պակաս հետաքրքրություն չի ներկայացնում XIII դարում Կոստանտին Երզնկացու վկայությունը այն մասին, որ իրանական ժողովրդական վեպ «Շահնամեն» երգվել է հայերի շրջանում և նույնիսկ նրա արվեստով ու բանաստեղծական չափով հայերը երգեր են ստեղծել. «Այր մի (նատ)ել կայր ու Շահնամա ասէր ձայնով»[8]։

Մ. Աբեղյանի վկայությամբ[9] հայ իրականության մեջ «Շահնամեի» բանաստեղծական չափով հորինվել են տաղեր տակավին X դարից։ Վերոբերյալ փաստերը խոսում են այն մասին, որ հայերը ապրելով պարսիկների հարևանությամբ, հնագույն ժամանակներից շփվել են նրանց մշակույթին և գրականությանը, պատմել նրանց զրույցներն ու առասպելները, վիպական բանահյուսության բազմաթիվ հատվածներ, պատմվող ավանդույթի ձևով ու սերնդե-սերունդ փոխանցելով, իրենց սեփական վեպի՝ «Սասնա ծռերի» հերոսների կողքին պատմել են Իրանի

---

[4] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1961, էջ 156—157։

[5] Բ. Զուզասզյան, Հայ-իրանական առնչություններ, Երևան, 1963, էջ 20։

[6] Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 157։

[7] Բ. Զուզասզյան, նշվ. աշխ., էջ 96։

[8] Կոստանտին Երզնկացի, ԺԲ դարու ժողովրդական բանաստեղծ և յուր թիթիւռեներն, Վենետիկ, Ս. Ղազար, 1905, էջ 128։

[9] Մ. Աբեղյան, Երկեր, Դ, 1970, էջ 396։

հերոսների սխրագործություններն ու հասցրել են մինչև մեր օրերը։

* * *

Գեղարքունիքի բանահյուսության մեջ, իր խոշոր բաժինն ունի նաև ժողովրդական արձակը՝ հեքիաթը, զրույցը, առակը։

Բանահյուսական այս տեսակը, հատկապես հեքիաթը, որը քվում է քե իր դարն ապրել է և մոռացության մատնվել, Սևանի ավազանում խոշոր թիվ կազմեց (տե՛ս աղ. № 1) և բաղմաբնույթ էր իր էությամբ։ Այդտեղ կան հրաշապատում, կենցաղային, բարոյախրատական բնույթի հեքիաթներ և զրույցներ։ Ժողովածուի մեջ դրանք խմբավորված և դասակարգված են հենց այդ կարգով, հաշվի է առնված նաև նրանցում առկա մոտիվների կոմպլեքսը։

Հեքիաթների պատմաաշխարհագրական ընդգրկումը խիստ համահնչյուն է իրենց ծագման հայրենիքի և գրառման վայրի տեղանքին։ Հեքիաթասացը իր երևակայությամբ բնականորեն սավառնում է իրեն շրջապատող աշխարհագրական միջավայրում (լեռներ, դաշտեր, շատ հաճախ ծով՝ նկատի ունենալով Սևանա լիճը (№ 2(10)», 4(12), 7(15), ընդգրկելով նաև տվյալ աշխարհագրական միջավայրի հատուկ բուսական և կենդանական աշխարհը (օձ, ձուկ, մողես, բանջար, ավելուկ, սիվսկուկ, վառաղուկ ծաղիկ և այլն)։ Հաճախ հեքիաթներում հիշատակվում են ջրհոր, աղբյուր հասկացությունները։ Ջուրը առհասարակ անմահության և երկարակեցության գերբնական ուժով է օժտված հեքիաթներում, այն կենսատու ուժ ունի և հաճախ բռնադատվում է բնության չար երևույթների (դևերի, ոգիների) կողմից։

Հեքիաթներում իբրև անմահության խորհրդանիշ հաճախ կարելի է հանդիպել «անմահական խնձոր» հասկացությանը, մի մոտիվ, որը հատուկ է առհասարակ համաշխարհային հեքիաթասացությանը, № 1(9), 3(11)։ Հեքիաթներում աշխարհագրական միջավայր հասկացությունը ևս մասնակիորեն տեղայնացվել է. հաճախ հիշատակվում են Սևանի ավազանի տեղանքին հատուկ աշխարհագրական տեղանուններ, սրբավայրեր և հասկացություններ, № 2(10)։ Հեքիաթներում իբրև գործող հերոսներ են ներկայանում չար ու բարի, հնարագետ, գործունյա, ծույլ և անբան կերպարներ, ինչպես նաև վաճառականներ, արհեստավորներ, որսորդներ, ձկնորսներ և այլն։

Տարածված կերպար է հնարագետ, խորամանկ և բանսարկու քյաշալի կերպարը։ «Քյաշլիկը» հեքիաթների այն կերպարն է, որը օգնության է հասնում դրական հերոսին և հնարամտորեն նրան հանում նեղ վիճակից։ Քյաշալի կերպարի միջազգային, ինչպես նաև հարևան ժողովուրդների հեքիաթների զուգահեռները խոսում են այն մասին, որ այն շատ տարածված է եղել Արևելքի ժողովուրդների բանահյուսական ստեղծագործություններում (տե՛ս ծնթգր. № 13(221)։ Հայ հեքիաթների պատմաաշխարհագրական այս հատվածների համար դրական հերոսի կերպար է փոքր եղբայրը՝ երեք եղբայրներից ամենափոքրը, ամենաարդարամիտը, աշխատասերն ու ազնիվը։ Նա դժվարություններից չընկճվող հերոս է, հաղթանակի հասնելու տոկունությունն ու լավատեսությունը նրան հաջողության են բերում։ Այս մոտիվը ևս ունի իր միջազգային զուգահեռները (տե՛ս ծնթգր. № 1(9)։ Ոչ պակաս հետաքրքիր գործող անձ է ճարպիկ, հնարամիտ, փոքր-ինչ անազնիվ դծերով օժտված «գող» Ալիքսանի կերպարը։ Կերպարի միջազգային զուգահեռների հետ (տե՛ս ծնթգր. № 30(39) համադրումը բերում է այն եզրակացության, որ այս կերպարը իր գործունեությամբ հասարակական չարիքի դեմ պայքարի յուրօրինակ ձև է ընտրել՝ հիմարացնել բարձրաստիճան անձանց, ընդհուպ մինչև թագավորը։


Հայկական հեքիաթների ազգագրական այս խմբերի համար բնորոշ և հաճախ հանդիպող կերպար է Թափագյոզը (մեկաչքանին)։ Սա հունական Պոլիֆեմ կիկլոպի հայկական նմանակն է, հնագույն մի կերպար, որն անխոցելի է, ոչ մի միջոցով նրա դեմ չի կարելի պայքարել, հակա է և օժտված անսահման մեծ ուժով, բայց բնականերն հեքիաթի բարի ուժերը հաղթահարում են այդ հսկային և տապալում նրան։ Այստեղ ևս բնության չար և բարի ուժերի պայքարի գաղափարն է՝ բարու հաղթանակը (տե՛ս № 20/35, 27/36)։

Հեքիաթներում ու զրույցներում հաճախ հիշատակվում են նաև պատմական այնպիսի դեմքեր, ինչպիսիք են՝ Շահ-Աբասը, Սուլթան Մուրադը (տե՛ս ծնթգր. № 48/57, 49/58, 50/59, 22/31, 23/32, 51/60, 52/1, 53/62)։

Պատմական այս դեմքերը, որոնք բախտորոշ դեր են կատարել հայ ժողովրդի կյանքում, հայտնի են դարձել իրենց ժամանակությունների շնորհիվ։ Շահ-Աբասը այն քաղաքական գործիչն էր, որն իր բռնապետական քմահաճույքով ու քաղաքականությամբ ամեն ինչ ծառայեցնում էր ի նպաստ իրանի հզորացման ու բարօրության։ Հայ ժողովրդական զրույցներում արտացոլվել է այդ բռնակալի սովորություններից մեկը՝ ծպտ-

# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

## ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



յալ դուրս գալ ժողովրդի մեջ, տեղեկանալ ընդհանուր վիճակի մասին և սեփական ձեռքով դաժան դատաստան տեսնել. «իսկ ինքն Շահ-Աբաս ըստ հանապազորդ սովորութեան իւրոյ՝ որ այլակերպեալ զինքն ձևանայր, որպէս զմի ոք ի զինուորաց՝ և դնայր ի մէջ արանց և ժողովրդոց իմանալ և գիտել զբան ինչ...»[10]։

Պատմական այս կամ այն դեմքերի շուրջը հյուսված զրույցներն ու պատմությունները վկայում են նրանց կատարած բացառիկ դերի մասին հայ ժողովրդի կյանքում, իսկ ժողովուրդը դրանց կողքից լռությամբ անցնել չէր կարող. զրույցներում առկա է ժողովրդի զուսպ բողոքն ու քըշնամանքը դաժան բռնակալի դեմ (տե՛ս ծնթգր. 50/59, 51/60, 52/61, 53/62 և այլն)։

Շրջապատող կենդանական աշխարհը ևս ակտիվ մասնակցություն ունի հայկական հեքիաթներից շատերում՝ օձն իր իմաստնությամբ, շունն ու կատուն հավատարմությամբ, աղվեսը խորամանկությամբ, գայլն ագահությամբ։ Հերոսի անմիջական օգնականներն են սև և սպիտակ ոչխարները, որոնք նրան դուրս են բերում լույս կամ մութ աշխարհ. հավատարիմ ուղեկիցներն են աղջկա գլխով թռչնամարմին փերիներն ու սինամ հավքերը, որոնք զրնեն միշտ օգնում են դրական հերոսին նրա պայքարում ընդդեմ բնության չար ուժերի՝ դևերի, հրեշների ու վիշապների։

Ահա այսպիսին է հայկական հեքիաթներում գործող հերոսների կոմպլեքսը, որոնց բոլորի միջազգային զուգահեռները զրված են ծանոթություններ բաժնի № 1/1—86/95 համարակալման տակ։

Այնուհետև անհրաժեշտ է համառոտակի նշել այն հիմնական մոտիվները, որոնք առկա են ազգագրական այս խմբերի հեքիաթներում։ Շատ տարածված մոտիվ է ինչպես հայկական, նույնպես հարևան ժողովուրդների բանահյուսության մեջ «անժառանգ ծնողների» մոտիվը. նրանց տառապանքները և զավակ ունենալու անհուն երազանքը և վերջապես անմիջականորեն այս մոտիվին առնչվող և լուծում տվող դերվիշի, խնձորի և կամ բարի հյուրի հայտնվելու մոտիվը։ Համայության և կախարդության հին հավատքի դրսևորում է հեքիաթներում կախարդ դերվիշների մոտիվը, որոնց հրաշագործ օգնությամբ, հմայությամբ կանայք երեխա, ժառանգ են ունենում։

Հինարևելյան ժողովուրդների մտածողությանը ու բանահյուսությանը հոգեհարազատ այս մոտիվի դրսևորումներին մենք հանդիպում ենք նաև Դեղարքունիքի հայկական հեքիաթներում (տե՛ս № 1/9—3/11, 6/14)։

Հայկական հեքիաթներում կնոջ անհավատարմությունը դիտվում է իբրև չարիք և դատապարտվում ամենադաժան միջոցներով (տե՛ս № 6/14)։ Անհավատարիմ կնոջ մոտիվը առկա է № 10/3, 11/14 հեքիաթներում և ունի նաև իր միջազգային զուգահեռները (տե՛ս ծնթգր. № 21/10, 21/30)։ Սիրեցյալ կնոջը հասնելու համար հերոսի կրած անթիվ տառապանքներն ու դժվարությունները պսակվում են հաղթանակով, այս մոտիվը առկա է № 12/21, 13/22, 14/23 հեքիաթներում և նույնպես ունի իր միջազգային զուգահեռները (տե՛ս ծնթգր. № 12/21, 13/22)։ Հերոսը մեծ կամք, համառություն և հերոսություն է ցուցաբերում իր նպատակին հասնելու համար։ Սա սովորաբար ժողովրդի կողմից սիրված անձ է և շատ քիչ դեպքերում է, որ մնում է անօգնական վիճակում։ Հեքիաթների միջազգային մոտիվների զրսևորումներից պետք է համարել խորթ մոր մոտիվը (№ 18/27), վերջինիս դաժանությունները հաղթահարող որբի մոտիվը. օրինաչափորեն որբը հեքիաթներում օժտված է լինում մարդկային բարձր հատկանիշներով. խելոք է, հնարամիտ և շատ շուտով շրջապատի օգնությամբ զրժվար կացությունից դուրս գալու ելքը գտնում է։

Ընդհանուր գծերով սրանք են այն հիմնական մոտիվները, որոնք առկա են ազգագրական այս գոտիների հեքիաթներում։ Սրանք նաև վեր են հանում տիպաբանական այն ընդհանրությունները, որոնք առկա են տարբեր ժողովուրդների հեքիաթներում։ Հեքիաթների խմբավորումն ըստ մոտիվների բացահայտեց, որ կա հեքիաթների մի խումբ, որում առկա մոտիվների զուգահեռների հանդիպում ենք միջազգային և հարևան ժողովուրդների հեքիաթներում, դրանք հիմնականում Մուշ, Ալաշկերտ, Դիադին ազգագրական խմբերի հեքիաթներն են։ Երկրորդ. որ որոշ հեքիաթներ հարաբերական տեղայնացման են ենթարկված, խիստ ազգային են և ընդհանրություն չունեն միջազգային հեքիաթասացության մոտիվների հետ (տե՛ս № 17/26, 19/28, 23/32, 33/42, 35(44), 36(5) և բազմաթիվ զրույցներ, որոնց զուգահեռները չկան միջազգային կատալոգներում, ինչպես նաև հարևան ժողովուրդների մոտ (տե՛ս № 60/69—87/96)։

* * *

Հեքիաթներն իրենց կառուցվածքով ևս ավանդական կաղապարի մեջ են, համեմված ժողովրդական մտածողության հատուկ բառ ու բանով, հնարանքներով, բանաձևերով։ Այս հար-

[10] «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ», Վաղարշապատ, 1884, էջ 129։

ցերին անդրադառնալիս անհրաժեշտ է նշել, որ նյութերը գրանցված են անմիջականորեն ասացողից, առաջին հաղորդողից, գրի են առնված հարազատորեն, պահպանելով ասացողի ոճի բոլոր նրբերանգներն ու արտահայտչամիջոցները։ Հեքիաթները Գեղարքունիքի բանահյուսության մեջ առանձնանում են իրենց ժողովրդական մըտածողության հատուկ արտահայտչամիջոցների առատությամբ։ Հեքիաթների կառուցվածքին ծանոթանալիս նկատվում է բանաձևերի երեք խմբավորում. առաջին՝ նախասկիզբ բանաձևերը, մինչև բուն հեքիաթը պատմելը ասացողը օրինաչափորեն ասում է ինչ-որ բանաձև, այն կարող է լինել սովորական «կեղնի, չեղնի», «ավալ ժամանակով», «խին ժամանակով», «հառեջ ժամանակ» և այլ բազմաթիվ սկիզբ-բանաձևեր։ Երկրորդ՝ միջին պատմողական բանաձևեր և երրորդ՝ վերջաբան բանաձևեր։

Այժմ տեսնենք բանաձևերից որոնք են բնորոշ աղգագրական այս գոտիների համար, վերհիշյալ բանաձևերը ինչ պատկեր ունեն, ինչ ձևով են ներկայանում տվյալ խմբերի հեքիաթներում։

Նախապես պետք է նշել, որ ավանդական բանաձևային այս սիստեմը պետք է քննարկվի 1971—77 թթ. մեր գրառած նյութերի շրջանակներում։

Հայտնի է, որ յուրաքանչյուր հեքիաթասաց սկզբից ևեթ արտահայտում է իր վերաբերմունքը պատմածի նկատմամբ, ասելով «հնելել ա չի հելե», «կեղնի չեղնի» և այլ բանաձևեր, որոնց 1-ին՝ հաստատական մասին, հաջորդում է 2-րդը՝ թերահավատությունն ու վերապահությունը պատմածի նկատմամբ, մի վերաբերմունք, որը խորանում է արդեն միջանկյալ «խեքթի բան ա էլի» բանաձևում։ Այս թերահավատությունը պատմվող դեպքերի և դեմքերի նկատմամբ չի խանգարում բանասացին իր պատմածը դնելու ժամանակ և տարածություն հասկացությունների շըրջանակում, նշելով «հառեջ ժամանակով», «ավալ ժամանակով» և այլն բանաձևերը։ Նմանօրինակ թեական բանաձևային նախասկիզբ ունեն հիմնականում հրաշապատում հեքիաթները. եթե նախասկիզբ բանաձևերով դժվար է որոշել այն հարցը, թե բանասացը հավատում է իր պատմած դեպքերին ու դեմքերին, ապա միջանկյալ բանաձևերը, ասույթները այս հարցին ավելի որոշակի պատասխան կարող են տալ։ Այսպես, մեր գրառած հեքիաթների մեծագույն մասում, երբ բանասացը պատմում է որևէ անիրական դեպք կամ նկարագրում է որևէ հրաշալի հերոս, ապա նման դեպքերում ավելացնում է «Դը խեքթի բան ա էլի», «Դը խեքթի ճիժա էլի, շուտ կըջոջնա», «խեքթի ղսայա էսի», այսինքն հեքիաթ է, ոչ իրական, չեղած մի գործողություն, դեպք կամ դեմք։ Մեր սեփական գրառումներով համոզվեցինք, որ բանասացների մեծագույն մասը թերահավատորեն են վերաբերվում իրենց պատմածին, բայց որովհետև սիրում են հրաշապատում բարդ իրավիճակներ, հուզիչ տեսարաններ, ուստի և սիրով պատմում են՝ նկատի ունենալով ունկնդիրներին։

Ուստի և հեքիաթների նախասկիզբ բանաձևերը օգնում են բանասացի վերաբերմունքը պարզելու հարցում, եթե նախասկիզբ և վերջաբան բանաձևերը բոլոր հեքիաթներում ունեն իրենց կայուն տեղը, ապա նույնը չի կարելի ասել միջանկյալ ասույթների, բանաձևերի մասին, որոնք ոչ միայն որոշակի տեղ չունեն, այլև սերտված են հեքիաթով մեկ, դրսևորելով բանասացի մտորումներն ու վերաբերմունքը պատմածի, հաղորդածի նկատմամբ։ Միջանկյալ բանաձևերն ունեն մի քանի ֆունկցիա, երբ բանասացը ունկընդրի և հեքիաթի հերոսի միջև ղուգահեռ է անցկացնում, յուրօրինակ սթափեցնող երանդ հաղորդելով պատմածին՝ «բարի լուս բացվի վըր ձըղի, սուգ ու շիվան վըր ընոնց». հաճախ կարելի է հանդիպել միջանկյալ բանաձևերի, որոնք հատուկ աշխուժություն ու կենդանություն են հաղորդում հեքիաթին, ունկնդիրներին տեղափոխելով դեպքից դեպք, դեմքից դեմք՝ «...թագավորի տղին թողնենք էդտեղ՝ մենք սալիս տանք աղջըկանից...», «խաբար տանք ողրից...» և այլն։

Բանասացը այս կամ այն դեպքը պատմելիս փորձում է լսողին սթափեցնել հարցական և բացականչական միջարկություններով և միջանկյալ բանաձևերով «... ողիր նստուկ էր, դու մի ասա էնի էր սպանե ճժերուն...» և կամ «... հելավ կեթա... դո՞ր ա կեթա», «...նայեց տեսավ, ի՞նչ տեսավ...», այսպիսով, միջանկյալ այս կարգի բանաձևերը ունկնդիրներին ձգում են հեքիաթի մեջ, զգաստ պահում նրանց, իսկ բանասացի խոսքին հաղորդում աշխուժություն ու արտահայտչականություն։ Հիշյալ միջանկյալ բանաձևերը բանասացը օգտագործում է այն պահերին, երբ հեքիաթը խաղաղ պատմելաձևի ընթացքում է և վտանգ կա որ միօրինակ ու տաղտուկ կդառնա. հենց այդ պահերին էլ հմուտ բանասացը աշխուժացնում է իր խոսքը միջանկյալ բացականչություններով, ասույթներով ու բանաձևերով։

Միջանկյալ բանաձևերի կարգին պետք է դասել նաև հերոսներին բնութագրող արտահայտությունները. «էմալ խորոտ, զանայլու աղջիկ էր, արևին կըսեր դու մի հելի դուս, ես բոլ եմ»

կամ. «ձին քյահլան էր՝ ամպերու խետ կխաղար...», «լուսնակ հերես ուներ, չուտես, չխմես հերեսին նայես...», ինչպես նաև «աստծու հրամանով», «օձն հուր պորտով, դուշն հուր թևով...» հմայական-կախարդական բնույթի բանաձևերը, որոնք աչքի են ընկնում իրենց կառուցվածքի և օգտագործման կայունությամբ։

Հնքիաթների կառուցվածքում ի՞նչ դեր են խաղում վերջաբան բանաձևերը. նշենք դրանցից մի քանիսը, որոնք հատուկ են ավդադրական այս խմբերի հնքիաթներին. «բարին ըստի, չարն ընտի», «ընտոնք խասան հուրանց մուրալին, դուք էլ խասնք ձեր մուրալին», «վերևեն երեք խնձոր հիճավ», «էնի նստավ հուր խոր թախտին, ձեր մեկ բալեն էլ նստի հուր խոր թախտին», «բարով էթաք խասնք ձեր մուրալին»։

Ինչպես կարելի է նկատել, ավանդական ավարտը՝ «երկնքուց երեք խնձոր հընդավ...» քիչ է հանդիպում այս տեղավայրերի հնքիաթներում, հիմնականում ավարտ-բանաձևերը կրում են ըսթափեցնող բնույթ և ստանում օրհնանք-մաղթանքի երանգ։ Իրապատում հնքիաթների ավարտվերջաբանները ունենում են բարոյախրատական բնույթ և ստանում ձևակերպված առած-ասացվածքի տեսք։

Դեպքերի զարգացումը հնքիաթների մեջ ընթանում է պարզից դեպի բարդ և հաճախ ավարտվում կարճատող աֆորիզմային բարոյախրատական բնույթի ձևակերպումներով։ Ըստ էության խորը և ժողովրդի կենսափորձից բխող այս ձևակերպումները շատ հաճախ հիմք են դառնում հնքիաթների մասնատման առանձին դրույցների։ Հաճախ հնքիաթներում հնքիաթ է պատմվում և պատահում են այնպիսի դեպքեր, երբ այդ պատմվող հնքիաթը անջատվում է իբրև առանձին միավոր. տե՛ս FG։ 0347—0350։

Գեղարքունիքի բանահյուսական արձակում իրենց ուրույն տեղն ունեն նաև կենցաղային դրույցներն ու մանրապատում զվարճախոսությունները։

Պատմաազգագրական այս խմբերի համար հանձնված զվարճախոս է բայազետցի Գառզուան Արամը, որը Գեղարքունիքում հորջորջվում է Գառզոյ Արամ անվամբ։

Գառզոյան Արամի նախնիները բայազետցի են, գաղթած 1828 թվականի ռուս-պարսկական պատերազմի դաղարի օրերին։ Ըստ Արամի տված տեղեկությունների Գառզոյանների ընտանիքը իբրև զվարճախոսներ հռչակված է եղել Բայազետի գավառում։ Հանպատրաստի սրամտությունների, դիպուկ և սրամիտ արտահայտություններով այդ ընտանիքը գավառում վայելել է հարգանք և սեր, և բնականորեն այդ ավանդությունները փոխանցվել են սերնդից սերունդ և հասել մինչև մեր օրերը Արամ Գառզոյանի կերպարով։ Այս զվարճախոսը մասսայականություն է վայելում ողջ Գեղարքունիքում։ Նրա անվան շուրջը ըստեղծված է սրամիտ մանրապատումների մեծ ժառանգություն, որը, սակայն, որոշ ընտրությամբ ենք ներկայացնում ժողովածուում։

Կենցաղային դրույցների հիմնական թեման ընտանիքն է իր առօրյայով, ամուսինների փոխհարաբերություններով։ Կինը այս փոխհարաբերություններում առանցքային դեր ունի. նա այդ դրույցներում կերպավորվում է թե՛ իբրև հավատարիմ, նվիրված ամուսին (տե՛ս № 55/63, 57/66, 59/68, 60/69, 61/70) և թե՛ իբրև անազնիվ, բանսարկու և հրնշավոր մի անձնավորություն, որը մինչև խելագարության աստիճան կարող է հասցրնել ամուսնուն (տե՛ս № 51/68)։

Դրույցները ևս ունեն իրենց տիպաբանական ղուգահեռները հարևան ժողովուրդների մոտ (տե՛ս ծնթգր. № 39/48—68/77)։ Կառուցվածքային տեսակետից սրանք ևս ունեն կայուն ըսկիզբ և վերջ, ինչպես հնքիաթը, բայց ավելի հակիրճ, դիպուկ և նպատակասլաց են. իբրև կանոն, վերջանում են տրամաբանական մի դարձվածք-ամփոփումով, որը կարող է առած-ասացվածքի արժեք ունենալ. տե՛ս 37/46, 39/41, 41/50, 42/52, 43/52 և այլն։ Դրանք ժողովրդի կենսափորձից բխող տրամաբանական հետևություններ են, երբեմն սովորութային օրենքի ուժ ստացած։ «Անղգամի շառից հեռու մնա» (խրատ), «Աստծու դրածը ջնջել չի լինի» (առած), «ճիշտ խոսողի բերանը բաց կլինի» (առած)։

Այս բնույթի դրույցների տրամաբանական հետևությունները ժանրային տեսակետից ձևակերպված միավորներ են և լրացնում են Գեղարքունիքի առած-ասացվածքների հարուստ ժառանգությունը, որը կազմում է շուրջ 700 առած-ասացված։ Բանահյուսական այս տեսակը աչքի է ընկնում իր սեղմությամբ, կուռ կառուցվածքով և ընդգրկում է մարդկային կյանքի ու կենցաղի ամենաբազմապիսի հարցերն ու երևույթները։ Բանաձևային կառուցվածքը ժանրին հաղորդում է էպիկական երանգ, հակիրճ ձևի միջոցով շատ բան ասելու առանձնահատկություն՝ ժողովրդական առողջ մտածողությամբ կյանքի թերի կողմերի քննադատությունից ճիշտ եզրահանգում կատարելու առանձնահատկություն։

Առած-ասացվածքների քանակային պատկերը (տե՛ս աղ. № 1) ապացույցն է այն բանի,

որ այս ժանրը կենսունակ և մասսայական է նաև ազգագրական այս հատվածներում։ Առածները ժողովրդի կենսափորձի տրամաբանական հետևություններն են և ծագումնաբանորեն շատ հաճախ կրում են խոր հնության կնիք. նրանք անդրադառնում են մարդկային փոխհարաբերություններին, ընտանիքի տնտեսական-հասարակական նշանակություն ունեցող շատ հարցերի, որոնք ավարտվում են փիլիսոփայական խոր ընդհանրացումներով։ Նրանք ընդգրկում են ըրջապատող աշխարհագրական միջավայրը, բուսական ու կենդանական աշխարհը։

Ինչպես առած-ասացվածքները, նույնպես և դարձվածքները ապրում են ակտիվ կենցաղավարում և իբրև բանաձևեր մեծ տեղ ունեն Դեղարքունիքի խոսակցական լեզվում. օգտագործվում են առատորեն՝ հաղորդելով լեզվին և հոգևոր մշակույթին ինքնատիպ երանգ, պատկերավոր արտահայտչականություն, դրսևորելով մեկնություն ժամանակ վերաբերմունք շրջապատող բնության, արտաքին աշխարհի և մարդկային հարաբերությունների նկատմամբ։

Առած-ասացվածքները և դարձվածքները ժամանակի քննությունը բռնած, մարդկային հարուստ կենսափորձի և պատկերավոր մտածողության կուռ բանաձևային ստեղծագործություններ են, առանց որոնց անհնար է պատկերացնել ժողովրդական մտածողության փայլատումները։

Հարուստ է Դեղարքունիքը այս բանաձևերով ևս. նրանք ժողովրդի առօրյա խոսքի անքակտելի մասն են կազմում, կենդանություն և պատկերավորություն հաղորդում նրան։ Բանաձևային այս երկու տեսակների հիմքում էլ ժողովրդական ճշգրիտ մտածողությունը, իրերը և երևույթները գնահատելու օբյեկտիվ ընկալումն է ընկած։

Մանր-բանաձևային ժանրի այս ստեղծագործությունները հետաքրքիր են նաև իրենց կառուցվածքով. եթե առած-ասացվածքը մեկ նախադասություն է, ապա դարձվածը մեկ բառից մինչև մեկ նախադասություն կարող է լինել։

* * *

Դեղարքունիքի հիշյալ շրջաններում երգային բանահյուսությունը, մասնավորապես նրա ամենանշանորոշ տեսակը՝ խաղիկը, իր ընդհանուր ավանդական առանձնահատկությունների կայուն կոմպլեքսին զուգահեռ ապրում է ներքին շերտավորման պրոցես, որն ընթանում է ռեգիոնալ վարիանտների փոխներգործության հիմքի վրա։ Սա տարբեր ազգագրական խմբավորումների ներսում կատարվող փոխհարստացման և փոխազդեցության մի պրոցես է, որի արդյունքը շատ հաճախ հանգում է նոր որակի։ Սա հարցի մեկ կողմն է։ Խաղիկը փոփոխությունների է ենթարկվում մեկ այլ ճանապարհով ևս՝ պայմանավորված ժողովրդի հասարակական-քաղաքական, տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխություններով ու տեղաշարժերով։ Եթե առաջին դեպքում խաղիկը շերտավորվում է, իր մեջ ընդգրկելով տարբեր ազգագրական խմբերին հատուկ առանձնահատկություններ, ապա երկրորդ դեպքում շերտավորումն ընդգրկում է նոր կյանքին, հասարակական հարաբերություններին հատուկ մոտիվներ (կոլխոզ-շարժում, Հայրենական պատերազմ, խամ ու խոպան և այլն)։ Այս իմաստով հետաքրքիր է խաղիկի մեկ օրինակի վրա բանահավաք Ս. Հայկունու XIX դարավերջի Ալաշկերտի խաղիկի գրառումների համադրումը, շուրջ մեկ հարյուրամյակ հետո նոր հայրենիքում՝ ալաշկերտցու, բուլանխցու, վանեցու և բայազետցու շառավիղներից գրառած նույն երգի հետ (տե՛ս խաղիկների համադրման աղյուսակ). նախ՝ տրվում է երգի սիգնատուրային ցուցակը։ Մեկ հանրահայտ երգի ութ տարբերակների համադրման ճանապարհով մենք կփորձենք տալ շերտավորման այն պրոցեսը, որը տեղի է ունենում երգացանկում։ Այս ութ տարբերակները անկասկած վերաբերում են մեկ երգի (տարբերակները համարակալված են 1—8, տողերը ևս ունեն հերթական համարակալում). հորիզոնական դիրքով այս տարբերակները դիտելիս, ակնառու է դառնում խաղիկում առկա ավանդական կայուն, ինչպես նաև տարբերայնացված մոտիվները.

I տող. հերոսը գնում է ինչ-որ տեղ. այստեղ առկա են տեղանուններ. բացի «Ստամբուլից» նկատվում է նաև տարբերակման բացարձակ միտում. տեղանունները հանդիպում են կրկնակի անգամ № 3 տարբերակում և եռակի՝ № 5, 2 և № 5, 3 տեքստերում։ Այս առումով № 3 և 5 տարբերակներում նկատվում է ներքին կապ, որը մղում է տեղական վարկածի հնարավորության դաղափարին, քանի որ երկու տարբերակներն էլ դրառված են Դեղարքունիքի հեռավոր՝ Վարդենիսի շրջանում, ուստի և կարելի է ենթադրել, որ այդ հնագույն տարբերակ է, ստեղծված վաղուց, ներկա Հայաստանի սահմաններից դուրս։ Այդ են վկայում Ստամբուլ, Արզրում, Խոշյան, Միրաղյան, Ջուջան տեղանունները, որոնք Ալաշկերտի և Դիադինի գյուղերից են։ № 3—5 տարբերակները շատ մոտ են № 2 Ալաշկերտի վարիանտին, որն ամենահին գրառումն է։

Գնալու, էրթալու միտքը առկա է բոլոր տար-

բերակներում, բայց № 3 և 5-ում այն ավելի ցայտուն է երևում։

II տող. ինչ նպատակով է գնում հերոսը. 7 տարբերակից 4-ը իրրև նպատակ նշում են ուտելիք (№ 1, 6—յուղ, № 5—քթու քան, № 7—ձուկ), 2 տարբերակում (№ 2, 3)—փող կամ ոսկի, որոնցով պետք է հայթայթեն «սուլեր» (կոշիկներ)։

III և IV տողերը. ո՞ւմ համար են բերվում. ընկերուհու, սիրած աղջկա (№ 1, 2, 3) և պապի (№ 5)։

Այս փոխությունը թույլ է տալիս նշելու, որ այստեղ պատկերվում է մի դրվագ հայ կենցաղից՝ իր բնորոշ գծերով։

շերտավորվելով ստեղծվում է նոր որակ։ Տարբերացման այս երևույթը պատմական երկարատև բարդ պրոցես է, որով և պայմանավորվում է տարբերակի ծնունդը։

Նկատվում է նաև երգի փոփոխության մի երկրորդ պրոցես, երբ երգը պահպանելով իր հիմնական կայուն հատկանիշները (չափը, մոտիվը) դառնում է տարբերակ, փոխազդվելով ոչ միայն ներքին հատկանիշներով, այլև լեզվով, բարբառով, խոսվածքով։ Սա շատ բնորոշ է Գեղարքունիքի հայ երգարվեստին։ Այս վերլուծությունը թույլ է տալիս նշելու նաև, որ պատմականորեն ստեղծված ազգագրական խայտաբղե-

Երգի սիգնատուրայի ցուցակ

| Որտե՞ղ (գրառման վայրը) | Ծ՛ղբ (գրառման թիվը) | Ո՞վ (գրառողը) | Ումի՞ց (ասացողը) |
|---|---|---|---|
| Ալաշկերտ | 1870—80 | Մ. Հայկունի | |
| Ալաշկերտ | 1870—80 | Մ. Հայկունի | Ասացողն անհայտ է |
| Վարդենիս—Դիադին, Վան | 1974 | Ռ. Գրիգորյան | Կարինե Բարսեղյան |
| Սևան—Նոյ | 1973 | Ռ. Գրիգորյան | Ազնիվ Գոդասյան |
| Վարդենիս—Մուշ | 1972 | Ռ. Գրիգորյան | Մարուսյա Մելքոնյան |
| Մարտունի—Ալաշկերտ | 1975 | Ռ. Գրիգորյան | Շուշիկ Ավետիսյան |
| Սևան—Նոյ | 1977 | Ռ. Գրիգորյան | Ազնիվ Գոդասյան |
| Կամո—Բայազետ | 1976 | Ռ. Գրիգորյան | Սիրուշ Գրիգորյան |

Տաղիկների համադրման աղյուսակ

| I | II | III | IV | V |
|---|---|---|---|---|
| 1. Երթամ Քոլի գեղ | բերեմ սիկմ եղ | էննենք ձվածեղ | ուտենք միատեղ | |
| 2. Էթամ Ստամբոլ | բերեմ փարա բոլ | առնենք չուխամ սոլ | խաքենք դորեդոր | |
| 3. Երթանք Իստամբուլ | բերեմ ոսկի պոլ | ընդնեմ էրկրըմ | առնեմ չուխամ սոլ | խաքենք դորեդոր |
| 4. Էթասեմ Հայթող | անեսեմ մատաղ | տանեսեմ յարիս | խասնեմ մուրաղին | |
| 5. Երթամ Խոշան | էնտեխեն Միրզաշան | դառնամ Ջուշան | բերեմ քթու քան | ուտա պարեն, էթա զուիան |
| 6. Երթամ Ջորագեղ | բերեմ քոռ անձեղ | ճամբեմ խնամուս | քըխ մեռնի բենամուս | |
| 7. Էթամ Սևան | բերեմ իշխան | դնեմ ղոշան | քըխ ուտա իմ Շուշան | |
| 8. Դնացինք Նորաշեն | բլուր կխաշեն | խորոտիկ յաշին | քափած քամաշեն | կոլխող կքյաշեն |

Նույն ավանդական երգի ժամանակակից տարբերակներ են № 7 և 8-ը։ Այս համադրումից հետևում է նաև, որ պահպանված է երգի ավանդական ձևը և չափը, բոլոր տարբերակներում առկա է ավանդական կայուն մոտիվը, և շերտավորումը ընթացել է կամ նոր մոտիվի հավելումով և կամ տեղայնացման ճանապարհով։ «Դացինք» ...ինչ որ տեղ—այս կայուն մոտիվը կրկնվում է բոլոր տարբերակներում, որին հաջորդում է «բերինք»... ինչ որ բան—դարձյալ կայուն մոտիվը, այնուհետև արդեն ըստ ազգագրական խմբի յուրօրինակության ավելանում է նոր գիծ Վանի տարբերակում՝ քերինք օսկի բոլ, Նոյում՝ մատաղ, Սևանում՝ իշխան և այլն։ Ահա այս ճանապարհով

տությունը ոչ միայն չի խանգարել բանահյուսական ինտեգրացիային, այլ ընդհակառակը, նպաստել է մոտիվների որոշ հարաբերական կայունության, և որ տարբերացնացման պրոցեսը, ինչ որ չափով փոփոխելով բանահյուսական ստեղծագործության պատկերը, պահպանել է ավանդական երգի հատկանիշները։

Ամփոփելով, ինչ կարելի է ասել բանահյուսական ժանրերի ներկա վիճակի մասին. Գեղարքունիքում նկատվում է բանահյուսական ժանրերի կենցաղավարման երկակի դոյավիճակ, ակտիվ կենցաղավարում, երբ այս կամ այն ժանրը իր որոշակի տեղը ունի ազգագրական տվյալ խմբավորման կյանքում, առօրյայում, օգտա-

դործվում է և անդամ ստեղծվում նորը։ Այդպիսի ժանրերից են բանահյուսական մանր ժանրերը՝ առած-ասացվածք, հանելուկ, խաղիկ, աննկդոտ, որոշ բանաձևային տեսակներ։ Այդ են ապացուցում նաև աղյուսակ № 1-ի տվյալները, ուր ակտիվ կենցաղավարում ապրող բանահյուսական տեսակները քանակային և տոկոսային դերակշռություն են կազմում։ Նյութերի գրառման տոկոսային դերակշռության պատկերը պակասում է համապատասխան կենցաղավարման ակտիվության նվազմամբ. այսպես, համայական բանահյուսությունը՝ աղոթք, անեծք, ղրկված է իր կենցաղավարման հենքից, ուստի և փոքր տոկոս կազմեց Գեղարքունիքում։ Բանահյուսական այնպիսի մեծածավալ ստեղծագործություններ, որպիսին են՝ հեքիաթը, ժողովրդական վեպը, ոչ միայն չեն պատմվում օդաներում, ինչպես նախկինում էր, այլև ապրում են պասիվ կենցաղավարում, որի հետևանքով և բռնում են իսպառ մոռացման ուղին։ Այդ են հաստատում դարձյալ № 1 աղյուսակի տվյալները, ուր 1971—1977 թթ. գրառված բանահյուսական նյութերի կազմում ընդհանուր քանակի 1,9% կազմում է հեքիաթի ժանրը, այն դեպքում, երբ ակտիվ կենցաղավարող բանաձևային տեսակներից առածը, դարձվածքները ընդհանուր արդյունքի 14% և 20% կազմեցին։

Ժողովրդական վեպը 1971—1977 թթ. ընթացքում կազմեց գրառված նյութերի ընդհանուր քանակի ընդամենը 0,7%, այսինքն՝ մինչև 1977 թ. գրառվեց վեպի 6 պատում, իսկ 1978 թ., որը չի արտացոլված աղյուսակում, այլևս ոչ մի պատում հնարավոր չեղավ գրառել։ 1977—1978 թթ. տվյալները խոսում են այն մասին, որ հեքիաթը ևս չի ապրում ակտիվ կենցաղավարման պրոցես Գեղարքունիքում։ Տախտակում արտացոլված նյութերի քանակային պատկերում նկատվում է նվազման օրինաչափություն գրեթե բոլոր տեսակներում և դա միանգամայն համահնչյուն և օրինաչափ պետք է համարել թուլացող ավանդապահության և համընդհանուր ուրբանիզացիայի պայմաններում։

Մինչ 1972 թվականը Վարդենիսի բանասաց Բասսո Բարսեղյանը մեծ աուդիտորիայում հեքիաթներ էր պատմում Վարդենիսի բնակչությանը։ Նրա մահից հետո ավելի քան 5 տարի այլևս հնարավոր չեղավ Վարդենիսում նման մի դեպք արձանագրել։ Նույնը և Գեղարքունիքի մյուս շրջանների համար կարելի է ասել. մինչև 1976 թ. Մարտունիում ականատես ենք եղել բանասաց-հեքիաթասաց Գեղամ Ավետիսյանի բազմամարդ ունկնդիրների աուդիտորիային։ Նրա մահով (1976 թ.) այլևս նման ավանդական սովորույթի չհանդիպեցինք Մարտունիում։ Այսպիսով, բանահյուսական ժանրի որոշ տեսակների ակտիվ կենցաղավարումը բռնել է մոռացման ճանապարհը և բանասացի մահով մոռացվում է սովորույթը, իսկ այդ ճանապարհով էլ նաև կորըստի է մատնվում ժանրը։

Այս երևույթը բացատրվում է հասարակական-տնտեսական կյանքի խոշոր առաջընթացով, առօրյա կյանք ներթափանցած տեխնիկայի նվաճումներով, նախկին հեքիաթասացի փոխարեն այժմ մարդիկ հաճույքով նայում են հեռուստատեսային հաղորդումները, հաճախում կինո, թատրոն կամ դյուղական ակումբներ։ Նյութատեխնիկական առաջընթացի և նվաճումների այս միջավայրում բնականորեն պետք է որ թուլանային ազգային ավանդական շատ սովորույթներ ու միջոցառումներ։ Ներկայումս Գեղարքունիքում չկա այնպիսի մի բնակավայր, որ չունենա իր դյուղական ակումբը, կինոն և թատրոնը։ Բարձրացել է նաև դյուղի սոցիալ-տնտեսական, մշակութային կերպարը, անդրադիտությունը վերացված է։ Դիտակցելով ուսման արժեքը, աճող սերունդը ձգտում է գրագիտության և ընթերցասեր է, հպարտանում է գիտության մեջ իր հայրենակիցների մասնակցությամբ, իսկ անցյալի ավանդույթներին վերաբերվում է մեծ հարգանքով ու պատկառանքով։

# Ա
# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊ

## 1(1). ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### Ա
### ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

Մի ժամանակով, մի թագավոր կար.
Թագավորն աստվածածանոթ չէր,
Թագավորի, ժողովրդի արտերն հավքերն կուտին։
Մարդիկ պտի էթին էդ ղշեր լարին։
Մի օր էլ հերթն էկավ թագավորի տղեկներուն։
Էրկու տղա ուներ՝ Սանասար, Բաղդասար.
Էդ օր էլ էդ էրկուսն գացին, սկսեցին լարել,
Էս կողմ լարին՝ հնարք չէղավ,
Էն կողմ լարին՝ հնարք չէղավ,
Պարսեմններով գնին՝ չէղավ,
Հոգնած՝ վըր ուրանց քամգին, իշկեցին էրգինք.
Ո՛վ էրգինք կաղմող,—ըսին,—մենք կավատանք քեզի,
Էս կշերուց մեզի աղատա։
Կշերն Թոան գացին,
Հիրանք հելան գացին տուն, ուրանց ադեյն ըսին.
— Էսպես բան պադայավ։
— Վա՛յ լաո, մըկը ձեր խերն օր էկավ՝ ձեզի կմարտիրոսա.
Նա կոքատաշտ ա,
Նրա կոքատուն դուք չմտեր եք,
Ձեր բան շատ փիս գնաց, ձդի կսպանա։
— Բա՛ ի՞նչ էնենք։
Խոսկի վրա ին խերն դռնեն մտավ։
— Սանասա՛ր, Բաղդասա՛ր, հընչի՞ եք էկե։
— Խեր ջան, ըսավ բան պադայավ։
Ըսավ.—Դու Ջոջ կոքի մատաղն ես,
Էն էլ՝ պտի կոքի մատաղն ա.
Դը պառասավեք, ես ձեզի կտանեմ, կմատղեմ։
Եփ օր թագավոր հելավ, մերն ըսավ.
— Հելե՛ք, ձեզի խաց տամ, կանչեք աստված,
Ձեր ձեռն աստու փեշից մի քաշեք,
Գացե՛ք, տերն ձեր խեռ,
Էլ ես ձեզի տիրութուն չեմ կռնա էնե,
Իմ ուժից դուս ա։
Սանասարն ու Բաղդասարը ուրանց պաշարն քալին քե ուրանց
Ոկ օդով հնգան ճամփեն։
Ու գացին, գացին, շատ ու քիչ աստված գինա,
Խասան մե ջրու,
Արդեն Սասունի ջուրն ա, օր կիքա։
Նստան էտ ջրի կուշտ, ըսկսին խաց ուտել։
Օրերն էր անցե ճամփխին, խոքնուկ ին։
Սանասարն ըսեց.
— Էս փոքր ջուրն օր կիդա,
Կղանա էս մեծ ջրուն, տենի՛ս, կկտրա,
Մեքիչ գուքա, նոր կխառվի խեռ, կեքա։
Էստեղ մի նշան դնենք, մե շենք շինենք,
Էս տեղ եղի մեղի քաղաք։
Էդպես էլ որոշեցին էրկու ախպեր իրար մեջ։
Մնացին էդտեղ հիրիկուն։
Հառավոտուն հելան էկան էդ մոդիկ քաղաք,
Պտուտելով՝ սալխ առան թաքավորից,
Էկան թագավորի մոտ, խնդրեցին.
— Ո՛վ թագավոր ապրած կենա,
Մեղի մե տեղ տուր, ապրենք։
Թագավոր ընդունեց, հոգով սիրեց։
— Ախպե՛ր.—ըսավ.—մեր խոստումն ի՞նչ էլավ,
Մենք տեղավորվանք, մենք պահման կապինք,
Քի ջրու կուշտ տուն շինենք։

### ՍԱՆԱՍԱՐՆ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐԸ ԴԵՏԱՓԻՆ ԻՐԵՆՑ ԲՆԱԿԱՏԵՂՆ ԵՆ ՀԻՄՆՈՒՄ. ՍԱՆԱՍԱՐԸ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է ԹԱԳԱՎՈՐԻ ԱՂՋԿԱ ՀԵՏ

Նորից հելան էկան ջրու մոտ, նշնի մոտ,
Թագավորին ըսին.— Կեքանք ընտեղ տուն շինենք։
Ոդրին դրեց տղեքի խեռ.
Տեսավ, էկավ ըսավ.
— Թագավոր ապրած կենա, տղեք տեսած ջուրը լավ ա,

Դու էլ տենաս, կհավնես։
Տղեք վարպետներ ուղին թագավորից, ըսկսին բաննել,
էն մեկ օր Սանասարն ասեց.
— Մի նամակ գրեմ թագավորին, թող մեղի մե խացքուխ ճամփա։
Գրեց, ճամփեց թագավորին։
Ոզիրն ըսեց.—Էդ տղեն կուզա ամուսնանա։
Բե՛ր, քու աղջիկն տանք էդ տղին,
Դրանք խելոք մարդիկ են։
Թագավորն հիրան աղջիկն պսակեց տղի վրեն։
Ամսներ հնցան,
Տղեն տեսավ օր Բաղդասարն լղարում ա, նիաթ կախուկ ա,
Ըսավ,—Ախպե՛ր, շատ կզաբենաս, ինչ ա պատճառ։
Բաղդասարն ըսավ.
— Էն մեր հոր կուռքն ամա գքա, կմտնի իմ գլխու տակ,
Դիշեր ցերեկ կմկմկա, չթողա ես սթրիմ դիշեր։
Ախպորն մի ամիս էլ պախեց, ըսավ.
— Գնա՛, մեր մորը ըսած խրատով շարժվի։

ԲԱՂԴԱՍԱՐԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՄՈՐ ՄՈՏ, ՄՈՐ ՀՈՐՀՈՒՐԴԸ

Էս մարդ էկավ տեսավ՝
Հիր խերն գացեր էր իր դիվան, հիր թաղին։
Մոր բարև տվեց, բարև առավ,
Մերն ըսավ.—Բա օրթի ջան, հորի՞ էկար,
Էդի դշեր-ցերեկ մարդ կճամխա քաղքներ,
Էս յան, էն յան,
Ձեզի ա պահանջում, օր սպանա,
Դու հորի՞ էկար,
Էդ ի՞նչ էր խանիր իմ գլխ։
Ըսավ.—Կսպանա, թըխ սպանա,
Դիշեր ցերեկ քուն չունեմ, շատ կտանջա ընձի։
Դե՛, օրթի ջան, մկը էնի օր էկավ, կուրխնա օր դու էկեր ես,
Կպահանջա քու ախպորն էլ։
Դու ըսա, օր էն էլ կիգա։
Քեզի կտանա իր կռքու տուն.
Դու կտեսնաս օր մի շաշպատ կա.
Նրա նիզագն, թուխակն կվերցուա.
Քու գլխին կզանա, քեզի կսա երկիրպաքութիուն տուր.
Կկզվիս, կխոնարես, էն թուխուլ կզանաս
Թե թուխուլն առաջ զանիր խորըդ, տու կպրծես,
Թե չէ՝ քեզի կսպանա, բալա ջան։
Էդ խոսքի վրեն՝ խերն դռնից մտավ։
— Ա՛յ պզտի կռքի մատաղ,
Ես քեզի էսօր կմատղեմ։
— Խեր ջան, էկեր եմ, օր մատղես։
— Բա՛ ո՞ւր ա ջոջ կռքի մատաղ։
Ըսավ.—Սանասարն էլ կիքա։
Դ՛ը էրթանք։

ԿՌԱՊԱՇՏ ԹԱԳԱՎՈՐԸ ԲԱՂԴԱՍԱՐԻՆ ՓՈՐՁՈՒՄ Է ԶՈՒՀԵԼ ԻՐ ԿՈՒՌՔԻՆ, ԲԱՅՑ ԲԱՂԴԱՍԱՐԸ ՍՊԱՆՈՒՄ Է ՆՐԱՆ ԵՎ ՆՐԱ ՓՈԽԱՐԵՆ ԴԱՌՆՈՒՄ ԹԱԳԱՎՈՐ

Վերցեց տղին, առավ, գնաց կռքատուն,
Դուռ բացեց, տղին ասավ.
— Դե՛ երդիրպաքութուն տուր, օր քեզի մատղեմ։
Տղեն ըսավ.—Բա ես գինա՞մ, դու ցույց տու՝ ո՛նց էնեմ։
Խերն օր կռացավ,
Տղեն թուխուլով տվեց գլխուն,
Խորն վերջ տվեց։
Օդից բռնեց, կանչեց մոր, ըսավ.
— Մեր ջան, քո ասած կատարեր եմ։
Կանչեցին բերին ժողովուրդ, ըսին.
— Էկեք էս տղեն դնենք թագավոր,
Դուք էլ էսոր ծառա։
Բոլոր մարդիկ խոստովանան Քե.
— Քո՛ւր ջան, դու չգինա՞ս, օր մենք աստվածածանոթ ենք,
Մենք գիշեր-ցերեկ աստված կկանչենք.
Քո մարդու հախտ մենք էլ ինք էղի կռքապաշտ.
Թո՛ղ քո տղեն հեղնի թագավոր։
Էդպես էլ հեղավ։
Տղեն նամակ ճամբեցեց Սանասարին։
Թող Բաղդասարն էստեղ վայլա,
Մենք դառնանք Սանասարի վրեն։

## Բ
## ԱՌՅՈՒԾ ՄՀԵՐ

ԱՌՅՈՒԾ ՄՀԵՐԻ ԾՆՈՒՆԴԸ, ԹԱԳԱՎՈՐԻ ԱՅՑԸ ՍԱՍՈՒՆ

Սանասարի կին պառկավ, մե տղա բերեց,
Անուն դրին Մհեր։
Նի օր Մհերն հեղավ խելքիխաս տղա, հորն ըսավ.
— Խե՛ր, ես պետք ա վանքեր շինեմ, բերդեր շրջեմ։
Ի՞նչ տղա, ի՞նչ տղա, հսկա՛ տղա։
Անգամ առյուծին էլ ճղեց,
Քաշեց, էրկու ճղեն էրեց,
Անուն դրին Առյուծ Մհեր։
Մհերն օր մեկ, էրկու, իրեք, չորս՝ մենձացավ, հասունացավ։
Ոզիրն ըսեց.—Թագավո՛ր, հըլի էրթանք քու աղջկա հավար,
Էրթանք տեննանք՝ ի՞նչ հալի են։
Հելան ոզիր-ոքլներով բավականին նաղարա, բան,

Հելան գացին տեսութեն աղջկան։
Գացին, խասան Սասուն,
Տեսան օր ի՜նչ. խակապես Սասուն,
Էնպիսի քարեր ա հանե,
Օր մեկ քար հազար փթանոց, բերած, պատ ա շարած,
Մի մեծ պարիսպ ա սարքած
Ու իրանց շենքն էլ ըդմալ մեծ քարով ա։

## ԱՌՅՈՒՆ ՄՀԵՐԸ ԿԱՌՈՒՑՈՒՄ Է ՎԱՆՔ ԵՎ ՈՐՍԱՏԵՂ

Առյուծ Մհերն ըսեց.
— Քեռի՜, ես,—ըսեց,—ըստեղ չեմ կարա մնա,
Դուս գամ վանքեր, բերդեր պատրաստեմ։
Հելավ գնաց։
Գնաց, Մսրա Մելիքի սայման գնաց,
Տեսավ օր սարի տակ մի էնպիսի բաղ-բախչա ա.
Էդոր չորս կողմ պարիսպ քաշեց,
Մե խատ էլ վանք շիքեց։
Էդ վախտ որ պառկավ քնավ էդ վանքի դուռ,
Երազ տեսավ՝ աստվածուհյուն.
Ըսեց.—Մհե՛ր, վանք կմտնես,
Մի համայիլն եմ օղարկե քե համար.
Էդ համայիլն կդնես քո ծոց,
Եթե սուտ հերթվիս՝ ձեռ ղարկես համայիլի վրա, ձեռդ կսևնա,
Եթե ճիշտ հերթվիս՝ ոչինչ էլ չի հեղի։
Մտավ վանք, առավ դրեց ծոց, ուրախացավ, ըսեց.
— Նշանակում ա իմ նպատակ բարին ա, կկատարվի։
Էրկու-իրեք դուռ թողեց պարիսպին.
Թիշեր դռներ կբանա,
Առավոտ կիքա, դռներ կծածկա,
Ամեն ներս, կտեսնա,
Ինչ թաուր որս ըսես որ բաղի մեջ կա։

## ԱՌՅՈՒՆ ՄՀԵՐԻ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՄՍՐԱ ՍԵՆԵՔԵՐԻՄԻ ՀԵՏ, ՆՎ ՄՀԵՐԻ ՄԱՀԸ

Ցաբար գնաց խասավ Մսրա Մելիքի խոր՝ Սեննեքերիմ.
Հանշեց Մհերին, ըսեց.
— Էդ որսատեղ ես էլ կիքամ քո խետ։
Երկով գուքան էդ տեղ, որս կանեն։
Մի առժամանակ՝ Սեննեքերիմն ըսեց.
— Արի՜ էքանք մեր տուն, մի ժամանակ էլ մեր տուն մնա։
Ցացին, շատ մտերմացան։
Առժամանակ անցավ, Մհեր շատ էր մեծացե,
Մե օր էլ մեռավ։

## Գ
## Դ Ա Վ Ի Թ

### ՔԵՌԻ ԹՈՐՈՍԻ ԿՆՈՋ ԲՈՂՈՔԸ ՄՀԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՑ

Օր մեռավ, դրանից հելեր էր օխտ տղա՝
Ցռան Վերգոն, Ճնճղափորիկ, կեռ Մանուկ,
Ձենով Հովան, Ճոռ Մանուկ։
Էդ որքերն տուն են, քեռի Թորոսի մոտ են,
Հելավ էկավ տուն,
Թորոսի կին ղալմաղալ ա կչնա.
— Ես չեմ կանա էդ յոթ* առնականվոր, արափացի երեխեքին տիրեմ։
Թուշ հեղավ մարդուն։
Մարդն էլ շատ խղճով էր, ըսեց.
— Ա՛յ կնիկ, ի՞նչ անեմ էդ երեխեքին։
Ըսեց.—Տա՛ր տուր Մալաք Սիմեյ, Քրխ պախա, Սեննեքերիմի կնգան։

### ՔԵՌԻ ԹՈՐՈՍԸ ՄՀԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԱՆՁՆՈՒՄ Է ՍԵՆՆԵՔԵՐԻՄԻՆ ՊԱՀԵԼՈՒ

Հելավ, խաց առավ, երեխեք իցկեց եդավ,
Առավ գնաց Սեննեքերիմի մոտ, ըսեց.
— Դու թագավոր մարդ ես,
Դու գիտես, օր հայեր նոր բնակվող մարդիկ են,
Քեզի ենթակա մարդիկ ենք,
Հիմա, էս քու ախպեր Մհերի երեխեքն են,
Պտի պաշտպանես, քեզ ծառայություն քրխ էնեն։
Համաձայնվան, երեխեքին առան, պահին.
Ամեն՝ մի գործի դրեց։
Մնաց, դարձավ էկավ տուն։
Անցավ ժամանակ, երեխաներ մեծացան.
Դավիթ մե խանչալ ա գտե,
(Էդորն էլ ծուռ Դավիթ կսեն, ամենափոքրն ա),
Էդ խանչալ կվերցու, կերթա արդեր,
Գյաղար ա կխանա, կարտող ա կխանա։
Դրա համար էլ դրա անուն դրին Պլեճկեր Դավիթ։
Մի օր Քեռի Թորոսն ըսեց.
— Ա՛յ կնիկ, մեր որքեր էսա ութ-տաս տարի քողել ենք էնտեղ,
Սեննեքերիմն էլ մեռեր ա։
Դրան ուներ մե տղա,
Տղի անուն Մսրա Մելիք էր, Դավթի քայն էր։

### ՔԵՌԻ ԹՈՐՈՍԸ ԳՆՈՒՄ Է ՄՍՐԱ ԵՐԵՍԱՆՆԵՐԻՆ ԲԵՐԵԼՈՒ. ԴԱՎԻԹԸ ՉԻ ԱՆՑՆՈՒՄ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԹՐԻ ՏԱԿՈՎ

Հելավ քեռի Թորոսն, գնաց Մսրա Մելիքի մոտ, ըսեց.

---

* Այստեղ և հետագայում Մհերի զավակները թեպետ յոթն են հիշվում, սակայն վիպասացը վերևում հինգի անունն է տալիս, անգամ մոռանալով հիշատակել Դավթին։

— Ես էկեր եմ, խնդրում եմ մեր երեխեքին տաս,
տանեմ։

— Խա՛, — ըսեց, — կիտամ,
Մենակ գան իմ քրի տակով հնցեն, որ ես դրանց
պաշտպաներ եմ,

Ընձի ենթակա հելին։
— Ա՛յ մարդ, — ըսեց, — ի՞նչ կասեն էդ
երեխաներ, որ քեզի ենթակա չեղին։
Բազմութուն հավաքեց, տղերք հըմեն հնցան քրի
տակով,

Մնաց Դավիթ. ի՛նչ էրին, չէրին՝ չհընցավ.
— Չհընցիմ, — ըսեց, զալմաղալ սկսեցին։
Հանդելով բերին,
Հրի թուր բռնե, օր Դավիթ պտի հընցի։
Էկավ, հսկա տղա յա, չհընցավ։
Էլավ վերցեց էրեխեքին, էկան։
Քեռի Թորոսի վրեն նեղություն ա տվե,
Էդքան էրեխա՞ անաշխատանկ։
Էկավ գեղի մեջ, ըսեց.
— Գյուղացինե՛ր, տարեք, մեղի հորթարած չկա,
Դավթին կարգինք հորթարած։
Վերցին Դավթին դրին հորթարած։
Էդ ժամանակ Մհերը Սեննեքերիմի կնգա խետ
ապրած էր,

Մելիքը՝ Մհերից հեղավ։

## ԴԱՎԻԹԸ ՀՈՐԹԱՐԱԾ ԵՎ ՆԱԽՐՈՐԴ. ՆԱԽՐՈՐԴ ԸՆԿԵՐԸ, ՀԱՐԻՍԱՆ ԵՎ ԱՎԱԶԱԿ ԴԵՎԵՐԸ

Դառնանք յոթ ախպոր վրա։
Դավթին հորթարած դարձուց։
Հորթեր կտանա դաշտն, կարածացնա,
Հորթեր կմոզուին.
Կլի կերթա, կլարա,
Դաշտ ինչ կա՝ կառնի կխառնա հորթերուն, կբերա։
Կբերա ամբողջ գեղամեջ,
Գյուղացիք կալմակալ սկսեցին, ըսին.
— Էս ծուռն էս ի՞նչ ա կէնա,
Սարի չանավարներին էլ կբերա, քաղաք կլցա,
Հարկավոր չէ ըդմալ հորթարած։
Դավիթն ըսեց.—Չկանամ, չճանչամ հորթ ո՛րն ա,
գել ու արջ ո՛րն ա.
Ինչ որ հընգի ձեռա՝ կբերեմ քաղքի մեջ։
— Օր ըտենց ա, հելի՛ էրթանք նախրորդ դառի,
կով, եզ պախա։

Դավիթ դարձավ նախրորդ։
Կեթա կայնի ժամու դուռ,
Կտանա սար՝ հառավոտնեն չուր ճաշին,
Կեսօր կկոտրի, կբերա։
Էն մեկել օր տարավ,
Տեսավ օր հարևան գյուղից մե նախիր էկավ։
Իշկեց, կայնցուց.
Բոռաց, ըսեց.—Անունդ ի՞նչ ա։
Ըսեց.—Դավիթ ա, Սասնա նախիրն ա, արի
դառնանք հընդեր։
Բարիշան իրար խետ, մի քանի օր պախին։
Մի օր էլ տեսավ օր նախրորդ չկա, նստավ
սպասեց.

Տավար քոմեց, կայնցուց։
Տեսավ օր հենա էկան,—Ա՛յ տղա, հընչի՞
ուշացար։
— Դավի՛թ ջան, մեր գյուղ մեռել կար, խարխա
ին գրած.
Էնքան օտս քալի կախ, օր ուտի, չտվին.
Հերսոտա, նախիրը քշի, էկա։
Ըսեց.—Դու պախա նախիր, ես էթամ, քեզ
խարխա բերեմ։
Էրկու նախիր խառնեց հիրար։
Դավիթ ուր չտախ դրեց քևի վրեն, հիջավ գյուղ.
Տեսավ՝ գյուղի կրազ շատ ժողովուրդ ա
հավաքված,

Քսան ճերիկ խրխսա յա գրած,
Ղաղներով յուղ ա գրուկ։
Էկավ, հիջավ՝ մե հսկա՛, բոլոր նային գրան.
Բարև տվեց, բարև չառան,
Նոսոտավ, կանքերով ճերիկի մեկ քալեց ուր
չոմախ, էշեց, առավ էկավ,
Մոռցավ՝ աղ չքալեց։
Տեսավ՝ հընդեր նստե, կիլա։
— Հընչի՞ ա կիլաս։
Դավի՛թ ջան, քառսուն հարամի քալին իմ վրեն.
Իմ նախրից քառսուն խատ անծին էրինջ չոկին,
առան գացին,

Ես էդոնց տիրվանց ի՞նչ չուշաբ տամ։
— Բան չկա, դու նստի խրխսա կեր,
Ես կերթամ էրինջներու հետևից։
Դավիթ իզ բռնեց,
Չոմախ դրեց վըր քևուն ու գնաց։
Գնաց խասավ Գարեք օղաներ մի մեծ լեռան.
Սրա տակ էլ մի մեծ հէր կա,
Հանդաչ դրեց, տեսավ օր հէրից փսփսուն ա գալի։
Ըսեց.—Մոնիմ ներս չի հեղի։
Դողտու նայեց օր կրակ ա արած,
Ղաղներ դրած ա վրեն, կեփեն քլքլալեն միսը,
Մորթած բոլոր էրինջներ։
Կայնավ դռան դեմ։
Կերան, խմեցին,
Մեկին ըսեցին.—Գնա՛, չուր բեր։
Էդի հելավ էկավ.
Ջարկեց էդոր իցկեց, հոլնեցց, գնաց գլխիվեր։
Վերջ՝ համարյա քե քսանին սպանեց,
Մնաց հէրի միջի քսան խոքին։
Մտավ հէր, էդ քսանն էլ չոմախով դան սատկցուց,
Հընգավ հէրի մեջ, պատռեց,
Գնաց, մե դուռ բացեց,

Տեսավ օր արծաթ մե յան ա լցուկ, օսկին մե յան.
Ինչ օր թալանած բերած՝ լցած էդ տեղ։
Ըսեց.—Էթամ, Քեռի Թորոսին բերեմ, էս օսկին տանենք։

ԴԱՎԻԹԸ ԴԵՎԵՐի ՔԱՐԱՅրից ԶԵՌՔ Է ԲԵՐՈՒՄ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՈՒՐԿԻԿ ՋԱԼԱԼԻՆ

Մե դուռ էլ բացեց, տեսավ օր մե խատ էնե՜նց ձիան քուռակ ա,
Խրհղեն ա, արևու նման փայլ կուտա։
Ըսեց.—Քեռի՜ Թորոս, օսկի արծաթ քե, քուրկին ընձի։-
Ըսեց.—Խացն ու գինին, տեր կենդանին վկա, ձին իմն ա։
Հերի մեջ ուրին-ուրին կխոսա։
Էրինջներու ակնջներն էլ տվեց ընկերոջ,
Ըսեց.—Էրինջներ էփած, կուտին,
Ակնջներն ըլըխ տերեր տանեն։
Ոն որ քեզի բան կասա,
Ըսա՝ հերիկվա խրխսա տանողին կսեմ, ձեզի կսպանա։
Էլ մարդ քե բան չասա։
Նախիր տարավ, էկավ տուն,
Քեռի Թորոսին պատմեց.
— Հելի գնա՜, դյուղացիներից բեռ ու ջվալ ա, մեշոկ ա՝
Հուղա, բե՜, էթանք բերենք։
Հելան գացին, հարևաններից ուղին, ըսին.
— Իմ Դավիթ ցան ա ժողովե, էթամ առնեմ, գամ։
Արևն չմտեր էր, հելան Դավիթն,
Քշեցին էդ ղաթրներն ու գացին։
Գացին, խասան հէր, լուլսեր վառեցին։
Միան խազինեն Քեռի Թորոսն օր տեսավ՝ աշկեր կայնավ, ըսեց.
— Էս ի՞նչ բան ա, էսքան էլ հարստութի՞ւն։
Բերեցին բեռներ լցին, կապոտին ձիան վրեն,
Հլա մեկ մեկ էլ ցան դրին կշռներ,
Օր գիշեր ջուր էնողներ տենան՝
Քեռի Թորոսն էկավ, ցան ա բերե։
Էկան խասան տուն։
Դավթի համար օսկի, արծաթ ինչի՞ պետք ա,
Նստավ իրան ձին, կէթա որս կէնա,
Սարեր կպտուտա, կդառնա գուքա.
Նախրութուն ըողեց։

ԴԱՎԻԹԸ ԵՎ ԱՐՏԱՏԵՐ ՊԱՌԱՎԸ

Դավիթ աղատ կպտուտա,
Քուրկի Ջալալե էր դրե ձիու անուն։
Մենաց մե առժամանակ,
Դավիթն ձին քշեց, գնաց մի պառվու կորկի ատա.
Լոր-մոր կար, զարկեց,
Պառավ հելավ, անիծեց.
— Տո՛, —ըսեց, —վարամ թալես, վարամ տռճկե՜ս,
Էլ դաշտ բան չկա՞ր,
Դու էկար իմ կորեկ ջարդեցիր...
Քո խեր ունի Ծովասար-Ճապաղջուր՝
Մսրա դաշտի մոտ,
Քո խոր որսատեղն ա,
Մսրա Մելիք զանիք էրե.
Դու էկեր էս իմ արտի մեջ լոր ա կլարե՞ս...
Գնա՛, քո խոր որսադաշտն տիրա՛։
Դավիթ խանեց ճանգամ օսկի, տվեց նանեյ, ըսեց.
— Նանե՛, ջան, էդ որտե՞ղ ա.
— Բա՛, մեռնիմ քեզի, բալա՛ ջան, դու չգինա՞ս.
Քո խոր մի որսատեղ կա, գնա՛, որս էրա։

ԴԱՎԻԹԸ ՔԱՆԴՈՒՄ Է ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՋԱՎԹԱՍ ԾՈՎԱՍԱՐ-ՃԱՊԱՂՋՐԻ ՈՐՍԱՐԳԵԼԱՆՈՑԸ

Դավիթ դարձավ, էկավ տուն՝ դիլխոր։
Քեռի Թորոսն ըսեց.—Դավի՛թ ջան, հորի՞ ես տխուր։
— Քեռի՛ Թորոս, որտե՞ղն ա իմ խոր որսադաշտ,
Ես կերթամ խլղի դաշտեր։
— Է՛, բալա ջան, Մելիքի թագավորութուն ա,
Մենք նրանից չկռնանք առնինք։
Հելավ առավոտ, լուսն ու բարին բացվի ձեր վրա,
Բացվավ էդ մարդու վրեն,
Նստավ Քուռիկ Ջալալին, քշեց Ծովասար-Ճապաղջուր։
Քշեց, տեսավ օր մի լեռան տակ ա,
Մի հասարք ա քաշած, սարքուկ ա,
Գնաց, էկավ, թափուքամ տվեց՝
Դուռ ջարդավ, բացվավ երկթե դռներ,
Մտավ ներս, նետ-աղեղ վերցուց, սկսեց որս էնել.
Մի քանի հատ մարալ զարկեց,
Քցեց ձիան վրեն, էկավ.
Ըսեց.—Հա՛յ Քեռի Թորոս, ի՛նչ եմ բերե։
Էն մեկ օր՝ Մսրա Մելիք գցեց մտեն,
Հելավ, գնաց որսատեղ,
Տեսավ՝ դռներ ջարդուկ, ի՞նչ որս, ի՞նչ բան,
Ըսեց.—Է՛, էսի Դավթի շառն ա։

ՄՍՐԱ ՄԵԼԻՔԸ ՅՈԹ ՏԱՐՎԱ ՀԱՐԿ Է ՈՒՂՈՒՄ ՍԱՄՈՒՆՑԻՆՆԵՐԻՑ, ԴԱՎԻԹԸ ՊԱՏՈՒՀԱՍՈՒՄ Է ՀԱՐԿԱՀԱՆՆԵՐԻՆ

Հելավ, էդքան ժամանակ Սասնա հարկ չէր վերցրե,
Օխտ տարվա հարկ մ'ացեր էր,
Վերցուց էդ փայլևաններ՝ չորս-խինգ խոքի, ո-ղորկեց,
Ըսեց.—Կերթա՛ք Սասուն,
Օխտ տարվա հարկ կհավաքեք, կառնի՛ք, գա՛ք.
Էնոնք մեր խատ թշնամութուն ա կըքշեն։

Օխտ փայլևան երգելով հելան Քըխ Սասուն։
Կնանիք հավաքված են, ըսին.

— Ալադին ու Կողբադին գացին Սասունը բա՜ն,
Կեռի կովեր կբերեն կթան,
Մողալ եղներ կբերեն լծան,
Կարճ կնգթիկ կբերեն՝ էրգանք աղան,
Հերկան կնգթիք կբերեն՝ ուղտեր բառնան։

Կերդեն ու կպարեն։
Էդոնք էկան, Քեռի Թորոսին գթան,
Բանմ՝ էլ ամոթանք տվին ու խարջը ուղին,
Թե՝ օխտը տարվա հարկը բե՜։
Հնգավ գեղի մեջ՝ օխտ տարվա հարկ։
Ու ով որ մե խատ կով ուներ, էն էլ ծախեց,
Բերեցին, հավաքեցին,
Հելավ յոթը դևի բեռ։
Խաբար տարան Դավթին, թե՝ «Դու էկեր ես որս ես անում,
Ա՛յ քո հոր ոսկին կտանենն»։
Էն վախտ էկավ որ՝ հորոխպեր վիզ ծռած կայներ էր՝

Իսկ Կողբադին օսկին կչափեր,
Ասում ա.—Ա՛յ հորոխպեր, էս ի՞նչ խաբար ա։
Ասում ա.—Դավիթ ջան, մենք պարտք ենք
Օխտ տարվա խառջ ու խարաջ պտի տանք նրան։
Դավիթ ըսեց. Թողե՛ք, իմ հոր օսկին ես չափեմ։
Կոտն առավ ձեռներ, երկուսի գլուխն էլ ջարդեց,
Ըսեց.—Գնացե՛ք, ձեր թագավորին ըսեք,
Թող գա ինձ խատ կռիվ անա,
Թե կոշախ ա՝ զոռով տանի.
Գացեք ասեք, օր Դավիթ իր հոր օսկին չի՜ տա։

## ԱԼԱԴՆԻՆ ՆՎ ԿՈՂԲԱԴՆԻՆ ԵՒԼՐՈՂ ԿԱՆԱՑՔ

Եփ որ էդ չորս փայլևան դարձան էկան,
Կնգթիք տեսան, ըսին.
— Ալադի՛ն, Կողբադին գացին Սասունը բա՜ն,
Կեռի կովեր կբերին կթան,
Մողալ եղներ կբերին լծան,
Կարճ կնգթիք՝ էրկանք աղան,
Հերկան կնգթիք՝ ուղտեր բառնան։
Աղչկներ ըսեք հառջայման, հառջայման,
Աշուն կչենք եղ ու չորթան։
Ասըմ ա.—Ա՛յ լրբեր, դու ձեր մարդիկն էք տեսե,
Դուք չէք տեսե Սասմա ծռեր,
Սասուն էնպես մարդիկ կան ահարկու։

## ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԸ ԵՎ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՍԱՍՈՒՆԻ ՎՐԱ

Գնացին թագավորի կուշտ, ըսին.—
— Թագավոր ապրած կենա,
Սասմա երկիր մի ծուռ կա, անունն էլ Դավիթ,
Նրա դեմ մարդիկ չին կայնի,
Ասըմ ա. «Գնացե՛ք, ձեր թագավորին ըսեք՝
Թըխ գա ինձ խատ կռիվ անի,
Թե կանա՝ զոռով տանի։
Մսրա Մելիքն հավաքեց քառսուն տարեկանից բարձր մարդիկ
Ու քսան տարեկանից էլ ցածր հավաքեց,
Էկավ Սասմա վրեն. էկան պատերազմ։
Ջենով Հովան տեսավ,
Օր էդ Սասմա գետան ջուրն շատ բղդոր ա, շատ էլ պակաս ա,
Հելավ բարձր մի բլուրի գլոխ,
Տեսավ ի՞նչ. աստղին խսաբ կա,
Սասմա դաշտի մեջ խփած չադրներուն խսաբ չկա։
— Ա՛յ հա՛յ, հավա՛ր, ա՛յ հավա՛ր, փախե՛ք, փախե՛ք, փախե՛ք։
Դավիթն ըսավ.—Ի՞նչ փախեք, ի՞նչ ա հեղե։
Ասըմ ա.—Չոռն ու ցավն Դավթի պընչին ա էկե, ա՛յ քե ինչ ա էկե։
— Խորոխպե՛ր, դու քու տեղն հանգիստ մնացի,
Ես կերթամ, նրա պատասխան կիտամ։

## ԴԱՎԹԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ, ԿՈՏՈՐԱԾԸ ԵՎ ԱԼԵՎՈՒՐԻ ԽՐԱՏԸ

Հառավոտուն Դավիթ խեծավ իր ձին,
Քշեց, գնաց Սասմա դաշտին,
Տեսավ՝ չադրներուն խսաբ չկա։
— Ով,—ասում ա,—քնած ա, զարթե՛ք,
Զի թամբեք, կռիվ էկեք.
Ըսեք՝ Դավիթ գող էկավ, գող կէթա։
Ու սկսեց կտրել, ջարդել։
Մի ծեր մարդ ըսավ...—Ա՛յ ջել երիտասա՛րդ,
Քու քուրդ կտուր քող լինի.
Ի՞նչ կուզես էս քյասխպներուց,
Մեզի զոռով թագավորն ա բերեր ա։
— Թագավորն որտե՞ղ ա։
— Էն կանաչ չադրից օր ծուխ կելնի,
Էն էլ խո ծուխ չէ, բերնի գոլորշին ա։

## ՄՍՐԱ ՄԵԼԻՔԸ ԴԱՎԹԻՆ ԽԱՓՈՒՄ, ԳՑՈՒՄ Է ՀՈՐԻ ՄԵՋ

Էկավ, կայնավ էդ չադրի կուշտ, ձեն տվեց։
Ըսին.—Քնած ա, օխտ օր քուն պտի մտի,
Դեռ մի օր ա քնել։
Ասում ա.—Քուն-մուն չիմ գինա,
Թո՛ղ զարթի, ես էնպես քնացնեմ՝ չուր էդ մախ չզարթնի։
Էդ տեղ մի քյառսուն գյաղանոց խոր էր փորել.
Գիներ էնի, Դավթին խորի վրա նստցուց,
Թափ հընգավ մեջ Քըխ խոր։
Զին քռավ դաշտ, քուրն առավ, գնաց։
Թագավորն հելավ, ըսեց.
— Դը՛ բերեք քարկոծ հնենք, սպանենք։

էն մեկն էլ ըսաց.—Քար կկոխրջա, կըլնի,
Բերեք, արջիջ հլնանք վրեն։

### ԴԱՎԻԹԸ ՋԵՆով ՀՈՎԱՆԻ ԽՈՐՀՐԴով ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ՀՈՐԻՑ

Էդ որոշման խետն ին,
Քեռի Թորոսն տեսավ օր՝ Դավթի ձեն կտրվե,
Էնդոնք ուրախութուն ա կէննեն։
Հելավ հեկավ, Ջենով Հովանին ըսեց.
— Տո՛ անպետք մարդ,
Մե բոռա Դավթին, տենանք՝ Դավիթ կա, թե չկա։
Բերին օխտ գոմշու կաշի, փաթթին Հովանի մեջը,
Հովան բոռաց.
Օր բոռաց՝ ձեն հընգավ Դավթի հանգաճ,
Ըսեց.—Էսի Ջենով Հովանի ձեն ա։
Քեռի Թորոսն ըսեց.—Մեկ էլ բոռա։
Ըսեց.—Կանչա՛ սբ. Նշան,
Բարսին-Մալանդին ուր աջ թևին,
Ջա՛ն, քե կբխանա դուս։
Դավիթ լսաց.
— Դավիթ ձեռ զարկեց սբ. Նշանի վրեն,
— Աստվա՛ծ,—ըսեց,—ինձ էս նեղ տեղից
աղատեա,
Էլ ես փորձանքի չեմ հանդիպի։
Ջեռ օր դանեց՝ թռա՛վ,
Բռնելուն խետ՝ հելավ խոլվաթ։
Թափան վրեն, է՛, ի՞նչ պիտ էննեն Դավթին.
Ջարկեց դես-դեն, հիջավ Ջալալուն նստավ,
Ու սկսեց վրանի բոլոր պտուտել։

### ԴԱՎԹԻ ՆՎ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ։ ԴԱՎԻԹՆ ՍՊԱՆՈՒՄ Է ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻՆ

Մալաք Սիմեն մի խատ էլ աղջիկ ուներ.
Էկան, Մսրա Մելիքն էլ վրանից հելավ էկավ...
— Հա՛,—ըսեց.—Դավի՛թ, զորքն հընչի՞ ա։
Դավթին ըսեց.—Դու կախարդութուն ա կէննես,
Դո՛ւս արի, մեկտեղ կռվենք։
— Հա՛,—ըսեց,—կռվենք։
— Դավիթ,—ըսեց,—զարկն հառաջին իմն ա, թե՞
քոնն ա։
Դավիթ ըսեց.—Քո դաշտի մեջն ենք, քո՛նն ա։
Դավիթ նստեց Քուռիկ Ջալալին,
Մսրա Մելիք գնաց, էկավ, թուր քաշեց Դավթին։
Դավիթ պտտեց, էկավ։
Մանգան իրեք ա, իրեք զարգ պտի զարգա։
Իրեք զարգն էլ զարկեց, Դավիթ չկա։
— Դորն ի՛մն ա,—ըսեց Դավիթ։
Դավիթ ձին քշեց, գնաց, օր պտի գա, զարգա.
Էդ րոպեին մերն հելավ հառեջ. ըսեց.
— Դավի՛թ ջան,—ըսեց,—չէ՞ որ ես քե ծիծ եմ
տվե.
Դու արի՛, էս մեկն ինձ բախշա։
Գնաց, մեկ էլ նկավ, էս դոր էլ քուրն էկավ առեջ.
— Դավի՛թ ջան, էս մազերս ա՛ռ օդացդ տակ,
ինձ բախշա։
— Քույրի՛կ ջան, էս մի դրբն էլ քեզ.
Մնաց մեկ, էլ ով գա՝ չեմ բախշա։
Բերեցին Մելիքին հիջուցին էդ խորը,
Փալասներ լցին վրեն, քարեր դրին վրեն։
Դավիթ գնաց, պտտեց, էկավ,
Թուր քաշեց, կանչեց համալիլ Բարսին Մալանդին,
Քաշեց, զանեց։
Թուր հիջավ քյառսուն գյազանոց խոր,
Մելիքին կտրեց, արեց էրկու խատ։
Ուր ձին քշեց, գնաց.
Ջորք փոր ու փոշման դարձան, գնացին։
Էստեղ Շովասար-Շապաղջուր՝ տիրեց Դավիթն
Ու սկսեց իր որսը կտրել։
Քշեց, գնաց, թագավորութուն հանձնեց ողրին,
Մելիքից վերցուց, հանձնեց ողրին,
Էդ էլ ենթակա էրեց Սասունին.
Սասուն դառցավ հռչակավոր երկիր։

### ՀԱՆԴՈՒԹի ՆԱՄԱԿը ԴԱՎԹԻՆ։ ՋԵՆով ՀՈՎԱՆը ՆՆՋՈՒՄ Է ՆԱՄԱԿԱԲԵՐԻՆ

Դավիթն էդ տեղ սարի գլոխ.
Մե ուրիշ թագավորի աղջիկ՝ Խանդութ խանըմ,
Մի նամակ գրեց Դավթին։
Նամակում գրեց.
«Դավի՛թ ջան, կանաչ սար, Կապուտ կող Խանդութ
խանըմ քեզ կսպասա.
Հերհսդ էդտեղ տղկես, գաս էստեղ՝ կնդես»։
Կտա մի խատ արագավազ մարդու, կասա.
Կտանեք Սասուն, կիտաք Դավթին։
Էդ մարդ գուգա,
Դավթի ախպորտանցե մեկ կհանդիպա դրան,
Ջենով Հովանին ա կասա.—Էս նամակ Դավթին
պիտի խասում.
Կըսա.—Դավիթ՝ ե՛ս եմ։
Կառի նամակ կկարդա,
Մե՛ խատ սիլեմը կըզանա էդոր.
Օր կզանա՝ թուղթ կթալա էդոր, վիզ կծռի, կէթա
հետևանց։
Ու էդի, Դավթին քրվելով, թուղթ էլ ձեռ, կդառնա
կէթա։
Կէթա, Դավիթ ուր որսատեղից կհիջնի կիգա,
Կտենա, որ մե մարդ վիզ ծուռ կէթա,
Դավթին ուշունց ա կիտա։
Կասա.—Ա՛յ տղա, էդ հընչի՞ ինձ կքրվես։
Կասա.—Մե խատ մարդ ըսեց ես եմ Դավիթ,
Թուղթ առավ կարդաց, զարկեց։
— Բան չկա,—վիզ դզեց։

— Դավի՛թ ջան,—ըսեց,—կանանչ սար, Կապուտ
կող խանդուք խանըմ
Քեզի հրավիրում ա հիրա մոտ։

ԴԱՎԻԹԸ ԳՆՈՒՄ Է ԿԱՊՈՒՏ ԿՈՂ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ
ՔԱՎՈՐ ԳՈՐԳԻՆ

Հելալ նստավ ձին, քշեց,
Գնաց խաստավ մե խաստ քաղաք,
Օր պտի էքար էդ սար։
Ձին թողեց, գնաց ուր խոր Քավոր Գորգիի դուռ,
խրխնջաց։
Ըսեց.—Խարանե՛ր, հելեք տեսնք, էսի ո՞ն ա էկե
մեր դուռ։
Հելան տեսան, ըսին.
— Էսի Առյուծ Մհերի ձին ա, բայց խեծնողն
ուրիշ ա։
Ըսեց.—Կանչե՛ք։
Դավիթ հիջավ, գնաց տուն,
Բարև տվեց, բարև առավ։
— Հը՛, ի՞նչ տղա ես։
Ըսեց.—Ես Առյուծ Մհերի տղա Դավիթն եմ։
— Հա՛,—ըսեց,—Դավի՛թ ջան, գիտեմ մա՛ց
գիշեր ըստնդ։
— Չէ՛,—ըսեց,—պտի էրթամ դևն,—ըսեց։
— Դնա՛, դառնաս՝ կիդաս էստեղն։

ԴԱՎԻԹԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ԽԱՆՈՒԹԻՆ, ԿՌՎՈՒՄ ՔԱՋԱԼ
ՀԱՄՋՈՑԻ ԵՎ ՇԱՊԿՈՎ ԽՈՐՈՎԱԾՈՒ-ԴԵՄ ԵՎ
ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ ԽԱՆՈՒԹԻ ՀԵՏ

Գնաց, բարձրացավ սար, տեսավ՝ մեծ
ամարաթներ կա.
Գնաց, խանդուք խանըմն էլ էնտեխից հիջավ,
Իսկապես խանըմ էր, շատ գեղեցիկ էր,
Էդոր գրկեց, առավ գնաց ներս։
Գացին նստան, կերան, խմին,
Դավիթ ուրախացավ, ձեռ քաշեց, որ բոկի տակ
պաքա.
Էդ ուժի խետ՝ ըդոր վիզ պտպտաց։
Մե խաստ սիլլա զարկեց Դավիթին,
Օր զարկեց՝ Դավիթ հռկեց, մքռավ։
Ըսեց.—Խանդո՛ւք խանըմ, ես կերթամ,
Քյաշալ Համզեն ու Շապկով Խորոված եմ որ
դուռն տփեցին,
Նոր կգամ, կխոսեմ քեզի։
Դարձավ էկավ քավոր Գորգու տունն։
Էդ վախտ էլ մե ուրիշ թագավոր կռիվ էկեր ա էդ
քաղքի վրա։
Էդ տեղի թագավոր աղ ու խացով խաբբեր ա,
Որ «մենք կռիվ չենք ուզում։
Դե՛,—ըսել ա,—օր կռիվ չեք ուզում՝
Խանդուք խանըմ պտի տանեն։

— Էկած, թագավորի աղջկան զոռով տանեն,
դարդխներ, դևներ խողե՛ք։
Մարդիկ էկան, Քավոր Գորգու, դուռն ու կխողեն։
Քավոր Գորգին ըսեց.—Դավի՛թ,
էկած դուռ կխողեն, որ մարդ չհելնի դուռ։
— Իմա՞ն,—ըսեց Դավիթ։
— Էկած, Խանդուք խանըմին ա կտանեն։
Ջրողին հուրանց դուռ խողին։
Դավիթ հելավ նստավ ձին,
Ջորքն հա՛յ ու հայա՛՝ կլցվի քաղաք։
Ձին քշեց, գնաց Խանդուք խանմի մոտ էն վախտ՝
Օր քաչալ Համզեն ու Շապկով Խորովածը հելած։
Քշեց ձին, խաստավ աղջկան.—
Աղջիկ Դավթին տեսեր ա, չհամոզվում։—
Էդ վախտ խաբարն էկավ, Դավթին խաստավ էդ
տեղ։
Խանդուք խանըմ որ վախտ ախ քաշեց, ըսեց.
—Ա՛խ, Դավի՛թ, հո՞ւր էս,—
Դավիթ խաստավ, ըսեց.—Ըստեղ եմ։
Յոթ-ութ օր կռվեց, կոտորեց,
Խանդուք խանմին վերցուց, առավ, գնաց Սասուն։

ԴԱՎԹԻ ՍՈՒՏ ԵՐԴՈՒՄԸ, ԿՌՎԸ
ԱԼԱԹՑԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մի առժամանակ ապրեցին, հետո ըսեց.
— Դավի՛թ, ես խեր ունեմ, մեր ունեմ, բարեկամ
ունեմ,
Էրթամ իմ ծնողներ տեսնամ.—
Հինքն էլ երկու խոքով էր, ծանղր էր։
Դավիթ ճամբեու դրեց.
Ղևաթցիք հելան հառեջ ըսին.
— Դավի՛թ, մեր կռիվ կռիվ ա.
Էս րոպեին պտի կաղնիս, կռվենք։
Ըսեց.—Կոչաղ մարդ ուր հարկի հառեջ կռիվ չը
էնա։
Թույլ տվեք, տանեմ խաստամ տուն,
Դառնամ գամ, կռվենք։
— Դե հերքվի՛ր։
Ձեռ սթից զարկեց դոշին,
Ջարկեց՝ «Սուտ ըսեմ՝ մեռնիմ»
— Լա՛վ,—ըսին,—գնա՛։
Գնաց, դարձավ էկավ,—
Որովհետև սուտ էր հերքվել, ձեռն սևացել էր,—
Սկսեց ղևաթցոց հետ կռվել.
Բավագանին ջարդեց...
Դավիթը շատ հոգներ էր։
Ժողովուրդ փախավ, կորավ։
Էդտեղ մի մեծ կամուրջ կար.
Դավիթն շորեր խանեց, մտավ լողկցավ։
Դավթից մի կյաճեն աղջիկ էր հելե,
Էդ կյաճեն նետ-անեղ առե, էկե պառկե կամրջի
տակ։

Դավիթն օր լողկնա,
Նետ-անեղ բռնեց Դավթի սրտին.
Ջարկելուն՝ թիկնքից տվեց դուս։
Դավիթ էդտեղ կռռաց, հընգավ գետան մեջ,
Խանդութ խանըմ պառկեր էր, մի տղա էր բերի,
Դավթի կռռոց օր լսավ, պալատից թալեց հուրին.
էն էլ էդտեղ մնռավ։

## Դ

## ՓՈՔՐ ՄՀԵՐ

ՓՈՔՐ ՄՀԵՐԻՆ ՔՆԻ ԹՈՐՈՍԸ ԲԵՐՈՒՄ Է ՍԱՍՈՒՆ

Էդ ևրևխան վևրցուցին, տվևցին խնամակալության,
Անուն դրևցին Փոքր Մհեր,
Քառու տուն սկսեցին Մհերին պաշտպանել։
Էկան Քևռի Թորոս, Դավթի դիակ առան, տարան,
Առաք-փառաք թաղեցին։
Ամեն տեղ էդ կյաճնի զանեց սպանեց Դավթին։
Քևռի Թորոս որոշ ժամանակ հետո ըսեց.
— էքանք, մեր ճիժ բերենք։
Հելան վեց-յոթ խոքով, գնացին էդ քաղաք։
Օր գնացին՝ դրանք խաբար հեղան.
Մհերին, տաս-տասնութ տարեկան ա,
Տաքան, մի հէրի մեջ պահեցին,
Յոթ ձևռք դոլ ու դուռնա զարկեցին, օր ձեն-ձուն չլսի։

Էկան թագավորի մոտ։
Էս էլ ըսեց թե,—Մևռել ա, իրևք տարեկան ժամանակ։
— Դե՛, որ մահացեր ա՝ դերեզման շանց տվեք.
Մեր իրևք տարեկան՝ իրևք շենք երկարութուն պտի ունենա։
Գացին չափին, չկա՛ ու չկա՛։
— Մեր տղեն տվե՛ք։
— Ձենով Հովա՛ն,—կա Քևռի Թորոս,—մե խաթ դռռա՛։

Էս կգռռա, ձեն կէքա հէրի մեջ,
Ձեն կհնգի տղի հանգած,
Տղեն կըլսա, թռնի հելի դուս։
Մևկ էլ կբռռա,
Տղեն կլի, չարդա ըտոնց, դես ու դեն կթափա, կգա,

Կտենա որ՝ հսկա մարդիկ են կայնուկ։
Քևռի Թորոս կա.—էսի մեր տղեն ա։
Կառնեն, կուգան։
Կառնեն, կառնեն Սասուն։
— Մեր Սասուն մացեր ա անտեր, արի՛ էքանք,
էդտեղ ղլաքցիք հառեջ կկտրեն,
էդոնք չկանան կռվեն։

ՓՈՔՐ ՄՀԵՐԸ ՍՊԱՆՈՒՄ Է ԵՐԿՆՔԻԿ-ԱՍՏՂԻԿԻՆ, ԸՆԿՆՈՒՄ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՓՈՐԱՏ ՀՈՐԸ, ԱԶԱՏՎՈՒՄ ՆՎ ԿՆՈՋ ՀՆՏ ՓԱԿՎՈՒՄ ԺԱՅՈՒՄ

Մհերն էլ, մի աղջիկ կար, կսիրեր։
Երկնքիկ-Աստղիկ օդով էր գլուխ զարգում,
Իսկ աղջիկը օր տեսավ էդի օդով ա գալիս,
Մհերին շատ կզռռա, կասա,
— Մհերին շատ մի զռռա, մե գիշեր քե զոնախ եմ։

Էդ օր կա՝ Մհերն կճղայնանա,
Էնպես ուժեղ կզանա,
Որ Երկինք-Աստղիկին կէնա երկու կտոր, կիցկա ցածր,
Նոր աղջիկ կվերցու, կառնի, կիգա։
Ջորքն կսկսի ըտոնց խետ կռվի։
Մի քյառսուն դյազանոց խոր ա փորած,
Քավոր Գորգու տան հետևն ա,—
Գուքան էդոր վրայով կհնցին,
Մհեր գուքա, կհնգի էդ խոր.
Բերեն, արջիջ կըլցեն։
Քավոր Գորգին կտեսնա՝ մե խատ էլ բախ կթալա խոր,
— Մհե՛ր ջան,—կըսա,—խորու տակ ծակա,
Քեզի տեղ էրա, որ արջիջ լցվի վրեդ։
Մհեր կքանդա։
Արջիջ լցին ու ապահով հելավ։
Էդտեղ փեջադեցին խորու բերան,
Մհերը քանդեր էր, գացեր էր էն կողմ։
Քավոր Գորգին բերեց,
Էդ խորու բերան ջուլհակի գործ սարքեց,
Նստել ա ու բան ա կգործա ու կասա.
— Վա՛յ լըմն Մհե՛ր, վա՛յ լըմն Մհե՛ր։
Մհերն քանդեց, բարձրացավ, հելավ.
Քավոր Գորգին գրկեց տղեն, տարավ տուն։
Կինն առավ, էկավ Քըխ Սասուն.
Քիչ ա մացե օր խասի Սասուն,
Ճանապարհի վար մե մեծ կայա կա,—
Էդ խողը օր օդ կդներ՝ գետին կխթվեր,—
Էկան էդ կայու կուշտ.
Թե ասսու հրամանով ա, թե ինչպես ա՝
Կային կբացվի, էդ երկուս կմտեն կայու մեջ։
Մինչև հիմա էլ ջուր կկաթա էդ կայից։
Օր ժամանակին դուս պտի գա էդ կայից։
Նրանք խասան հուրանց մուրազին,
Դուք խասեք ձեր մուրազին։

## 2(2). ՍԱՍՈՒՆԱ ԴԱՎԻԹ

### Ա
### ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

ԿՌԱՊԱՇՏ ԹԱԳԱՎՈՐԻ ՈՐԴԻՆԵՐԸ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆ ԿԱՊՈՒՑՏ ԿԱՊԱՎՈՐ ԵՐԿՆՔԻՆ, ՀԱՑՐԸ ՈՐԴԻՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑ Է ՀՈՐՏԱՆՈՒՄ ԻՐ ԿՌՔԵՐԻՆ, ԲԱՑՑ ՄՈՐ ՀՈՐՀՐԴՈՎ ՈՐԴԻՆԵՐԸ ՓԱԽՉՈՒՄ, ԱԶԱՏՎՈՒՄ ԵՆ

*Առաջ ժամանակով մի թագավոր ա եղե.*
*Հինք կռապաշտ ա, չի ավադում ոչ մի բանի.*
*Կոքեր ունի, միայն էդ կոքերին ա ավադում;*
*Եղավ օր՝ էդոնց դաշտեր, արդեր ամբողջովին*
*կշեր ուդում ին;*
*Ի՞նչխ էր էդ մտածե.*
*Օրական էրկու մարդ պտի պահակ խանա,*
*էտա դաշտեր պաշտպանա;*
*Հերթ էկավ խասավ ուր էրդու տղին,*
*Որ պտի ուր էրդու տղեն պաշտպաններն;*
*Մեզի անուն Սանասար ա, մեզին Բաղդասար ա;*
*Էդ ժամանակ Սանասար ու Բաղդասար*
*էլան գնացին արդեն մղաթք էնելու;*
*էս յան լարին, էն յան լարին, շատ օգնեցան.*
*է՛, կուշ ա, էս տեղից կքոնի՝ էնա տեղն կուդա,*
*էն տեղից՝ էսատեղն կուդա;*
*Միյան էկան օգնելու համար պառկան,*
*դինջացան;*
*Օր պառկան, դինջացան,*
*Իշկին, տեսան օր՝ կապուդ ա վերին դեխ.*
*— Ո՛վ Կապուտ կապավոր,—ըսին,—*
*Մեզի ազատես էս տանջանքից, չարչարանքից;*
*Հանկարծակի մեկ էլ տեսան օր՝ ոչ մի խատ*
*կուշ չկա,*
*Կշեր վերացած;*
*Հելան գացին տուն;*
*Խերն ըսեց.—Հորի՞ իզաք;*
*Ըսեցին.—Հայրի՛կ, կուշ չկա;*
*Ըսեց.—Ի՞նչ պաղայավ, օր չկան;*
*Ըսեց.—Շատ օգնանք, պառկանք,*
*Վերև տեխն օր կապուդ էր,*
*Ըսինք օր՝ կապուդ կապավո՛ր, մեզ օգնա՛.*
*Մեկ էլ ղշեր թռան, գացին;*
*— Հապա՛,—ըսեց,—դու Փոքր կոքի մատաղն ես,*
*Դու էլ Ջոջ կոքի մատաղն ես;*
*Մերն էլավ ըսեց.—Ա՛յ մարդ, էրեխա են, էդպես*
*ա ըսած,*
*էդոնք չեն ավադա,—ըսեց,—*
*Հանկարծակի իշկած, ասած ա;*
*— Չէ՛,—ըսեց.—մեկը Փոքր կոքի մատաղն ա,*
*մեկն էլ Ջոջ;*
*էդ մարդիկ տեսան օր իլլաճ չկա,*
*Դիշեր պտի վիզ ուրանց կտրա,*
*Մերն էլավ ըսեց.—էդ անաստվածն անպահման*
*ձեզի կմորթա,—*
*Ըսեց.—ես խաց ա թխեր եմ,*
*Դու վերցեք ձեր գլոխն, փախեք;*
*էդ տղեք հելան, պաշարն վերցին ու դիշերն հնգան*
*դաշտ,*
*Թե դոր ա կերթան՝ հիրանք էլ չգինան;*
*Իսկ հերն հելավ ըսեց.—Հո՞ւր են էրեխեք;*
*Ըսեց.—Ես ի՞նչ գիտեմ, տուն չեկած;*
*Ըսեց.—փախան. մե՛կ ա, դոր էլ էթան, կոքեր*
*ընդրանց կբերեն;*

ՍԱՆԱՍԱՐՆ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐԸ ԱՊԱՍՏԱՆՈՒՄ ԵՆ ՍԱՍՈՒՆՈՒՄ

*էրեխեք փախան, գացին խասան Սասուն;*
*Որ հասան Սասուն, էդ Սասուն անտեր բիյանի*
*տեղ էր,*
*Ոչ բնակչություն կար, ոչ մարդ կար, ոչ բան կար;*
*Տեսան օր՝ լեռ սարեր, քարեր, ուրանք ըսին.*
*— Ըստեղից էլ լավ տեղ չկա,*
*Բերենք քար-մար դնանք վըր իրուր, տուն շինենք,*
*էստեղ էլ ապրենք;*
*Մի առժամանակ մնաց՝ էն փոքր ախպեր նիարցավ,*
*Մեծ ախպեր ըսեց.*
*— Մեր օդ ու ջուր լավ,*
*Մեր ուտելիք լավ, ինչո՞ւ ես նիյարում;*

Ախպերն էլ չպախեց, ըսեց.
— Մ՛յ ախպեր ջան,
Դիշեր ու ցերեկ էդ կուռքն կմտի իմ բարձի տակ
ու կմկմկա
Ու չթողա օր ես քնիմ, չեղի.
Դու մացի ըստեղ, ես անպահման կերթամ,—ըսեց,
— Թե կրցա՝ կազատվիմ, դուքամ,
Որ չկրցա՝ դու պրծիս, բավական ա։
Ըսեց.—Գնա՛։

## ՄԱՆԱՍԱՐը ԴՆՈՒՄ Է ՀԱՅՐԵՆԻՔ, ՍՊԱՆՈՒՄ ԿՈԱՊԱՇՑ ՀՈՐը ՆՎ ԻՆՔը ՆՍՏՈՒՄ ԹԱԳԱՎՈՐ

Հելավ Մանասար էկավ։
էկավ, էն վախտ խասավ օր՝ խերն տուն ա.
— Ըհը՛,—ըսեց,—ես չդինա՞մ օր մատաղը կիքա։
էկավ նստավ, խոսին, ըսեց.—Քե պտի մատղեմ։
Ըսավ.—Մատղա՛։
Ըսեց.—Դը՛ էքանք կոքատուն։
Առանձին կոքատուն կար նախշված, էկան էդ
տեղ,
Ըսեց.—Դու էստեղ կվի, համբուրա։
Ըսեց.—Հայրի՛կ, ես ըստեղ չմտեր եմ,
Ու էլ ըսկի չտեսեր եմ. էս ի՛նչ լավ նխշուն
բան ա։—
Ըսեց.—Դու կվի, համբուրա, ծունդր դի,
Օր ես էլ քեղնից սովրեմ, համբուրեմ։
Հայրիկ միամիտ էր, կլավ օր երգիրպագություն
տա,
Էնտեղ մեծ թոփուզ կար,
Տղեն վերուց ու ա՛ռ ա հա՛՝ խոր գագթին.
Խեր պրծավ։
Օր խեր պրծավ, քաշեց էդ թոփուզն ու ընկավ
էդ կոքրեու վրա,
Ինչքան օր կուռք կար՝ ջարդեց, հըմեն փախան։
Թուր բանցրացրեց, ըսեց.
— Ով որ կավադա էն վերին կաբուդ աստված՝
Թըխ քրի տկով ընցի,
Ով որ չավատա՝ վիզ կթռցում։
Բոլորն էկան, քրի տկով ընցան, ըսին.
— Քո խերն էր կռապաշտ, մենք գաղտնի
կավադինք.
Հիմա էլ կավադանք էնա վերին տեխի աստված։
Ջարդեց, քմավ, հինք նստավ թագավոր՝ հոր տեղ։
Նամակ գրեց հուր մեծ ախպոր՝ Բաղդասարին,
Քե.
«Քու աչին լուս էղի, արդեն էստեղ եմ
թագավորում,
Դուն էլ էդտեղ թագավորա։
էն տղեն էլ գրեց, օր՝
«Արդեն Սասուն էլ իմ տրամադրութենի տակն ա։

## Բ
## ՄԵՆ ՄՀԵՐ

### ԲԱՂԴԱՍԱՐի ՈՐԴԻ ՄՀԵՐը ՍՊԱՆՈՒՄ Է ԱՌՅՈՒԾԻՆ

Մնաց, մի առժամանակ ընցավ, Բաղդասարն
ամուսնացավ.
Կնիկ մնաց երկու խոքով.
Պառկավ, մե խատ տղա բերեց,
Անուն դրեցին Մհեր։
Մհերն է՛նքան ուժեղ եղավ,
Օր հըմեն կղարզնդին ըդորեն։
Ըդոնց էրգիր էդ տարին սով հընդավ.
Մե առյուծ ա պառահե,
Ջիողա, որ էս մարդիկ էդ էրգրից էքան էն էրգիր։
Տղեն ուր խորն ըսեց.—Հընչի՞ ա էս սովն։
Խերն ըսեց.—Մեր էրգիր էս տարի սով կա,
Ուրիշ տեղից էլ չեն իշխնա մտի մեր էրգիր.
Մե խատ առյուծ ա բնակուե, մարդիկ կվախենան։
Ըսեց.—Ո՞րտեն ա։
Խերն ցույց չտվեց։
Հինք տասնխինդ տարեկան էր,
Հելավ ժողովրդից խառցուց, ժողովուրդ շանց
տվեց։
Տղեն ըսեց.—Մի՞քե մարդ չկա, օր էդ առյուծին
սպանա։
Հինք հելավ, ուր թուր կապեց, գնաց.
էն առյուծ ուր տեղից մռնչալեն հելավ,—
Ժողովուրդ կայնած՝ թամաշա յա կէնա,
Ինչպես պտի ճղա տղին։—
Առյուծ խասավ տղին.
Իր խասնելուն խետ՝ տղեն ձեռ թալեց առյուծին,
Բռնեց ու ճղեց երկու կտոր։
Ամբողջ ժողովուրդի քեֆ, ուրախություն տեղ
չուներ,
Թե էս ինչ էր էրեց էս տղեն։
Ճամբեքներ բացվան, առևտուր հեղավ։
էդ տղեն՝ Մհեր, ձին խեծավ ու գնաց ավը ղուշ,
էլ էդուր ձեն չլսվավ։
էդ մարդը հելավ բավական հասանելիք մարդ,
Ըդոր խերն մահացավ, Բաղդասար մահացավ։
Որ մահացավ՝ հինք նստավ խոր տեղ թագավոր,
Ըսկսեց առևտուր էնել։

### ՄՀԵՐը ՄԵՆԱՄԱՐՏՈՒՄ Է ՄՄՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ. ՄՀԵՐն ՍՊԱՆՈՒՄ Է ՄՄՐԱ ՄԵԼԻՔԻՆ

— էս էրգիր թուրքի մի հատ ուժեղ մարդ կա,
Քո պապեյից ա էնի,
Ով գացե, էնտեղ, պտտվե,
Միայն քո խերն էր, օր աղթեց։
Ըսեց.—Օր էդպես ա՝ դու դրա ճանապար ցույց
տվեք։

Բայց էդի ութ ախպերն ա, ուր խորից ա էլե,
հինք չգինա։

Անուն ինչ ա,—ըսեց։
— Անուն Մսրա Մելիք ա։
Մհերը խառչ ու խառաչ չիտեր մսրա-Մելիքին
Հելավ էկավ, ըսեց.—Հլա էդ ո՞վ ա,
Օր մեղնից խառչ ու խառաչա կուզա. էդ ո՞վ ա էդ։
— Ըսեց.—Մսրա Մելիք,—ու էկավ Սասունա
դաշտ։

Մսրա Մելիք էկավ ըդոնց դաշտի մեջ,
Մհերի զուտուղզուն տեսավ։
Ղուտուղզին լուր տվեց թե. Մսրա Մելիք էկե։
Մհերը հելավ գնաց, Մսրա Մելիք դարընդավ։
Ըսեց.—Ա՛յ հա՛յ, էս տեսակ էլ ջանով տղամարդ
կէղի՞։

Էկան, սկսեցին դաշտի մեջ կռիվ էնել։
Օր կռվան՝ էդոնցից ոչ ոք չաղթեց։
Մսրա Մելիք ուր հաշիվը առավ.
Ըսեց.—Էս տղեն ա՛նպահման ընձի կաղթա։
Բերեց, տվեց խոր փորել,
Առաջ էկավ, ջաղջի քար դրեց վրեն,
Քառասն գոմշի կաշի փռեց վրեն։
Մսրա Մելիքի մերն խետ էկեր էր,
Ընդոնք Մսրա Մելիքու մոր մոտ պուի կավին։
Մհերը գնաց Դիարբաքեր, ձին քշեց, էկավ,
Մսրա Մելիքի մերն հելավ դեմ, ըսեց.
— Էս մե զարկն խնայա՛ ընձի։
Ըսեց.—Էս մե զարկ խնայեմ քեզի,
Օր իմ խեր քո խետ նստե-կայնե, քեֆ ա էրե։
Քշեց, գնաց ավելի հեռու,
Էնտեղից էկավ՝ քուր խասավ հառեչ, ըսեց.
— Էս մե զարկն էլ բախշա՛ ընձի։
Ըսեց.—Էս մե զարկն էլ, կկանչեմ իմ աստված,
կերթամ, կիգամ՝ կղանեմ։
Գնաց հեռու, էկավ, գուրզ թալեց.
Էդ քարեր կորեց,
Էդ կաշին կորեց,
Քյառասուն գյաղնոց խոր կորեց,
Հիշավ Մելիքին մեջտեղից բրդեց,
Մելիքն չզգաց, ըսեց.—Մե՛գ էլ զարգ։
Ըսեց.—Հլա՛ թափ տու քեզի։
Թափ տվեց՝ հելավ էրկու կտոր։

## Գ

## Դ Ա Վ Ի Թ

### ԴԱՎԻԹԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ՈՐԲՈՒԹՅՈՒՆԸ

Էդ Պլեճկեր Դավիթ հելավ Մհերից.
Մհերը արդեն մեծացեր էր,—
Առյուծից առյուծ դուս գուքա,—
Հինք հավելի հուր հորից ուժեղ էր։
Օր խերը մեռավ՝ հինք մնաց էթամ.
Ուր խողպեր կար՝ ճնշղափորին, ցռան Վերդոն,
Ձենով Հովան։
Մերն էլ մահացավ, հինք մնաց թաք։
Էդ տղեն, ի՞նչ էրեցին, հինք էրեխա տղա էր,
Ըսեցին.—Տանք դուղի նախորդդ։

### ԴԱՎԻԹԸ ՆԱԽՐՈՐԴ, ՔՈՒՐԴ ԱՀՄՈՆ, ՀՈԳԵՃԱՇԸ ԵՎ ԱՎԱԶԱԿՆԵՐԸ

Հելան գնացին, գյուղի մեծերուն խնդրվան,
Կարգին նախրորդ. թե մեր տղեն էթամ տղա չա։
Ու տղեն վերցուց նախիր, քշեց, գնաց արոտ։
Օր գնաց, մեկ, էրկու օր, իրեք օր
Տաներ նախիր, շուտ կբերեր՝ գլներ գեղին նե։
Հայարդա գուքին, էդ Ձենով Հովանին կըսին.
— Էս ի՞նչ ա կէնա, ախր էս վախտ՝ նախրի
վախտ չի,
Դու խրատ տու,—շատ էլ մեր տղեն ա,
Ախր էսպես անասուն պահել չհելի։
— Լավ,—ըսեց,—էստով դեն հանքան կբերեմ։
Քշեց, գնաց։
Օրմ էլ գնաց, գուղից մե նախրորդ էլ հեղավ,
քուրդ էր,
Էկավ էդ քուրդն, օր իր նախիր խառնա խետ,
Ըսեց.—Քո՛ւրդ, հընչի՞ էս եդրցե էսքան։
Ըսեց.—Դինաս ի՛նչ կա, Դավի՛թ ջան, քեզի
մեռնիմ,
Ընձի մի՛ զան, էսօր մեկ մեռեր էր, օդս թալի
կախ,
Օր էթինք, մի փիչ պատարագ ուտինք։
Ըսեց.—Դու էրկու նախիր խառնա հիրար, պահա,
Ես էթամ, քեզի առնեմ ճաշ, դամ։
Էդ մարդուն Համողեց, հինք նախիր խառնեց
հիրար,
Պլեճկեր Դավիթն հիշավ էդ գուղն.
Օր տեսավ խրխի կազաններ, գնաց, մտավ տուն
Ու չոմախն խսկեց էդոր կանթեր, վերցուց,
դրեց շլապ։
Էդ մարդիկ էլ անծանոթ մարդ են, ըսին.
— Ա՛յ մարդ, էս ի՞նչ մարդ ա, օր տարավ։
Մեկն ըսեց.—Մենք էս հինգ-վեց խոքով էսի
չկրնանք տեղափոխենք,
Էդ մարդ մենակ հինք էգավ, չոմախն թալեց,
տարավ.
Իմալ բռնենք ընդուն։
Օր գնաց խասավ, իշկեց տեսավ օր՝
Քուրդն իմալ ա լացե, հաշկերն ուռեր ա։
Ըսեց.—Ի՞նչ ա, քո՛ւրդ, հընչի՞ ես լացե։
Ըսեց.—Դավի՛թ, բա՛, քեզի մեռնիմ,
Էկան ղաչխներ, թալեցին՝
Իմ նախրից յոթ-ութ խատ էրինջ վերցին տարան,
անծին էրինջ։
Ըսեց.—Բան չկա, ես կերթամ, կբերեմ։

Նստան, ճաշ կերան.
Հինք հէլավ ուր չոմախ վերցուց, գնաց։
Գնաց-գնաց, տեսավ՝ ուր տավրի իղն դացե քըխ խոր,
Գնաց, հիջավ էդ խորու մէջ։
Որ իջավ, տեսավ էս հորու մէջ մի հէր ա,
Մի զաղա յա, մուխ ա կելնի։
Ըսեց.—Մաեմ էստեղ, քի՞ անդամ դնեմ։
Գնաց, կայնավ հէրի դռան,
Մեկն հարամիներից հելավ, օր նէթա, ջուր բերա, դնտն մոտ ա.
Դավիթ դանեց էդոր, թալեց էն յան։
— Հա՜յ,—մեկ-մեկ ըսին,—ի՞նչ հելավ էդի։
Մեկ-մեկ հելան, էդի սպանեց ու թալեց հետու,
Ուր չոմախ քաշեց, մտավ ներս.
Տեսավ օր մե խոքի էլ կա.
Էդորն էլ սպանեց,
Հիշեցե տեսավ օր՝ էրինջներ մորթած,
Կաղներ դրած վրեն, մեսը կփրփրա։
Վերցուց, դրեց էն յան, նստավ, կերավ.
Հելավ, բավականին մես էլ վերցուց,
Էրինջներու հանգջներ գլխտանքներուց կտրեց,
Շարեց ուր կայիշ, հելավ էկավ, էկավ հասավ Ամհոյ.
Ըսեց.—Է՛ս՝ քու էրինջներ։
Ըսեց.—Էդի հանգջներն ա, տանեմ՝ իմ խաղինիներն ընձի կսպանեն։
Ըսեց.—Կերթաս կսես օր հերեկվա մարդն էկավ՝ ձեր ամբողջ կհնցու։

## ԴԱՎԻԹԸ ԱՎԱԶԱԿՆԵՐԻ ՔԱՐԱՁՐԻՑ ՁԵՌՔ Է ԲԵՐՈՒՄ ԳԱՆՁ ԵՎ ՀՐԵՂԵՆ ԶԻ

Դավիթ հանքցավ, մութ տվեց վրեն։
Խոխպեր էկավ հառնչ, —Հընչի՞ հանքցար։
Դավիթ ըսեց.—Էս տեսակ բան պադայավ։
Օր հարամիներուն սպանեց, մտավ՝ մի դուռ բացեց,
Տեսավ՝ մի քուռիկ կար,
Մի դուռ էլ բացեց՝ ամբողջ օսկի,
Թալնած բերած, լցած էդ տեղ.
Ոչ ձեռ տվեց, ոչ բան,
Ըսեց խոխպոր.—Խոխպե՛ր,
Աշխարքի մալ ու դովլաթ տամ քեզի,
Մենակ էդ պտի տաս ընձի։
Խացն ու գինին, տեր կենդանին հերթվան։
Ըսեց.—Խաց ու գինի, տեր կենդանին վկա՝ քեզի կիդամ։
Ըսեց.—Դ՛ը արի։
Վերցուց ահագին ջորի, էշ,
Պլեճկեր Դավթի խետ գացին էն հէրի կուշտ։
Դուռ բացեց, ըսեց.—Էս օսկին քզի։
Էնտեղ քուռիկ կար՝ խասավ փաթթվեց, ըսեց.—Է՛ս՝ ընձի։
Էդ քուռիկն խրեղեն էր։
Օսկին բարձան, Դավիթն էլ քուռիկին քշեց, էկան։
Ձին պախեց, թախիր թալեց.
— Ես կէթամ ընձի ավուղուշ կէնեմ։
Օսկին բերած, հարստացուցած, Դավիթ ավղուշ ա կէնա։
Էնտեղ Մհերին տղեմ կա՝ հինքն չդինա,
Ոչ էլ ուր ծնողն ա ըսե.
Միայն խորոխպրտինք դինան։
Խանդուխտ խանում կա,
Որ կըշռա՝ յոթ չաղացա կբանցու։
Էդպես ուժեղ կին ա։

## ԴԱՎԻԹԸ ՍՏԱՆՈՒՄ Է ԽԱՆԴՈՒԽՏ ԽԱՆՈՒՄԻ ՀՐԱՎԵՐԸ, ԳՆՈՒՄ ՄՍԸՐ ԵՎ ՆՐԱՆ ԿԱՐԳՈՒՄ ԹԱԳԱՎՈՐ*

Դավթի ձեն տարածվավ ամբողջ աշխարհ
Էդ Պլեճկեր Դավթի ձեն առեր ա էդ Խանդուխտ Խանում,
Նամակ դրեց. «Շո՛ւտ արի.
Էդեն հերնոդ թրշես, էստեն դաս, կնդեսա»։
Որ նամակ բերեցին, տվեցին Պլեճկեր Դավթին,
Էդ նամակ բերողին մե խատ սիլա դանեց։
Որ սիլա դանեց, վիզ ծռավ, գնաց։
Գնաց, Խանդուխտին պատմեց։
Խանըմն ըսեց.—Էնի գուքա անպահման։
Խոխպերն ըսեց.—Չէքո՛ս, էնի քեզ կսպանա։
Դավիթ ըսեց.—Չէ՛, կէթամ, եթե իմ խոր տղեն եմ, վըր իմ ձեռաց օսկին չշխշկա։
Հինք ձին նստավ, քշեց,
Գնաց, խասավ Խանդուխտ Խանըմին։
Էդ պատրաստություն տեսեր ա, կսպասա Պլեճկեր Դավթին։
Մարա Մելիքին, էդ տղան էր, որ հելե փոքր տղա էր,
Մերն էլ չասեր էր, որ դու Դավթի պաբեզ թոռն ես։
Հինք չէր ասե, օր չէրթեր, խասեր Սասուն,
Օր ըսեր՝ տղեն կերթեր, խասեր ուր խորոխպրտանց.
Դաղտնի էր պահե ուր թոռուց։
Դավթին օր գնաց, խասավ էդտեղ,
Իշկեց էդոր չանդակ, ըսեց.
— Ա՛յ հա՛յ, ուր խորուց էլ դեն ա,
Էս մարդն էս ի՞նչ տեսակ տղա յա։
Դավթի ձեն տարածվավ ամբողջ աշխարհ,

* Խանդութ Խանումի մասին այս հատվածը, ըստ վեպի ավանդական կառուցվածքի, Խամիկ Խաթունի և Մեծ Մհերի մասին եղած միջադեպն է, որ այս պատումում, փոքր-ինչ մթագնած ու փոփոխված, վոխանցվել է Դավթին ու Խանդութին (ծան. խմբագրի)։

Մի ամիս էդոր տուն կոնախ էղավ,
Մի ամիս կռվավ,
Մսրա Մելիքի թախտն հանձնեց խանդուխտ
խանըմին։
Էդ փոքր տղին, օր կար։
— Դե՛,—ըսեց,—ես գնալու եմ Սասուն։
Ղլաքն Աստղեն երգարացի կա,
Օր օդի մեջով ա կկռվա,
Ղլաքն, ըսեց,—ճամբախ դեմ կառնի,
Էն ի՞նչ պտի տենա, էնի օդն ա, ես ներքևն եմ։

ԴԱՎԻԹԸ ԵԼԱԹՈՒՄ ԿՆԱԿՑՈՒՄ Է ԿՏՀԿԻՒ ՀԵՏ
ԵՎ ՆՐԱՆԻՑ ԱՊՕՐԻՆԻ ԱՂՋԻԿ ՈՒՆՆՆՈՒՄ

Դավիթ օր կդառնա,
Անպահման պտի Ղլաքի միջով հընցի, էթա
Սասուն։
Էկավ էդտեղ՝ դևմն առան։
Առան դեմ որպես կոնախ, ըսին.
Տանինք, ըսդուց թորամա մնա,
Օր մեր երդիր ուրուշ օտար պետություններ
չիգան տիրեն։
Էդ մարդուն տարան, հարդեցին,
Մե խատ կեճա բերեցին՝
Էդ գիշեր մնաց էդոր մոտ.
Էդ կճեն մնաց երկու խոքի։
Հետևն էդոր հարգանքով, պատվով դրին ճամբու։
Էդ կեճկեն պառկավ՝ մե խատ աղջիկ բերեց։
Օր աղջիկ բերեց, անցավ մի երկու իրեք տարի,
Դավիթ զորացավ.
Ըտու ախից ու երկուղից երդրներ կզարզնդեն։

ԴԱՎԻԹԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԴԱՄ ԱՑՑԵԼՈՒՄ Է ՄՍԸՐ՝ ԽԱՆԴՈՒՏԻՆ

Մնաց օր՝ էդի մի օր միտքն փոխեց,
Էրթամ խանդուխտ խանըմի մոտ,
Տեսնամ ըտոնց զրույցուն ինչպես ա։
Դավիթ հետևն գնաց։
Դեռ չխասեր էր Մըսըրը՝ էդոր էկան դիմավորեցին,
Տարան ամսըներով պահեցին, ինչպես օր
հարգն ա.
Տղեն էլ մեծացե, նստե խոր թախտին։
Մնաց, մի առժամանակ ըտեղ աբրավ։
Էդ տղեն մորն ըսեց.
— Իմ սիրտ էդ տղի վրեն շատ կցավա, ո՞վ ա։
Ըսեց.—Էդի սասունցի ա,
Սասունցի Պլեճկեր Դավիթն ա, Մհերի տղեն ա։—
Էդի օր փոքր էր, կերթեր բոստաններ պլեճ կէներ,
Մե խատ լարան կապեր իր մեջքը,
Բոստաններից կարտոլ, գաղար կժողվեր, կբերեր,
Էդ տեսակ էլ անուն մնաց Պլեճկեր Դավիթ։
Դավիթ հարգանքով, պատվով պահին։
Տղեն ըսեց.—Ա՛յ մեր, ուրեմն դու ըտոնց խատ
կապ ունես։—
Առավ.—Վա՛յ վավիլեր, դու ըտոնց խատ կապ
ունես.
Ախր ես էլ առյուծ մարդ եմ,
Ես պտի էդոր սպանեմ։
Մհերն չթողեց գիշեր, օր տղեն Դավթի վիզ կտրա,
Արդելեց, ըսեց.—Ի՞նչ ես անում,
Խո քաջ քաջին չսպանա։
Թըխ էթա ուր երդիր, հելի, կռվա։
Ըսեց.—Լա՛վ, մե՛ր, ես ներողություն։
Անգաջ դրեց։
Դավիթ հելավ տեսավ՝ տղի դրութուն շատ վատ ա։

ԴԱՎԹԻ ՍՈՒՏ ԵՐԴՈՒՄԸ ԵԼԱԹՈՒՄ, ԿՌՒՎԸ ԱՍՏՂԿ
ԵՐԳԱՐԱՑԻՆԻ ՀԵՏ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՊՕՐԻՆԻ ԴՍՏԵՐ ԿՈՂՄԻՑ

Հելավ էկավ, էլի պտի Ղլաքով գա, ճամբախն
ըտենց ա.
Կեճկի աղջիկ հելե ջոջ աղջիկ, տաս տարեկան։
Էգավ օր էդտեղով հնցավ, ձենն առան.
Աստղիկ Երգարացին ըսեց.
— Պտի կռվեմ, ես օդով ա կկռվեմ։
Էդ մարդը՝ Դավիթ, էկավ միամիտ,
Էդ կճկի աղջիկ տարած պախած կարմնջի տակ,
Էն կարմնջի, օր Դավիթ պտի դա էդտեղ, ընցնի։
Աստղիկ Երգարացին ու Դավիթ կռվան։—
Բայց էդոր չեքն մեկն սանդր էր դրե,
Մեկն՝ խաչ էր դրե.
Էնտեղ սուրբ Մարութա կա,
Ուր խոր վանքն ա, օր քաղացուց, պախեց,
պախպանեց,
Էդոր խաչն ա, օր դուն ա դրուկ.
Օր սուտ հերթվեր՝ դաներ սանդրի վրեն,
Օր ողորթ հերթվեր՝ դաներ խաչի վրեն։
Դավիթ ըսեց.—Թողեք էթամ, դառնամ գամ, նոր
կռիվ էրեք։
Ձեռ զանեց խաչի վրեն միամիտ,
— Եթե չիգամ, խաչ ինձ պատժա։
Սուտ էր հերթվե, չուր խասավ Սասուն՝ ջանտկի
մե յան սեցավ։
Ըսեց.—Ես պտի էրթամ։
Խրոխպերն հելավ դեմ առավ, ըսեց.—Ո՞ւր ա
կէրթաս,
Դու խամ տղա, դու դո՞ր ա կէրթաս։
Ըսեց.—Ես սուտ եմ հերթվե, պտի էրթամ։
Հելավ գնաց էդ մարդն, սկսեց կռվել։
Կռվեց, էնի օդի միջով ա կզանա, հնարք չեղավ.
Ուր ձին՝ էդ քուռիկ օր կա,
Ջանգուլամիշ էրեց, քոցուց օդի մեջ,
Օր քոցուց, քուր քաշեց,
Թալեց ու խատ բերեց վըր գետին,
Սպանեց ու հելավ գարձավ, օր պտի գար։
Էկավ, օր գետի մեջ լողկներ,

Քրոներ էր, նեղցեր էր։
Աղջիկ տափած էր կարմնջի տակ.
Իմալ օր տկլոզցավ, մտավ դետ,
Նետ ու աղեղ բռնեց,
Զանեց թիկունքի օրթալաղից, սրտից դուրս տվեց։
Էդտեղ հինքըն վժաց, ձեն խասավ Սասուն.
Էդպես էլ վերացավ։—
Հինքն ամուսնացել էր գաղտնի ուր խրոխպորից,
Ջիմաներ թե ուրնից էրեխա էղե, թե՞ չըէղերա։—
Բայց օր ճվաց, ձենը հասավ կնդանը.
Կնիկ բալկոնից իրան թալեց ցածը ու մեռավ։
Խասան վրեն, տեսան օր՝ պտկներից կաթ ա
դացե,
Ըսին.—Մեր խարս ճիժ ունա։

Դ

## ՓՈՔՐ ՄՀԵՐ

### ՀՈՐԵՂԲԱՑՆԵՐԸ ՓՈՔՐ ՄՀԵՐԻՆ ԲԵՐՈՒՄ ԵՆ ՍԱՍՈՒՆ

Հելան ընգան էս յան, էն յան, չգտան էրեխան,
Խնամին էրեխուն ղրգեց սարն։
Գացին սարն, էրեխին ցույց չտվեցին։
Ըսեց.—Ճիշտ ա, էրեխեն էղեր ա, բայց
մախացեր ա։
Զենով Հովան ըսեց.—Ա՛յ խնամի,
Թթե մեր աղգից մարդ մախանա, կհիմացվի.
Էթանք, չափենք գերեզման։
Ինչքա՞ն ա էղեր։
Ըսեց.—Վեց ամսական ա էղե։
Հելան տարան, մի թաղա գերեզման ցույց տվին,
Ըսեց.—Չէ՛, էսի մերը չէ։
Ցոան Վերգոն ըսեց.—Հովա՛ն, բոռա,
Մեր ցեղ որտեղ պախված էղի, անպահման
գուքա։
Ձեռ դրեց հանկըճներին ու բոռաց.
Ձեն հընգավ էդ հէրի մեջ։
Սարի մեջ նաղարա էր կղանին, օր տղեն լլսի ձեն։
Տղեն լսեց ձեն։
Տղեն էդոնց թալեց դեն,
Հելավ կժմանց հիջավ քաղաք ի նե։
Խրոխպորներ օր տեսան, ըսին.—Ահա՛, էս մեր
տղեն ա։
Տղեն տաս-տասվերկու տարեկան ա,
Համա էքա առյուծ ա, եքա վիշապ ա։
Էդ տղին ըսին.—Դուս մեր տղեն ես,—
Պատմեցին հըմեն ինչ։
— Ըբը իմ խերն ի՞նչ ա էղե։
— Քու խերն էլ Ղլաքն սպանեցին։

### ՓՈՔՐ ՄՀԵՐԸ ՎՐՁԺ Է ԼՈՒԾՈՒՄ ԱԼԱՔՑԻՆՆԵՐԻՑ

Էլ չհամբերեց տղեն, ի՛նչ էրեցին, չկրցան.
Տղեն հելավ ու խրոխպորտանց հետ էկավ,
խասավ Սասուն։
Օր խասան Սասուն, ինչքան օր Կլաթ մարդ կար,
ըմնուն կտրեց,
Ու խոր հարիֆն առավ,
Էստով դեն նստավ ուր խոր քուռիկ, ըսկսեց
առուտուր։
Օր խեծավ ձին, ձին տակը էրկու-իրեք անգամ
տքաց,
Է՛նքան ուժեղ ու ծանդր էր։
Օր տքաց, խրոխպեր ըսեց.
Լա՛ տեսեք, ջաղամա՛թ, ինչքա՛ն ուժեղ ա,
Ուր պապից էլ խորից էլ, օր ձին տքաց։
Մսրա Մելիքը, էն ժամանակ օր հաղթեր էր,
Ուր խոր վանք կար ու պաբից, Մարութա սար
կար,
Էդ վանքը ավիրեր էր։
Ըսեց.—Ես պտի էթամ, իմ խոր վանքը
պատրաստեմ։

### ՄՀԵՐԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ Է ՄԱՐՈՒԹԱ ՎԱՆՔԸ ԵՎ ՓԱԽՎՈՒՄ ԺԱՅՌՈՒՄԻՑ

Մհեր նստավ ձին, գնաց,
Ուր խոր պարիսպ պատրաստեց,
Վանքն էլ պատրաստեց,
Նորից ըսկսեց ավղուշ էնել ըդտեղ։
Աշխարհ էդոր անուն լցվավ,—
Էնքան էլ կոտորում չէներ, էնքան ուրին խիղճ
կար։
Մնաց, մի առժամանակ հընցավ,
Սկսեց էստով դեն ձին չքվել,
Ձին օր չքվավ, էլ ընարավորություն չեղավ։
Ըստուց տեն ձին թողեց, ըսկսեց օտով ման գալ։
Մի քանի տարի էլ օտով ման էկավ,
Մե օր ըսեց.—Կանի ձին նստեմ, էթամ վանքն էլ
տեննամ,
Մեր սարերն էլ պտոտեմ, գամ,
Արդեն ես էլ եմ մեծացե։
Ի՛նչ էրեցին՝ չամուսնացավ։
Մեկ օր էլ ձին նստավ,
Հելավ գնաց, վանքն տեսավ, որսեր բաց թողեց,
Հելավ գնաց, ուր հոր, մոր գերեզման համբուրեց,
լաց։
Էկավ տեսավ՝ էլ ընարավորություն չկա,
Ձին կխթվեր մինչև պորտն։
Գնաց մի կայի տակ, մի սար, էլի,
Բացվավ, նա էլ գնաց նե։
Ասում են թե, սուտ ա, թե օղորթ,
Ասում են էդ տեղից ուրթե-ուրբաթ ջուր գուքա,
կկաթա,
Էդ Մհերն ա գուլա։
Էդ տեղն էրած սուրբ վանք։
Ընդոնք խասնեն ուրանց մուրազին,
Դուք էլ խասնեք ձեր մուրազին։

## 3(3). ՍԱՍՈՒՆԱ ԾՌԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

### Ա
### ՍԱՆԱՍԱՐ ԵՒ ԲԱՂԴԱՍԱՐ

ԿՌԱՊԱՇԵՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴԻՆԵՐԸ ՀԱՒԱՏՈՒՄ ԵՆ ԱՍՏՎՈՒՆ,
ՀԱՅԲԸ ՈՐԴԻՆԵՐԻՆ ՄԱՏԱՂ Է ԽՈՍՏԱՆՈՒՄ ԿՌՔԵՐԻՆ,
ԲԱՑՑ ՄՈՐ ԽՈՐՀՐԴՈՎ ՈՐԴԻՆԵՐԸ ՓԱԽՉՈՒՄ ԵՆ

Մև ժամանակով մև թագավոր ա հեղև,
Աստվածապաշտ չի հեղև։
Ղշեր գիշին, ըդոր դաշտեր կավիրին.
էդի հըմնօր մարդ կօղորկեր օր ղշեր լարին։
Մև օր էլ իր էրգու տղին խանեց օղորկեց.
Սանասար լև Բաղդասարի խեռ հելան գացին,
Շատ տփվան դես, շատ տփվան դեն,
Վերջն օգնան, ձեռ պարղին քըխ վերին
կապավոր, ըսին.
— Վա՛յ կարուդ կապավո՛ր, դու խասես մեզ,
Դու ալատեվ մեզ էս տանջանքից։
Խրա էդ խոսքին՝ ղշեր քյաշվան գացին,
զարձան էկան։
Օր զարձան էկան, խերն ըսեց.—Հորի իդա՞ք,
Ըսին—Ղշեր քաշվան, ղուշ չկա։
— Հորի՞, ի՞նչ հեղան ղշեր։
— Շատ տփվանք դես-դեն, օգնանք,
Ձեռ պարղինք վերին տեղ, ըսինք,
Կխնդրվենք մեզի օգնես, կարուդ կապավո՛ր։
Խրա էդ խոսկին՝ ղշեր քյաշվան գացին։
— Ըհը՛,—ըսեց.—դու պզտի կոքի մատաղն էս,
դու էլ՝ մեծ կոքի։
Մեր տեսավ օր ճար չկա, պաշար թխեց,
էրեխեքներուն ըսեց.
— Գիշեր փախեք, գացեք, ձեր գլոխն ազատեք։
(Զէ՞, մեր հուրանց աստվածածանոթ էր)։
Հառավոտուն խերն եռսդավ, ըսեց.
— Հորի՞ գնացին, դոր էլ էթան, կոքեր հուրանց
կդարձուն, կբերեն։

ՍԱՆԱՍԱՐՆ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐԸ ԵՒՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՆ ՄՏՆՈՒՄ
ՄԻ ԹԱԳԱՒՈՐԻ ՄՈՏ, ԿՈՎՈՒՄ ՀԱՂԹՈՒՄ ԵՆ
ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԶՈՐՔԻՆ ԵՎ ՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿԵՉՆԵՐ
ՆՈՐ ԲՆԱԿԱՏԵՂԻ ՀԱՄԱՐ

էրեխեք գալով, էկան խասան մև դուրան տեղ,
Լիք կանաչ, բիայնի մև տեղ։
Գացին, հանդիպան մև հատ գետան.
Տեսան՝ էդ տեղ մև հատ բարակ հառու էդ ձորու
մեջեն դուբա,
Զարգա էդ գետն կկտրա, կխառվի խեռ, կեթա։
— Ա՛յ հա՛յ,—ըսին—էս ի՞նչ ուժեղ ջուր ա,
Էդ բարակ ջուրն դիքա, էդ գետն կկտրա,
Կկտրա, կհնցի էն փուլն, նոր կխառվի խեռ,
կեթա։
Կըսա.—Ախպե՛ր, արի բանցրանանք հելինք,
տենանք էդ ի՞նչ տեղ աւ
Էդ ջրու իվի խեռ կբանցրնան,
Գելին տենան որ՝ մի հադ էդ տեղ հախպուր ա,
Էդ հախպրի ջուրն ա կիդա։
Էդ Սանասարն ըսեց.—Էս էնտեսակ ուժեղ ջուր
ա,
Ոն օր խմեց, ըտրա ժառանգն եսիմ ի՞նչ տեսակ
ուժեղ կհեղի.
— Արի՛,—ըսեց.—էդտեղ քար քոմենք, էնենք
նշան,
Էթանք մև տեղ աշխատինք բերինք, մեզ շենքեր
թալինք։
Պալեր բերին քոմեցին, հիշան էկան։
Էկան մև քաղաք, էդ քաղքի թագավորի անուն
Թեոթրաս ա,
Գացին էդ Թեոթրասի մոտ, թամանդար հեղան,
կայնան։
— Հա՛, ի՞նչ տղա եք։
— Անտեր,—անտիրական տղա ենք,
Էգեր ենք, օր մեզի մև հատ գործ տաս,
Աշխատինք քո ձեռի տակ, արրինք։

Էդոնք հսկա, ուժեղ տղամարդ են.
Թագավոր տեսավ, օր էրգուսն դեմքով էն տեսակ
դեղեցիկ տղամարդ են,
Ըսեց.—Աշխատե՛ք։
Ողիրն ըսեց.—Թագավո՛ր, էսոնք ուժեղ են,
Օր հելան՝ քո թախտ լն կվերցեն, թագավորութիւնն
լն,
Արի՛, փորձենք ըստոնց։—
Ըսեց.—Ջորք քոմենք, էսոնց ճամբեմենք կռիվ,
Տեննանք՝ կռա՞ն էդ զորքին աղիեն։
Ըսեց.—Շատ լա՛վ։
Ջորք կարեցին, թագավորն էկավ, ըսեց.—
Սանասա՛ր, Բաղդասա՛ր, գինաք ի՞նչ կա.
Մեր քաղքի վրեն կռիվ ա եկած,
Պտի դու էթաք, էդ զորքի խետ կռվեք։
— Շատ լա՛վ,—ըսեցին,—բե մեզի ձին, զենք
տու, էթանք կռիվ։
Բերեցին զենք տվին, ձի տվին,
Հելան էրկու ախպեր խեծան ու հայդե՛։
Գացին, սկսեցին կռվել ու զորքին ջարդել։
Ողիր տեսավ օր հմնոն կջարդեն, խախնդցուց։
Էկավ թագավորին ըսեց.—Քո տուն չակուլի,
Օր քողի՝ մե խատ մարդ չմներ, էդոնց դեմ
կայնող չկա.—
Ըսեց.—Վերջ էսոնք մեր գլոխ օյին կխանեն,
Աքսորա էդոնց մեր քաղքից։
Էդ տղեկներն էլ կլսեն։
Մնաց, Սանասարն էկավ թամանդար հեղավ
թագավորին, ըսեց.—
— Շատ ա կխնդրենք, օր մեզի էս քաղքից
հեռացուս,
Մե քսան-հռհսուն տուն տաս մեր խետ,
էթանք ֆլան տեղ շենքեր շինենք, աբրվենք։

## ԵՂԲԱՑՐՆԵՐԸ ՀԻՄՆՈՒՄ ԵՆ ՍԱՍՈՒՆԸ

Հուրանց պաշարով հելան գացին էդ տեղն օր
նշանդար են էրած։
Սանասար ըսեց.—Հառեք իդոնց տներ սարքենք։
Ըմալ ղալա քար ա կբերեն, օր կդնան իրար վրա՝
մե շենք կլի։
Հըմնուն սարքին,
Վի տուն օր էթան, էդ տան թուփ կթալեն՝
Ինչքան խաց կար, միանդամից կուտեն։
Վերջ սկսեցին ուրանց սարքել.
Ըմալ մե հատ շենք սարքեցին, օր տարին թմալ
նոր էկավ գլոխ։
Սարքին, պրծան,—Ըբա,—ըսեց.—էսա մեր
շենքին պտի անուն դնանք։
Ոն բերեցին, չկրցան դնին։
Գացին պատուեցին, տեսան մե հատ ըռնչպար
վար ա կէնա,
— Բարև, պաբե՛.
— Խաղա՛ր բարի.
— Արի՛ էթանք, քեզի տանեմ մի տեղ։
Պաբեյ դրին ձիուն, տարան ուրանց տուն,
Կերցուցին, խմցուցին հելան պատուան։
Ջուր հիբրկուն պատուան։
— Պաբե՛, սրան անուն դի։
— Մ՛յ հա՛յ,—ըսեց.—էս սասուն քարերն ի՞մալ
ա բերած։
— Ահա՛,—ըսեց.—անուն դատար։
Անուն մնաց Սասուն, Սասնա տուն։

## ՍԱՆԱՍԱՐԻ ԵՐԱԶԸ, ՋՐՈՒՄ ԼՈՂԱՆԱԼՆ ՈՒ ՀԶՈՐԱՆԱԼԸ, ՔՈՒՐԻԿ ՋԱԼԱԼՈՒՆ ԾՈՎԻՑ ՀԱՆԵԼԸ

Սանասարն ու Բաղդասար գացին ծովու կրախ,
Շատ պատուան, օգնան։
Սանասարն քնավ. քնավ, էրազ տեսավ,
Թե էդ ծովու մեջ օր մարդ մտի, շատ կուժեղնա։
Հելան, Սանասարն ըսեց.—Ես պտի մտեմ ծով։
Բաղդասարն չմտավ, վախեցավ։
Էդ օր մտավ ծով, ինչ օր դուրան ծովալին,
էն քելեց, գնաց տեսավ՝ բաղ ու բախչա,
Անմահական ջուրն ու խնձոր լիքը։
Մկա պզդիկն մացն դուս՝ Բաղդասարն, գիլա,
ախպեր գացե, չկա։
Սանասարն դնաց, պատուեց, տեսավ՝
Մե ձի ա կապուկ՝ խրեղեն ձի, Քուռիկ Ջալալին
Պառկավ բաղի մեջն ու քնավ։
Քնուց զարթնցավ, հելավ էդտեղաց հախպրից
ջուր խմեց, զորացավ,
Ձին քաշեց հելավ, խեծավ ձին։
Օր խեծավ՝ ինչ օր սարն դնաս մե ձիան վրա։
Բաղդասարն էլ տեսավ հուր ախպեր, վախեցավ,
սկսեց փախչել։
Էդի հընգավ հետև, ձին քշեց,
— Տո՛ Բաղդասար, ես Սանասարն եմ, քու
ախպերն եմ, դու դո՞ր կփախիս։
Առաջ ախպորն էկավ.
Սանասարն հեղե ըսկա, բայց Բաղդասարն
փոքր ա։
Էկան էդ մարդիկ, սկսեցին աբրել։
Բայց էն կուռքն գուքա,
Բաղդասարի գլխու վերև կմկմկա, չթողա քնի։
Գյնալով ախպերն եդ գնաց,
— Է՛,—ըսեց.—ախպե՛ր, քյանի էթա, դու
կզարնես, կփոքրանաս։
Ըսեց.—Կուռքն գուքա իմ գլխու վերև, գիշեր
չթորգա ես քնեմ։
Ըսեց.—Դու մնա, ես կերթամ, էդ կուռքի վերջն
կիտամ։

## ՍԱՆԱՍԱՐԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՀՈՐ ԵՐԿԻՐԸ, ՀԱՂԹՈՒՄ ՔԱՌԱՍՈՒՆ ՓԱՇԼԵՎԱՆՆԵՐԻՆ. ԲԱՂԴԱՍԱՐՆ ՀԱՆՁՆՈՒՄ Է ՕԳՆՈՒԹՅԱՆ, ԿՈՏՈՐՈՒՄ ԿՈՒՌՔԵՐԻՆ ԵՎ ԻՐԵՆՑ ՄՈՐ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՍԱՍՈՒՆ

*Սանասարը խեժավ ձին, խասավ Բաղդատ։*
*Առավոտ լուս բացվավ, խերն հիմցավ, ըսեց.*
*— էդի Ջոջ կոքի մատաղն ա էկէ։*
*Ախպերն էլ հինգ օր ժամանակ ա առե, ըսե.*
*— Խինդ օրից եկա՝ էկա, չէկա՝ իմալ հիմցի, օր ընձի սպանած ա,*
*Բաղդու խալիֆին քառսուն խատ փայլեվան կա,*
*Քառսունին էլ պահե ինչ օր բուրդաղ պահուկ գըմեշ հեղին։*
*— Հիմա,—ըսեց.—դու պտի գաս, էսա քառսուն փայլեվնին աղթես,*
*Թե աղթիր՝ աղթիր, թե չե՝ քե կիտամ կոքերուն մատաղ։*
*Սանասարն ըսեց.—Մկա էդ փայլեվաններ մեկ-մե՞կ կթողես իմ վրեն, թե քառսունին էլ։*
*Ըսեց.—Մեկ-մեկ,*
*Ըսեց.—Քառսունին էլ մեկ օր։*
*Առավոտ լուս բացվավ, Բաղդու խալիֆեն հելավ գնաց քաղաքի մեյդան,*
*Քառսուն փայլեվան թողեց, ինչոր գարնան գլուխ բուրդաղ պահուկ,*
*Ու խասան, սկսեցին էդոր խետ կռվել։*
*Սանասարն ըսկսեց կտրել,*
*Քսանի գլուխ կտրեց, մնաց քսան,*
*Դիշերն էն տասի գլուխն էլ կտրեց, մնաց տաս խատ,*
*Օր մնաց տաս խատ, էլ ոչ թևն կբանցրնա,*
*Արևի մեջ կորեր ա, մացե արևի ծուվի մեջ։*
*Էդ տասն էլ հախու չիշխնան մոդենան։*
*Բաղդասարն տեսավ օր հիրան նշանբայ էր թողե,*
*Սաքնի մեջ ջուր էր լցե,*
*Թե—էսա սաքնի ջուր բղդորավ,*
*Դուքաս, խասխս ինձ օգնության։*
*Հիշկեց՝ սաքնի ջուր բղդորավ,*
*Հելավ ձին խեժավ քշեց.*
*էն տնսակ ա կեթա,*
*Օր էդ երգինքու թռչուններն էլ էդոր թափից վայր գինգին։*
*Գնաց էն ժամանակ խասավ,*
*Օր էդոնք եռվանց նեդով ա կզարգեն.*
*Հախու չիշխնան մոտենան Սանասարին։*
*Խըտ խասնելու՝ տասի գլոխն էլ կդրեց։*
*Օր տասի գլոխն էլ կդրեց,*
*էկավ ախպորն արնա մջից քաշեց խաննեց,*
*Լվաց, հիստկեց, առավ էկավ մոր մոտ։*
*Ըսեց.—Իմա՞լ էնենք,*
*Բաղդու խալիֆին ըսպանենք, թե՞ մնա սաղ։*
*Բաղդու խալիֆին բան չէրեցին,*
*էդոնք կոքերու վերջն էլ տվին,*
*Առան հուրանց մերն, էկան։*
*էկան խասան Սասուն, սկսեցին հիրանց խամար ապրել։*

## ԲԱՂԴԱՍԱՐԸ ԿԱՐԴՈՒՄ Է ՍԱՆԱՍԱՐԻՆ ՈՒՂՂԱՎ ԴԵՂԶՈՒՆ ԵԱՄԻ ՆԱՄԱԿԸ, ԸՆԴՀԱՐԱՀՈՒՄ ԵՂԲՈՐ ՀԵՏ, ԱՊԱ ՀԱՇՏՎՈՒՄ. ՍԱՆԱՍԱՐՆ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է ԴԵՂԶՈՒՆ ԵԱՄԻ ՀԵՏ

*Մենք խաբար տանք էդ Թեոթրաս Թագավորից,*
*էդոր մե խատ աղջիկ կա՝ անուն Դեղձուն Ծամ։*
*Դեղձուն Ծամ նամակ գրեց, տվեց էրկու հատ ղշու,*
*Ըսեց.—կտանեք, Թալեք Սանասարի սենյակի ակոշկից։*
*Առան էկան, էլ չգիդան Սանասարին,*
*Թալին Բաղդասարի ակոշկեն։*
*Օր Թալին, հելավ կարդցավ.*
*Թե. «Ես Թագավորի աղջիկ Դեղձուն Ծամն,*
*Թե իմ գլոխ դարտակ չի, իմ գլոխ խելք կա,*
*Սանասար տղա, էնքան փայլեվիններ ա էկած իմ խոր դուռ չոգած,*
*Ես ոչ մեկին էլ հավանություն չըմիդա,*
*Դու գուքաս, ընձի կառնիս էթաս»*
*էդ օր չկարդցա՞վ, հընգնավորավ,*
*Ըսեց.—Իմ ախպեր ընձնե գաղդնիք ա բռնե,*
*Մկա ես իմ ախպոր գլոխ կտրեմ։*
*Դուռ փակեց։ Մերն ըսեց.*
*— Ջանը՛մ, էսօր էդ հի՞նչ ա պատահե, օր Բաղդասար չի գա ճաշի։*
*էկան ծառաներ, դուռ տփին, չբացեց.*
*— Ջէ՛, ես չըմիգա,—ըսեց.—*
*Սանասարն գաղդնի սիրած ա բռնե,*
*Ես պտի դրա խետ կռվիմ։*
*Վերջ, մերն էկավ համոզեց, առավ գնաց։*
*Հելան էրկու ախպեր խեժան ձիանք,*
*Գացին քաղքից դուրս, սկսեցին կռվել,*
*էն օր Սանասարն ա, ձեռ չվերցա Բաղդասարի վրեն,*
*Բայց օր շատ հեռատցուց՝ մե հուշիգամ զանեց,*
*Ձիուց հընգավ, ուշաթափվեց,*
*Ժամմ էրկու խելք չիգար գլոխ։*
*Ուշն էկավ գլոխ, ըսեց.—*
*էդ աղջիկ հալալ էղի քեզի, գնա, առ արի։*
*Հելան պատրաստվան, Սանասար հելավ խեժավ իր ձին,*
*Գնաց էդ աղջկա հոր քաղաք։*
*էդ քաղաք ծովու ղրաղն ա,*
*Գնաց մե տուն, հեղավ կոնախ,*
*Մե խատ պաբե կա,*
*Ըսեց.—Պաբե՛ ջան, հլա պատմա տեննամ՝*

Ձեր քաղաքն ի՞նչ կա, ի՞նչ չկա։
Ըսեց.—Ի՞նչ պատմեմ, մեր քաղաքը կա մե
թագավոր,
Ունա մե դեղեցիկ աղջիկ, անուն Դեղձուն Շամ ա։
Էդոր իրեք խատ շարթ կա.
Ոն օր էդ իրեք շարթ կդրեց,
Նոր թագավոր ուր աղջիկ կիդա։
Մեկ օր,—ըսեց,—անգին քար ծովու նե՝ վիշաբի
բերան,
Ոն օր անգին քար բերա,
Մեկ էլ,—ըսեց,—էդ թագավորի հետև սուն կա,
Մե խատ խնձոր էդ սան գլխին ա,
Ոն կարենա հելի էդ սան գլխուց բերա,
Մեկ էլ մե ծանդր գուրզ վերցի, թալի,
Էդ իրեք շարթն կկատարի։
Ըսեց.—Պաբե՛, տա՛ս իմ նշանց։
Ըսեց.—Էնա ծովն ա, բանցր սուն ա, վրեն խնձոր,
Ոն օր կատարա, թագավոր կիտա էնոր։
Գիշերվա մեկ վախտին հելավ, ձին խեծավ, գնաց,
Խրեղեն, ծովային ա չէ՞,
Տղեն ըսեց.—Կայնի, հառեջ գուրզն թալեմ։
Թալեց, զանգուն տվեց ձիուն,
Հելավ թռավ սան վրա, վեց խնձոր բերեց.
Ու գնաց մտավ ծով,
Էդ վիշապի բերնից քարն առավ էկավ։
Օր քարն առավ էկավ,
Վիշապ իմալ փչեց, օր քաղաք ջրով լցվավ,
Պառկավ քնավ։
Թագավորն հելավ հայտարարեց,
Ոն օր էս գործեր կատարե, ըրխ գա,
Իմ աղջիկ խալալ սրտով տամ հուրան։
Տղեն հելավ գնաց, ըսեց.—Ես եմ։
— Իմա՞լ. հլա վերցա էս գուրզը։
Վերցուց թալեց,
Զանգու տվեց՝ խնձոր թալեց իրա տեղ։
Թագավոր բերեց աղջիկն տվեց Սանասարին,
Առավ էկավ Սասուն։

## Բ

## ՄԵՆ ՄՀԵՐ

### ՄՀԵՐԻ ԵՆՈՒՆԴԸ, ՍԱՆԱՍԱՐԻ ՄԱՀԸ, ՄՀԵՐԸ ՍՊԱՆՈՒՄ Է ԱՌՅՈՒՏԻՆ ԵՎ ՍՏԱՆՈՒՄ ԱՌՅՈՒԺԱԶԵՎ ՄԱԿԱՆՈՒՆԸ

Դեղձուն Շամ մնաց էրկու խոքով։
Պառկավ, մե խատ տղա բերեց,
Ութ օր թմավ, անուն դրին Մհեր,
Թե ուրիշներ տարով ա կմեծնան, էդի օրով ա
կմեծնա։
Մի առ ժամանակ հընցավ, Սանասար
վախճանավ,
Սասուն մնաց անտեր,
Մհերն էլ փոքր ա։
Քեռի Թորոս էդոնց մեծն ա։
Սով հընգավ, էդոնք հուրիշ տեղից ա խաց
կբերեն,
Բայց մի առյուծ ճանապարհը փակեր ա։
Մհերն էլ տաս-տասխինգ տարեկան ա։
Մհերն հելավ խառցուց.
— Պաբե՛, առյուծ մարդուն հեռվից ա կուտա՞,
Թե մոտեվանց։
— Մոտեվանց։
— Օր մոտեվանց ա, ես կերթամ կռվեմ։
Հելավ Մհեր գնաց, առյուծ էկավ։
Մհեր բռնեց, էրկու ձեռ թալեց էդոր բերան,
Քաշեց էրկու կտոր էրեց,
Կես թալեց ճամփու էս յան, կես էն յան։
Մհերի անուն դրին Առյուծաձև Մհեր,
Էդոնց ճանապարհներ խախնդվան,
Ըսկսեցին առըտուր, ու խաղաղ ապրան։
Թըխ խաղաղ ապրին, մենք Մհերին պտի
ամուսնացուցենք։

### ԱՌՅՈՒԺԱԶԵՎ ՄՀԵՐՆ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է ԱՐՄԱՂԱՆԻ ՀԵՏ

Սալըխ տվին թե մե թագավորի էն տեսակ աղջիկ
կա անուն Արմաղան,
Արևուն կսա դու մի դուս հելի, ես բոլ եմ։
Մհերն խեծավ հուր ձին, կանչեց հուր աստված,
Հնգավ ճանապարհ, հայդե՛։
Գնաց խասավ էդ թագավորի խողեր,
Ընդունին, հարգին, պատվին,
Խարցուցին թե.—Հընչի՞ ես էկե։

Բա.—Էկեր եմ, քո աղջիկ տանեմ,
— Ա՛յ հա՛յ,—ըսեց.—իմ աղջիկ էսա մի տարի
բոզ դև առե գացե։
—Կթամ, կբերեմ,
Մհերն հելավ խեծավ հուր ձին,
Կանչեց հուր աստված
Ու գնաց խասավ դևու սարին։
Տեսավ օր դևն մե ծառ ա քոքախան էրե
Ու ջուն ջանավար տվե հառեջն ու գուքա։
Բարև տվեց։
Ըսեց.—Բարո՛վ, հազար բարին էս էկե,
Էս եռասուն տարի խողածնի միս չկերեր եմ,
Իմ եռասուն երգու ատամներ փշցեր են։
Սկսեցին կռվել։
Դև ծառ բերեց Մհերի գլխուն,
Մհեր քաշվավ դեն, ծառն չարդավ,
Օր չարդավ, Մհերն քաշեց թուրն ու խասավ
կտրեց գլուխ,
Աղջիկն տեսավ,

Օր տեսավ, էկավ փաթթվեց Մհերին։
Աղչկան բերեց, կերան, խմեցին, պառկան քնեցին,
Բեռներ բարձան, էկան։
Էկան, խասան Թագավորի քաղաք,
Ուրախացան, խաղինի կեսն էլ դրեց աղչկա խետ,
Էկան խասան Սասուն։

## ՄՀԵՐԸ ՈՐՍԱՏԵՂՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՄՐՍՐԱ ՄԵԼԻՔԻՆ ԵՎ ՊԱՏՄԱՆ ՆՆ ԿՆՔՈՒՄ

Մհերն սկսեց որսորդություն էնել
Էլ Սասնա քաղաքի վրա ղուշն էլ չհիշի,
Էն մի օր գնաց որսի,
Տեսավ էն կողմից մի խատ հսկա մարդ էկև,
Հուրանց սայման որս կենա.
Ըսեց.—Դու ո՞վ էս,
Ի՞նչ իրավունք ունես դաս մեր սայման, որս էնես։
Ըսեց.—Ես Մսրեցի Մելիք եմ։
— Պտի հիրար խետ կռվենք։
Ու սկսեցին հիրար խետ կռվել։
Էնքան կռվան, Մհերն ուժեղ էր, չկրցան հիրար հաղթել,

Հիշան, նստան խաց ուտել։
— Ես Մսրա Մելիքն եմ, իմ կնգան անունն էլ Իսմի խաթուն ա։
Էստեղ պղի պահման կապենք,
Դու օր մեռար՝ ես գամ քո կնգան տիրանամ,
Ես մեռա՝ դու արի տիրացի,
Էլ ոչ խառջ ու խառաջ, ոչ բան,—
Էդ Սասուն Մելիքին հարկատուն էր,—
Որ դու հելեր էս Սասունին տեր, էլ ո՛չ խառջ, ո՛չ խառաջ։

## ՄՐՍՐԱ ՄԵԼԻՔԸ ՄԱՀԱՆՈՒՄ Է, ՄՀԵՐԸ ԳՆՈՒՄ Է ՄՐՍՐ ԻՍՄԻ ՆԱԽՈՒՆԻ ՄՈՏ, ՎԵՐՋԻՆՍ ՄՀԵՐԻՑ ՈՒՆՆՈՒՄ Է ՄԵԿ ՋԱՎԱԿ, ԱՆՈՒՆԸ ԴՆՈՒՄ ՄՍՐԱ ՄԵԼԻՔ

Մնաց, ժամանակըմ հընցավ, Մսրա Մելիք մահացավ։
Էսի օր մահացավ, Իսմի խաթուն տվեց թղթաբերի, ըսեց.
— Կտանես կիտաս Մհերին, կասես.
Մհե՛ր, քո պայման հելի, պտի դաս ընձի տիրանաս,
Հերսդ ըդտեղ թռչի, էս տեղ կնգա։
Նամակատար նամակն տվեց Մհերին, կարդցավ, հիմցավ,

Հիրա կնգան ըսեց.
— Ես կերթամ Մսրը, պայման ունիմ,
Կնիկն ըսեց.—Օր կերթաս Մսրը,
Հերթում կուտեմ, օր քառասն տարի իմ մոտ չիգաս։

Հելավ Մհեր Քուռիկ Ջալալին քաշեց, խեծավ, հայդե Մսրը.
Իսմի Խաթուն էլ ճամփեն ա կպախա։
Մհերն էկավ, կերան խման, հելան,
Ձին տարավ Թողեց հուր կըսրխի վրեն,
Էկավ փաթթվավ Մհերին, պառկան։
Տարին օր թմմավ, պառկավ՝ մե խատ տղա բերեց, առյուծ տղա,
Խոր անուն դրին վրեն՝ Մսրա Մելիք։
Մհերին Իսմի խաթուն չթողա օյաղ, ամեն օր կխմցու,
Յոթ տարի մնաց, Մսրա-Մելիք հեղե յոթ տարեկան։

Էն մեկ օր օյաղ էր,
Տեսավ՝ Իսմի խաթուն տղին կթոցու, կասա.
— Է՜, մեռիմ քե Մսրա Մելիք,
Հելնիս Մսրա օջախը պայես,
Սասնա օջախը հընցուս։
— Վա՛յ,—ըսեց.—Էս ի՞նչ օյին ա,
Նոր խելքը էկավ Մհերի գլոխ։
Ըսեց.—Ես կեթամ։
Ըսեց.—Կեթաս՝ գնա, ընձի պետք չես,
Ես գուդինք քեզնե մե խատ տղա հըլեր.
— Տղեն հեղե, աշխարք մերն ա,—ըսեց.—
Երդիր կենթարկվի էսոր,
Դու էլ կհեղիք էսոր խառջաուս։

## ՄՀԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՍԱՍՈՒՆ ԱՐՄԱՂԱՆԻ ՄՈՏ, ՄՆՈՒՄ Է ԴԱՎԻԹԸ. ՄՀԵՐԸ ԵՎ ԱՐՄԱՂԱՆԸ ՄԱՀԱՆՈՒՄ ՆՆ, ԴԱՎԻԹԸ ՄՆՈՒՄ Է ՈՐՔ

Հելավ խեծավ ձին ու հայդե։
Խաբարն էկավ, Քե Մհեր գալիս ա,
Կնիկ դռներ խողեց, փակեց,
Մհերին չառավ ներս։
Մհեր գնաց վարդապետներու մոտ
Խնդրեց՝ էկան, Արմաղանին խնդրին,
Քառսուն տարին էրին քառսուն ամիս,
Քառսուն ամիսը՝ էրեցին քառսուն շաբաթ,
Քառասուն շաբաթը՝ քառասուն օր,
Քառասուն օրն էլ բերին միացուցին էս ավուր,
Ըսեցին.—Դու պտի միանաս Մհերին, օր ժառանգ հեղի։

Արմաղան համաձայնվավ,
Ըսեց.—Մարդն օր կա կնգա գլոխն ա,
Կնիկն օր կա՝ մարդու ոտն ա։
Արմաղան մնաց էրկու խոքով։
Ին ամիս, ին ժամ լրացավ, Արմաղան չոք զարկեց գետին, մե խատ տղա բերեց,
Տղեն օր բերեց, կնքեցին, անուն դրեցին Դավիթ։
Էրգուսով էլ էդ օր մահացան,
Մնաց Դավիթ էթիմ։

## Գ

## Դ Ա Վ Ի Թ

ՔԵՌԻ ԹՈՐՈՍԸ ԴԱՎԹԻՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՄՍԵՐ՝ ԻՄՄԻ ՆԱԹՈՒՆԻՆ, ՊԱՀԵԼՈՒ. ԴԱՎԻԹԸ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ՈՒՏԵԼԻՔԻՑ ԻՄՄԻ ՆԱԹՈՒՆԸ ՍԱՍՈՒՆԻՑ ՄԻ-ՄԻ ԲԵՌ ՄԵՂՐ ՈՒ ԿԱՐԱԳ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ ԴԱՎԹԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Դավիթն օր մնաց էթում, չկռնան պախեն, իմա՞լ պախեն։
Քեռի Թորոսն ըսեց.—
— Դավթին ճամբենք Մսըր Իմմի Խաթունին՝ պախա։
— Իմա՞լ ճամբխենք։
— Բերենք կապենք Քուռիկ Ջալալեյ վրեն,
Մե խատ էլ թուղթ գրենք, դնենք տղի դոշի վրեն,
Էնի տանա մցնա Մելիքի տուն,
Մհերի խաթրին՝ Դավիթին կպախա։
Քուռիկ Ջալալին բերին, Դավթին, կապին,
Թուղթ լե գրին, գլուխ օղրին՝ հա՜յդե Մսըր։
Քուռիկ Ջալալին տարավ հիշուց Մելիքի դռան։
Բերին փաչուշ հիշուցին, առան գացին տուն,
Խասկցան օր էդի Մհերի տղեն ա, Մհերն էլ մախացեր ա։
Քուռիկ Ջալալ դարձավ էկավ Սասուն
Ինչ կբերեր Իմմի Խաթուն, ճիժ չառավ բերան։
— Իմա՞լ էննենք, էս տղեն կմեռի, մենք գելնինք խայտառակ։
Թուղթ գրեցին քեռի Թորոսին Քև.
«Ձեր տղեն բան չուտա.
Միծ կղնա բերան՝ խանա,
Մե բեռ մեղր, մե բեռ կարագ ուղարկեք,
Բեռն գա, օր ձեր տղեն ուտա, չմահանա»։
Բեռմ կարագ, բեռմ մեղր ճամփեցին Իմմի Խաթունի մոտ։
Էսի սկսեց Դավթին պախել։
Դավթին հնարք չկա, կբերեն ժնջլով կկապեն օրորոցի նեն,
Էն վախտ օր կփքա, ժնջլի օղեր փրդին, թափին։
Բերին ռեզնով կապեն, էդի չկտրվի։

## ԴԱՎԻԹԸ ԲԹՆՈՒՄ Է ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԳՈՒՐՋԸ ԵՎ ՍՊԱՆՈՒՄ ՓԱՅԼԵՎԱՆՆԵՐԻՆ

Մսրա Մելիք էն ձևի ուժեղ մարդ ա հեղե,
Սաղ հըմեն պետութուններ հարգ ա կուտան, հուրա ձեռքի տակ են։
Էն մեկ օր հելավ, ըսեց.
— Պտի էթանք գուրզ թալենք, գուրզ խաղանք։
Դավիթ խինգ տարեկան՝ ըսեց.
— Ինձ էլ տարեք ձեր խետ, ես էլ գուկամ։
— Դու երեխա էս, դո՞ւ դոր գաս։
— Ջէ՛, օր չէ, լաց։
Առան գացին, եռու դրին ճանապարի վրեն,
Հուրին խող ա կքոմա, կխաղա։
Էդոնք գուրզն զանին,
Օր էկավ, էդի գուրզն բռնեց,
Օր գուրզն բռնեց՝ լորդեց,
Օր լորդեց, էդ Մսրա Մելիքի փայլեվաններուց էրկու խատ սպանվան։
— Ա՛յ հա՛յ,—ըսեց.—էսի խինգ տարեկան,
Էդ խարիր լիտրանոց գուրզն իմա՞լ բռնեց։
Ու էդտեղ հելան էկան Իմմի Խաթունի մոտ.
Մելիք եռատե, կըսա.
— Էդոր գլոխ պդի կտրեմ, օր կդրեմ։
— Հընչի՞, էդ երեխեն ի՞նչ ա էրե։
— Ի՞նչ էրեխա, օր էրեխա էր գուրզով փայլեվըներուն կսպանե՞ր։

## ԴԱՎԹԻՆ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԿՐԱԿՈՎ ԵՎ ՈՍԿՈՎ

Բերին գիտնական մարդիկ,
Ըսին, օր.—Էդի չխասկնա, բերեք փորձենք։
— Բերեք,—ըսեցին.—Կրակ մե տեխ դնենք, օսկին՝ մե,
Տեննանք էդի որ մեդն ա կվերցա։
Բերին կրակ մե տեխ դրին, օսկին մե,
Դավիթ ուղեցավ օսկին վերցներ,
Հրեշտակներ ըզոր ձեռն տարան, կպուցին կրակին,
Օր կպավ մատին, դրեց բերան,
Լեզվի ծեր էրեց։
Օր էրեցավ լեզուն մնաց թլոր,
Անուն դրին Թլոր Դավիթ։

## ԻՄՄԻ ԽԱԹՈՒՆԸ ՆԱՄԱԿ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ՍԱՍՈՒՆ ՔԵՌԻ ԹՈՐՈՍԻՆ, ՈՐ ԴԱՎԹԻՆ ՀԵՑ ՏԱՆՆԱ ՍԱՍՈՒՆ։ ՋԱԼԱԼԱՀԱՐ ՔԱՄԻՆ ՈՒ ԲԱԹՄԱՆ ԲՈՒՂԱՆ ՁԱՆԱՊԱՐՀԻՆ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՍՊԱՆԵԼ ԴԱՎԹԻՆ։ ԴԱՎԻԹԸ ՀԱՂԹՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՍԱՍՈՒՆ

Իմմի խաթուն թուղթմ՝ գրից, ճամբխեց Սասուն.
«Քեռի Թորո՜ս, գիքաս Դավթին տանես,
Վախենամ Մելիք սպանա Դավթին,
Օր մենք սևերես չհեղինք»։
Քեռի Թորոսն էկավ, տեսավ՝
Դավիթն, ահագին մարդ ա հեղե։
Մըսրա Մելիքն չհամաձայնվավ, ըսեց.
— Դու գնա՛, ես Դավթին կիտամ իմ քաջերուն, առնին գանե։
Հարդին, պատվին Քեռի Թորոսին, դրին ճամբխու։
Մե քանի օրից կանչեց իրա քաջերուն,
Օր Դավթին տանեն Սասուն,
Էդոնց անուն Ջալդահար Քամի ու Բաթման Բուղա էր։
Էսոնք առան Դավթին խեղ հուրանց՝ ու գացին,
Մելիքն ըսեց.—Օր խասնք Սասուն,

էն տեղ մե խաւտ գետ կա,
Թալեք Դավթին էդ գետը, թալեք վերջացունք,
Ի՜նչ ժամանակ հեղի, էդորից մեզի վնաս կխասի։
Հելան առավոտ գացին։
Ճանապարին օր խաց կուտեն, Դավթին խաց չիտան,

Դավիթն էլ էդոնց չմոտենա։
Էդոնց կրաղով կանանչ ուտելմանց կելա։
Օր գացին խասան էդ կարմնջին,
Մեկ մնաց Դավթի հետ, մեկն հառջ,
Օր բռնեն թալեն գետ։
Ու կանչեցին ըսին.—Արի՜ խաց կե.
— Ջանըմ,—ըսեց.—չուր մկա ինձի խաց չիտան,
Էսօր ընչի՞ ա կիտան, օր բռնեն ընձի։
Խասավ բռնեց էրկսին,
Կապեց հիրար, կախեց կարմնջին։
— Ամա՜ն,—ըսեց.—Դավի՜թ, մեզի չսպանես,
մենք քեզի ծառա։
Բաթման Բուղան ու Ջալդահար Քամին ըսին՝ մենք
քե ծառա։
Ջալդահար Քամին ըսեց.—Ես կդառնամ եդ։
Գնաց։
Բաթման Բուղեն մնաց Դավթի խետ,
Կարմունջ օր հընցան, արդեն Սասնա սայմանն ա։
Խաբար տվին Քեռի Թորոսին, Քե.
— Աչքդ լո՜ւս, Դավիթ էկավ։
Առան, էկան, նստան կերուխոմ,
Կերան խմեցին։ Առ ժամանակն մնաց։
Մսրա Մելիքն էկավ Սասմա վրեն, ըսեց.
— Պտի իմ թրի տկով հընցնեք,
Ընձի խառջ ու խառաջ տաք։
Բոլորն հընցան թրի տկով։
Ի՜նչ էրին, չէրին Դավիթ չէկավ։
Ջոռով բերին, թոթվեց,
Էդոր ճկուն կպավ ապառաժ քարին,
Էդ քարից կրակ հելավ։
Էդ տեղ Մսրա Մելիքի ղուդում կոտրավ.
— Ա՛յ հա՜յ,—ըսեց.—Իմ հաղթողն օր կա՝ էս ա,
Հաղթողն օր չկա՝ էս ա։
— Ջի՜, ջանըմ, էդի էրեխա յա, էդ ի՞նչ ա։
Հեղան հարկատու։
Սասուն պտի հարկ տաներ Մսրա Մելիքին։

## ԴԱՎԻԹԸ ՉԻ ԱՆՑՆՈՒՄ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԹՐԻ ՏԱԿՈՎ, ԴԱՎԻԹԸ ԴԱՌՆԱՐԱԾ ԵՎ ԱՊԱ ՆԱԽՈՐԴ

Դավիթն էրեխա տղա, բերին էրին գառնարածն։
Քեռի Թորոս մե խաւտ էրկթե փեդ առավ,
էրկթե օտնաման առավ, խաքավ,
Գառներին քշեց դբա Սասնա սարեր։
Քներ էր, ինչ էր հեղե, հելավ օր չբռռաց,
Ինչքան նապաստակ ու աղվես կար դադարգուն
էկան հուրանց տներուց
Լարեց, խառնեց հիրար,
Առավ էկավ Սասնա մեջ, ժողովուրդն զարմըցավ։
— Է՜, Քեռի Թորո՜ս, էն օր էս անպոչուկներ են՝
մալադեխին,
էն օր պոչուկներն են, իմ խոքին խանին։
Տեսավ օր էրկթե օդնամաններ մեկ օր կդռդե։
— Տո՛,—ըսեց,—օդներուդ մեռիմ, Դավի՜թ,
էդ պոչովներն ա, հընչի՞ զընգես էնդոր հետև,
Անպոչովներն քոմա առ արի։
Ժողովուրդ բողոքեց։
Վերջ էդ տարին յոլա տարավ։
Մնաց, էն մյուս տարին էրին նախրորդ,
Դավիթ նախիր կիդա հառջն ու կերթա,
Գնաց ըսկսեց պախել։
— Հելավ մե խաւտ օր բռռաց,
Գել ու գաղան հըմեն հելան բներուց փախան,
Հընգավ հետև հուրանց, բերեց խառնեց, առավ
էկավ,
Գեղացիք օր տեսան, փախան։

## ԴԱՎԻԹԸ ՈՐՍՈՐԴ ԵՎ ԱՐՏԱՏԵՐ ՊԱՌԱՎԸ

Դավիթ հառավոտ հելավ, էլ չգնաց նախրորդ,
Էդի կեթա հուր շխփիկով խլղի բանջրներ կքանդա,
որս կենա,
Մե Պառավ ա գտե, կերթա էդ Պառվու տուն կքնի,
Հառավոտ գլի, որս կչնա։
Էն մեկ օր գնաց, Պառվու կորեկի արտ քաղող
չկա,
Լորեր տափած էդ կորկի մեջ։
Դավիթ կեթա, գուքա, ըմա՜լ էրե՜,
Կորեկ հըմեն դուրնե գետին։
Պառավն օր չգնաց տեսավ, էկավ,
— Տո՛,—ըսեց,—Դավի՜թ, վարամ թալես,
Դու Մհերի տղեն ե՞ս,
Օր կեթեր Ծովասար, ձապաղջուր որս կեներ,
Հըմեն Մըսրա Մելիքն ա զավթե,
Դու էկել ես, իմ արտն ա կդուրնես,
Էլ ես ինչո՞վ ա կապրեմ։
— Իմա՜լ, նանե՛։
— Բա՛, ըդմա՜լ։
— Գնա՛ քո հորոխպեր Հովանի կուշտ։
Գնաց մորուս բռնեց, ըսեց.—
Քե կսպանեմ, պտի ընձի տաներս մեր որսատեղ։
Հովանն ըսեց.—Տո՛, վարամ առնես,
Մեզի որսատեղ չկա, Մսրա Մելիքին ա։
— Ջի՛,—ըսեց.—պտի էքանք։
Հելավ Հովան էդոր առավ, գնացին որսասար։
Դավիթն մե օշխար զարդեց,
Կերան, խմեցին, պառկան քնան։
Օր հելան, Դավիթը տեսավ օր

Մե հատ սարի գլոխ լուս ա կվառի։
Հելավ ըսեց.—էն ի՞նչ լուս ա,
Ըսեց.—էդ մեր Մարութա սուրբն ա,
Մսրա Մելիք ավիրե, լուս ա կերևա։
Հելան գացին էդ տեղ,
Տեսան օր՝ էդ վանքն քանդուկ ա։

ԴԱՎԻԹԸ ՊԱՏՈՒՀԱՍՈՒՄ Է ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԱՐԿԱՀԱՆՆԵՐԻՆ

Դարձան էկան քաղաք։
Դավիթ էլմաս կեթա որսի։
Մսրա Մելիք էրկու խատ մարդու ճամբեխ,
Օր Սասունից յոթ տարվա խառջ տանա։
Մսրա Մելիքն ըսեց.—Բադին, Ղոզբադին, կեթաք Սասուն,
Կենենք քարուքանդ, կժողվենք կբերեք։
Էկան խասան Սասուն։ Գնացին Հովանի մոտ, էսի հախու կդողա։
Դավիթն էլ գացե որսի, քաղքի նե չէ։
Բերին Քեռի Թորոս, Հովանն օսկին կշափեն։
Ըմալ լոկկեցին ժողովրդին, բան չթողին։
Պառավն էկավ, Դավթին տեսավ, ըսեց.—
— Վա՛յ, վարամ թալես, Դավի՛թ,
Բա դու Մհերի տղեն ե՞ս,
Հենա Բադին, Ղոզբադին օսկին ա կտանեն,
Դու իմ արտի մեջ լոր ու ճնշուղ ա կբռնես։
— Իմա՞լ։
— Կո էկած ա կտաննեն։
Էկավ հընդհավորի պես, տեսավ օր Քեռի Թորոս դողդղալեն մեշոկն ա բռնե,
Էդոնք օսկին ա կշափեն։
— Էդ ի՞նչ օսկի յա։
Զանեց ջխտի գլոխ չարդեց,
Ատմներ քաշեց, շարեց ճագաթ ուրանց,
Կաբեց ձիանքներու վրեն։
Ըսեց.—Գնացե՛ք, ձեր Մսրա Մելիքին ըսեք,
Ի՞նչ խառջ, ի՞նչ խառաջ, պտի հինքն ինձ խառջ տա։

Գացին, ըսին—Դավիթ ըսեց՝
Ոն օր ղոշաղ ա, էնի թըխ տանա։
Մսրա Մելիք տեսավ, հընդհավորավ,
Էդոնց ատմներ վըր ճագաթ ուրանց կփելեր։
Այ հա՛յ, ըսեց։

ՄՍՐԱ ՄԵԼԻՔԸ ՊԱՇԱՐՈՒՄ Է ՍԱՍՈՒՆԸ. ԴԱՎԻԹԸ ՁԵՌՔ Է ԲԵՐՈՒՄ ՀՈՐ ՉԳՆԱՏՆ ՈՒ ՁԵՆՔԵՐԸ, ԼՈՂԱՆՈՒՄ ՋՐՈՒՄ ՆՎ ՀԶՈՐԱՆՈՒՄ

Հելավ ղորք կապեց ու հայդե՛ Սասուն։
Էկավ ըմալ չադրներն զանեց,
Ու թուղթն էկավ Հովանի վրեն,
— Ձեր երգիր տակն ու վրա պտի էնեմ։
Էդ տեղն էլի Դավիթն գացե որսի։

Պառավն ըսեց.—Վա՛յ, թաղեմ քո գլոխ,
Հանդա՛ Մըսրա Մելիքն էկեր ա վըր Սասուն։
— Վա՛յ,—ըսեց.—կեթամ կռիվ։
— Գնա՛,—ըսեց.—քու խոր Քուռիկ Ջալալին կապուկ ա ախոռն,
Քո խոր թուրն ու գուրզ, շորերն,
Հովանից էլ գուզես, կխաքես, նոր կեթաս կռիվ։
Հելավ էկավ,—Հե՛յ,—ըսեց
— Խան իմ խոր շորեր, ձին, գուրզ տուր։
Ես կեթամ Մըսրա-Մելիքին պատասխան կիտամ։
Ըսեց.—Չկա։
Բռնեց բոկ, ըսեց.—Կապանեմ։
— Ամա՛ն.—ըսեց.—Թո՛ղ, էթամ բերեմ։
Գնաց բերեց, խաքավ, քաշ կեթա գետնի խետ։
Խոր գտակ դրեց, հիշավ հաշկեր։
Ըսեց.—Խա՛ն։—
Ըսեց.—մտի էդա հավուզ, լողկցի։
Մտավ լողկցավ,
Խոր շորեր կխաքի՝ ճռճռալով կմտի վրեն,
Գտակ չմտի գլոխ.
Հելավ խեծավ, ձին իրեք անգամ մռռաց։
— Քո խեր,—ըսեց.—օր կխեծեր,
Ձին երկու անգամ էլ կմռռեր,
Դու օր խեծար՝ իրեք անգամ մռռաց,
Էդի քո ուժն ա, գինա՞ս։
Հելավ խեծավ, սըբ Խաչ պատարագին հիշավ էդոր աջ թևին։

ԴԱՎԻԹԸ ՁԵՆՈՎ ՀՈՎԱՆԻ ԽՈՐՀՐԴՈՎ ԿՏՐՈՒՄ Է ԵՐԿԱԹԵ ՍՅՈՒՆԸ

Հովանն ըսեց.—Դաշտի մեջ մե էրկթե սուն կա,
Գնա՛ զան, թե կդրա՛վ, կո դու Մելիքին կաղթես,
Օր չկդրավ՝ էլ ո՛չ գնա, ո՛չ էլ։
Գնաց, կանչեց աստված, թուր քաշեց,
Զանելուն պես՝ թուրն մնաց ձեռին,
Էրկթե սուն կտրեց, սուն մնաց վրեն,
Դավիթն օր օդրավ, ըսեց.
— Վա՛յ աչք, դու քոռնիր, չտենի,
Թև դու թուլնիր։
Գիցավ չկտրեր ա,
Դարձավ օր չեթա կռիվ։
Քամին հիրար տվեց, սուն հնգավ։
— Վա՛յ,—ըսեց,—ա՛չք, դու լուսով հեղի՛ր,
Թև դու կտրուկ հեղի՛ր։

ԴԱՎԻԹՆ ԸՆԿՆՈՒՄ Է ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՀՈՐԸ

Հելավ գնաց, հասավ Մելիքի զորքին,
Ըսկսեց կտրել, փրթել,
Քշեց, խասավ Մսրա Մելիքին,
Մելիքն ըսեց.—Դավի՛թ, ուտենք, խմենք՝ նոր կռվենք։

Քերին էդ տեղ Դավթին նստցուցին խալիչին,
Դռռալեն հիջավ քյառսուն գյազանոց խոր,
Օր հընգավ՝ թուրն հընգավ խուվաթ։
Զին թուրն առավ, ղորքին կտրելով, հելավ սարի գլոխ,

ԶՆՈՎ ՀՈՎԱՆԻ ԵՐԱԶԸ, ԴԱՎԻԹԸ ՀՈՎԱՆԻ ԱՈՐՀՐԴՈՎ ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ՀՈՐԻՑ

Էդտեղ գիշեր էր, Հովան էրազ տեսավ.
Դավիթ իջավ ծովու մեջ,
Զին հելավ, Դավիթ մնաց։
— Ա՛յ կնիկ, մեր Դավիթ կորավ.
— Տո՛,—ըսեց,—Քու խամար քնես, էրազ կտենաս ուրիշի խամա՞ր,
Քնի՛, Դավիթ մկա վի աղջկա խետ ա, քեֆ կկ'ենա։
Էլի քնավ, էլի էրազ տեսավ.
Հելավ, կնգան ըսեց,
Գնաց մտավ ախոռ, խոծավ ձին,
Գնաց սարի գլոխ, կայնավ,
Կայնավ, բոռաց.
— Դավի՛թ, կանչա՛ սըր Մարութա Աստվածածին, դուս հելի։
Դավիթ լսեց.
Կանչից, թռավ հելավ խորուց։

ԴԱՎԹԻ ԵՎ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ. ԴԱՎԻԹԸ ՍՊԱՆՈՒՄ Է ՄԵԼԻՔԻՆ

Մելիքն ըսեց.—Արի նստի։
— Գնա՛,—ըսեց,—նամա՛րդ, հելի կռվենք:
Զին էկավ, քուռիկ Ջալալին խրխնջալով էկավ։
Մելիքն հելավ, ըտու մերն էլ, քուրն էլ խետն էկած աւ
Ըսեց.—Հառջի զարկն ի՞մն ա, թե՝ քոնն աւ
— Քոնն աւ
Գնաց, ձին քշեց խասավ միջև Դարբաքիր,
Էկավ զանեց, թոզն հելավ,
Հիրկուն թոզն հընցավ,
Հելավ ըսեց.—Կենդանի՛ եմ, էլի արի։
— Ա՛յ, հա՛յ,—ըսեց,—մոտիկ տեղեն էկա։
Մեկ էլ քշեց, խասավ Մըսր,
Էկավ, գյուղղով զարկեց,
Դավթին բան էլ չհղավ։
Դավիթն ըսեց.—Դորն իմն աւ
Մելիք մտավ խոր, ջաղցի քարեր դրին խորուն,
Գոմշի կաշիք թալին խորուն։
Դավիթ ձին քշեց, էկավ։
Մերն հելավ առեջ, ըսեց.
— Դավի՛թ, ես քեզի շատ եմ պահն,
Էդ մեկ ղըրըն բաշխա։
Մեկ էլ օր էկավ, քուրն էկավ առեջ,
Էդ էլ բաշխեց։
Երրորդ անգամ գնաց, էկավ, զանեց,
Էրեց էրկու կտոր Մելիքին։
Մսրա Մելիքին սպանեց, հըմեն էլան Սասունա հարկատու։
Դավիթն էլ էդտնց թագավոր աւ։

ԽԱՆԴՈՒԹԻ ՆԱՄԱԿԸ ԴԱՎԹԻՆ, ԴԱՎԻԹԸ ԳՆՈՒՄ Է ԿԱՊՈՒՏԿՈՂ, ԽԼԱԹՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՋՄՇԿԻԿ ՍՈՒԼԹԱՆԻՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՄ

Մենք խաբար տանք կաբուտկող։
Էդտեղ կա խանդութ խանում.
Էսի մե փայլևան, ուժեղ աղջիկ ա,
Ըսեց.—Իմն օր կա, չկա՝ Դավիթն աւ
Քառասուն փայլևան էկած չոքած էդոր խոր՝ Վաչե Թագավորի հառաջ, խնդրեն.
Աղջիկ ոչ մեկն էլ չխավնի, չառնի։
Թուղքըմ գրեց, ճամբեսց Դավթին.
«Քու հերես էդտեղ տզկես, էստեղ կնդես.
Ես Վաչե Թագավորի աղջիկն եմ, Կաբուտկողից եմ։
Դավիթն հելավ էկավ։
Ղլաթն մե խատ Ջմշկիկ Սուլթան կա,
Քեռի Թորոսն էդոր խոսք ա տվեն, օր ուզա Դավթին,
Ջմշկիկ Սուլթան հիմցավ, օր Դավիթ գուքա, կերթա Կաբուտկող։
Դավիթն օր էկավ, հելավ Դավթի հառաջ, ըսեց.
— Քեզի պտի տանեմ ինձի կոնախ։
Դավթին կերցուց, խմցուց, Դավթի կուշտ քնեց։
Դավիթ գնաց Կապուտկող։

ԴԱՎԻԹԸ ԿԱՊՈՒՏԿՈՂՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՔԱՂՈՐ ԴՈՐԳԻՒՆ, ԽԱՆՈՒԹԻՆ ԵՎ ՍՊԱՆՈՒՄ ԹՇՆԱՄԻ ՓԱՀԼԵՎԱՆՆԵՐԻՆ

Էդտնց քաղոր Դորգի կա,
Զին սովոր ա, գնաց քաղոր Դորգու տուն,
Օր գնաց՝ Դորգին տեսավ, զարմացավ,
Խասկցավ, օր Մհերի տղա Դավիթն աւ
— Հընչի՞ էս էկե։
Ըսեց.—Էկեր եմ կապուտկող, Վաչե Թագավորի աղջկան առնեմ։
Դավիթ հելավ գնաց։
Խանդութին մե ասլան փայլևան կա, պահակ ա,
Ոն որ կիգա, բարևն էլ չառնի։
Դավիթն էկավ, բարևեց,
Բարևն առավ, տարավ ներս։
Խանդութ խանըմ էկավ, տեսավ՝
Արեգական պետ կվառի աշխարհ.
Կըսա,—Ոն օր տենա էդոր քիթը-բերան,
Մեզ տարի անքուն կմնա։
Դավիթն օր չտեսավ՝ թուլցավ,

Հընգավ Խանդութի օդևներու տակ։
Ջուր թալին, խանեն, խամբուրվան։
Դավիթ մատ տվեց էդոր չանի տակ, օր բոգի տակ պաքեր։
Խանդութ սիլա զանեց Դավթի բերնի մեջ,
Դավթի վիզն օղրավ։
Դավիթ հռկավ.—Ես կո գացի,
էն վախտ գիգամ, օր քո խոր դարգևներ խողեն,
Հընգիմ մտեդ, ես գիքամ։
էդի հելավ բոբիկ, թագավորի աղջիկ էր,
Տեսավ օր Դավիթ կեթա,
Հընգավ էդոր հետև, աղաչեց, խնդրեց,
Դավիթ դարձուց, առավ էկավ,
Կերան, խման։
էդ փայլեվաններն էլ ա նստած,
Թրեր հուրանց պահած սեղնի տակ։
Թե Դավթին պտի սպանեն։
Դավթ օր քիչմ ննջաց, էդոնք թրեր քաշեցին։
Դավիթ հելավ թռավ, մե խատ գերան կէր, ըսեց.
— Քավոր Դորգի՛ (էդի խեռն էկեր էր) ծորեմ, թը՞ ծորտիեմ։
Ըսեց.—Աջուց ծորա, ձախուց ծորտիա։
Ձանեց՝ կոտորեց։

## ԴԱՎԻԹԸ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է ԽԱՆԴՈՒԹ ԽԱՆՈՒՄԻ ՀԵՏ, ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ՍԱՍՈՒՆ, ՁԱՆԱՊԱՐՀԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՋՄՇԿԻԿ ՍՈՒԼՔԱՆԻՆ ԵՎ ՍՈՒՏ ԵՐԴՎՈՒՄ

Դավիթ պահվավ,
Ժամանակմ մնաց էդ տեղ,
Վերցուց Խանդութ խանըմին ու էկավ։
Օր էկավ, էդ Ջմշկիկ Սուլքանը հելավ Դավթի հետ կռավ.
— Իմա՞լ կռվեմ, կնիկ ա կտանեմ,
Կայնի տանեմ, դառնամ գամ, կռվենք,
Ըսեց.—Չէ՛, օր չէ՛, դը հերթվի։
Դավիթ հուր ծոցը մե ջեր սանդր է դրե, մեկ էլ Սըբ Նշան.
Օր սութ կերթվեր, ձեռ զարգեր սանդրի վրեն,
Օր օղորթ՝ ձեռ զաներ էն խալի վրեն։
Սուտ հերթվավ, մտեն գնաց, զարգեց վըր խալին
Ու առավ Խանդութ խանըմ, գնաց։
Օր գնաց՝ քեֆ, ուրախութեն.
Հիրիկուն օր խախնդվան, տեսավ դոշն սևցեր ա,
— Վա՛յ,—ըսեց.—Ես պտի էքամ կռիվ, իմ դոշն սևցեր ա։

## ԴԱՎԻԹԸ ԴՆՈՒՄ, ԱՄՈՒՍՆԱՑՆՈՒՄ Է ՑՈՒ ՓԱՀԼԵՎԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ՍԱՍՈՒՆ

Դառցավ Քըխ Խանդութ.
— էն յոթ փահլեվան, օր քո հոր դուռ կայնած ին, Քու համար կայնած ին.
Ես կեթամ էդոնց կամուսնացում,
Վերջում դուքամ կկռվեմ, կդառնամ։
Հելավ գնաց։
Գնաց, էդ փայլեվաններու խատ պատահեց,
Հըմնուն տեղավորեց, կարգեց,
Տաս տարի հընցավ,
Խանդութի մոտեն մե տղա հելավ։
Անուն դրին Փոքր Մհեր։
էկավ խասավ մե քաղաք,
Թագավորին մե լավ աղջիկ կա.
էդ թագավորի խատ ծանոթացավ,
Թագավոր հիմցավ օր էդ քաջ Դավիթն ա,
Աղջկան տվեց։
Առավ խեռն ու էկավ։

## ԴԱՎԹԻ ԵՎ ՓՈՔՐ ՄՀԵՐԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ. ԴԱՎԻԹՆ ԱՆԻՄՈՒՄ Է ՈՐԴՈՒՆ՝ ՄՀԵՐԻՆ

Օր էկավ, արդեն Մհեր հելե տըսնխինդ տարեկան,
Մհերի հառջ գետին կդողա,
— Մերիկ,—ըսեց,—ես կերթամ տենամ, իմ խերն ինչ հեղավ։
Ջինվեց, գնաց մինչև հուրանց քաղքից գելնի,
Խերն դուխա ռասա։
Օր խերն ա գուխա ռասա, է՛, չճանչնա։
— Էդ ի՞նչ մարդ էս, էդ աղջիկ չի տաս ընձի՞։
— Ա՛յ տղա, դու ո՞ն էս,
Էդքան ծովեր եմ հընցե,
Մե հադ պտիկ հառու էկե ինձ դեմ կառի՞։
Ըսեց.—Ես փոքր առում ե՞մ։
Ու սկսեցին կռվել։
Օր կռվան, Խանդութ խանըմ ձենից խասկցավ,
Օր խեր ու տղեն ա կկռվեն։
Հելավ էկավ, տեսավ՝
Մեյդնի մեջ խերն ու տղեն էն տեսակ ա կկռվեն,
Օր իլլաջ չկա.
Ինչքան բոռաց՝ հուրանց գյոռգյոռունից լլսան, կռվան։
Ձանեց խորն իցկեց,
Մերը խասավ, ըսեց.
— Էդ քո խերն ա, ախր։
— Վա՛յ։
Հելան փաթթվան։
— Է՛, Մհեր,—ըսեց,—էդ ի՞նչ օյին խանիր իմ գլոխ,
Էրիր խայտառակ.
Ասսուց կխնդրեմ՝ ոչ քեզի մախ հեղի,
Ոչ հաղթող հեղի,
Ոչ էլ ժառանգ հեղի քեզի։
Տղին անիձեց։
Օր անիձեց, տղեն էդ տեղից խոր խատ չէկավ,

Ինադ էրեց, հայդե՛ պաբեյ տուն՝ Ղլաթ, վաշեյ տուն,
Հելավ էնոնց փայլեվան։

ԴԱՎԻԹԸ ԿՌՎՈՒՄ Է ԱԼԱԹՑԻՆՆԵՐԻ ԴԵՄ, ՀԱՂԹՈՒՄ ԵՎ ԿԱՄՈՒՐՋԻ ՏԱԿ ՍՊԱՆՎՈՒՄ ՋՄՇԿԻԿ ՍՈՒԼԹԱՆԻ ԱՂՋԿԱ ՆՏՏԻՑ. ՀԱՆԴՈՒԹԸ ԼՈՒՐԸ ՍՏԱՆԱԼՈՎ ԻՆՔՆԱՍՊԱՆ Է ԼԻՆՈՒՄ

Դավիթ էկավ, քյանիմ օր մնաց,
Դարձավ գնաց Ջմշկիկ Սուլթանի խետ կռիվ։
Գնաց, ձին խեծավ ու հայդե Ղլաթ։
Հելան ղլաթցիք էկան, սկսեցին կռվել.
Ղոշունին հաղթեց։
Դու մի ըսա, էնօր օր քնավ մոդ՝ մե հատ աղջիկ հեղե.

Աղջիկն առե նետ ու աննեղ,
Էկե կարմնջի տակ տափեր ա։
Դավիթն օր հաղթեց, քյոռնուկ, նեղցուկ, ըսեց.
— Էթամ լոդկնամ, նոր էթամ։
Խանեց շորեր, թուր, բան կապեց վըր ձին,
լոդկցավ։
Աղջիկ նետով զանեց Դավթի թիկնքին, սրտից տվեց դուս.

Դավիթն բոռաց,
Զեն գնաց խասավ Սասուն։
Աղջիկն հախու կարմնջի տակ մեռավ,
Ձին առավ շորեր, գնաց։
Ձին օր գնաց, խանդութ խանում հելե կտուր, կիշկա ջաղդեն.

Վեգոն էլ էդօր խետ կտուրն ա։
Խանդութ խանըմ ըսկսեց լալ, բոռալ,
Թե՝ Դավիթ չկա։
Վեգոն ըսեց.—Դավիթ չկա, ես սաղ մնամ։
Խանդութ խանում էդտեղից հիրան թալեց գետին։
Բերին Դավթին ու խանդութին թաղեցին։
Սասուն մնաց անտեր։

## Դ

## ՓՈՔՐ ՄՀԵՐ

ՔՆՈՒ ԹՈՐՈՍՆ ՈՒ ԶԵՆՈՎ ՀՈՎԱՆԸ ՓՈՔՐ ՄՀԵՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ ԵՆ ՍԱՍՈՒՆ ՈՒ ՄՀԵՐԸ ԿՌՎՈՒՄ, ՀԱՂԹՈՒՄ Է ՂԼԱԹՑԻՆՆԵՐԻՆ

— Էրթանք,—ըսին,—մեր տղին առնենք գանք պաբեյ տնից։
Հելան քեռի Թորոս, Զենով Հովան
Յոթ խատ գմշու կաշի առան, գացին թագավորի մոտ,
Ըսին,—Դավիթին սպանած, մենք էլ դուշման ունենք,
Սասուն անդեր ա.
Մեր տղեն տվեք, առնինք էրթանք.
— Տղեն—ըսին,—մեռե։
Օր, ըսեցին՝—«Մեռե», ըսին.
— Քելե էթանք, մեր տղի գերեզման տվեք նշանց,
Մեր մեկ տարեգնի գերեզման մեր օտով՝ մեկ շենք ա,
Էնի տասնխինգ տարեգան ա, տասնհընգ շենք պտի հլի։
Էլան գնացին, չգտան։
Ըսին.—Մեր տղեն չմեռեր ա։
Հովան բոռաց, ձեն գնաց հընգավ Մհերի հագանջ,
Տարած մե հեր մեջ դոլ ու ղուռնա յա կղանեն,
Օր ձեն չլսի։
Էրկու անգամ բոռաց, չլսեց։
Վերջ, Քեռի Թորոսն մե խատ ղանեց մըջ Հովանի բերնին, ըսեց.
— Ուժեղ բոռա՛։
Մեկ էլ օր բոռաց՝
Երգինք-գետին դողաց, գերեզմնի քարեր տփվան հիրար.
Ձեն գնաց հընգավ Մհերի ականջ։
Մհեր քոթվեց, տփեց դես ու դեն,
Էկավ գերեզմններ էդոնց կուշտ,
— Անաստված,—ըսեց,—դու էկեր էս դաս,
Արդեն ղլաթցիք քո խոր սպանած
Հիմա գուքան մեր քաղաքն էլ կավիրեն։
Հելան էկան, խասան քաղաքն։
Քուռիկ Ջալալին խեծավ, քշեց Ղլաթա վրեն.
Էմա՛լ բրդեց, էմա՛լ բրդեց, օր մե խատ խաբրքեր չմնաց։
Թողեց էկավ Սասուն։
Մհեր հեղավ տեր ու տիրական։

ՄՀԵՐԸ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է ՆՇԱՆՈՒՆ ԳՈՀԱՐԻ ՀԵՏ

Էն մեկ օր գնաց որսի,
Ձին հուր գլոխ քյաշեց, գնաց մե քաղաք։
Էդ թագավորին մե աղջիկ ուներ, Նխշուն Գոհար աննվոր։
Գնաց պառվու տուն, ըսեց.
— Պառավ, իմա՛լ էնեմ, օր էդ թագավորի աղջկան՝ Գոհարին առնեմ։
— Էդոր,—ըսեց,—ջանդոլի կա.
Գնա, գա՛ն ջանդոլին, քեզի կտանեն թագավորի մոտ։
Գնաց զանեց, ջանդոլին հելավ խաղար կտոր,
Օր հեղավ խաղար փշուր, ըսին.
— Ա՛յ հա՛յ, մենք էսթավուր բան չտեսեր ինք, գնա՛։
Թագավորի ծառաներ վախեցան, փախան էկան։
— Տո՛ մենք էդ թավուր մարդ ըսկի չտեսերինք։

— Դացեք—ըսեց թագավոր,—կանչեք թըխգա։
Դացին կանչին, էկավ ներկայացավ թագավորին,
Թամանդար հելավ, ձեռ կաբեց կայնավ.
— Հա՛,—ըսեց,—անունդ ի՞նչ ա։
Ըսեց.—Փոքր Մհեր։
— Հընչի՞ ես էկե։
— Էկեր եմ՝ քո աղչիկ տանեմ։
— Իմ աղչկան շարթ կա, եփ օր կատարեցիր, տար.
Մե հատ ընձի հարամի կա՝ ղաչաղ սարն ա,
Գնա կովի, մեկ էս ա.
Մեկ էլ նեղով պտի գանես, մե կլոր օղ կա,
Օր գանես՝ օղով նետն հընցի, կիտամ աղչիկը.
— Լավ,—ըսեց։
Ձաղր գանին, էդի քնավ։
Աղչիկն էկավ տեսավ՝ ի՞նչ հսկա յա,
Ձաղրը էդոր չոքերուց ա, օտեր մացե դուս։
Աղչիկ մե խատ էլ չաղր գանեց։
Առավոտ հելավ սարի գլոխ, դու մի ասա՝ աղչիկն ա էդ ղաչախ։
Խերն ըսեր էր,—Օր ղաչախ փախի, չընդիս հետև։
Հելավ սարն, էկան խասան հիրար, կովան,
Տեսավ՝ չի կռնա, փախավ։
Մհեր դարձավ էկավ, նետն էլ գանեց օղն՝ հընցավ։
Խերն ըսեց.—Շառքն կատարեցիր։
Աղչիկն առավ, էկավ։
Մհերն էկավ բնակռավ էդտեղ,
Սկսեց պատերազմել, կռվել,
Էդոր հաղթող չկա։

ՄՀԵՐԸ ԳՅՈՒՄ Է ԿՌԻՎ, ՆԵՇՈՒՆ ԳՈՀԱՐԸ ՄԱՀԱՆՈՒՄ Է. ԳՈՀԱՐԻ ԿՏԱԿՈՎ ՄՀԵՐԸ ՆՐԱՆ ԹԱՂՈՒՄ Է ՍԱՍՈՒՆՈՒՄ, ԻՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ

Մե օր էլ ըսեց.—Գոհար ես կնթամ կռիվ։
Էսա գուռդն դնեմ դռան հառէչ, չնթամ։
Էդ գուռդն օր իդա տեղ հեղի,
Ոչ մի մարդ չիշխնա դա։
Գնաց կռվավ, հաղթեց,
Վերջ էդոր բռնին, թալին խոր, արջղին,
Հելավ, թռավ խորից, էկավ։
Էն ժամանակ էկավ, օր Գոհար մեռեր ա,
Թուղթմ՝ գրե, գրե դոշին ու մեռեր ա, թե.
«Մհեր, ես ինչքան մացի՝ քու սիրուց մեռա,
Ընձի կտանես կխորես Սասուն՝ քո մոր մոտ»։
Վերցնեց տարավ, խորեց ուր մոր մոտ։

ՄՀԵՐԻ ՈՂՔԸ ԾՆՈՂՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ, ԾՆՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՎ ՄՀԵՐԸ ՓԱԿՎՈՒՄ Է ԱԳՌԱՎԱՋԱՐՈՒՄ

Վերցնեց տարավ, խորեց ուր մոր մոտ,
— Հե՛յ, մայրի՛կ, հե՛յ հայրի՛կ, հելե՛ք,—ըսեց.
— Ձեր անդեր մինակ որդին եմ, եկեր եմ,
Ընձի տուն չկա, տեղ չկա,
Ես մենակ, անտեր եմ.
Հե՛յ, մայրի՛կ, հե՛յ, հայրի՛կ, ձեր գլոխ բանցրացրեք,
Մկա տեսեք՝ ինչ օրի եմ ես։
Խող լե տայաղ չտա։
Ըսին.—Ի՞մալ էնենք, փտեր ենք,
Օձն ու կարիճն ա մեր վրեն,
Ի՞նչ էնենք մենք,
Գնա՛ Ակռվա սար, մտի՛ Ակռվա սար։
Գնաց, ձիու խետ մտավ Ակռվա հէրի մեջ։
Ուրըրթե-ուրբաթ էդտեղուց ջուր ա կթափի.
Էդի Մհերն ա կըմխկտա։
Աստված խասի Մհերին։

## 4(4). ՍԱՍՆԱ ԾՌԵՐ

### Ա
### ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

ԳԱԳԻԿ ԹԱԳԱՎՈՐԸ ԻՐ ԱՂՋԿԱՆ ԿՆՈՒԹՅԱՆ Է ՏԱԼԻՍ ՄՍՐԱ ՇԱՀԻՆ

Հառաջ ժամանակով եղեր ա հայկական Գագիկ թագավորը։
Գագիկ թագավորը ուներ մի աղջիկ.
Շայը կուզեր դրա աղջկան։
Մի նամակ գրեց, ուվեց սուրանտակին,
Օղորկեց Գագիկի մոտ։
Սա օր էդ նամակ բացեց, կարթուցավ,
Մտածեց.—Ի՞նչ անեմ,
Ամբողջ երդիրը տամ մի աղջկա՝ չըլնի,
Բա՛ իմ հայություն ո՞նց տամ պարսիկի։
Ըստիպված մտածեց, թե՝ բռնենք թե էս աղջիկ չծնվեն,
Ի՞նչ անեմ, երդիր խո՛ չեմ ծախի։
Էս մարդն ուր աղջիկն վերցնեց, ուվեց Մսրա շահին։
Աղջկան տանելու ժամանակն էր.
Էկան, աղջկան տարան, դրին ճանապարհ։
Ճանապարհին օր հոգնեցին, ժողովուրդը նստան, հանգստացան,
Կերան, խմին, պառկան քնան։
Իսկ աղջիկը մտածում էր,
Թե հինքն հայ ա՝ գնում ա Մըսր.
— Էս իմ հայրենիքի ծովն ա,
Սպասի, գնամ ծովից մի քիչ ջուր խմեմ,
Ո՞վ ա հիմանում, սաղ մնամ, թե՞ մեռնիմ։
Աղջիկն հելավ գնաց, մտավ ծովն օր ջուր խմեր,
Ծովն աղջկա աչքին ցամքավ.
Մի հերգան քար դուս էկավ ծովու միջից,
Ու դրա միջից հաղբուր քցեց։
Կռացավ մի բուռ լիք, մի բուռ կիսատ խմեց,
Ու հելան գնացին։

Գացին, օրերից մեկ օր հասան Մսըր,
Աղջկան տարան, հանձնեցին Մսրա շային։
Հիրիկուն էդ Մսրա շայ գնաց աղջկա մոտ,
Իսկ աղջիկն ասել էր. «Մերը հայկական կրոն ա,
Դու պտի հարմարվես խոտ ինձ,
Աղջիկ օր ամուսնանա, քառասուն օր ամուսին չպտի մոտենա,
Իմ քառասուն օր քըխ լրանա, էն լև քու դործն ա։
Ըսեց.—Քառասուն օր քե փեշքեշ հեղի, Գագիկի աղջի՛կ։
Ղուրբան հեղի քեղի։
Քառասուն օր որ լրացավ,
Էս աղջիկ նայեց, օր հինքն էրկու խոքի ա։
Բերնե-բերան հաղար բերան՝
Ձեն էկավ խասավ շայի հանդաջ։

ՇԱՀԸ ՀՐԱՄԱՑՈՒՄ Է ՍՊԱՆԵԼ ԳԱԳԻԿ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՂՋԿԱՆ

Շայը կանչեց դայիջին.
— Կէթա՛ք, Գագիկի աղջկա վիղ կթուցուցեք,
Ես խաբար չեմ, հինք քառասունք ա պախե, էդ ո՞րտեղից ա։
Դայիջն էկավ, ըսեց.—Թագուհի՛, արի՛,
Շայն օղորկեր ա, որ քո գլոխ կդրենք։
Ըսեց.—Շա՛տ լավ ա էրե.
Կգնաք, շային կսեք, օր նա մենակ ինձ չի սպանում
Էս էրեխին էլ ա սպանում.
Թող խնայի է՛ս էրեխին,
Թըխ ծնվի, էրեխեն թըխ վերցու, իմ վիղ լև թըխ դանա։
Էս մարդը գնաց, շային ըսեց։
Շայն ըսեց.—Լա՛վ, թըխ էդպես հըլի։

ՍԱՆԱՍԱՐԻ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ՓԱՆՈՒՍՏԸ ՄՍԸՐՈՒՅ. ՆՐԱՆՔ ՁԱՆԱՊԱՐՀԻՆ ԶՈՒՔ ՆՆ ԲԵՐՈՒՄ ՔՈՒՐԴԵ ՋԱԼԱԼԻՆ, ՋԵՆՔ ԵՎ ՋՐԱՀ

Էս կին պառկավ, էրկու տղա բերեց.
Մեկի անուն դրեց Սանասար, մեկին Բաղդասար։

Եփոր շայն լսեց, դայիջին ըսեց.
'—' Գնա՛, վիզ կտրա, Քըխ երեխեք մնան։
Դայիջն գնաց, կին ըսեց.—Ըսոնք ի՞մալ կմեծնան,
Քըխ քողա՝ էս էրեխեքին մեծացում, նրանից եղո
Քըխ կդրա։
Դայիջ գնաց, ըսեց։
Շայն ըսեց.—Տաս տարի հիրան ժամանակ։
Տաս տարին լրացավ, էրեխեքը դառան տաս
տարեկան։
Էրեխեքին խանեց, դրգեց,
Պաշար տվեց տղեքներուն, ճանապարհ դցեց։
Էրեխեք գացին, ճամփին խոքնան, քնան։
Սանասարն էրազ տեսավ.
Մի հրեշտակ երկնքով իջավ, ըսեց.—մի ձի կա։
Հելավ տեսավ օր՝ հավուղ էկավ հառաջ.
Մեկն՝ խմելու, մեկն՝ լողկնալու։
Հա՞մ լողկցավ, հա՞մ էլ ջուրն խմեց,
Տեսավ մե խատ խրեղեն ձի՝
Քուռակն Ջալալե անունով կայնուկ էր ըդտեղ,
Հազուստ վրեն, Թուրը կեծակին, Օսկե Գոտին,
Մարուքա խաչը աջ բաղուկին։
Տղեն լողարանից դուս էկավ,
Խմեց էն ջուրն ու խաբավ էս ղէյաստ,
Հեծավ ձին, հինք դարձավ մե խատ հսկա։
Մենք դառնանք Բաղդասարին, օր մնաց քնուկ։
Բաղդասարն օր քնած տեղից հելավ,
Էրեխա տղա յա, ըսեց,—Վա՛յ, իմ ախպեր կորավ,
Ես ի՞նչ էնեմ, աստվա՛ծ։
Տեսավ օր էդ ձին ծովուց էկավ, էդ հսկա մարդ
վրեն։
Էս տղեն վախեցավ, փախավ,
Մտածեց Քե «Իմ ախպերն էլ էսի ա տարեծ»։
Օր փախավ, Սանասար ձեն տվեց.
— Բաղդասա՛ր, մի՛ փախի, ե՛ս եմ։
Ձենուց ախպոր ճանչցավ.
Օր ճանչցավ, կայնավ տղեն, ախպերն էկավ
խասավ։
Ըսեց.—Քո տունը սուբվի, դու էս ի՞նչ էր հեղար։
Ըսեց.—Աստվածծ էսպես տվեց, արի՛ գնանք։

ՍԱՆԱՍԱՐՆ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐԸ ԳՆՈՒՄ ԵՆ ԳԱԳԻԿ
ԹԱԳԱՎՈՐԻ ՔԱՂԱՔԸ, ԹԱԳԱՎՈՐԻ ՄՈՏ ԵԱՌԱՑՈՒՄ։
ՍԱՆԱՍԱՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Հելան խեծան ձին, գացին։
Գացին, գացին, խասան մինչև Գագիկ թագավորի
քաղաքն։
Օր խասան, էս Երկու տղի մերը խրադեր էր,
Գացին թագավորի մոտ.—Թագավորն ապրած
կենա,
Մենք անտեր-անտիրական էրեխա ենք,
Թույլ տուր մեզի՝ քո քաղաքի մեջ աղքատություն
էննենք, ապրենք։
— Բալե՛ք ջան, ընձի ձեր նման էրեխեք են պետք,
Էկեք իմ պալատ, աշխատեք իմ վրեն։
Բայց չհմիցավ որ հուր թոռներն ին,
Ոչ էլ էրեխեք հիմցան որ հուրանց պապն ա։
Էրեխեքից մեկը ծխախոտ կլցա կայլան,
Մեկն էլ կրակ կվառա, օր Գագիկ թագավոր ծխա։
Էսպես մե քանի ժամանակ աշխատեցին Գագիկ
թագավորի ձեռի վրեն։
Որ հասունացան, ցանկացան ամուսնանալ։
Սանասարը Բաղդասարին օղորկեց թագավորի
մոտը։
Բաղդասարն ըսեց.—Թագավորն ապրած կենա,
Սանասարն կուզա ամուսնանա։
Թագավորն ըսեց.—Իմ աչքի՛ վրեն, կամուսնացում։
Սանասարին կարգեց։
Եդո էս մարդիկն թագավորին խնդրեցին Քե.
— Թագավորն ապրած կենա,
Արդեն մենք մեծացեր ենք, մարդ ենք դարձե,
Թույլ տուր՝ պատռենք, տեսնենք՝ որտեղ
դուրական ա,
Բնակություն հաստատենք, ապրենք.
Բայց քո հպատակն ենք, դու մեր թագավորն ես։
— Իմ աչքի վրեն, ո՛րտեղ կհավնենք, բնակարան
հաստատեք։

ՍԱՆԱՍԱՐՆ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ԲԱՐԱԿ ԱՌՎԻ
ԱԿՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՈՒՄ ԵՆ ՍԱՍՈՒՆԸ

Հելան ման էկան,
Էկան մեկ տեղ, տեսան, օր գետ ա կէրթա,
Էկան, էս գետու ափին հանգստացան, քնան;
Հելան տեսան օր՝ վերևից մի բարակ հառու յա
գիքա,
Կմտի էս գեղան մեջ,
Դեղան հսկայական ջուրն կկտրա մեջտեղից,
Կհնցի էս կողմի փուլը,
Էդ փլի խետն նոր էսպես կհնդի էդ ջուրն, կերթա։
Էս տղեքը խելոք տղա են, ինչքան չըլի
թագավորի ցեղ ին,
Մտածեցին, օր էս ջուրն էս հսկայական գետից
ուժեղ ա.
Արի տեսնանք, էս ջրու ըղգիրքն որդեղուց կռնանք
գտինք։
Էս բարակ հառուն բռնին էս էրկու ախպեր
Ու բանցրացան գնացին.
Տեսան օր մե լեռան տակից
Էդ բարակ ջուրն, քարերու միջից դուս ա գիքա։
Իսկ լեռան տակը շատ դուրան, մեծ բախչա տեղ ա,
Կանաչ, լավ չայիր-չիման տեղ ա։
Հավանություն տվին, էկան թագավորին պատմին։
Թագավորն ուրախացավ, ըսեց.—Գացե՛ք։
Վերցեցին գացին էդ էրկու ախպեր.
Ինչքան օր մեծ լեռ ու քար կա,
Գլորեն, կբերեն դնան պատի վրեն։
Շարին, պրծան, տունը սարքին,

Եդո մտածեցին, թե հիրանց տան ի՞նչ անուն դնան։

Ինչքան մարդ հանդիպան՝ կանչեցին,
Մեկն էլ չկարաց էդ տան անուն դներ։
Ըսեց.—Գնանք քաղաքն, մե ծեր մարդ բերենք։
Հելան գացին քաղաքն, մեծ ծերունի բերին,
էս ծերունին էկավ, օր թախմներ տեսավ, ըսեց.
— Ա՛յ հա՛յ, էս ի՞նչ մեչք ու բլաղուկ ա հեղե,
Օր էս քարերը բերե, հիրար վրա յա դրե։
Ես մեծ մարդ եմ. ձիով ա, թե շալակներով ա,
Ընձի էդոր շուրջն ման տվեք, տեսնամ, որ անուն դնամ։

Սանասար էդ մարդուն վերցուց,
Դրեց հուր ուսի վրեն ու սկսեց պտոտել։
Պտոտեց, պրծավ, ծերունին ըսեց.
— Ա՛յ հա՛յ, ա՛յ, Սասուն ա, էս ի՞նչ աւ
— Պաբի՛ ջան—ըսեց.—անուն դրիր, պրծար, թըխ մնա Սասուն։

Ու դրին Սասուն։
Բաղդասարն էլ հելավ կառավարիչ, քաղաք դարձավ։

## ՍԱՆԱՍԱՐԻ ՋԱՎԱԿՆԵՐԸ

Սանասարին հելավ վեց տղա.
Մեծ տղին անուն Մհեր էր, ցռան Վեզո,
էն մեկին՝ Փոքրիկ ձնճղիկ էր, Զենով Օհան էր,
Ու էս մարդ վախկոտ ճժուն ըսեց.—
— էսի մեր ցեղից չի, ցռան է։
Իսկ փոքր տղան քաջ, առյուծ տղա էր, Մհերն էր,
Մհերին ժառանգություն չեղավ։
Երկար ժամանակ նա կառավարեց Սասուն։
Ինքն ու իր կինը աղաղակում էին աստծուն,
Որ մե ժառանգ տա. Թըխ հեղի, թըխ աղչիկ հեղի։
Մեկ օր Մհեր երազ տեսավ, հրեշտակ ըսեց.
— էն ժամանակ, որ քեզ ժառանգ հեղի,
Դու էլ կմեռնես, քու կինն էլ։
Ըսեց.—Թըխ ես հետնամունա ունենամ,
Մախը մերն ա, մենք էլ մախին արժան։
Եվ որ ժամանակը լրացավ, բերեց մե տղա,
Անուն դրին Դավիթ։
Հիրանք մահացան, Դավիթ մնաց որբ։

## Ը
## Դ Ա Վ Ի Թ

### ԴԱՎԹԻՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՆ ՄՍԵՐ ՊԱՀԵԼՈՒ. ԴԱՎԹԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՁԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դավիթ օր մնաց որբ,
(Քեռի Թորոսն էկեր էր էստեղ բնակչություն էր հաստատե),
Ըստեղ Թորոսն ու Զենով Հովան մտածեցին.
— Մեր էրեխին խո՞ չենք թողնի մեռնի, օր մեր տոհմ հանգի։

Մեր էրեխեն տանենք Մսըր,
Տանք Մսրու շայի կինը պախա։
Մսըր շայի կինը հայ ա, հինք էլ հայ ա,
Որովհետև էնի Մհերի խետ կապ ունեցեր ա,
Սիրել են, աբրել են իրար խետ.
(Իսկ Մսրա Մելիքն էլ Դավթին ախպեր ա գիքա),
Մհերի խաթրին՝ կարող ա Մսրա շայի կնիկն պախա Դավթին,
Մինչև ծծից կտրա, կէթանք, մեր էրեխեն կբերենք։
Որոշեցին, վերցուցին էն նոր ծնված փաջուշը ու գնացին Մսըր.

Հանդիպան էս կնոջ, շատ խնդրեցին։
Կինը օր սրանց տեսավ, ընդառաջեց,
Լացին, խնդրեցին էս կնոջը,
Օր Մհերի խաթրին պտի պախես էս էրեխեն, որը ա։
Էս կինն էլ շատ լաց, մռմռաց, ըսեց.
— Թևկուզ իմ վիզ շայ կտրա, ես կպախեմ։
Էրեխին պախեց, մինչև հեղավ իրեք տարեկան։
Զենով Հովան ու քեռի Թորոսն ամեն ժամանակ կէ-թին,
Էրեխին կտեսնին, կդառնին գիքին։
Էրեխեն իրեք տարեկան հասակում
Ինչքան հարևանի էրեխա կա,
Պալատականի ա, ոզրի ա, ոքիլի ա,
Էսոնց թևերն ա կջարդա, ոտերն ա կջարդա։
Ինչ առեք-թառեք ըսես օր՝ ըսոնց գլոխ չկանա։
Հըմեն օր բողոք, հըմեն օր ...
Շայն կնգան ղանչեց.
— Էս շան լակոտն որտեղից էս բերե, փայտա արե էս տեղանքը.
Ինչքան օր իմ ժողովրդին էրեխա կա՝ բոլորին ինվալիտացուցեր ա.
Ես էդոր գլոխ պտի կտրեմ հէսօր։
— Ա՛յ մարդ,—ըսեց,—էս էրեխա յա, չխասկնա։
— Դե՛ որ չխասկնա, ես մի հարց կտամ քո հառեջ.

Սինին կլննամ օսկին, կդնամ էս տեղ,
Բաղմուց կրակն էլ կդնեմ էս տեղ.
Եթե էնի օսկին վերցնես, ուրեմն հասկանում ա,
Անպայման քու հաշկի հառեջ ես նրա գլոխ կկտրեմ, դու մռմռաս.
Եթե կրակն վերցնես,
Ուրեմն էրեխա յա, չխասկնա, կներեմ։

### ՄՍԵՐԱ ՇԱՀԸ ԴԱՎԹԻՆ ՓՈՐՁՈՒՄ Է ԿՐԱԿՈՎ ԵՎ ՈՍԿՈՎ

Էդ ժամանակին կնիկ գնաց,
Լացով էրեխին գրկեց, առավ էկավ.
Տեսավ, օր թագավոր սինիքն պատրաստ դրեր ա,

Մեկն բաղմուց կրակն, մեկն էլ օսկին։
Ձեռ քցեց մորուք ըսեց.
— Մորուքս վկա, ինձ օր վառնդ գա՝ էս էրեխուց կիգա։

Բերին դրին մեջտեղ։
Էրեխեն գուգա էթա՝ օսկին վերցու,
Բայց աստծու կարող ղորութենով,
Հրեշտակն գնաց, էրեխու ձեռ շիտկեց,
Տարավ, դրեց կրակի վրեն,
Կրակն օր վառեց մատն, էրեխեն տարավ բերան՝
Լեղուն էլ վառվավ, էրեխեն լացեց.
Էրեխեն թլատ էր խոսում։
Անուն դրին Թլատ Դավիթ։
Նոր ըսեց օր էրեխեն չխասկնա։
Եփ օր էրեխեն դարձավ տաս տարվան,
Էս անդամ շատ վնասներ ա կիտա։
Շայն կանչեց, ըսեց.
— Էդ շան լակոտին օղորկա, Քրխ էթա,
Թե չէ՝ դրա վիզը կթռցում։
Էս կնիկն մի նամակ գրեց Զենով Հովանին ու Քեռի Թորոսին,
Երբ օր սրանք հիմացան,
Իսկույն գացին, Դավթին առան էկան։

## ԴԱՎԻԹԸ ՍԱՍՆԱ ԳԱՌՆԱՐԱԾ

Դավիթ էկե Սասուն, բոլոր էրեխեքին նեղութուն ա կիտա։
Քեռի Թորոսն ըսեց.—Սպասի, ես սրան գեղից կտրեմ,
Քրխ գնա դաշտ՝ գառնարած։
Գնաց, գառներն հավաքեց, տվեց Դավթի հառեջ։
Կէթա, գառներ կպախա.
Ուրին էլ բոստաններ պլեճ կէնա,
Գյաղար կհավաքա, պատրոնտաշի նման կշարա ուր գոտին։
Հիրկուն ինչքան աղվես, նապաստակ, կենդանի կա, կհավաքա,
Կխառնա գառներուն, կբերա, կլցա գեղի մեջ, կբռնա.
— Ման որ մեկ ա, տաս եմ բերե,
Ման որ տաս ա, քսան եմ բերե։
Հինքն էլ կթողա կէրթա։
Քեռի Թորոսն ըսեց.—Էսպես չհեղի, Դավի՛թ ջան,
Դու էլ էրեխա չես, օր գառներ կպախես,
Արի գնա՛. նախիր պախա։

## ԴԱՎԻԹԸ ՆԱԽԻՐԴ

Գնաց նախիր.
Էդ օրն էլ ինչքան արջ կա, գել կա, գաղան կա,
Կբերա, կլցա գեղու մեջ։
Քեռի Թորոսն դրան տվեր էր պողբաթից կոշիկ պատրաստել,
Ձեռի փետն էլ՝ էլի պողբաթից։
Հիրիկուն էկավ Դավիթը, գոռաց.
—Հե՛յ նախրի տեր, էկեք ձեր անասուններ տարեք։
Ջանավարներ Դավթի սարսափից,
Քանի էնի կայնուկ էր, չին շարժվում,
Համ օդ քաշեց, փախան, լցվան գեղ։
Քեռի Թորոսն ըսեց.—Զենով Հովա՛ն, էսպես չհեղի,
Արի՛, սրան որսորդ էննք,
Թրխ էրթա ջանավարներ որսա, մինչև խելախաս դառնա։

## ԴԱՎԻԹԸ ՈՐՍՈՐԴ։ ԱՐՏԱՏԵՐ ԵՎ ՋՐԿԻՐ ՊԱՌԱՎՆԵՐԸ

Ըսեց.—Դավիթ ջան, մի նետ աղեղ կիտամ քե,
Գնա՛, որսորդութուն էրա։
Տվեց Դավթի ձեռ։
Մտավ մի պառվու արտի մեջ, օր կորեկ ա ցանե,
Մտե մեջն լոր ու ճնջուղ ա որսում։
Պառավն էլ տեսավ, ըսեց.
— Արևդ մեռնի, կյանքդ մեռնի,
Դու չա՞մչնաս, աշխարք քո խոր ապրուստն ա կսա,
Դու էկեր ես՝ լոր ու ճնջուղ կորսաս։
Հանեց, մի օսկի տվեց։
Գնաց, տեսավ օր մի պառավ՝
Կուժն թևի վրեն, ջուր ա լցե, կտանի,
Հետևանց նետ-անեղով զանեց, կոտրեց.
Պառավն թրջվավ, հինքն կայնավ, պառվու վրա ծծղաց։
— Քու կյանքն մեռնի, ափսոս չէր Մհերն,
Բա Մհերից էսպես էրեխեն հելի՞.
Մհեր աշխար էր կկառավարեր, էս իմ վրեն կծծղա...
Հենա Մսրա երկրից եկած ա, քո խոր օսկին կտանին,
Դու էտեղ մեր վրեն ա կծծղաս։
Էնա կոդեր ղրած, կշափեն ու կտանեն։
Ալադին ու Կողբադին, Սուդին ու Ջարխատին էկած տանելու,
Ցոթ տարվա խարջ կուզեն։
Ճամփին էլ հարս ու աղջկան ըսին.

Գնում ենք Սասուն ու զանք,
Կնանիք բերենք քառասուն,
Նշներ բերենք Մուշանու,
Կովեր բերենք խարիր,
Գարնան էննենք եղ ու չորթան։

## ԴԱՎԻԹԸ ՊԱՏՈՒՀԱՍՈՒՄ Է ՄՄԲԱ ՀԱՐԿԱՀԱՆՆԵՐԻՆ։ ՆՐԱՆՑ ՓԱԽՈՒՍՏԸ ԵՎ ՄՄԲԱ ԿԱՆԱՆՑ ԵԱՂԸ

Եփ օր էկան Սասուն, օսկիներն կշափեն,
Դավիթ խասավ էդ վախտ, ըսեց.

— Իմ խոր օսկին ա, տվեք, ես չափեմ։
Ըսին.—Արի՛։
Տեսավ որ ընդոնք գլոխ-գլոխ ա կշափեն,
Իսկ ինք կիսատ ա կշափա։
Ըսին.—Զենով Հովա՛ն, քե խարջն կիտաք՝
մարդավարի տվեք,
եթե չիտաք, էս լակոտն ի՞նչ ա էկել, մեջտեղ
հընգա։
Դավիթ կոտն վերցնելն ու վը՛ր ըդոնց գլխու հիճելը
մեկ էրավ.

Գլոխներն ջարդեց,
Ատամներ հուրանց քաշեց ու շարեց օսկու պես
ճակտին։
Ըսեց.—Դը՛ գացեք, մեր երդիր էլ օդ չդնաք.
Իմ հոր օսկին ի՞նչ գործ ունի ձեր հարկ,
Դո՛ւ պտի հարկատու հելիք ընձի։
Էս մարդիկ դուս էկան,
Գացին, խասան էն դաշտը, օր հարս ու աղջիկ էին.
Ըսին.—Սուդին, Զարխադին, Ալաղին ու
Կողբադին,
Ձէ՞ դու ասում իք գնանք Սասուն,
Կնանիք բերենք քառասուն-քառասուն,
Ուղտաբարձ կնանիք կբերե՞նք.
Բա հո՞ւր ա, ճանչերն ա ձեր բերան կտզվըզան։
Ըսին.—Դու չեք տեսե Սասնա ծռեր,
Նետեր ունեն մեկ-մեկ գերան։
Հնցան գնացին, Մսրա Մելիքին պատմեցին
Սասնա ծռերի պատմություն։

## ՄՍՐԱ ՄԵԼԻՔԸ ՋՈՐՔ Է ՀԱՎԱՔՈՒՄ ՆՎ ՊԱՇԱՐՈՒՄ ՍԱՍՈՒՆԸ

Սասմա դաշտի վրեն Մելիքն դուս էկավ
պատերազմի,
Սպիտակ ալևոր, թուխ մորուքավոր, ջահել
երիտասարդ՝
Բոլոր հավաքեց, տարավ։
Էկավ, Սասմա Մսրութա սարն շրջապատեց ու
նստավ.
Վանքն էլ դրա գլոխն ա։
Իսկ Զենով Հովան էն տեղ էրաղ տեսավ, ըսեց
օր,
— Մեր Դավիթը մեկ տեսա ծովու մեջ կլողկներ,
Մեկ էլ տեսա՝ կորավ։

## ԴԱՎԻԹԸ ՋՐԿԻՐ ՊԱՌԱՎի ՆՈՐՀՐԴՈՎ ԶԵՆՈՎ ՀՈՎՀԱՆԻՑ ՈՒ ՔԵՌԻ ԹՈՐՈՍԻՑ ԲՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՌՆՈՒՄ Է ՀՈՐ ԶԻՆ, ԶԵՆՔ ՈՒ ԶՐԱՀԸ

Մեկ էլ խաբարն էկավ՝
Թե Մսրա Մելիքը Սասուն շրջապատեր ա։
Էս պառավն, օր կուժ կոտրեր էր, ըսել էր Դավթին.
— Դավի՛թ, հերդ երկիր էր կկառավարեր,
Դու բանի նման դուս չէկար.
Մսրա Մելիքն էկե շրջապատե,
Վրան զանե, Մսրութա սարն ա բռնե,
Կուզա, մեր երգիրն կործանա,
Բա՛ դու Մհերի տղեն չե՞ս։
Դավիթն ըսեց.—Բա՛ ես ի՞նչ անեմ, ինչո՞վ
գնամ պատերազմ։
Ըսեց.—Քո խոր ձին խնծի,
Թուր Կնծակին վերցու,
Օսկե Գոտին, Մսրութա խաչն աչ բազկին.
Կվերցես ու կերթաս պատերազմ։
Էն խաչն քո աչ բազուկին ա, դու գ'աղթես Մելիքին։
Ըսեց.—Էդոնք որտե՞ղն ա։
Ըսեց.—Քեռի Թորոսի ու Զենով Հովանի մոտն ա,
Թե խեճար՝ երկիր կտիրես,
Թե չէ՝ էն մարդ քե կհաղթա, մեզ էլ կջնջա։
Դավիթ նետ ու աղեղ քցեց ու վազավ տուն։
— Քեռի Թորո՛ս,—ըսեց,—Զենով Հովա՛ն, հո՛ւր
ա իմ խոր ձին,
Քուռկե Ջալալին,
Թուր Կնծակին,
Օսկի Գոտի՛ն.
Հո՛ւր ա իմ խոր Մսրութա խաչն աչ բազկին։
Տվե՛ք ընձի, ես կերթամ պատերազմ։
— Բալա՛ ջան,—ըսեց.—էդ ո՞վ ա քեղի ըսե,
մեջըը կոտրվի։
Էրկսին էլ բերեց կպուց հիրար, ըսեց.
— Կսպանեմ ձեղի, քե չտաք ընձի։
Հելան վախից բերին տվին։
Խոր շորեր խաքավ, Թուրը կապեց, ձին էլ խնծավ,
Խաչն էլ աչ բազուկին ու գնաց։

## ԶԵՆՈՎ ՀՈՎՀԱՆԻ ԱՓՍՈՍԱՆՔԸ

Զենով Հովանն ըսեց.
— Ափսո՛ս մեր Քուռկիկ Ջալալին,
Հաղա՛ր ափսոս Թուր Կնծակին,
Հազա՛ր ափսոս մեր Օսկե Գոտին,
Հազա՛ր ափսոս Խաչը վըր բազկին։
Դավիթ օր լսեց, ջղայնացավ,
Եղ դարձավ օր Զենով Հովանի վիզ Թոցու։
Զենով Հովան օր տեսավ Դավիթ դարձավ,
Հուր վիզ պտի Թոցու, ըսեց.
— Ափսո՛ս, իմ նոր հելած Դավիթ գնաց իմ ձեռաց։

## ԴԱՎԻԹԸ ԱՂՈԹՈՒՄ Է ՄԱՐՈՒԹԱ ՎԱՆՔՈՒՄ ՆՎ ՀԱՐՁԱԿՎՈՒՄ ՄՍՐԱ ՋՈՐՔԻ ՎՐԱ

Տղեն օր լսեց, նորից հետ դառավ,
Գնաց Մսրութա վանքն մտավ,
Համփուրեց, ծունր դրեց, աղոթք արեց, ըսեց.
— Է՛յ սուրբ Մսրութա վանք, օգնի՛ր ընձի,
Փրկեմ Սասուն հայրենիք։

Ու քշեց Մսրա ղորքի վրեն.
Էդ ղորքը իրեք օր կոտորեց։

## ԱԼԵՎՈՐԻ ԽՐԱՏԸ

Իրեք օրից հետո մի հալիվոր դուս էկավ Դավթի հառնչ, ըսեց.
— Դավի՛թ ջան, մեռիմ քեղի,
Մենք ի՞նչ ենք էրել, օր դու մեզի կկոտորես,
Քու թշնամին Մելիքն ա։
Ըսեց.— Թըխ Մելիքը գա, կռվի։
— Դավի՛թ ջան.— ըսեց,— էն կապուտ վրան օր կա,
Միշից էլ ծուխ ա դուրս կիգա,
Էնի Մելիքի վրան ա։
Էնի օխտ օր պտի քնի,
Իրենք օր քնել ա, չորս օր էլ պտի քնի։
— Քնել-մնել չգիտեմ, թըխ դուս գա, կռվենք։

## ՄՍՐԱ ՄԵԼԻՔԸ ԴԱՎԹԻՆ ԱԶԱՐՈՒՄ, ԳՑՈՒՄ Է ՀՈՐԻ ՄԵՋ

Ձին քշեց, թուր քաշեց, կայնավ Մելիքի գլխուն, գոռաց.
— Վե՛ր կաց, կռվենք։
Էս մարդու առաջնորդներ ուռի պես կդողան.
Գնացին, սրեր տաքցուցին,
Բերին դրին Մհերի կրնկան, օր ղարթի,
Գացին, մե գութանի խոփ տաքցուցին,
Դրին Մելիքի մեջքի վրեն.
— Օ՛ֆ, շոգ ա, անտեր մոծակներ չընթողին՝ քնիմ։
Աչքերն թա՛փ բացեց,
Տեսավ օր Դավիթ գլխու վրեն կայնուկ ա։
Դավիթն ըսեց.— Հելի՛ կռվենք։
— Վա՛յ,— ըսեց,— արի՛ ուտենք, խմենք,
Հանգստանանք,
Հելնինք կռվենք։
Բայց քեռի Թողոսը տղին ըսել էր, թե՝
— Էնի մուխանաթ մարդ ա, գյաղնոց խոր կփորա,
Ըզգուշ մ'ացի, քե խոր չթալա։
Դավիթ մոռցեր էր, էրեխա տղա...
Էկան նստան, ըսեց. —Նստի էսա խալու վրեն։
Նստավ վըր խալուն՝
Ու տղեն դմդմբալով հիշավ խոր։
Որ հիշավ խորն, ըսեց.
— Է՛յ նամարդ, էս ի՞նչ քո աղնվություն։
Հնգնելիս՝ թուրն ձեռից հնգավ գետին,
Քուռկե Ջալալին թուրն առավ, փախավ։
Ամբողջ ղորքը ձիուն շրջապատին, որ բռնեն,
Քուռկե Ջալալին՝ որը չուֆթով ա կսպանա, որը՝ քրով ա.
Կփախի կէրթա մեկ սարի գլոխ,
Թուր կդնա մե խատ քարի վրա,
Ինք քրի բոլոր կֆռա ու կարածա։

Եփ օր ղորքն կմոտենա հուրին, թուր կառնի, կըբրդա
Ու կհնցի հուրիշ սարին։

## ՔՆՈՒ ԹՈՐՈՍԻ ԵՐԱԶԸ ԵՎ ԴԻՄՈՒՄԸ ՋԵՆՈՎ ՀՈՎԱՆԻՆ

Էս դիշեր եփ օր Դավիթ խորն հնգավ,
Քեռի Թորոս նորից էրազ տեսավ.
Դավիթ ծովու մեջ կլողկներ,
Մեկ էլ տեսավ օր ծովու կրաղին խոր բացվավ,
Դավիթ հնգավ փոս։
Դավիթ օր հընգավ փոս,
Հինք խրտավ զարթավ, կնգան պատմեց.
— Է՛,— ըսեց,— քո խմար կքնես, խլղին էրազ կտենաս.
Ջայնամ հընգավ, Դավիթ, Դավիթ...
Ակի հըլեր, տեսնինք հընգեր, մեր խոքին աղատեր.
Դրա համար մտածո՞մ ես։
Էս մարդն պառկավ, քնավ, էլի նույն էրազ տեսավ.
Հելավ, էլի կնգան պատմեց։
Կնիկ էլի նախատեց։
Երրորդ անգամին հելավ,
Կնիկ սկսեց էլի կռվել.
Անգամ չէրեց, հելավ խեծավ ուր ձին,
Քշեց, գնաց Ջենով Հովանի տուն։
Ըսեց.— Հելի՛, քու տունը չքանդվի,
Կորավ մեր նորելուկ Դավիթ։
Գիշերն էր, հելան խեծան,
Գյոմշու կաշի վերցուցին խետ ուրանց ու գացին։
Գացին խասան Մարութա սարի գլոխ, կայնան էդ տեղ։
Լուս բարին բացվավ ձեր վրեն,
Բացվավ էս թշվառ էրեխի վրեն, օր խորն ա հնգե։

## ԴԱՎԻԹԸ ՋԵՆՈՎ ՀՈՎԱՆԻ ԿԱՆՁՈՎ ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ՀՈՐԻՑ

Ջենով Հովանն գոմշու կաշիքն փաթթեց հուրին,
Ուր մատները մտուց ուր հանգչներ օր չորաքեն
Ու սկսեց էդ տեղ մե նարեն քաշել,
Բոռաց.— Դավի՛թ, հե՛յ, հե՛յ,
Դավի՛թ, որտե՞ղն էս, դո՛ւս արի։
Էս ձեն գնաց, հընգավ Դավթի հանդաջ։
— Ջա՛ն,— ըսեց,— հորոխպե՛ր, էս տեղն եմ էկա՛, էկա՛։
Կանչեց Մարութա վանքն,
Սուրբ խաչն վըր ուր աջ բազկին
Ու ծակաց։
Օր ծակաց՝ խորու բերան ջաղցի քար կար դրած,
Գլուխն զարկեց քարին, քարն հընգավ մե յան,
Ինքն հելավ, կայնեց։
Օր հելավ կայնավ, ձեն տվեց, բոռաց.—
Քուռկե Ջալալի՛։

Քուռկե Ջալալին խասավ՝ թուր բերան, մուրադի նման։
Տղեն հելավ, կայնավ մեյդան։

### ԴԱՎԻԹ ԵՎ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ. ԴԱՎԻԹՆ ՍՊԱՆՈՒՄ Է ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻՆ

Մսրա Մելիքի չոքերն ուռի նման կդողեր,
Ըսեց.—Դավի՛թ ջան, ես միամիդ էի,
Ջիդեի օր խոր կար էդ տեղ։
Ու էս մարդն խեծավ ուր ձին ու ըսեց.
— Հելի՛ պատերազմենք։
— Դավի՛թ ջան,—ըսեց,—զոռո՞վ, թե հերթով։
Ըսեց.—Մեծը դու ես, քու քեֆն ա,
Ուզում ես ուժով, ուզում ես հերթով։
— Դավի՛թ ջան, հերթով;
— Դե՛ մեծն դու ես, հերթն քոնն ա։
Խեծավ ուր ձին, գնաց խասավ մինչև Մսըր,
Էնտեղից էկավ, դյուրդն զարկեց Դավթին։
Խրեղեն ձին թռցուց Դավթին,
Դավթի տեղ՝ թուզ ու դոման, արջա բուլան,
Դավիթ մըչ թուզուն կորավ։
Մելիքն ըսեց.—Փա՛ռք քե, աստվա՛ծ,
Ջի՞ ես պրծա էս գազանից։
Դավիթ ըսեց.—Մելի՛ք, կենդանի՛ եմ, մե՛կ էլ արի։
Ըսեց.—Էսի չեղավ, մոտիկ տեղից եմ էկե։
Քշեց, գնաց խասավ Դիարբաքիր,
էկավ, ուժեղ զանեց։
Էլի Դավիթ թռավ, իրեք ժամ չերևեր.
Դավիթ իրեք ժամից հետո էկավ, կայնավ։
Մելիքն ըսեց.—Հա՛յ, հա՛յ, կորա՛,
Ես մոտիկ տեղից եմ եկե, մեկ էլ էթամ։
Քշեց, գնաց խասավ Ղլաթ,
Քշեց, էկավ, էլի զարկեց,
Տեսավ օր՝ էլի կենդանի ա։
Ըսեց.—Ես կմտիմ էս խորու մեջ,
էս չաղչի քարն էլ պտի դրվի խորու բերան։
Մտավ խորը, քառասն զոմշու կաշի քաշեց վրեն։
Դավիթ էկավ, հելավ Մարութա սարի գլուխ,
Քշեց խրեղեն ձին, Թուր Կեծակին,
Գնաց խասավ խորու ափ,
Թուրն թալեց մըչ խորուն,
Քարն էլ կոտրվավ,
Զոմշու կաշիքն էլ կտրվան,
Մելիքն էլ մեջտեղից կես հեղավ։
Ըսեց.—Կենդանի՛ եմ։
Ըսեց.—Մե խատ քե թա՛փ տու։
Մելիքն օր թափ տվեց իրան,
Մելիքն էրկու կես հեղավ։
Բերին, Մսրա Մելիքի մարմին քաշին,
Տեսան օր հավասար ա կիսվեր։
Քեռի Թորոսն ու Զենով Հովանն ուրախացան,
Համբուրեցին հուրանց տղի հաշկերը։
Դավիթն ըսեց ղորքին,—Գացե՛ք ձեր երկիր,
Դու ձեր համար խաղաղ ապրեք,
Ջըլնեմ-չիմանամ, օր մեր խողի ու երկրի վրա աշկ ունենաք։

### ԴԱՎԻԹ ԵՎ ԽԱՆԴՈՒԹԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՀԸ

Դավիթ դարձավ ուր Սասուն,
Սուրհանդակ դռնից մտավ,
Մե խատ նամակ տվեց Դավթին։
Դավիթ խեծավ ուր ձին ու ըսեց.
— Ես պտի գնամ։
Գնաց, օրերուց մե օր խասավ Ղլաթ,
Ղլաթն լսեր էին, օր Դավիթը պտի գա.
Դավթի հառեջ կտրին,
Մե աղջիկ տվին խետն ու պտի օր մե ժառանգ թողի։
Աղջիկ հղիացավ։
Դավիթը գնաց Խանդութ խանումի մոտ,
Ամուսնացան, ունեցան մե տղա,
Անուն դրին Մհեր, ուր խոր անուն։
Օրերից մե օր ասեց.
— Ես պտի էրթամ իմ երդիր, տենամ, գամ։
Հելավ էկավ, խասավ Ղլաթ,
Շորեր խանեց, օր լողկնա։
Էդ աղջկան սովրցուցին,
Կարմնջի տակ թաքցրին։
էն վախտ օր Դավիթ կլողնար,
Նետով զանեց՝ թիկնքի օրթալղից հելավ դուս.
Դավիթ մեռավ։
Եփոր Դավիթն սպանվավ,
Խաբարն էկավ, խասավ խորոխպրներ։
էկան, տարան թաղեցին։
Խանդութ խանումն էլ իրան թալեց լեռ քարից,
էն էլ ընդեղ մեռավ։

## Գ
## ՓՈՔՐ ՄՀԵՐ

### ՁԵՆՈՎ ՀՈՎԱՆՆ ՈՒ ՔԵՌԻ ԹՈՐՈՍԸ ՄՀԵՐԻՆ ԹԵՐՈՒՄ ԵՆ ՍԱՍՈՒՆ

Ճժուն պախին, օղորկևցին դաշտ, չոբևներու խետ։
Ձենով Օհանն ու Քեռի Թորոսն օր գնացին էրեխին տանելու,
Ասին.—Ձեվնե պախենք, աստծուց ի՛նչ, էրեխեն մահացա։
— Ե՞փ ա մահացե.
— Իրեք տարեկան։
— Չէ՛, մեր էրեխեն չմահացե,

Մենք գ՝ավատանք նրանով,
Որ մեր մեկ տարեկան էրեխի գերեզման՝ մի շենք
ա, մեր շենքով.
(Ուրանք հսկա մարդ ին),
Տարեք, մեր էրեխի գերեզման տվեք մեղի շանց։
Երբ օր մեր չափսն հնդավ,
Ուրեմ մեր էրեխեն մեռեր ա,
Մեր չափսն չեղավ,
Ուրեմն մեր էրեխեն պտի տաք։
Գացին գերեզմաններ՝ ոչ մի գերեզման չեղավ։
Զենով Հովան կկանչա.—Մհե՛ր, հե՛յ, Մհե՛ր, հա՛յ,
հերդ մահացե՛ր ա,
Արի՛, երդիրը կառավարա՛։
Երբ օր էս ձենը կէթա հէրի մեջ, կհնգի Մհերի
հանգաջ,
Մհերն նստած տեղից թռի, կանգնե,
— Ես կերթամ.—կըսա,—ես կերթամ։
Զորըններ կբռնեն, չթողին,
Կջարդա հմնին, դուրս կիգա,
Կիգա Քեռի Թորոսի, Զենով Հովանի մոտ,
Էս մարդիկն կսեն.—Ա՛յ, էնի մեր տղեն ա։
Փաթթվեն հիրար, առան, տարան Սասուն։

ԴԵՏԻՆԸ ԹՈՒԼԱՆՈՒՄ Է ՄՀԵՐԻ ԱՌԱՋ, ՆԱ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ Է
ԱՂԵՐՍՈՒՄ ԱՍՏՑՈՑ ԵՎ ՓԱԿՎՈՒՄ Է ԱԳՌԱՎԱՔԱՐՈՒՄ

Մհերին օր բերին Սասուն,
Սասունի կառավարիչ դառավ մի առժամանակ,
կառավարեց,
Էլ գետին տայաղ, ուժ չտվեց Մհերին,
Օր գետին ման գիկեր, խողի մեջ կթաղվեր,
Զին մինչև փորն կթաղվեր մըջ խողին։
Էս մարդ աստված կկանչեր.
— Ա՛յ աստված, գոնե իմ խոթքին ա՛ռ, ես պրծնեմ,
չտանջվեմ։
Քարերու վրավով կէրթեր,
Խողի վրեն օտ չէր դնի Մհերը։
Էն մեկ օր ըսեց.—Մկա կմեռնիմ թաղվելով,
Սպասի, հըլնիմ աշխարք, ման գամ,
Տեսնամ՝ ի՞նչ կա աշխարհ։
Էդ մարդն խեծավ Քուռկե Ջալալին,—
Էդ Քուռկե Ջալալին մախ չուներ, անմախ էր,—
Ու քշեց, գնաց,
Ճանապարհի մեջտեղ անձրև ու կարկուտ բռնեց
վրեն։
Ըսեց.—Ձա՛, գետին ավելի թուլացավ, ես
բաթմիշ կեղնիմ։
Տե՛ր իմ աստված, իմ կսմաթը էսքան էր,
Իմ ճակտին էս էր գրուվ։
Երկնքից ձեն ա գալի.
— Մհե՛ր, Ագռավաքարն ա քեզ տեղ անում,
Գնա՛ Ագռավաքարի տակը,
Մինչև կարկուտն ու անձրևը դադարի։
— Տե՛ր իմ, ես ո՞րտեղից գտնեմ Ագռավաքարը։
— Գնա՛, բարձրացի, կգտնես։
Գնաց, մե հատ լեռան տակն՝ մե քար կեռեն էկե,
Ոնց որ շադր կապես վրեն,
Տակն էլ դարտակ՝ հէրի նման ա,
Գնաց, ձին էլ քաշեց, կապից էդտեղ։
Մհերն մնաց մըջ քարին։
Ժողովուրդն ասին, օր էս հսկա մարդն էլ ըստեղից
դուրս չի գա.
Էդ հսկա մարդը Մհերն էր։
Երբ օր ցորենը հեղավ մասրի բարա,
Էն ժամանակ նոր գեղին ուժ կիդա,
Մհեր քարից դուրս կիգա։
Մհերը քարից դուս չի գա,
Մհերի աբասդարան էդ քարն ա։
Զոբններ էլ կտեսնին,
Օր էդ լեռան միջից համաշա ջուր ա կիգա,
Եվ սրբու տեղ են արե, մոմ կվառեն, կպաշտեն։
Էդ ջուրն Մհերի ձին ա կշռա։
Մհեր Ագռավաքարի մեջ հլա օր կմնա.
Ժողովուրդ ուխտատեղ ա արե,
Հուր աշկի լուսի պես կպաշտա։

## Բ

## ԻՐԱՆԱԿԱՆ ՎԵՊ

### 1(5). ԶԱԼ ՕՂԼԻ ՌՍՏԱՄ

Թագավորին կլնի իրեք որդի.
Մեկի անուն Ռստամ էր՝ չոջ տղին,
Մեկին՝ Ֆարամազ էր, մեկին՝ Զուրաբ էր։
Էս մարդիկ թագավորի տղա ին։
Էն օր էս Ռոստամն էր, խերն ծերացեր էր,
Դուզեր թագավորությունն առներ հուրին.
Էն օր Ֆալրամազն էր՝ գուզեր առներ հուրին,
Էն օր Զորաբն էր՝ պղտի տղեն, կուզեր առներ հուրին։
Էս մարդուն թագավորական գլաստ ուներ,
Փոստը բանդլա բալան ամարե քյաշկե (Գյաստի անունն էր), կիսկեր ծամուն,
Օր եթե գլոխ թագ դներ, հագուստն կխագեր՝ էդ էր։
Էս իրեք ախպեր փոստ մտան, ոչ մեկին չտվեց,
Զորաբն՝ պղտիկ տղեն, հուկավ հուր երկու ախպոր մոտեն,
Գնաց մե թագավորի ձեռ վերցուց, թալեց դեն,
Հինքն նստավ էդտեղ թագավոր։
Թագավորի աղջիկն առավ,
Ընդուց ունեցավ մեկ տղա,
Էդ օր գնաց թագավորի աղջիկն առավ, էդ թագավորութեն տիրեց։
Էդոնց ավի տեղ կէր,
Օր կերթին, ավը ղուշ կէնին, էրկու դուռ ին բողած,
Մեկ Արևելքի յանին ին բողած,
Մեկ Արևմուտքի յանեն են բողած,
Օր կմտին՝ մարալ, ջեյրան, ինչ ղուշ, բան էղեր,
Զանին, կառնին գուքին։
Էս մարդ էն մեկ օր ըսավ.
— Լա՛վ, ես իմ ախպերտանց, իմ խոր մոտեն հուկա,
Խո՛ իմ ավի տեղից էլ չհուկա՞։
Հելավ հուր ձին խեծավ,
Ուր գյուզ ու ղալղալն վերցուց, էկավ,
Արևմուտքի դռնեն մտավ էդ ավի տեղ։
Ուր ախպեր Ռստամ՝ չոջ ախպեր,
էն էլ Արևելքի յանից մտավ էդ ավի տեղ,
Էս մարդիկ հիրար չճանաչելով, էկան հանդիպան հիրաչ։
Ռստամ բռուց.—Ջոջ ախպե՛ր, ո՞վ ես դուս
Շան որդի՛, դու էկեր ես, ուրեմ, խաթամշարա, Զալի խողի մեջ ավղուշ ա կէնա՞ս։
էն էլ էնդորն անպատվեց.—Շան որդի,—ըսեց.—
— Ես քեննեն վախենինք ըստե չգի՞նք։
Էս էրկու ախպերն առան իրար, կռիվ էրին։
Էս Ռստամ զարգեց ախպոր, ձիուց վեր բերեց,
Օր վեր բերեց, թուր քաշեց, պտի գլոխ կտրա։
Ըսեց.—Լա՛վ, դու իմ գալող դուշման, իմ գլուխն օր կտրիր,
Զալօղլի Ռստամից, Ֆարամազից խմա՞լ ա կազատվես։
Ըսեց.—Ովո՞ ես։
Ըսեց.—Ես ընդոր տղա Զորաբն եմ։
Ըսեց.—Բա՛ դո՞ր էս գացե։
Ըսեց.—Գացեր եմ, Հընդու ցաման թագավորի թախտի վրեն նստեր եմ,
Ընդուն քցեր եմ թախտից, ընդու տեղ նստեր եմ։
Ըսեց.—Ի՞նչ ունիս։
Ըսեց.—Ընդոր աղջիկ որ առեր եմ, մե խաս տղա ունեմ։
Ու թազդր հեղավ, չան ավեց։
Գնդակն փիս էր բռնե։
Հելավ էս մարդ, ախպոր դիակ տարավ մեկ ձորու մեջ,
Մեկ չոջ փուկ բլուց վրեն, ծածկեց։
Զին խեծավ, ընդոր ձին էլ քցեց հետև, էկավ տունդ
— Հորի՞ էկար տուն,—Զալ թագավոր՝ հուր խեր հարցուց,

— Ռոստամ,—ըսեց,—հորի՞ էսօր ավ չբերեր ես։
— է՛, իմ ցավ մի տու հիրար, խե՛ր ջան։
Ըսեց.—Հորի՞։
Ըսեց.—Թողլ ավի տեղ, էսօր իմ ախպերն եմ ավ էրև։
— Իմա՞լ, ի՞նչ։
Ըսեց.—Քու տղա Զորաբն օր հռկե մեղնեն, գացե, Գացե ֆլան թագավորի քախտն ա նստե, էնդոր աղջիկն առե, էնդոր էլ տղեմ ունի, էդ՝ ավի Արևմտքի դռնեն մտավ, հայրի՛կ, ես էլ՝ Արևելքի, Երգուսս հիրար չճանաչեցանք, էկանք, հանդիպանք հիրար։ Կռիվ էրինք խըտ իրար, Ես զարգեր եմ, էնդոր վիրավորեր եմ. Զիուց իցկեր եմ էդ մարդուն, ուղեցեր եմ գլոխ կտրեմ, էնի ըսեց, «օր ընձի վերջացուցիր, Ջալի ձեռնեն, Ռոստամի, Ֆարամազի իմա՞լ կաղատեսա», Մկա իմ ախպերս սպաներ եմ, խե՛ր ջան։ Ի՞նչ պատիճն ա, ինչ էլ կուզես՝ իմ գլոխ բերես, քո կամքն ա, Ես քու դեմ մեղավոր եմ. Իմալ գուզես, ըմալ էրա՛։ Էդորն էլ յոթ ճղից դամչի կար, Մարդիկ կպառկեցուցեր, ընդորով ոդգի կուտեր, Էնդոր օրենքն էլ էն էր։ Ըսեց.—Պառկի՛, շան որդի՛։ Ցավա՛շ, դու գացիր ավի՞, քե քո աղբոր գլոխ կտրիրի Պառկցուց, զանեց.—Ռոստա՛մ։ Ըսեց.—Համմե՛։ Ըսեց.—Զգիտեմ իմ խարս՝ իմ դուռ պտի ներկայացուցես. Թե բերի՛ր՝ բերիր, քե չբերիր՝ քե կախարան կհանեմ։

Էս մարդ խոր լսելով գնաց, Ախպոր տղեն առավ, էկավ. Էս մարդ տեսավ օր՝ տղեն շատ խորոտ ա։ Համ Զորաբն էր խորոտ, համ մերն՝ թագավորի աղջիկն էր խորոտ, որ առեր էր։ Տղի անուն դրեց Բուրզի։ Տղեն սեր քալեց Ռոստամին. Ռոստամ դոր էթեր, փեշից պտի բռներ, խետ ման գեր։

Մեկ օր Ռոստամի էրես մաղ էր էկե, Գնաց դալաքխանեն, օր պտի քրաշվի։ Գնաց, նստավ աթոռին, Տեսավ օր մաղ կա սպիտակ, ախըմ քաշեց։ Ռոստամ ախըմ քաշեց, քրաշվավ, հելավ։ Էստոնց տան օրենքը էլ՝ պտի կին, մարդ, էրեխեք Մեկուկեղ նստին սեղան, հուրանց ճաշն ուտին։ Էդա քրաշվավ, էկավ, Բուրզին լսեց օր խորոխպեր ախ քաշեց, Էկան սեղնի վրեն, Բուրզին քաշվավ ճաշից հեռու, չեգավ ճաշի վրեն։

Ջալն խարցուց.—Ռոստա՛մ, էսօր դո՞ր էս գացե։
— Հայրի՛կ,—ըսեց,—գացեր եմ դալաքխանեն, քրաշվեր եմ։
— Էն իմ էրեխեն հորի՞ չիգա խացի վրեն, Ի՞նչ ա պատահե, մե բան դու ըսած կա՞ս։
— Հայրի՛կ,—ըսեց,—վերև աստված, ներքե դու, բան չըսեր եմ, Մե խատ ախ եմ քաշե։
— Հորի՞ քաշիր։
— Հայրի՛կ, գինա՞ս հորի քաշի, դևեստուն մեզի, խարաջ* գուզալը, Ես մենձացեր եմ, ուժից ընգեր եմ, էրթամ՝ խարջն չկրնամ ժողվեմ, բերեմ. Կարող ա ընձի սպանեն, իմ ուժից բարձր մարդ ըլի, Էդոր խամար ախ եմ քաշե։ Էդոր պլետ կէր՝ հիշուց, Էդոր պառկցուց, իրեք խատ զանեց. Համարա մի սել խետ գելներ։
— Շան որդի՛,—ըսեց,—խոր գլոխ կերար, Քո մուխանաթուբենով սպանիր, քիչ ա, Գուզես էս երեխի գլոխն էլ վերջացուցե՞ս։

Էս մարդ համբերելով ըսեց.—Հայրի՛կ, ես մեղա։ Բուռզին ըսեց.—Պա՛պ ջան, ընձի զորք տուր, Ես էրթամ մեր խարջ ու խառաջ ժողվեմ, բերեմ։ Իմ խորոխպերն ա մեծացել, խո ես էլ չմեծացե՞ր եմ։
— Ա՛յ բալա, դու երեխա տղա, դու նավալա տղա, Դու ըստեղրանք չգացեր ես, Փոլադե Բանդի դև կա, Հին կախարդական մարդ ա, Ընդոր Մրջանե Ջազու կա՝ սիրազամ ա, ծովին ա՛, Գան, նավն կխորտակեն, ես քե չթողեմ։
— Չէ՛, չէ՛։

Էն Զուրաբին օր ախպերն սպանեց, Էնդոր շորեր, էնդոր ձին բերեց պախեց՝ Ռոստամ։ Բուրզին էրկու օդ կոխեց մեկ սոլ,
— Ես կէթամ, օր կէթամ։—

---

Ըստոնց պտի խարաջ տին.

Ու ինչպես որ մեր Ագրիչին գուգան, օրա կզանեն, օշխար, մալ կարաճծցուն,

էդպես էդոնք տեղ ունին, օր պտի էդ մարդկանց, քոդա, վերջու կսին, տին,

խարջ ու խարաջ տին ու էդտեղ իրանց անասուն արծցուցին։ (Ծան. վիպասացի)։

էստոնց քեռիմ՝ կա, անուն Բեժանգ ա,
Քուրմ՝ կա, անուն Գուլչանե Բալի յա.
էդի Զալի քուրն ա, թագավորի աղջիկն ա.
էստոնց մե խատ բագ կար, բանցի Մարանդի կսին.
էդ Բուրզին գնաց, հուխդ էրեց դատ։
Բերին Զորաբի շորեր, խաքուցին,
Խոր շորեր խաքավ.
Բերին խոր ձին,
Խեծավ խոր ձին, ըսկի ձեն չէրեց, խեծավ։
Էս մարդուն դրին ճանապարհ՝
Ուրանց խոր խարջ ու խառաջ ժողվա, գա։
Բեժանգ Բլեյ դրին խատ։
— Բեժա՛նգ ջան, քեռի՛, դու գինաս, էդի նավով ա կէթաք,
Փոլադե բանդի դև շատ զոռ մարդ ա, ֆանդլու յա,
Էս տղեն՝ էրեխա տղա յա,
Սաղ տանես, սալամաթ էլ բերես։
Բերին դրին խրտ Բուրզա։—
Ըսածի համաձայն, խեքթի համաձայն,
Նա՛ իրական տեսեր ենք, սովրովի բան ա,
Մարդիկ ըսած, մենք էլ լսեր ենք։—
Էս մարթի էրթլուց հետո՝ Փոլադե Բանդի դև էնքան լող կէներ,
Օր գուքեր, լողով շատ նավեր կխորտակվին։
Օր գուքեր վըր ուրանց կռիվ,
Ջիդին ուրանց նեղուքին տին, ուրանց խառաջ տանին։
Փոլադե Բանդի դև սկսեց ուր խաչաղուքեն կատարեր,
Միայն Բեժանգ գիներ՝ ուր խոր քյառին։
Ըսեց.—Բուրզի՛, մենք օր էկեր ենք, ըսեց,—
Մեկ խատ Փոլադե Բանդի դև կա,
Կախարդական գործ կբանցա, գուքա մեզի խորտակա։
Ըսեց.—Քյառի՛ ջան, ես կնստեմ քու կուշդ, ես չխասկնամ գալն,
Դու ընձի ըսկուշացրու, քու բան չէ։
Էգան, էդա պտի հելնին նավահանգիստ,
Մե համարա թորի մանգղիլ ա մ՛ացե,
Էս Փոլադե Բանդի դև լողով էկավ, օր նավ խորտակա։
Բեժանգն խասկցուց, ըսեց.—Բուրզի՛,
Մեր դուշման էկավ, հա՛, հա՛, հայ ա, օր նավ խորտակա։
Ըսեց.—Հո՞ւր ա՝ հանդե գա էն մարդ, օր նավն ա կխորտակա։
Էս Բուրզին, օր տվեց նշանց, թռավ հելավ էդոր վրեն,
Երգու օդ սխռեց էդոր կողեր, բուբուշ բռնեց գլոխ,
Հա՛յ հա՛յ էր, էդոր վերջացներ։
Ըսեց.—Գալով կորի՛ճ ջան, մի՛ ընձի սպանա,
Հելնինք դուս, ես կենթարկվեմ քեզի։
Մենաց, նավն հելավ նավահանգիստ,
Բանդուներ թալին, նավ կայնըցուցին։
Հելան էս մարդիկ գողամարտվան հիրար խատ՝ կռիվ էնելու։
Փոլադե Բանդին՝ Բուրզին կզանա,
Բուրզին՝ էնօր կզանա։
Էն օր Փոլադե Բանդին էր՝ զանեց, էդոր ծձից էրեց յարալու։
Էն օր Փոլադե Բանդին էր՝ զանեց, էդոր ծձից էրեց յարալու։
Փոլադե Բանդին էլ տեսավ, օր Բուրզու վրեն չկանա, փախավ։
Օր փախավ, էսի ձի խեծավ, հնգավ հետև։
Փոլադե Բանդին էլ գնաց, մե ծառի բոկի մեջ տափավ։
Էդ ծառի քոդի մեջ մե խատ սիրական կա,
Իր սիրականն ա, Մըրջանե Ջաղու յա անուն։
Օր տափավ, էսի իշեց՝ լռեսավ, օր Փոլադե Բանդին ծառի նե տափուկ ա,
Քշեց ու գնաց։
Էս մարդ թըխ էրթալով էրթա։
Գնաց մեկ անծանոթ քաղքի մեջ,
Տեսավ՝ թագավոր կա, Սատղ բեկ ախպերն ա։
Գնաց գյուլչան բաղի մոտ, ախպրի վրեն.
Ձին թալեց՝ քող արձա,
Հինք յարալու էր, էկավ օր հախպրի վրեն՝ ջուր խմեր,
Խելք գնաց, հնգավ հախպրի կշտի խատ։
Էս մարդն՝ Աղելյաց թագավորը հինք, հուր ախպեր Սատղ բեկ, էկած ա ախպրի մոտ,
Ոչխար բերած մորթած, կուշեն քեֆ էնեն։
Մեկը՝ հուրանց ծառայողից ֆե աման էր, տվին ձեռ,
Օր գա, էդ հախպրից ջուր տանա։
Էկավ տեսավ օր ի՛նչ. մե մարդ՝ յարալու, հնգե ախպրի վրեն,
Էստոր ծձից արուն կերթա,
Ջուր սաղ արուն ա, էլ խմել չի ըլի։
Դարձավ, դարդակ աման տարավ թագավորին, ըսեց.
— Թագավո՛ր, թագավորի ախպե՛ր ջան, մե խատ ջահել մարդ,
Ես ըսթավուր մարդ կենդանի չտեսեր եմ.
Բոյը էսքան, գլոխ էսքան, օդներ էսքան,
Հագուստ՝ մեր հագուստ չէ.
Ձին բերե քիղարե ձեր կուռուխ տեղ, առանցի մե կածկածի
Ինքն էլ հախպրի վրեն, խմե, չխմե, հնգե, յարալու մարդ ա.
Էնդոր սրտից արուն գուգա մըջ հախպրին,
Հախպրի ջուր դարձե արուն։

Աղելյաց թագավոր ճամպխեց էրկու-իրեք խոքու,
էդոր բերին։
էդորն էլ՝ մե լավ աղջիկ ունի, բժիշկ ա,
էն տեսակ դեղեր ա ուրին մոտ, որ մեռուկն կսաղցու։
էկան, տղին օյաղցուցին,
Տղեն հելավ, թուր քաշեց, օր էդոնց խետ կռվի։
— Ա՛յ տղա, մենք դուշման չենք քե,
Մենք օր ուղինք, քե քնած տեղ կսպանինք,
Դու հընչի՞ ես թուր քաշե, մեր խետ պատերազմ կչենես։
Արի՛, տենանք, դու ի՞նչ մարդ ես,
Ի՞նչ խմար ես էկե մեր երդիր։
Էս մարդ լսեց, էս մարդուն տարան իրենց մոտ։
Սատղ բեկին տղա չուներ, մե խատ լավ աղջիկ ուներ,
Շատ թագավորներ գուղին, չին խտե։
Էս մարդն տարավ, էս մարդու աղջկան կանչեց, բերեց.
Աղջիկն էկավ, տղի յարեն տեսավ,
Էնպես դեղ դրեց վրեն, օր յարի մրմունն էլ կտրավ,
Տղին էլ հանգիստացուց, տղեն սկսեց խոսալ։
Մենք դառնանք Մրջանե Ջազուին,
Տեսավ օր Փոլատե Բանդին չկա,
Ման գալով էկավ, էդ ծառի կշտով պտի հընցնի,
Էկավ տեսավ օր իրիդն ու ուր սիրածն յարալու ա,
Մտե ծառի բոգն ու կտքա,
— Ա՛յ Փոլատե Բանդի,—ըսեց—էս ի՞նչ բան ա։
Ըսեց.—Մրջանե ջազո՛ւ, խաթամշարա նա
Ռստամ ա, նա Փարամազն ա,
Ջորաբն էլ զաթի մախացուվ ա,
Մեկ երիտասարդ ա էկե, հանդիպե ընձի,
Ծովուն օր թռավ հելավ իմ շլագ,
Ըմալ ուր օդներ սխմեց իմ կողեր,
Պտի իմ կողեր հըներ ուր փոր,
Ես էնքան օր խոսք տվի, ըսի.
— Ջհնո՛ջ ջան, իմ կողեր մի ջարդա, մի ընձի վնասա,
Իմ գլխի վրեն քե խանեմ չ՚ըլ
Հելանք, խըտ հիրար կռվանք.
Էնի ընձի ա զանե, էրե յարալու,
Ես էնոր եմ էրե յարալու,
— Ըհա՛,—ըսեց, էնի ո՞ր գնաց։
Ըսեց.—Էնքան օր ընդոր ձիու քելելուց զանգուլի տալուց իմացա՝
Գնաց հուրիշ քաղաք,—ըսեց.—Աղելյաց քաղքի յան։
Շառի բոկից խանեց ուր սիրական, ինք ֆեյըրբազ էր,
Թըխ դեղա Փոլադե Բանդի դևին։

Էս մարդիկ օր Բուրզիին տարան, լավ դեղին, լավացուցին,
Թագավորի աղջիկ սիրահարվավ վրեն։
Էս մարթուն ուրանց օթախի մեջ պառկցուցին,
Աղջիկն էլ նշանին վրեն, մատնիք փոխին։
Էս Մրջանե Ջազուն էլ օր Փոլադե Բանդու սիրականն էր, հինքն սեյրըբազ էր,
Իշկեց տեսավ օր՝ քաղքի անց ու դարձ կտրվավ,
Քաղքի ճրագներ խանգավ, մեկ ճրագ կվառի, էկավ։
Էկավ, էդ ճրագ ուսումնասիրեց, տեսավ օր էդ տղի ճրագն ա կվառի.
Ինք յարալուչա, ճրագ չխանգցուցած։
Մտավ, էդ տղի կերպարանք տեսավ, ըսեց.
— Իմն օր կա՝ էս ա, ես Փոլադե Բանդիից կհրաժարվեմ,
Պտի գամ, Բուրզու խետ միանամ։
Էս մարդ կախարդական էր, խեքիաթ ա, սուտ ա։
Էն մյուս օր, օր առավոտն հելավ, ըսեց.—Կայնի, փորձեմ էս մարդն.
— Փոլադե Բանդի դևՙ ըսեց.—Էսի քու խարջ էկող-հավաքողն ա,
Ի՞նչ կուզեք էրեք։
— Ոչ մեկ մարդ ռիսկ չէրեց, նա՛ էս մարդուն չոռ ըսեց, նա՛ լավ ըսեց, նա՛ վատ ըսեց։
Ըսեց.—Բուրզի՛ ջան, ես իմ սիրականի թարգ կիտամ Փոլադե Բանդի դևի խետ,
Միայն դու էղիս քո աստված, մոռացուցչյան չիտաս.
Ես խորոտ աղջիկ եմ, լավ աղջիկ եմ,
Դու էլ երիտասարդ տղա ես, խոսք մեկ, աստված մեկ։
— Գնա՛,—ըսեց,—Մրջանե ջազո՛ւ ջան,
Ես ու դու հիրար խետ պտի ամուսնանանք։
Էս մարդն օր գնաց, էս Սատղ բեգի ախպեր՝ էս Աղելյաց, ըսեց ուր ախպոր.
— Սա՛տղ բեկ, էսի խաթամշարա Ջալի թոռներուց ա,
Էս տան ղոչաղ մարդիկ են,
Մենք արի քո աղջիկ տանք էստոր,
Մենք էստոր էնենք մեզի փեսա,
Մեղնից զոռ թագավորներ կան, գուքան վըր մեզ կռիվ։
Էս մեկ՝ խազարի դեմ կկռվի։
Բերին էս աղջիկ, որոշին քահանով, նշան բերին կառուցին.
Աղջկա մատնիկ իսկին տղի մատ, տղի մատնիկ իսկին աղջկա մատ,
Տղին էլ սաղցուցին։
Դու մի ասե, մեկ թագավոր, որ էս թագավորի վրեն շատ զոռ էր,

Դրա ըստուն նամակ, թե.
«Քու յուրդ ու յուվեն քանդվի, ես էկա քո աղջկան,
Մեկ խատ խաթամշարա անտեր, բուդալա տղեն էդեր ա,
Լսելով, դու քու աղջիկ՝ կամք տեսեր ես էնոր, նշան էլ ես դրեր,
Դե՛, քո վախտին հա՛ղր մնացի, ես գուքամ քո վրեն կռիվ,
Չէ՞ դու չտվիր քո աղջիկ,
Ես քո վրեն կռիվ գուքամ։
Էս մարդ էն հառավոտ էս թուղթ գրեց էս թագավորին՝ Աղելյաց թագավորին։
Էս փեսեն հանգարծ էկավ, տեսավ՝
Աներոջ ախպոր ձեռ մե խատ թուղթ,
Կարդա ու գունավորվեր ա,
Էն ղոռ ա, ախր, հուր վրեն։
Ըսեց.—Էս ի՞նչ թուղթ ա։
Ըսեց.—Ըսկի՛։
Քաշեց, աներոջ ձեռնեն խլեց, կարդաց, ըսեց,
— Անե՛ր ջան, լուսլա կռիվ կիդաս ինձի,
Չվախենա՞ս, լուսուն \Ես էդոնց պատասխան կիտամ։
Ջոռով ըսեց.—Խա՛։
Սաբախտան հելան, էնի ընդեղեն էկավ,
Էսի մի լավ հրեղեն ձի՝ խեծավ,
Էս ղոշունին ը՛մալ ջարդեց, ըմալ օր մեր քաջ Անդրանիկն էր։
Էդոր ղոշունեն մե քանի մարդիկ փախան, հըմննեին ջարդեց էս խետ։
Ըսեց.—Քո՛ւ յուրդ ու յուվեն քանդի, Աղելյանց թագավոր,
Էսի օր իմ ղոշուն ջարդեց,
Լուսուն, էստոնք թաւիբի տեր մարդ են,
Էսի կդառնա քեզ էլ կսպանա, քո ախպորն էլ կսպանա,
Ուր կնգան էլ կսպանա, կէքա ուր խող։
Միջոց գտի, էդոր գլոխ կորցու քեղնից։
Էն թագավոր գրեց, օր ջարդվավ։
Էս մարդ ի՞նչ էրեց.
Էրկու ծովու մեջտեղ կղզիմ՝ կէր,
Տվեց քյառսուն գյալ խոր փորել,
Էս՝ ուր փեսին գաղտնի կերպով խմցուցին, տարին թալին էդ խոր,
Մե ջոջ անդառի քար դրին վրեն, քառսուն դև էլ դրին վրեն պահապան,
Օր խաթամշաբա չիգան խանեն, ղոռով տանեն։
Էս ուր թուղին բեժանգ օր բերեց,
Դարձավ տեսավ օր՝ Բուրղին չկա,
Ուր նալ տվեց եդ ու գնաց խոսկցուց Ռստամին ու Փայրամազին։
Ըսեց՝ հըմլա պատախավ, հըմլա պատախավ,
Թըխ էդոնք մնան։
Էստե քուրմ՝ կա, անուն Գյուշանե Բալի ա, քնավ,
Էրազ տեսավ։
Տեսավ օր՝ ախպոր տղա Բուրղին շատ նեղ դրութենի մեջ ա,
Խոտավ հելավ օր՝ էրազ ա։
Հելավ սաբախտան, էկավ Ջալի մոտ՝ ուր ախպոր մոտ, լալով, ծամեր պճկելով։
— Ջա՛լ,—ըսեց,—քու թախտ վըր քեզի դանիմ էղի,
Դու պտի չէղիր, մեզի էլ դուս չբերիք,
Իմ ախպոր տղա Բուրղին շատ նեղ դրութենի մեջ ա.
Ես գիշեր քներ եմ, էրազ եմ տեսե։
Հընար մ՝ կա՝ էրա։
Էդոր հնարն էլ ի՞նչ ա,
Էդոր ղուշմ՝ կա, անուն Ջմրուխտ տուդի յա,
Էդի լավություն ա էրե, ի՞նչ լավություն.
Մեկ օր գացե, մե հախպըր վրեն Բուրղին պաղ ջուր ա խմե,
Պառկե, հանգստացե չինարի ծառի տակ,
Տեսե օր՝ մե խատ ղուշ, էդ ջմրուխտ տուդին,
Բուն ա՝ դրե էդ ծառի գլոխ, ձագ ա կխանա,
Մե խատ շամար օձ էկավ, էտա ծառի տակ բուն ունի.
Էն վախտ օր տուդին բացակա կեղի,
Կէրթա ուրին խամար, ուր ձագերի խամար բան բերի,
Էս օձն գելնի փաթթվի ծառ, էդ ձագեր կուլ կիտա։
Տարին-տավներկու ամիս, մեկ օր, էրկօր՝ ձագեր չկան։
Էս մարդ մեկ էլ տեսավ՝ ճվճվուն հելավ ծառի գլխուց,
Շիտկվավ տեսավ՝ մեկ շամար օձ.
Թուրը քաշեց, էդ վիշապուն բրդեց,
Վիշապ բերեց, կոլոնեց,
Էրկու-իրեք կտոր էլ էդ վիշապու մսից թալեց, ձագեր կերան։
Ջմրուխտ տուտին էկավ, տեսավ, օր ի՞նչ տեսնա,
Մե խատ մարդ դատ պառկուկ ա, ձին չիդարուկ ա,
Ուր ձագերն էլ կճվճվան։
Չխասկցավ, ձագեր խասկցուցին,
Ուղեց էս մարդուն փանջալամիշ էներ,
Խաներ երգինք, թուղեր, օր փրթիկմ՝ չընգեր գետին,
Ձագեր խասկցուցին—Մամմ՛,—ըսին,—տո՛ւմդ ավերի,
Էս շամար օձ հելեր էր, մեզի կխեղդեր.
Էս մարդ բրդե, հլա էրկու-իրեք կտոր էլ թալեր ա, մենք կերեր ենք։
Դուշը թևեր բացեց, խով էրեց էս մարդու վրա։

Բուրզին քնավ, հելավ, թուր քաշեց, որ խետ պատերազմա։
— Դու իմ ձագերին փրկեր ես, ի՞նչ նպատակ ունիս, ըսա՛, ես կատարեմ։
Ըսեց.—Քե՛զի մեռնիմ, իմ նպատակն էն ա,
Որ իմ խոր, իմ պապերին խասկցուս,
Դան, ընձի խորից խանեն։
Ղուշն էկավ, Ջալին ըսեց։
Ջալն ըսեց.—Ռստա՛մ, դու էս մարդու խորն ըսպանիր,
Դնա՛ մկա, ի՞նչ միջոցով կեղի, տղին խորուց խանես, բերես։
Հելավ ղորք կապեց ու բարի ճանապարհվեց։
Էկավ մեկ տեղ, քարլան բեռներ թափեց, օր խաց ու ջուր էնեն.
Էս մարդիկ տեսան օր՝ մե մարդ, մեկ թևեն մարդ, Ջաղդեն կտրև, գլոխ դրև մեկ յան, օդներ դրև մեկ յան։
Ըստոնք զարզընդան։
Ռստամին էլ մե բան կա, ի՞նչ կա. օր ըսին՝ նարա քաշե,
Էնպես ձեն կխանա, օր սար ու ձոր էդոր ձինուց կվախենան։
Էկան ըսին.—Մեկ մարդ՝ մե թևեն ա,
Մեկ անտառի ծառ քաշե, էրի ուրան ձեռաց փետ, պառկուկ ա էս ինչ տեղ։
— Դե՛,—ըսեց,—տղեկնե՛ր, բերեք խաց ու զատ ուտենք,
Ահագին փլավ, ահագին խաց ճամփենք էս մարդուն,
Թե կերավ՝ մեզի ձեռ չի տա,
Օր չկերավ՝ մեզի դուշման ա, կկռվենք,
Ցա կաղթենք, յա տուժվենք։
Բերեցին լավ քիշմիշով բրնձե փլավ սարքեցին, լցին մե ջոջ սինի,
Մեկ տաս լավաշ դրին վրեն, տվեց էրկու խոքու ձեռ,
Բերին, դրին էս մարդու հառաջ, ու ուրանք ետ դարձան։
Էս մարդիկ հլա չին խասե, սինին զնգռտալեն էկավ խասավ ուրանց։
Վա՛յ,—ըսեց Ռստամ,—հլա՛ գացեք, տեսնք՝ կերե, քե՞ ինադ էրե, թափե։
Էկան տեսան ի՞նչ. մեկ-մեկ խատ օր հնգե գետին, ձգե, կթալա բերան։
Էկան խարցուցին մոտեն.—Ա՛յ մա՛րդ, դու ի՞նչ մարդ ես։
Ըսեց.—Ես էս սարի-ձորի զուռուղչին եմ, պահակն եմ,
Էս ջաղդով մարդ չհնցի, առանց իմ իրավունքին։
Ըսեց.—Բա՛ դու ըսկի մարդուց, ասուծ երգուղ չունի՞ս։
Ըսեց.—Չէ՛, ես երգուղ չունիմ, մեկ մարդուց երգուղ ունիմ։
Կսեն Ջալօղլի Ռստամ կա, էն նարա կքաշա,
Մենակ էնդոր նարից երգուղ ունիմ։
Էկան ըսին, ըսեց.—Օ՛հ, էդի իմ բան ա։
Տղեքնե՛ր, դուք բեռներ թափեցեք վըր ձղի, տափեք,
Օր իմ ձեն հանգչներ չկյառցու,
Ես էթամ, գամ, նարեմ քաշեմ։
Ռստամ ձեռներ զանեց բիլագներ, գնաց, էկավ, նարեմ քաշեց,
Ձեն հընգավ Ղոփոյ անգաջ։
Ղոփոն էլավ ալափ-թալափ, էկավ հընգավ վըր օտաց ըսեց.
— Յոթ տարի քեզի խալալ ծառայել եմ, յոթ տարի։
Ղոփոն թալեց Ռստամի օդաց վրեն ու ըսեց.— Դո՞ր ա կերթաս,
Ըսեց.—Իմ ախպոր տղեն բերած, թալած ա քառասուն գյազանոց խորի մեջ,
Գուզիմ՝ օր իմ ախպոր տղեն ազատեմ, տանեմ։
— Վա՛յ,—ըսեց.—քու տունն ակոլի, էդի հելավ պարսեկ (կոլըրին, կթալին)։
Դե, Ռստա՛մ, էն լավութեն օր դու ինձի էրիր, ես քու խաց չմոռնամ.
Ես օր չբերեմ, քո բերնեն չի՝ օր դու բերես։
Գնա՛, քաղ բեր, դիր էս կայեղի մեջ։
Գնաց, մեծ քար բերեց։
Ըսեց.—Ես կերթամ կռիվ, դու դաս կմնաս, Իմ թուխի ձեն օր առար դու, կխամբրեմ,
Թե քառասուն թամամ էղավ, ես էնդոր կսպանիմ, Օր քառասուն թամամ չէղավ, ուրեմն էնդոնք ա ընձի սպանած։
Դու կքշես, քու գլխու ճարը կտենաս, կփախես։
Բերեց կայեղ քարեր դրեց,
Էկավ լանգլներ թալեց, կայնցուց, ձեն տվեց դևերներուն։
— Դևե՛ր, ես էկեր եմ Բուրզու հետև, օր տանեմ, Արե՛ր, խրտ իրար պատերազմենք,
Դուք ընձի աղթի՛ք, զաթի քըխ մնա մըչ խորուն, ես ձեզի աղթի՝ կխանեմ, կտանեմ։
Մեկ-մեկ զանեց, հըմեն դևերուն սպանեց, Ռստամ խըմբրեց,
էն մեկ խղչահարվավ, ըսեց.—Ղոփո՛, արի՛ դաս, արի՛, Բուրզուց խարցու,
Ես Բուրզուն շատ եմ խաց տվե։
— Քո՛ տուն ակոլի,—ըսեց,—
Էդոր խորոխպոր խոսկ եմ տվե, օր քառասուն ձեն չիգա,
Ուրեմն դուք եք ընձի ազատե։
Ես պղտիկ եմ՝ կթալեմ,
Մ'ացիր սաղ՝ մ'ացիր, չմ'ացիր՝ չէ՛, չէ՛։
Էդոր յուրդ ու յուվեն քանդի, ուր պզտիկի,

Զանեց, էնդորն էլ սպանեց։
Էկավ օր մե մեծ ջաղցի քար դրած խորու վրեն,
Ձեռ թալեց, օտներով զանեց, քար գնաց, եռեցավ։
Ձեն տվեց.—Բուրղի՛։
Ըսեց.—Հա՛...
Ըսեց.—Էկեր եմ քեզի տանելու,
Ճոպան հիջոմ, կապա քո մեջք, քեզի խանեմ։
Ըսեց.—Վախենամ՝ մուխանաք մարդ ես։
Ըսեց.—Չէ՛, հավատացի։
Ճոպան հիջուց։
Բուրղին կապեց հուր մեջք,
Օր մե ձեռնեն էր, թալեց, չկրցավ լավ, լրիվ խանել
Բուրղին էլի գնաց, հընգավ։
— Քո խիղջը չմեռնի, բա՛ դու ընձի ազատե՞լ ես.
Իմ դուշմանն ես, էկեր ես ընձի սաղ-սաղ
կսպանես։
Ըսեց.—Անխի՛ղճ, մեկ քեզ եմ ես,
Շրիտը բռնեմ,—ըսեց,—դու հելի։
Ըմալ էրեց՝ Բուրղինս հելավ դուս.
Փրչոտեր էր մըջ խորուն։
Նստուց կայաղ, բերեց, Ռստամն ուրախացավ,
Տարան դալաքխաններ, տվին թրաշվել,
Տարան բաղնիսներ, տվին մաքրվել առան էկան։
Դու մի՞ ըսե, ըստոնք օր եկած ա էս մարդու հետև,
Փոլադե Բանդի դևն հիմցեր ա,
Էկած Ռստամ գացեր ա Բուրղու հետև,
Էստոնք էդ Ռստամ շարու թագավորություն ուզեն
առնին։
Էստոնց էլ օրենք կէր.
Էդոնք օր կռիվ կէնեն, կռվու մեջտեղ իրար ձեն
կիտեն։
Էստոնց ձեն օր լսին, էն կռվողներ կուժեղանին*։
Փարամազ էնպես ա դեմն առե, օր մե ճիտու էլ
իսկի վնաս չէներ։
Էկան տեսան օր՝ Է՛, Ռստամշարա գոգոռն գուքա։
Ձեն տվեց, ձեն ընգավ ուր ախպոր հանգաջ։
Փարամազ էնտեղեն, էսի էս տեղեն,
Էնտեսակ կոտորում տվին դևստանին.
Փոլադի Բանդի դևին հինք հուր ձեռքով սպանեց,
Ախպեր՝ մեկ աչքից իմ պես կույր էր, մտավ
բաղի ջրծակն,
Օր ջուր էնտեղեն գուգա բաղը։
Էկան թագավորի զգեստ նորից բերին տվին
Բուրզոմն՝ Թե՝ Բուրզին մեր թագավոր։
Էս էրկու ախպեր էլի խոսպրտացին վըր իրար։
— Չէ՛, չի կարելի ա, էտի էրթա կռիվ էնա,
տանեն թալեն՝ խոր,
Ես Փոլադե Բանդի դևին սպանեմ,
Դու ընձի չի տաս, տաս էդ վախկոտին, օր տարան
թալին խոր։
Ջալն տեսավ, օր տղեքն էլի վիժվան,
Էս մարդն օր մտեր էր ջրծակ, Փոլադե Բանդի դևի
ախպեր,
Գնաց մեկ սարի գլոխ, մե ջեյի մեջ,
Ուրին տեղ շիքեց, էդտեղ կապրի,
Օր էս մարդկանց վնաս տա՝ ուր ախպոր արունքն
առնի.
Հինքն էլ վասվասայա** կկարդա։
Էս մարդիկ, Ջալն տեսավ օր կկռվեն,
Ըսեց.—Ձեր ձիանք կխնծիք, կերթաք չոլ,
Ջեյրան որի հառեջով թռավ, էնի ջեյրան կբռնա,
Կբերա, թագավորություն կիտամ էնդոր։
Հելան իրեքով, էրկու խորոխպեր՝ Ռստամ,
Փարամազ, Բուրղին հինք, ձիանք խնծան,
Է՛, ջեյրան, էնի երիտասարդ ա, հո՞րի գուբա
ծերի հառեջով թռնի,
Էկան Բուրզու հառեջով թռան.
Էն երկուս ձիանք քշին, դարձան,
Բուրղին հնգավ ջեյրանի հետև։
Գնաց, մութ տվեց վրեն, տեսավ օր մեկ սարի
դեմ ճրագ կերևա,
Դե մութ վախտ, ճրագ մոտ կիտա նշանց,
Էս մարդ քշելով ձին՝ գնաց,
Գնաց հելավ մեկ սարի կող, տեսավ օր՝ հիր ա,
Ձին կապեց հիրի դուռ, կզվավ, մտավ մըջ հիրին։
Գնաց տեսավ՝ մեկ հաշկին մարդ, մեկ եզան
չանդակ բերե քրքե կախեր ա,
Մե կդոր էլ միս, ամեք համարա խինգ-վեց կիլո,
դրել ա կողին, օր խորովի, օր ուտի։
(Օր մացե դաշ իբրև Ռստամշարա մարդ պատահի,
Ուր երգրի, ուր ախպոր արունք էդորեն առի)։
Էս մարդն էլ սուվածացեր էր,
Էս մարդ յոթ կտոր խամբրով դրեր էր վըր
կրակին,
Բուրղին էրկու կտոր գողցավ, հինքն կերավ։
Էս մարդ հափլդեց, տեսավ օր չկա։
— Ցա՛,—ըսեց,—էս ի՞մալ վռազ կերա։
Նորից կտրեց յոթ կտոր, դրեց վըր կրակին։
Էս խետ տղեն իցկեց քոռ աշիլ չան, իրեքն կերավ,
Էս մարդը չորս կերավ, հափլդեց՝ օր չկա,
— Տո անաստվածնե՛ր,—ըսեց,—դու ընձի
կոնախ էք էկե, բարով եք էկե,
Դու հո՞րի ընձեն ի կալեք.
Եղան ջանտակ կախուկ ա, դուք էլ բերեք դրեք
վըր կրակին, կերեք, ես էլ ուտեմ.
Շատ էլ ես մայիֆ մարդ եմ, դու հորի՞
անխղճություն կէնեք։

---

* Ինչպես որ Նիկոլայ Թագավոր սալդին էրազ կեմցու, օր էրթին կռվին, չվախենին (Ծան. վիպ.)։

** Կախարդանք, օր կկարդան մարդին ու կկախարդվին (Ծան. վիպասացի)։

Բուրդին նոր ըսեց.—Բարի հիրգուն քեզ, դև ախպե՛ր։

— Բարով, հաղար բարի,—ըսեց.

— էդ ի՞նչ մարդ էս, հուստո՞ն ես դու։

Ըսեց.—Դև չան, մի՛ խառցուս—

Ըսեց.—Ք... մ Խաթամշարի Զալի խոր քյալեն,—ըսեց,— ես ընդոր դառնարածն ինք, Մև խաս տղա եմ, քնա, դիվանք էկան թալին դառների մեջ, Մի յոթ-ութ դառ կերած ինս։—

Ըսեց.—էդ շան տղեն յոթը ճղեն պլեթ ունի, Պտի տաներ ընձի տփեր, մախացուցեր, Մկա փախեր եմ, օր ընդոնց դարդից էթամ կորիմ։

— Վա՛յ, քու դարդն էլ իմ դարդից։

— Հորի՞, քո դարդն ի՞նչ ա.

— Ա՛յ քու տունն ակոլի, դառնարա՛ծ չան, հլա քու դարդն քիչ ա, Իմ ախպերն ա սպանե, իմ երկիրն ա հնցուցե, Թառլան թագավորն ա հըմլա էրե։

— Աբա՛,—ըսեց,—դու էստե մնալով, ընդոնք եսիմ պադշին, չպադշին, Դու քաղքից, մարդուց, տնից, հրաժարվել ես, էկեր ես էստեղ։

Հելլի՛,—ըսեց,—խըտ իրար մե քաղաքում մեկի համար աբրինք։

— Խա՛,—ըսեց,—'մալ ա, սաբախտան խըտ իրար էրթանք։

Հելան սաբախտան, էս մարդ հուր ձին խեծավ, էն էլ ձի չունի, հընգավ հառեջ, Բուռդին գիշերն օր չքներ էր, վըր ձիուն կընննջեր։ Էս քոռ մարդ, էս՝ վասլասա դիր կկարդեր, ձին հա՛ կըխրտեր։ Տղեն խրտավ հիմցավ օր՝ էդ հառեջ գիրք ա կկարդա, Հա՛ հա՛յ էր՝ ձին էլ կփիլնա, հինքն էլ կմեռնի, Թուր քաշեց՝ մե՛կ խատ վըր էդոր գաքին, էրեց էրկու կտոր։ Ջուր էդոր սպանեց, ձին էլ սատկավ։ Բուրդիս հիջավ ձիուց, թամքին ափսոսցավ, Շլկեց, էկավ մեկ թագավորանիստ քաղաք։ Էկավ, դո՞ր էթամ, դո՞ր չէթամ, Էկավ, մեկ պառվու տուն էղավ՝ ղոնախ։

— Բարի հիրգուն, Նանե՛։

— Վա՛յ բարև, մեռնիմ օտներուդ, գալող բարեկամ չան։

— Նանե չան, եդո նոր իմ ցավից կսեմ, Նանե չան, ընձի պուտ ջուր։

Նանեն—Վա՛յ իմ լուս քոռնա, իմ գալող տղա չան,

Դու դրա անուն հորի՞ տվիր։

— Հորի՞, Նանե։

— Ցաման մի՛ ջրու անուն տու, մի՛ ջրու անուն տու։

— Հորի՞ Նանե, ձեր երգիր ջուր չկա՞։

— Նանեն մեռնի քեզ, մեր երգիր լավ հախպուրմ կա,

Սաղ քաղքին էլ կբավարարցուցեր, Էսի 'սենց թագավորի քաղաք ա, Մե խատ շամար օձ բնակռավ մեր հաղրի ական մեջ, Օրեն պտի մեկ երիտասարդ աղջիկ տաներնք, ուտա՝ էնքան ջուր դուքա, արնոտ կեղտոտ. Աղջիկն օր խլասվ՝ ջուր կփագա, Մենք սաղ քաղքով կմնանք ծարավ։

— Մեռնիմ օտներուդ, անունդ ի՞նչ ա։

— Նանե չան,—Բուրդի ա։

Ես օր էդ վիշապուն աղքեմ, ձեր թագավոր կայի՞լ ա։

Ըսեց.—Քե մեռնիմ, էսօր էլ հերթ թագավորի աղջկան ա, Հինքն ա, էդ մի աղջիկ, պտի տանք վիշապուն, օր ջուր տա։

— Նանե՛, հելի դնա թագավորի մոտ ըսա իր մե խատ կոնախ ա էկե, Կասա, օր ես էդ վիշապուն ըսպանեմ, ուր աղջիկ կիտա՞ ընձի։

— Քու Նանեն մեռնի քեզ, հորի դու հըմալ հերոս տղա ե՞ս։

— Գնա՛, գնա՛։

Նանեն հելավ՝ հա՛յ թագավորի դիվան։

— Հա՛, Նանե՛.

— Թագավո՛ր,—ըսեց,—մե մարդ էկե մեր տուն, Մեր երկրի մարդ չէ, չանով չանդկով ա. Կսա օր՝ ես աղջիկ ազատեմ, իր աղջիկ կիտա՞ ընձի։

Կըսե.—Նանե՛, աղջկան իրեք շաթ կա, իմ աղջիկ գյուլաշ խաւող աղջիկ ա, Ասսու հառեջ շաթ ա կտրե, ոն օր էդոր քիկունք դնա գեղին, էդոր պիտի առնի։

— Ցա՛, էդ քավուր աղջիկ ա՞.

Ըսեց.—Կերթաս, ըղմալ կսես։

Էկավ.—Բուրդի՛ չան, անվանդ մեռնիմ, Մեր թագավոր էս տեսակ հարց ա դրե քու հառեջ. կանա՞ս կատարես,

Մեկ հարց էն ա, օր վիշապ սպանես, Մեկ հարց էն ա, օր գուլաշ կպես, Մեկ հարց էլ կա. Մեկ խատ խրեղեն ձի կա՝ օր բռնես։

— Նանե՛,—ըսեց.—ես կարող եմ։

Հելավ տղան պատրաստվավ, թուրն առավ ձեռ, Թագավորի աղջիկ առան էկան ախպրի ական մոտ, Վիշապ ուր ծակից դուրս հելավ, խասավ Քըխ թագավորի աղջկան։

Տղան խասավ վիշապին փրթեց, վիշապ փիծուց,

ջուր բխբխալեն էկավ.
Գնաց թագավորի մոտ, եվից եղավ, թամանդար հելավ թագավորին.
Գնաց ըրխ խրեղեն ձին, օր բռնա ծովու մեջեն։
— Թագավորն ըսեց.—Ծովու ձի ա, մարդ պտի՝ օր ընդոր բռնա։
— Լավ, թագավոր ջան։
Էկավ նանեյ տուն, էսի ըստոր հերոսություն տեսավ հաշկից-հաշկ չփոխա։
Սաբախտան հելան, բարի լուս բացվի վըր ձեզի, բացվավ վըր էնոնց,
Էկավ ձին էլ բռնեց. ի՞նչ թավուր բռնեց.
Բարուշ (պղնձից թաս ա) դրեց գլոխ, ձին էլ աղթեց, աղջիկն առավ,
Աղջկան օր առավ, էս մարդկանց պապեպապ նշան կար,
Ռստամին, Զալին նշան կար, կսին Բազմանդ*։
Էս մարդն ամուսնացավ էդ աղջկա խետ։
Օր ամուսնացավ, էս թագավոր ննթակա էր Ֆայրամազին՝ Զալի տղին։
Ֆայրամազ հռկավ խոր մոտեն,
Գնաց հուրիշ քաղքի թագավորին թալեց դեն, նստավ թագավոր։
Էս խետ կռիվ կէնա ուր ջոջ ախպոր՝ Ռստամի խետ,
Գուզա Ռստամին բերա սպանա, թագավորություն մնա հիրուն։
Թագավոր Ֆայրամազին ննթակա յա, պտի զորք տա, ուժ տա, օգնա։
Էկավ նամակ թև.—Թագավոր ջան, քեզնից էսքան զորք կուզեմ,
Ես խաթամշարայ խետ կռիվ կէնեմ։
Բուրղին, հուրանց փեսան, հիրիդուն էկավ տեսավ օր՝ աներ թուղթ ա կկարդա,
Հիմդյավ բանի եղելություն։
— Հայրի՛կ,—ըսեց.—ես քու փեսան եմ,
Զորքի գլխավոր ես կէղիմ, կէթամ պատասխան կիտամ։
Էս մարդն գացե, հուրին նոր կնիկ ա առե, ամուսնացե, տղա յա հէղե,
Անուն Թեմուր ա դրե՝ հիրա տղի անուն։
Բուրղու կնիկ կայիլ չէ, օր մարդն էթա.
— Հընչի՞ դու կէթաս, իմ խեր ըրխ էրթա, ուր պատասխան տա, դու մի՛ գնա։
Հինք ավը դուշ էր կէներ.
Խաթամշարա սարերն օր էրեվաց, էկավ ըսեց.— Ես կէթամ կնիկ, կիգաս արի խըտ ընձի,
Էկար զաթի իմ կնիկն էս, չէկար՝ իմ կնիկ չէս։
Մոտի բազմանդ տվեց ուր կնդան, ըսեց.—Տղա հեղավ, կապա հուր թև, էնի կիգա մեզ կգտի,
Աղջիկ հէղավ՝ էսի ծախես ուտես, չուր մախ քեզի բոլա։
Կնիկ պահկեց տղա բերեց։
Բուրղու տղեն՝ Թեմուր հէլավ կռիվ։
Գնաց Ֆայրամազին եվից հէղավ։
Նա էնի դինա, օր իր խորոխպերն ա, նա էլ էնի դինա, օրի իր ախպոր տղեն ա։
Ֆայրամազ խըտ հուր ախպոր կռավ, Ռստամին հաղթեց։
Ռստամ լալով ըսեց.—Ֆայրամա՛զ, յավաշ, քեզ էնքան թասիբ չկա՞, օր քո ախպոր խետ կռվար, քո ախպեր ծերացե,
Դու կուզես մեր ազգ խորտակվի՞։
Թեմուրին կանչեց ըսեց.—Ես խիվանդ եմ, ըսկի իմ մոտ չիգաս,
Լուսվա կռիվ կիդամ քե։
Թեմուրի մեր գացեր էր խըտ հուրին։
Հելավ սաբախտան Թեմուր գնաց պարագլխների կռվուն, Բուրղու քյամանն էր։
(Հավալ խառը չկռվին, պարագլխներ կկռվին)։
Զալն հուր թագավորական պալատի հետև բադան ա քաշե,
Հելե խեծե բադան, թամաշա յա կէնա կռվուն։
Էն օր էս տղեն ա՝ խամ ա,
Էն օր Ֆայրամազն ա՝ կռվուց շատ ընդհելացեր ա։
Կռվան, Զալն ըսեց.—Ա՛յ Թեմուր, է՛ շայ քյամանն։
Օր կզաներ՝ թուփ կիգեր, կզանվեր պատ, էդ պատ բլա կզարընդեր, հիրար դուբեր։
Ֆայրամազն ըսեց.—Վա՛յ, դու տե իմ խեր, ես հիր խամր ա կկռվեմ, ընդու անունն ա կիդա։
Հըմլա ուր դյուրդ դանեց գնեին,
Խողով ութեց տղու ախսերու մեջ, ձիուց բերեց ցածր.
Թուր քաշեց օր գլուխ կտրեր, մեր խասավ վրեն, ըսեց.—Կարելի բան ա, օր քո թոռու վիզ զանես՞։
— Իմալ՞։
— Բա, հլա թև տես, ուր բազման թևն ա։
Նոր խանին տեսան, բերին թագավորի զդյաստ խաքուցին Թեմուրին,
Նոր կռիվ խախնդավ, հուրանք էկան հեղան մեկ։
Թեմուր նստավ հուր թախտի վրեն։
Բուրղու տղեն՝ Թեմուր նոր վայլեց հուր թախտ։
Զեր էրեխեքն էլ նստին հուրանց թախտի վրեն, վայլեն հուրանց բախտ։
Ընդոնք խասան հուրանց մուրազին,
Դուք էլ էրթաք ուրախութեննով խասեք ձեր տուն, ձեր գերդաստան։

## 2(6). ԶԱԼ ՕՂԼԻ ՌԸՍՏԱՄ

Ժամանակով խաթամշար Զալ թագավոր գլի։
Զալ թագավորին Ռըստամ գլինի մենակ։

---

* Մե նշանավոր բան, կկապին էրեխի ձեռ, գինին Զալի թախտ էր, նշանաբանն էր։ Ծանոթ. վիպասացի։

Էսի իր տասնհինգ հընգերներով նստած շուլուխ կէնին,
Ռըստամ կըսա.—Տղե՛ք, հլա հարցրնք իմ կույր հորից.
Կասէն, որ Ջալ Թագավոր շատ ուժեղ ա հեղե,
Ի՞նչ ա արե ըսկի։
Մէնակ ըսնք օր՝ Ռըստամ էստեղ չի։
Կըսէն.—Հայրի՛կ, հըլա պատմա տեննանք, տու
ինչ ուժեղ մարդ ես հեղե, օր ամբողջ
աշխարհ քեղնե կվախենա։
— Է՛, բալա ջան, օր էղպես ա, ես մի
պատմություն կէնեմ,
Մենակ Ռըստամ էստեղ չհեղի, լսա։
Ես Ջալ Թագավորն եմ, դեռ իմ ձեռ իմ ձեռի
վրեն օստիմ չի հեղե։
Մենակ մի օր իմ Ռըխշե Բալաք ձին, գլուխ
թողեց, գնաց անտառով,
Հասավ մի դուրան, չիման տեղ։
Տեսավ օր՝ մե մարդ նստե հախպրի մոտ,
Իր դաստախոտ բացե, խաց կուտա։
Բարև տվեցի, բարև չառավ.
— Ցա՛, էս ի՞նչ բան ա.
Ձին քշի, գացի հեռուն, էկա, թա՛փ տվի քրով
դրան։
Դու մի ասա, տա պրահապատ ա հագնված,
Թուրն կեռավ, էկավ առավ ձեռիս,
Ցա՛, իմ մեջ ուժ չկար, էդ ի՞նչ ա,
Էդի ըսկի չօգրավ նայեր էլ ինձ։
Ձին նորից քշի, գնացի հեռու,
էկա, դյուրզով խփի։
Էլի չնայեց, յա՛, էս մարդն էրկաթ ա, թե՞
պողպատ։
Սովորական պարան քցի Ռխշե Բալաքի վզով,
Բերի օղ՝ ճիթ էրի, քցի դրա վիզ ու ձիան զանգու
տվի,
Ասի՝ լա՛ ձիանով փորձեմ;
էդի մե քիչ շարժվավ, քաշավ ինձ էլ, ձիանն էլ,
Քաշեց, բերեց իր կողքին կայնցուց,
Հելավ խեծավ իր ձին ու քշեց;
Իմ անկեղն բռնեց, դրեց իր զանգուն՝ օտաց տակ,
ու կէթանք անձեն ու ձուն։
Շատ տարավ, քիչ, որից հետո տեսավ, օր հալից
հընգա, կայնավ.
Անգաջս թողեց, հելա, ասեց.
— Դու ո՞վ իր, օր իրեք Թափ ինձ խփիր։
Ասի.—Ես Խաթամշարա Ջալ Թագավորն եմ։
— Ցա՛, յա՛,—ըսեց, մե հատ տափակ ձեռով
զարգեց գլխիս, աչքերս ջուր իջավ։
էն ժամանակից կույր եմ մինչև հիմա։
Ըսեց.—Ինչքան մոլա, ախունդ տվել եմ ախթարք
հիշկել,
Օր քեղանից մի տղա՝ Ռըստամ անունով, պտի
ծնվի,
Դա ինձ խետ կռվի ու ինձ աղթի։
Էս օր էղպես ասեց, քշեց, գնաց։
Իմ ձին խեծա, քշի, էկա տուն։
էն ժամանակից կույր նստած եմ մինչև հիմա։
Դուք եթե ինձ չեք հավատում, թե ինչ ուժ եմ
ունեցել,
Իմ ձեռի գուրզ, ձիու մսուր խորուկ ա, գնացեք,
բերեք։
Գնացին քանդին, վեց-յոթ խոքով հազիվ դրա
գյուրզ բերին։
Կույրեկույր թալեց, բռնեց, ըսեց.—Ես ուժեղ էի,
Բայց նա ինչքան ուժեղ էր ինձանից, օր էս տեսակ
էրեց։
Ռըստամն բղավեց.—Էտ մարդն ո՞րտեղացի էր։
Օր ըսեց,
Ջալը ըսեց.—Դուք հընչի ինձ խաբի՞ք, ըսիք
Ռըստամ էստեղ չի։
էդ գյուրզն վերցուց ու պալանթրկեց։
Օր խփեց, ըմեն փախան Թավլի ախոռի էն կողմ,
Առավ պալատին, քանդեց, հելավ գյուրզն հընգավ
դուս։
Ռըստամն ըսեց.—Ասա՛, որտե՞ղ ա ապրում։
Ըսեց.—Ռըստա՛մ, քու խետ մենակ վերցու քու
Թուր,
Մեր անտառի բարակ ճանապարհով, յոթ օր
օդով կէթաս, կհասնես մե աղբուրի.
Ջուր կխմես, կհանգստանաս, բայց չքնես,
Էնտեղ մարդանման դևեր կան՝ յոթ ախպերդ
Նրանք գիճնին, քե քնած տեղ կսպանեն։
Կէրթաս, կէրթաս, գլխիվեր կիջիս ներքև՝
Գյառզվեր Թագավորի հողն։
Դե՛ Ռեխշե Բալաքից մազ քաշա, դի՛ քո ջղդան,
Օր ժամանակին նեղությյուն հնդիս, ձին Թողնեք
գա։
Գնաց Ռխշե Բալաքի պոչից մազ քյաշեց, դրեց իր
գրքան ու գնաց։
Գնաց մինչև ճաշին,
Իր հետ տարավ իրա քրոջ՝ Գուլշանե Բանդեյի
տղին, որը պատվի խողում որս կէներ։
Ըսեց.—Քու քեռին Թագավորի խետ կռիվ կէնա,
դու լոր կսպանե՞ս։
Տղեն հելավ խասավ քեռուն, տղի անուն Խերնեկ
էր,
Խերնեկ խասավ Ռըստամին։
Անտառից մե խատ ծառ քոքախան էրեց ու
հընգավ ընդու հետև։
Հասան հախպուր, կերան, խման, ըսեց.
— Ես մե քիչ քնեմ, դու հիմաց կտաս օր դևեր
գան։
Ջոք դրեց, Ռըստամ գլոխ դրեց վրեն, քնեց։

Շատ—քիչ չանցավ, Խերնեկ տեսավ որ՝ մի դև
գոմշու կաշին էրե տիկ,
Ուրանց ախպրտոնց համար էկե ջուր կտանա։
Տեսավ օր դև էկավ, Ռըստամի գլխից չոք
քաշեց,
Մե հատ քար դրեց գլխի տակ ու հելավ սկսեց
դևի խետ կռվել։
Դևին ճնքան խփեց, օր վիյավոր փախավ։
Հինքն էկավ նստավ, դևն ախպրտոնց հասավ,
Ջըսեց օր դառնարած ա տփել,
Ըսեց.—Հընգա, ջարդուխուրդ հելա։
Մեկ էլ ախպորն օղորկեցին. խինգ ախպերն
էկան, ջարդվան,
վեցերորդ ախպերն էլ էկավ, յոթ ախպրով էկան,
Տղեն հելավ դրանց հառեջ, կռվեց։
Տղին բերին գցին օղակի մեջ, էկավ, ոտ զարկեց
Ռըստամին։
Հելավ, Թուր քաշեց,
Ընոր խրմար դև սպանել՝ ինչ օր կանանչ արտ
քաղելն ա,
Թուր քաշեց, յոթի գլոխն էլ կտրեց, Խերնեկին
ըսեց.
— Տո տղա՛, հընչի՞ խասվար դևերուն։
Էկան նստան, խաց, ջուր խմեցին, հնգան
ճանապարհ,
Գնացին խասան Գյառզվեր Թագավորի խող։
Ռըստամ մի քիչ քնեց,
Խերնեկ հելավ քար դրեց Ռըստամի գլխու տակ,
Նային՝ տեսան զորք ա գալիս.
Զորքն էկավ հընցավ դեպի վերև։
Ըսեց.—Քեռի՛, էստունք հընչի՞ մեզ չեն բարևա,
էդոնց մեջ մե ահել մարդ կէր ըսեց.
— էս տեղ մե դև կա,
Գյարզվեր Թագավոր քառսուն օր կքնի,
Ոռնսունութ օր ա դևը Թագավորի կնիկ կլե, առե
գացե։
Մենք կէթանք կկռվենք, մեզի կջարդա։
Տղեն նայում ա դև քարեր քալեց, ջարդեց։
էդոնք օր էկան դարձան, դևը քնավ։
Խերնեկ հելավ գնաց, իր փետ վերցուց, խասավ
դևի դուռ.
Դև քնավ ա, Թագավորի կինն էլ օդերն ա մաժում։
Ըսեց.—Դևի օդներ Թո՛ղ, հելի արի։
Ըսեց.—Թող գնա՛, դև հելավ, քեղ կուտա։
Ըսեց.—Քե կսեմ՝ հելի արի՛։
Հախու հելավ էկավ։
Նստցուց, Ռըստամի գլոխ դրեց չոքի վրեն,
Խերնեկ գնաց դևի մոտ։
Հէրի դուռը փոքր ա, փեղ չմտի, զանեց դևի
դեմքին։
Հելավ քարեր վերցուց, հընգավ տղի հետևից,
էնքան զարկեց տղին։
էդ կնիկ հախու չհիմցու քեռուն, լաց հելավ.
Արցունք թափավ Ռըստամի քիթ ու բերնին,
Ռըստամ հելավ տեսավ՝ դևն հէնա՛ կուտա տղին,
Ռըստամ սպանեց դևին, էկավ ըսեց.—Տո՛
քյոփօղլու Խերնեկ,
ես քեզ չըս՞ի՝ դու տեղից ժաժ չգաս։
— Տո՛ քյոփօղլի քեռի, դու ես, ես ո՞նց չէթի, էս
կնգան չբերի, իմա՞լ կլեր։
Հելան գացին Գյառզվեր Թագավորի հրապարակ,
մե պառվու տուն.
— Նանե՛, մեզի տեղ կանե՞ս.
— Տեղ օր կա աստուն ա, իմ՝ էս ա փոքրիկ
մառան։
Խանեց ճանգամ՝ օսկի տվեց ըսեց.
— Գնա՛ ուտելիք բեր, տեղաշոր բեր։
Պառավ առավ էկավ, կերան խմեցին պառկան,
հառավոտ պտի էթան կռիվ։
Թուղթ դրեց, որ ես Խաթամշարա Ջալ Թագավորի
տղա Ռըստամն եմ,
Պատրաստ կացի, առավոտ կկռվենք։
Տարան տվին Թագավորին, կարդաց չոքեր դողաց.
— է՛ էսի էն տղեն ա, օր պտի գա ընձի խետ
կռվի, ընձի սպանի.
Առավոտ լուսն ու բարին բացվավ վըր ձեզ,
բացվավ վըր էնոնց,
Խերնեկ ըսեց.—Էսավուր կռիվ ես կէրթամ։
Հելավ իր փեղ վերցուց, գնաց խասավ, աջ ու
ձախ ջարդեց։
Խերնեկ հիրիկուն էկավ, կերան, խման, քնան։
Հառավոտ ըսեց.—Էլի ես կէթամ։
Գնաց նույնությամբ ջարդեց, էկավ։
Գյառզվեր Թագավորի աղջիկ բալկոնից տեսավ
Խերնեկին, ըսեց.
— Ես էտոր կառնեմ։
Առավոտ էկավ խոր մոտ,—Արի հերթվի որ դրան
չսպանես,
Ես տղին բերեմ քեզ տամ, դու տուր ինձ, տիկ
խանեմ։
Խերն հերթվավ, աղջիկ հելավ դավան զարդարեց,
Հինքն նստավ վրեն, գնաց զորքի ղեկավարեր։
էկան, Ռըստամ ըսեց.—էսօր ես կէթամ։
— Չէ՛,—ըսեց.—ես կէթամ։
Գնաց խասավ, տեսավ զորքի հառեջ աղջկան,
ուշաթափ հելավ, ընկավ։
Առան տղին տարան, Ռըստամ կմոռաս։
Տարան դրին Գյառզվեր Թագավորի հառեջ.
— Տո՛ լակոտ, դու իրեք օր ա զորքս կջարդես։
Աղջի՛, վերցու, առ գնա։
Աղջիկ առավ տղին գնաց.
Մինչև իր պալատի դուռ տարավ, տղին տարավ
իր սենյակ։

Ռըստամի մոտ թագավորի կնիկն էր, ըսեց.—
Ռըստա՜մ, ղոշախութուն չըս ընե՞ր։
Ջերից խանեց Ռախշե Բալաքի մազը, տվեց կրակ,
Աղոթրանին ձին խասավ, խրխնջաց։
Հելավ Ռըստամ, ձին մաքրեց, հագավ,
Թուր-թվանք, գյուրզ վերցրվեց ձեռն ու իջավ մեյդան։
Գյառդվեր թագավորն էլ էկավ.
Կռվան. երկինք գետին դումնել ա,
Հին մարդիկ կըսին.—Հսկաներն ա պատահած իրար։
— Ջախիրլմեքի մեյա (մեր աղոթքի ժամն ա),— ըսին,—ու դարձան գացին;
Աղջիկն ու տղեն կնային լուսամուտից։
Էդքան խփել էր Գյառդվեր թագավորին, արունլվա էր արե։
Առավոտ էկավ՝ սաղ-սալամաթ։
— Էդ իմա՞լ ա,—խարցուց Ռըստամ,—դու սաղ-սալամաթ ես՞։
Ըսեց.—Ես կախարդական հավուզ ունեմ, կլողկնամ, վերքեր իմ՛լա կլավնան։
— Մուխաննաթություն չէնես, ես էլ գամ, էրթանք լողանանք։
Գացին լողացան, խաքան ու սկսեցին կռվել։
Էդ օր էլ հիրարից բան չտարան։
Տղեն ըսեց.—Եթե գուլաշ բռնեն, իմ քեռին գետին կդնա։
Աղջիկն ըսեց.—Հիրիկվան էթամ ըսեմ գուլաշ բռնեն։
Աղջիկն հելավ էկավ խոր մոտ.
— Հայրի՛կ, ես կտենամ՝ էնդոր ձին քունից ուժեղ ա, էնի կզարկա քեզի.
Արի, գյուլաշ բռնեք, կթալես գետին, կսպանես։
Ես էլ էնոր քրոջ տղին տիկ եմ հանե, կախեր եմ պատից։
Գյուլաշի ժամանակ կըսես,—նայա՛, քրոջ տղիդ տիկ ա խանած։
Էնի յոթ գոմշու չափ կպակսի, դու կվերցուս, կզանես գետին։
Սաբախտան հելան, ձիով խասան հիրուր,
Ըսեց.—Արի՛, գյուլաշ կպենք։
Էկան սկսին, գյուլաշ կպան,
Էդ չիման տեղ դառավ գուքնեխերկ։
Ըսեց.—Ռըստամ, քո խեր ինձանից ի՞նչ տարավ, որ դու ի՞նչ տանես,
Քու քուրջ տղեն քրդեր եմ, տիկ ա,
Ռըստամ աչքի տկով նայեց, տեսավ տղեն նստած ա։
Ըսեց.—Դու նայա՛, դո՛։
Գյառդավեր թագավոր որ տեսավ՝ յոթ գոմշու ուժ պակսավ։
Ռըստամ վերցուց զարկեց գետին,
Գլոխ կդրեց, կուրքան էրեց ձեր բոլորին։
Գացին տուն, խերնեկն էլ էկավ,
Ամբողջ պետություն անցավ խաթամշարա.
Խերնեկին թագավոր նշանակեց,
Գյառդավեր թագավորի կինն առավ Ռըստամ։
Էկան հաղպուրի վրա, ջուր վերցուցին, խող վերցուցին
Էկան խասան խաթամշարա դաշտ։
Մե նախրորդ տեսավ, որ Ռըստամն էկավ,
Նախիր թողեց ու հա՛յ պալատ, լուր տարավ։
Տարան թագավորին աչքալուսենք։
Ջալն ուրախացավ, էդ ջրուց քսեց աշկերին, լուս եկավ, առողջացավ։
Յոթ օր, յոթ գիշեր խարսանիք արին,
Քեֆ, ուրախություն, աշխարհ վերցուց էդոնց ձեն։

## Գ

# ԲՐԴԱԿԱՆ ՎԵՊ

### 3(7). ԱԼԻՖՆ ՈՒ ՔԼԵՖԸ

*Հառաջ ժամանակ չորս ախպեր են հեղե. մեկի անուն Քլեֆ էր, մեկին՝ Ջիր էր, մեկին Թառաֆ էր, մեկին Ջաշաշ էր, չորսն էլ ազապ ին։ Եդո մեկ Ջաշաշ կէր, էդոր աղչիկմ՝ կէր՝ անուն Ալիֆ էր, շատ գեղեցիկ, խորոտ էր։ Էս չորս ախպեր նախատեհան հուրանց ջոջ աղպոր Քլեֆին ուղեն Ալիֆին։*

*—Էքմանք, քե մարդավարի տվե՞ց, կբերենք, քե չէ՝ զաթի, զոռով բերենք։*

*Հելան գացին։*

*Քոդեր կարգ ունեն՝ կոնխներին իրեք օր կըհարգեն, կպատվեն, իրեք օրից հետո նոր կխարցուն քե ընչի են էկե։*

*Իրեք օրն քմավ, Ալիֆն էդոնց ղզմաքն ա (ծառայութլուն) կէնաւ։ Ջիրն վերցուց ըսեց.—Ջաշա՛շ, մենք էկեր ենք քո աղչիկ մեր մեծ ախպորն հուղելու։ Մենք զոռ մարդ ենք, դու մեննակ, օր դու հեղես մեղի բարեկամ, էլ քե զոռ չհեղի։*

*Էս մարթ խելոք մարդ էր, միտք էրեց, հելավ էկավ կնգան ըսեց։*

*Կնիկն ըսեց.—Մա՛րդ, տենիս օր մենք մեր աղչիկ վերջ պտի կարգենք, էսոնք էլ լավ մարդիկ են։*

*Էկավ համաձայնվավ, նշան դրին, ժամանակ տվին հիրար։ Դե գարնան ժամանակն էր, էլի վախտն էր, էս մարդիկ կուզին էրթին ագրիճի։ Օր նշանվան՝ ուր փեսա Քլեֆ.—Ջի՛ր,—ըսեց, —էքմանք մեր խնամու քոչն էլ վերցունք խըտ մեզի ու նոր էրթանք։*

*Էս մարդիկ էկան քոչը վերցին, խըտ հիրար գացին, խասան Հնդու յաման թագավորի խողեր։*

*Էս մեկ օր Հնդու յաման թագավոր ուր ոզրին կանչեց, ըսեց.—Հելի՛, մեր էլի ժամանակն ա, քրդերը կգան մեր խոտի տեղրանք կառնեն կերցուն, մեր ձիանքներ սոված կմնան։*

*Հելան հինքն ու հուր վեզիր նստան ֆայտոն, էկան տեսան քրդեր հուրանց չադրեր զանել են, տավարն կարածացնեն։*

*Էս մարդիկ ավ կէնեին, կնստին ձիանք, կէքին ավ կէնեին։ Էս մարդու աղչկան՝ Ալիֆին, բերել են դարձ։ Ալիֆն էլ էկել էր, ուր խոր չլեր կլվեր, կմաքրեր, քուխ սիլան կապել էր վիզն, հինքն նխշուն, հաշկեր բալաք ու քրդներ էր, դհա էր կարմրե. չէ՞ որ վլացք էր կէներ, տաք չրու վրեն քրդներ էր, դհա էր կարմրե։*

*Էս թագավորն օր էկավ, Ջաշաշ սմավար էր կթալեր, նստեր էր կուտեր, կխմեր. նստեր թամաշա կէներ հա՞մ խնամու էլին, հա՞մ հուր էլին։ Էս թագավորին օր տեսավ, խասկցավ օր թագավորն ա, գնաց խունարավ, բերեց պատվեց, կերցուց, խմցուց, հիշկեց օր թագավորի աչք առե Ալիֆին, ըսեց.—Դու ի՞նչ տեսակ մարդ ես, որ առանց խնդրվելու էկել ես իմ ձիանքներու խոտատեղն ա կիջացնես։*

*Ըսեց.—Ես մեղավոր չեմ, ընձի բերողն ա մեղավոր, ընձի փեսեն ա բերե։*

*Ըսեց.—Էսա ի՞նչ աղչիկ ա, որ վլացք ա կէնա։*

*Ըսեց.—Իմ աղչիկն ա։*

*Ըսեց.—Քու աղչիկ կարգուվ ա՞, ապա՞պ ա։*

*Ըսեց.—Չէ՛, կարգեր եմ։*

*Ըսեց.—Քե էսի տվիր ընձի կնացու, քե չզարդեմ, քե չէ՝ քո օրեք կչարդեմ, կվերացում։*

*Էս մարդ միտք էրեց, խելոք մարդ էր, ըսեց.*

*— Կիտամ. էկան՝ հուրանց կասեմ, հուրանք քյարա էրին՝ քըխ էնին, չէրին՝ խող վըր հուրանց*

արևուն հեղի։ Ըսեց.—Թագավո՛ր ջան, բան ուղա՝ տամ, աղջիկն ա՝ կուրբան հեղի քեղի։

Էղան խնամի, հելավ աղջիկն առավ, դնաց էդ Ջաշաշն էդոր կծկծուն երկու օբի մեջտեղ կերթա-կիդա։

Համ, հելավ արևմտոց, էստունք ավի տեղն էկան, տնսան օր Ջաշաշ սևավորուկ կայնուկ ա։

Բևրին ավերն հիջուցին, Քլեֆ քշեց վրեն, ըսեց.—Ցա՛, անե՛ր, էդ ի՞նչ բան ա, ա՛յ մարդ,—ըսեց,—դու հո՞րի մուխա՛նաթույուն էրիք, հորի բերիք իմ անմեղ էլ կջարդոտեք։

Ջաշաշ տղեքներուն ղսա էրեց, ըսեց.—Լա՛վ ես էրե, է՛լ դու գործ չունիս, տաս օրից հետո օր գան տանելու, ես իմ կնգա շորերն կխաքիմ, դնեք կվերցում, իմ շարյաթով կտանեն, քիթ ու բերան ծածկուկ, քսան խոզի լավ տղեք կվերցեմ խրտ ընձի, կդնեմ մեծ սնդուկ իբրև ջեզ, դու էլ կբերես դևեք կշոքցուս, կբառնաս, կսես. Իմ աղջկա ջեզ կտնես հուր սենյակ, իմ աղջիկ լուս բացվի, կրացի, հրմնուն բաժին կիտա։

Տաս օր հետո թագավոր տոլ ու զուռնով, ֆայտոններով, ձիանքներով էկան, էրկու էլի մեջտեղ մեջլիս բացին՝, «խարս բերի՛ք, խարս բերիք»։

Քլեֆը դնաց կնգա շորեր խաքավ, առան էկան, դրին ֆայտոնի մեջ. Թագավորն էլ ողրի հետ նստան խրտ կշտին։ Մեծ սընդուկն էլ դրին դևեքին, սընդուկի փակը մեջից առան, դացին։

Թագավոր առավ էկավ, սնդուկը դրեց կալիդոր, հինք հելավ գնաց օթաղ. կերան, խմին, թագավորն էլ հրաման տվեց, թե.—Ժողովուրդ էսօր հրմնենը քըխ ուտեն, խմեն, պախակ քըխ չկայնեն, ես բախշում եմ։

Թագավորն հելավ էկավ ուր նշանածի կուշտ, Քլեֆն հելավ կայնեց։ Ըսեց.—Տկլոզդի, արի պառկի։

— Խա՛, մա՛րդ, դու պառկի ես ճրադն հրնցում, դամ։

Խորոտ տկլոզցուց թագավորին, մաուղեր խանեց շարեց, տղեքներուն խանեց՝ հրնգան քաղքի մեջ, հրմեն բրդին։ Սաբախատան Քլեֆը թուր քաշեց, կայնավ քաղքի մեջտեղ, ըսեց.—Ոն որ իմ թրի տկով հրնցավ, ընձի դրեց Հնդուլամեն թագավորի տեղ թագավոր, իմ ռըյաթն ա, կպախեմ. ոնն օր չէ՝ ձեղ էլ կքաշեմ սրի։

Հրմեն էկան հրնցան, Քլեֆին էրին թագավոր, Ալիֆն հելավ թագուհի։ Նստան, քըխ էդտեղ աբրին։

Հընդու յաման թագավորի քուր մե տղա ուներ. տղեն աշուղների մոտ սորվեր ա խայու, թուրքի, քուրդի խաղ, ըմա՛լ էլ ձեն կա վրեն ա-նուշ։ Որ աշղի մոտ տարան՝ չվերցին. մեկ աշըղ Ջուլալ կար, վերցեց, էդի շատ մոտ էր էդ էրեխի խոր հետ, սրան սպանած ին։

—Աշը՛ղ ջան, իմ տղին լավ խաղեր սովըրցրու, առնեմ էրթամ, Քլեֆ, Ալիֆ կա, էնդոր ճաշարան խաղ ըսա։

Ճաշարան էլ ո՛վ էր բացե, Ջաշաշ։ Տեսավ օր Ալիֆի մարդ հեղավ թագավոր, հինքն էլ բագ մարդ էր, էլ ժառանգ էլ չուներ, էդ մեկ Ալիֆն էր, ճաշարան բացեց հուր խերի համար, ձրի դան ուտեն, օր իբրև հուր խոքուն ճար հեղի։ էն հանդեն էս մարդ պատուելով առավ տղեն, էկավ Ջաշշի ճաշարան։ Դե՛, աշըղ ա, սազ թևն ա, մերն էլ խետ։

Ջաշաշ խարցուց.—Աշը՛ղ ջան, ո՞ր տեղից ես։

Ըսեց.—Անտեր լամուկ եմ, խեր չունեմ, ձեր ձեն լսեր եմ, էկեր եմ քո ճաշարան՝ բանեմ։

Ջաշաշ տղին շատ խավնավ, ըսեց.—Օր քեղ վերցում ինձ հոդեկան որդի, կմնա՞ս։

Մերն ըսեց.—Քո ձեռաց տեղ քու օտներ կպաքենք։

Տղին տվեց Ջաշաշին։ Տղեն օր խաղ ըսեց, մե զուլուղ անող աղջիկ առավ աման, էկավ հախպուր, տղի ձեն օր լսեց՝ հընգավ անկաջ, էլ չուր չկարողացավ տանել, զարձավ խանումին՝ Ալիֆին ղսա էրեց։

— Ալի՛ֆ ջան,—ըսեց,—քո խոր ճաշարան մե խայու տղա կա, խաղ կըսա, էմա՛լ խաղ, օր ինչքան մարդ կա, կկայնի կլսի։

— Հիրիկուն իմ խոր կխնդրվեմ, ճամփա՝ գա իմ մոտ։

Խոր խնդրվավ, խեր համաձայնավ.—ոչ թե մե օր, ամեն օր էլ քըխ գա։

Ճամփեց, աշըղն էկավ, աղջիկ լավ հարգեց, շատ խավնեց, ըսեց.— Հայրի՛կ ջան, իմ հարազատ ախպերն ա։

Քլեֆն էլ ուրախացավ։

Հընդու յաման թագավորին անմահական բաղ ուներ, Քլեֆն օր գններ սարախատան. աչք կթալեր բաղին, կուրխներ։

Քլեֆի ախպեր Ջիրն շուտ-շուտ կիգեր աշղի խաղեր կլսեր, կոտեր, կխմեր, կերթեր։ էն մեկ օր անաստված Ալիֆ քնավ, էրազ տեսավ. հուր խոր դևեքներուց մե դևա գնաց հընգավ հուր կեսեր դևեքներուն նե, մեկ նառի խեղդեց, իսկ սկեսերի դևեքներուց մեկ նառ էկավ, ուր խոր դևեք հրմեն խեղդեց։ Հելավ, խոր դսա էրեց հուր էրազ։

Խերն ըսեց.—տեսա՞ր օր Ջիրն առավ ուր էրկու ախպոր գնաց. էնդոնք իրեք են, քու մարդ մեկ ա. օր կռիվ ընգի, քու մարդուն կսպանեն։—Ըսեց.—Ալի՛ֆ, դու կռնա՞ս Ջիրին տաս սպանել, էն երկուս հե՛չ, էնդոնք բան չեն։ Ջիրն օր վերա-

նա, լավ կլի, վտանգը Զիրից ա, շատ էլ քու տեքըրն ա, հըմնօր գուքա, կերթա. էն վախտ օր գուգա, մարդիտ ըսա, դու ընձի բերեր ես քու խամար, թե՞ քու ախպոր խամար։

Ըդմալ ըսեց Քլեֆին։ Քլեֆ հելավ, աշըղի դևեն մըչ բաղին ա, էս մարդ հելավ սաբախտան ըսեց.—Օր էկավ նիաթ կախ, հուր ախպորն ըսպանե, օր ուրախ էկավ, չըսպանե։

Քլեֆս հելավ զենք առավ, խեծավ հուր ձին, որ էթա Զիրի գլոխ կտրա։ Օր գնաց, լսեց օր՝ Զիրը կերգա.

*Արաբի պես ձի ունիմ,*
*Քլեֆի պես ախպեր ունիմ,*
*Ալիֆի պես խարս ունիմ,*
*Աշխարքի տակ ընձի ի՞նչ դարդ ունիմ։*

Օր լսեց՝ թուր դրեց տեղ.—Էսի ընձի ա կգովա։

Ախպերն օր տեսավ, որ հուր ախպերն ա, հելան կայնան, փաթթվան, կխամբուրվին։ Օշխար բերին մորթին կերան, խման։ Քլեֆը կերավ, խմեց, հելավ ձին խեծավ, գնաց։ Գնաց, Ալիֆն տեսավ՝ ուրախ կիգա։

Գնաց խորն ըսեց։

Խերն ըսեց.—Կըսես, քու ձեռ չըմնեց ըսպանիր, ֆլան տեղ մեկ քյառսուն գյաղագան խոր կա, քարվանդա յա. էդ սար ու ձոր ըսկի ջուր չկա, բացի էդ խորուց։ Քու մարդուն սովըցու, ձիանք խեծին էրթան. էս մարդ թըլա հուր ձիանքներու մարդկանց սովըցու, որ կերթան, թըլա խարցու ըսա.—Զի՛ր ջան, ծարվըցեր ենք, էս տեղրանք ջուր չկա։

Էնի էդ խոր գինա, թըլա էթա, խանա։

Քլեֆն հուր տղեկներուն կսովըցու, կսա.—Ոմ ասեմ՝ մտեք ջուր խանեք, չմտեք, Զիր իր խամար կմտի։

Ըդմալ էլ էրին, միայն էս Քլեֆի ձին արաբըստանա յա։

Զիրն հելավ թե.—Ես ջրու տեղ գինամ, քշեք լթանք. խանենք խորից ջուր։

Զիրն հելավ, ճոպան կապին, հիջուցին, ջուր խանեց, ջրեց։ Էրկու ախպոր ձիեր էկան առան հիրար, հա՛ հայ ա՝ հիրար կխեղդեն։ Դուռն էկավ հընգավ մըչ խորուն, Զիրին ցավացողներ կային խորի մոտ կայնած, ըդոնք ըսին Զիրին, օր ձիանքն ա կպած հիրուր։

Զիրն ըսեց.—Ես խորու մչեն ձեն կիտամ, իմ ձին կթողա էնոր ձիուն։ Զիրն խորու մչեն կանչեց հուր ձիուն, ձին թողեց էնոր ձիուն, էկավ կայնավ խորու մոտ, տողաց, արուն շռեց։

Քլեֆն էն տեղեն տեսավ, էկավ ձեն տվեց, ըսեց.—Զի՛ր ջան, քի փորձի. կիջում ճոպան, կապա մեջքիդ, քի խանենք։

—Ա՛յ մարդ, գնա՛, ես գինամ քի ո՛ն ա կսովորցու։

Կախեց ճոպան, քաշին խանին, թուր քաշեց որ Քլեֆի վիզ կտրի։

Հելավ ախպոր ըսեց.—Իմ որձ կատուն հընգավ քու խոր՝ դու կդրա վիզը, քունը հընգավ իմ խոր՝ ես կդրեմ։

Հելավ ախպորն ըսեց.—Դու գնա քեզի, ես ընձի, քու մարդկանցից եկան իմ չան՝ ես գլոխ կդրեմ, իմ մարդ էկավ՝ դու կդրա։

Էրկու ախպեր հելան դուշման։ Էս բան աշըղի մեր լսեց, սաբախտան մեր հուր տղին սովըրցուց, դևեն բերին մըչ բաղին, դևեն հընգավ բաղ, ջարդեց, կերավ, փշրուց.

Քլեֆն հելավ տեսավ, ըսեց.—Էսի Զիրն ա բերե, օր խըտ ինձ կռիվ էնա։

Նետ ու անեղ քաշեց, դևին սպանեց։ Էդ աշըղ հելավ գոռաց.—Վա՛յ աման, իմ դևե՛ն, իմ դևե՛ն։

Քլեֆն տեսավ, ըսեց.—Տաս դևա տամ, մի՛ լաց։

— Չէ՛, իմ դևե՛ն, իմ դևե՛ն։

Ջաշաշը լսեց, ըսեց.—Ես ասու առջ երթում կուտամ, օր էմալ էնի քո դևեն պանեց սպանեց, ես էնոր թիկունքից պանեմ, սրտից թալա դուս. էս քու հարիֆ կառնեմ մոդեն։

Ջաշաշս հերթում կերավ։

— Էն մեկ օր կայնի Զիրին կանչեմ բերեմ, խեծինք, էթինք պատոհնք, ես պանեմ՝ էտոր ըսպանեմ։

Զիրն էկավ, զացին բաղեր։ Փեսին ըսեց.—Դու հընգի հառջ, տենամ իմ ձին կխասի՞ քու ձիուն։

Հետևանց պանեց, Քալեֆն հընգավ։ Ալիֆն տեսավ Զիրին, ըսեց օր.—Իմ անաստված խոր պանեց, Քլեֆին ըսպանեց։

Էդոր քաշին թալին պալի տակ։

Ըսեց.—Տղեկնե՛ր ջան, ղրու բոլուկ ա, փեդիմ՝ կտոր ա գտեք, տվեք ընձի։ Գտան տվին, թաթխեց փետ արունի մեջ, ղայի հառջ գրեց.—Զի՛ր, ինձի կուտաս կտանես, կդնես իմ աղրաքի մեջ, կխորես. գուգաս կհընգիս Ջաշաշի էլի մեջ, չուր հիրգուն կկտրես, ձին քշես գուգաս, կայնես իմ գերեզմանի վրեն, կըսես։

«Քլե՛ֆ ախպեր ջան, էՙլ չարդեմ», եր օր ընձենից ձեն էկավ, ըսի՝ «Հերիք աս, էլ չչարդես։

Ըմալ գրեց, խոքին տվեց։ Զիրը ըրեց՝ իմալ գրեր էր։ Միայն Ալիֆն բժշկի դեղրանք ունի, կըբուժա կլավցու։ Ջաշաշ լաց, գիր գրեց, տվեց լամկի, տարավ տվեց Ալիֆին։

— Ալի՛ֆ, քու ծնողն եմ, աշղի տղին խաթրին՝ Քլեֆին սպանե։

Աշըղի մերն էլ առավ տղին փախավ։

Ալիֆն ըսեց.—Քո՛ւ տուն ակոլի, դու կսես խելո՞ք ես. քո պալատի դեմ խոր փորա՛, ինչ դան լցվին, դու պրծես։

Ջաշաշն խորը փորեց, ղորքը էկան, լցվան մըջ խորուն. դանին Ջիրին էլ էրին յարալու, գնաց Ալիֆի մոտ։ Ալիֆ Ջիրին քնցուց տեղերով, դրեց մըջ սընդուկ, ինչին ջոջ գետ, գետ քշեց, տարավ։

Ջաշաշ հրմեն քաշեց սըրի, ջոջ մարդկանց էլ կրակ տվեց, վառեց։ Ալիֆն ու խերը հընգան առխայինն։ Ջիրն էլ գնաց հընգավ ծովու մեջ, հարյավ քամին կայնավ։ Թագավորըմ կա, էդ թագավորի քաղաք իրեք հընգեր կան, էն մեկ լավ հոռն կտենա, էն մեկ լավ լողդինա, էն մեկն էլ թոռչի ա։ Էս մարդիկ տեսան սնդուկ. մեկն ըսեց. —Տղեկնե՛ր, մե բան մեր յան գուգա, լողա՛ գնա, բե։

Լողվոր գնաց, էն մեկն ըսեց.

— Ես տալիք եմ, թե փող հեղավ՝ ինձ կիտաք շատ։

— Ինձ էլ՝ կնիկ օր ըլի, տվեք։

— Ինձ էլ՝ ճոթ օր հեղի, տվեք։

Բերին խանին Ջիրին, տեսան, առան շլկով, տրին թագավորի հառեջ։ Էս տեղն էլ մե աղջիկ կա, Մրջանե Ջազու ա անուն, Ալիֆի պես դեղեր ունի։ Տեսան, որ էս մարդ վիրավոր ա, դեղ դրին, լավցուց։

—Ես ձի կպախեմ, ձիարած եմ։

Բերից կերցուցին, աշխատանք տվին, գնաց, ձիանք տարավ ջրի՝ ծովու ափ, հինքն էլ կլողկնա։

Էս մարդ օր տեսավ, որ սա լավ ձի կպախա, կուզա իր աղջիկ տա էստու։

— Տղա՛ ջան, իմ Մրջանեն կիտամ քե։

— Հայրի՛կ, ես մուրազ ունեմ, էրթամ կատարեմ, գիքամ կառնիմ։

Մե օրմ՝ ծովից մի խրեղեն ձի կըլնի, էդ ձիերի խետ կղբաղմի, էրկու քուռակ կհլնի։

Մնաց, էս մարդ էս աղջկան ըսեց.—Ես կերթամ, կրակ կհնեմ. եթե իմ կրակ տեսար, ես կհնդանի եմ, եթե չէ՝ ես մեռուկ եմ։

Էն մեկ օր մե հուրիշ թագավոր էկե թագավորի աղջկան հուղնգան, հիմցե, օր թագավոր հուր աղջիկ տվե հուր ձիարածին, էս մարդ գիր գրե թե. «Քո ֆլան-բեհվան, ես գուքամ վըրը քե կռիվ»։

Թուղթ բերած՝ տված էդ մարդուն։

Թագավոր վախեցավ։ Տղեն հիմցավ, հելան կռիվ։ Զիանք բերեր ա ծովու ափ. էս մարդ տեսավ, հելավ, սկսավ կռվել. հընգավ զորքի մեջ, ջարդեց, փշրեց, մե քանի մարդ փախան։

Էկավ ըսեց.—Թագավո՛ր, էս մարդկանց քոքքն կտրի, հրմի կերթամ իմ մուրազին։

Ալիֆը պառկե տղա ա բերե Քլեֆից, անուն դրե Ջավռաք. շնից հելե շան թուլա, էսի մեծացեր ա։

Ջիրը առավ երկու քուռակներ, խեծավ էկավ, գնաց ուր էլի տեղ, տեսավ որ ավերակ ա։ Քշեց սարի դոզ, քրդերը տեսան, եկան հառեջ, ըսին թե.—Ալիֆն պառկե, աղջիկ բերեք, մեռավ։

Խափին, որ Ջիրը կռվի, չխնայի Ջավռաքին։ Քին տարավ քաղաք նալելու, մե հատ լամուկ դռան կայնուկ էր, օսկի տվեց, ըսեց.—Էս քուռկին նայա, մինչև գամ։

Լամուկ բռնեց, կայնավ, էս մարդ նալել տվեց։ Ջաշաշն էկավ, քուռակ տեսավ, լամկու ձեռ տեսավ՝ խրեղեն քուռակ ա։ Ջաշաշն օսկը տվեց, քուռակն առավ, գնաց։ Ջիրն էկավ, տեսավ չկա, խասկցավ։ Ջաշաշին հիմաց տվեց, օր եկե կռվի։ Կռվան. Ջավռաքին Ջաշաշ կխեծու ձին կտա առաջ, խորոխպոր խետ կկռվի. չեն հաղթի իրար։ Մեկ ծեր քուրդ Ջիրի խաց շատ էր կերե.

— Ա՛յ, հա՛յ.—ըսեց,—դու տե՛ս էսոնց խիղճ, էսի էկե ուր ախպոր արնքի վրեն ա կկռվի, ուր տղին սովրցուցեր ա, կիտա ուր ախպոր տըղեն՝ ուր խորոխպորն էլ սպանա։

Քուրդն Ջավռաքին ըսեց.—Քու անունը շան թուլա են դրե. էսի քու խորոխպերն ա, դու ճիժ ես հելե, չես գինա, Ալիֆ քու մերն ա, Ջաշաշ քու պաբեն ա։

Ըսեց.—Ըը իմա՞լ էնեմ։

Ըսեց.—Դու ձին ուզա, շորն ուզա, օր պախուկ ա, թե տաս՝ ես կկռվեմ։ Ջավռաքն հելավ ըսեց.—Թագավո՛ր, դու, քո կնիկ, իմ մեր էկեք, էսոր ես պտի հաղթեմ, էկեք թամաշա։

Թուղթ բերին տվին թե՝ սաբախտան էլի կռիվ պտի էթա։

Ջավռաք ըսեց.—Ըմ էթա։

— Հորի՞։

— Իմ տակի ձին, իմ շորեր լավ չի, թուրն լավ չի։

Ջաշաշ բերեց տվեց։

Քշեց, Ջիրս տեսավ օր ախպոր ձին ա, ախպոր շորերն ա։

Ըսեց.—Էսի երիտասարդ ա, էսօր իմ վերջի օրն ա։

Հախու ուզեց օր դառներ փախեր, Ջավռաքն ըսեց.—Խորոխպե՛ր ջան, հրմեն բան հիմցեր եմ, մի՛ փախի, ես Ալիֆի, Քլեֆի տղեն եմ։

Ջիրն տվեց վրե, Ջավռաքն փախավ, մտան ըտոնց մեջ, քաշին երեր ջարդին հրմնուն, հելան ժողովրդին ըսին։ Ջավռաքի անուն փոխին դրին Վրեժ, դարձուցին թագավոր։ Էկան Մրջանե Ջազուի մոտ, մեկ-մեկ ղսա էրեց, պատմեց, խարնիկս էրեցին, խասան հուրանց մուրազին։ Ախպոր

ուղին կարգեց Մրջանե ջաղուի հետ, թագավոր դարձրեց։

## 4(8). ԱՔՈՒՍԵԹԵ ԲՆԱԼԱՎ

Առաջ ժամանակ մեկ Միրե Արաբան կար, հինքն էլ բագ էր, քրդերու մեչի բագն էր։ Էտոր հառեջ կաշխատեր մե անտեր լամուկ՝ Մրդբլակո կկանչին, հինք խելքից փշում թեթև էր։ Անտեր-անտիրական էր, էկավ բագին խնդրեց, օր վերցու նոքար։ Էս մարդուն վերցուց խնամեց, շատ անցավ, էս մարդ Միրե Արաբանի թուքնից կգողներ, կայլան կքաշեր։ Կայլոն թուքուն կլիններ, կրակ էլ կդներ վրեն, էն կայլոնից օլխրի ճան էր կախե մոտեն, էս մարդուն էլ ամեն օր կոնախ գուգեր։ Գուքին օլխար, ձի, դավա ուզելու։ Իրիք խատ բագ թուրք էկած ա էս մարդու կուշտ, խալիք փռե, բալիշներ դրե քևերու տակ ուրանց։ Մրդբլակոն շարոխ կխոտոտ էկավ, կայլոն թուքուն լցեց, օր պտի քաշա, եկավ խալիչեք կոխկըրչեց, կրակ վերցուց, հընցավ։ Միրե Արաբան ամանչեց։

Բագեր խարցուցին.—Միրե Արաբան, էսի ո՞վ ա.

Ըսեց.—Իմ նոքարն ա։

Ըսեց.—Էդ իմալ անամոթ մարդ ա։

Միրե Արաբանի սիրտը նեղացավ։

Էս մարդիկ գնացին։ Մրդբլակոչին կանչեց, բագին էլ մեկ խատ աղջիկ ուներ, տղա չունի։ Աղջկան անունը Մրջանե Ջաղու էր։

Ըսեց.—Մրդբլակո՛, դու էսքան ժամանակ մնացեր ես, ըստոց դեն ես քե չպախեմ. քե ձի, հագուստ կիտամ, փող կիտամ, միան պիտի էթաս։

Լաց էս մարդ.—Հընչի Միրի Արաբան։

Ըսեց.—Քյոփօխլի՛, դու չամչցա՞ր հէրեկ, իմ բագերի հառեջ էկար, իմ խալի խալիչեք կոխեցիր, կրակ վերցուցիր։ Ջոջանց առած կա՝ ջուր մի տեղ գոլավ, կխոտի, ուրեմն, դու ընձնից չվախենաս, ընձի խամար էլ ամոթանք ա, էդուր խամար էլ քե սուրգուն կչենեմ։

Լալով կնգան խնդրվավ, աղջկան խնդրվավ։

Ըսեց.—Չէ՛, իմ խոսկ, խոսկ ա։

Բերին լավ ձին, լավ հագուստ, ուրին ուղելիք-պաշար, բավագանի էլ փող տվեց, Մրդբլակոյ խեծուցին ու ամառ ժամանակ էր, օր կըքոչին ագրիջի ուրանց օբա կզանկին, ուրանց մալ կապրըցուցին։ Մրդբլակոն լալման հելավ, շնորհակալ հեղավ էտ մարդուց, խեծավ ձին ու էկավ։ Ջաղդեն գալով գալով՝ էկավ մեկ օրի հանդիպավ, խարցուց.—Քուրվահի՛ք ջան, էս ի՞նչ օբա յա։

Ըսին.—Հասան խանի օբեն ա, օբաբաշին ա, օբի բագն ա։

Քշեց ձին, էկավ կայնավ էդոր դուռ, բարև ըսեց, ձիուց հիրուն թալեց Հասան խանի օդաց վրեն։

Հասան խանն ըսեց.—Դու ի՞նչ մարդ ես։

Ըսեց.—Ես անտեր-անտիրական քուրդ եմ.— ըսեց.—քու անունն լսեր եմ, էկեր եմ քո մոտ, օր դու ընձի առնես քու թևի տակ, պախես։

— Է՛, ինձի էդքան չոբան ու գառնարած կա, մեկն էլ դո՛։

Էս մարդուն սկսեց պախել։ Իրեք ախպեր են. մեկի անուն Ռզդո յա, ազապ ա, մեկ ախպոր անունն Բալաղակա յա, էսոր ախչիկի՛ կա, ուզե ախպոր տա, քրդու օրենքն ըլոմալ ա, չկողեն ախջիկ տենեն էթա։ Ռզդոն չուզա իր ախպոր ախջկան առնեն։ Հուրանք կոշաղ չես են. որ նոր փաջուշն կեղի մորից, կտանեն կդնեն.

*Թախլ թախլի մալա,*
*Ջաղ ջաղե մալա (որ մեր տղից ։)*

Էս մարդ իրեք տարի էլ էս տեղ ծառայեց։ Էն մեկել օր էկավ մտավ տուն, տեսավ օր Հասան խան օդներ խանեն, ձեռներ դրե գլխու տակ, ուրին կդովա.— Յարաբ ընձնից հարուստ, գոռ, լավ կա՞ աշխրքի նե։

Մրդբլակոն խելքից թեթև էր, ծծդացա։

Ըսեց,—Շան որդի՛ ի՞նչ էղավ, որ իմ խոսքի վրեն կծծդաս։

Ըսեց.—Օտներուդ մեռիմ, Հասան խան ջան, մե մարդ կա, ես քու դեմ իրեք տարի եմ աշխատե, ընտու դեմ տասխինդ տարի. էն օր անձրև գուքա, որ վառելիք չեղի, կումաշ կվառա, կոնխներուն կպատռվա։

Դու գվամ հարուստ ե՞ս, գվամ քեզի մա՞լ կա, էնի ավելի հարուստ էր քենե։

Ըսեց.—Ավատա՞մ։

Ըսեց.—Ավատա՛։

— Կէրթամ էդ մարդուն կոնախ, տեննամ, եթե քո խոսկն ա, դու պրծար, թե ես գոռ եմ էնդոր վրեն, քեզ կատակցամ։

Մնաց, բարի լուս բացվավ վը ձեզի, բացվավ վըր էտոնց, կանչեց ուր ախպրներին, խորոխպըրտինքներին, մե քսան խոքի, խեծան գացին։

Էստոնց էրթալու ժամանակ անձրամ՝ բռնեց, էնպե՛ս էստոնք թրջան։

Էս մարդ օր քշեց, լամկուն էլ կարոտցած ա ընդոնք, էդի հառեջ ա կէրթա, օր խաղինին խմաց տա։

Խասան էն վախտ օր՝ օչխար էկած ա, հինքն էլ պալտոն առե հուր քևերուն, էտոնց արանք կերթա ու գուքա։

Հանկարծ շրջվավ տեսավ՝ Մրդբլակոն ա, խոր տված ձիով դուքա. խասան հիրար խամբուրին.

Ըսեց.—Բա՛զ ջան, էսա ձիավորներ քե կոնախա՞ ա՞

Ըսեց.—Մտի տուն, չադրներ զան, ջլեր թալ ու պատրաստի՛։

Ջոբնին ըսեց.—Գնա՛, իրեք չորս խատ ղոր մորթա՛։

Մորթին, օթախ էրին, աւլաս-դումաշ կվառա, օխշրներ կխորովա՛։

Մրդբլակոն էկավ, իրեք ախպոր կանչեց, ցույց տվեց, թե իմա՞լ ա կպատրաստվեր։

— Մրդբլակո՛, քո խոսկն հելավ։

Իրեք օր կերան, խմին, դարձան էտոր աղջըկան ուզին Ռզդոյին։

Միրե Արաբանին կնգան ըսեց.—Բա՛զ ջան, մենք էկեր ենք քո աղջիկը ուզենք Ռզդոյին, էդոնք էլ քո նման մարդ են, իրեքն էն կլեն քեզի ախպեր ու բարեկամ, քու աղ ու խաց ես չեմ կորցու։

— Մրդբլակո ջան, մեկ աղջիկ ա, կուրբան քիզի։

Նշանաբան դրին, մատնիք փոխին, պայմանավորվան յայլաղից հետու։ Դացին տներ, էս աղջկան ուր խոր տան մեջ մե դևա բռնին, զարթարին, ջհեզ դրին վըր դևին, դրին ջաղդի ու քրդեր առան գացին։ Էսի էկավ հելավ Ռզդոյ կնիկ։

Ինը ամիս թմավ, Մրջանե Ջազուն չոք զարկեց գետին, մեկ խատ բալաբան տղա բերեց։ Էստոնք էլ սովորություն ունեին, խալիք փռուկ հոտաց, խորոխպրտինք դուգին, կնստին, կսա կէնին։

Էկան աչքալուս բերին, թե Ռզդոյ կնիկ պառկավ, մե նխշում տղա բերեց։

Ըսեց.—Գնացեք էրեխին բերեք, մենք տընտղենք։

Էկան, փաջուզը տարան, էն ջոջ ախպերն առավ ձեռ, ըսեց.

Թախըլ թախլի մայա,
Ջաջ ջաջի մայա։

Բայց մյուս աղպերն ըսեց.

Թախըլ թախլի մայա,
Մա ջաջ ջաջե, նա մին ա
(Թախլ մերն ա, էսի մեր տղից չի)։

Ջոջ ախպեր բերեց խոր դևին, էդ փաջուզ կապին մոր դոշ, խանին խեծուցին ուր խոր տված դևեն, ճամփին հուր խոր տուն.—Մենք էդ թավուր աննամուս խարս չպախինք, էդի բիջ ա։

Էս Մրդբլակոն հախու փախավ։ Էս դևեն հընգավ ագրիջի դուրան, գախ դաս արծլով, գախ փուշ ուտելով էկան, անծրևմ՝ տվեց վըր ըսոնց, խասան մե յալլի, տեսան ըսոնց, բարևին, խարցուցին։

Մրջանե Ջազուն լաց, ըսեց.—Էսի ի՞նչ օբա յա՛։

Ըսին.—Էսի Ավտի օբեն ա՛։

Աղջիկն ասսու հառեջ երթվել էր, թե.—Դևա ջան, օրտեղ որ չոքես, էնտեղ էլ կիջենք։

Դևեն կերել էր կուշտ փուշ, խոտ, ծարավցեր էր, էդ Ավդի օբի մոտ հախպուր կէր, չոքավ ջուր խմեց, աղջիկ հիջավ, ուր փաջուզն առավ, նստավ դևի կոլթղի տակ։ Դռեք էն տեղեն էկան։

Ըսին.—Կաճկա ջան, մեր Ավտեն ռահմով ա, ժառանգ չունի, արի քե տանենք ընտու մոտ։

Ըսեց.—Չէ՛, ես ասսու հառաջ ուխտ եմ արե, իմ դևեն դոր որ չոքավ, ես էնտեղ պտի մնամ։

Ինչ էրին, չկրցան։ Օկան ըսին Ավդին, ըսին օր չեկավ։

Ավդեն մարդ ճամփեց, ինքն ուր օդնով եկավ, աղջիկ չգնաց։

Ճարն ուրանց կտրավ, բերին մեկ լավ չադր ղարկին էտ տեղ։ Մնաց, փաջուզ առավ չոքնավ։

Մրջանե Ջազուն սաբահտան կհելի կեթա Ավդի տուն, օխշարն կկթա, գործ-մործ կենա, չուր հիրկուն, հիրկուն կառնի հուր տղեն, կուգա կքնի։

Տղեն հելավ տասխինգ տարեկան, անուն դրին Սևրի, յանի սևհերեսութենով ա հեղե, վի ճժու խատ խաղա՝ թև կկոտրա, ոտ կկոտրա, քըրտեր կգան կռիվ։

Էդի օր էղավ քսան-քսանխինգ տարեկան, էմալ կհլնի մեր բան, մեր օբեն կհնցու։ Էս մարդ բերեց էրկու հարազատ լամկու, կասեր տարեք, պտոտցուցեք, հիրկուն բերեք։ Խաց կվերցուցին կերթին։ Դու ինչ կսես, էս մարդ ուր կիսրերի տան խարջ պտի տա, էրկու դևու ճամփած էկեր ա Ավդի օբեն օր պտի խարջ ժողվեն։ Մեկին փարա չկա, խալի ա տվե, քեչա յա տվե, օշխար ա տվե, էրկու դևի բեռ հեղեր ա։ Հիրկվան էլ տղեն գնաց վըր հախպրին, ջուր խմեց, ջուրն պաղ էր, հելավ շանջու։ Լամկներուն ըսեց.—Ես շանջու եմ, հելեք։

Էս մարդ ուր խետի լամկներուն, մե խատ էլ փետ քաշե քոքեն, առե ուր ձեռք, օր լամկներ խոսքը չէնեն, կզանա։

Էս մարդ խարցուց, թե.—Էս ի՞նչ ա մեր օբից կէրթա, երկու դևա։

Էն մարդ ըսեց.—Սևրի ջան, էս դեն օր մենք էկե նստեր ենք, էստերանց պտի խարջ տանք, հուրիշ մարդու։

Սևրին ըսեց.—Հորի՞, էսի ասսու խողն ա, ի՞նչ խարջ, ի՞նչ բան.—էդի բռուց.—Օհո՛, կայնեք։

Ականջ չէրին։

էկավ մեկի չանեն բռնեց, աղմներ լցրեց բերան, էն մեկին էլ զանեց, հրմեն ինչ առավ, բերեց։

Էս մարդ վախեցավ, ըսեց.—Այ հա՛յ, էդոնք իրեք ախպեր, ես մենակ, էկան՝ հրմնուն էլ կկըտրեն։

Բերեց դևեք հիջուց, չոքցուց, բեռներ առավ ցած, կայնավ օբի մեջ բռռաց.

— Քրթե՛ր, արեք ձեր ապրանք տարեք։

Ավդն ըսեց.—Տո՛ Սևրի չան, օդնեռուդ մեռնեմ, ախր օրենք էր, մենք պտի տինք, էդ ի՞նչ էրիր։

Ըսեց.—Դո՛ւ, մի վախեցիր։

Էս մարդիկ մենկել օր հելան գացին։ Էս մարդիկ օր տեսան էդոնց խաղ, ըսին.

— Նա կռնաք դուք Ավդից խարջ առնեք, ոչ էլ. մե լամուկըմ կար, էն ի՞նչ ուժ էր, մե դոբ ա զանե մեզ, հա՛։

Հելավ մե խատ ղոշաղ քրդու նամակ տվեց, տանի Ավդին, օր սաբախտան կռիվ գուքամ քեզ։

Նամակ բերեց Ավդին, Սևրին առավ կարդաց, հելավ նամակ խառեց ճղեց, քրդու գլոխն էլ աղբալ կտրեց։ Սաբախտան հելան կռիվ։ Սևրին հելավ առաջին կռիվ, մերն ըսեց.

— Լաո՛, իմ ծծի կաթ քե խարամ հեղի, դու չզանես սպանես (պիներ օր իր ջոջ տեքրն ա)։— Ըսեց.—Տղա՛, լուսուն օր կսեն Դարաբեկորն ա քե խետ կկռվի, չզանես սպանես, կիցկես ձիուց, գլոխ կկտրես իմ չադրի կուշտ, կիդաս ինձ, նոր կեթաս Ավդոյ կուշտ։

— Լա՛վ,—ըսեց,—ադե՛ ջան։

Էկավ կռվան, Դարաբեկորի գլոխ կտրեց, բերեց տվեց մոր, եկան բագի մոտ։ Քրդեր մատաղ ա կչենեն, Սևրին կգովչեն, մեր խոգին իմալ կազատես։

Երրորդ օր խերն ա գուքա կռվի։ Ոզդոն չառավ ըտու աղչկան չէ՞, բերին զարքրին, քե էսի ազաբ տղա յա, քըխ աչք քցա ըստոր, Ոզդոն զանա տղին սպանա։ Ոզդոն էլ իլնչ գիներ, օր էտի հուր տղեն ա, հուր խետ կռվող, տղեն էլ չգիներ։

Մեր խնդրվավ տղից.—Տղա՛, հեսօր կսես Ավդին, կսես քըխ իրավունք տա, ես էլ հլեմ թամաշա։ Բալա՛ (հիմաստուն էր կաճեն), ախչիկ կբերե քե նշանց, քու աչք չթարթես, էս կռվողին էլ չսպանես, սաղ կբերես, կհիջուս իմ չադրի դուռ, օր ես սպանեմ, բրթեմ, իմ սիրտ դինջանա։

Հելան գացին թամաշա էրին։ Կռվան, խոր զանեց քցեց, բերեց հիջուց մոր չադրի դուռ։

Ոզդոյ աչքեր խավրավ, էն օր կնիկն ա, կըճանչնա, օր էսի հիր մարդն ա. կնիկը բերեց քեչեմ թալեց, ըսեց.

— Դու ո՞ն ես։

— Իմ անուն Ոզդո յա։

— Քե կնիկ հեղե՞։

Ըսեց.—Հեղե։

— Բա քու կնիկ ի՞նչ էրիր։

Ըսեց.—Իմ կնիկ բենամուս էր, Թողեցի։

— Քու կնիկ բենամուս չի, ախպերդ էրեց, բա դու ըսկի չհաշվի՞ր, քե երբ հեղավ էրեխեն։ Սև գա վրեդ, քեզնից հեղե մե տղա, էդ կռվող էնի։ Անուն էլ Սևրի ա, յանի քե մեր սևբեռուքենով ա բերե էդ տղեն։ Գլոխն էլ նշանց տվեց Ոզդոյին։

— Էս քո ախպերն, ա՞։

Ոզդոն ըսեց.—Խա, իմ ախպերն ա։

Ըսեց.—Է՛սի քու կնգա տուն քանդե, դու չամչըցա՞ր, օր կնիկդ էդ բանի տեր չի, էնի ուր ախչկա խմար կէներ, օր ուր ախչիկ տար քեզի. մեկ ա քեզի էդուց բեթար կէնի։

Կաց, ուրին թալեց վըր օտաց.

Ըսեց.—Դու չճանչնաս ընձի, ես քու կնիկն եմ՝ Մրջանե Ջաղուն եմ։ Հելավ պատվեց, խմցուց, դրկեց ուր մարդ ու պատկավ։

Տղեն էկավ տեսավ, խանչալ քաշեց, օր էրկսի վիղն էլ կտրի, մեր Թռավ հելավ նստավ.—

Մենք քո ծնողն ենք, էսմլա յա հեղե։

Ավդեն էլ ըսեց.—Խա, լա՛ո, ըդմլա յա։

Էկան նոր օբի մարդիկ, լսին, քեֆ, ուրախութին էրին, ամիսմ՝ մացին Ավդի մոտ։ Ոզդոն հելավ, իր կնիկը վերցուց էկավ, տղի անուն փոխին, դրին Աբուսեթե Բնալալ (իբրև տղեն եկավ խալըլավ)։

Որոշեցին Դարաբեկորու կյաճկեն ուզին կնիկ Աբուսեթե բնանլալին։ Խերն էկավ տեսավ, օր ախչիկ լավ մարդ ա առե։ Մե քրդու դռե էկավ կայնեց ախ քաշեց, ըսեց.—Մեր կա Արաբստան էնոր ձի մը կա, անուն Ռաջար խալի. օր էնի բերես խեծնես, էլ քեզի դարդ չկի, օր Դարբեկորու կյաճկեն առեր էս, դու էլ էդքան խորուտ ես։

Դևեն քյաշվավ գընաց։ Տղեն գիշեր լոմախ քյաշեց դրեց հուրանց օրթլալ. ըսեց—կնիկ, իմ սրտի վրեն մուրազ հեղավ, լուր չէրթամ իմ մուրազ կատարեմ, ոչ ես քեզի մարդ, ոչ դու ինձ կնիկ։

Տղեն հելավ գնաց Արաբստան, էկավ խասավ գետի. գետա կարմունջ չկա, գետան ափան կամիշն հելե երկինք։ Աբուսեթե Բնալալ հնցավ կամշի նե, նստավ։ Դու ինչ կսես, քոլի տղա կա յոթ աղբեր ունա էդ երդրի թաքավորին թալած թաքավորությունից, ըստոր աղջիկմ՝ կա, անուն Շաքյարնուշ ա, գուզեն հուրանց պզտիկ ախպոր, Միրն ինատու չիտա, էս քոլի տղեն ուղնգան ա ճամփեր, Միրն չտվեր ա։ Մկա պախ կպախեն, օր էս աղջիկ էլ փախցուն, էս Մրի ձին էլ փախցուն, չաջողվի։

Պառվու մեկ, քոլու տղեն գնաց օսկով գրավեց.—Նանե՛, վերև աստված, ներքև քեզի, քեզի

էսքան օսկի կիտամ, կարա՞ս Շաքյարանուշին՝ Մրի աղջիկ, բերես քո տուն, խաստս իմ ձեռ, էլ դու բան չունիս, չուր քո մախման ժամանակ, իմ ջոջ ախպեր թագավոր ա, կիդաս, քե լավ կպահեմ։

— Չուր լուսուն ընձի օր տուր։

Թըխ պախա, քոլի տղեն դառնա էրթա։ Մենք դառնանք նանեյ վրեն։ Սև ու սուդ բացվի նանեյ վրեն, հելավ գնաց դուռ զանեց, աղջիկն էկավ դուռ բացեց, էկավ, հընկավ թագավորի օտաց, ըսեց.—Դինա՞ք հորի եմ եկե. դուք գինաք օր ես անտեր պառավ եմ, բուրդը լվացեր եմ, Շաքյարանուշի հնգերտիկ բերեր եմ իմ տուն, կկանչեն, կսեն գնա Շաքյարանուշին բե, կսա էնինք, վարցք ա մեղի։ Արևով տանեմ, արևով բերեմ։

— Նանե՛, դու գինաս, օր քրդու տղեկներ մեր աղջիկ կուզեն. կփախցուն կտանեն, մեզի կենեն խայտառակ, չիտանք.—Վա՛յ, ես արևով տանեմ բերեմ։

Համոզեց, Շաքյարանուշին բերեց, քոլի տղեն Շաքյարանուշի ձեռ բռնեց, քաշեց բերեց էն տեղ, օր Աբուսեթե Բնալալ կամշներու մեջ նստուկ ա։

Քոլի տղեն օր աղջկան կքաշա, աղջիկ կպառաստա.—Վերև աստված ներքև դու, ուղընգան ճամփա, որ իմ խեր չտվեց, ես իմ կամով գամ քո խետ. ընձի մի խայտառակա, թող էրթամ անաբատ իմ խոր տուն։

— Չէ՛, ի՞նչ ա կսես, շան տղի աղջիկ, կայնի քաշեմ էսա տեղ քե խայտառակեմ, նոր կթողեմ էթաս։

Աղջկա չարեն կտրավ։

Էսի էլ լավ կլսա, ջղայնացեր ա, աչքերուց արուն կկաթա։

— Դու էղիս քո աստված, թող չուր զանեմ իմ հերես, սիրտս կկայնի, մեկ խաչ խանեմ իմ հերես։

Հինք կայնավ, աղջիկ չուր զանեց ըսեց.—Քոլի տղա, կսեն մեկ երգիր կա, Աբուսեթե Բնալալ ա անուն էդ տղի, կըսեն էնդոր չոմբախ տկեն մարդ չի պրծնի, ես իմ աստուց կխնդրեմ՝ էնդոր չոմախ վըր քո վզին հելի։

Ասելն ու տղի զարկելը մեկ հելավ։ Աղջիկ խրտավ, կայնավ էն չան, տղեն հընգավ։ Տղին վերցուց թալեց ճահճի մեջ։

—Ես Աբուսեթե Բնալալն եմ, ախչի չան։

— Դու դո՞ր ա կենքաս։

— Ըսեց.—Էս քաղքի թագավորի ձիու՝ Ռաջարխալիթի համար եմ էկե։ Ես նշանլու եմ, քրդեր դու գինաս, ղալան կուզին, կասեն, օր էդ ձին չիդաս, իմ ախչիկ չիդամ քեզ։ Մուրազի վրա եմ։

— Վայ Աբուսեթե Բնալալ չան, ես էլ քե կուրբան, ձին էլ քեզ կուրբան, դու որ ինձ փրկիր։ Ես կէրթամ իմ խոր տուն, դու կբռնես էդ չրու կրաղ, գուքաս, մենք ձիերու թրքեր խաներ ենք, թափեր ենք, դու կգաս էդ փթրի մոտ, ես քե խաց կիտամ, կուտես, ձին թամբեմ, գյամեմ, խածիս, էթաս խաստս քո մուրազին։

Աղջիկ գնաց, մեր ու խեր տեսան։

Ըսեց.—Չուր ղսա էրինք, հանքցանք, շուտ էկա։

Խաց կերան, արև մտավ, մութն հընգավ, հելան քնան։ Աղջիկ հելավ խաց տարավ տղին, հինքը գնաց ձիու հետևից։

Թամք ու գյամ կամոդ դրուկ ա, բալնիս խոր չեր դրուկ ա. բալնիս խանեց, թամք ու գյամ խանեց, քյշեց տարավ տղի կուշտ։ Տղեն հելավ, միայն աղջիկ մտեն գնաց, չսեց ձիուն չեղի զանգու տաս, էդի սար-ձոր կթռնի, թողնես՝ հուր քեֆով էրթա։ Տղեն խածավ գնաց, աղջիկ էկավ քնեց։

Աբուսեթե Բնալալ քաղքից օր էլավ, աչքերն էլ բան չտեսան, մեկ խատ զանգուն տվեց ձիուն, ձին թռավ մե ձոր հնցավ, տղեն վըր գլուխ հընգավ, հէսօր ես մեռե, քե խինգ օր հառաջ, գլուխ խթվավ մըջ գետնին։

Ձին էկավ դարգլխի դուռ, ոտով զանեց ու խրխնջաց։

Խերն հիմցավ,—Աղջի՛, ձին դուռն ա։ Էդ ի՞մալ բալնիսն խանած ու տարած ա։

Էրկու սիլլա զանեց աղջկան։

— Հայրի՛կ,—ըսեց,—քեզնե պախեմ աստուց ինչ պախեմ։

Հըմեն պատմեց, խեր լսեց, ըսեց.

— Ձին զանե, տղին սպանե։

Էս մարդիկ Թըխ մնան կասկածի տակ, մենք դառնանք Աբուսեթե Բնալալին։ Խելքն էկավ գլուխ, ուր գլխու շալերուց, քուրդ էր, քանդեց, վառեց, էրեց խանձուր, դրեց ուր գլխուն, կապեց, հելավ չոմախ առավ ձեռ, էկավ դարգլխի դուռ կանեց, չոմխով զանեց։ Աղջիկն հելավ, տղին տեսավ։

— Հայրի՛կ, մայրի՛կ, մե քուրդ ա։

Հելան բացին դուռ, էկան նստան, աղջկան խասկցուցին, իբրուխ կա էնդոնց չայի, ըսեց—Բե՛, գլուխս կցավի, չայ խմեմ։

Շատ քոմուկ ցախ կեր, վառին. քոլի տղեն հելավ տեսավ՝ պաժառ ա, էրկու խոքով հելան օր՝ հնցուցեն։ Մրին էլ բռնեն, տանեն։ Ախպերներ հելան էկան,—Մի՛ր,—գոռգոռացին,—տո՛ աննամուս, քե թախտից թալած, էս ինչ խայտառակություն ա, դու կրակ ես արե։

— Էսա քուրդն ա կպուցե, ես չեմ էրե, էսա քուրդ ծուռ ա։

— Խա՞, դու ես։

—Ես եմ։

Թռավ հելավ հըմնին ջարդեց, նոր ախչիկ ճանչցավ տղին, ձին տվին, գնաց խասավ հիրա մուրազին, դուք էլ խասնեք ձեր մուրազին։

## Դ

# ՀԵՔԻԱԹՆԵՐ, ՋՐՈՒՅՑՆԵՐ, ԱՌԱԿՆԵՐ

### 1(9). ԹԱԳԱՎՈՐԻ ԲԱՂԸ

*Թագավորին մե լավ բաղ ուներ։ Էս թագավորի բաղմանչին լավ բաղմանչի էր, էրկու ծառ լավ տեսակի՝ մեկ կարմիր խնձորի, մեկ լե սիվտակ խնձորի կէր, լավ կպախեր էդ խնձորներ, թագավորն էր թաղմնե։ Քյասիբ բաղմանչին կըպախեր, չուր գուքեր բար քանդելու գախ, կգին՝ կգողնին։ Թագավորն էլ բաղմանչուն կսպաներ.*

*— Տո՛ քու ֆլանը-բեխվան, ուրեմն դու խաստու ա կէնես, դու իմ խետ ա կխաղաս։*

*Բաղմանչին էլ կզարմանար, թե ջանըմ, էտ անաստվածներ հընչի՞ կգան, էդ խնձորներ կգողնան, սաղ բաղն հուրանց չբավարարա՞. բաղմանչին կզարմանար։*

*Մեկ մարդ կըլի, գուքա թագավորին կըսա.— Ես կեղիմ բաղմանչի։*

*Թագավոր կըսա.—Դո՛ւ գինաս, հըմլա յա։*

*Կըսա.—Գինամ, ես կեղիմ քո բաղմանչին։*

*Մնաց, թագավորն էկավ էդ էրկու ծառն բաղմանչուն տվեց նշանց, ըսմալ ըսեց.—Բաղմանչի՛ ջան, էստոնց լավ ամագ կիտաս, լավ էլ մուղաթ կմնաս։*

*— Այո՛,—ըսեց,—թագավո՛ր ջան։*

*Էս բաղմանչին ըսմալ կպախեր՝ հուր աչիջ լուսի պես։ Մեկ էլ էն տեսավ, որ շիրթուն գուքա. հելավ տեսավ՝ ծառի վրա բան չկա, էլ չհամբերեց, ըսմալ մթան էկավ թագավորի կուշտ, թըխկըցուց։*

*Թագավորն ըսեց.—Հա՛, ո՞ն ես։*

*Ըսեց.—Քո բաղմանչին եմ, թագավո՛ր, ես աստուն կխափեմ, քե չեմ խափի. իմ մոտ վենք կար, ես հիշ յարի, ձեն լսա, չուր հելա, փախան։ Կխնդրեմ, էս տարի տղեկներուց տաս, գան խըտընձի պահենք, տենանք էն ո՞ն ա էդ գողը։*

*Մնաց գալող տարին, հա՛ խնձորենին խասեր են։*

*Ջոջ տղեն ըսեց.—Ես կեթամ պահակ։*

*Գնաց պահեց մե գիշեր, քնավ, գողցան տարան։ Միջնեկ տղեն պահեց, էլի գողցան, տարան։ Երրորդ տարին պզդիկ տղեն էկավ, ճկուբ կտրեց, աղ թալեց նե, բաղի մեջ կերթա-գուքա։ Էկավ ճիտվանք կանչելու վախտ, ծառի շխկրտուն էկավ։ Տղեն էկավ դանեց, դարըն առավ, բայց փախան։ Սաբախտան հելավ տեսավ՝ մե քյանիմ՝ խնձոր թափուկ ա ծառներու տակ, էս մարդ հեղե յարալու, արուն չռացե գացե։ Էկավ, խոր հայտնեց։ Էկավ խոր կուշտ ըսեց.*

*— Հայրի՛կ, գողուն էրեր եմ յարալու, իմ ախպըրտոնց խետ իզ կբռնեմ, կեթամ։*

*Հելան էրկու-իրեք ախպրով, հելան մեկ ղենք վերցին հուրանց, իզը բռնին, էկան, խասան մե հէրի մեջը. խոր ա, էս մարդ էդ խորու մեջ ա մտե։*

*Ջոջ ախպեր շրիդ կապին հիճուցին.—Ցամա՛ն,—ըսեց,—ես կվախնամ։ Միջնեկ՝ էլի ըտենց։*

*Փոքր ախպոր հիջուցին, գնաց տեսավ որ դուռ ա, օթաղներ կա, բաղ կա, մարդիկն ա կապրին. գնաց հանդիպավ մեկ դուռ, թխկցուց, ներսից ձեն տվին.—Ո՞վ ես։*

*— Դուռ բացե՛ք, կարիբ մարդ եմ։*

*Դու մի ըսե՝ էստոնք ամեն մի թագավորի աղջիկ ա կլած, առած էկած ա. իրեք ախպեր են, իրեք դև են։ Դուռ բացեց ջոջ դևի կնիկ, օր տղին տեսավ, զարմացավ,—Օձն հուր պորտով, դուշն հուր թևով դաս չեկած, դու իմ՛չ էկար։*

*Ըսեց.—Հընչի՞։*

Ըսեց.—Բոզ դև էկավ՝ քու ջոջ կտոր քու հանգաջ կթողա։

Ըսեց.—Դո՞ր ա գացե։

Ըսեց.—Էնդոր ջաղտեն հերկեն ա, գացե ավը դուշ կէնա, յոթ գլխեն ա։

Տղեն հեկավ թուրն ձեռը, տեսավ՝ դևը գուքա.— Է՛ խողածին, քե կուտեմ։

Էկավ, ըսեց.—Դոր վի՞ն ա։

Ըսեց.—Դոր քոնն ա, դու ջոջ ես։

Իրեք անգամ խփեց, իրեք անգամ էլ տղեն փստաց, էն յան կաղնավ։

Տղեն խըտ զանելուն՝ դևին էրեց էրկու կտոր, հանգջներ կտրեց, թալեց ջեր, դարձավ էկավ, կնգան հանգջներ ցույց տվեց, ըսեց.

— Դու իմ ջոջ ախպոր բաժինն ես։

Էկավ կարմիր դևին էլ զանեց սպանեց, ըսեց։

—Դու էլ իմ միջնեկ ախպոր կնիկն ես։

Էս էլ՝ օսկի կատուն օսկի մկներ, կխաղա խանոներ։ Էկավ, էն մեկ դուռ զանեց, էն մեկ դևին էլ սպանեց, առավ իրեքին էլ էկավ խորու մոտ։

—Ջոջ ախպե՛ր, շրիդն հիճու գա, էսի կապեմ քու կնիկն ա, քաշա խան։ Քաշին խանին, միջնեկին էլ քաշին խանին։

Փոքր աղջիկն ըսեց.—Մա՛րդ, սվդի դոն հելի, հետո ընձի կխանես։ Քու ախպրտինք մուխանաթուրում կէնեն։

Ըսեց.—Էտ ի՞նչ ա կսես։

Աղջիկներն հելան, ախպրտինք օր տեսան փոքր աղջկան, հուրանց փոքր ախպորը չխանին։

Աղջիկ ձեն տվեց.—Տղա՛, էս բաղչի մեջ իրեք ղոչ կիգան, մեկը՝ սպիտակ, մեկը՝ կարմիր, մեկ՝ սև ա։ Քե քալ սիվտակի վրեն, քըխ խանա լուս աշխարհ։

Աղջկան չըսեց, թալեց սև ղոչին, էդ էլ թալեց սև աշխարհ։ Պտոտեց, պտոտեց էկավ հելավ մե գերեզմնոցի մոտ, ըսեց.—Էքամ ըտոց մոտ։ Մեկ էլ տեսավ իրեք խատ հուրի էկան հիջան մեկ մամամա գերեզմանաքարի վրեն, քար տվին ղեն, մեկ տղա խանին, էն մեկն ճպոտի՝ խանեց զանեց վըր գլխուն, էդ տղեն սաղցավ։ Ջանին մեկ սինու վըրէն։ Սինին ինչ որ աստվածութեն ըսեղծի՝ պատրաստվավ։ Կերան, խման, էստոնք առան ուրանց խամար ուտել-խմել, տղեն վերցուց մե խատ քար ու ըսեց.—Բա ընձի՞։

Աղջկներ ձեն լսան, էդ սինին էլ, փետն էլ, տղին էլ թողին փախան։

Տղեն էկավ ըսեց.—Բարև՛, էս իմալ ա հեղե՞։

— Էդոնք ընձի կսիրեն, էս կախարդական ճպոտով հա՛ կիգան ընձի կխանեն, կսիրեն։

—Ըսեց.—Թագավորի տղա՛, քե կմեռցում։

Ըսեց.—Հընչի՞, սաղցեր եմ՝ սաղցեր եմ։

Ըսեց.—Չէ՛, ես կեքամ քո խոր կուշտ, կխառցում. թե ընձի կխանա իմ էրգի՛ր, գուգամ քե կըխանեմ, կէրթամ, օր չխանեց՝ չըմիգա։

Ճպոտով թխկցուց մեռցուց, հելավ սինին էլ վերցուց, քոլոզն էլ վերցուց, էկավ թագավորի մոտ բարև տվեց։

— Բալա՛ ջան, հո՞ստ ես։

— Թագավո՛ր, օր քու տղեն սաղցում, ընձի կռնա՞ս խանես լուս էրգիր։

Ըսեց.—Լուս էրգիր չէ, հըմա Ջմրուխտ տուտի ունեմ, քե կտանա կարմիր էրգիր։

— Խա՛, էդ լավ ա։

Էկավ տղին սաղցուց, տվեց թագավորին։ Ինքըն էլ նստավ ղուշ, հիջավ կարմիր էրգիր։

Ըստեղ էլ էկավ թագավորի մոտ։

— Թագավո՛ր ջան,—ըսեց,—ընձի կռնա՞ս խաննես լուս աշխարհ։

— Կարող եմ, եթե դու ընձի լավութուն էնես։ Իմ էրգիր խաց չկա, մի էրգիր ընձի խաց կիտա, իմ նավեր կպատրաստեմ կիդամ, էքան օր էդ խաց բերեն, չըմ գինա ի՞նչ ջանավար ա գուգա իմ նավի հառիջ, կխորտակա, չըողա դր իմ նավ գա իմ էրգիր։

Տղեն սինին խանեց, լավ սեղան քցեց, քեֆ արին, կերան, խման, ըսեց.—Թագավո՛ր ջան, որ ընձի խաննես լուս էրգիր, ես սինին կիտամ քեզի։

Քու նավեր օր կերթան, դու ընձի ըսա՛, ես ընդոր կ'աղթեմ։

Էս մարդու նավերն էկան, պատրաստին, տըղեն նստավ, հա՛ էկան օր ընցնեն, մեկ էլ տեսան օր՝ մեկ կիգա։ Էկավ խասավ օր նավ պտի կործաներ, տղեն քոռավ, ծամեր բռնեց, գլոխ սխմեց։

— Ցաման տղա՛, ընձի մի՛ սպանա, ես կըխաննեմ ափ։

Ըտմավ էլ էրեց։ Էս մարդ էլավ պտոտեց, պտոտեց, էկավ մեկ շենքի հանդիպավ, տեսավ մի դուռ. բացեց տեսավ՝ իրեք կոյկա յա դրուկ, խըմիչք կա դրուկ. խմեց, մտավ կռավաթի տակ։

Իրեք աղջիկ էկան հիրիգուն, ըսեցին.— Աղջի՛կ, էսօր նավը չկրցա խորտակի, էկեք էդ տղի կենաց խմենք։

Տղեն հելավ կայնավ ըտոնց մոտ։

— Մենք ղոչաղ տղի շուռ կիգանք, օր պսակվենք. մենք ախպեր ունենք, օր թագավոր բանտարկեր ա, ըտու խմար մենք չենք կարգվի։

Ըսեց.—Օր ես էքամ ձեր ախպոր թողել տամ, գա, կկարգվի՞ք։

Ըսեց.—Խա՛, դու ազար ե՞ս։

— Նշանելու եմ։

Հուր գլխի էկածը պատմեց։ Աղչկներ շատ մմռացին։

Տղեն հելավ գնաց թագավորի մոտ։

— Թագավո՛ր,—ըսեց,—ես ֆլան թագավորի տղեն եմ։

Դու մի ըսա օր էս թագավոր կենթարկվի հուր խոր։

— Դու պտի իրեք քուրվտոց ախպոր ծողես, մեկ էլ քու խաց տաս կարմիր թագավորին։

Թագավոր ըտմալ էրեց։

Տղեն նստավ նավեր, խացեր բարձեց, էկավ։ Թագավոր Տուտի ղուշին կանչեց բերեց, տղին նստցուց, խանեց լուս աշխարհ։ Էլ չգնաց ուր խոր մոտ, գնաց ղարգրի մոտ աշկերտ։

Ախպրտինք խարսներին բերին, թագավորի պղտիկ տղի կնգան առանձին սենյակ տարե դրե։

Թագավոր կըսա.—Հորի՞ ա կսպասես, դա՛ ջան, օր իմ տղեն կորե, դու կարգվի։

— Ջէ՛, ես մեկ բանով կկարգվեմ. երբ օր ընձի օսկուց սինի շիքին՝ օսկի գրթան մեջ, օսկի ճառերով, նոր ես էն տղին կառնեմ։

Հելան գացին ղարգրի կուշտ.

Ըսեց.—Կեթաս օսկի սինի շիքես, օսկի գըրթան, օսկի ճառեր։

Էս մարդ ձեռ դրեց ծոցն, կայնավ։ Էկավ աշկերտին ըսեց, էս էլ ըսեց.—Ես կշիքեմ, քո գործ չի. գնա՛ ըսա՝ մեկ մեշոկ գյուղ, պնդուկ, քիշմիշ տո՛ւ, ես կշիքեմ։

Գնաց բերեց։

Սաբախտան էկավ, տվեց։ Վարպետ տեսավ՝ ղարմացավ. տարավ թագավորին, առան գացին, տղի կնգան տվին։

Աղջիկն ըսեց.—Ըսոր վարպետին կանչա՛։

Տղեն հելավ էկավ թագավորի կուշտ, թագավոր ճանչցավ։ Ծոթն օր, յոթ գիշեր խարսնիս էրեց, էն էրկու տղին սևերես սուրգուն էրեց, ուր թագավորությունն էլ տվեց նրան։

Դրանք խասան հուրանց մուրազին, դուք էլ խասնեք ձեր մուրազին։

## 2(10). ՍԻՆԱՄ ԹԱԳԱՎՈՐԻ ԽԵՔԱԹԸ

Ավալ ժամանակով թագավոր կար, անուն Սինամ թագավոր կսին։ Էս մե խաս կնիկ առավ, էս կին բեխիտիմար դուս էկավ Սինամ թագավորի հանդեպ։ Սինամ թագավոր էս կնոջ բաց ծողեց, առավ հուր ոզիր, ըսեց.—Ոզի՛ր, հընգենք գյուղ բե գյուղ, երգրե-երգիր շուռ գանք, տեսնանք՝ ի՞նչ օղուշաղ կպատվի, աղջիկ կբերա, ես օսկով՝ ընդու քաշով, էնի բերեմ, ջոջցում, ես ընդոր խեստ ամուսնանամ, օր բեխիտիմար դուս չիգա։

Էս մարդիկ պատռելով գացին, տեսան մե գյուղի մեջ կնգտիք կմռմռին։

Դավրիշ կղի էլ գնացած ա։

Խարցուցին.—Էս ինչ բախս ա՛։

Ըսին.—Մե նախորդի կնիկ կայնե վըր օդաց, չազատվի, ըտու խամար էլ կմռմռանք։

Էս ըսելուն պես մե կնիկ էլ հելավ, ըսեց.—Աշկերդ լո՛ւս, ազատվավ, աղջիկ բերեց։

Ըսեց.—Ոզի՛ր, մտնենք։

Մտան բարև տվին, բարև առան։ Էս տանտերն գիցավ, օր փայի խամար պղտող դավրիշ ևն, ըսեց.—Վա՛յ իմ լուս քոռնա, դու էկել եք, ես քյասիբ մարդ եմ, ներող կլնեք, կնիկս էլ նոր ա ազատվե, փայ չկանամ տամ։

— Ա՛յ ախպեր ջան, մեր թագավորի խամար էրեխի ա շուռ գուգանք, մեր թագավորին էրեխա չկա, աղջիկ էլ հեղի կգնենք, տղա էլ հեղի կգնենք։ Հիմա քո էդ աղջիկ դնենք կշեռքի, ուր քաշի բարա օսկի տանք։

Էն օր մերն էր՝ լաց, էն օր խերն էր, ըսեց.—Տո՛ կնիկ, էդքան ճիժ ունենք, չկռնանք պախենք էլ, տանի՛ք։

Համաձայնվավն, տըվին։ Խանեց հուր քաշից շատ օսկի տվեց, բերեց պախեց մեղան կաթով, կատվու մսով, անուն դրին Դյուլ։ Դյուլ ջոջցավ, դառավ տըսվուք տարեկան։ Սինամ թագավոր ամուսնացավ էտոր խետ։ Էս նախորդի կնգան, էն վիջակի տիրացուց էն շենքեր շիքեց, էս նախորդի կնիկ համարա Սինամ թագավորի աչքի լուսն ա, հարազատ ծնողն ա։ Մենք դառնանք Դյուլի վրեն։

Սինամ թագավորին լավ խրեղեն ձիանք ունի, կնգան ջոկ ձի ա, ղոնքչի խամար ջոկ ա, ուր խամար ջոկ ձի ա։ Որտեղ ազիզ օր ըլի, լայլաղի (յայլաղի) ժամնին հըլի, օր էրքան սառ հախպերներու վրեն քեֆ ուրախութիուն էնելու, հըմեն կեթան։ Մենք դառնանք էս մարդու ղոնքչի վրեն։ Մե խաս հարամի բաշի կա, քսան-յառուն խոքի քոմեր ա մեկ հէրի մեջ, ալան-թալանութուն կէնա, կողոպուտ կէնա։ Հանդիպելով հիրար, էս կնիկ Դյուլին սիրվըցուց հարամու բաշու վրեն՝ Սինամ թագավորից գաղտնի։ Սինամ թագավորի ձիանքներուն էլ կխնամին էս մարդիկ. շաբաթ մի անգամ, ադաթ էր, Սինամ թագավոր պտի գեր ուր ձիանք տեսներ։ Ձիանքների պահողի անուն Սելիդ էր, Սինամ թագավոր դրանք քամբախել էր, էնպես իմ ձիանք պախես, որ գամ տեսնամ, քեզ շատ պարգևներ կիտամ։

Սմեն շաբաթ Դյուլ գուգեր, մոր խեստ ձիանք կնստին, կեթին հերի դուռ. քառ պախուկ ձի՝ ձըմեռ, պարզգնի դեմ ձիանք պտի կայնին դուս, էս մարդ մտեր ներս։

Հուրանք քառուն ջան ին, տաս-տաս կապրին։ Դյուլն կգրկեր էս մարդ։ Դյուլն էրկու էրեխա ունեցավ, աղջիկ՝ հարամի բաշուց, տղեն՝

Սինամ թագավորից։ Ջոջցան՝ աղչիկ խինդ-վեց տարեկան, տղեն՝ իրեք-չորս տարեկան։

Մենք դառնանք մեկ սեյիդի վրեն։

Շատ մարդկանց գլոխ զանեց Սինամ թագավոր ուր հերսից։ Սինամ թագավոր օր կիդեր կըտեսներ ձիանք զաբնած, հալից ընկած, կջղայնանար, էդ սեյիդի գլոխ կվերցուր։

Նոր Սեյիդն ըսեց.—Ես կպախեմ, հըմեն բան թագավոր կիդա, ես լավ կպախեմ։

Սինամ թագավոր տվեց ձիանք նոր Սեյիդին։ Առան տղին էկան, ձիանք տվին նշանց, հըմեն ցույց տվին։ Մնաց շաբաթ գլոխ տղեն գիշերն էլ չքնի, ձիանքին կթիմրա, կկորմշտա, կջրա, ձիանք կայնուկ տեղ կխաղան, կխրխնջան, գնդին կքանդեն։

Հիրկվան պահին քաղաքն օր խախնդավ, մեկ էլ տեսավ Գյուլն ու մեր դռնեն մտան։

— Սեյի՛դ,—ըսեց.—էս էրկու ձին թամքա՛։

— էս րոպե։

Թամքից, խեծան ու գացին։

Գացին, մացին լուր լուսու դեմ, ձիանք էկան, նիհարած, ձևից գացած։

— Վայ վայ,—ըսեց,—ես,—ըսեց.—տղամարդ եմ։

էկան հիճան.—Հա՛, բան չսես, հա՛...

Գացին խախանդան, ժամանակն էկավ օր պտի թագավոր դա, ձիանք տեսնան, օրենք ա։

Թագավորն էկավ,—Ծո՛ շան որդի, էս ի՞նչ ա։

Ըսեց.—ես շան որդի չեմ, շան որդին քո կնիկն ա ու զոքանչն ա. դու ավատացի ընձի, իմ շորեր խաքի մեկ շաբթով, շաբաթ օր հիրգուն, դու տես ով ա դուքա, ձիանքն ի՞նչ ա կէնա, հետևա քո կնգան, բռնա, ես ի՞նչ մեղավոր եմ, դու ո՞ր, քո կնիկ ո՞ր։

էկավ շաբաթ օր, Սինամ սեյիդի շորեր խաքավ, Գյուլն ու մերն էկան, ձիանք ուղին, նստան ու յալլա։ Սինամ թագավորն էն մեկկլ ձին էլ հինք խեծավ ու գնաց հետև հուրանց։ Գնաց տեսավ օր՝ էրկու ձին դուռ կայնուկ, խորոտ, էս մարդ հուր թուր վերցուց ուր շորերու տակ, էդ մարդկանց զաղարըմ կար՝ բոջի, էդ՝ օր կարիբ մարդ էթա, պտի բոռբռա։ Բռնեց բոջուն խեղդեց, բոջիմ էլ օռեն խանեց, ու երգուղից ըսեց.—էսի զաչխու տեղ ա։

Բոջու փոստ քաշեց ուր գլխուն, հընգավ թաթերին, յանի բոջին ա, ու գնաց։ էկավ տեսավ՝ Գյուլն գրկե, սեղան ա կապած, կուտեն, կխմեն, զոնքաչն էլ կուտա, կխմա։

Գյուլն ըսեց.—էս բոջու աչկեր մնի Սինամ թագավորի աչքեր։

— Կնիկ, մեր բոջին ա։

Օզրավ.—Վա՛,—ըսեց Գյուլն,—Սինամ թագավորն ա։

Սինամ թագավորին բոնին, փոստ գլխից հիջուցին։

Հարամի բաշին բերեց խաստ ճոբան, փաթեց սընից, մնաց գլոխ դուս, ճրագն էլ բերին դրին վրը գլխուն։

Գյուլ դրկեց հարամի բաշուն, ըսեց.—Պադռի, մեղան կաթով, կատվու մսով ես պախե Գյուլ, խա՛, Գյուլն իմ խամար ա, քո խամար չի։

Սինամ թագավոր կսկծվորավ։

Աղչիկն ըսեց.—Դուս կուզեմ։

Հելավ էկավ, Սինամ թագավորն ըսեց.—Ի՞նչ կեղի, շրդի ծերն հարձկա։

Հարձկեց, հինքն յավաշ-յավաշ քանդեց, հիմցավ օր տաս-տաս են պաուկած, գաղտնի էն տասի գլոխն կտրեց։ Հարամի բաշին հիմցավ։

— Հը՛.—ըսեց.—Սինամ թագավոր, ի՞նչ էրաղ տեսար, մեղան կաթով Գյուլ պախիր, մկա իմ ծոցն ա։

Ըսեց.—էն տեսա, մեկ շահան բազա գնաց, տաս կառկռու խեղդեց։

— Հա՛,—ծծղաց։

Պառդան, Սինամ թագավոր գնաց, էն տասին էլ կտրեց։

Էլի հիմցավ, էլի խառցուց. չորս անգամ հիմցավ, էս մարդ քառսունի վերջ տվեց։ Մի անգամ էլ օր խարցուց, ըսեց.—Ես էն տեսա, օր մե շահան բազա քառսուն կառկռու խեղդեց, մնաց օր քեզի էլ խեղդա։

Հելավ թռավ, կռավավ, զանեց սպանեց։ Կնիկըն ու զոնքաչն փախան։

էս Սինամ թագավորին մեկ խատ ճրոտ կա, տլմսի՝ կախարդական ա. էդ ճրոտ ի՞նչ ուզես՝ կտա։ Սինամ թագավորի տունն ա, Գյուլ գինա, խաբար ա։ Շուտ էկան խասան, Սինամ թագավորը էդոր մայիֆ թողեց, ձին կապեց, գնաց Գյուլի դիվան էնա։ Բաշնա դռնում Գյուլ՝ ճիրոտն առավ ձեռ, զանեց, էրեց մեկ խատ ղազ։

—Գնա,—ըսեց,—ղազերու խետ ապրի։

Գնաց, ղազերուն էլ օրենք կա, աղվսուց կլախենան, պտի օրն մեկ կայնի պահակ։

Փուշ թալին՝ էկավ հընգավ հեսիր Սինամ թագավորի վրեն, օր հելե կաղ։ Դը խողածին ա, քնով հընգավ, աղվեսն էկավ, տաս-քսան խատ խեղդեց։

Ղազերը չարդին, կոցին Սինամ թագավորին, չիլաղցուցին, հելավ էկավ, կայնավ դուռ։ Զոնքաչն էլավ դուրս, սիրտ մամռաց,—Քա՛ աղչի, սևավոր, հորի՞ էրիր կազ, արի հուրիշ բանի՛ էրա, մեղք ա։

Հելավ զանեց, էրեց մեկ խատ Քյավառա էշ,

տվին քյավառցի Սոմբաթին։ Ըմալ էրե՞ց, օր օսկոռ մնաց. էկավ զոնքչի մոտ, կնիկն էլ զանեց, սարբեց մեկ խատ բոջի, էրեց բոջի։

Սինամ թագավորին մե քուր կա, գեղի նե կարգուկ ա, ըտուն մեկ խատ աղջիկ կա, գուքակեթա, էդ ճբոտի տեղն էլ դինաւ էս բոջին գնաց, խասավ քուրջ տուն, քուր խաց կթխեր, աղջիկ իշկեց, ըսեց.—Էսի մեր պաբեն ա։

— Սևավո՛ր, դու իմա՞լ կիմիշիս իմ ախպոր հըմալ ըսես։

— Ըսի՛մ, հլա օգրի՝ իշկա։

— Վա՛յ, ճիշտ ա։

— Ցաման աղջի, դու գինաս, խասի՛, իմ ախպոր շուն ա էրև, հլա գնա տե՝ էն ճիպոտն էնտեղն ա՞։

Հելալ աղջիկ էկավ, տեսավ՝ ճիպոտ տեղն ա. առավ էկավ, ճիպոտ զանեց.—Իմ ախպեր Սինամ թագավորն հըլի հավալվա հլի։

Էկավ հելալ հավալվա թագավոր, հելան քուրջ խետ, քուր բերեց հարդեց, պատվեց։

— Ախպեր ջա՛ն, գնա՛, իմալ կուզես, ըմալ արա։

Էկավ, զոնքչին զանեց, էրեց լոր կոճ. կնգան զանեց, էրեց մի խատ կառկառ, դրեց ակոշկի գոք կառկառ կելնի դուս, պդոտա, գուքա, կտուց զանա վըր էդ լոր կոճին յանի «Դու էրիր, դու էրիր»։

Սինամ թագավոր ըսեց.—Ես էս երգիր էլ չկռնամ մնամ, իմ ժողովուրդ կլսե, օր Գուլն ինչ ա խանե իմ գլոխ։

Գիշերվա մեկ վախտ հելավ, մեկ ֆուրգուն բարձեց իր հեղած-չեղած ապրուստ, էկան մեկ անծանոթ ծովու կրաղ Բերեց, իր շենք կառուցեց էդ ծովու վրեն, օր մարդիք գան, ուր բանն հիմնան, ըդոնց գլոխ դանա, ջանդակն էլ ծովու մեջ բաթմիշ էնաւ Զոնքաչն դրեց ակոշկի գոք, կառկառն էլ վրեն։

Մենք դառնանք մեկ ուրիշ թագավորի երգրի վրաւ Էստոնց եգեղեցի կա, սովորություն կա, օր ննջեցյալ եղնի, նաշ կար, կղնին մեջ, կտանին կղնին եգեղեցին։

Մեկ խատ ջանավար կար ըդոնց երգիր, օր ակոշկեքներուց կմտներ, էդ մեռին կալլանդակեր, մսեր կուտեր կմներ օսկոռներ։

Էս թագավոր մեռավ, ըտուն իրեք հատ տղա ուներ. էն էրկուսն պսակվուկ են, պզտիկ՝ ազաբ էր։ Թագավորն օր հեղավ մեռնելու, տղեքներուն կանչեց, ըսեց.

— Դու հեղիք, ծեր մոր ծծի կաթ. ես մեռնելու եմ կմեռնեմ. ընձի օր կտանեք եգեղեցի, կանգնեք օշարդով, օր ջանավար ընձի չալլանդակաւ

Ջոջ տղեն ըսեց.—Շա՛տ լավ։

Թագավորին տարան դրին եգեղեցի, ջոջ ախպեր հիրգուն կայնավ։ Դե՛, սարի քամի, ակոշկեք շուշա չկա, քամին զանեց՝ հա՛ մոմեր հընցուց. էս մարդ երգյուղ էրեց հա՛մ խորից, հա՛մ ժամուց, էկավ տուն։ Օր էկավ, միջնեկ աղբերն հիմցավ։

Միջնեկ աղբերն գնաց, էն էլ տայալ չտվեց, էկավ։

Փոքր ախպերն գնաց, ինչքան կայնավ մոմեր վառեց, քամին հընցուց։ Տուն տեղաց կրակն էլ դիշերը մոտ կիտա մարդու նշանց, հելավ դուս, տեսնի՝ մեկ տեղ կրակ կերևա.

— Էֆամ, կրակ բերեմ։

Էկավ չուր խասավ, աղոթքան բացվավ։ Էն թագավոր ինչ եղավ, հայտնի չի, էս մարդ էկավ տեսավ օր կրակն դրած, յոթկանթնե դազան տըրած, միս ա կեփեն, չորս բոլորն էլ մարդ ա պառկուկ։

Ջմրուխտ թագավոր կա, մի աղջիկ ունի, անուն Շաքյարնուշ, ըդոր գուզեն փախցուն, չկանան. արշկան հանե վերև, խինդ հարդի վեր դրե խեր։

Տղեն ըսեց.—Կայնի, կրակ տանեմ։

Ձեռ զանեց դազան դրեց մի յան, կրակ վերցուց, դևեր ըսին.—Մե ղոշախ մարդ ա էկե, մենք յոթ խոթով դազան անջախ կըտնենք կտնենք կըրակին. էս մարդ մենակ վերցուց, դրեց, հանե՛ կրակն էլ առավ, կեթա։

Դևերն հելան, քառասունն էլ էկան հընգան դրա օտաց,—Մեր գլոխ, մեր պախապան դուր էս, ի՞նչ անզնավուր մարդ ես։

Տղեն ըսեց.—Դուք քաղքից հեռու, էս ի՞նչ բան ա, կրակ եք դրե, միս ա կեփենք հընչի՞ էք ըստե բնակուե։

— Է՛, մեր աղա, մեր մուրազ չկատարվի, դու օր էկեր ես կայներ ես մեր գլոխ, մեր մուրազն էլ կկատարվի։ Էսա մենք քառասուն ախպեր ենք, մեր պզտիկ ախպերն սիրահարվեր ա Ջմրուխտ թագավորի աղջկա վրեն, կերթանք հուզնգան, չիտա, մենք էլ կուզենք՝ ուժի դռռով բերենք։ Աղջիկ վերի յոթ հարգամ ա, շանտան կա բոլոր, լավ յոթղան-դոշկի մեջ կքնցու Շաքյարնուշին. նարդվանով աղջկան կխանա վեր, նարդվան կխանեն, կպախեն։

— Տղեքնե՛ր, ես քաղքին անծանոթ եմ, դու իմ ուժին տեսաք. բրնձենտ մեշոկ կա, ես բալնիս ունեմ՝ թագավորի խազինի բալնիս ա էս էլ։ Կերթանք քառսուն խատ մեշոկ կառնենք, մեկ գնգեխ լարան կառնինք, մե չորս-խինդ խատ էլ մախաթ կառնինք։ Եթ օր ես կմտեմ, օսկիք կըբանամ, կլնամ, ձեզի մեկ-մեկ կկանչեմ, օսկին կդնամ ձեր շլակ, դու բերեք, կոլոնեք, օր եդո էլ աղջիկ կխանինք, նոր կառնինք ու կերթանք։

Ըսեց.—Օր մեշոկներն առանք պրծանք, քառսուն խատ կերթաք դարբնոց, քառսուն խատ թավլամխի կիդաք շիքել։

Էկան գացին, ինչ օր ըսեր էր, էդ հըմեն առան, բերին տվին տղին։

Ըսեց.—Դե դուք ձեր տեղեն հիրար չիգաք, ձեզի ինչ օր կսեմ՝ լսեք։ Ես կերթամ, հառեջ խապինեն կլննամ դարսեմ, դուքամ կայնիմ դռան հետև, մեկ-մեկ, ձեն չհանեք, մեկ-մեկ դուք կմտիք ներս։

Մտավ, դուռ բացեց, քառսուն մեշոկ լցեց, թավլամխեք խփեց, հելավ աղչկա մոտ, թուր քաշեց, կայնավ դռան հետև, գոռաց.—Մեկդ ա րնք։

Մեկ-մեկ էկան, Քրով վզները կտրեց, քառսունին էլ վզները կտրեց, հանգչներ կտրեց, շարեց պրաժ Քելի մեջ, դրեց խուրջունի մեջ։ Հելավ լուսը բացվեց էդ տեսակ, օր մեկ պաբե Քրքի կողով շլադ, հելավ—Բարի լուս,—ըսեց.—պաբե ջան։

— Վա՜յ, բարո՜վ, հազար բարին, մեռիմ օղներիդ։

— Պաբե ջան, անտեր տղա եմ, ախրդ խեր հեղի. ինձ էրա քե տղա, գամ տավարներն էլ էնեմ, աշխատեմ։

Ըսեց.—Խա՜, ես ու պառավս ենք, ընձի զաքի տղա չկա։

Տղեն բերեց տուն, Քրխ պախա, մենք դառնանք Ջմրուխտ Թագավորի վրեն։

Հելան մտան խապինեն, օր քառսուն մեշոկ լցուկ, հիրար վրա դարսուկ, քառսուն դևի գլոխ կտրուկ, հանգըշներ վրեն չէ. մտավ աղչկան մոտ, տեսան օր՝ աղչկա Քշին տղի աումներու տեղն ա։

—Ախչի՜, էդ ի՞նչ բախս ա, Շաքյարնուշ։

Ըսեց.—Հայրի՜կ, խաբար չըմ հեղեր եմ, Քե ի՞մալ ա նարդվան գտե։

Թագավոր հելավ կայնավ ուր պալատի դեմ, բոռաց,—Ժողովո՜ւրդ, ուվ օր էկե, ուվ օր էս բան կատարե, խաղաղ սրտով իմ Շաքյարնուշ կիտամ էնոր, ուրին էլ կիտամ Թագավոր։

Հելան քաղաքի մարդիկ, հարուստ մարդիկ, խաքան շորեր ուրանց, քյամրներ կապին, բուխարի փափխներ դրին, էկան մոտ, հըմեն էլ սուտ էին։

— Պաբե՜,—ըսեց (գիվամ խաբար չէ),—էս ի՞նչ ժողով ա ձեր քաղաք։

— Տո՜ արևուտ մեռնիմ, մեր Թագավորի աղչիկմ՝ կեր, դևեր հընգած են հետև, էդ իմա՞լ տղա յա հելե, քառսուն դևին էլ սպանե, քառսունի հանգըճներ կտրե, Շաքյարնուշի հերես կձե, խապինեն էլ լցե մեշոկներ ու շտարե։

Ըսեց.—Պաբե, ես էՔա՞մ։

— Վա՜յ, լաո՜, դու կարիք տղա, դու նոր էս հընգե իմ ձեռ։

— Պաբե՜, կերթամ, ի՞նչ կեղի։

Դը դևու հանգչներն մոտն ա, գնաց Թագավորի մոտ, ձեռ դրեց վըր սրտին, խոնարավ։

— Թագավոր ջան,—ըսեց.—Քու աշխարհ նոր խախընդավ, քու դուշմներ վերացան, քու վրեն էլ օսկին ծեր չկա, քու աղչկա հերես կծող ես եմ, դևեր սպանող ես եմ։

Խանեց հանգչներ, դրեց հառեջ, հըմեն ինչ պատմեց Թագավորին։

— Հիմա կիտա՜ս՝ դու գինաս, չիտաս, ես էլ Թագավորի տղա եմ, կերթամ մեր երգիր։

— Տա՜ր, իմ աղչիկն էլ դուրբան Քե։

Յոթն օր, յոթ գիշեր խարնիս էրեց, մեկ բարձի ծերացան, ծերանան ձեր տղեկներ, ձեր որդիք։

Մենք դառնանք վըր տղին։ Տղեն, Թագավորին խրեղեն լավ ձի կար, հառավոտ կհեչներ, ձին կխածեր կերթեր ավ կչներ, կբերեր։

Էն մեկ օր տղեն հելավ մե բանձր սարի գըլոխ, խոր երգրի սարերն էրևաց.—Ա՜յ հա՜յ,—ըսեց,—խող ու փոշի դա վըր իմ արևուն, իմ խոր ջանտակ եսիմ ի՞նչ ջուն ա-ջանավար կերան, իմ ախպրտինք ի՞նչ հեղան, ես կերթամ իմ երգիրն օր կերթամ։

Էկավ տուն, Շաքյարնուշ խառնուց.—Իյա՜ հորի՜, խիվանդ ե՞ս։

— Դու իմ կնիկն ես, ես կերթամ իմ հայրենիք, ես Թագավորի տղա եմ, իմ խոր երգիր, իմ խոր անուն չըմ կորցու, կերթամ։

Շաքյարնուշ լալման մտավ խոր մոտ։

— Հայրի՜կ, մայրի՜կ, ձեր փեսեն կերթա։

Էկան, կանչին տարան, ինչ էրին, փեսի վրա չկրցան։

— Մացի կենդանի՜, կիգամ, Քե տեսնամ, Թագավոր ջան։

Թագավոր բերեց քսան խատ լավ սալդաթ, կնիկ, ուտելիք դրեց խըտ աղչկա, լալով, գոռալով, ուր ձիավորներուն Քամբախեց, տարեք մի ա-հագին տեղ դրեք ջաղդի, էկեք։

Հելան խեծան, գացին. տարան, տղեն կայնավ, ըսեց.— Ես շատ շնորակալ եմ, դարձեք։

Դարձուց, էկան իրիկ, կնիկ մի չայիր լավ ծաղկոտ տեղ, մե ջրի կշտի խատ լադր զարկին։

Էս մարդիկ դարձան էկան, Ջմրուխտ Թագավորին աչքալուս բերին, Քե.— Տարանք, քու փեսեն մեզի դարձուց։

Հելան, ըտեղ գիշերեցին։ Դու մի ըսե օր՝ Սինամ Թագավորի քուր խասկցավ, հելավ գնաց, տեսավ օր՝ ախպեր գացե էս մարդ էն օրինակին տիրացավ՝ գիշերներ կհեղի վիշապ, շուռ գուգա,

օր ախպոր տեղն հիմնա, մեկ սալըխ տվող չկա։ Էկավ, էկավ տեսավ օր՝ չարր ա ղարկուկ, էկավ չորս կողն փակեց, գլոխ տրեց վըր պոչին ու մըննց։ Տղեն հելավ դուս, տեսավ վիշապ, հետ քաշվավ։ Վիշապ ասսու հրամանքով հելավ լղու։—Թագավորի տղա, Սինամ Թագավորի փեսա ջան, մի՛ վախեցի, ես օր դուշման հեղի քեզի, իմ պոշով պատռինք քեզ, կխանինք երգինք, մեկ փրթիկ չհընգիր։ Ես քեզնից մե բան կխարցում, դու կոշախ, իգիթ տղա ես, Սինամ Թագավոր կա, կխնդրեմ քեզնից՝ դու էրթաս Սինամ Թագավորի տեղն հիմնաս, ես քո կնիկ քեզնից լավ պախեմ։

— Է՛, կնի՛կ, ես ըստոր խետ դուշմանութուն չեմ կանա էնեմ, դու մացի էստեղ, կանչա քու սուրբ աստվածծ, մնա։

Հելավ օտով, թուր վերցուց, գնաց։ Շատ գալով՝ էկավ մեկ չինարի ծառի տակ, տեսավ օր՝ մեկ պաղ ախպուր կա. նստավ, խաց կերավ, պառկավ։

Դու մի ըսե, Զմրուխտ տուտի կա, չինարի ծառի գլոխ բուն ունի, ձագ կխանա. մեկ խատ օձ էդոր ծառի տակ բուն ունի. կհելնի կուտի։ Էս տղեն ճվճվուն լսավ, տեսավ՝ վիշապ փաթթվի ծառ կհելի։ Տղեն թռավ, թուր քաշեց, սպանեց։ Իրեք-չորս կտոր էլ թալեց ձագերին ու պառկավ, քնավ։ Մեկ էլ տուտին էկավ, տեսավ օր պառկուկ ա.

— Վա՛յ,—ըսեց,—էսի ա իմ ձագեր կուտա։

Էրեց օր փանջալամիշ անի սպանի, ձագեր ճճվացվին, խասկացուցին.—Ախե՛, օձն ա, օձն ա։

Էս խետ ուր թևեր փռեց, խով էրեց։ Տղե՛ն հելավ տեսավ, թուր քաշեց օր սպանի։

— Ա՛յ տղա,—ըսեց,—նամարդություն մի էրա, դու լավութեն ես էրե, քու լավութեն մի կորցու. ես Զմրուխտ տուտին եմ, երգիր կպատռեմ, դու էսթավուր լավութեն ես էրե. ըսա՛, ի՞նչ ա քու լեղուն կպատռա՝ հուզա, ես տամ։

Էս մարդ միտք էրեց.—Ջանը՛մ, քո դուշ ի՞նչ կանա էնա. Սինամ Թագավորի տեղ չկինա, ես ի՞նչ ուզեմ էտուց։ Կայնի՛ր, Սինամ Թագավորի անուն տամ, բալի մի բան ասա։

— Դուշ ջան, Սինամ Թագավոր կա, ես կըպատռեմ, կռնա՞ ընձի տանես ընտու մոտ։

— Վա՛յ,—ըսեց.—էս իմ աչիկ վրեն, կտանեմ, միայն քեզնից մի բան կուզեմ։

— Ի՞նչ։

Ըսեց.—Կերթաս էսատեղ, մոտ քաղաք կա. քսան խատ օչխրի դմակ, քսան թունդի գինի բերես, ես գիշիմ կայնիմ գետին, դու էդի կբառնաս վըր ընձի, գելնես, նստես վըր ընձի, քու աչքեր կխփուս, ես գելնիմ երգնքով կերթամ. «ա՛ղ» կէնեմ՝ գինին կթալես, «ղո՛ւ» կէնեմ՝ դմակ կթալես, չուր էդոնք խլսի, ես քե կտանեմ Սինամ Թագավորի մոտ։

Տղեն հելավ գնաց, առավ, բերեց, տարավ վըր Զմրուխտ տուտուն, գնացին, «ագ» կէնա՝ կթալա, «ղո՛ւ» կէնա՝ կթալա. մեկ անգամ տղեն մոռցավ, էրկու դմակ թալեց. վերջում տեսավ օր դմակ չկա, ուր ճուռ կտրեց, թալեց, դուշն հիմցավ օր շոռ էր, պախեց բերնի մեջ։

Տարավ, Թագավորի կուշտ հիջուց, խանեց ճուռը տվեց, ըսեց.—Իմ բբուկից մե խատ քաշա, թաթխա ջրու մեջ, քսա վըր ինե, կսաղնա։

Հըմալ էրեց, սաղցավ։

Ըսեց.—Իմ բբկից պախա քո կուշտ. կեթաս Սինամ Թագավորի մոտ, ինչ որ կբադմա լսես, հետո կասա. «Տղա՛, դու օր էկար, ըսկի բան չըտեսա՞ր։ Ով որ եկե հուր մոտ, ուր արարքն հիմցե, ընդոնց գլխատե, ջանտակ մե յան ա կոլոնե, գլոխ մե յան։ Կխարցու, կասա. «Դու որ եկար էդոնք տեսար, չվախեցա՞ր։ Էնդոր կխափես, կըսես.—Ես քրիստոնա եմ, Թող հլիմ դուս, խաչ խանեմ իմ հերես, նոր գամ, իմ գլոխ գան։

Թըխ էնի դառնա վըր իր ձագերուն, մենք դառնանք վըր տղին։

Տղեն մտավ հայաթ, իմալ օր ըսեր էր՝ տեսավ։ Էկավ մտավ, բարևեց Թագավորին.

— Էկեր եմ քու մոտ։

— Դու որ էկար մտար հայաթ, ջանդակ չըտեսա՞ր, իմ ձեն պտի երգրի մեջ հեղի, դու չի՞ս լսե։

— Եկեր եմ, հորի՞ իմ գլոխ ընտոնցից լավը՞ն ա. էս ի՞նչ կառկառ ա, էս ի՞նչ կոճ ա։

Ըսեց.—Սինամ Թագավոր օր կսեն, ես եմ. ես կնիկ առա՝ բեխեթիբար հեղավ, ընդոր Թողի, հնգա նոր փայուշ ճարեցի, որ մոր արգանդից նոր էր հեղե, բերի՝ մեղան կաթով, կաուվու մըսով պախի, էն էլ բեխեթիբար հեղավ հարամուբաշու խետ, զանեց ընձի էրեց էշ, կաղ, շուն, լավ էր, ընձի քուրըմ կա, իմ քուրջ աղչիկ ընձի խասավ փրկեց։ Նոր ես էլ իմ կծկծուն իմ ղոնքաշն էրեր եմ կոճ, կնիկս էլ էրեր եմ կարկառ՝ կկտցա, յանի՝ «Դու էրի՛ր, դու էրի՛ր»։ Դե՛ հելի, քո գլոխ կտրեմ։

— Սինամ Թագավոր, Թող հելնեմ դուս, խաչ ըմ խանեմ, գամ, էլի կտրա։

Հելավ, կրակ զանեց, Զմրուտ տուտի բբուկ վառեց, դուշն էկավ, հելավ նստավ, էկավ աղոքրնի դեմ կայնավ, գոռաց.—Սինամ Թագավո՛ր, հելի դուս, մացի բարով, ես գացի՛։

Հելավ տեսավ դուշն, կսկծու կոճ թալեց ծովու նե, կառկառն էլ Թոցուց։

Տղեն եկավ հիջավ չինարի ծառի մոտ, տեսավ էլի վիշաք դան, չարր դան. մտավ, կնգան

բարևեց, առավ, վիշապ պատռավ, հելավ խորտ աղջիկ, հելան, իրևքով գացին խասան ուր խոր բաղի մոտ։ Դիր գրեց ողին. «Ես թագավորի տղեն եմ, իմ խոր թախտից դիճիս՝ դիճիս, չիճիս՝ ես Ջմրուտ թագավորի փեսեն եմ, կռիվ կէնեմ։

Ողին ըսեց.—Արի՛, քու խոր թախտն։

Թախտից հիշավ։

Տղեն դառավ թագավոր, կարգվան, նստավ ուր խոր թախտին, ուր խոր ծառը-ճուղ կանչցուց։

Ձեր բալեք խասին ձեր մուրազին, էնոնք էլ խասան ուրանց մուրազին։

## 3(11). ԹԱԴԱՎՈՐԻ ԽԵՔԱԹ

Ավալ ժամանակ մե գոռող թագավոր կհեղի։ Էսի տարին մե կնիկ կէնա, տարին թմի՝ էղ կնգա վիղ կզարկա։ Վերջին կնիկ մնաց էրեխով, էտոր վիղը չզարկեց, ըսեց.—Քըխ էրեխեն մեննձանա, նոր վիղն զարկեմ։

Էրեխեն մեծացավ, դառավ մե տաս, տսվերկու տարեկան։

— Է՛, ես թագավորիս եմ, տսվերկու տարի ա վիղը չեմ զարկե, պտի զարկեմ։

Տղեն մտավ դռնից, տեսավ՝ մեր գուլա, ըսեց.—Էս ի՞նչ բանս աւ Ըսեց.—Քո խեր իմ վիղ պտի զարկա։

Ըսեց.—Հելի, առնիմ, փախննիք։

Հելան ձին խնծան, փախան։

Գնացին, գնացին մե խոր մեշի ռաստ էկան. մտան մե հէր, տեսան՝ ամեն ինչ կա. կերան խըման։ Էղ տղեն կեթա ավղուշ կզարկա, կբերա, մեր ու տղա էդտեղ կապրեն։ Մե օր էլ դեն էկավ մտավ հէրն ըսեց.—

— Ընա էիք, ջնս էիք, խողածնե՛ր, կոնախ մեկ օր կեղի, իրեք օր, չորս օր, մե ամիս ա նըստուկ եք։

Դե խեա տղի մերը՝ հելան մարդ ու կնիկ։ Դիշերը դե կմտներ իր քյառսուն գյաղնոց խոր, կոտափեր։ Մերը մնաց երկու խոքով։ —Էմա՛ է-ննենք, դէ՛, տղեն օր հիմցավ, էրկուսիս էլ կճղա։

Դեն ըսեց.—Էդ տղին իմալ տեղ ճամփես, օր էրթա՝ չիդա։ Քըխ էթա առյուծի կաթ ու միս բերա։

Հիրիկոն էկավ, մեր կպառկե կնոնա, տղին կըսա.—Կմեռնիմ, իմ փրկությունը առյուծի կաթն ու միսն ա։

Տղեն հելավ գնաց։ Գնաց, մե խաա բիձա նստուկ ա, ըսեց.—Բարև՛։

— Բարև՛, խաղար բարի, Փիրայմա՛դ ջան։

— Ձա՛, պապի՛, դու ի՞նչ գիտես իմ անունը։

— Է՛, բալա՛ ջան, ես հրմեն ինչ գինամ, զո՞ր ա կեթաս։

Ըսեց.—Իմ մեր խիվանդ ա, կեթամ առյուծի կաթ ու միս բերեմ։

Ըսեց.—Բալա՛ ջան, արի դարցի, մի՛ գնա։

— Չէ՛,—ըսեց.—իմ ծնողն ա, իմ մերն խիվանդ ա։

— Դէ՛ օր կեթաս, առյուծի ոտն փուշ ա մտե. մե սուր փետ կդանես, քարախ կթափի, կդինջանա, քե կլսի։

Գնաց, ըտմալ արեց։

Առյուծը ըսեց.—Ուզա՞ծդ։

Ըսեց.—Քու կաթից, քու մսից։

Ըսեց.—Էս իմ ձագ, էս էլ իմ կաթ։

Առավ, էկավ խասավ տուն։ Դեն հուրին թալեց խոր, կաթ, միս տվեց, մերը կերավ, փըրկություն չկա։ Է՛, մերն էրկու խոքով ա։

— Դէ՛, ճար էրա՛,—ըսեց կնիկ։

— Արի՛ ճամբա անմահական ջրի։

Տղին օղորկեց անմահական ջուր, խնձոր բերի։

Հելավ տղեն ձին խնծավ, գնաց խասավ դյուլի բաղի մեջ, խնձոր քաղեց, ջուր լցեց, պառկավ մի քիչ քներ, օր ճամփա էթեր։ Մեկ էլ քառսուն գլխանի դեն էկավ դուլի բաղի մեջ ֆռռալու էկավ տեսավ տղին, տղեն թռավ հելավ, հրմնեն բռթեց, առավ խնձորն ու ջուր, գնաց. դեի կնգան էլ տեսավ, խավնավ ու ճամփա ընգավ։ Էկավ, դեն ըսեց.—Ի՞նչ էննեք, ճար էրա՛։

Բերեց տղին, կապեց սնից, գոռաց.—Դէ՛, արի՛։

Դեն հելավ էկավ, տղին առավ գնաց, աչկերը խանեց. աջ աչքը թալեց ձախ ջեբ, ձախ աչքը՝ աջ ջերի մեջ, տարավ թալեց քառսուն գյաղնոց խոր, էկավ տուն։ Էն առյուծի ձագերը կայնան խորի բերան՝ խաց կթալեն, ջուր կիտան էդ տղին։ Մե մարդ էկավ խանեց խորից։ Ըսեց.—Ընձի տարեք դեերի գուլի բաղի մոտ հիջուցեք։ Տարան, դեի կնիկը խանա յա բացեր ա, գգռա—էթող-գալող Քըխ դա օր ուտա, խմա, Քըխ նստի Փիրայմադի ջանին։

Տարան, նստեց, ըսեց.—Էդ կնիկ Քըխ հուր գինու բաժակով ընձի գինի տա։

Բերին, խմեց, մատնիք խանեց, թալեց բաժակն հնե, տարան, տեսավ մատնիք, գնաց կուլրին գտավ։ Պատմեց, բերեց էդ մարդին պախեց։ Մեկ օր էլ էրկու խատ եղվնեկ էկան կայնան, կխոսին.

— Քուրո՛ ջան, իմա՛լ Փիրայմադի մեր, Փիրայմադի հաշկեր խաներ ա. էդ էսա ծառի տակ անմահական ջուր կա, մենք բզկներ կթալենք, Քըխ Քրջեն, դնեն տեղ, կսաղնա։

Կնիկն լսավ, աչքերը լվացուց։

Տղեն հելավ, ըսեց.—Մե խատ մուրազ ունեմ, գնամ կատարեմ, գամ, քեզի տանեմ։

Գնաց մոր կուշտ, կապեց ձին, դևին թալեց խոր, ըսեց.—Դե արի։

Մորը բրթեց, լցեց մեշոկ, ըսեց.—Տա՛ր, թափա։

Քաշեց դևի մի թևը կտրեց։

Գնաց էդ կնգան առավ, ապրան։

## 4(12). ԿԱՏՎՈՒ ԹԱԼԻՖ

Մե աղքատ տղա կհեղի. կէթա ցախ կժողվա, կտենա, օր խոտղներ մե խատ կատվու ձագ թալած գետին, կչլեն։ Տղի սիրտ կմտռտա, կասա.—Տվեք ընձի, տանեմ պախեմ։

Կբերա տուն, կիտա տդեյ։

Ադեն կասա.—Տո՛ լաո, մենք շա՞տ խաց ունենք ուտելու, օր ըստոր պախենք—Բան չկա, կատու յա, մատմ՝ էլ կթալենք՝ մեր կատուն ուտա։

Տղեն կէթա դուս, կտենա՝ մե խատ պստի բոշի թալած ուրանց օդաց տակ, կզանեն։ Էլի առավ, վերցեց բերեց տուն, նանեն էլի եռստավ։ Էլի ամիս քաշեց, տեսավ օր պստիկ օձմ՝ էլի թալել են ուրանց օդաց տակ. էլի ճժերուց առավ, բերեց մե խատ խողե տաշտի մեջ խող լցեց, դրեց տաշտի մեջ։ Օձն խող կուտա ու օրերով կըմեծնա։

Տարի քաշեց, կատուն ընտելացավ, թպին ընտելացավ, հեղավ շուն, ըմալ յաման թուլա յա, օր դուշ չթողա օր պառվու դռնով հնցի։ Օձն էլ հելե կպատա, նանեն օր թունդիր վառա, կուդա թունդրա շուրթ կկուճուրվի, մտի ծոց ուրանց։ Քաշեց մեկ տարի, օձն լավ տեղն առավ, շապիկ փոխեց, դառավ նիշուն օձ։

Էն մեկ օր օձն հելավ լեզու.

— Աղքատ ջան, դու էս լավութենն օր էրիր, ես օձերի թագավորի մեծ տղեն եմ, հելա դուս օր՝ դուս տեսնեմ, էդ անառակած խոտղներ ընձի բռնին, ըդմալ կչլին։ Էն ջոջ պատի տակ իմ խոր տունն ա, ընձի կառնիս էթաս ես կայնիմ կճչամ. օձեր կուգան, ես իմ լեզվով կխոսկցում, օր քեզի չվնասեն։ Ես կմտիմ ներս, իմ խեր կըտենա, կուրխնա, կասա.—Քու աղատողին բեր։

Օր կէրթանք, չվախենաս, իմ խեր կասա.—Խոշածի՛ն, էս լավութենն օր էրեր էս, ուզա՛, տամ։

— Ինա՞ս ինչ կուզես իմ խորից. քու լեզվի տակի պստիկ մատնեք տաս ընձի։ Էնի ակ ունի, աջ օլրես՝ քառսուն խատ արաբ կկայնի, բրով թվանքով, ուզես՝ պալատ կշրջես, գեղ կավերես, ի՛նչ պահանջ դնես վըրե հուրանց, չի հըրոպա ջախ կկատարեն։ Ձախ էլ օլրես՝ կհամբարձեն։

Հելան գացին, ըդմալ էլ ըսեց օձերի խորը։

Խերն ըսեց,—Վա՛յ քու սովորցուցողի վիզը կոտրի, դու օր իմ տղին բերեր ես, կիտամ, ես իմ բերան կբանամ, դու խան, մենակ ոշոքի չըսես, օր կախարդական ա։

Տղեն առավ մատնիք, շնորհակալ եղավ, ուրախ-ուրախ էկավ տուն։ Ըսեց.—Լա յավաշ փորձեմ, ջաղտի մեջ փորձեմ։

Աջ օլրեց քառսուն խատ արաբ կայնան, ձախ օլրեց՝ համբարձան։

Էկավ տուն.—Նանե՛, հելի, գնա նստի թագավորի տուն, աղջիկ ուզա ընձի։

— Վա՛յ սև գա վրեդ, թագավորին թագավորնեռն ա կիդան կուզեն, իմ վիզ կկտրա։

Ադեն հելավ էկավ, նստավ խնամաթոռի վրեն, պահակին ըսեց,—Գնա՛ թագավորին ըսա, ես կուզեմ իրա մոտ գամ։

Թագավորն ըսեց.— Գնա՛ բեր.

Էկավ տարավ.—Հա՛, նանե՛, ի՞նչ ա ուզածդ։

Ըսեց.—Թագավո՛ր ջան, մեր խին մարդիկ օր կէրթան աղջիկ ուզելու, կըսեն. էկել ենք քու ճըրագից՝ ճրագ կպելու, քու աղջիկ տաս իմ տղին։

Թագավորն չդայնացավ, ըմալ սիլեմ գանեց պառվուն, ըսեց.—Տա՛ր շան որդու քյավթաուին դուս։

Տղեն տեսավ նանեյ՝ հերես կարմրցավ, կապրտցավ, տղին անիծելով էկավ։

— Նանե՛ ջան, խնամություն ա չլավ նանե՛, մեղի կհեղի աներթագավոր։

Նանե ջան, քրչկոտ ես հելե, իմ լուս քոռնա, դուց քե չընդունե։

Հելան քնան, նանեից գաղտնի քառսուն արաբ կանչեց, ըսեց.—Իմ նանեյ աստլասից, դուսմաշից շորեր կբերեք, կզարդարեք։

Գացին բերին, դրին նանեյ կշտի մոտ։ Սաբախտան հելան խաց կերան։

— Շորերը խաքի՛ր, գնա թագավորի կուշտ։

Խաքավ, զարդարվավ, գնաց։

Թագավոր օր գնաց տուն, սիրտը մռռաց հուր զանելուն, գնաց կնգան պատմեց Թե. աղքատ պառավ էկեր էր մեր աղջիկ ուզեր, ես էլ ջղայնացա՝ մե խատ զանի։

— Վա՛յ քու խիղճը կտրվի, հորի՞ կզարկիր, քըխ պայման դնիր՝ կալան ուզիր, կէրթեր էլ չըգեր, զարկիր հորի՞։

Լուս բացվավ, պառավն էկավ դռներ զարկավ, պահակն տեսավ, գնաց ըսեց։ Պահակն նանեյ տարավ թագավորի մոտ։ Նանեյ օր տեսավ թագավորը, բարևեց, հուր կուշտ նստցուց.—Նանեն մեռնի քեզ, քու աղջիկ տաս իմ տղին։

— Նանե՛ ջան, կալան կուղեմ աղջկա համար, մեկ սինի՝ մեկ սքյա օսկուց շինուկ ըլի, բերես՝ կիտամ։

Հելավ տղին պատմեց։

Սաբախտան թագավորն էկավ գործի։ Տղեն հիմցավ թագավորի պախման։

— Նանե՛ ջան, խաց ուտենք, քնենք, աստված օղորմած ա։

Նանեն քնեց։

Քառասն արաբներին կանչեց, ըսեց.—Մե խատ օսկի բոքնոց՝ մեկ սքյից, համ էլ մարգրիտ քար լցրած ըլի մեջ։

Բերին տվին։

Լուս բացվավ, տղեն հելավ գնաց քաղքի մեջ, տեսավ մի եզդի տղի, ըսեց.—Քեզ մեռնիմ, դու հեսօր ինչ պտի առնիս։

— Հիցուն կոպեկ, մե մանեթ։

— Արի էթանք, դու ինձ հարկավոր ես։

Նանեն հելավ խաբավ, սինին դրին էդ տղի ուսին, գացին։

Հելան թագավորի մոտ. բարև տվեց, սինին դրեց թագավորի հառնչ, էդ տղին տասնոց տվեց, ճամփու դրին։

Բացին, թագավորի ուշքը գնաց։

— Նանե՛ ջան, վաղ գուքա տղեն, նշան կդնա. մեր մարդիկ կիգան, նշան կդնեն. ի՛նչ վախտ ըսեմ, էն վախտ կիգաք, աղջիկ կտանեք։ Վաղը կիգաք, միայն քու շենքերը լավը չէր, եսի օր քու տղի շենքերը կիգան, իմ պալատին խով կանեն, կիգաք աղջիկ տանելու։

Էկավ տղին պատմեց, տղեն ըսեց.—Դու մի՛ մտածա, մի բան կէնենք։

Նանեն հելավ քնեց։

Տղեն մատնիք օլրեց՝ քառսուն արաբ էկան։

Տղեն ըսեց,—Ընձի շենքեր շինեք, թագավորի պալատից մեծ ու չավ։

Սաբախտան հելավ տեսավ՝ ամեն ինչ կարգին ա։

Հելան գացին թագավորի կուշտ, խնամինեությով գացին, զուռնով գացին. տղեն էլ նիշտուն շորեր ա խաքե, արծաթե խանչալ, թե բուխարի փափախ, թե մանդուլից բեշմեթ, արխալախ, թե չախմա շալ չուխեն, թե սապոգներ. բերին քահանին, կերան, խմին, նշան դրին օսկի մատնիք, օսկի գնդեր, օսկի ապրշներ։

Դարձավ թագավորն ըսեց. —Խառնիխին իմ դռներ՝ չուր ժամու դուռ խալի փռուկ, էն կողն ծառ, էն կողն ծառ, օր արև չառնի իմ աղջկան, բիլբուլներ ծառերու գլուխ գվգվան, ժամուց չուր քու տուն էլ հրմլա։

Տղեն ուրախ ա, տղեն գինա՝ օր կանա։

Հարսանիքի օրն էկավ, քանի ձեռ նաղարա վերցուց, հրմեն ընչ տեղը տեղին բերեց, թագավորն ուրախացավ։ Էկան եկեղեցի, պսակվան, էկան տղի տուն, կերան, խմին ցրվան։ Տղեն հելավ մատնիքն օլրեց, ծառներ, խալքի վերացուցին։

Թագավորի աղջկա մատն մատնիքն չմտավ, դրեց ակուշկի գոք։

Մե հատ հարուստ չհուտ լսե էս բան, հելավ էկավ ոնց չարչի էն տղի տուն, տղեն կնգան չի ըսե էդ մատնիքի մասին։

Չարչին էդ մանրուք առած էկավ տղի տուն, տղեն տուն չէ։ Խարս նստե տուն, մատնիքն էլ ակոշկեն դրուկ ա։

Դռնեն մտավ.—Բարև, թագավորի աղջիկ, քեզի մե բան պետք չի՞։

Մատնիքներ խավնավ, դրեց մատներ, սանդր վերցուց, կոճակ, ասեղ վերցուց։ Չհուդի աչքը առավ մատնիքին, ըսեց,—էն ի՞նչ մատնիք ա։

— Իմ էրիկն ա առե, պատիկ ա։

— Բեր ես տանեմ, դու իմ մոտից մեծը վերցուս։

Փարա էլ չվերցուց, առավ ու թռավ։

Մատնիք օլրեց,—Պալատն, աղջկան, ինձի կհնգուս ծովուց էնտեղ, պառավ ու տղեն քրխ մնան հուրանց խին քոլկի մեջ։

Կատուն ու շուն հելան տեսան օր էլի խին քոլկի մեջ են ու սոված, հելան լեզու, խոսեցին, —Էս աղքատի տղեն մեզի շատ լավութեն ա էրե, արի՛ օգնենք. ես լող դինամ, քե կշլկեմ, մենք շենք գինանք, հիմցի տե մատնիք դո՞ր ա դրե, վերցես բերես, մեր տիրոջը տանք։

Հելան էկան ծովու ափ, լողցան, ծով կորին հնցան։ Կատուն գնաց, թաղին տափավ։ Կատվին տեսավ, ուրախացավ։ Կատուն գնաց, բիբրի աման վերցուց, տարավ լցեց չհուդի բերնի մեջ, քնավ էր, փռշտաց, մատնիք թռավ, կատուն վերցրեց, խնծավ թաղուն, լողալով էկան։ Մնաց մե թռռի մանդաղիլ՝ թաղին փոշմնավ.

— Կատո՛ւ, մատնիք տու ես պախեմ։

— Դու ձկներին կլփուս, բերնիցդ կթալես, ի՛ղ ես պախեմ։

— Չե՛, պտի տաս։

Կատուն խանեց դրեց թաղու բերան։ Էկան մե փշուր տեղ, մե յարանու ձագ տեսավ, շունը խափ արեց՝ մատնիք ընկավ, ձուկը կուլ տվեց ու գընաց մըջ ջրուն։

Փոր-փոշման հելան դուս, տեսան՝ թռռին թռռ ա կթալա։ Նստան, թռռը խանեց, ձկներ թափեց, կատուն պրծավ, էն ձուկն առավ փախավ։ Առան թաղու խետ, տարան տվին աղքատի տղին։ Նանեն հելավ ձկան փորն թափեց, մեկ էլ մատնիքն գտավ։ Ջուկն կերան, տղեն մատնիքն օլրեց,

պալատ իր կնգան խեթ բերից. էն չհուդին թողին էն տեղ։

Սովորություն կա խարան դարձ տանելու, էրկու կնիկ եկան խարսի հետև։ Աղջիկ գնաց, մեկ-էրկու ամիս մնաց խոր տուն, նորից նանեն ֆայտոնով գնաց բերից խարս։ Կերան, խման, քեֆ արին, ուրախացան։ Նանեն մեռավ, թաղին, քար քաշին։ Հուրանք էլ ուրախ կապրեն։

## 5(13). ՇԻՐԻՆ ՇԱՀ

Հառեջ ժամանակով մե խաս թագավոր կար, էդ թագավորին ժառանգություն չուներ։ էն մե օր, ծերացեր էր, նստեր էր դալի վրեն, կմտածեր հուր ժառանգության մասին։

Էդ մտածմունքի խեթ էր, մեկ էլ մե խաս դավրեշ դռնեն մտավ։ Դավրեշին էլ օղորմութուն տվեց մե խաս օսկի։

Դավրեշն ըսեց.—Թագավո՛ր, էս քո տված օղորմութուն ոչ երկինք կհելնի, ոչ գետին կմնա։

Տվեց թագավորին։

— Դավրե՛շ,—ըսեց,—օղորմություն եմ տվե, ա՛ռ գնա, իմ ցավից վազն արի։

— Դու, թագավո՛ր, երգրի տեր, քի ի՞նչ ցավ կա օր, քու ցավ ընձի պտի պատմես։

Թագավորն ըսեց.—Իմ ցավն էն ա, որ ծերացեր եմ ժառանգ չունեմ, էտ ա կմտածի։

Դավրեշն ձեն չհանեց, մե խաս խնձոր խաննեց, չոքավ թագավորի հառեջ, դրեց, տվեց թագավորին։

— Թագավո՛ր, կերե՛ք՝ ձեզի ժառանգ կելի, անուն չդնաք, մինչև իմ գալը։

Խնձորն առավ դրեց ջեբ, մեկ էլ կաց՝ դավրեշն չկա, անհետացավ։ Թագավորն խնձորն բերեց, թագուհուն պատմեց. բերին կերան, քնան։

Մե առժամանակ մնաց, դրանց երեխա տղա բերեց. քեֆ էրին, ուրախացան։ Թագավորի սինորներ էկան՝ թե՝ տղին կնքենք, անուն դնենք։ Թագավոր չհամաձայնավ; Մնաց, տղեն դառավ մեկ տարեկան։

Դավրեշն էկավ, ըսեց.—Անպիտան թագավո՛ր, դու պարտաղանց մարդ ես։

— Ես,—ըսեց թագավոր,—անուն չեմ դրե։

Դավրեշ տղի անուն դրեց Շիրինշահ։

Կերան, խման, մնաց Շիրինշահ մեծացավ, հելավ ութ տարեկան, հուսում առավ։

Թագավորը ըսեց.—Տղա՛ ջան, արի քեզ ամուսնացնեմ։

Խառնիս էրին, թագուհին տարավ խարսին, տղին հուրանց սննյակ։

Նստան խոսացին, տղեն հանվավ, աղոթք էնելու համար գնաց բալկոն, վերևանց փարիք զարկին տղին, առան գացին։ Կնիկ շատ սպասեց՝ չկա ու չկա։ Լուս բացվավ, արևն առավ, թագուհին հիմցավ,—Թագավո՛ր,—ըսեց,—քու բաղ բառըմառ հեղի, տղեն չկա։

Հելան, ինչքան ման էկան՝ չկա ու չկա։

Կնիկն ըսեց.—Իմ բախտն էս ա, ես պտի զեյրաթխանա շիքեմ ու կխառցում հմնուց Շիրինշայի մասին։

Ոչ մի տեղեկություն չստացավ։ Մի օր իրեք որսկան էկան, կնիկն հարցուց.—Աշխարհի նե ի՞նչ ա անցե ձեր գլխով, ի՞նչ եք տեսե, ի՞նչ եք լսե, պատմե՛ք։

— Շատ բան ենք տեսե. էս սարի մեջ մի մեծ հասար կար, ըտեղ քնանք, հառավոտ հելանք օր գինք, տեսանք՝ խոսալու ձեն էկավ։ Հելանք իշկեցինք, տեսանք՝ իրեք աղջիկ էկան, բըկեղեն շապկներ խանին, մտան հավուղ լողկցան, հելան բոռացին.—Արա՛ր։ Մե արաբ էկավ՝ օտներ գետիներ, գլոխ՝ էրգինք, սնդուկ բերեց. սնդուկ բացին, մե խաս երիտասարդ խանին մեջից, թե թալին վրին, գացին բաղի մեջ պտոտելու։

— Իմ դուլեր դու եք, ինձի տարեք ցույց տվեք։

Հելավ թագավորի խարս էկավ, խոսավ էղ տեղ։ Կնիկը տափավ՝ էս յան, էն յան չկան. էկավ տեսավ՝ մե ծառի գլոխ դրուկ ա, ոչ ձեռ կխասի։ Գնաց մե երկար փետ բերեց, գոշտեց, սնդուկ տփեց գետին, կոտրավ. Շիրինշայ դուս հելավ։ Ըսեց.—Ըսեց.—Վա՛յ անխիղձ, էս ի՞նչ արիր, մկա փարիքն էկան, ընձի կխանեն երկինք՝ կթողեն, կցխեն գետին։

Ըսեց.—Վխլս ծուռ թողիր, քըխ ըղմալ հըլնիր։

Ըսեց.—Բեր ընձի դիր սնդուկի մեջ, դու փախիր։

Շիրինշային դրեց սնդուկ ու գնաց տափավ։ Փարիքներն էկան, շապկներ խանին, արաբին կանչին։ Արաբն ըսեց.—Սընդուկ հընգև կոտրեր ա։

Հելան իրեքով գնացին ու մտածեցին.—Այ հա՛յ, ըստեղ մարդ կա։

էն մեկն ըսեց.—Եկեք դանենք՝ դարձվորութուն թափի վրեն։

էս մեկն ըսեց.—էկեք խանենք, ցխենք գետին։

Թողին գացին, արաբն սնտուկն վերցնեց, գընաց։ Կնիկն ման եկավ՝ շատ, քիչ, չգտավ։ էկավ էդ հատուղ մոտ, տեսավ անգին քարեր կա մեջ, մե տոպրակ անգին քար լցնեց, թողեց էկավ. մե անծանոթ ճամփա տվեց հառջևն ու գնաց։ Գնաց տեսավ որ անասուններ կան, չոբաններ կան։

Ըսեց.—էթամ էստոնցից խաց ուղեմ, ուտեմ։

Գնաց, ըսեց.—Բարև չոբա՛ն ախպե՛ր, սոված եմ, խաչ տու ուտեմ։

Նստավ, խաչ բերևց, կերավ, ըսեց.

— Դու էս վայրենի սարերի մեջ ի՞նչ գործ ունիս։

Ըսեց.—Անտեր, անտիրական կին եմ։

Չոբան ըսեց.—Ես, էս օչխարը իմ խազինին ա, ժառանգ էլ չունեմ. արի՛ տանեմ ընդունց կուլուղդար, մինչև քո կյանքի վերջ։

Ըսեց.—Որ բանից լավութիւն էնես՝ քո ոտներր կպաչեմ։

Մնաց չոբնի կուշտ, հիրկուն առավ բերեց խազնչի մոտ։ Խազնչին համաձայնավ, մնաց, լավ կծառայա։ Խազնչին տեսավ, որ ըստր միշտ կկարճնա, փոր կբանցրնա։ Դու մի սաա էն վախտ որ ծառից իջուշն, հուր մարդուց էրեխով ա մացե։

Խազնչինը չոբնին ըսեց.—Դու որ էդ գործ կատարեր իր, հընչի՞ բերիր մեր տուն։

Չոբան հերթավավ, խազնչին հավատաց։ Էդի աղատավավ, տղա բերեց, կնքեց, անուն դրեց Ասլան բեկ։ Ուժեղ տղա դառավ։

Խազնչինը ըսեց.—Քու երեխեն մի՛ թողա էթա քաղքի մեչ։

Բերեց անգին քարերուց մե խատ տվեց տղին, ըսեց.—Կտանես բազար, կպատռացուս, հիրիկուն հետ կբերես։

Ասլան բեկը առավ գնաց բազառ, դալչներն օր տեսավ՝ դժվան. թագավորի պետություն էսի չկանա առնի։ Բերին խափին, ձեռից առան, երեխեն լալով թողեց էկավ։ Կռվան էդ քարի վրեն, ըսին.—Էսի թագավորին կվասե։ Տարան թագավորին տվեց, բերողին բանել տվեց, ըսեց.—Էս անգին քարը իմ խազինից ա, դու գողացել ես։

Ըսեց.—Թագավորն ապրած կենա, էդի այսինչ վաճառականի թոռի ձեռից ենք առե։

Վաճառականին կանչին թագավորի դիվան, խարցմունք էրին։

Ըսեց.—Ընձի երեխա չկա. մե հատ կին ա էկե մեր տուն, կապրի, էդ կինն ա, կարող ա տվե ուր ճժու ձեռ։

Կնգան բերին, տորրակ անգին քարը վերցեց, մտավ թագավորի դիվան, բամանդար էղավ, նստավ։

Թագավորն ըսեց—Անզգամ գող, իմ քարը հընչի՞ ես գողցե։

Ըսեց.—Թագավո՛ր, էդ քու քարն ա՞, լավ գիտե՞ս։

Էդ կինն հարց տվեց սինուռներուն.—Սինուռնե՛ր, դուք լսա՞ք թագավորն ինչ ըսեց։

Ըսեց.—Ա՛յ։

Ըսեց.—Մե հատ սինի բերեք։

Սինիմ՝ բերին, դրին։

Թագավորին ըսեց.—Էդ անգին քարն դիր սինու մեջ։ Դրեց. տորրակ անգին քարը լցեց, խառնեց, ըսեց.

— Թագավո՛ր, քո քար ո՞ր մեկն ա։

Թագավոր լավավ, լեզուն բռնվավ։

Ըսեց.—Թագավո՛ր, անպիտան, թե կարիք ունես, մե քանի խատ վերցու, հորի՞ կզպարտես։

Թագավորը դարձվորավ։ Հելավ հուր քարեր վերցեց, երեխին առավ էկավ։ Թագավորը հընդավ խիվանդ, ոչ մի բժիշկ չկարաց առողջացնի։ Լոխման հեքիմ բերին, հետր թուղթն հիշկաց, ըսեց.—Ախր զամանի խնձոր հելի, թագավոր ուտա, կլավանա, չի՝ կբախսնա։

Երկինք-գետին քննեցին, ոչ մեկը չիմացավ Ախր զամանի տեղ։ Մնաց, Ասլան բեկը դառավ տաս-տասխինգ տարեկան։ Ըսեցին ֆլան վաճառականին մե թոռ ունի, էնի կանա էթա Ախր զամանի։ Կանչին Ասլան բեկին, տարան դիվան, ըսին.—Պետք ա էթաս Ախր զաման, խնձոր բերես, օր մեր թագավոր ուտա, առողջանա։ Թուղթ գրին, տվին Ասլան բեկին, էկավ։ Մերն հիմցավ, ըսեց.—Դու կանա՞ս էթաս։ Ըսեց.—Չ՛ճանչնամ, բայց թագավոր վճիռ կայացուցեր ա։

Հառավոտ հելավ գնաց թագավորի մոտ, ձի խնդավ, զենք վերցեց գնաց։ Գնաց մի ծերունի խալեվոր տեսավ, բարև տվեց, բարև առավ։ —Է՛ Ասլանբեկ ջան, ո՞նց կեթաս. Բազե մերան, Ախր զաման դրան ասլան կա նստուկ, քե կուտաս։ Հետ դա՞ռ գնա, թագավորից ուզի ջահել կսրախ ու մեկ էլ կայծակի թուր։ Ասլան բեկ գնաց թագավորից վերցեց կսրախն ու թուրը, ճամփա հնգավ։

Խասավ պապեյ, ըսեց.—Գնա՛, ձորու խետ մի դուրան կա, էդ դուրանից Ախր զաման կելնա. հեռվից թուրը քցա՝ ընչ էթա ասլանին կըտրա, էնա էրկու կտոր։

Ասլան բեկն ըսավ էլ էրեց. զանեց սպանեց, գնաց մտավ Ախր զաման, խնձոր քաղեց, լցեց խուրջին, նստավ ծառի խով, հանգստացավ։ Տեսավ իրեք զուշ էկան, բբկեղեն շապկներ խանին, մտան հաուղ լողկցան. արաբին կանչին, անտուկը բերեց, բացին, միջից խանին երիտասարդ Շերինշային, գացին։ Հելավ էկավ պապեյ մոտ, խնձոր տվեց, ձին քշեց էկավ խասավ թագավորի մոտ։ Թագավոր կերավ, սաղացավ։

Ասլան բեկն էկավ մորը պատմեց գլխի էկածը։

Մերն ըսեց.—Վա՛յ, էդի կո քո խերն էր։

Ու լաց հելավ։

Հառավոտ հելավ ձին խնդավ, գնաց հայդե՛, գնաց Ախր զաման։ Գնաց պապեյ մոտ, պատմեց իր գլխի էկածը.—Կնքամ կբերեմ։

— Ջես կանա, Ասլան բեկ ջան։ Կեթաս հա ռավոտ՝ աղոթրան օր բացվի մե խոր կփորես, կրակ կէնես, էնպես կէնես օր չհմանան։ Օր շապկըներ խանեն, քո խոր օր առնեն գնան, շապկըներ կքցես կրակ, կվառես։

Հելավ գնաց, ըտմալ էրեց. տափավ, արևն օր բացվավ, Շիրինշային առան գացին։ Ասլան բեկը շապկներ քցեց կրակը, վառեց, շաշկեն առավ ձեռն, կայնավ. հետ դարձան, թուր քաշեց՝ էդոնց լեզուն կպավ, հելան հեսիր, կայնան։ Ա-րաբն էլ.—Արևմտյան թագավորի տղեն եմ։

— Ըսեց.—Էս մի փարին քե, մեկն էլ՝ ընձի։

Էկան տեսան՝ պապեն էլ ջահելցած.—Ես էլ արևելյան թագավորի տղեն եմ, ինձ էլ էին բռնեն, բիձա շիքե։

— Էսա մե փարին էլ քեզի, պապի՛։

Էկան խասան մոր կուշտ, ուրախ, զվարթ ապրան։ Որոշ ժամանակից հետո հելան էկան Շիրինշայի հոր երկիր, խաբռնիս էրին, Ասլան բեկին պսակին էդ փարիի խետ։ Ջար գնաց ընդոնց, բարին ձեզի։

## 6(14). ԱՆԺԱՌԱՆԳ ԹԱՔԱՎՈՐ*

Ժամանակով մե թաքավոր գլնի։ Ըտոր ալվադ-թալվադ չունենա։ Էրեխու խամար շատ կըմտածեն թաքավոր, թաքուհին։ Օրերուց մե օր նստուկ կմտածեն, թե հուրանց ախոր ի՞նչ գլնի առանց էրեխու։ Հանդարծ դուռ կտփեն, ներս կըմտնի մե խատ դավրեշ բաբա։

Կասա.—Մարթ կնիկ ինչ մտածմունքի մեչ եք, թաքավո՛ր։

— Դու մեր ցավին դարման կէնե՞ս, դարվի՛շ բաբա։

— Իյարկե կէնեմ,—կասա դավրեշն։

— Դավրի՛շ բաբա, մենք էրեխա չունենք, կմտածենք, թե մեր ախոր ի՞նչ գլնի։

Դավրեշն ասաց.—Ես թուխտ կէնեմ՝ թաքուչին էրկու տղա կբերա, բայց մեկն տաս ընձի։

Թաքավորն ասաց.—Եթե ըթա բան էնես, ես քե շատ հարստություն կուտամ, եթե մինակ տըղեներ մնան ընձի։

Դավրեշ չհամաձայնվեց, շատ վիճելուց հետո թաքուչին մեչ մտավ։—Այ մարթ, մենք լա ոչ մե էրեխա չունենք, օր հելավ, թո մեկն էլ դավրեշ տանա։

Պայմանագիր կնքին, դավրեշն մե խնձորի վրեն գիր գրեց, տվեց թաքավորի կնգան, թաքավորի կնիկ կերավ, դավրեշ գնաց։ Հնցավ ինը ամիս ին օր, ին ժամ, ին րոպե, ին վայրկյան, թաքավորի կնիկ պառկավ, էրկու շոմալ տղա բերեց։ Եեյթի մշի տղեք շուտ կջոշնան։ Տղեք արթեն տաս-տասնութ տարեկան են, դուսն հուրանց խամար կխաղին։ Թաքավոր, թաքուչին տուն նըստուկ, հուրանց տնտեսական հարցերով են զբաղվուկ։

Թաքուչին ասաց.—Թաքավոր, օր հանգարծ դավրեշն էկավ տղին պահանջեց, ի՞մալ կէնաս։

— Ա՛հ տունդ շիկվի, օսկին մե յան կղնեմ, տղին մե յան՝ կքաշեմ, ձգասեմ. ա՛ռ օսկին, գնա։

Էտ վախտ դավրեշ դուռ բացեց.—Բարև՛, թաքավո՛ր ապրած կենա, պայմանիտ տե՞րն ես։

— Արի, դավրե՛շ բաբա, տե՛րն եմ,—ասաց թաքավոր։

Դավրեշն էկավ նստավ.—Թաքավոր ապրած կենա, իմ տղեն պտի տաս, տանեմ։ Թաքավորն ասաց.—Օսկին տղի հետ քաշեմ, օսկին ա՛ռ, գնա, մինակ թե տղեն մնա ընձի։

Դավրեշ չհամաձայնվեց։

Շատ վիճելուց հետո տղեներ ներս էկան, տեսան օր խերն դավրեշի խետ կվիճա. ի՛նչ կխոստանա՝ դավրեշ չամաձայնվի։ Պատի տղեն մոտցավ մոր խառցուց, թե հնչո՞ւ կվիճեն։ Մերն տղին խասկըցուց՝ ըսթա բանի խամար։

Տղեն մոտեցավ խորն, ասաց.—Եթե ըթա պայմանագիր եք կապե, ես կենթամ դավրեշի խետ, ընդոր տղեն եմ։

Խեր-մեր շատ լաց հեղան, թաքավոր խանեց հուր մատի մատնիք դրեց տղի մատ որպես հիշատակ, դավրեշ խեծավ ձին, տղին դրեց հուր թարք, գնացին։ Շատ գացին, թե քիչ, մե օր խասան դավրեշի տուն։

Դավրեշ տղին կարգադրեց օր—Թաքավորի տղա ջան գնա՛, թունդիր միս կա, խան բեր, օր խաց ուտենք։

Տղեն գնաց պուտկով միս խանեց բերեց, քասեք բերեց լցկու. շերևփով հմա՛ միսն լցնց, տեսավ օր՝ մարթու ձեռ ա, ոտ ա, հանգած ա. խասկցավ որ՝ մարթու միս ա։

Ասաց.—Վա՛յ, վա՛յ, էս դավրեշն ընձ էլ կուտա։

Հուրին ճաշ լցնց, բերեց տվեց դավրեշին։ Դավրեշ—Բա քեզ հնչի՞ ճաշ չես լցե։

Ասաց.—Ես անոթի չեմ։

Դավրեշ խորագ ուտելուց հետո ասաց.—Թաքավորի տղա՛, արի գլոխս մե քիչ գնեմ քո լոքին, քնեմ։

Թաքավորի տղեն նստավ, դավրեշ գլոխ դրեց լոքին, քնավ։ Թաքավորի տղեն սկսեց դավ-

* Հեքիաթը վերնագրված է մեր կողմից (ծան. կազմողի)։

րեշի մուրուս մաժմժել, դավրեշի մուրսի մշից իրեր խատ բալնիս դտավ։ Դավրեշի դլոխ հուր չոքի վրավից դրեց բարձի վրեն, հելավ դավրեշի մոներ սատուկելու։ Գնաց մե դուռ բացեց, տեսավ որ՝ մե տան մեջ մե յան օսկի յա, մե յան արծաթ ա։

Ասաց.—Վա՛յ, վա՛յ, օր էսի էսքան հարըստություն ունի, էլ իմ խոր օսկուն հնչի՞ թամախ կլինի։

Գնաց էն մեկել դուռ բացեց, տեսավ գույլի բաղ ա հավուզներով, ծառներով, բլբուլներ, սոխակներ կճվլան, ջրու շատրվան կզանա երկինք։ Գնաց երրորդ դուռ բացեց, տեսավ որ հօդա յա, իրեք խատ խրեղեն ձի կա. մեկ սև, մեկ՝ սիվտակ, մեկն էլ՝ կարմիր, մինչև չոքեր կվի մեջ են։ Տղեն ասաց.—Մեկ ա, դավրեշ պտի ընձի ուտա, յավաշ էս անասունները ես մե լավություն էնեմ;

Յախավել վերուց, հօդեն թամուղ ավլեց, չոթկ, դաշաք վերուց, ձիերուն ըմ՛լ թիմրեց, օր քրտինքն տռնելներուց կաթացե։ Բերեց կեր տվեց, ջրեց, դուս էկավ, էտ վախտ ասու հրամանով սիվտակ ձին հելավ լեզու.

— Թաքավորի տղա՛, խոքուտ-արևուտ մեռնեմ, դառցի բան կասեմ։ Տղեն դառցավ, ձին ասաց.—Էս լավություն օր դու մեզի էրիր, ըտոր խամար էլ մենք քեզի լավություն կէնենք. մեր տերն ոչ թե դավրեշ ա, այլ դև ա. չվախենաս, էտի յոթ օր կքնի։ Ի՛նչ կասեմ, գնա էրա. գնա վերցու դավրեշի խուրջին, մե հաշկն օսկի, անգին քար լից, մե հաշկն էլ քեզի խաց դիր. գույլի բաղից մե բութուկա ջուր լից դի. գնա՛ վերցու մե կտոր սապոն, դավրեշի փետե սանդր դիր, դավրեշի ասեղ վերցու, մե կտոր աղ վերցու, բե կապա իմ թարք, ես քեզի տանեմ խասում քո մուրադին։

Էդ հմեն գործեր կատարեց թաքավորի տղեն, խուրձին բերեց կապեց ձիու թարք, ձին ասեց.

— Սև, մեկ էլ կարմիր ձիերու պոչերուց մե-մե մազ քաշա, բեր դի քո տամռոցնիկ, դ՛էլի խեծի, էթանք։

Թաքավորի տղեն խեծավ ձին, գնաց։ Վեց օր, վեց գիշեր, վեց ցերեկ գացին։

Ձին ասաց.—Թաքավորի տղա՛, դառցի հետևանց տես՝ բան չերևա՞։

Տղեն նայեց տեսավ օր՝ ոչ մե բան չերևա, ասաց,—Մարթ չերևա։

Մե քիչ էլ գացին ասաց.—Մեկ էլ նայա հետևա։

Տղեն իշկեց հետև, տեսավ օր՝ մե մըժ ա բանցրցե։ Ասաց,—Դարվեշն ա գուբա, քշա՛, բայց անընդհատ հիշկա հետևդ։ Տղեն հա՛ կնայա հետև, դարվեշ էթալով կմոտենա։

Դավրեշ կասա,—Թաքավորի տղա՛, խոքուտ-արևուտ մեռնեմ, դո՞ր ա կերթաս, էտ ձիեր ես քո խամար ի պախե, կայնի՛։

Ձիուն կասա, օր դավրեշ մոտեցեր ա։

Ձին ասաց.—Թա՛լ դավրեշի սանդր քո հետև՝ գետին։

Տղեն սանդր թալեց, էտ աշխարհ դառցավ մեջա։ Դավրեշին հնցնելու խամար շատ դժվարություն հեղավ։ Դավրեշ մեջից դուս էկավ, բոռաց.—Թաքավորի տղա՛, խոքուտ-արևուտ մեռնեմ, էտ հարստություն քո խամար եմ պախե, դո՞ր ա կերթաս, կայնի գամ խասեմ։

Ձին ասաց.—Ասեղ թա՛լ։

Տղեն ասեղ թալեց, էտ սաղ չոլն հելավ փուշտատասակ, ըսկսեց դավրեշի ոտներ բռթել։

Ձին տղին ասաց.—Անընդհատ նայա հետևդ, պուճուճկիցդ հաշկերդ կխանա։

Դավրեշը տանջամախ հլնելով մե կերպ էտ չոլից դուս էկավ, էլի բոռաց.—Թաքավորի տղա՛, խոքուտ-արևուտ ղուրբան, կայնի, դո՞ր ա կերթաս։

Ձին ասաց.—Աղն թա՛լ։

Տղեն աղ թալեց։

Էտ սաղ դար-դաշտ դառցավ աղ։ Դավրեշի արունլվա ոտնե՛ր՝ աղոտ դաշտ, մամուռ զարկեց դավրեշի քալլեն։ Շատ տանջվելուց հետո աղի դաշտից էլ դուս էկավ։

Ձին ասաց.—Թա՛լ սապոն։ Էտ սաղ դաշտն հէլավ լծիկ սապոն, ամեք ոտ թալելուն՝ լալըտրաց, հընգավ, վերջում դուս էկավ էտ դաշտից, ջարթխշուր հեղավ։

Թաքավորի տղեն ձիուն ասաց.—Էտ դաշտից էլ դուս էկավ։

Ձին թաքավորի տղին ասաց.—Գյուլլի բաղից վերցրած էն բութուկա ջուրն խա՛ն, մենք խասեր ենք ձորի, ես կթռնեմ ձորն, ըտեղ պալ կա. բութալեն ըմ՛լ կզարկես պալին, օր ջուրն հառեչ չթափի. թեկուզ մե կաթ էլ՝ թափի էտ ձորի մեջ։

Թաքավորի տղեն կատարեց ընթա, իմալ ասաց ձին։ Ու էտ ամբողջ ձորն դառցավ անտակ գետ։

Ձին թաքավորի տղին ասաց.—Հիմի՛, պառկի քիթմոքիտ վրեն, դավրեշն ի՛նչ կէնա՝ չիշկես ընդոր յան, փչա, հաշկերտ կխանա. ի՛նչ հարց կուտա քեզի, ես կասեմ, դու կպատասխանես։

Տղեն ձիուց հիճավ, պառկավ քիթմոքի վրեն, ձին թողեց արծալու։ Դավրեշն էկավ խասավ գետան հափ, տեսավ, որ՝ չկանա հնցի։ Ասաց.—Թաքավորի տղա՛, խոքուտ-արևուտ մեռնեմ, էս գետն իմ՛լ հնցար, ասա՛, ես էլ հնցեմ, չէ՞ որ իմ հմեն հարստություն քո խամար եմ պախե։

Ձին ասաց.—Ասա՛, օր ըտեղ մե խատ ջախչի

քար կա, քաշա բե՛ գետն հափ, էտեղի գումնի բնատեն հնցու չախչի քարի ծակով, լիվ ջան, որ դուս լինգա, պառկի չախչի քարի վրեն, քեղի պինդ կապա, քեղի ուժ տու, լծա ջրու հերհասով, արի։

Թաքավորի տղեն էտ նույնն կրկնեց դավրեշին։ Դավրեշն կատաղեց նույն գործողությունն. ջաղչի քար դավրեշին քաշեց ջրու տակ՝ գլ-գլ-գլ-գլ, դավրեշն խեխդվավ։

Քին թաքավորի տղին ասաց.—Քաքավորի տղա՛ ջան, իմ պոչից էլ մե մազ քաշա, դիր քո տամոժնիկի մեջ, եփ քի պետք գուքանք, մեր մաղերուց որին կուզես՝ տու կրակ, նույն րոպեին մենք կխասենք քե։

Թաքավորի տղեն սիվտակ (բոզ) ձիու պոչից մե մազ քաշեց, դրեց տամոժնիկ, ձիու ճակատ պաշեց, ձին դարցավ ետ, թաքավորի տղեն գունաթրիմազգիլ գնաց։ Շատ գնաց քե քիչ գնաց, էտի աստված գիտա, խասավ մե գառնարածին։ Խանեց մե օսկի տվեց գառնարածին, ասաց.—Մի գառ մոռքա ուտենք, սոված ենք։

Գառնարած հմա օսկին տեսավ, գառ մորքեց։ Մինչև գառնարած խորագ պատրաստեց, թաքավորի տղեն գառու փոր տարավ հառուն, լա՛վ լվաց, խաքուց հուր գլոխ, հելավ քաշլիկ, էկավ խորագ կերավ պրծավ, շնորհակալություն հայտնեց, գնաց։ Գնաց, գնաց, խասավ մե թաքավորանիստ քաղաք, որի թաքավորն էր Իրիցու Մեխակը։ Քաշլիկ գնաց էս յան ման էկավ, էն յան ման էկավ, որ գործ գտի։ Շատ խնդրելուց հետո, որպես անտեր տղա, քաշլիկին տվին թաքավորի պատի ախչկա բաղվանչու պիճու։ Քաշլիկն սկսեց բաղվանչու ձևի տակ աշխատել, իսկ թաքավորի աղչկա պալատի լուսամուտներն գիշեր հուր բաղի վրեն։ Հմնօր նստուկ լուսամուտ քրգեխ կչներ, համ էլ գիշեր հուր բաղին. մայիս ամիսն էր, թութն ու գելաղ խասեր ին։

Բաղվանչին գանչեց քաշլուկին օր,—Պիճո՛ ջան, արի էքանք բաղ, թութ, գելաղ քաղենք, տաննենք թաքավորի ախչկան, որ մեզի փող տա, բերենք ծախսենք։

Գացին բաղ, գելաղ, թութ քաղին, լցին վնդրոնները մեջ, էկան հուլիկ։

Քաշլիկն ասաց.—Բաղմանչի՛, ո՞ն պտի տանա բտոնք։

Բաղմանչին ասաց.—Ես կտանեմ։

Քաշլուկն ասաց,—Բա որ դու գացիր՝ դողերն էկան ընձի ուխի՞ն, բաղն ավիրի՞ն։

Բաղմանչին ասաց.—Դադա՛, ո՞ն կանա մտի թաքավորի բաղ, ընդոնց ռիսկն ի՞նչ ա։

Բաղմանչին գնաց։

Քաշլիկն (պիճոն) սև ձիու մազ տվեց կրակ, րոպեական ձին կայնավ կող, ասաց.—Թաքավորի տղա՛, խոքուտ-արևուտ ղուրբան, ավիրե՞նք, թե շինենք։

Տղեն ասաց.—Մեզի շինելու բան չունենք։

Զիյու թարքից շորեր խանեց խաքավ Քաշլուկ, խանեց քանքուլ, մազեր սանդրեց, խնծավ ձին, շաշկեն քաշեց։ Ինչքան ծախկուկ ծառ կար, ինչքան թուփ կար՝ սկսեց բռթել, ավիրել. ինչքան կանաչի կար՝ բռթեց, ավիրեց։ Թաքավորի ախչիկ էդ բոլոր գործողություններ տեսավ և մատն կծեց, որ դա հասարակ տղա չէ։ Բաղվանչին տարավ գելաղն ու թութ տվեց թաքավորի ախչկան, թաքավորի ախչիկ յոթ-յոթ շալի փարա տվեց, բաղմանչին դառցավ էկավ դեպի բաղ։ Մինչև բաղվանչու գալ, Քաշլիկն ձին թողեց, էկավ մըտավ հուլիկ ու ճիկ տվեց, թե բաղվանչին եփ կմոռնա։ Բաղվանչին հմա մոռցավ բաղին, Քաշլիկն ըսկսեց բոռալ ու գոռալ.—Յաման ու յամա՛ն, ես մեռա։

Բաղվանչին մոռցավ.— Յամա՛ն, Քաշլիկ ջան, էտ ի՞նչ ա հեղե։

Քաշլիկն ասաց.—Զայրմարս հեղե քեզի, ուրնմն դու գիտիր, օր գողեր գուքին, ընձի թողիր գացիր. ձիավորներն էկան, բաղն ավիրին, ընձ էլ ջարթնշուր էրին, գացին։

Բաղմանչին ասաց.—Քամահ տղա, եսիմ ո՞ն ա հելե, էկե քեզի մե սիլա զանե, դուն էլ էրիր մե չոշ բան. բան չկա, հնսա թաքավորի ախչիկ յոթ շալի փարա յա տվի, կենքամ ճուտ կառնեմ, բրինձ կառնեմ, քեղ էլ մե շլապկա կառնեմ կրերեմ, որ դնես գլոխ, քո քաշալ գլոխ չերևա։

Գնցնի որոշ ժամանակ արդեն ծիրան, խյար, վիշնին խասեր ին, մի օր էլի բաղվանչին Քաշլուն ասաց.—Քաշլի՛կ ջան, էքանք բաղ բան քաղենք, տաննենք տանք թաքավորի ախչկան, որ մեզի բախշիշ տա։

Տղեն կասա.—Քայմուն հեղի, էլի ընձի կուդես տալ ուխե՛լ, էնդրուն էլ ուխին, բաղն ավիրին։

Բաղվանչին ասաց.—Քա եսիմ ո՞ն ա հեղե, պադայական էկե մե էրկու սիլա զարկե, հիսկեր էս բննգե։

Քաշլիկին համոզեց՝ գնացին բաղ, քաղին, բաղմանչին առավ գնաց դեպի թաքավորի ախչկա տունն։ Բաղվանչու էքալուն պես, քաշլիկ խանեց կարմիր ձիու պոչ, տվեց կրակ, կարմիր ձին րոպեական կայնավ կող։

— Թաքավորի տղա՛, խոքուտ-արևուտ ղուրբան, ավիրե՞նք, թե շինենք։

Տղեն ասաց.—Մեզի շինելու բան չկա։

Անմիջապես ձիու թարքից շորեր խանեց, խաքավ, քաշլուկ խանեց, քանքուլ մաղեր սանդրեց, խնծավ ձին, շաշկեն քաշեց, հընցավ բաղի մեջ աչ-ձախ բրթեց, բաղն ավիրեց, էկավ, ձին

բաց թողեց, մտավ հոլիկ, ճիկ տվեց, թե եսի կգա բաղմանչին։ Էս անգամ էլի թաքավորի ախչիկ նկատեց, թե տղեն ինչ գործողություն կատարեց։ Բաղվանչին տարավ միրգն ու բանջարեղեն հանձնեց թաքավորի ախչկան, թաքավորի աղչիկ մե քանի շալի փարա տվեց, բաղվանչին էկավ։ Քաչլիկ հա՛ ճիկ կուտեր, հմա՛ բաղվանչին մոտ-ցավ բաղին, քաչլիկ սկսեց բոռալ, քրվել՝ ես քո բաղվանչի ըստար, ես քո բաղվանչի ընթար։

Բաղվանչին մոտցավ,—Քաչլի՛կ ջան, ի՞նչ հնչև։—Քաչլիկն ասաց.—Ջայլմար քո պինչն ա հնչև, դու գիտես եսի գուկան քո ջնամիներ, ծողես կենթաս, որ գան ընձի տփեն, համ էլ բաղն ավիրեն։

Բաղմանչին էլի պ'ամոզա, օր թաքավորի ախչիկ փող ա տվե, քեզի բլուլ կառնեմ, նողուլ կառնեմ, մե կերպ Քաչլիկին ձեն կդրեց։

Սկսեցին ավիրուկ տեղանք վերանորոգել։ Անցավ մե քանի օր՝ ճիկեր, համիշ, վաղահաս տանձ խասավ։

Բաղվանչին ասաց,—Էդ հմեն խասած պտի տանենք թաքավորի ախչկան։

Քաչլուկ կասա.—Էլի ընձի կուտաս տփե՛լ։

Ասաց.—Լա՛վ, այ մարթ, ամոթ ա, եսիմ ո՞ն ա հնչած, էկած բան ա ուղած՝ չես տվե, մե սիլա զարկած։

Էլի գնացին բաղ, ինչ-որ պետքն էր հավաքեցին, բաղվանչին վերուց, գնաց թաքավորի տուն, Քաչլիկ սիվտակ ձիու մաղ տվեց կրակ, րոպեական սիվտակ ձին կայնավ կող, խարցուց։

—Թաքավորի տղա՛, շինե՞նք, թե ավիրենք։

Տղեն ասաց.—Շինելու բան չունենք։

Տղեն նստավ ձին, շաշկեն քաշեց, սկսեց ավիրել։ Թաքավորի ախչիկ հմեն ինչ տեսավ։ Քաչլիկ էլի մտավ հոլիկ, սկսեց ճիկ տալ, թե բաղվանչին եսի գուկա։ Բաղմնանչին համշեղեն հանձնեց թաքավորի ախչկան, մե քանի շալի փող տվեց, թաքավորի ախչիկն ու ասաց.

— Կիրակի Քաչլիկին կողորկես իմ մոտ։ Դու էլ իրեք խատ ճիկերուկ պատրաստա, մեկ՝ նեխուկ, մեկ՝ կիսանեխուկ, մեկն էլ՝ դիլիմ. մե օսկի գնդրևս։ Եսի օր եկավ՝ Քաչլիկն էլի վա՛յ-վա՛յ էր դրև, որ իմիր հուրին տփած, բաղն էլ ավիրած։ Բաղվանչին սկսեց համոզել, օր թաքավորի ախչիկ հուրին գանչեր ա։—Ես էլ փող եմ բերե, բանման կառնենք, դու կենթաս, ես կմնամ։

Կիրակի օր միրգ հավաքեցին, բաղվանչին մե խունչա պատրաստեց, տվեց Քաչլիկին, Քաչլիկ առավ, գնաց թաքավորի ախչկա տուն։ Էն ժամանակ օր բաղվանչին կենթեր, ըսկի թաքավորի ախչիկ տեղից չէր շարժվե, մատով նշան կէներ, թե դիր էսինչ տեղ, մե քանի շալի փարա կուտեր, կողորկեր։ Քաչլիկ լա չէր խասե դուռ, թաքավորի ախչիկ վազավ դուռ բացեց, մեծ հարկանքով ընթունեց, հարկեց, պատվեց, մե կուց էլ փարա լցեց խունչեն, ասաց.—Տա՛ր։

Տղեն գնաց, բաղվանչու խատ սկսեց կռիվ, թե հնչի՞ թաքավորի ախչիկ ընձի մե կուց փարա յա տվե, իսկ դու գուկիր կասիր, թե յոթ շալի ա տվե, ուրեմ պախեր ես քեզի։ Բաղվանչին էլ ղարմացավ։

Օրերուց մե օր թաքավորի տուն կերուխում էր, որին կմասնակցին սինոթականներ։ Թաքավորի ախչիկ կգանչա հուր էրկու մեծ քերուն (թաքավորին ուներ երեք աղչիկ), բաղվանչուն բերել տվեց հուր պահանջած իրեք ճիկերուկներ։ Ջոլ քրոջ դանակ զարկեց նեխուկ ճիկերկի մեջ, միչնեկ քրոջ դանակ զարկեց կիսանեխուկ ճիկերկի մեջ, հուր դանակն էլ զարկեց էն դիլիմ մե օսկի ճիկերկի մեջ, հատուկ խունչով օղորկեց էն պալատ, որտեղ ճաշկերույթ էր։ Թաքավորին հայտնին, օր ախչկներ ձեզի հատուկ ճիկերուկ օղարկած։

Թաքավորն ասաց.—Բերե՛ք սեղանին։

Դանկներու վրեն կարթցին, հառեչ ջոլ ախչըկա ճիկերուկ կիսին, նեխախոտ տվեց պալատին։

Թաքավորն ասեց.—Տարե՛ք, տարե՛ք, փշանա էտի՝ հուր ճիկերուկ։

Բերին միչնեկ ախչկա ճիկերուկ կիսին, կեսն կերվավ, կես չկերվավ, թաքավորն ասաց.—Վերցե՛ք, վերցե՛ք էտ էլ, փշանա հուր ճիկերուկով։

Բերին պատի ախչկա ճիկերուկ, կիսին դիլիմ՝ մեջ օսկի։

Թաքավորն ասաց.—Էս ի՞նչ խանելուկ ա, ժողովո՛ւրդ։

Շատ մտածելուց հետո գիտնականներից մեկն ասաց.—Թաքավոր ապրած կենա, քո ախչըկներ կուզեն ամուսնանալ, ջոլ ախչկա ամուսնության վախտն հնչեր ա, միչնեկ ախչկա ժամանակն էլ ա համարյա հնչե, իսկ պատի ախչկա խակաի վախտն ա։

Թաքավոր հրաման տվեց.—Ջառ դանչուցեք (հայտարարություն), քո՛ կիրակի օր գան տղաներ՝ ախչկներու լուսամուտի տակով հնչնեն. օ՛ր մեկին ղարկին խնձորով, ընդորն էլ քո առնեն։

Վին որ մե խատ կով ուներ, էծ կար, ծախին տվին հուրանց շոր, կոշիկ առան խաքան, էկան թաքավրի ախչկներու լուսամուտներու տակով հնչան։ Ջոլ ախչիկ դանեց վազիրի տղին, միչնեկ ախչիկ ղարկեց վաքիլի տղին, պատիկ ախչկան մինչև հիրկուն կայնան՝ ոչ մեկի չղարկեց։ Արև մայրամուտ էր՝ բաղվանչու պիճոյ Քաչլիկ քո՛ որտեղի՞ց եկավ, ըտեղով հնչավ։ Պատի ախ-

չիկ զարկեց բաղվանչու պիճոյ Քաչիկին։

Էն էլ,—Վա՛յ իմ կոտ, վա՛յ իմ կոտ-ասելով գնաց չոմ հոլիկ։

Ետքար տարան թաքավորին, որ ջոչ ախչիկ զարկեց վազիրի տղին, միչնեկ ախչիկ՝ վաքիլի տղին, պստիկն էլ՝ բաղվանչու պիճոյ։

Թաքավորն ասաց.—Դացե՛ք, վաղն արեք, զարաֆատ ա էրե։

Վաղն էլի նույն կրկնվավ։

Թաքավոր կարգադրեց, օր պստի ախչկան Քաչիկի խետ տանեն թալեն ղազանց, իսկ վազիրի, վաքիլի տղեներուն յոթ օր, յոթ գիշեր խառնիխ էրեց, շատ բաժինք տվեց էրկու ախչկներուն, էրկու փեսքին էլ նշանակեց ջոչ պաշտոնի։

Դառնանք Քաչիկի, մեկ էլ պստիկ ախչկա յան։ Օրը մեկ էր, պստի ախչկա տփոց տսվմեկ էր, բայց ախչիկ մացեր էր շիվար, թե հուր հաչկերուն էր երևացե՞, թե ինչ բան էր պաղալե հուրին, պարզ չէր, ոչ էլ հերեսատեղ ուներ էթեր խոր տուն։ Թաքավորն էլ էտ ախչկա խամար էնքան էր մտածե, օր տամլա կապեր էր, կմեռներ։ Լոխման հեքիմ գանչին, չկարցավ թաքավորին բուժին։ Մե հուրիշ երկրից լոխման հեքիմ բերին, էնի դտավ թաքավորի դեղն. դեղն էն ա, որ թաքավոր բուժվի՝ առյուծի կաթի, առյուծի ձագի մսով։

Ո՞ն էթա առյուծի կաթի, ո՞ն չէթա, թաքավորի իշխան փեսեք՝ վազիրի տղեն, վաքիլի տղեն։ Բերին բավականին փող-փարա տվին ըտոնց, ջաղդի դրին, օր էթան առյուծի կաթի։

Քաչիկն կնգան տփեց, ասաց.—Գնա՛ ասա, որ ընձ էլ մե ձի տան, էթամ կաթ բերեմ։

Ախչիկն ասաց.—Սև՛ գա վրետ, իմ խեր քո հերեսից, իմ հետևից տամլա կապե՝ կմեռնի, ես ի՞նչ հերեսով էթամ դան։

Քաչիկ նորից կնգան կտփա, կօղորկա տուն։ Ախչիկ գնաց, հլա դուռ չէր բացե մեր էրկու բարեն չափեց ախչկան, թե—Ոմոտմե՛ռ, քո խեր քո հերեսից տամլեն կապե՝ կմեռնի, դու էլի էկար ըստե՞ղ։

Ախչիկ կասա.—Ա՛յ մեր, ի՞նչ էնեմ, իմ վրեն սև տվե տփելով, կասա,—Գնա՛, մե ձի էլ դու րե, ես էլ էթամ կաթի։

Ըստեղ նստուկ վազիրի վաքիլի կնիկ ասին, —էնա ծառի տկի ծռտոտ ձին էլ տվեք, քո էն էլ էթա կաթի. դո՞ր պտի էթա՞, կէթա էտատեղրանք քնի, կդառնա, էլի։

Ծառի տկի ծռտոտ ձին բերին տվին ըտոր, թաքավորից գոխտու։ Քաչիկ բերեց խսիլից փալան սարքեց, ջուվից գամ սարքեց, խեծավ ձին, գնաց կաթի։ Սաղ քաղաքի ճիժ-պիժ հընգան Քաչկուկի հետև, կապին քարալը, քաղքից տփելով խանին դուս, ասելով, թե.—Թաքավորի Քաչիկ փեսեն, գնաց թաքավորին առյուծի կաթ բերա։

Քաչիկ քաղքից դուս էկավ, գնաց մե ձորի մեչ ձին թողեց, սիվտակ ձիու մազ տվեց կրակ։ Սիվտակ ձին րոպեական կայնավ տղի կող, ասաց,—Թաքավորի տղա, խոքուտ-արևուտ ղուրբան, ավիրե՞նք, թե շինենք։

Տղեն ասաց, օր հուր աներ թաքավոր խիվանդ կմեռնի, առյուծի կաթ՝ հուր ձագի տկի մսով ա ուզած, պտի ճարենք։

Ձին ասաց.—Էսինչ սարն առյուծ ծներ ա, ոտն հելէ քարկիճ, էսինչ պալի տակ, խասեր ա, պադռելու վրա յա. ցավից մե ձեն երկինքն ա, մեկ գետին ա։ Ես քե կտանեմ խասում ընդեղ, մե ղամշի ծեր կբզես, սողալով կեթաս մոտենաս, ղամշի ծերով ոտի յարեն կծակես։

Էնի ուժեղ ցավ կզգա, կասա.—Ո՞ն էր, հընգեր ձեռս՝ բարալամիշ կէնի։ Դու տափի, դուս չիգաս, հմա թարախն ու արուն կթափի, գ'անգստանա, կասա.—Ո՞ն էր էս իմ ոտի յարեն ծակող, արի՛ մոտ, ի՛նչ լեզուտ պտըտա կուտամ։

Դու մոտցի, ուզա էն, ինչ օր քե հարկավոր ա։

Ձին կխասու էտ սար։ Ձին զատցավ, տղեն գտավ առյուծին, ինչ ձևով ձին որ խորուրթ էր տվե, կկատարա էտ գործողությունն։ Հմա յարից արունթարախ թափելուց հետո առյուծն կդինջանա, կասա.—Ո՞ն որ ես, արի՛, ի՛նչ լեզուտ պտտա, կուտամ։

Տղեն դուս էկավ, ասաց.—Թաքավոր խիվանդ ա, լոխման հեքիմ քո կաթն, քո ձագի տկի մսով ա ուզե։

Առյուծն ասաց.—Քո տալրցուցողի վիզը կոդրի, խոսք չպտի տի, օր տվեր եմ, կուտամ։ Հաչկերս խփում եմ, ձագերուց մեկն տար, բայց մորթելու ժամանակ հմա՛ ձեն հընգավ իմ հանդա՛ք քե կտոր-կտոր կէնեմ։

Թաքավորի տղեն ձագ վերուց տարավ, սիվտակ ձին բերան թալեց, առյուծի ձագի վզից բռանեց խեխտեց, տղեն տիկ հանեց, առյուծի կաթից կթեց, լիք լցեց տիկ, շնորակալություն հայտնեց, նստավ ձին, գնաց։ Ջիուն ասաց.—Ընձի ըմալ տեղ տար, որտեղով թաքավորի փեսեք պտի էթան առյուծի կաթի։

Ջաղդեն հանդիպավ մե չոբնու, որն էծ էր պահում. փող տվեց՝ մե ուլ մորթեց չոբանն, տիկ խանեց, տկի մեջ իծու կաթ կթել տվեց լցեց, գընաց մե տեղ չաղր կապեց, նստավ։ Տեսավ՝ թաքավորի վազիրի, վաքիլի տղա-փեսեք աշխարհ ֆռալով ոչ մե բան չճարած, նիյաթ-ղիյաթ կդառնան երկիր։

Թաքավորի տղեն ձեն տվեց.—Ախպե՛ր, ախպե՛ր, ի՞նչ մարթ եք, արեք՝ տենամ։

Թաքավորի էրկու փեսեն մոտցան, բարևեցին, տղեն խառցուց, թե ի՞նչ մարթ եք, դո՞ր ա կենթաք։ Ընդոնք էլ ասին,—Բա դու ի՞նչ մարթ ես, ախպե՛ր ջան, մեր ցավին դարման կէնե՞ս։

Թաքավորի տղեն ասաց.—Ես լոխման հեքիմ եմ, իմ մոտ ի՞նչ դեղ ասեք՝ կա, չումբլալ առյուծի կաթ՝ հուր ձաքի մսով էլ կա։

Ընոնք ասին.—Մենք էլ առյուծի կաթի ա ման գուդանք, եթե հնարավոր ա, մեզ առյուծի կաթ տուր։

Տղեն ասաց.—Կուտամ, բայց փողով չեմ տա։ —Բա ինչո՞վ կուտաս,—խառցուցին ընդոնք։

Տղեն ասաց.—Էսա իմ մատնիքով ձեր նստելատեղ դաղմա զարկեմ, տարեք, ախպե՛ր։

Ընոնք ինչքան կխնթրվեն, որ օսկով տա, բայց տղեն չամաձայնվի։ Նային հիրուր փեսեք, ասին.—Դը լա՛վ, ըստեղ ո՞ն կա, թո դաղմեն զարկա՝ տա, հալը փողն էլ կմնա մեղի։

Տղեն էրկու բաջանաղին էլ դաղմեց, իծու կաթն հուր ուլի տիկի մշով տվեց, ասաց.—Տարե՛ք։

Ըստոնք ուրախ-ուրախ կաթն առան, գացին։

Տղեն էլ նստավ հուր սիվտակ ձին, էկավ որտեղ որ հուր ձին թողեր էր՝ ընդեղ հիճավ, տեսավ՝ հուր ձիուն դել կերեր։ Սիվտակ ձին բաց թողեց, հուր քաշլու դրակ դրեց գլոխ, ձիու օսկոններ ժողվեց, տիկն դրեց մեջ ջուվալ, կապեց ու մտավ քաղաք։ Ձիժ-ձիժ քարալղին, թե՝ «Թաքավորի քաշլիկ փեսեն առյուծի կաթ բերեց», մե կերպ փախավ, մտավ տուն։

Խաբար տանք թաքավորի էրկու «աղա» փեսից։ Բերած իծու կաթ, տված թաքավոր խմե, արթեն փորն էլ կեթա տակ։ Լոխման հեքիմին գանչեն, կաթն ստուգել կուտան, տենան որ՝ ըստոնց բերած կաթն իծու կաթ ա։

Քաշլիկն թաքավորի ախչկան կտփա, կասա. —Դնա՛, մե բաժակ էլ դու բե քո խոր տնից, ես էլ եմ կաթ բերե։

Ախչիկ կասա.—Ա՛յ մարթ, հենա էն էրկու փեսեն բերած իմ խեր կմեռնի, կասեն իծու կաթ ա։

Տղեն կասա.—Դնա՛, քո խոր ֆլան-բեխվանե։

Վերջապես ախչիկ մե կերպ կեթա։ Շատ թութ-մուրից հետո մե սաքան կուտան, ախչիկ բերա։ Արթեն րոպե-րոպե կսպասեն, որ թաքավոր մեռնի։ Ախչիկ կտանա կուտա, կառնեն գիշկեն որ՝ էտ կաթն ընդրուց չէ, որ համ պինդ ա, համ էլ դեղին ա։ Լոխման հեքիմին ցույց կուտան, որ «էս կաթն՝ էս ի՞նչ կաթ ա, կվախենանք ըստուց»։ Լոխման հեքիմ կստուգա, կտենա որ էտի իսկական առյուծի կաթ ա։

Կասա.—Խմցուցեք։

Թաքավոր կխմա, գլգլուն գնգնի փոր, քըրտինք գուվա վրեն։ Կօղորկեն երկրորդ բաժակ բերեն, կխմա, գարմրվի։ Ըստուց հետո թագավոր մարթ կօղորկա տղին, կխնթրա կաթ։ Բայց տղեն ի՞նչ ամանով որ կաթ կուտա, ընդրով է օսկի կառնի։ Վերջ, թաքավոր կլավնա, գլնի ոտի, քեֆ կկազմակերպա, որ հուր էրկու փեսեք՝ վաղիր, վաքիլի տղներ առյուծի կաթ ա բերած, հինքն բուժվեր ա, յոթ օր պտի քեֆ էնեն դաշտում։ Եփ դուս դուկան քեֆի, Քաշլուկ կնգան ղոռով կօղորկա, ձի կուզա, որ հինքն էլ էթա քեֆի։ Կնիկ ղոռով-դորով մե ձի կբերա։ Քաշլիկ կնստի ձի, թե ընդոնք գացած արևելք, էնի կեթա արևմուտք։ Կտանա ձին մե տեղ կորնգա, սև ձիու պոչ կուտա կրակ, սև ձին գուկա։ Տղեն շորեր կխաքի, քանքուլ կսանդրա, կնստի ձին, կեթա ընդեղ, որտեղ ձիաթողս էր կխաղին։ Վաղիրի տղին կդնա վաքիլի տղի ձիուն, ընդոր էլ վաղիրի տղի ձիուն, ըստոնց լավ կտիա, համեն կզարմանան, թե էդ ի՞նչ մարթ ա։ Կծծղան էրկու փեսեքի վրեն, Քաշլիկի կնիկն էլ դատ գլնի, կճանչնա հուր մարթուն, հինքն էլ կծծղա։ Քրեր կբանփեն գլխուն, կասեն թե.—«Դու հնչի՞ ա կծծղաս, քո մարթ հչենա փողլսուն քնուկ ա։

Տղեն կաճանաղ որ կֆոգու, դիտմամբ հուր ձեռ կվիրավորա։ Թաքավոր որ կտենա էդքան քաջ տղա ա, կխանա հուր յոթը տարվա խարջի լայլող կկապա տղի ձեռ։ Երկրորդ օրն էլ նույն խաղ կսկսվի։ Քաշլիկն էս անգամ էլ կարմիր ձիով կկատարա նույն գործողությունն։

Թաքավոր կդանչա հուր պալատականներուն, կասա.—Քաշկա մեր թաքավորության էս ձևի մե խատ զորավար հլներ։ Երրորդ օրվա խաղին Քաշլիկ հանդեն գուկա սիվտակ ձիով, շատ կնեղա թաքավորի զորքին, վերջում թաքավորի երկու փեսեքին՝ վաղիրի, վաքիլի տղաներուն, թաքավորից կպահանջա, որ երկուսն էլ հուրանց երկրից հանցագործության կատարելու համար փախած ա էկած ա ըստեղ, կպրեն, ես էլ եկեր եմ նո տանեմ պատժելու խամար։

Տղին ինչքան թաքավոր կուզա համոզա, որ ըստոնք հուր փեսեքն են, էն էլ վաղիրի, վաքիլի տղներ են, չկանա, որովհետև տղեն կասա.—Իմ խեր քո նման թաքավոր չէ, էնի մեր սաղ ժողովրթին դաղմեր ա, կուզե՞ս ստուգենք։ Թաքավորի հրամանով կկանչեն, կստուգեն։

Կասա.—Տեսե՛ք, էն մատնիկն էլ եմ բերե։ Եփ կբացեն նստատեղեր, կտենան որ իսկա-

պես, որ նույն մատնիկով դաղմած ա, էլ բան չեն կանա ասե։

Տղեն կուտա հուր հառնչ հուր էրկու բաջանաղին, որ տանա։ Սաղ գուլան, հինքն կդառնա թաքավորին, կասա.—Թաքավո՛ր, ես քո Քաչլիկ փեսեն եմ, որ իծու կաթն ծախի քո աղա փեսեքի վրեն իմ մատնիքի դաղմով, իսկ առյուծի կաթն էլ զաթի ես բերի քե բուժի, իսկ դու քեֆն էրիր էդ մարթերու պատվին, որպես քո փրկիչներու։

— Էս էլ քո ախչիկ, որ մինչև մկա կուլս էր մացե, կուլես՝ տու ընձի, չես ուղե, ա՛ռ քո ախչիկ, ես կեթամ իմ խոր երկիր։

Թաքավոր շատ կուրխնա, յոթ օր ու գիշեր խառնիս կանա, տղեն կվերցա հուր կնիկ կեթա, կխասի հուր խոր, մոր, ախպոր։

Ընդոնք խասան հուրանց մուրազին, դուք էլ խասեք ձեր մուրազին։ Երկնքուց իրեք խնձոր հընգավ, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկն էլ՝ կարթացողին։

## 7(15). Ա.ՋԵՐԱՆԴԱԼԻ ԽԵՔԱԹԸ

Կեղի, չեղի, մե թագավոր կհեղի, էս թագավորին իրեք տղա կհեղի, ըստոնք կխասունանան, իրանց պսակվելու ժամանակ կհեղի։

Ողրի մտքին կար, որ հուր աղջկան տար թագավորի տղին։ Բալաք ղուշին Քողին, գնաց կայնավ ողրի աղջկա գլխին. ըտոր նշանեց մեծ տղի խեստ էն մյուս օրը ղուշ կայնավ ոքիլի աղջկա կլխին. դրան էլ նշանեց թագավորի միջնեկ տղի խեստ։ Երրորդ օրն էլ ղուշը քաղաքից դուս էկավ, տղեն հընգավ հետև, գնաց։ Գնաց, գնաց, տեսավ օր ծովու կրաղն քոլը փոսի մեջ ղուշը գացե կայնե մե խատ կոտկիրիրեն կոտի վրա։

Տղեն գնաց վերցեց, զարգեց ուր հունքն ու էկավ, էկավ դրա խոր պալատն։

Թագավորը օր տեսավ, ըսեց.—Հընչի՞ էս չոլի կեղտոտ կոտկիրիրին ես բերե։ Տա՛ր գցա։

Տղեն ըսեց.—Ղուշ կայնե ըստուր վրեն, իմ դամաքն էս ա. ես էստու խեստ պտի ապրիմ, իմ բախտն էլ էսմալ ա գրվե։

— Ա՛յ տղա ջան, տար քցա, ամոթ ա, կեթամ ուրիշ թագավորի աղջիկ կուզամ քեզ։

Ողրի, ոքիլ որոշեցին, ղուշին էլի Քողին, գընաց էլի կայնեց կոտկիրիրի վրեն։

Հերն ջղայնացավ, ջալաթ կանչեց, օր տղին սպանա, պալատականներ չՔողին, ըսին.—Ջի՛, սուրգուն էրա, Քըխ էրթա։

Տղին աքսորեց, տղեն կոտն զարկեց հունքն, գնաց խասավ էնտեղ, որտեղ ղուշն կոտկիրիրին գտեր էր։

Մե տուն շինեց, կոտի խետ կապրա, որս կբռնա։

Մե օր տղեն գնաց որսի, էկավ տեսավ՝ տուն մաքրուկ, ճաշն էփուկ, օջախ վառուկ. զարմացավ, ըսեց.—Էքուց ես պտի հետևեմ տենամ, էս ի՞նչ ա։ Տեսավ՝ կոտը բացվավ, մե աղջիկ դուրս հելավ, գործ էրեց, օջախ վառեց, տուն մաքրեց, մտավ մըչ կոտին, Քուավ պատուխան։

Տղեն գնաց որսին, հիրիկուն էկավ։ Երրորդ օրվա վրեն՝ տղեն տափավ, տեսավ օր աղջիկն դուս էկավ, գործը արեց, հենա պտի մտներ կոտ, ձեռ Քալեց, աղջկան բռնեց։

Աղջիկն ըսեց.—Ես քու բախտն եմ, դու իմ բախտն ես, մի՛ ձեռ տուր իմ կոտին. դու գնա որսի, արի, լավ բան կտեսնես։

Թագավորը տղին կանչեց, կնգան տեսածա Քագավորն ըսեց.—Էս տղի գլոխ Քցու, աղջիկն առնեմ, իմ օր կա՝ էս ա, չկա՝ էս ա։

Ինչքան ըսին ողիր, ոքիլ, չլսեց Քագավորն։ Տղին տարան։

Հերն ըսեց.—Քեզի կանչեր եմ, օր դու իմ պալատին մե ընենց ծածկոց բերես, օր քաշես վրեն, ըռուքն-ըռքի խետ խոսա, դուն դռան խետ խոսա, հրմեն ծածկա։

Տղեն դարձավ տունը կնգան ըսեց։

Աղջիկն ըսեց.—Գնա քառասուն օր ժամանակ խնդրա։

Թագավոր ժամանակ տվեց, ինքն պալատից դուրս էկավ, փախավ։

Էս տղեն եռասունին օր լրացրեց, քառասուն օրվա վրեն պտի տանա։

Տղեն ըսեց.—Վա՛յ, վա՛յ, օրերը լրացան։

Աղջիկն ըսեց.—Ուղիղ կերթաս մի քարի մոտ կկայնես, կըսես. «Պալատի ծածկոց լալեն կուզամ։ Ումն տաղլամիշ կլուտա, իմ մեր կլնի քո ձեռի մեջ բան կդնա, ինչ որ դնա չնայես, էն վախտ օր կդնա, Քուի, ծառ կդառնա, չվախենաս, չշփոթվես, հետ չդառնաս, Քե չէ՝ քար կդառնաս։

Առավոտ գնաց, կայնավ սիպտակ քարի մոտ, բռռաց.—Մեծ լալա՛, փոքր լալան ասում ա մեծ ծածկոցը տա։

Ումն գոռգոռաց, էդ կնիկն բերեց դրեց էդ տղի ձեռ, հինք զարձավ քար, ծառ Քուի սկսեցին գոռգոռալ։ Տղեն առավ էկավ, էդ փոքր Քաշկինակն տվեց լալային։

Լալան ասաց.—Հա՛, էս ա, տղա ջան, դու հանգիստ քնի։

Առավոտն հելան, լալան ըսեց.—Գնա քո հոբրըն ըսա, Քող մարդիկ օղարկա, ծածկոցն տեղափոխա։

Տղեն էկավ Քագավորի դիվանխանեն, մարդ ուղեց, որ բառնան բերեն։ Առան գացին, բերին,

ծածկեցին պալատի վրեն։ Թագավորն օր տեսավ, շշմեց, ըսեց.—Զաղավ, ողի՛ր, ես կսպանեմ էդ աղին, կատարեց։

Ողիրն ըսեց.—Տո՛ քո տունը քանդվի, մանդան իրևքն ա, բեր ուրիշ մե բան արա։ Տղին կանչին, ըսին.—Մե ընենց սուփրա ու ընենց կաղան, օր իմ թագավորության համար ճաշ էփես, նամեն ուտեն, սուփրի կեսն էլ մնա դարտակ, ճաշն էլ հելլենա։

Տղեն 40 օր ժամանակ առավ էկավ։ Էկավ Լալի մոտ։

Լալեն ըսեց, ըսեց.—Լավ ես ըրե։

Երեսունին օրը հընցավ, էկավ խասավ քառասուն օր, աղջիկն էլի ըսեց.—Դնա՛ էլի էն քարի մոտ, կանչա, ըսա.—Մեծ լալա՛, փորը լալեն փորր սուփրեն ու կաղան կուզա։

Տղեն հելավ գնաց, կանչեց, լալեն էկավ, ավից մե պոպոկ, նուչնակես քար, թուփ գոռացին։

Պոպոկ բերից, ավից աղջկան։

Աղջիկն առավոտ ըսեց.—Դնա՛ քո խոր ըսա, թող մարդ օղորկա, տնզափոխա մե լայն դաշտի մնջ, օր սուփրեն տեղավորա։

Տղեն գնաց, թագավորին ըսեց։

Մարդիկ էկան տարան, փռին սուփրեն՝ չխլսի, մե խատ էլ կիլոյնոց կաղան ա, լալեն կլցա, կբաժնա, հընձեն կուտեն, ամբողջ բանակն, ժողովուրդն կերան, հլա ահադին էլ ավելցավ։

Տղեն ըսեց.—Փա՛ռք քե ասուածծ, ապատվանք։

Թագավոր կատղավ.—Ողի՛ր, ես կսպանեմ տղին։

Ողիրն ըսեց.—Կանչա՛, թքիս էլի մե բան էլ կատարա։

Կանչեց, ըսեց.—Իմ պալատի բոլոր ընենց պարտեղ ու բաղ ըլի, որ մե ծառի վրեն 10 տեսակ միրգ հընլի։

Տղեն էկավ տեսավ՝ ոչ ոք չկա, սաղ քոչել գացել են. ոչ լալա կա, ոչ տուն, նստավ լացեց։

Առավոտ հելավ գնաց, փախավ օր թագավորից ազատվի։ Գնաց տեսավ՝ մի մարդ, մի խալի, մի ճիպոտ ձեռը քնուկ ա։ Կախարդական էր, նըստավ վըր խալուն, ճիպոտ զարկեց, ըսեց.—Դու որ կաս, մուրազ ես, ընձի տար հիճուց իմ լալայի դուռ։ Խալին տարավ, հիճուց լալայի դուռ։

Լալան որ քոչեց գնաց, իր քառասուն քուրը հետևից քցին լալային, որ դու գացեր ես առեր ես կեղտոտ խողածին։ Լալին կապել են, էն էլ կըռռա։ Տղի սիրուց,—Վառվա՛ռ, էրեցա՛, ջուր լըցե՛ք վրես։

Օրեկան մեկ անգամ մերն կիգա աղջկան կտենա, կերթա։

Տղեն օր գնաց խասավ էդ տեղը, աղջիկները՝ քուրվտիքը հիրանց քուրջը կծառայեն, բերին փլավ դրին, օր հուրանց քուրն ուտա։ Տղեն էլ սոված, խաց չկերե, քոլոզն հիճուց գլոխ, սկսեց էդ փլավն ուտել. աղջիկն կնայա։

Տղեն գլխարկը հանեց, փաթթվավ աղջկան։ Էսի ըսեց.—Հըմի ես էս քոլոզ կհիճում իմ գլոխ, կքաշվիմ մե անկյուն. հունար մնաց քեզի։

Մերն էկավ մտավ, ըսեց.—Ի՛ֆ,—ըսեց,—քու ծամը կարեմ, ի՛նչ խողածնի կեղդոդ խոտ կիգա։

Ըսեց.—Ես կմեռնիմ, դու ի՞նչ ա կասես։

Ըսեց.—Մեռնիր, քի տանինք թաղինք, կհանդըստանինք, դու էլ կպրծիր, մենք էլ։ Քեզ ասում եմ էդ խողածին քու մտքից խան։

Նստավ աղջկան ստուգեց, է՛, աղջիկ սիրուց խիվանդ ա, ըսեց.—Որ դու անընդհատ կասես խողածին, օր հանգարծ պատահի գա, ի՞նչ կէնես։

— Վա՛յ,—ըսեց,—Թիքա-Թիքա կէնեմ, քու ծամն կտրեմ։

— Խողածին ըստեղ ա։

Ըսեց.—Օր իմ սրտով տղա էղավ, կներեմ, քե դուր չեկավ, քեղ էլ ընորն էլ կսպանեմ։

Ըսեց.—Մայրի՛կ, հլա հերթվի՛։

Մերը հերթվից։ Տղեն քոլոզը խանեց, կայնավ մոր հառեջ։ Մե սիլա տվեց, ըսեց.—Բա քո խորնից իմա՞լ պրծուցեմ։

—Լա՛վ, էրթամ տեսնամ։

Գնաց, թագավորն հերսոտավ, ըսեց.—Ի՞նչ կնիկ, ես ինչ խողածնի խոտ բերիր։

—Տո՛ քու տունը քանդվի, մեր էրեխեն կմեռնի, դու ի՞նչ ա կասես։

— Տո՛ ջայնամ կմեռնի։

— Հանկարծ օր խողածին գա, սեր ա, ի՞նչ կէնենք մենք։

— Օր էկավ, կսպանեմ։

— Օղորթ, ի՞նչ կէնենք։

— Կնի՛կ, օր հարմար տղա հելավ, թող ապրին։

—Դե՛ հերթվի։

Մարթը հերթվավ, ըսեց.—Թագավո՛ր, էկեր ա տղեն։

Թագավոր էրկու սիլա տվեց կնգա քիթ-բերնին։

— Տղի վրեն մե պարտականություն կդնեմ. կատարեց՝ լավ, չկատարեց՝ երկսին էլ կսպանեմ։

Տղին կանչին, թագավորի առաջ կայնավ, ըսեց.

— Հա՛, տղա՛, օձն ուր պորտավ, խավքն ուր թևով ըստեղ չի եկել, դու ո՞նց էկար։

— Էկեր եմ,—ըսեց,—օր լալային տաս, տանեմ։

— Տա՛մ,—ըսեց խերը,—բայց մի պարտականութուն ունես, որ կատարես, կտամ։

Թագավորն ասեց.—Կգնաս Աչեբսանդալի դարտերը կիմանաս, կիգաս ընձի կպատմես, լալային կիտամ քեզ։—Ըսեց.—Քեզ կտամ մե քյառասուն դյաղնոց խոր, կհիճում էդ խոր, կերթաս կհանդիպես Աչեբսանդալին, դարտերը կիմանաս, կգաս ինձ կպատմես։

Տղին իճուց էտ խոր։

— Տղա՛, —ըսեց,—քառասուն օր քե ժամանակ, քառասուն մեկ օրվա վրա քե չեմ խանի էդ խորից։

Էդտեղ մե խատ սև դուռ էր, դուռը բացվավ, էդ տղեն գնաց տեսավ՝ մե մարդ կշեռք ա անում. կշեռքի էս թայից ապրանք կվերցա, կդնա էն թայ, էն թայից՝ էս թայ, չկանա կշռա։

Կխարցու.—Էդ ինչ ա կէնե՞ս։

— Ներիտասարդ ջան, մուրազի վրա ես, գնա՛, կգաս, կասեմ։

Մի քիչ էլ գնաց, տեսավ՝ մե մարդ մի խուրց փուշ կշլկա՝ չկանա, կկտրի, կկապա, նորից կկըտրի, կդնա մերկ մարմնի վրա, սաղ էրուն ա։

— Ա՛յ մարդ, էդ ի՞նչ ա կէնես։

— Հետ դարձի արի՛ կասեմ, տղա՛ ջան։

Գնաց տեսավ մե ուրիշ մարդ շրիդի վրա ձու ա կշարա, կուզա կապա, ձվեր կթափվեն։

— Էդ ի՞նչ ա կէնես։

— Է՛, ջահե՛լ ջան, գնա՛, բալամ մուրազիտ կհասնես, հետ կիգաս, կասեմ։

Կնթա, կնթա, կտենա մի կնիկ կուժ ուսին դրուկ, կգոռա.—Ծարավ մեռա՛, ծարավ մեռա՛։

— Էդ ի՞նչ ա պատահե.—կխարցու։

— Է՛, բալա՛ ջան, գնա՛ նպատակդ կատարա, կգաս, կպատմեմ։

Գնաց, գնաց, տեսավ մի կնոջ՝ լավաշը գըրկած, կգոռա—Ցամա՛ն, սոված մեռա։

— Մայրի՛կ, էդ հացից հընչի՞ չուտես։

— Է՛, բալա՛ ջան, քեզ հետո կասեմ, գնա՛։

Գնաց, գնաց, տեսավ մի այգի ծառերը կանաչ, ծառերը կանաչ, պահկները կանաչ։

Կասա—Էս ո՞նց են սաղ կանաչ։

— Քաջանց թագավորի տղա՛, գնա՛, արի՛, հետո կպատմենք։

Գնաց, գնաց հանդիպեց էրկու դռան. մեկը՝ սև, մյուսը՝ կանաչ։ Սև դռան վրեն սև արաբ ա կայնած, սև թուխուզն ձեռն, կանաչ դռան վրա՝ կանանչ արաբ, կանանչ թուխուզն ձեռն։

Կանանչ դռնով մտավ, տեսավ՝ մերն էնտեղ էր։

Ըսեց.—Վա՛յ, բալա՛ ջան, էդ գարշելի թագավորն քեզ էստեղ էլ ուղարկե՞ց։

— Մայրի՛կ, խերս կասեր խազինի դռան բալնիք քո կուշտն ա, քո մոր մազերի մեջ, կասեր՝ գնա՛ բեր, ժողովրդին նպաստ բաց թողննք։

—Բալա՛ ջան, բալնիք իր մոտ ա, էս քոլոզն կտաս խորդ, կասես՝ իմ մայրիկ քե նվեր ա ողորկե։

Էս տեղից տղեն գնաց, էկավ խասավ կանաչ այգին, արաբներ ասին.—Էս դրախտի այգին ա, էս ծառերը կանաչ մեռոնի ծառերն են, էս կանաչ ծառ էրեխեքն են, օր կկնքեն ու կմեռնեն։

Խասավ պառավին, օր հացը գրկել, սոված էր.

Կնիկ կասա.—Ես շատ հարուստ էի, մեկ աղքատ օր կիգեր, ես ընդոր խաց չի տինք, ընձի պատիժ ա՝ խացն ուսիս, չիողնի օր ուտեմ։

Խասավ ծարավ կնոջ.—Տուն օր կոնախ գնր, տղա՛ ջան,—ըսավ,—ջուր չի տինի կրուշկով, կզվլինք, չտինք խմին, ըտու համար ընձի պատիժ են։

Էկավ խասավ շրիդ փռող, ձվեր շարող մարդուն—Ես չարչի ինք, ժողովրդից գողցած ձվերն ին ինձ բաժին հընդե։

Փուշ շլդողին օր խասավ, ըսեց.—Տարին 40—50 արարա ընձի անասնակեր կուտար, հաշիս չէր կշռնա, կերթինք հարևանի փշեր կգողնինք, էս էլ իմ պատիժ։

Կշեռք անող մարդն էլ ըսեց.—Ես առուտուրական մարդ ինք, կիշեռքի մեջ խարամ քյաշած եմ, էս էլ իմ պատիժ։

Էս որ վերջացրեց, տղեն ասաց.—Տա՛ր ինձ Աչեբսանդալի դուռ։

Դացին, ըսեց.—Բա՛րի իրիկուն, Աչեբսանդա՛լ։

Ըսեց.—Հալար բարի, տու ո՞ր էկար էստեղ։

Ըսեց.—Քու դարդեր պտի իմանամ, գնամ քաջանց թագավորին պատմեմ։

— Հելի՛ էթանք կալվածքներ տես, հետո կպատմեմ։

Տղեն վերցեց, օր մի բադան ա քաշուկ մարդկանց մարմնից ու էդոնք ցույց տվից, որ մարդու գանգից բերդ ա պատրաստուկ։

— Տե՛ս, էստեղից մի մարմին, մի գանգ ա պակաս,—ըսեց,—դու կլրացուս։

Էկան նստան, Աչեբսանդալը պատմեց.—Էս կառկառն կտեսնա՞ս ու էս մարդու գանգ, դրուկ նրա հառեջ։ Իմ ձիանքներուն կինամեղ մե քյաշալ։ Մե օր էսի պառկե կնոջ քե.—Թագավո՛ր, մեռնում եմ, մե օր ես հըլեմ թագավոր, դու սևյիզ։ Շորերս մեկ օրով տվի քյաշլուն, ես գացի ձիանքներու մոտ։ Դիշերի տասերկուսին իմ կնիկ, իմ զոքանչ, քառասուն հարամի է խատն էկան, ձիանք խեծան, ընձի ջարդին ու քշին։ Ես դուս էկա, կպա իմ զոնքչի ձիու պոչին, ու քշին գացին,

մտան մե հէր։ Նստան քեֆ արին, կերան, խմին, հարամի բաշին տարավ իմ կնկան, հետն ապրավ, քառասուն հարամին ընդուց հետո, մեկ-մեկ խետն ապրան, դարձան, հելան էկան։ Որ էկան խասան տուն, մեկել օր գացի հարամիներուն հմնին բրդի, էկա կնգանս կուշտ։ Կնիկս քեֆ չունա, դը քառասուն խորու խետ ապրեր ա, քեֆ կլի՞...

Դարձա, ասի.—Կնի՛կ, հընչի՞ ես խիվանդցե։ Հարամի բաշու գլոխն էլ կդրե բերեր էի. օր կոտ տեսավ, էղի գրկեց գլոխ, ես կախարդական ճիպոտով դարկի, կառկառ դարձուցի։ Կառկառ իմ կնիկն ա։ Ես իմ դարդ ասի վիզդ սրի ծռցում։

Տղեն կհլնի դուս, բոլոլ կդնա, ճիպոտով կըդանա խալուն, կթռնի դեպի Քաջանց Թագավորի տուն. խորից դուս կհելնի ու կպատմա գլխի էկածը։ Հալալին կիտա տղին, խառնիխ կենեն ու յոթ օր, յոթ գիշեր ուրախություն կհլնի։ Ընոնք խասան ուրանց մուրազին։

## 8(16). ԹՈՌԶՈՂԼՈՒ ԽԵՔԱԹԸ

Կըլնի, չըլնի մի պառավ. էղոր մի ջահել տղա կլնի- էղի Թոռ կթալա, ձուկ կբերա, կապրենե։ Մեկ օր էլ կէթա Թոռ կթալա, փետից կոտ դուս դյությա։ Կվերցա, կառի կբերա տուն, մոր կասա.—Էս իմ բախտն ա, էսօր էս ա էլե։

Կոտ կդնեն պատուխան։ Մյուս օր կէրթա ծով, Թոռ կթալա, մե իրեք-չորս խատ ձուկ դուս դյությա, կառնի, տուն կբերա։

Ըդոնք հաշտ-համերաշխ կապրենե։ Տղի մեր կէթա ցախ կհավաքա, տղեն էլ՝ կէթա ծով։ Կոտի միջից մի սիրուն աղջիկ դուս դյությա, գործ կէնա, Թոնդիր կվառա, ձուկն կեփա, մի կտոր կուտա, նորից կմտի կոտն։ Պառավ դյութա կզարմընե։ Մեկ էլ օրն էլի ըդմալ կէնա։ Մեր, տղա կմնան հալիլ-մայիլ կտրած։ Տղեն կփաթթվի մե օր խոիլ, կկայնի դռան եւռ, կտենա էղա կոտն կբացվի, միջից մե աղջիկ կլնի՝ մե հուրի մալաք, Թոնդիր կվառա, տուն կավլա, ձուկ կէփա, մե կտոր հինք կուտա, կէթա կմտի կոտ։ Մե օր էլ ըդմալ կկայնի, կտենա էլի դուս հելավ, ձեռ կթալա կբռնա։

Աղջիկ կասա.—Տղա՛, մի բռնա ընձի, մի չարչրա։

Տղեն կասա.—Չէ էսի ասուց ա, դու իմն էս, ես՝ քունը։

Տղեն կոտ կուզա Թալա Թոնդիր, աղջիկ կասա.—Մի Թալա՛, ինձնից քեզ վնաս գյությա։

Տղեն չլսավ, Թալեց, կոտ վառեց։ Կապրեն հուրիր խետ հաշտ-համերաշխ։

Մե օր աղջիկ տան ժեխ կտանա կթափա, Թագավորի նաղիր-վեղիրին կտեսնա, ձիանք ջուր բերած կլնեն։ Էտոնք կտենան աղջկան, կերթան Թագավորին կասեն.—Թագավոր, էլ ի՞նչ, Թագավոր ես, օր Թոռշողլու նման կնիկ չունես, կնիկ Թոռշողլուն ա, իմա՛ կնիկ՝ արևո՛ւն երես չունա նայա ընդոր։

Թագավոր կմտածա, Թե իմալ էնա, օր Թոռշողլու գլոխ ուտա։

—Բերեք էդոր օղորկենք Կրխլար Նանասիք հետևից, կէթա, չի դառնա, կնիկ կառնեմ, կբերեմ ինձի։

Կկանչեն Թոռշողլուն Թագավորի կուշտ։

— Ընձի,—կասա Թագավոր,—խիստ հարկավոր ա Կրխլար Նանասին, գնա՛, բեր։

Տղեն խեղճ-խեղճ հելավ գյնաց տուն։ Կնիկ սեյրըազ էր, խասկցավ, մարդուն դառավ ասեց.

— Ա՛յ մարդ, գյնա Թագավորից քյառսուն դավաբեռ անլվա բուրդ, քյառսուն դավաբեռ յոթ տարվա գինի ուզա, ասա, Թող էդ հըմմեն վազրի քիսից տա. խատն էլ քյառսուն դավա՝ օր բառնաս, ճամբախ էթաս։

Թոռշողլին գյնաց ասաց Թագավորին, էդ հըմմեն պահանջմունք դրեց։ Թագավոր հրամայեց տա՛լ ինչ օր կուզա էդա տղեն։

Տղեն դառավ տուն, կնիկ ասաց.—Գյնա՛ հէնա Ջալման սարի հետև, մե խատ ղոշ քյար կա, էդ Կրխլար Նանասիկ գյամ պախուկ ա դատ. կըխանես, կէթաս ձորի բերան շատ գյուներ կլեն, հախպուրներ, էդ Կրխլար Նանասին էդտեղ գյությա։

Տղեն գյնաց, գինին, բրդեր առավ գյնաց, խասավ սարին։ էն քյար շուռ տվեց, գյամը խանեց, գյնաց. շատ, քիչ, խասավ Նանասու գյուներ. ջուր կրճեց Թափեց, բրդեր զանեց հախպրի ակներ, բուրդ զանեց, գինին լցեց։ Կրխլար Նանասին էկավ, հինք տափավ, էկավ կեսօրին մե լավ կռճեց գինին, քեֆովցավ, պառկավ, տղեն Թռավ հելավ, քյաման դրեց բերան, խնծավ։

— Խողածի՛ն, խանեմ երկինք կվառվես— ձին ասաց.

Տղեն ասաց.—Ցոլամ փորիտ տակ։

Ձին ասաց.—Խողածի՛ն, զանեմ գետին, կցխաս։

Տղեն ասաց.—Ցոլամ մեջքիդ վրեն։

Զանգու տվեց քյշեց, ձին էկավ, քառսուն քյուռկներն էլ հետև Թալեց, բերեց։ Շատ էկավ, քիչ էկավ, աստված գինա, սալե տվին Թագավորին, Թե Թոռշողլին Կրխլար Նանասուն հուր քյառսուն քուռկով բերեր ա։ Տղեն տարավ, քյաշեց Թագավորի ձիանց, կապեց։

Թագավորն ասաց.—Հա՛յ, հա՛յ, էլ դո՛ր օղորկենք, օր էղի չգյա։

Թոռչողլին գլնաց հուրանց տուն, վազիրն ու թագավոր մտածեցին օղորկն ֆռանկների թագավորի կուշտ, աղջիկն բերեն թագավորին կընիկ։

Հնցավ մե քյանի օր, աղին դանչին։

Տղեն էկավ պալատ, գլոխ տվեց, կայնավ.— Հրամանքդ ի՞նչ ա. թագավորն ապրած կենա։

— Պտի էթաս ֆռանկների թագավորի աղջկան ուղես, բերես ընձի կնիկ։

Թոռչողլին գլոխ տվեց, դուս հելավ, դնաց հուրանց տուն, կնգյան պատմեց հուր գլխու էկածը։

Կնիկն դառցավ ասեց.—Գլնա թագավորից էրկու խարիր խատ օշխար, յոթ խատ շուն ուզա՝ վազրի քիսից։

Վազրի ծոնգրի ակնկալն բիլա ծախին, տըվին տղի պահանջմունքին։ Կնիկ կասա,—Գլնա, Թոռչողլի ճամբխին քեզի շատ հընգերտինք գլեն։

Գլնաց Թոռչողլին խատավ ջախչի, տեսավ ջաղաց ալյուր կթալա չփրտալեն, մե մարդ բերան տվե դեմ կլիղա ու կդյոռա,—Ցամա՞ն, ես անոթի մեռա։

Թոռչողլին կասի.—Հա՛յ, հա՛յ, էս ի՞նչ խունար ա։

Էդ մարդ դառնի կասա.—Խունար Թոռչողլու խունարն ա, օր Կրխլար Նանասին բռնեց, բերեց։

— Ես եմ Թոռչողլին, մե բան չեմ։

— Արի հընգենք հընգեր։

Գլնացին, գլնացին, պատահան մե դևտի. տեսան՝ մարդ կայնե, դեռ կկռճա, կդյոռա.— Ցամա՞ն, ծարավ մեռա, օկտեցեք։

— Հա՛յ, հա՛յ, էս ի՞մալ խունար ա,—կասա Թոռչողլին։

— Հունար Թոռչողլու խունարն ա, ես ինչ եմ օ՞ր։

— Թոռչողլին ես եմ, մե բան չեմ։

Հընդգերացան, գլացին խատան մե մարդու. ծառ շկած, քյոքախան արուկ, դրուկ վըր քևուն, գյառներ տվե հառեջ, կբերա։

— Էդ ի՞նչ խունար ա։

Էդ էլ Թոռչողլու խետ հընդերացավ։ Գլացին տեսան՝ երեք մարդ նստուկ, սաղ կէնեն, սար-ձոր կպարեն։ Էտոնք էլ հիմցան Թոռչողլուն, խետն հընգերացան։

Գլացին տեսան մե մարդ չաթուն քալե՝ սար-ձոր կշլկա։ Էս էլ հընգերացավ, գլացին խատան թագավորի պալատ, նստան խնամաքարին։

Թագավորին խաբար տարան թե՝ յոթ մարդ նստուկ ին խնամաքարին։ Կուլուղասան կարդ։աշ —հանդեճ դրողն էր, հիմցավ օր հուրանց կղանչա թագավոր։ Գլացին թագավորին ասին,—Էկեր ենք քյո աղջիկ տանենք մեր թագավորին։

— Սաբախտան կպատասխանեմ.—կասա թագավոր։

Վազիր, վաքիլ խետ մտածեցին թե հուրանք կոշունի կաղնով փլավ ևխեն. թե կերան՝ աղջիկ կտա, թէ՝ չէ, ըտոնց հընմնի վիղ կթացուն։

Հանդաջ դնող լսավ, ջաղաչ լիղողն ասաց.— էդ իմ բանն ա։

Բերին ճաշ, էդի լիղեց, կայնավ կրաղ։

Խաբար տարան թագավորին, թագավորը վեզրի խետ որոշեցին քյար դնեն կրակ, կարմըրցնեն. թե ըդոնք կայնան վրեն՝ աղջիկ տան, թե՝ չէ, զաթի վղները թոցնեն։

Հանդաջ դնող լսավ. ջուր խմողն էլ ասեց.— էդ իմ բանն ա։

Գլնաց ջուր կռճեց, բերեց կարմրուկ քյարի վրա լցրեց, հընմեն հելան կայնան վըր քյար։ Թագավոր մնաց շիվարուկ։ Որոշեցին ճաշ դռնախ անեն, ճաշերն էլ դնեն։ Հանդաճ դնող լսեց. սաղ էնողներն էլ ասին.—Մենք սաղ կենանք, ամաններ կփոխենք։

Ըդմալ էրին, սպռչիներ նվաղին, ամաններըը փոխվան, ընդոնք կերան՝ մեռան, ընդոնք գյացին թագավորի կուշտ, ասին.—Թագավո՛ր, մեր պահմանը պահման ա։

Թագավոր չտվեց։ էն մարդն հելավ ծառ խաննեց, ինչքան գյազան կէր, ավլեց, լցեց քյուշեք. էն մեկն հելավ ջուր կռճեց։

Մարդիկ հելան գյացին, թագավորին ասին.—Ա՛յ քյո տուն քյանդվի, թագավո՛ր, օր մեր տուն քյանգնես, մեր երկիր խո՛ ավերակ չպիտի էնես՝ մե աղջկա սաբար։ Տո՛ւ, ըղջ տանեն։

Թագավոր տվեց աղջիկ, տարան։ Թագավոր լսավ, օր Թոռչողլին էկե՝ աղջիկն էլ բերե։

Նոր հնարք մտածեցին թե՝—Քառասուն օր ըղջ ըմի, կանչենք Թոռչողլուն,—կասա վեզիր,—ասենք Կրխլար Նանասու կթա, օր էդ կաթով թագավորն ու թագուհին լողկնան։

Կկանչեն Թոռչողլուն կասեն ըդմալ։

Կնիկ խմաստուն էր, կասա.—Աս էս մատնիք, օր կաթ կկթես, ընդոնք օր կմտնեն կաթ, դու մատնիկ տիր գյոու մեջ, կվառվեն։

Թոռչողլին կատանա մատնիքը։ Թոռչողլին ըդքաուր էլ կէնա, օր անըսկամ թագավորից կազատվի, գյուքյա հուր տուն, հուր մոր ու կնգյա խետ խալալ կապրի, կխասի հուր մուրաղին։

Դուք էլ խասեք ձեր մուրաղին։

## 9(17). ԻՐԵՔ ՏՂԱ, ՄԵ ՄԵՐ

Կեղի, չեղի իրեք տղա, մե մեր կեղի։

Մեր տղեներուն կասա,—Գացեք աշխատեք, բերեք ապրենք։

Կեթան բանվորութեն կենեն։

Ջոջ տղեն կասա.—Խոսկա դար-դաշտ հըլ-ներ օխշար, ես էլ հլնի չորան, տանի պախի։

Քնի, դլնի կտենա, օր սաղ դար-դաշտ հե-լալ օխշար, կպախա, հիրիկուն օխշրներ կտանա տուն։

Միւնևք ախպերն էլ կասա,—Խոսկա դար-դաշտ համեն հլնի բաղ-բաղչա, ես էլ հլնեմ բաղ-մանչի։

Քնի, դլնի կտենա՝ սաղ հեղած բաղ-բաղչա, հինքն էլ դլնի բաղմանչի։

Պատի ախպերն էլ թառչի ա, թառ կթալա, ծո-վու մչից դուս դուքա մե խատ կոտ։ Մե քանի դան կթալա, էլի ձկան տէղ էտ կոտն դուս դուքա, կրերա տուն։

Մեր կասա,—բան չկա, բալա՛ ջան, ըտրով ջուր-մուր կը բերենք, յա խաց-մաց կդնենք մեջ։

Համնօր տղեն դուքա տենա՝ տնէր լավ մաք-րուկ ա, ճաշն էփուկ, ջրեր բերուկ։

Կասա.—Վա՛յ, իմ խեխճ մերն ա կանա։

Վերջապես տղեն գիմնա, օր մերն չէ մաք-րողն։ Մե օր կորոշեն, օր պախ պախեն, մաքրո-ղին տենան։ Տղեն կտափի տուն, մերն էլ կթա աշխատելու։ Պախ կպախա, կտենա՝ դոլաբից որ-տեղ կոտն դրուկ ա, դուս դուքա մե խատ խորոտ ախչիկ, կակա տներ մաքրել։ Ճաշ կեփա կպրծի, տղեն կբռնա, էլ չթողա, օր մանի կոտի մեջ։ Մեր դուքա տուն, գիմնա եղելութեն, շատ կուրխնա։

Մե խատ բիձա կթա ջոլ ախպոր մոտ, կա-սա.—Էնա սև մաքուլ՝ կաթից բեր մե քիչ խամեմ։

Տղեն կթա, իծու կաթ կբերա։

Բիձեն կասա.—Ես էն մաքու կաթից ա կու-զեմ։

Տղեն կասա.—Ես էն մաքուն չեմ ճխմրուկ ցավցու, կխմես՝ խամ, չես խմի՝ քո գործն ա։

Բիձեն կասա.—Թե քար իք, քար դարձեք։

Տղեն գիշկա տենա ոչ օշխար կա, ոչ պապե, կմնա շիվար։

Բիձեն կթա բաղմանչի ախպոր մոտ, կասա. —Էնա սև խավողից մե քիչ բերէս ուտեմ։

Տղեն կասա.—Բա՛, էլ ի՞նչ կա, ես էն խաղո-ղից բերող չեմ։

Կթա, փիս խավող կբերա։

Վերջ, բիձեն ըստորն էլ կանիծա,—Թե չոր ծառ ին, չոր ծառ դառնան։

Սաղ ծառներ կչորանան, բիձեն էլ կհամ-փարցի։

Բիձեն կասա.—Հլա կայնի էթամ էն խալալ կաթնակերի մոտ։

Կթա կտենա մինակ խարսն ա տուն։

Կասա.—Բարև։

Խարսն էլ կասա.—Բարև, ասսու բարին։

— Գոնախ կընթունէ՞ս։

Խարս կասա.—Գոնախ որ կա՝ ասուն ա։

Ջմբիլ կդնա, բիձեն կնստի։

Բիձեն խարսին կասա.—Անոթի եմ, մե քիչ խաց բերես։

Խարս կասա.—Խաց չունենք, հայրի՛կ ջան։

Կթա հորթիկ կմորթա, կեփա, կբերա դնա բիձու հառեչ։

Բիձեն նորից կասա.—Գնա խաց բեր։

—Խարս կասա.—Ախր չկա հո՞ւտ բերեմ։

Բիձեն օր կտիպա, խարս կթա կտենա՝ ամ-բըրներ լիք ցորեն, կարսներ՝ լիք յեղ։ Էդ վախտ կովն կբռռա։

Բիձեն կասա.—Էս հնչի՞ կբռռա։

Խարս կասա.—Հորթիկ կուրսե՝ դուց։

Բիձեն կասա.—Չկուրսե, չկուրսե, դու էն օս-կընիներ բե։

Օսկոններ կկպու հիրար, կխաչակնքա, օսկոռ-ներ կդառնան հորթիկ, կթողա կովու տակ։

Խարս կասա.—Պապի՛ ջան, գլնե՞ր մե օր քո լավութենի տակից հլնի։

Մեկ էլ կտենա, պապե դրել ես, արի տար։

Էրկու խնձոր հընդավ՝ մեկն ընձի, մեկն էլ քե։

## 10(18). ԿՈՏԻ ԽԵՔԱԹ

Մե քյասիր մարդ, կնիկ մեռեր էր, թաղա կնիկ էր առեւ էն հաջին կնդնից մե խատ աղչիկ կար, էս կնիկ էս աղչկան շատ կճնշեր։ Էս մարդ՝ էս աղչկա խեր, գնաց մեկ հարուստ մարդու տուն հելավ նոքյար, հուրիշ քաղաք։

Էս հարուստ մարդուն ուներ իրեք տղա։ Էս մարդու մեռնելուն՝ տղեկներ կանչեց, օսիաթ է-րեց.

— Բալե՛ք,—ըսեց,—ես, օղորթ ա, գանձ ունիմ, իմ գանձ կտանեմ խըտ ընձի։ (Օրովհետև էդ գանձ քոմեր էր. փարեն օր կիղեր, տոկոս կվերցներ, էնքան անխղճութուն էր էրե, էդ գանձ էդ տոկոսով էր քոմե)։

Օր մեռավ, տղեկներուն ըսեց.—Օր ես մեռ-նիմ, էս գանձ կդնեք իմ դագաղի մեջ՝ իմ գլխու տակ, տանեմ խըտ ընձի։ Էս գանձ դու չկունաք ուտեք։ Դուք աշխատե՛ք, դուք ապրե՛ք։

Էս նոքյարն օր էդոր տուն ա, հիմցավ էդի, էկավ էդ մարդու կնգան ըսեց.—Կնի՛կ, իմ խա-ղեն՝ քո մարդ, շատ անխիղճ էր, ուր ունեցած փա-րեն կամաք չէրեց ուր տղեկներուն։ Հելի էրթանք խանենք, բերենք. հորի՛ խողի մեջ էրթա փչանա էդքան փող։

Հելան էկան, քանդին, դագաղի կոթուլ բացին, էս խաղեն հելավ նստավ, ըսեց.—Նոքյա՛ր, հորի՛ ես էկե։

Ըսեց.—Էկել եմ, էս գանձ տանեմ։

Ըսեց.—Էսի անխիղճ փարա չա, ըստուր ուդող չմարա։ Բըղ իմ տղեկներ իմ պես անխիղճ չհեղին։—Ըսեց.—դու էդ գանձ Թող ինձ մոտ, հելի, իմ գերեզմնի կող մե խատ մատմատ գերեզման կա, էն քանդա, մե խատ չոր կոտ կհեղի, էն կոտ տար քու տուն, դու էն կոտով կաբրիս։

Նոքյար հելավ, խանեց մե խատ չոր կոտ, առավ էկավ տուն։

Ըսեց.—Կնի՛կ, իմ խաղեն ա տվե։

Բերեց պատուխանի մեջ դրեց։ Էս մարդ տալիք ունի, կատարածուն էկավ բոռաց, ըսեց.—Քե պարտք կա։

Կոտն հելավ, ըսեց.—Տո՛ շան տղա, ի՞նչ պարտք, ի՞նչ տալիք, էնի քյասիբ մարդ ա։

Կատարածուն ըսեց.—Ա՛յ մա՛րդ, չի տաս, չի տաս, հորի՛ կքրվես։

Էն մարդ ըսեց.—Էդ ես չեմ, իմ կոնախն ա, դու իմ ձեն չխասկնա՞ս. հուրնից ծուռ ա, դնա՛, ես լուսուն կիգամ, հարդն կիտամ։

Էն մարդն Թողեց դնաց։

Էս մարդ հելավ, էդ կոտ բերեց դրեց դեղին, ըմալ սղգեե՛ց, էրեց մշուր, լցեց էդ կժի մեջ, բերան զանեց, հուր կնգան ըսեց.—Կնի՛կ, էսի կտանեմ խորեմ կովու մսրի տակ, էդ կուժի ջուր խմող կմեռնի։

Տարավ խորեց, հելավ գնաց աշխատանքի։ Մերն էլ հանդե բերեց էդ աղջկան։

Աղջիկն ըսեց.—Իմ խերն ըսեց՝ էդ կոտի ջուր խմող կմեռնի. կայնի էքամ, մե կրուշկա խմիմ, մեռնիմ, էս խորթ տղեից ազատվիմ։

Հելավ գնաց ջուր խմեց, էլի բերան ծածկեց, էլի խորեց կովու մսրի տակ, էկավ տուն։ Էս մարդու փորն բանցրցավ, մերն հիմցավ, ըսկսեց հալածել։

Խերն էկավ.—Հարի՛, —ըսեց,—հարի՛, պատանքդ կարեմ, քո աղջիկ էս ի՞նչ անամոթություն ա բերե մեր հերես։

Խերն հընդավ խըտ աղջկան.—Լաո՛, ո՞ն խափեց քեզ։

— Հայրի՛կ, վերև աստված, ներքև դու, էն քո կոտի ջուրն եմ խմե։ Հըմեն հիմցան, հըմեն գեղ, բերին դրին խոր վրա, օր էրեխին չիջցուա։ Տղեն հելավ տաս-տավխինգ տարեկան, դացե ճըժերու խատ կիսաղա, հըմենուն կտանա։ Էս Թոռջին Թոռ Թալեց ծովու նե, մե ձուկ հելավ, օսկի ա. որոշեցին Թե էսի ձկներու Թագավորն ա։ Թոռջին էդ ձուկ հուրիշ ձկներու խատ բերեց Թագավորին, էսի բավարարցուց Թոռջուն։

— Ոդի՛ր,—ըսեց,—իմ բաղի մեջ հավուզմ կէր, լցա՛, էս ձկներ Թալ մեջ։

Էս Թագավորին մե խատ աղջիկ կա, հինգն չի ամուանացե, տասնին աղջիկ էլ հուրիշ կույսեր վերցի խատ՝ հելած քսան աղջիկ. Թագավորին շենք կա հուր բաղի մեջ, գացած նստած էդ շենք, կապրին։ Էս ձուկն օր Թողին հավուզի մեջ, աղջիկ հիմցավ, ըսեց.

— Իմ խեր մեր հավուզի մեջ ձուկ ա Թողն, հլը՛ հելեք էքանք։

Հելան գացին, ձուկ տեսան։

Աղջիկն ասեց.—Աղջիկնի՛ր, է՞գ ձուկն ա, Թե որձ։

Օր ըմալ ըսեց, ձուկ կայնավ վըր հուր պուչին ծծդաց, իրեք անգամ։

Թագավորի աղջիկ կատղավ, գրեց հուր խոր.—Ոչ դու հեղի՛ս, ոչ քու անո՛ւն, հորի՛ էդ ձուկն կծծդա իմ վրեն, ես կույս եմ, հորի՛ էնի ծծդաց։

— Ոդի՛ր, կհնգիս մարդ կճարես,—ըսեց Թագավոր,—օր գա էս գգան ծծդալ պատասխանա։

Ոդիր գնաց պատոելու, էկավ խասավ կոտի տղին, օր գուլ ա խաղցե, հըմնու գլեր տարե, լցե հուր մեշոկի մեջ, խեսի տղերքը կխնդրեն, չիտա։ Էս Թագավորի տղերն էկավ բարև տվեց, բարևն առավ.—Բալա՛ ջան,—ըսեց,— ճժերուն էլ փայ տու, Թըխ տանեն։

Ըսեց.—Հորի՛ կիտամ, տարեր եմ։— Ըսեց.—Ոդի՛ր, ես գինամ դու հորի ա կպատոես, գգան ծծդալն պտի գտնես, բացի ընձնից ոնչ որ չկինա (էդ կոտ պրափեսորն, գիտական մարդու գլուխ ա հեղե. էն խելք մտե էդ երեխու գլխի մեջ)։

Ոդիրն էկավ Թագավորին ըսեց, ճամփին՝ տղեն բերին հուրի պաբեչ խեսու էկան, էս մարդը բարևեց, եռու կայնավ։

Թագավորն ըսեց.—Հա՛, դու ես էդն, կպատասխանե՞ս։

Ըսեց.—Չէ՛, Թագավոր ջան, էս իմ պղտիկ տղեն։

Տղեն էկավ հառեչ։

Թագավորն ըսեց,—Դու գգան ծծդալու պատասխանը կիտա՞ս։

Ըսեց.—Ա՛յո՛։ Դե՛,—Ըսեց,—քու աղջիկներ բեր հրապարակ, էնոնց ճակատ ես ըսեմ։

Գրեց, կանչեց աղջիկներին։

Աղջիկն ըսեց.—Մենք կույս ենք, մենք օրձեղենի հերես չենք կենա գանք։

Տղեն ըսեց.—Բըխ խալի կապեն, խալու հետև Թըխ կայնեն, ես պատասխանեմ։

Թագավոր բերեց հըմլա էրեց.—Դե՛, կոտի տղա՛, պատասխանա՛, ի՞նչն ա պատճառ, օր ձուկ ծծդացե վըր իմ աղջկան։

— Կպատասխանեմ, միայն Թագավո՛ր, քեղ խամար ամոթ է։

Աղջիկն էնտեղից լսեց.—Ո՛չ մի ամոթ, պատասխանա՛, դյադի մե՛կը։

— Լա՛վ, սարը էրաս Թագավո՛ր ջան, մեկ մարդ ավ կէներ բերեր, կապրեր։ Էդոր մե բազա էր բռնեն, վերևանց կպատռեր, ավի տեղ կանեն, կիգեր տիրոջ հիմաց կուտեր։ Էս մարդ մեկ սաքան ուներ մըջ ծոց, օր ջուր խմեր. էն մեկ օր բազեն գացե ավի ու շուռ կիգա, էս մարդ, մե պալ կա, պալից ջուր կկաթաս էս մարդը ուր կրուշկեն խանեց, օր ջուր կաթա մըջ կրուշկին։ Կրուշկեն լցվավ, օր պուի խմա, բազեն էկավ դանեց, թափեց։ Բազեն օր գնաց, մեկ էլ կրուշկին դրեց ջրի տակ, մեկ էլ քոմավ, բազեն զանեց օր թափեր, էնի բազի էրկու օտ բռնեց, քաշեց վիզ կտրեց։ Դարձավ հուրին-հուրին միտք էրեց, հելավ պալի վրեն տեսավ օր՝ շահմար օձ էկե սատկե, արունն ա պալից կկաթա. օր խմեր, պուի պաղդեր։ Բազի վիզ օր քաշե,—լսեց,—ինչքա՞ն փոշմնավ. իրեք խարիր էնքան դու կփոշմնես։

— Կոտի տղա՛,—աղջիկն լսեց.—ճոռոքմոռոք ես չգինամ։

— Լա՛վ, ըսեմ։ Թագավո՛ր, մեկ մարդու տղա չէղեր, հարուստ էր, էնքան մատղներ էրեն, սըրբեր գացին, անծին էրընջներ մորթին, էս մարդու կնիկ մնաց էրկու խոքով։ Ինն ամիս թմամավ, դանեց չոք, տղա բերեց։ Տղեն ջոջցավ, թուխոջցավ, հելավ տարեկան։ Էն մեկ էլ օրն, էտոնց մե պտուկի բոջա կա, էս մարդուն խարսնսի կանչին, հիրկուն ա՝ հրավեր բերին։ Էսենց տղեն օրորոցին քնուկ ա, չղիմիշան տղին տանին.—Մենք էրթանք, շուտ դանք։ Բոջն թոնրատան շուրջ նստուկ ա։ Հելան գացին։

Էս մարդիկ օր գացին խարսնիս, մեկ էլ դարդրն տեսավ օր՝ պատի ծագից մե խատ օձ հելավ, էկավ փաթթվավ օրորոցին։ Շունը տեսավ էս օձին, հելավ խեղդեց, կտրտեց օձին։ Կնիկն ու մարդը հելան էկան, դուռ բացին, օր մտան բոջուն արնաթաթախ տեսան զանին սպանին, լսեն,—բոջին իմ տղին կերե։

Հետո օր տարձան օձին տեսան, իմա՞լ փոշմընան։ Դու, Թագավո՛ր ջան, իրեք խարիր էնքան կփոշմնես։

— Չէ՛, կոտի տղա՛, լսա,—լսեց Թագավորի աղջիկ։

— Թագավո՛ր, քե պատմեմ. մե խատ Թագավոր ոդրին լսեց.— Կհնգիս դես ու դեն, մեկ խատ ընձի բիլբուլ բե, քրես գվգվա։

Ոդիր գնաց, մեկ խատ դայի արանք մե բըլբուլ կա, բռնեց, բերեց տվեց Թագավորին։ Թագավոր օսկի դաֆաս շիքեց, դրեց մեջ, ըմա՛լ կխնամա բիլբուլին, օր բ՛ զօր բիլբուլ հետ կերթա, չլավնա։

Ոդիրն լսեց.—Թագավո՛ր, հարի էտոր ժամանակ տանք, թողնք բըխ էրթա։

Քառսուն օր ժամանակ տվին։

— Ոդի՛ր, քյո ձին խնծի, խասի բիլբուլի հետև, տես էդոր տեղ իմալ ա, օր էդի օսկի կաֆասի մեջ կմաշի։

Ոդիր խնծավ իր ձիուն, հընգավ բիլբուլի հետև, տեսավ մի ժառ քարի մեջ ծառտատ բուն ա. բիլբուլն լսեց.—Դունյադան չաննարդ օլսան, քյոնա մանըմարդան չաննաթդը (աշխարհն օր,—լսեց,—դրախտ հեղի, ընձի հե՛չ, իմ տուն ա ընձի համար դրախտ)։

Էկավ Թագավորին պատմեց, Թագավորն լսեց.—Շատ իրավացի ա լսե։ Քառսուն օր թմամ, բիլբուլը կուշ ա, հելավ գնաց աստու դրած անմահական բաղ։ Մեկ խատ կարմիր, մեկ խատ էլ սիվտակ խնձորի կուտ վերցուց, էս կտեր կշահելցու բիձեքին, թռավ էկավ Թագավորի մոտ, ուր կոցից խանեց, դրեց Թագավորի առաջ։ Թագավորի բաղմանչուն կանչին, էս էրկու կտերը շանց տվին, լսեց.—էսի կարմիր ու սիվտակ խնձորի կտեր ա։

— Բաղմանչի՛ ջան, տար էդ կտեր տնգա, խնամա, տեննենք էդոնց բար իմա՛լ ա։

Թագավորի բաղմանչին խնամեց, իրեք տարուց հետո բար տվեց, Թագավոր կերթա, կնայա ծառերին։

Մեկ օր բաղմանչին էկավ, տեսավ հարավ քամին կարմիր խնձորից մեկ խատ իցկեց։ Օձն էդ ծառի տակ բուն ունի, խնձորն օր հընգավ, օձը խնձորի վրա թույն թափեց, բաղմանչին վերցուց խնձորը, տարավ Թագավորին։

— Թագավո՛ր,—լսեց,—քամին զանե՝ մեկն քցել ա, վերցեր եմ բերեր եմ։

Ոդիրն լսեց.—Էսի անփորձել բան ա. մեկ ծեր մարդու տանք, քրես ուտա։

Կանչին մե ութանասուն-իննսուն տարեկան մարդ, տվին էդ մարդուն. հե՛նց կերավ, փչեց, մեռավ։ Թագավոր զանեց բիլբուլ սպանեց։ Բաղմանչին գնաց էդ ծառի խնձորից հիջուց կերավ, տե՛ղն մե երիտասարդ ու կայնավ։

Բաղմանչին լսեց.—Խնձորը կերա չելցա։

Թագավորն ինչքա՞ն փոշմնավ, իրեք խարիր էնքան դու կփոշմանես։

— Չէ՛, կոտի տղա՛, պատմա՛։

— Էս քու կուլսեր ըզղ տկլոզնան, գան հընցննն մեր հառեջով։

Աղջիկն լսեց.—Չըլնի։

Տղեն լսեց.—Չեմ լսի։

Տկլոզցան, էկան հընցան։

— Էն մեկ չտկլոզնա։

— Չոռո՛վ խանեք։

Խանին՝ տեսան օր տղամարդ ա։

Ըսեց.—Էսի գաղտնի պախե հուրին խամար, որ ախչիկներն էլ չգիցած։ Ձկան էկն էդն ու որձ ա խարցուցե, ձկան էլ ա իմանա հընդե։

Տղին բան չերեց։ Բերեց կոտի տղին թագը տվեց, եղավ թագավորի որդի. հուր խորն՝ պապեյին էլ խնամեց։ Խասան հուրանց մուրազին։

## 10ա (19). ԱՎԶԻ ԱՀՄԱԴ

Ավալ ժամանակով մի ավչի ավ կէներ։ Անունն Ավչի Ահմադ էր։

Էտի հելավ հուր թվանք թալեց թև, օր էթա ավ էնա։ Գնաց տեսավ՝ մեկ պալի հառեջ մե բարակ սև օձ, մե շեկ օձու շատ չաբալամիշ կէնա։

Էս մարդու սիրտ կմռռա. կասա.—Վա՛յ, քու տիրու խերն անիծած, էս ի՞նչ ա կէնա։

Կուզա դանա, սև օձ մաջալ չի տա։ Կդանա՝ մե թիզ սև օձու պոչից կկտրա՞։ Սև օձ թողեց քյաշվավ, գյնաց։ Շեկ օձն էլ մտավ ուր ծակի նեն, դեն գյնաց։

Ավչի Ահմադը էկավ, ուր կնգան դաս էրեց։

Ավչին շուն մը ուներ, անուն Բողր ա, հիցուվացուն խատ էլ խավ ունա, մե խատ լավ ճիտ ունա, ջուխտըմ եղ. մե մշակ էլ բռներ ա, էսի ա վար ու ցանք կենա, մե խատ էլ ավանակ ունա։

Օձ՝ թագավորի խարսն ա, մտավ, գանգըտվավ հուր կեսրեր՝ օձ թագավորին։ Թագավորն ըսեց.—Ավչի Ահմադի ավի վախտ գինաս. գնես սաբախտան բուտում կգյաշես, կբռնես, կբերես իմ մոտ, որ էդ լավութենի էրեր ա, մենք ընդու մուննեի տակից տենանք ի՞մալ պտի դուս դանք։

Սաբախտան շեկ օձն հելավ, նկոշուն, շարմաղ շապիկ խաքավ, գյնաց Ավչի Ահմադին գյտավ, ըսեց.—Դու ինձ լավութինն ես էրե, դու պտի գաս իմ խետ, համա չվախենաս, իմ կեսրեր, օձերու թագավոր, քե կկանչա։

Հելան գացին օձի բուն, թագավորի կուշտ. օձ թագավոր հուր գյուն նստուկ ա։ Ավչի Ահմադն մտավ, թամանդար հեղավ, բարև տվեց, բարև առավ։

— Ավչի Ահմադ, դու քու գանած օձին գհիշա՞ս, կճանչնա՞ս։ Ըսեց.—Վա՛յ, բ'իմալ։

— Դե.—ըսեց.—ես օձեր բերեմ, դու ասա՝ որն ա, ի՞նչ ուզես աշխարքի տակ, ես քե կտամ։

Ճչաց, օրոտուն դրեց, օձեր հմեն թափան էկան։ Նայեց, նայեց, լավ թաղմնեց՝ չճանչցավ։

—Մենակ պառվու տղա օձն մնաց, էն էլ յարալու յա, դը պոչն կտրուկ ա, խիվանդ ա, գացեք բերեք։

Գացին բերին, ավչին ճանչցավ։

— Դը ուզա՝ տամ, Ավչի Ահմադ։

Օձ թագավորի խարսն սովրցուցեր ա օր. «նե իմ կեսրեր կըսա, քե ի՞նչ կուզես, ըսա՝ տամ, դու ըսա. քո լեզուն իմ բերնի մեջ պտոտա։

Էնի օր լեզուն դնա քո բերան, քար, թուխ դառան, շուն խաչա էլ, հավ, ճիվ կչկչան էլ, դու հըմնի լեզուն էլ կխասկնաս»։

— Թագավոր ջան, քու լեզուն պտոտա իմ բերան։

— Վա՛յ քու սովրցնողի գյարդան խխմի, էդ ո՞ն ըսեց քե։ Դը՛ լավ, օր ըտմալ ա, Ավչի Ահմադ, չուր քու կնգան էլ չըսես քու հունար, քու շընորք, հըմա ըսելու բաշտան կմեռնես։

Էս մարդ էկավ տուն, մտավ հօդեն, եղներուն կեր տվեց, եղներու մեկի անուն Թուրկման ա, մեկինն էլ՝ Խնձորու։ Բեռ բարձեց իշուն, քշեց, հելան դուս կեթան վար էնելու։

Որ կդառնան կիգան դուռ, չուր ըռանչպարն եղներն հարձկա, էշն կայնուկ ա. Խնձորուն էկավ. իշու ոտ կոխրճեց, հընցավ։ էշն ըսեց—Հո՛ւ քոռ, չտեսա՞ր ինձ։

— Տո՛ անասունած-անխիղճ, ես խոքնուկ, չուր հիրիկուն վար կենեմ, դու կարածաս առոք-փառոք։ Ինչ էնեմ, ըսա, չտեսա քե, խոքնուկ ի։

Ավչի Ահմադն լսեց։

Էշն դարձավ ըսեց.—Օր մկա քե խոտ տան, դու քյաշվի էն յան, կայնի, մի՛ կև, լուսուն քե քո տերն կթողա տուն, կասա՝ խիվանդ ա, չտանա լուծ, կդինջնաս։

Սաբախտան ըտմալ էլ էրին։ Ավչին ըսեց.—Բան չկա, չուրն էլ, խոտն էլ դրեք ահռեջ, դիշեր կուտա։

Սաբախտան հելան, կանչեց խոտղին, ըսեց.— Էշ բարձա տար, էշ լծա խըտ եղան։

Է՛, էշ խըտ եղան իմա՞լ կէրթա, չէրթա։ Քյաշեց ը՞մալ տփեց, չուր հիրիկուն իշուն բանից խանեց։

Էշը ճամփին միտք էրեց.—Էհամ, ըսեմ Խնձորոյ, խոտն էկավ առտ, մշկուն սովրցուցեց, քե դանակ սրա, Խնձորոյ մորթենք։ Խնձորոն կղաբնի, մկա օր խոտ դնա, դու կե։

Ավչի Ահմադ կլսա, կծծղա։

Կնիկ քուշ ա հեղե Ավչուն, հըմնօր կըսա.— Դու հավալ չխասկնիր, էդ իմա՞լ ա՝ կխասկնաս։ Էտ ի՞նչ ա հեղե, ընձի ըսա։

— Կըսեմ, կըսեմ։

Մնաց, Խնձորոյ խոտ տվին, լավ կերավ, Ավչին խոտղին քամբխեց։

— Բան չկա, լուսուն էլի չտանես Խնձորոյ։

Էշը ըսաց—Էս ի՞նչ օյին էր խանի իմ գլոխ։

Սաբախտան էլի էշին բառցնցին, քշեցին կալատեղ։ Ամբողջ օրը էշը տրորվեց։

Ավչին էտ օր իր կնգան իր հունար պտի ըսա։ Հիրիկուն ա, խավեր պտի թառեն, Բողար պառկի դռան մեչ, խավեր չկանան անցնեն թառնին։

Ճնտը կըսա. Բողա՛ր, դու էլ խո Ավչի Ահմադի պես անխելք չես, ճամփա տուր, Քըղ խավեր էքան թառան, էնի ա ախմախ, կուզա հուր հունարն կնդան ըսա, չդինա, օր ըսա՝ պտի մեռնի։ Ես էս իմ հիցուն կնիկ-խավ ընենց եմ սովրցրի, օր ընձի լսեն, էնի չկանա մե կնիկ ենթարկա հուրին։

Բողար նստավ, խավեր հնցան, թառան։

Հիրիկուն կնիկը բուշ էլավ մարթուն։ Մարթըն էլավ, ճպոտով տփեց, ըսեց.—Քու ի՞նչ բանն ա իմ հունարից, ոչ սոված ես, ոչ ծարավ ես, քու ի՞նչ բանն ա, օր կուզես հիմանաս։ Ըտմալ էլ չասեց հուր հունար, էշն էլ չտարան վար, չուր մկա կապրին հաշտ ու խաղաղ։

## 11 (20). ԻՄԱՍՏՈՒՆ ՏՂԵՆ

Մի մարդ մեծահասակ ժամանակ մի տղա յա ունեննում, էնքան ա սիրում էդ ճժուն, էնքան ա սիրում, որ բիլա դաշտ, վարատեղ խետ կտանա։

Մե օր էդ էրեխեն չորս տարեկան վախտը, դաշտում մե ձիավոր կտենա, կասա.—Ափո՛, էդի Թագավորի աղջկա սիրածն ա։

Դու մի ասա Թագավորի աղջիկ հայտարարած ա հըլում, օր որձեղենի հերես չուզա տենա ու ամենևին չպիտի կարգվի։

Ձիավոր կլսա էդ ճժու ասած, կդառնա, Թագավորի աղջկան կասա.—Թագավորի աղջի՛կ, բա դու կասիր Քե էս գործ մարդ չի հիմնա՞, մի երեխա ըսենց ասեց։

Աղջիկ մոր կկանչա, կասա.—Շատ խիվանդ եմ, էրազիս ընձի ասին Քե էնինչ գյուղում մի էրեխա տղա կա, ընտու արունը պտի քսեմ աչկերիս, որ լավանամ։

Թագավոր կկանչա իր նազիր-վեզիր, կասա.—Գնացեք էն էրեխուն բերեք, օսկի տվեք, առեք բերեք։

Վեզիր կեթա էդ մարդու տուն։

Տղեն կասա.—Ափո՛, էսօր մեզի ղոնախ ա գալու, ինձի կուզա տանա, օսկի կտան, կառնես, կթողնես ընձի տանա։

Վազիր կգա, կխնդրա, կաղաչա, օսկին կտա խոր, խեր զոռով-դավով կտա էրեխուն։

Կեթան, կեթան, ճամբին տղեն կասա.—Քյառի՛, ինձի դու ձեր տուն տար, ինձի մի՛ տար ընդե, ես էլ քե նեղ տեղից կազատեմ։ Հերեկ իմ նման մի տղա ա մեռել, գերեզման գիտեմ, ընդու գլուխը վեկալ, կասես խեր չէր տալիս, դու էլ զոռով գլուխ կտրել բերել ես, ջանդակ թողել հիբան։

Տղին վազիր կբերա տուն, կնիկը կտենա, կասա.—Արի՛, այ մարդ, պախենք, շախենք, մեղի տղա շիքենք։

Դիշեր կեթա էն գերեզման կբացի, էն տղի գլուխ կկտրի, կտանի վազիր, կտա աղջկան։

Աղջիկ կկանչա սիրածին, կասա.—Էսի ա՞։

Տղեն կասա.—Հենց էտ էր որ կար։

Գլուխ կթալեն ծով։

Կանցնի մի առ ժամանակ, թոռչիք մի շատ դեղեցիկ ձուկ կբռնեն, կասեն.—Էսի որ էփենք, ուտենք, ի՞նչ կխասկնանք, ավելի լավ է տանք Թագավորին։

Թագավոր կվերցու, թեշտ ջուր կլցա, ձուկ կդցա մեջ, քեֆները կգա։ Կկանչեն աղջկան, օր դա տենա։

Աղջիկ կասա.—Թե որձ ա՝ չեմ գա, թե էդ ա՝ կդամ։

Կտեսնեն, օր ձուկ կկայնի պոչի վրա, պոչով կդանա շուշեն կկոտրա, հիբան կթալա ծով։

Թագավոր կասա.—Վազի՛ր, ըստուն պատժող բերեք, տեսնենք էս ի՞նչ բախս ա։

Վեղրի վերցուվ տղեն կասա.—Մի՛ մտածի, ինձ տար, ես կպատմեմ։

Առավոտը վեղիր տղին կառնի, կեթա Թագավորի կուշտ։

Տղեն կասա.—Էդ ձուկ ծծղացեր ա, փախեր ա ընդու համար, որ Թագավորի աղջիկն ասեր է՝ ես որձ չեմ տեսնի։ Դու քո Թագավորություն եառասուն օրով ինձի տու, որ պատմեմ էդ բոլորը։

Թագավոր կտա, տղեն կնստի թախտին, կըհրամայա, վեց խարիր զինվոր բերեք։ Զինվորներ կգան։

Տղեն կասա.—Թագավո՛ր, քո զորքով գնում ենք աղջկա մոտ։

Օր կխասեն, աղջիկ լուր կառնի, կասա.—Դարվզներ փակեք, ես որձեղենի հերես չեմ տեսնի։

Դարբասներ կջարդեն, իրեք խարիր զինվոր շարք կկանգնեն մի կողմ, իրեք խարիր՝ մյուս կողմ։ Տղեն կհրամայա, օր աղջիկներ խանվեն, տկլոզ անցնեն էտ զորքի առաջ։ Բոլորն հընցան, մեկը տղա էր։

— Էդի կո աղջկա սիրողն էր։—Տղեն ասավ.—Հենց ըստրա համար էլ աղջիկ կուզեր ընձի սպաներ։

Թագավոր կասա.—Դու պտի հըլնես ընձի ժառանդ, էդ աղջիկ ընձի աղջկություն չի անի, ընդու վիզ կտրելու ա։

Տղեն չհամաձայնավ, գնաց իր ծնողների կուշտ։

## 12(21). ԴԻՆԴՐՄԱՋ ԽԱՆՈՒՄ

Հառաջ ժամանակով մեկ հարուստ բալըգան կար. էս մարդ ուներ մեկ որդի։ Հերն ու մերը ծերացած են, տղին տված են ուսում։ Գրին հիրանց երեխուն «Ինչ ուսում» առեր ես բավական ա, արի՛, մենք ծերացած ենք, արի՛, քիզ պսակենք, նոր մեռնենք»։

Էս մարդ էկավ, շատ ուրախացան, խերն ըսեց.

— Ցավա՛շ ըստուն փորձեմ։

Սաբախտան ըսեց.—Էս տաս մանեթ ա՛ռ, գնա քո խելքով ինչ օր կբերես տան խամար, ա՛ռ արի։

Տղեն առավ գնաց, տեսավ օր ուրանց հընգեր տղեքներ, նաղարեն հուրանց հառաջ, կուտեն, կխմեն, քեֆ կանեն.

— Բարո՛վ,—ըսեց.—

— Վա՛յ, բարո՛վ, բալըգյանի տղա ջան։

Լցին արաղ, համեցեք էրեցին, էս մարդ վերցեց խմեց։ Բա՛ նա խելքով տղա էր, հընգերացավ ղրանց խետ, իրկուն արև մտավ, տաս ռուբլին էլ կերան, խմեցին, հելավ էկավ տուն։

— Բալա՛ ջան,—ըսեց.—հընչի՞ ուշացար, ի՞նչ ես առեր։

— Հայրի՛կ ջան,—ըսեց.—վերև աստված, ներքև դու, չըմ կարող քեզի խափել. ես օր գացի՝ իմ հընգերներ քեֆ կչինին, ինձ էլ կանչին, կլեր օր ես իմ ախպեր տղեկներից ձեռ քաշի՞։

Խասավ տղի ճակատ պաքեց, ըսեց.—Շատ լավ էս ըրե, բալա՛ ջան։

Հառավոտն հելավ, տաս ռուբլի էլ խանեց տվեց, ըսեց,—Գնա՛, ինչ որ քու խելք կկդրա, առ տան խամար, արի։

Առավ գնաց, տեսավ օր քաղքից դուս լավ կազոնի ձիանք կա. չեհել տղեքներ կնստին, շափ կիտան ձիանք, տեսան՝ ո՞ն ա լավ ձի կքշա։

Մե գլոխ էրթան գան՝ հիթսուն կաբեկ ա։

Էս մարդ գնաց մե ձի նստավ, էդ տաս մանեթն էլ ձիու վրեն խրջեց։ Գնաց մեյդան, էկավ։ Ներն էլի խարցուց, տղեն ըսեց ինչ հելել էր, էլի տղի ճակատ պաքեց։

Էս մարդ հելավ էն մյուս առավոտ, եռնուն ռուբլի տվեց. վերցուց գնաց։

Էս առավ էկավ, եգեղեցու կշտով հընցավ, տեսավ օր էրկու անաստված մարդ մեկ մեռլի վրին շրիդ դրած՝ կքաշեն ու կզանեն,—Տո՛ շանորդի, մենք աշխատանք խըդ իրար, արևն քրթինք թափինք, դու էկար տուն, ես տաս ռուբլի տվի քեզի, օր բերիր տուն, օր իմ երեխեք սոված չմնին չուր իմ գալ. դու մեռար ես, մկա քու կընգնից կուշենք, կասա.—ես փարա՞ նմ տեսե, վին որ տվել եք, ընդուց էլ առեք։

— Խո քե քրվենք, տրորենք, դինջնանք։

Հասավ.—Դու էղիս՝ էսդոր մեղք քո վրին, քյանի՞ մանեթ ես տվե։ Ըսեց.—տաս մանեթ։ Խանեց տվեց ըստուն։

Դարձավ մեկելին,—Դո՞ւ։

Ըսեց.—Տասխինգ։

Խանեց, տասխինգ մանեթ տվեց։

Ըսեց.—Տղեքներ ջան, էս էրկու ռուբլին էլ՝ դացեք, ըտոր տեղ փորեք։

Գացին փորին, ըսեց.—Գնացե՛ք տերտեր բերեք։

Գնացին բերին, կարգը կատարեցին, հելան փողն էլ տվեց, հիրգուն էկավ տուն։

Խեր խարցուց.—Բալա՛ հնասավուր նոսուն մանեթն իմա՞լ էրիր։

Տղեն պատմեց։ Էլի տղի ճակատ պաքեց, ըսեց,—Շատ լավուրեն էս էրե, էղի գուքա քու դեմ։

— Դը՛, բալա՛, հելի գնա մեյդան, մեր դուքնի, ճոթ խլսեր ա, մեր մուշտարին կէթա ուրիշ դուքնից առուտուր կէնա։ Գնա՛ խրիտ, առարի, մեր դուքներ լինանք, օր առուտուր էնինք։ Կէրթաս մեյդան, էն մարդ օր շեկ կեղի, աչքեր կապուտ կեղի, էնդոր լբռնես նոքար, լավ էն՝ օր լավ գեղեցիկ, քուրսե տղա կեղի, էնդոր կբերես։

Խանեց փալան տվեց տղին, տղեն գնաց, տեսավ օր խոր ըսած էդ գաբուն, աչքեր կապուտ, շեկ տղեն ընդեղ էր, ըսեց.—Լա յավաշ փորձեմ։

— Բալա՛,—ըսեց.—նոքյար կեղի՞ս։

— Հընչի՞ չէ։

Ըսեց.—Արի՛։

Քամադից քցեց, էկան մտան սենյակ, էլա խաղչին չմտեր էր, տարուրատեկն համեցեք էդոր,—մոր բռռաց.—Մեղի էրկու աման կերագուր բե։

Լցեց բերից տղի հառաջ, խացն օր կերավ պրծավ.

— Բալա՛,—ըսեց,—օր չուր հիրգուն փալան քալիր՝ ինչքա՞ն փող կառնիր։

— Կարող ա մանեթ, հիցուն կապեկ։

Ըսեց.—Էսա մանեթա՝ քզի, հելի՛ քող գնա, դու մկաուրից էկեր ես, դու պտի նորրություն էնես, ես ա քզի նորրություն կէնեմ։ Դու ընձի հարգավոր չես, իմ խոր խրատն էր կփորձի։

Հե՛լավ մյուս հառավոտ, գնաց, տեսավ էն քուլսիղ տղեն կայնուկ ա, բարևեց։

Բարևն առավ, խարցուց.—Նոյոքար կէղի՞ս։

Ըսեց.—Կէղիմ։

— Էրթանք։

Առավ էկավ, մտավ, տաբուրետկեն համեցեք էրեց, ըսեց. Ցա խաղին ընձի ամոթանք ա կիղաս, յա, դու լա նստի տեղավորվի, նոր ես։

Ճաշն էլ ըմալ, էլի հինք հառեջ չլևերցուց։

Տղեն ըսեց,—էսի իմ խոր ըսած նոքյարն ա։

Հելան սաբախատան գացին խրիտ էնելու։ Էս մարդ, օրնեք ա, բազրգյան մարդն օր էիա մի թագավորանիստ քաղաք, պտի մեկ լավ հնձա (նվիր) տանա թագավորին, որ էսի իրավունք տա էդ մարդուն, քաղքի նե առուտուր էնա։

Վերցուց տղին, հընձան, գացին թագավորին։ Էսի շատ ուրախացավ։ Էս մարդ՝ նոքարն, խրատեց տղին, ըսեց.—Խաղեյն ջան, էդ թագավոր մե աղջիկ ունա, անուն Դինդրմազ ա։ Թագավոր քեզ կխավնա, էնի էնքան տղի գլոխ ա տված կտրել, չկրցած ընդոր պատասխանանեն։ Քեզի օր թագավոր կճամփա ընդու կուշտ, կէրթաս էնտեղ, էնի յորդան-դոշակով պառկուկ ա, էրկու խատ քե պես երիտասարդ տղա էլ նստուցե ուրին առենակալ։ Օր կէրթաս, ընդոնց ոչ մեկին էլ բարով չտաս, կսես.

— Բարի լուս քեզի, Դինդրմազ խանումի քևի տկի բալիշ։

Էնի կսա.—Բարով, հազա՜ր բարի, բազրգնի տղա, համեցե՜ք, տաբուրետկին քաշա, նստի։

Օր նստիս անձե-անձու, ու մարդիկ քեզի հարց կուտան.—Բազրգնի տղա ջան, շատ տեղրանքն ես պտդուն, շատ կսա գինաս, մե խատ կսա էրա՝ լսենք։ Դու վերցու ըսա.—Ես կսա չ'գինամ, ոն օր իմ խաբարն արե, քըխ էն էլ զսա էնա։

Էնի կսա,—էնե՜մ, էնե՜մ։

Ինչ բան օր դսա կէնա, դու նաղդ կբռնես, օր նաղդ կզրուցես՝ էնդոր փոր կուտի, կզրուցա։ Սորվցուց տղին։

Էն մարդ՝ թագավոր, թուղթ տվեց տղին, օդորկեց ուր աղջկա՝ Դինդրմազ խանումի կուշտ։

Մտնելուն պես ըսեց.—Բարո՜վ քեզ, Դինդրմազ խանումի քևի տկի բալիշ։

— Վա՜յ բարո՜վ, հազար բարով, նստի։

Դինդրմազ խանում հընձավ վրեն, մեկ շամտան գլխու վերևն ա, մեկ օդներու տակն ա, մեկ՝ էն կողմ ա, մեկ՝ էս։ Չխոսաց։

— Բազրգնի տղա՜, գիշերն հերգեն ա, մե դսա էրա։

Ըսեց.—Տղեկներ ջան, իմ բարևն ոն օր առև կարող ա էնի ըսա ես բան չգինամ, կարող ա էնի գինա։

— Էնեմ, էնեմ։ Ըսեց.—Բազրգնի տղա, մե սիրուն քաղքի մեջ մե ծիրունի քահանա, մե լավ Բարզի, դուրդյար, հելան քաղքից, հիրար խատ հընգերացան, տվին ջաղդեն հառեջ հուրանց ու կէրթան։ Շատ էրթլուց հետ, քիչ, խասան մեկ անտառի մոտ, ջաղդեն կհնգի անտառի միջով, մութ ա։ Հիրար ըսեցին.—Մեր մոտ զնք չկա, ջաղդեն էլ չգինանք, արեք կրակ էնենք, լուս բացվի կլնինք, մեր ջաղդեն կշարունակենք։

Բերին փեդ քամին, դուրգար երիտասարդ ա, որոշին օր ամենք իրեք ժամ հընցուն պահակ։ Դուրգար նեղեցե, քուն կուգա. հելավ, բերեց գերանից մե խատ աղջիկ կուկլա շինեց, կայնըցուց վըր օդներուն, իրեք ժամ բըմալ։

Բարզուն ըսեց.—Հելի՜, իմ ժամ բմմա։

Հելավ տեսավ՝ մեկ խատ չփլաղ կայնուկ ա։

— Ցա՜ Հիսուսը Քրիստոս,—փեսը զանեց, հնգավ,—ես էլ բարզի եմ,—ըսեց,—հելավ, դրեց մաշինով կուկլին շոր կարեց իրեք ժամ բմմավ։

Տերտերին խանին—Քե քո ժամն ա։

Հիշկեց տեսավ՝ աղջիկ կայնուկ ա, ըսեց.—Հիսուս քրիստոս։

Վերցրեց գավաղան, զանեց, իցկեց, ըսեց.—ըհը՜, էսի սուքովի բան ա։ Ծունդրով աղոթք դրեց, աղոթեց, աղոթըրնի դեմ աղջիկ հոգևորավ, աստված հոգի իջուց։

Հելան էս իրեք, կպան հիրուր. բարզին կասա.—Ընձի կխասի։

— Էն օր դուրգարն ա, կըսա.—Ընձի կխասի։

— Էն օր տերտերն ա, կըսա.—Ընձի կխասի։

— Որի՞ն կխասի, բազրգնի տղա՜։

Ըսեց.—Ցարգե, դուրգարին։

Դինդրմազ խանում առավ ըսեց.—Անխղճ անասավածնե՜ր, էդի տերտըրոջ կխասի, էնի խոքի տվեց։

Տղին տվին էդ աղջկան։ Էկավ տղեն, նոքարն ըսեց.—Իմա՜ն ես, սաբախատան էլ կէրթաս. ի՜նչ կսես, մի վախեցի, պառկի քնի։

Պառկան քնան, սաբախատան Հելան էկան թագավորի մոտ։ Տղեն էլի սովորցրեց ըսեց.—Էնի մկա բալիշ վառեր ա, հեսօր կերթաս, էնդոր տկի դռշկին բարև կուտաս, էլի կնստիս, կիտան հիրար քե ըսա,—Ոն օր իմ բարևն առև, քըխ էն էլ պրիցա։

Էս մարդ էկավ թագավորի մոտ, թագավորն էլի թուղթ դրեց պահակին, պահակ իրավունք տվեց, տղեն գնաց Դինդրմազի մոտ.

— Բարև՝ քե, Դինդրմազ խանումի տկի դռշակ։

— Վա՜յ բարո՜վ, հազար բարի, նստի՜։

Նստավ, էս մարդիկ.—Օդներիդ մեռնինք, բազրգնի տղա, հեսօր էլ դու դսեմ՝ էրա։

— Դու էդ իմա՜ն մարդ ես, ոն օր իմ բարև կառնի, էն էլ կէնա։

— Էնեմ, էնեմ, դու լավ լսեք։

— Մեկ աղջկա վրեն իրեք ախպեր ծռան. էն

մեկ ուր թղթեն ճամբխեց աղչկան մոտ, էն մեկ՝ ուր դանակ, էն մեկն էլ ուր այլուխ ճամբխեց աղչկա մոտ։

Ըսեց.—Ես իրեքին էլ անուն չղնամ, լավն լ՚ն, ոն օր գնաց մեկ տարի ժամանակ հուսում սովրավ, ես էլ նրան կառնեմ։

Հելան իրեք ախպեր, վերցին հուրանց պաշար, էկան մեկ ջրու վրեն նստան, հաց կերան։ Ջաղդեն ճղդվավ, հելավ իրեք տեղով, ըսեց.—Աստված էսի մեզ խամար ա որոշե, էկեք ամեն մեկ տեղով էրթանք։

Հելան ջոջ ախպեր ջոջ ջաղդով գնաց, միջնեկ ախպեր՝ միջնակ, պուճուր ախպերն էլ՝ քյասար ջաղդով։

Գացին, տարին քմավ, ի՞նչ սովրան. էն օր ջոջ ախպերն էր, գնաց աստղաբաշուքնուն սովրավ, էն օր միջնակ ախպերն էր, գնաց լոխմանի հեքիմի մոտ՝ էն դեղեր սովրավ, օր որ մեռել կո հետա հանդեն՝ հոգին կուդա, էդ դեղն օր կաթցուն բերան, կասաղնա։ Պզտիկ տղեն սարի կսեն, սարի ըսած՝ էս լոքերի կափղներ կխանեն, էնպես բան կիցկեն, որ արագ կփախեն, կվազեն։

Հիրար խոսք ին տված. տարին քմավ, էկան քոմռտան հիրար վրա.—Ախպերտի՛ք ջան, ի՞նչ էք սովրե։

Ջոջը ըսեց.—Ես աստղաբաշուքեն եմ սովրե։ Միջնեկն ըսեց.—Ես հեքիմուքյուն։

Պզտիկ ըսեց.—Ես իմալ գացեր եմ, ըդմալ էլ էկել եմ, իմ գլոխ բան չմտե։

Պզտիկ ախպերն ըսեց.—Լավ, մենք էսա մեկ տարի էկեր ենք, աղչիկ ա, բալիմ խիվանդեցե, մեռեր ա, հլա դու ընդոր աստղն նայա։

Նայեց ըսեց.—Վա՛յ,—ըսեց.—աղչիկ խիվանդ ա։

Միջնեկն ըսեց.—Ախր, էս դեղ փշում՝ կաթցուցինք, աղչիկ կլավներ։

Էն սարի տղեն ձեռնեն փախցուց ու խասուց։ Մտավ ներս պզտիկ տղեն, մե չայի գդլով տվեց, աղչիկն նստավ։ Ջուր էսի, էն էրկու ախպերն էլ դռնեն մտան, դիպան հիրուր։ Աղչկա փորն ուռավ։

Դինդրմազ խանըմ ըսեց.—Ձա՛ սարի գլոխ դեղ դան էր, օր խասցուցող չկար, աղչիկ կմեռներ, դեղ քանի կապել ածե, աղչիկ կխասի պզտիկ տղին։ Դուն էլ խասիս աղչկան։

Երրորդ օր նյոքարն էլի տեսավ խաղեկը ուրախ ա, ըսեց.—Էն դոշակն էլ կվառա Դինդրմազ խանըմ։ Լուսուն օր կերթաս, ընդոր կշտի շամդներուն բարև կըսես.—բարի լուս ձեզի, ընդոնք կըսեն.—բարով նստի։

Էլի կնստես։

Էլի էկավ բազրնգի տղեն, էկավ մտավ բարևեց, աթոռ քաշեց նստեց։

Տղեկներն էլի տվին խոսալ, ըսեց.—Իմ բարև առնողը կխոսա։

Շամդներն ըսին.—Բազրգնի տղա՛, էրկու ախպեր ըմալ սիրով ին իրար, մեկ հրոպե չեն կարա յոլա էքին առանց հիրար. ջոջ ախպեր կարգուկ էր, պզտիկ ախպեր ազապ էր։ էն մեկ օր ձին խեծավ աներձագ, քշեց էկավ.—Բարի իրգուն փեսա։

— Վա՛յ, բարով, հաղա՛ր բարի.

Էկան տուն, նստան, ըսկսին խոսալ, ըսեց.

— Գինաս հորի եմ էկե, փեսա ջան. ես գինամ օր քո տուն մարդ չկա, բայց էկեր եմ քեզի, իմ քուրջ տանեմ խառանիս։

— Վա՛յ քու տուն սուքվի, դու գինաս օր իմ տուն մարդ չկա, օր էկեր ես՝ քեզի չմերժիմ, քո քուր կիտամ տանես. հըմա խառանիս ֆողավ, կառնիս էն մեկել օրն կիգաս։

— Խա՛։

Հելան սաբահտան, խեծուց, ճամբխեց։ Կնիկ ա, էրկօր հանքցավ խառանսից հետո, ըսեց ջոջ ախպերն պզտիկ ախպորն։

— Հելի էնա մեկել ձին խեծի, գնա առ քու խառս, արի՛։

— Խա՛, կէրթամ։

Մեկել ախպերն ըսեց.—Ախպե՛ր ջան, քըխ ես էրթամ իմ կնգան բերեմ, ըմա խառնելն ու դառնալը մեկ կլի։

— Խա՛,—ըսեց.—յամա՛ն, շուտ գաք, հա՛։

Հելավ խեծավ ձին, դե անևրոջ տուն ա, հարդին, հանդցավ։ Պզտիկ ախպեր գնելի, կմտի, տեսավ օր ախպերն ու խարս հանքցան, հելավ դուռ փակեց, խանչալն կապեց ու հա՛յ՝ ջաղդեն տվեց հառեջ։

Մե խառ Թուխ Մանկան պես վանքա՛յ ջաղդի վրեն ա, էկավ մտավ վանք, համբուրեց.

— Վանք, ես օր իմ ախպեր կենդանի տեսա, իմ խանչլով իմ վիզ կկտրեմ, մատաղ կէնեմ, հորի պտի իմ ախպեր հանքներ, ընդու գլոխ օյին ա էկե։

Խորոտ հելավ օր՝ ախպերն ու խարս հանդ են գուքան։ Խասան փաթթվան, էկան օր պտի հընցին վանք, հինքն մտավ վանք, քամակից խանչալ քաշեց, վիզ կտրեց, ախպերն էկավ տեսավ օր ախպեր մըչ արնի կթպրտա։

— Վա՛յ իմ լուս քոռնա, իմ ախպերն հոգին մատաղ ա կանչե։

Վերցուց արնոտ խանչալ, հուր գլոխն էլ կտրեց։

Կնիկ տեսավ էսմալ՝ լաց. քմրութուն քափավ վրեն, աչք կպավ պառկավ վանքի զորք հելավ կայնավ վրեն, խոսեց.—Նորախարս ջան, հելի՛, էս մեկ բբուկ կթողեմ, քու իրիկու գլուխ դի

հուր շանդկին, տեքեր գլուխ հուր շանդկին, ասսու հրամանրով բրուկ քսա, կսաղնան։

Խարս հելավ սղալվավ, տեքեր գլոխ դրեց հուր մարդու շանդկին, իրկու գլոխ դրեց տեքեր շանդկին, երկուս հելան կկովին։ Էն օր գլխու տերն ա կըսա—իմ կնիկն ա։

Դինդրմազ խանմն ըսեց.—Մարմնի տիրոջն ա, դու էլ կխասես տղին։

Թագավոր բերից աղջիկ, տվեց բագրգյանի տղին, խառանիս էրեց, էն մի բեռ էլ օսկի տվեց, խեծան ձիանք, էկան։

Դևին խեծուցին, հուրանք էլ խեծան խըտ իրար, էկան. տղեն տարով էր խոսկ տվե. խազեյ խեսն էլ բարիշեր էր.—Խազեն ջան, մեկ ես եմ, մեկ՝ քո տղեն, ու դու հազար մանեք մեր խետ փող դի. կգիամ կաշխատեմ, բերեմ, քու կիդանք, ինչ օր օդուտ կա քու տղի խետ կկիսեմ։

Հմալ էլ համաձայնված ին։

Էկան մե չայիր չմնան տեղ, բերեց Դինդըրմազին նստցուց հովուն, օսկին կիսեց։

Ըսեց.—Ես էլ պտի կիսեմ, դինա՞ս Դինդըրմազ խանըմին։

— Իմ՛լ, բա միասին ենք աշխատու։

Գնաց, էկավ, քուր քաշեց օր սպանա, պընչ-ներուց երկու շահմար օձ դուս էկան. օձերին էլ սպանեց. ըսեց.—Ես էն մարդն եմ, օր էն մեռել դու ազատեցիր տալիքից, գնա՛, ուրախութենով վայելա Դինդրմազին, ես էլ խասիմ իմ տուն։ Դուք էլ խասիք ձեր մուրազին։

## 13(22). ՔՅԱՉԼՈՒ ԽԵՔԱԹ

Ախն ժամանակ մեկ հարուստ մարդ կար։ Էդ մարդն մեռնելու էր, ուր աղջկան կանչեց բերեց, ըսեց.—Բալա՛, ես կմեռնեմ։

Նա կշռել էր աղջկա խելքն էլ, տղինն էլ, որ աղջիկն տղից խելոք ա։

Էս մարդոնց վրեն նզովք դրեց, ըսեց.

— Տղե՛ք ջան, ինչ որ էնեք, ձեր քրոջ չուր չխարցուք, չէնեք։ Քամա՛ր ջան, դու խորոտ աղջիկ ես, կկարգվես. դու հեղես քո աստված, քո աղրոր կկարգես, նոր դու կկարգվես։

Հերթում կերան ծնողի հառեջ քուր ու աղբեր։ Ողորմի հիրան, մեռավ։ Ինչպես օրենքն էր՝ քահանով, պատարագով ուր խերն քաղեց. մացին քուր ու ախպեր։

Մեկ օր քուրն ախպոր հարց տվեց, ըսեց.—Դու քու հուսում ավարտել ես պրծել ես, ես էլ կջոջնամ. վի՛ աղջիկ կուզես՝ ուզենք, կարգվի, որ ես էլ կարդվեմ։

Ախպեր լսեց, հելավ գնաց, հարևանին մե լավ աղջիկ կէր, ուզեց կարգվավ։ Օր ուզին բերին, խարսն մնաց էրեխով։ Միայն, խարսն տեսավ, որ մարդն ամեն ինչ քուրոջն ա խարցնում։

Էս խարսն մարդու խետ կկռվեր։

Դու հոր՛ի կենդարկվես քու քուրոջ։

— Ա՛յ կնիկ, տկլո՛ղ ես, չէ՛, բոբի՛կ ես, չէ՛, քու ի՞նչ հաշիվն ա։

Ին ամիս, ին ժամ՝ մե խատ տղա բերեց, կնքեցին, ուրախացավ։

Էրեխի ձենն հելներ՝ քուր պտի օրորեր. քուրը ճժուն կպահեր։ Հարսի սրտի մեջ չար էր մտե, թե ի՞նչ թավուր էնեմ, օր քուր ախպոր կռվցում։

Մեկ օր, էրկու օր—տղեն հելավ տարեկան տղա։

Մարդին կսեր.—Ես օր կերթամ ջրու, քու տղեն կպադռի, քու քուր չի գա օրորա, տղին բարա կշափա, կանիծա։

Տղեն չավատեր, կսեր.—Ը՛ր էնա, իմ քուրն ա։

Շատ էնելուց հետո, էրկու սենյակ էր, մեկ՝ քուր կքներ, մեկ էլ՝ էրկ-կնիկ։ Ավալ էլ լուկա չկէր, փետե օրորոց էր, տղեն էդ օրորոցի նե փաթթուկ։

Էս քուրոջ չեր ուրին դանակ կար սովորական։ Էս անաստված խոքեկորուս ախպոր կնիկ, դիշերվա մի վախտ հելավ, աղջկա դանակ դողցավ, բերեց ուր էրեխեն մորթեց, արնոտ դանակ տարավ թալեց քուրոջ չեր։

Մե էրկու-իրեք րոպե մնաց, մարդուն ըսեց.—Մա՛րդ, իմ էրեխեն հընչի՞ ձեն չէնա։

Մարդ հելավ ճրագ կապուց, տեսավ՝ օրորոց արուն, ճչաց, զանեց վըր գլխուն.—Վա՛յ մա՛րդ, —ըսեց,—էս ո՞ն ա էրե։ Հելան տեսան՝ դուռ փակ, հերթիս կալուկ։

— Իմ էրեխեն սպանող մեր մեջն ա, քո քուրն ա էրե։

Իրկան, ուրին օրիակ էրեց, քուրն հելավ էկավ, օր էրեխեն տեսավ, լաց հելավ, ծամեր կքաշա։

Դանակ խանեց։

— Իմ՛լ ա, խո՛ղ տամ վըր գլխուդ, տեսա՞ր քուրդ ինչ էրեց։

Ախպերն էլ չհամփերելով ըսեց.—Քո՛ւր ջան, իմ ձեռ չրռնա ես քեզ վնասեմ, հելի իմ տունն գնա։

Լալով հելավ էս օղուշաղ հընգավ չոլ. օրմ՝ էստեղ, օրմ՝ էնտեղ գնաց, գնաց մեկ անծանոթ քաղքի ռաստ էկավ։ Գիշեր էր, ծառն հափլփեց գրկավ, ջանավրի հախու հելավ ծառին նստավ։ Դու ինչ կսես, որ էսի թագավորի բաղն ա, թագավորին էլ տղեմ՝ ունի կարգելու էս աղջիկ օր հլավ նստեց էդ ծառին, հավուզ էդ ծառի տակն ա, թագավորի տղեն ձիու քուռակ կբերա ջրելու։

Տղեն էկավ բարի լուսուն, ձին բերեց, աղչկա սուրբաթն կերնա։ Տղեն էկավ տեսավ էդ պատկերքն, օղրավ ծառին, տեսավ՝ մեկ զանայլու աղչիկ նստուկ ա։ Էս մարդ ուրախութենեն շշմավ. ձեռ բալեց, ծառի գլխուց հիջուց, առավ էկավ տուն։ Տղեն առանձին սենյակի մեջ կապրեր։ Աղչիկ բերեց տարավ ուր օթախ, էկավ. տղեն մարդու չէր ըսե։

— Բալա՛,—ըսեց թագավոր,—կուզենք քե կարգենք։

Տղեն ըսեց.—Իմ մեր, իմ խեր, իմ ուզած աղչիկ բերեր եմ, կարգվել եմ։

— Իմա՞լ կարգվեր ես։

Կնիկն ուրեն տվե լալու տեղ, նեղացեր ա, որ մարդն ուր ուրախութենեն չի խարցուցե կնգան՝ որդեղի՞ց ա, ին՞չ ա։

Ըսեց.—Կարելի՞ ա մենք էլ տեննանք, բալա՛ջան։

— Իհարկե՛.—ըսեց։

— Էկավ ըսեց.—Կնի՛կ, իմ խեր՝ թագավոր, թագուհին կուզեն քե տեսնեն։

Կբերեն կպատրաստեն ճոխ սեղան սարքին. էկան տեսան օր՝ հուրի մալաք ա։

Կղվավ կխորոշ, կեսրարի ձեռք պագեց. օսկի կախին դոշ։ Կանչին գեղի քահանեն. նորվաց թագավոր հրատարակեց, թե իմ տղեն ուր սրտով կպսակվի։ էկան տեսան օր էդ տեսակ խողածին չին տեսած։ Էս մարդիկ դհոլ զանին, պսակին, է՛, թագավոր ու մեկ տղա։

Տարին քմավ, թագավորի խարս չոք զարկեց գետին, մեկ խատ տղա բերեց։ Շատ ուրախացան։

Էրկու տարին քմավ՝ մե տղա էլ բերեց։ Ջոջ տղեն հելավ հինդ տարեկան, պզդիկ տղեն հելավ երկու տարեկիսկան, օր չուտե՞ս, չխմե՞ս, էդոնց աղ-ջամալին քամաշ էնես։ Դե՛ խարս հավալ կեսրերի խատ չպիտի խոսեր, էսա մեկ, կիսրոջ խատ չպտի խոսեր, էսա երկու, խորոխպրատանց խատ չպտի խոսեր, էս էլ իրեք։ Էդքան տարի, էս էրկու երեխեն էլ հելավ, ոչ մեկ կարծիք չէնեն, քե խարս մեր խատ չխոսա։

Տղեն կըսա.—Իմ կնիկ էս տեսակ խորոտ, իմ ճժեր ըսմալ խորոտ, մեկը պտի իմ կնգա լեզուն լսո՞ քե չէ. էս մարդ ընչի՞ լալ մնա։

Մեկ ահել մարդ թագավորի խատ շատ ա աղ ու հաց կերե, իշկից՝ թագավորի տղի ռանգը դիլխոր ա։

— Բարե՛ քե, պարե ջան։

— Բարե՛. ես քու համբավ լսեր եմ, ես քու դիրքն կտեսնամ, ինձի դուր չի գա. դու արի՛ ինձի ճշմարիտ ըսա, ինչի՞ խամար դու դիլխոր ես։

Ըսեց.—Սրտ օր ըսեմ, կպախե՞ս։

— Կպախեմ մինչև մախա։

— Հայրի՛կ,—ըսեց,—իմ կնիկ լալ ա։

Ըսեց.—Էնի լավ մարդու աղչիկ ա, դու կերթաս բաշար, կառնես մի կիլո կարմիր խնձոր, մի կիլո սիխտակ, կերթաս, օր քո կնիկ տուն չնդի, ճժերուց մնիուն՝ պզդկին, կարմիր խնձոր տուր, շոշին՝ սիխտակ։ Ջոջը կֆայմի օր կարմիր լավ ա, կխասի կտփա։ Ճժեր կսկսեն լալ, մեր կխասի կըսա.— Քյո խերն ա մեղավոր, թող պզդկին էլ կարմիր տա։

Էն վախտ կխոսա, դու կտենաս։

Սովրցուց։

Պաբե՛,—ըսեց,—օր էդ բան հլի, քե պալտո կառնեմ։

— Տո՛ շնորակալ եմ, որդի՛, ես մեռնելու եմ, ընձի՞ պալդո ինչի՞ս ա։

Տղեն բերեց խնձոր, տվեց ճժերուն, հինք տափավ։ Ճժեր խասան հիրուր քաշքշին, կծեծին հիրուր։ Մերն դռնեն մտավ, ըսեց.—Վա՛յ քյոփողչի, կմանես քո անտեր խեր, որ չֆայմավ ընձի բարև տեր, բարի լուս տեր, գինա ես լալ եմ, ես մոտրի աղչիկ եմ։

Տղեն հելավ ու փաթթվավ հինեն։

— Տո քո ոտ պագեմ, դու էդ խմա՞լ քեն պահող ես, որ լալ կմնաս։

Իմ սրտի ուղախութենից էր։

Էկան սաբահտան պաբեյ կուշտ։

— Տո՛ պաբե ջան, խոսեց։

Քաշնց մե դախ ժամանակ, աղչիկ խնդրվավ, խոր տուն հընգդ մտեն, «յարա՞ր իմ ախպոր էլի էրեխա էղե»։

— Մա՛րդ, քեզի մեռիմ, գնա՛ թագավորից ժամանակ ուզա, էրթանք իմ խոր տուն, տեսնանք էնոնց ու դանք։

Տղեն խորից-մորից իրավունք առավ։

— Վա՛յ բալա ջան, մեր խարսին քող քրեա էթա։ Առ՛ քու կնիկ, գնա։

— Հայրի՛կ, արի, մեր ողրի խատ՝ քսան ձիավորով քրեա տանա, բերելուն՝ ես կերթամ։

Բերին կաղմին, կապին, չադր դրին, տեղաշոր, ուտելիք, հըմեն պատրաստությունով հընգան ջադտա։

Բավական տեղ էկան, հիրկվան եկեղեցու ժամն էր, խասան մե կանայ դուրան տեղ։ Հիջան չատր զանին, աղջկան չադրն ջոկ ա։ Մութն հընգավ, կերան-խման, մարդիկ ամենք հուրանց խանդան, քնան, ոլիրն էկավ չատրի դուռ, չար մտավ ինա։

— Թագավորի խա՛րս, բաց դամ, բան կանմ։

— Ես քնուկ եմ, առավոտ կանա։

— Չէ՛, մկա կանմ։

Մարդ չադրի դուռ բացեց, մտավ ներս, խա-

սավ օր պտի գրկի, ձեռ զանեց դոշի.—Ախպե՛ր, էդ ին՞չ ա կէնես։

— Ընչի՞ ախպեր, էսօր մենք մեռեղ պտի քնենք։

— Դու մեր ողիրն ես, քեզի հավատ ա ընձայած։

— Չէ՛ որ չէ՛, տղեդ կսպանեմ։

— Ըսպանա՛, իմ վիզն էլ կդրա։

Ողիր խանեց, վիզ կտրեց։

— Էնա մնկէլն էլ կմորթեմ։

— Մորթա՛։

Էն պզտիկին էլ կդրեց։ Թագավորի խարս իբրուխ վերցուց ձեռ, հելավ.—Ջուր զանեմ իմ հերս, դամ,—չադրի դուռ վերցեց։ Հելավ դուռ ու փախավ դիշերով, դնաց։

Ողիրը սպասեց, սպասեց, տեսավ օր չկա, հինքն հավար թալեց, որ թագավորի թոռներին սպանել են, խառոին էլ տարել են։ Հելեն, խառվան հիրուր, է՛, գիշեր, ղարիբ տեղ։ Լուսն օր բացվավ, հետ գառան գացին, թագավոր ու տղեն օր տեսան, աչքերուն լուս ուրանց քաշվավ։ Պատմին թե՝ քու խարսի միտկ ղալը էր, երեխեն մորթուկ, խարս չկէր։

Էս խարս դնաց հանդիպավ մեկ չոբնի, քուրդ չոբանը օր տեսավ զարմացավ։ Բարև տվեց, բարև առավ, ըսեց.

— Այ աղջի, խայտս աղջիկ ես, էս վախտ էս ի՞նչ բան ա։

— Չոբան ախպեր, իմ խեր հարատութենի համախ արեց, ընձի տվեց ոչինչ տղի, հելեր եմ ծոցեն, փախեր եմ։

— Տո՛ քե մեռնիմ, ես քե կառնեմ։

— Կայնի, մեզի շալրաթ կա, մենք եկեղեցով կկարդվենք։ Ես քեզի, դու ընձի, հրմա եկեղեցով կարդվենք։ Էս քո չոմախ, քո քոլոզ տու ընձի, ձեր շորերից տու ինձ, խաքեմ, խառվեմ քրդերին։

— Լավ ըսիր։

Քոլոզը տվեց, հելավ գնաց տուն, չուր հետ կգեր, էս աղջիկ հելավ գնաց, փախավ։ Քրդերն էկան տեսան՝ ոչ ոք չկա։ Կուտոն ընգավ, ըլըխ շուռ գա աղջկան։ Աղջիկ էկավ ընգավ մե խոր ձոր, ուր շորեր խանեց, լողկցավ, գետն հնցավ, նստավ՝ ուր շորերն ա կխագի, տեսավ օր էրկու ջահել տղա, ձիեր բարձուկ գինի, էկան կայնան։ Էդոր գեղեցկությունն օր տեսան, զարմացան։ Էստոնք էլ բարև տվին. իմալ քրդուն ըսեց, էմալ էլ էսոնց։ Տղեկներից մեկը ըսեց.—Աստված ընձի. տվեց, ես կարգուկ չեմ, քեզի կառնեմ։

— Տղեկնե՛ր ջան,—ըսեց,—էդ ի՞նչ բեռ աւ

— Գինի, արաղ աւ

— Ես անոթի եմ, բերենք ուտենք, խմենք։

Բերին կոտոշով էրաղ խմին, բեռներ հիջուցին, վլացվան. նստան կերան, խման, խուրջին բերին բացին, գինի, էրաղ խմին։

Աղջիկ ըստոնց խմցուց. արև զանեն, քար ու թուփ կրակն հընգած կվառի։ Ընդոնք քնան, հինքն էլ հելավ շորերը փոխեց, տղամարդու շոր խազավ, հելավ տղա, տկերու բերան բացեց, էրաղ, գինին թափեց ու փախավ։

Տղեքները հելան հնգան ընդոր գտնելու։

Գալով՝ էկավ կայնավ խոր դուռ. մտնող կմտնի, հելնող կհելնի, չճանչնա, դի տղա յա դառե։

Ախպերն հելավ.—Ա՛յ տղա, արի՛ նես, տեղավորվի։

— Վերև աստված, ներքև դու, լսեր եմ որ քե զաղարած ա հարկավոր, ես անտեր տղա եմ։

Էկան տուն, կպախա ուր խոր ղաղեր. հրմալ ա մտե ուր ախպոր աչք, կըսեն՝ դու քո ոտ մի դի գետին, դի՛ մեր, ոնչինչ։

Թագավոր կանչեց մարդ, ուղարկեց որ իր խարսին գտնեն։ Խեծան ձին թագավոր, տղեն, ողիրն, հելան հնգան դուս. էկան, էկան՝ ախպոր ղոնախ հեղան։ էն օր հինքն ա՝ կճանչնան, էնոնք չճանչնան, տղի ղեստ ա խաքի։

Ախպեր հրամայեց.—Քյաչա՛լ ջան, ղազմ, մորթա, բեր պատվա մեր կոնխներուն։

Մութ տվեց, էս մարդ՝ ախպերն, հարց տվեց.

—Դու ի՞նչ մարդ եք։

— է՛, մեր ցավ կանանչ-կապուտ ա, մեր կորուստի հետևն ա ման կիգանք։

— Չոբան դո՞ւ։

— Մեզ էլ դարդ կա։

—. Ցաբուչիք դո՞ւք։

— Մեզ էլ։

Վերցուց ուր ախպեր ըսեց.—էսի հերգեն դշեր ա, ականջ էննենք մեզի ղսա էրեք։

Թագավորի տղեն, ողիր, չոբան, յաբուչին հրմեն հրաժարվան։

— Խաղե՛ն,—ըսեց քյաչալը.—ես կսեմ, միայն ներսից դուռ պտի փակենք, նա՛ էստեղից մարդ հելի դուս, նա՛ դրսից մարդ գա, իմ ղսեն դիպչողական ա. քո կնիկն էլ պտի գա։

Էկան ժողվան նստան, կլսեն քյաչլուն։

Վերցուց ըսեց.—Ջավուչվա ղաղի՛, յանմասն. համ նասիաթ ղը, համ հիքյաթ ղը (իմ ղաղ շուտ չեփիս, համ էսի գանդատ ա, համ խեքաթ ա)։

Ըսեց.—Խաղե՛ն ջան, դուրան ողիր, օթուրան բաղ (նստող ողիր, թագավորի տղա). մեկ մարդ՝ մեկ աղջիկ, մեկ տղա կունենաս։ Խերն մեռնելու կլի, կկանչա ժառանգներին կըսա որ.—Տղա ջան, դու ինչ որ կբռնես, քու քուրջդ խելքով կէնես։ —Կասա,—դու կկարգվես, հետո քրջդ կկարգես։

Ախպոր խելք գնաց, հընգավ. յաման, յամա՜ն, չուր բողին՝ հարավ։

Կնիկն հընգավ գլխու.—Քա՛ դըբոլ ա հա՛, քյաշա՛լ։

Թագավորի տղեն էլ հընգավ գլխու։

— Էս մարդու խարս տղա բերեց, անաստված խարս տղին մորթեց, դանակ դրեց քուրջ չեր, քուր սուրգուն էրին, գնաց։

Էս խետ թագավորի տղի խելք գնաց, ըսեց.— Էտի ես եմ, իմ կնիկն էր։

Խասավ էնտեղ օր՝ ոզիրն սպանեց տղերքին, ըսեց.—Դուրան ոզիր, իքի օղլան օլդուրդի ոզիր (երկու տղա սպանող ոզիր)։

Ոզիր սևցավ։ Հըմեն մեկ-մեկ պատմեց. քըրդուն հանդիպավ, դո՛ւ քո՛ւրդ, էնի խորոտ աղչիկ, դու պագի՛ր էնոր։

Ըսեց.—Չէ՛, յամա՜ն, չէ՛։

— Յաբուշի՛ք, դուք ըսկի չպաշի՛ք էնոր։

— Չէ՛, յամա՜ն, մեզի խմցուց, քնցուց։

Գլխուց փափախ հիջուց.—Ես քու քուրն եմ, թագավորի տղա ջան, ես քու կնիկն եմ, էս էլ քո հարազատ ոզիրն ա, քո տղեկներ սպանողն ա։

— Չոբա՜ն, էսոր տիկը կխանես։

Ոզրին տվեց տկլոզցուցել, տվեց չոբնին։ Բավականի փող տվեց չոբնին, ըսեց.—Տա՛ր, քո օչխարն առ։

Յաբուշոնց խանեց արաղի, գինու փողը տըվեց։ Նոր թագավորի տղեն հելավ, նոր կեր ու խում արին, ախպորն էլ չքողին կնկան սպանի։

Հելան խարսին առան, գացին թագավորի երդիր. սաղ քաղաք քաղքով էկան աչքալուս, յոթն օր, յոթ գիշեր քեֆ արին, տղին դրեց վըր հոր գահին ու խասան հուրանց մուրազին։ Դուք էլ խասեք ձեր մուրազին։

## 14(23). ՂԱՍԱԲԵ ՋՈՄԱՐԴ

Մե մարդ էնքան բարեխիղճ ղասաբ էր, ինչքան աղքատ դիմեր՝ կօգներ, կիդեր։ Տալով, տալո՜վ, էնքան տվեց օր էսոր մնաց մեկ խատ ձի, էրկու խատ էլ տղա ունա, մեկն էրկու-իրեք տարեկան, մեկն էլ վեց տարեկան ա, էս մարդու կին խորոտ ա։

Գիշերվա մե վախտ ըսեց.—Կնի՛կ, ես ամոթու էլ չկռնամ ապրիմ, գոնե գնանք ուրիշ քաղաք ապրինք։ Հըմեն գինան իմ խիղճ, մենք մացինք աղքատ։ Գիշերվա մեկ վախտ հելան, ճամբա հնգան։ Գացին, աղոթրան հլա չբացվեր էր, գացին։ Մեկ ջահել տղա, նշանելու յա, գուլա որ նշանած բերա, ձեռք փող չկա։ Էս մարդ Ղասաբե Ջոմարդի անուն լսել ա, հելավ գնաց էնոր կուշտ, տեսավ որ դուռ կողպուկ ա։ Հիմցավ օր նա գիշեր գացեր ա, հնգավ ջաղդեն ու խասավ.—Բարե՛,—ըսեց։

— Բար՛և,—ըսեց Ղասաբե Ջոմարդ։

—Ղասաբե Ջոմարդին կպտոտեմ, նշանելու եմ, կուզեմ փարա ուղեմ էնորից։

Ղասաբե Ջոմարդ խանեց ձին, տվեց էդոր, ըսեց՝ «Էս տղեն մուրազի վրեն ա»։ Տղեն խեծավ գնաց. ձին էլ յորղա էմալ կեթա օր՝ երկնքու ղշերն էլ կամշնան մոդե։ Իրիկ, կնիկ մացին փիյադա. ճժեր գրկին, շատ գալով՝ մի քարվանի տեղ կա, օրովհետև ջուր կա էդ տեղ, էս մարդիկ էկան մտան էդտեղ, ջլեր փռին, խաց կերան, քընան։ Ինքն էլ կրակ արեց, օր շմրսին։ Էն կրակ դնելու ժամանակ մեկ հատ բաղրդան էկավ, բռնները տվեց թափել, կրակ կուղին էնին։ Էրկու խոքու ջհհել տղի օղորկեց փետ ժողվեն ու կրակ բերեն։ Էս մարդ էկավ կրակի մոտ, տեսավ օր կնիկ չէ օր՝ հուրի մալաք ա։ Կրակ վերցուց, էկավ բաղրդանի մոտ։ Բաղրդանն էլ երիտասարդ տղա յա, լա չի ամուսնացե, ըսեց.—Տղա՛, հընչի՞ հանքըցար։

Ըսեց.—Աստված քու տուն սուքա, աղքատ մարդ կա, կնիկ մը ունա, մե արեգակ ա։

— Տղեկնե՛ր,—ըսեց,—հելեք գացեք, ֆանտով ըսեք, մենք օր էկանք քեզնից կրակ տարանք, մեր բաղրդանի կնիկ ալատվելու ա, քըխ քո կնիկ գա, իմ կնիկ ալատա, հա՛մ ջորի կիտամ, հա՛մ փող կիտամ։

Հելան գացին։

— Բարի իրկուն, իմ ախպեր.—ըսեց.—քուլրիկ ջան, ախպեր ջան, դուք խոքի ա կազատեք, իմ խազեյնի կնիկ խըտ ուրին ա, կազատվի, ես էկա իմ քուրջ տանենք, քըխ ալատա։

— Կնի՛կ, հելի՛, հելի՛ գնա։

— Ա՛յ մարդ, դու էդ ի՞նչ խավուր մարդ ես, կխափեն։

Ըսեց.—Հելի՛, քոփագողու կնիկ։

Առան տարան։ Բաղրդան օր տեսավ կնգա գեղեցկություն, դրին անդունդ փակին, բարձին ջորուն ու հայդե գացին։

Մարդ սպասեց, սպասեց, հելավ գնաց տեսավ՝ լալա քյոշմ, յուրդի կալմ։ Ելավ աղոթրանին հելավ խելքաթափ, ճժեր քնուց խանեց, հելավ ճժեր շլկեց, հընգավ ջաղտեն։ Էկավ մեկ չրու հանդիպավ, կարմունջ չկեր վըր չրուն։ Էս մարդ, լուլա բացվավ, տեսավ՝ պտի հուղեն-չուղեն բոպկուն, օր էդ ջուրն անց կենան։

• Հինքն միտք էրեց ըսեց.—Ջոջ տղեն քողե՛մ, վա՛յ թե հընդի ջուր, խեղդվի, պղղիկ քողեմ՝ էնի անֆայմ ա. ջոջին հնցում, հետո նոր պղղիկին հնցում։

Շլգեց ջլեր, տղին, էկավ գետան մեջտեղ,

խելք մաղեց, չլերն էլ ու տղեն էլ հնդան ջուր, ջուր վերցուց քշեց, բերեց չաղցի կուշտ։ Էն պըզտիկ տղին էլ դել առավ օր փախի, չոբնի շներ հասան վըր դիլուն, դել քցեց, փախավ։ Ջոբան ուրախ-ուրախա վերցուց տղեն, տարավ տուն։ Ջուրն հնդած տղեն ջուրը բերեց խանեց չաղցի կուշտ, չաղցի քար կայնավ։ Չաղչպանն հելավ տեսավ շոր ա կերևա. քաշեց խանեց տղին, ուշքը բերեց, առավ էկավ չաղաց։ Տղին չորցուց, պախեց, չոջըցուց։ Տարի ընցավ։

Ղասաբն Ջոմարդ հելավ ջրից, էկավ մե թագավորանիստ քաղքի մեջ, տեսավ օր ժողով ա պատի դուռ քոմած։

Գնաց խարցուց, ըսի՛ր.—Մեր թագավոր վախճանն, մեզի դավլաթ դուշի կա, պտի թողնք. վի պլխու վրեն կայնավ, էս մարդուն կօծեն՝ կտան մեզի թագավոր։

Էս մարդն էլ խառավավ էդոնց խետ, կայնավ։ Դուշին թողին, էկավ կայնավ Ղասաբն Ջոմարդի պլխուն։ Բերին էս մարդուն դրին պախին, դուշ էլի թորդին. էկավ կայնավ Ղասաբն Ջոմարդի շենքին։

Ըսին.—Ջանը՛մ, էսի ղաիրը մարդ ա, բերեք օծենք թագավոր։

Հելավ թագավոր։ Էստեղ տարիք հնցան, համարյա ջոջ տղեն հելավ տասնութ տարեկան, պզտիկն էլ հելավ տասվեց տարեկան։

Ջաղչպնի խաղչն գնաց տեսավ տղին, ըսեց.—Ի՛մն ա։

Ջաղչպան ըսեց.—Ես եմ ազատե, ի՛մն ա։

Ըսեց.—Ջանը՛մ, մեզի թագավոր կա, հըլեննք էթանք, թագավոր քըխ բաս։ Թագավորը լսեց։ Խովիլն էլ ըսեց խաղչնին.—է՛լ չըմ տանի տավար, ընձի տղա ունեմ, էնի ընձի կպախա։

Էն էլ բերեց թագավորի մոտ։

Ղասաբն Ջոմարդը ըսեց.—Խաղչ՛ն, օրենքով ջաղչպնին կխասի, միայն ես կխնդրեմ էս տղեն տվինք ընձի։

Համաձայնան, տվին թագավորին։ Ջոբնին էլ հըմլա էրեց։

Մենք դառնանք էն բազրգնի վրեն, օր կնիկն ա տարե։ Էսի պտոտելով էկավ Ղասաբն Ջոմարդի քաղաք, բռներ թափեց, օր պտի առուտուր էնա։ Էս բազրգաններ օր կիգան առուտուր կէնեն, պտոք ա թագավորին մե պարգև բերեն, որ թագավոր իրավունք տա առուտուրի։ Հելավ եկավ թագավորի մոտ, նստավ բազրգան, ըսկսեց շտապել։

Թագավորն ըսեց.—Հորի՞ հմլա կշտապես։

—Թագավո՛ր,—ըսեց,—մե թանկագին փող ունիմ, կարող ա գողնան։

— Որ էդպես ա, էս տղեկներուն կուղարկեմ՝ մուղաթ կենան, դու մնա մի քիչ ղսա էնենք, հերթեն դիշեր ա։

Տղերքին ուղարկեց, չդինան օր հիրար ախպեր են, գացին նստան ղուռու կուշտ։

— Ախպե՛ր ջան,—ըսեց ջոջ տղեն,—ես կըհիշամ օր մեր մեր դողցան տարան, մենք էլ հելանք հնդանք ճամբա. ես հնդա ջուր, պզտիկ աղբերն էլ չոբանն էր վերցե, բերին տվին Ղասաբն Ջոմարդին։ Մկա մենք ախպերներ ենք, մենք Ղասաբն Ջոմարդի տղեկներն ենք, հինքն էլ չդինա ինչ հելեր ա։ Մերն տղերներու ձեն լսեց սնդկի միջեն, ձեն տվեց.—Բալե՛ք, ես ձեր մերն եմ։ Ղութին բացին, էրկու որդին գրկեց, քնեց.

Էս մարդ շտապեց, հելավ էկավ, օր տեսավ, էլ հախու չմոտեցավ, խըտ վըր կրնգին դարձավ թագավորի մոտ,—Քու տղեկներ նամուս ա կթափեն. իմ կնիկ գրկած, պառկած ա։

Թագավորն ըսեց.—Դացե՛ք բերեք։

Գնացին բերին, էկան, Ջոմարդ տեսավ, չըճանչցան, տղին հարցուց.—Ա՛յ բալա, էդ ի՞նչ բախս ա։

— Հայրի՛կ, մի ջղայնացիր, էնի մեր մերն ա։

Ու տղեն պատմեց ինչ որ կհիշեր։ Նոր Ղասաբն Ջոմարդ խասկացավ, ըսեց.—Դու տե ասու օղորմություն, հա՛մ իմ տղեկներն ա էկած ընձի գտած, հա՛մ էլ իմ կնիկն հանտի էկավ, խասավ ընձի։ Ի՞նչ դիվան էնեմ։

Բերեցին տվին քրդի, ըսին.—Տա՛ր, օղնեռուց քրդի-բրդի։

Հելավ էկավ, ըսեց.—Բազրգնի ապրանք բաժանե՛ք։

Ուրախ-ուրախ հայտարարեց քաղքի մեջ.—Էսի իմ կնիկն ա, էս էլ իմ տղեկներն են։

Բերին թագադան օծեցին մարդ ու կնիկ թագավոր, թագուհի։

Նրանք խասան հուրանց մուրազին. լավություն գետին չմնաց։

## 15(24). ԼՊՈՒՏ

Մի քաղաքի մեջ մե մարդ կար, ուներ շատ գեղեցիկ կնիկ, էրկու տղա։

Էս մարդը քեչա իցկող էր։

Կնիկն ըսեց.—Դու մեզի քեչով ա կպախես, քո քաղքի մեջ էլ ուղող չկա, գնա հուրիշ քաղաքներ աշխատի։

Էս մարդու միտքը ձախ էր, կմտածեր օր՝ կնգա միտք ղալը ա։

Կնիկ տեսավ մարդու դրությունն, հերթում կուդեր.

— Քու խունջինից հուրիշ խունջան չհարձկվի իմ վրեն։

Էս մարդ ավաղալով գնաց։

Թե մեկ, թե տաս տարի մնաց, լպուտ հա՛ փարա կճամփեր տղեկներուն էլ, կնգան էլ։ Մենք դառնանք քաղքի վրեն։ Քաղաք դավլաթ ղուշի կա։ Թագավոր վախճանավ, էդ ղուշին կթողեն, որի ղլխուն կայնավ, էնոր կչենեն թագավոր։ Լպուտի ջոջ տղեն խորոտ էր։ Ժողով հելավ, ղուշ թողին, ղուշ պատռավ, էկավ կայնավ լպուտի ջոջ տղի ղլխու վրեն։

Բռնին տղին հօդեն պախին, ղուշը էլի թողին. հերթսից գնաց, կայնավ լպուտի ջոջ տղի ղլխուն։ Բերին օծին, կազմին, կապին, էրին թագավոր։

Տղերք խառցուցին.—Հո՞ւր ա մեր պապան, ադե՛։

— Է՛, բալե՛ք ջան, մեր անվան խմար լավ չէ օր ըսենք, գացե գիդ կչենա։ Գինա՞ ինչ էրա, մի քյանի խոգի էքան քու պզտիկ ախպոր խետ, ըսեն թե քու խերն բաղրգյան ա, քըլա էքան խասկըցուն, քո խոր առնեն գան։

Բերին կազմին, կաբին, գացին խասկցուցին լապտուին թե.—Աչքդ լուս հեղի, քու տղեն էրած թագավոր։

Էս մարդ թթվավ.—Ըբա հորի՞ ես չգինի, մեր թագավորի խետ ա հեղե, ըտուց թագավոր հուր մեռնելուն ըսեր. ա.—Թըխ էս տղեն նստի թագավոր։ Խաթրով, ղոռով՝ բերին, էրին բաղրդնի տեղ, բերին։

Լպուտ նիաթ չբացվի, խոբին կողբա. կնիկ հերթվավ, հնարք չեղավ, կնկա ծոցն էլ չքնի։ Թագավոր տեսավ, օր խոր նիաթ ըսկի չբացվի, մոր խարցուց.

— Ադե՛ ջան,—էս ի՞նչ բախս ա, մեր խոր նիաթ հո՞րի չբացվի։

Կնիկ ըսեց. որ,—Արան տեղ ա մացե, կարող ա էտեղաց օդն սուր ա, ամառ ժամանակ ա, ագրիջի վախտ ա, չաղր տուր մնվի, մեղի տար Ագրիջեն* հավպրի վրեն, ես տանեմ էս բիձեն, բլեմ դույն դա տեղ։

Հրամայից՝ հրմնեն ինչ էրին, տարան՝ տղեն խետ, մեկ խատ ղուղուղի աղջիկ էլ դրին։ էլի խայու նիաթ չբացվի։ էդ տեղ մե գետ կա, կնիկն ըսեց.—Արի տանեմ գետ, քեզ լողցուցմ։

Հելան գացին, տկլողցան, էդ շան տղա լպուտ դանեց լանգեց, կնիկ հընգավ ջուր։

— Հավա՛ր, հավա՛ր, ջուր տարավ։

Էկան լալով չաղր քանդին, հելան, խետ դարձան էկան։

Մենք դառնանք վըր կնգան. կնիկն ջուր քշեց, հասավ երկթե կարմնջի, ձեռ թալեց, հելավ պոպոդով վըր ափին։ Մե քարվան բաշի երիտասարդ մարդ, տեսավ էդ կնգան, էկավ բաղրդան, կարգադրեց, չվան թալին, կնգան խանին, տեսան՝ շատ սիրուն ա, առան տարան։ Էս կնիկ օր տեսավ՝ սիրահարվավ, ըմա՛լ զանայլու շորեր խաքավ, խաց կերան, էս մարդ ուղեց խամբուրեր, կնիկն գարկեց, ըսեց.

— Դու իմ որդին ես, ես հերթում եմ կերե էդ բան չլի, լպուտից բացի։

— Ա՛յ հա՛յ, յավա՛շ, ես գըրարի չափ չկա՞մ, —կարգադրեց, էդոր շորերով տարան թալին։

Ուրանց խաց-ջուր կերան, հելան բարձան որ էրթան։

Հուրիշ բաղրդան էկավ, տեսավ թոռ են թալե, ձուկ հանեն։ Առան ձուկը, էկան հախպրի մոտ, ուր էդ կնիկն ա, Երջվեր աւ Հրամայից խինդ-վեց իշխան էփին, ցախ ժողվողի օղորկեց ցախ ժողվելու, մե քանիսն էլ փորերը թափին, օր դնեն ջուրը լվան։ Ըմալ օր դրին ջուրը՝ ձկներ սաղցան ու թռան էդ խոտերու մեջ։ Էս մարդիկ զարմացան, մի էրկու իրեք ձուկ մնացեր էր, հելան գացին խապնչնին ըսին օր—ձկները սաղցան։

Ջավդալով՝ հելավ էկավ, էդ էրկու-իրեք ձկներ փորձին, էլի հրմլա հեղավ։

— Տղեկնե՛ր,—ըսեց,—տկլողցե՛ք, էտեղ մեր սուրբ, հրեշտակ կա։ Մտան ջուրը, դացին հանդիպան էդ կնգան, որ ջրուց սառեր ա, քաշին բերին խապնչնի մոտ.

—Էս ի՞նչ բան ա։

Թաղա շորեր տվին, խելք բերին գլոխ, էս մարդ էլի ըսեց, օր ես լպուտի համար երթում եմ կերե։

— Ա՛յ հա՛յ,—ըսեց,—էս խորոտութուն դեմ լպուտն ի՞նչ ա։

Էս էլ բարկացավ, տվեց մեկ դախ ջորու տիկ խանին, դրին դրան մեջ, թալին արեւու տակ էՀ, ամռվա օր, կաշին արեւու տակ չորցավ, ըմա՛լ ա քամե էդ օղլուշաղին։ Հուրիշ բաղրդան էկավ, կրակ էրին, տեսան օր մե ծառի քոք, բերին տեսան՝ կտքա. ճղին խանին, մե հրեշտակ ա, հուշաթափ աւ էլի բաղրդնի միտք փոխվավ, կնիկն էլի ըսեց օր երդում ա կերե։

Էս մարդ շատ բարկացավ.—Մեկ ջոջ խուբու մեջ դրեք, տարեք թալիք գետը, քըլա էրթա խասի լպուտի։

Գետ բերեց, խասուց հուր տղի քաղաք։ Իրեք խոքի թագավորի պզտիկ տղի խետ ջրի ափին քեֆ կչենեն, տեսան՝ ղութի ա, ըսին.—Թոռի տի՛կ ա, չգինամ։

Էկավ, ըսին.—Թե ղութու մեջ աղջիկ ա՛,

* Քրդերի ամառանոցային սարն է Մարտունիի շրջանում. Ծանոթ. կազմողի։

իմն ա, ինձի մեր չկա։ Թե շոր ա, ընձի կիտաս։

Բերին բացին՝ մեկ խատ արև կնիկ։

Էս մարթ հերթում կերավ ասածու դեմ.—Ես էսոր տանեմ, ինձ ծնող մոր պես պահեմ։

Առան էկան, քաղքին ի հընդավ խոսալ։ Էս տղեն ուր ա՞ղից լուսու պես կպախա, հաջողությունը բացվեր ա։ Էն մեկ օր, թագավորի տղեն սրա հընդերն էր, մեր տղին ըսեց.

— Որդի՛ ջան, հըմնօր դու կեթաս ՙՀնոց տուն. միս բև, ես էլ սեղան բացեմ, ընկերներիդ բեր դոնախ, թագավորին էլ, խորն էլ բեր։

Տղեն լսեց մոր, առավ հըմեն բան։ Էս մարդ օր գնաց բազաո, էս իրեք բաղրդան էկած ա էտ քաղաքւ էկավ մորն ըսեց.—Իրեք բաղրդան էլ կա։

Ըսեց.—Նրանց էլ կանչա, բալա՛ ջան։

Գնաց, հըմնուն ժողվեց բերեց փայտոնով։ Թագավորն ուրախությամբ ընդունեց հրավերքը, էկան, ի՛նչ սեղան, դինա թագավորին ի՛նչ ա լալաղ, լուսա ինչ ա կսիրեր։ Բաղրդաններն էլ էկան, թագավոր առաջարկեց,—Մե բան պատմեք, լսենք։

Ջոջն ըսեց.—Է՛, օր կսես, քու խաթրին կըպատմեմ. մեկ օր իմ բեռներ բարձուկ մենք դուդանք, մե գետի մոտ կարմնջի տեղից ձայն դուքա. ջով թալի խանի՝ մի սիրուն կնիկ էր. խաքուցինք, կերցրինք, ես ուզեցա ամուսնանամ, էնի ընձի ըսեց.—Ջի՛։

Լպուտ ըսեց.—Վերջացուցե՛ք, քունս կիգա։

— Ջի՛, պապա՛, կայնի։

Կնիկն ըսեց.—Ես իմ լպուտից զատ մարդ չեմնամ։

Ես էլ ջղայնացա, ուր շորերով թալի հազպրի ջրեր, հելա գացի։

Մեկ բաղրդանը ըսեց.—Ես էլ եմ տեսե էդ կնիկ։

Էդ էլ պատմեց, ըսեց.—Էկա, ձկներ առանք, մորթինք օր ուտենք, սաղցան, քռան հախպուր։ Նոքյարներս հազպրի մեջից էդ կնիկ խանին։ Խաքցուցինք, կերցուցինք, ուզեցա ամուսնանամ, էլի հմլա ըսեց։ Ջղայնացա, գրի տակի մեջ, գացինք։

— Հնո՛, հնո՛,—ըսեց թագավոր։

— Է՛, հերի՛ք, քննենք,—ըսեց լպուտ։

Ջի՛, խասկեցր ա, թե ինչ ա կպատմեն։

Երրորդ բաղրդան էկավ, պատմեց իր գլխու էկածը։

— Յամա՛ն, բա իմա՛լ հեղավ։

Օր իմալ ըսեց, էս իրեք հնգեր տղեք զարմացած թագմնեցին հիբար։

Էս իրեքով պատմին.—Էս կնիկն ա, օր մենք գտեր ենք, ջրուց խաներ ենք, բերեր ընձի մեր ա կպախեմ։ Իմ ճակտի մեռոնի պես, իմ սրբութենի պես պահեր եմ։

— Մայրիկ, դո՞ւզ ա։

— Շա՛տ դուզ ա։

— Ես էն լպուտի կնիկն եմ, ձեր մերն եմ։ Լպուտ ընձի դանեց, թալեց ջուր։ Մկա ինչ կուղեք արեք ձեր խոր։

Խնդրվան Թե ծեր մարդ ա, սխալվել ա, կնէ. բեսւ Հաշտվան, քնի էրին ուրախացան, հասան հուրանց մուրազին։

## 16(25). ԿԶՕՂԼԱՆ

Գլի, չլի մի թագավոր, էս թագավորին տղա չունենա, մե խատ աղջիկ գլի, կինն էլ էրեխա չբերա։ Կորոշեն աղջկան տղամարդու շոր կխածուն։ Մատղշուց տղի շոր կխածուն, կչենն կզօղլան։ Թագավորի հառեջ լալա կա, էս լալան խըղմաթ էրող ա, շատ շանորդի օյաղ ա, դինա օր էս թագավորի աղջիկն աղջիկ ա, տղա չի, կխասկբնա։ Էսի հեղե ջհել, ուրին թայդաշ ընդերներն ա բռնե, ամեն ապիղ օր կերթա ուր խոր բաղչի մեջ, լավ սեղան կպատրաստա՝ ուտել-խմել։ Էս լալեն ա էտոր խղմաթ էրող, սեղան դրող-վերցող լալեն ա։

Շատ խմեց լալեն, ըսեց.—Քուխակօղլու կըզօղլան էլ չՓողա ես սքրիմ։

Էս թագավորի աղջիկ լսեց.—Օհո՛, էսի գելնի լուսուն կտարածա, իմ խոր արուն կկորի։

Էս խատ կերան, խմին, քեֆ ցվրավ, էս լալին սպանեց, խորից գոդատու Խաշնատարին կանչեց բերեց, մի մեծ խուրջին օսկի բերից տվեց, ըսեց.— Մտի թավլեն Թամքյա, գոսմա ձին, բե տու ընձի, ես տեղ կերթամ։

Ձին էլ տվեց, խեծավ ու հա՛յդե. շատ գնաց, բիչ գնաց, գնաց մե քաղաք դուս էկավ, ուրին ուրին միտք էրեց։ —Էն էլ իմ պես երիտասարդ էր, մեկ խոսկի խմար սպանի. Էս օսկին պտի բաժանեմ, օր իմ ցավին փարատութուն ըլի, էն հանդեն չեթամ դժոխք։

Էս մարդ սեղան բացեց, ձրի խաց տվեց, ուտողներուն էլ մե օսկի կիդեր։ Մեկ մարդ ագահ էր, շատ Թմախքար էր, ըսեց.—Էրկու անդամ էթամ։

Մեկ մտավ, կերավ, օսկին առավ գնաց. Հլե կես ժամ չՓմերեր, տեսավ՝ ճո՛ւկ, էն մարդն էկավ։

Ջեռ Թալեց բռնեց.—Դու նոր էկար, հլա ժամն էլ չՓմմե։

— Վա՛յ խող գա քու արևուն, մԹամ հինք խերադդամա յա բացել, գվամ հուրին ձևացուցե, օսկի ա կիտաս Այսինչ քաղաք մե մարդ ուտող

կիդա, կուզես տաս անգամ դառնաս, երկու օսկի ա կիդա։

— Ի՞նչ քաղաք։

— Այսինչ քաղաք։

Հելավ ձին խածեց, ուր ճաշարան փակեց ու էկավ էդ քաղաք։ Գնաց էդ մարդուն գտավ, բարև տվեց, բարև առավ, իրոք օր գուբան կուտեն, օսկիք կառնեն, կէթան։

Էդ մարդն ըսեց.—Ես էսօր քու գոնախն եմ։

Ըսեց.—Բարով ես էկե։

Հելան ճաշարան փակին, հելան էկան տուն. դու մի ըսե էդ էլ ա թաքավորի տղա։

— Մայրի՛կ,—ըսեց,—մեզի գոնաղ ունենք, սեղան բացեք։

Բերին ճոխ սեղան, էս մարդ խարցուց.—Էս ի՞նչ բախս ա։

Ըսեց.—Ես սիրահարվա մեկ աղքատ աղչկա վրա, ըսի՝ պտի ես առնիմ, բերիմ խաքում, դարձում ինձ կնիկ։ Միայն իմ կնիկ, ուր էրթամ, կկախվի իմ մոտեն։ Դաս մե բան կա, մտածեցի ես, ըսի,—Ընձի կճամբեն Թիֆլիզ։

Կնիկս զարմացավ, ըսեց.—Դու գինաս։

Էս մարդ խարեց, հելավ էկավ ուր խոր խաս բախչի մեջ քնավ, չուր մուքն հնգավ։ Էկավ, գաղտնի կանգնեց ակոշկի առաջ, տեսավ՝ սեղան ա բացե, ջահել տղեկների հետ քեֆ ա կէնաս։ Պախ պախ ի, ես մտա՝ երբ տկլոզցան պառկան, խանջալն քաշի, հառաջ իմ կնգա վիզ կտրի, նոր էս մարդկանց։ Ես էլ հելեր եմ, իմ խոր խաղինից էս օսկին բերել եմ, իմ մեղքի թողության համար՝ էրկու եմ սպանել, էրկու օսկին էլ կբաժանեմ էնոնց արընքի տեղ։

— Ես էլ եմ մարդ սպանե, մեկ խատ եմ սպանե։ Դու քոնն ես պատմում. այսինչ քաղաք՝ չինարի ծառի տակ մեկ փինաչի կա, չուր հիրկուն հաշկ պրծեր ա էն ծառին, դնաս նրա դարդ հիմցի, ես էլ կպատմեմ։

Հելավ գնաց էդ քաղաք, տեսավ օր՝ փինաչին կնայա ծառի գլխուն.

Կհարցու.—Էդ ի՞նչ ա։

— Է՛, մեռնիմ քե, իմ ցավից վազն արի,—ըսեց,—չըմ ըսե, գնա՛ այսինչ քաղաք, մե բաղըրդան կա, մե սինի օսկի կդնա վըրը գլխուն, կաս. —Աստված սիրո՛ղ, էկեք ինձ սպանեք, էս օսկին էլ տարեք։ Մեկը ռիսկ չի անա։ Գնա ինդոր ցավն հիմցի, արի, ես էլ ըսեմ։

Հելավ գնաց բաղրդանի կուշտ։

Տեսավ բաղրդանին, կդռա, կկանչա մարդ չմոտենա։

Գնաց էս մարդուն բարևեց, խարցուց.—Էս ի՞նչ բան ա։—Ըսեց.—Կհետաքրքրվեմ. ես ծռուկ եմ մե աղչկա, աղչկան հուշնգան շատ կա,—(խափեց),—մկա էդոր խեր քո մասին լսե, կըսա. — Եթե բաղրդանի եղելութուն հիմցար, էկար ինձ պադմիր, իմ աղչիկ կիտամ քեզի, չպատմիր, չըմ իդա։

Էս կուլը բաղրդան լաց եղավ, էկան տուն, Նստան, ըսեց.—Իմ տղա՛ ջան, աստված հլը էսի քիչ ա էրե. ես բաղրդան եմ, ընձի լավ դևեր ունի, յոթ խոքի աշխատող ունի, կէթինք բաղրդնություն կէնինք, կհարստանինք։ Էս մեկ օր, հիրիգուն ա, մեկ խատ տղեմ դռնեն մտավ, ըսեց.—Հներ եմ դու բաղրդան ես, քեզի դևա ունիս. մե սարի գըլոխ պայեստ ունեմ, էրթանք բառնանք, բերենք՝ կեսը քեզ։

Հելանք գացինք, դևեք առանք, տաս ջորի վերցինք, գացինք գշերով։ Մեկն ես խեծա, մեկ՝ հինքն։ Շատ ենք գացե, քիչ՝ աստված գինա, կայնանք մեկ հէրի դուռ։ Բացինք. Ներս, ես ի՛նչ գինամ, մարքրիտ, անգին քար, օսկի բեռները կլլնանք։ Տաս բեռ լցինք, բարձանք, հնգանք ճանապարհ։ Տան պղտիկ պատուխան կէր։ Տղեն մե պղտիկ բան վերցուց, դրեց հուր ծոց։ Հելանք հնգանք ճամբախ, ջաղդի կեսին՝ հնգա ետ։ —Հորի՞ հնգար հետ։

Ըսեց.—Ա՛յ հայ, էսքան ապրանք տամ հուրին։

Ըսի.—Ընձի քիչ ես տվե։

Ըսեց.—Արի՛, էրկու բեռ էլ կիտամ, կէնեմ չորս բեռ։

Էկա խասա հուրին։ Էլի հընգա ետ, էլի բռաց։

Ըսի.—Ընձի քի՛չ ա։

Հա՛ հընգա ետ, հա՛ բեռներս ավելացրեց, տաս բեռն էլ ջորիքներով տվեց ինձի։

Էլի հընգա ետ, ըսի.—Էն ի՞նչ էր դրիր քու ծոց, էն էլ տուր ինձի։

Ըսեց.—Անաստված՛, ես խավկուր եմ, բան չտենամ, աչքիս դեղն էր։

— Ծա՛, էդ էլ տուր ընձի։ —Իմա՞լ կէնես։

Ըսեց.—Տո՛ւր լցնեմ։

Լցրեց ձեռս, լցի աչքերս, քյոռցա, ջորիքն էլ չտեսա։ Ըսեց,—մեկ դարդակ ջորի թողել էր, ընձի բերեց տուն։

Էդի հրեշտակ ա հնչե, իմ խոզին ա փորցե, ընձի անիծե—Նա քե մախ հէլի, նա էլ քո ունեցածին թմախ էնեն։

Էկավ փինաչու մոտ։

Փինաչին ըսեց.—Արի խոզ ու փոշի տու իմ արևուն։ Ես քսան տարեկան եմ, էս ծառի տակ գործ ա կէնեմ, մեկ էլ օր իրիշկի, օր ըմալ նիշան դուշ ա կայնուկ, փայլ կիդա։ Ըսի իմա՞լ էնեմ, իմա՞լ չէնեմ. գողտու փաթթվի ծառն, դուշը բռնի, ընձի վերցուց, շատ տարավ, քիչ՝ մեկ էլ էն զգա-

ցի օր՝ տարե անծանոթ երկիրը ինձի իշացրե. իրեք օթաղ իրարից հեռու, իշացրեց, տեսքը փոխվեց, հելավ մի երիտասարդ աղջիկ, նիշանու։

Ըսեց.—Տղա՛, ես հուրի եմ, իրեք քուր ենք, ես քի դաղանի եմ բերե իմ քուրվանցից։ Ընձի բաղ կա, ամեն ինչ մեջը կա, հաղթուրը կա. միայն ես կկնդրվեմ՝ բաղից դուրս չգաս, քուլրերս քի էլ, ինձ էլ կսպանեն։

Մեկ ամիս պահեց ընձի. գնեմ բաղի նե, ըսի. «էսի պղղիկ քուրն ա, հրմլա յա, բա մեծի բաղը իմա՛լ ա»։

Հելա գացի բաղերը՝ նույն բաղն ա, մեկ էլ տեսավ էկավ, քուրը խոտ ա առել։

Ըսեց.—Տղա՛, անասուված, էդ ի՞նչ էրիր, դու հելեր ես նրանց բաղը, դե՛ հելի, կխղդամ քեզի, տանեմ քի հիջուցեմ, կիդան քի սպանեն։

Բերեց իջուց ըստեղ։ Մկա հրմնօր կոփեմ իմ գլխուն։

Էս մարդն հելավ գնաց մեկելի մոտ։ Էրկու օսկի ավոդն էլ պատմեց իր գլխու էկածը։

Էս մարդիկ առան հիրար։ Կզոլան դղեստ փոխեց, դառավ աղջիկ, ամուսնացան, կերան, խմին, քեֆ արին։ Էլավ թագավոր, նստավ հուր խոր դահի վրեն, յոթ օր յոթ դիշեր խառնիս էրին. նրանք խասան հուրանց մուրազին, դուք էլ՝ ձեր։

## 17(26). ԱՂՔԱՏԻ ԽԵՔԱԹ

Մե մարդ, հուր մեր, էրեխեք, կնիդն էլ երկու խոքով էր, էկան նստան, որոշեցին էթան ճանապարհ։ Էկան, էկան, կնիկն հոգներ էր, ծանդրաուոք էր։

— Հլա լուս ա, դու նստի էսա բաղի պատի կուշա, ես կիգամ։

Ցավեր բռնեց, էնպես դժար լալ կիլա—«Տեր իմ, յա իմ խոդին առ, յա ազատա ինձ»։ Աստված էս մարդու ձայնը լսեց, մե հրեշտակի էրեց մանկ կերպարանքի, օղորկեց, էկավ տեսավ էս կնդան.—բարև,—ըսեց,—որդի ջան։

— Վա՛յ, նանե ջան, դու աստծուց իշա՞ր։

Էս կնգանն ազատեց, մի աղջիկմ բերեց, էրեց կոնդաղ։

Ըսեց.—Բալա ջան, դուղե՞ս օր էսօր քավոր բերեմ, տերտեր բերեմ, տամ մկրտել, նոր էրթամ։ Գնաց բերեց նանեն, էրեխեն տկլողցուց, կնքին ճժուն, ինչ որ հարկավոր էր ըրեց։

Մկրտեցին, ըսեց.—Մենք օր քո էրեխեն մըկըրտեցինք, աստծուց ուզենք, էրեխեն օր հելավ քելեց՝ էսոր օդներաց տակ անմահական ծաղկըներ բուսի. դրա սենակի մեջ մտնող՝ հարբենա։

— Ես էլ կամեմ,—ըսեց քահանան,—որ ինչքան լողկցուն՝ ջուրը օսկի ու արծաթ դառնա։

Քավորն էլ ըսեց.—Ես էլ կխնդրեմ, իմ սանիկ օր լա, արցունքի տեղ մարգրիդ թափի։ Անուն էլ դնենք Դունա խանում։

Էս մարդիկ հելան գացին։ Կնիկ երեխեն գըրկեց, մարդն էկավ։ Եկեղեցու հայաթ մե հայրիկ ա պատահե, խնդրվեր ա, էնի ըսել ա ուր տուն, տվել ա նշանց, ասել ա՝ գնա բեր։ Կնիկ պատմեց ողջ էղած։ Մարդն առավ կնիկ, էկան էս մարդու տուն։ Է՛, ճիժ օր գիլա՝ մարգրիտ կլի, լողկցնեն՝ ջուր օսկի, արծաթ ու։ Հելավ տարեկան, էս մարդ հելավ գնաց քաղքի մեջ, ֆայլեք բռնեց, մե խատ լավ տուն շիքեց, լավ շենքեր շիքեց, որ թաքավորի պալատ խեղճ մնաց. հասար քաշեց, էկավ խազնչին փող տվեց, օսկի, արծաթ տվեց, էկան էստեղ ապրելու։ Էրեխեն ոտքի հելավ՝ էլ օդ կոխած տեղը անուշ անմահական խոտ կիգա։ Հելավ տասյոթ տարեկան աղջիկ, աղջիկ մի՛ ըսա, մեկ նշի խատ ըսա, սիրուն, խորոտ ա։ Թագավոր հուր տղեն կուզեր կարգեր, աղջիկ չին ճարի։ Տղին սովորուբուն կա՝ ֆայտոն կխնձի, կպտտաա։ Օրերից մեկ օր դուռ տիին, մե պառավ էր։

Կնիկն ըսեց.—Օղորմութուն տուր ջրե էթա, էսպես պառվներից շատ կիգա։

Կնգան չլսեց, պառվուն բերին ներս, խաքուցին, դուլուղ էրեց, մտավ հրմնի հաշկ։

Աղջկան կտանա գետ, կլողկցու, կբերա։ Տղեն տեսե, խավնե աղջկան։ Ամառն էկավ, խարսնսի ժամանակ էկավ, թագավորն խաբար օղորկեց։ Պառավ կֆռֆռեր։ Դհոլ ու զուռնեն էկավ, ձիավոր ու ֆայտոնով էկած հրմնն տեղավորան։ Նանեն գնաց, աղջիկ բերեց պահեց բաղի մեջ, գնաց, աղջկան տարավ գետ լողկցնելու. տարավ գետ, աղջկան տկլողցուց, պառավ վըր պլին կայնցուց, գոշտեց քալեց ջուր։ Աղջիկ ջրե էրթա, ջուր հրնգնող ձեռ կթալա փշեր, բլեր, գնաց խասավ կարմունջի. էրկթե կարմունջ էր, մեկ ցախ ժողվող ջեհել տղա շլկել էր ցախ, օր կարմընջով հրնցի, գյա տուն։ Էս աղջիկը ձեռ քալեց մասրի բուն, կգոռա հավար։ Տղեն խասավ, պարան քալեց ջուր, աղջիկ բռնեց, քաշեց խանեց։ Միայն պառավ ժամացուց առեր էր, օսկի կալիցոք հըլը վրեն էր, տղեն ուր շորեր խանեց խագուցեց։

Պառավ աղջկա շորեր տարավ, խագուց հուր աղջկան։

— Խա՛րս, խա՛րս,—գոռացին։

Բերին պառվու աղջկան, տղի կշտի խետ դրին ֆայտոն ու քշին, ինչպես կարգն ա տարան։ Մենք դառնանք աղջկան։ Տղեն խանեց հիր շորեր տվեց աղջկան, աղջիկ մե կալիցոն տվեց տղին, ըսեց.—ես քու քուր, դու ինձ ախպեր, ես օր ազատվա, քե կկանչեմ։

Աղջիկ էկավ կայնավ խառնսի դուռ. խարս-

նիս պրծավ, աղջիկ կայնուկ ա, գիշերվա մի վախտ թագավորի տղեն հելավ դուս, տեսավ չհհել տղին, ըսեց.— Ի՞նչ ա կուզես։

— Կուզեմ մե աշխատանք։

Տարավ թավլեն ղազարած կարգեց։ Տղեն մըտավ խարսի կուշտ, էս դարձվոր էլավ կայնավ, վատ խոտ էկավ։ Տղեն, վա՛յ էն քնելուն, քնավ, սաբահտան հելավ քիթ բերան իշկեց, ղըվեց։

— Վավիլեր, ի՞նչ էննեմ։ Պառավն ա էրե էս բան, ու հինքն էլ հելավ գնաց տեղեն։

Աղջիկն էղավ ղազարած, կտանա չոլ, լավ կպախա, մտել ա թագավորի աչը։ Մենք դառնանք թագավորի տղի վրեն—տղեն հուր մատնիք կճանչնա։

Ողիրը ուր տղի համար աղջիկ ա ուզե, դրա խառնիսն ա։ Թագավորի տղեն մոր պատվիրեց.—Ինպես բաներ բխա, սարքա, դիր իմ խուրջին, կերթանք ճամփա։

Մեր կըթխա։ Մե գաթի մեջ կդնա էն նշանի մատնիք ղազարածը, կդնեն խուրջին։ Միջինքի նման դրեց էփեց։ Գաթեք խանին տեղավորին, սաբահտան հելան դրին խուրջին, տղեն առավ, գնաց, տղեն առավ ղազեր թողնել։ Ղազարած կնայա թագավորի տղին, զուտնեն զանեց, տղեն բացեց խուրջին, տեսան ղազարածի գաթեն, կիսեց՝ տեսավ մատնիքը։ Տղեն գլխու հընգավ, դարձավ էկավ տուն, մահանա փորցավը։ Ղազարածը կնայա։

Տղեն էկավ տուն, մոր խարցուց քե.— էն մի գաթեն ո՞ն էր դրե իմ խուրջին։

— Ցաման ես ի դրե։

— Չէ, պտի ըսես ո՞ն դրեց, կդանեմ կսպանեմ։ Շատ օր գոռաց, ըսեց.—Ղազարածն ա։

Մութ տվեց, ղազարած էկավ, տղեն ղազարածին քաշեց տուն, քոլոզ խանեց, տեսավ՝ կոսըն ա, իմալ օր կոսն էրուկ տեսեր ա։ Իմալ պետք էր՝ աղջիկ ուր գլխու էկածն պատմեց մարդուն, բերեց զանայլու շորեր խաքուց։ Պառավուն ու իր աղջկան էլ փրթեց, լցեց շներու հառեջ։

Բերին նոր խառնիս էրին, յոթ օր, յոթ գիշեր գհոլ ղարկեց, էնոնք խասան հուրանց մուրազին, դուք էլ խասեք ձեր մուրազին։

## 18(27). ԽՈՐԹ ՄԵՐԸ

Գլի, չլի, մե էրիկ-կնիկ գլին, հարուստ գլին, մենակ մի աղջիկ կունենան։ Էդ մարդու կնիկ կմեռնի։ Մարդ գնաց ուրին նոր կնիկ ճարեց։ Խորթ մերը չսիրեր ուր խորթ աղջկան, կծեձեռ, աղջիկ կդիմաներ։

Հարևաններ աղջկան խղճում ևն.—Խեղճ որր, հընչի՞ կտանջվիս։

Աղջիկ մեկ օր հանկարցակի գնաց բրնձի արտ քաղհանքի, աչքն առավ օր տղեկներ ձուկ ա կբռնեն. մե խատ ձուկ ավղներու վրեն էնքան ա կշարըրվի, խորքին չիտա, պոշ վիրավորվեր ա, արուն հելե, կենքա, ձուկ կքրտա էստեղ, էնդեղ։ Աղջիկն օր տեսավ ձկան չարչարանք,—Ախպերտի՛նք մեղք ա, ձուկ բաց թողնք, իմ մոր փեշտմալ ձեղ կիտամ։

— Հա՛, ըզխ հմլա ըլի։

Աղջիկն գնաց, ձուկն դրեց հուր փեշ, տարավ հուրանց տան մոտ մե խատ փոքր հառու կար, թալեց էդ հառուն։

— Ջո՛ւկ չան, էլ մի վախեցի, էս տղեկներ քեզի ձեռ չիտան։

Էկավ տուն ամներ, կերի մնացորդներ տարավ հառուն լվաց, լցեց էնտեղ, բոռաց,—Ջկնիկ՛, արի կե՛ր։

Հեղե սովորական, ձկնիկ ամեն օր էղ ժամուն դուքա էղ մնացորդներ կուտա, կուտա, կշտանա։

Խորթ մեր տեսավ, օր աղջիկ կենքա հասվի ափ։

Ձեռ կդնա վըր ճակտին, կբոռա.—Աղջի՛, անտե՛ր, դու էդ ի՞նչ ա կբրթես ջրի մեջ։

Խորթ մեր մտածեց քե ի՛նչ անեմ, ի՛նչ չենեմ, էդ աղջկան կորցնում։ Լսե օր՝ լեռներում մե փոս կա, մեջն էլ մի զաղան կա, շատ լավ ծաղկըներ կան, մարդիկ կերթան ծաղկների, ետ չիդան։

Կանչեց աղջկան, ըսեց.

Դու լսե՞ր ես, օր լեռներում մե խատ լճափոս կա, դրա մեջ լավ ծաղկներ կան, ծառ կա, կնստես կհանգստանաս, հետո կհիջես էդ լճափոսից ամեներավառ ծաղիկներ քաղես, բերես ընձի համար։

Աղջկան գնվի փող, խաց կիտա, կենքա։

Հասավ անտառ, մեկ էլ տեսնա՝ մեկ խատ որսորդ կբոռա,—Աղջի՛, կայնի՛, կայնի՛, կապիկ ծառի վրեն ա, ես կապիկին կկրակեմ, վախենամ դիպչի քեզի։

Աղջիկ կօգրի կըսա.—Քեզի՛ ջան, մի՛ սպանա կապիկին, մեղք ա։

— Ցա՛, հընչի՞ չսպանեմ, ես որսորդ եմ։

— Ես քեզի փող կիտամ։

Փողն առավ, գնաց։

Աղջիկն էկավ, ըսեց.—Էսօր իմ էստեղ գալը հաջողվավ, էլ վաղը չգաս էստեղ, քեզ փրկող չի լինի։ Որսորդն կիգա, կկրակա։ Կապիկ շնորհակալ էղավ։

Աղջիկ գնաց, գնաց հասավ էդ տեղ՝ ծառն ա. լճափոսի մեջ նայեց՝ վա՛յ խոր, կղոտա ջրեր, ձկներ կան, ի՞նչ ծաղիկ, ի՞նչ բան։ Աղջիկ գնաց

հասավ էդ տանտիրոջ.—Տանտե՛ր։
Տանտեր հելավ,—Դու ո՞ն ես։
— Ես էկեր եմ իմ խորթ մոր հրաման կատարեմ։
Կրսա.—Դարձի՛ դնա, լճափոսի մեջ գաղան կա, դարձի դնա՛, քեզ կուտա։
— Չէ՛, ի՛նչ քավուր հնղնի, ես պտի ծաղիկ տանեմ։
Աղջիկ կնթա լճափոսի մոտ, կնայա, կտենա հուր ատատուկ ձուկն էնտեղ ու էկավ ծառի տակ հանդստացավ, ծաղիկ .քաղեց, հելավ։ Կապիկն ծառի վրա էր. կապիկ կթռներ, որ գաղան տարվեր կապկով, չգեր գաղան ուտեր աղջկան։ Աղջիկն հելավ վառ ծաղիկներ քաղեց, տարավ։
Մեր տեսավ, ասաց.—Դու էդ ի՛նչ էկար։
Առավ ծաղիկներ, շպրտեց։
Առավոտ հելավ մանձու թխեց, մեր աղջկա մանձուի (դաթայի) մեջ թույն լցեց։
— Վաղ առավոտ առ էս մանձուն, դնա՛, կանայի բն լնոներից։ Աղջիկն առավ դնաց, դնաց հասավ լճա, քաղեց կանայիւ Դնաց, դնաց առվի հանդիպեց ճղավոր ծառի տակ, տեսավ օր մե խատ ձուկ գլոխ կխանա դուս ու կքաշա, ինչ օր բան կուտա հասկացու Նստավ, մանձուն կերավ, բուն իջավ վրեն՝ քնավ չուր հիրիկուն. քամին ավեց, աղջիկ չկանա հելի, մե խատ ա՛ր քաշեց։ Կապիկ էլի կթռնի ծառի վրեն, կնայա դուր չորս կող, արծաթ ա ու օսկի։ Կանայինն առավ, օսկին ու արծաթը, էկավ տուն, մեր տեսավ՝ աչքեր չռեց.
—Աղջի՛կ, բոլոր հավաքո՛ւ ես։
— Մամա՛ ջան, դնացի մանձուն կերա, քնա, հելա, տեսա օսկի, արծաթ էր թիւերի տեղ։
— Էլ կա՞։
— Խա՛։
— Վաղ հառավոտ ես կթթամ։
Առավոտ մե թունոտ մանձու վերցուց, դնաց խասավ դեհին, կերավ մանձուն, քնավ. էն քնելն էր օր քնավ, ջոջ քուն քնավ, այլևս չի զարթնե։ Աղջկա լույս հոգին էլ ազատվեց խորթ մոր ձեռքից։

## 19(28). ՊԱՌՎՈՒ ՏՂԵՆ

Մի թագավորի քաղքում կապրեր մե աղքատ պառավ. պառավն մե տղա կհըլնի։ Էս տղեն պարան կվերցու հրմեն օր հուր ձեռն, կերթա անտառ, ցախ կհավաքա. օրական մե շլակ կհավաքա, կըտանա բաղար, խինդ կոպեկի կծախա, մեր ու տղա էդ խինդ կոպեկով կապրեն։ Թագավորի աղջիկն կտենա որ՝ մե օր էլ էս տղեն կթթա, ձուկ կբռնա, փող կտա իր նաժիշտին, կասա.—Տա՛ր փողը տուր, ձուկն կբերես, հիրգուն ժարիա կէնենք։
Էս մարդն օսկին պահեց, մե մանեթա՛ տվեց տղին, ձուկն առավ, մե լավ սիլա էլ տվեց տղի հերեսի մեջ։
Տղեն փողն տարավ տուն, նանեն ուրախցավ։
Թագավորի աղջիկն մեկել օրն տեսավ, օր էրկու ձուկ ա բռնե, էրկու օսկի տվեց։ Էդ մարդն օսկիքը պահեց, էրկու մանեթ տվեց, էրկու սիլլա էլ խփեց տղի հերեսի մեջ ու գնաց։ Նանեն շատ կուրխնա....
Հելավ էն մեկ էլ օրն գնաց, իրեք ձուկ որսեց։ Թագավորի աղջիկն պոստ ա կպահա. աշնան ցրտեր, հեսօր-հեգուց ա ձուն պտի գա։ Տղեն բռջված, լեկած, կապուտցած իրեք ձգներն ձեռն՝ կուտա։ Աղջիկ իրեք օսկի տվեց ծառային. էս մարդն էլմա օսկիք պահեց, իրեք մանեթ փող տվեց, իրեք խատ էլ սիլլա քյաշեց, ձկներ առավ, էկավ։
Տղեն խոտավ էդ սիլլեքներուց, էլ չգնաց ձկի։
Ըսեց.—Վեց մանեթ փող եմ աշխատե, կտանեմ առուտուր կանեմ, ավելի լավ ա, քան թե էսմալ խփեն հերսով։
Առավոտն թուշ հելավ մորն, ասեց.
— Նանե՛, փող տու։
— Քո արևն մեռնի, էրզու կապեկ փող ա բերե, էն էլ կուտա տանա փշացու. հեգուց ձմեռա, ձուն կիգա, վառելիք չունինք, ուտելիք չունինք, խաբնելիք չունինք, դո՞ր ա կտանես։
Փողն կառնի, կթթա։
Բազարից մե կարզինկա առավ, կվազի էն վաճառականի խանութ, էս խանութ, դուքա ապրանք ուզի։
— Տղա՛ ջան, ապրանք ա կառնի՞ս, արի՛ դառի մեզ մուշտարի, մենք նիսիա կիտանք։
Կոճակ, ասեղ, խունկ, մոմ, մատնոց, ուլինք առավ, լցեց կարզինդեն ու հելավ գնաց բոշի թաղ։ Գնաց, բոշք լցվան վրեն, առուտուր ա կէնա։ Մի շաբաթ էս տղեն չգնաց ձգնորսի։
Թագավորի աղջիկ կանչեց ծառային, ըսեց. —էն տղեն օր կիգեր ձուկ որսալու, Ի՞նչ հեղավ։
Ըսեց.—Թագավորի աղջի՛կ, ես տեղեկութեն չունիմ, ես շա՞տ գինամ դոր գնաց։
Թե.—Չգինա՛մ, դու տղին խրտցուցիր, կերթաս կդանես, կտանիս կիգաս։ Էն սիլլեք օր դու դանիր, օսկիք պահիր, ես հըմեն տեսել եմ։
Ըսեց.—Էդ պլնջոտին հո՞ւստ դանեմ, ես էնոր ման էկող չեմ։
Թագավորի աղջիկն ըսեց.—Քեզ պես ծառան ընձի պետք չէ։
Կանչեց մե ֆայտոն, նստեց, ըսեց.—Քշա՛ պտոտենք։
Առավոտենք մինչև հիրիկուն էս ֆայտոն քշին, էկան խասան բոշի մայլի քուչին։ Քշին

քիս բոշի մայլեն, հելան բոշի թաղն, մեկ էլ տեսան՝ բոշեք լցված մե մարդի վրա. տղեն մանրունքի առուտուր ա կէնա։

Ըսեց.—Տղա՛ ջան, էս մատնըքներու արժեքն ի՞նչ ա։

Ըսեց.—Վերցո՛ւ, կըսեմ։

Թագավորի աղջիկն ըսեց.—Ես տաս մատնիք եմ վերցե, վեր կաց գնանք մեր տուն, քո մատնիքների արժեքը տամ։

Տղեն ըսեց.—Թագավորի աղջի՛կ, պետք չի, էդ իմ նվերն ա քեզի. շնորհավոր հեղի, տա՛ր։

— Չէ՛,—ըսեց,—տղա՛ ջան, ես նվերի փափագ չեմ, վե՛ր գնանք։

Մի ձեռ քցեց տղի թևն, մյուսն էլ՝ կարդինգեն վերցուց, նստան ֆայտոն, քշին հուրանց տուն։ Տղին տարավ հուր սենյակը, հիմցավ տղի կենսագրությունն, որ աղքատի տղա յա, որբ ա, մի ծեր մեր ուներ։

— Դպրոց սովրե՞ր ես։

— Խա՛, դպրոց սովրեր եմ։

— Դե՛ հիմա օր ես քեզի օղարկեմ սորվելու, կերթա՞ս.—ըսեց թագավորի աղջիկը։

— Ա՛խր մերս մեղք ա։

— Ես կօգնեմ, քող քո մերն էլ ապրի։

Էրկու օսկի տվեց տղին, ըսեց.—Էսի քու մոր, չըսես օր կերթաս սովրելու, ըսա՝ կերթամ աշխատանքի։

Թագավորի աղջիկը իրեք տարի սրան օղորկեց սովրելու։ Դարձավ էկավ, ըսեց.—Տղա՛ ջան, օր քեզի մե հատ խանութ բացեմ, կըաշարե՞ս առուտուր էնես։

Տղեն ծիծաղեց.—Էսքան սովրելուց հետո օր ես մի հասարակ գործակատար էլ չդառնամ, ուրեմն պտի մեռնեմ։

Թագավորի աղջիկն որոշեց ամուսնանալ տղի խետ։ Տղեն առուտուր ա կէնա, քաղքի վաճառականների առուտուրը կանդ ա առե, ինչքան օր քաղաքն մարդ կա, դարձեր են էս տղի խանութի վրեն, որովհետև տաս մանեթանոց կտորն մե մանեթով ա կծախա։ Վաճառականներ կատաղան, հելան գացին օր տղին տփեն, եդո հելան կազմակերպան, օր էթան թագավորի մոտ։

Թագավորի աղջկա լրտեսն էս բաները շուտ խաբար տարավ աղջկան։ Աղջիկն հելավ պախ պախեց, տեսավ որ վաճառականներից մեկն եկավ քցե թագավոր։

— Վա՛յ, վաճառական ջան, բարով ես եկե, գլխուս արևուս, համեցե՛ք տուն։

— Թագավորի մոտ բողոք ա կերթամ, վռազն եմ։

— Արի՛, մե խորուրդ էլ ես կիտամ։

Մտավ տուն, նստան կերան, խման, աղջիկը դուս հելավ, խոսավ խանութն տղին սովրցուց.

— Թագավորն օր քեզի կկանչա, կհելնիս կերթաս կսես օր՝ օտար երկրից ես։ «Ընչի՞ քանդ առուտուր կէնես»,—կըսես.—Ես ունիմ էդքան բանվոր ծառայող, պտի քանդ առուտուր անեմ, օր մե բան էլ մնա, տանեմ տուն։

Սովրցուց տղուն, հինքն եկավ, ջուր բերեց դրեց, կերցուց, խմցուց վաճառականին, դրեց ջաղդի։

Թագավորն տղին կանչեց, ըսեց,—Ընչի՞ ես էկե իմ էրդիր։

— Մե քիչ ապրանք կար, բերել եմ ծախեմ։

— Ընչի՞ էդքան քանդ առուտուր կէնես։

— Թագավո՛ր,—ըսեց,—օր քանդ առուտուր չէնեմ, շահն չկանա։ Բանվոր-ծառայող շատ ունեմ, հուրանց գիշերեմ, ճաշարանին խաց կուտեմ օրական, օր քանդ չէնեմ՝ կոպեք չհևվելնա, —ըսեց.—քու թագավորության մեջ պալատիդ հետև մե անկուն հող կա, տու ինձ՝ մե տուն շիքեմ, բնակվեմ, իմ առուտուր վերջացավ, կթողեմ քեզ։

— Խա՛,—ըսավ,—տղա՛ ջան, էն խող կուրբան հեղի քեզի, գնա՛ սարքա։

Տղեն գնաց ուրախ-ուրախ, աղջկան ըսեց։

Հառավոտն գացին տուն շիքին, մե ամսվա մեջ վերջացուցին։ Թագավորի աղջիկ ըսեց.—Տղա՛, քեզի կուտամ իրեք կիլո օսկի, կտանես տասվերկու ձեռք բաժակ-տալերք կպատրաստես, որից տասվմեկ ծաղկով, մեկն առանց ծաղիկ, մե ամիս քեզի ժամանակ։

Տղեն զարգարներուն տվեց պատրաստել, տարավ տվեց աղջկան։

— Հէդուց կերթաս թագավորին, հուր պալատականներուն կհրավիրես հուր։ Թագավոր կհրաժարվի, ողիր կգոյանանա կասա՝ «գնանք, դարիբ մարդ ա»։

Հելան էկան, տղեն բերեց, ներս մտան, տեսավ հուր պալատի նման պալատ ա սարքե. «էս տղի մեջ շատ բան կա, ես պտի չթողիմ էսի իմ քաղքից էթա»,—կմտածա թագավորն։

Օր նստան ճաշելու, կերան, խման, տղեն կմատակարարա. որ վերջացան, աղջիկն օսկե բաժակներով չայ տվեց։

— Էս անծաղիկ բաժակով թագավորին տուր, ծաղիկներով մյուսներին. ողիր ծաղկով բաժակ կտա թագավորին, դու չթողես,—կըսա աղջիկ։

— Թագավորի սիրտը էս բաժակի նման մաքուր ա կնայա ժողովրդին, ձեր սիրտ, ոլի՛ր, կեղծ ա էս ծաղկավոր բաժակի նման։ Էս բաժակը թագավորին ա պատկան։

Թագավոր, ուր պալատականներ շշման։ Թագավոր սկսեց մտածել. թագավորի չայը մնաց անխմել։

— Էս բառն ըսողի մեջ շնորք շատ կա, ես ըստուն չպտի թողնեմ իմ քաղքից դուրս գա, իմ աղջիկ կտամ նրա, կպահեմ։

Հելան գնացին։ Լուս բարի բացվի վրը ձեղ, բացվավ տղի վրեն։

Թագավորը կանչեց տղին, ըսեց.—Կմնաս իմ թագավորության մեջ, իմ աղջիկ կառնես, կթագավորես։

Տղեն գնաց, պատմեց աղջկան։ Խառնիխ էրին. յոթ օր, յոթ գիշեր խառնիխ էրին, կերան-խմին։

Գիշեր օր տղեն գնաց մտավ օթաղ, տեսավ օր մեկ պզդիկ կառֆաթ, մե խատ էլ մեծ կառաֆատ ա դրուկ. խանից շորեր, մտավ տեղերը։ Աղջիկ օր տեսավ ըսեց.—Ձա՛, ինչքան չի՝ պառվու տղեն ա, մարիֆաթն ի՞նչ պտի հըլի, առանց թուլատրելու հելավ պառկավ։

Էս տղեն հելավ շորեր խաքավ, դուս էկավ. հա՛ կսպասա աղջիկ՝ տղա չկա։

Տղեն դուս էկե ու գացե ուրիշ թագավորի երկիր, դառցավ ձիու սեյիզ, քաշվի գդակ դրեց։

Աղջիկն ըսեց.—Թագավորն օր հելավ, ընձի չհավատաս։

Գիշեր գնաց, խորն պատմեց, բայց չսեց օր ըսել ա՝ «ինչքան չհեղի, պառվի տղեն ա, մարիֆաթ ի՞նչ ա»։

Թագավորն ըսեց.—Մե պատճառ կա, դու արի ճիշտն ըսա. քեզի կկապեմ ծառից, քեզ աղ ու բրբար կհենեմ, կսպանեմ։

Աղջիկն ըսեց.—Թագավո՛ր, դու ինձի տուր իրեք ձեռ կինո-թատրոն, կթամ հերկրե-երկիր ման կիգամ, կգտնեմ կրերեմ։ Դու ինձ մե օսկի նավ տու, ես գնամ գտնեմ՝ գտնեմ, չգտնեմ՝ իմ արուն քե խալալ։

Թագավորն ամեն ինչ տվեց, աղջիկն խնծալ նավ ու հայդն գնաց։

Կերթա կխասի մե երկիր։ Թագավորին իմաց տվին, հելավ գնաց դիմավորեց, թագավորն առավ գնաց իր պալատ և սկսեց քեֆ անել։

Աղջիկ ըսեց.—Էս իրեք սուտկա չա մենք ըստեղ ենք, դու մեզ կհուրասիրես, բայց չես խարցու որտե՞ղն ա կթթաք, ի՞նչ մարդ եք, ի՞նչ դարդ ունեք։— Աղջիկն ըսեց.—Մենք համերգ ցույց տվող ենք, ես տոմս կծախեմ, ժողովուրդ հաշվա տու ինձ, որ ես տոմս տամ. քե մե տոմս հավելցավ կամ պակսավ, պատասխան պիտի տաս։ Դուն վրեն ես կայնեմ ծախեմ։

Թագավորն ըսեց.—Ա՛յ հա՛յ, կավու հաշիվ ա։ Ես ո՞նց անեմ, օր ճիշտ հաշվեմ, կռիվ չիգա իմ վրեն։

Թագավոր կարգադրեց, հաշվին, բերին ցուցակներ տվին աղջկան, աղջիկ ցուցակներով տոմս ա ՝ախա; Ծախին պրծան, սկսեցին համերգը՝ մե տոմս հավելցավ։

Աղջիկ հելավ էկավ թագավորին ըսեց.—Էս մեկ տոմսի խամար գլուխդ պատասխան կիտաս։

Թագավորի աղջիկն ըսեց.—Արքա հա՛յր, կարո՞ղ ա պատահի մեր ձիու սեյիզ չգացե։

Գացին խարցուցին, տեսան օր չգացե։ Կանչեց աղջկան թագավորն ըսեց.—Քո բանտարդյալ էսի ա։

Աղջիկ տեսավ, ճանչցավ օր տղեն ա, ըսեց.—Թագավո՛ր, էս մարդ ինչքան ժամանակ ա, որ քո մոտ ա։

Ըսեց.—Էկավ տարին կլրանա։

— Բա՛ էս մարդ չլսա, չխոսա, էդ ո՞նց ա քո անասունի խետ կաշխատի։

Ըսեց.—Էսի համր ա։

— Դե՛ լավ, եթե ես էս տղին խոսցուցի, ես էս տղին կտանեմ. եթե չխոսցուցի՝ իմ իրեք ձեռք կինո-թատրոն ձեղի հեղի։

Թագավորն ուրախացավ, ու էս աղջիկ չկրցավ խոսըցուցեր, տարվավ։

Աղջիկ ըսեց.—Թագավո՛ր, դու, էս տղեն, էս կինո-թատրոն ես կղնամ օսկե նավն, եթե խոսըցուցի՝ կտանեմ, քե որ չխոսըցուցի, էս հրմենք քեզի հեղի։

Էլի չկրցավ, օսկե նավն էլ տարվավ։

Աղջիկն գնաց նստեց, սկսեց լալ։

Գնաց ըսեց.—Թագավո՛ր, դու կղնես էս տղեն, կինո-թատրոն, օսկե նավ, ես կղնեմ իմ կյանք։ Եթե խոսըցուցի՝ իմ եղածն կ'վերցնեմ կթամ, օր չխոսըցուցի՝ ընձի կախաղան խան։

Հելավ գնաց, էս էլ տարվավ, չխոսաց։ Թագավոր կարգադրեց օր էդ աղջկան կախաղան խանեն։

Սարքեցին կախաղան, մե աթոռ տարան դրին, աղջկան կայնըցուցին շրդի տակ։ Տղեն էլ գացե շուկան տաս խատ պոպոկ ա առե, լցե չոր, գնաց կայնավ էդտեղ։

Աղջկան ըսին.—Ըսա՛ քու վերջին խոսք։

Աղջիկն ըսեց տղին.—Տո՛ քու տուն սուքվի, դու չխոսաս՝ ընձի կախաղան ա կխանեն, գոնե լիզուդ խա՛ն, համբուրեմ ու մեռնեմ։

Տղեն լիզուն չխանեց։ Աթոռ քաշին, տղեն պոպոկներ լցեց քաշողի ձեռը, շրդի թալեց կըտրեց, աղջիկն խռխռալով հընգավ գետին։ Աղջիկն ըսեց.—Տունդ քանդվի, հընչի՞ ինձ կտանջես, մըրկա թագավոր ընձի կգլխատաս։

Ըսեց.—Ես պառվու տղեն եմ. դու գինաս օր ես սովրա, առուտուր արի, հարստացա, մարդ չդառա, օր ընձի մարդ չհաշվիր խա՞, պառվու տղա ըսիր, տե՛ս քո կյանքը էս տաս պոպոքով եմ առե. ես մարդ եմ։

Աղջիկն ներողություն խնդրեց, առան էկան։ Թագավորն հիմցավ, օր տղեն մեջն ա, ուրախացավ, նորից քեֆ-ուրախություն էրեց։ Էնոնք խասան հուրանց մուրազին, դուք խասնեք ձեր մուրազին։

## 20(29). ԽՈՒՆԱՐՈՎ ԱՂՋԻԿ

Թագավորն աչքն քցեր էր ոզրի կնգան։

Ոզրին ասավ.—Էս մի ղոչն կտանես, հա՛մ միսն կբերես, հա՛մ բուրդն կբերես, շիշմ քյարաբ կբերես, հինքն էլ սաղ կբերես։ Հելավ էդ մարդն տարակուսով հընգավ ճամփի, գնաց, մե մարդի ռաստ էկավ. հիմար մարդմ էր։ Էկան մոտեցան մի գետի, ոզիրն ըսավ.—Ա՛յ մարդ, արի յա՛ Ես էղնիմ կարմունջ, դու հընցի, յա՛ դու հեղի կ-սրմունջ, ես հընցիմ։

Ասնց.—Դու ծո՞ւռ ես, ուրեմ մա՞րդ էլ կարմունը կեղի։

Խոսակցավ քե ինչ ըսնց։ Գնացին խասան մի ելի, ւսնց.—Ա՛յ մարդ, արի յա՛ դու ընձի շալկա էս ել հելիք, յա՛՝ ես։

Ասնց.—Դու խենթ էս, մարդ էս էլն կանա շալկո՞։

Էլի չհասկցավ քե ինչ ըսնց էս մարդն. դարդըլու մարդ էր, դիներ օր ըսի, դարդին դարման կենա։

Գացին խասան մի արդի, ցորենի արդի։

Կաա.—Մասալա, առ մաշալա,

Տերդ կերե, քե նո՞ր կուտաս։

Ըսնց.—Որչափ դու հիմար էս, օր էսի նոր լա չհասես, տերն հո՞ւատ ա կերե։

Գացին խասան էդ մարդու դյուղը։ Ոզիրն ըսավ.—Նղրայր, ձեր եկեղեցու ճամփեն ո՞ր կողմով ա։

Ըսնց.—Խո քոռ չէս, հանա՛...

Դե,—ըսնց.—Դը լավ, ղը գնա։

Գնաց տուն մի աղջիկ ուներ։

Խերն ըսնց.—Մի ծոռւ ես ռաստ էկա,—ըսնց, —էկանք ջրու խասանք, ըսնց.—Ցա դու հեղի կմուրջ, յա՛ ես. էկանք մի ելի ռաստ էկանք, ըսնց. —յա ես քի շլկիմ, յա դու՝ ինձ. էկանք արտի մոտ, կըսա. մասալա, տերդ կերե՞, քե նոր կուտաս։ Աղջիկ կսա.—Էլ ի՞նչ ըսնց, բա հինք դո՞ր գնաց։

Ըսնց.—Խասանք ժամու դուռ, ճամփա խարցուց, ըսի—Խո քոռ չէս էնա հա՛...

Աղջիկն ըսնց.—Հիմա՞ր դու էս, նա օր էն ջուրն տեսեր ա, ըսե՝ կամ դու բոպկցի, կամ ես, հընչի՞ երկուսս բոբկնանք. էն ելն օր տեսե, դարդլու մարդ ա հեղե, ըսե պատմություն մը էրա, էս ճանապարհ կարճնա վրեներս, ցորենին օր ակե խասեր ա, ցորենի քե տերն ուր տնեն ա ցանե՝ կերել ա եթե տնուց չի ցանե, առե ցանե, ըսուց չիերեր ա. ժամու ճանապարհն օր խարցուցե, անծանոթ մարդ ա հեղե, մնալու տուն չի գիցե։ Դե՛ շուտ գնա՛ գտի, բե։

Գնաց տեսավ, ժամու պատի տակ նստուկ, ա, բերեց, խաց կերավ։ Ըսնց.—Դու քո խաց կե, ես քու դարդին դարման կէնեմ։

Կերավ մե քիչ։

Ըսնց.—Քու դարդ պատմա։

Ըսնց.—Որդի՛, թագավորն ըսեր ա ղոչից հա՛մ բյարաբ, հա՛մ բուրդ, հա՛մ ղոչն էլ սաղ ա կուզա։

Ըսնց.—Էդի պատրաստի, ես կէնեմ։ Հառավոտ կէթաս, մի մարդ կբերես, կիտանք էտա բուրդն կտրել, ես էլ բուրդ կմանեմ, կդործեմ, կտանես կծախես, էրկու ղոչի գին կենա, ես քյարաբն կէնեմ, կիտամ, կտանես։

Հելավ մե մարդ բերեց, խուզեցին, լվացին, դործեց։

Ըսնց.—Տա՛ր ծախա։

Տարավ ծախեց, աղջիկն ըսնց.—Ա՛ռ էս քե ղոչու գին, էս էլ քեզի։

Ըսնց.—Աղջի՛կ ջան, ես ինչ կէնեմ, քոզ մնա քեզ։

Ըսնց.—Դե՛ գնա մե խատ էլ մարդ բե, ղոչին տամ կրդել։

Բերեց ավեց կրդել, ղոչու ձվեր խանեց, էրեց խորոված, փաթաթեց մըջ քղթին, ավեց ոզրի ձեռ, ըսնց.—Դը տար։

Ոզիր գնաց, քյարաբ դրեց վըր թագավորի սեղանին, փողն դրեց սեղանին, ղոչն կայնցուց։

Ըսնց.—Էդի քու բան չի, էդ ո՞վ ա, բի՛ր.

Ըսնց.—Քեզնեն պահեմ, ասածուց ի՞նչ, էդի մե խատ աղջիկ ա։

— Դե՛,—ըսնց,—էրթանք։

Հելան ոզրի խետ էկան, աղջիկ տեսավ օր էկան, բերեց իմալ որ պետքն էր, թագավորական պատիվ ու հարգանք տվեց։

Թագավորն ըսնց.—Բուխերիկ շատ լավն ա, բայց մի քիչ ծուռն ա (աղջկա աչքերը օղոր էր)։

— Ոչինչ.—ըսնց.—բուխերիկ ծուռն ա, մուխ դուղ կքաշա։

Էդ վախան թագավորն կայնավ քե.—Էս աղջիկ պետի տանիմ ընձի։

Իշարդեն այլ մարթով ա կտանա, որ ոզրին փրդե։

Ըսնց.—Ես՛ր, թագավոր ընձի կտանա, դու քեզի բավականին օսկի կուզես։

Էկավ խոր խետ խոսաց։

Խերն ըսնց.—Աղջիկն ա ընձի կպետա, ես իմա՞լ կապրիմ։

Ըսնց.—Քե օսկի կիտամ։

Բավականին օսկի տվեց, առավ աղջիկ գընաց։

Աղջիկ խասցուց տուն, հինք կայնավ դուռ, ըսեց.—Ես կէրթամ հանդն կռիվ, պատերազմ ա. էսա դարդակ քիսիկ կիտամ քո մոտ (փեշատ դընց ուր շէր), էս քիսիկ լիք օսկի հեղի, փեշատն էլ վրեն զարկուկ հեղի։ Էս երկու զաղար կտանեմ, էս մեկ զաղարն ցնդնի, իմ մեծ զաղարից բերա. զարդդ կիոզնամ քու կուշտ, ձին կտանեմ, զամ տանեմ, օր զարդդին քունիկ հեղի. ես էլ կէթամ, կիդամ, տանեմ՝ ինձնե տղա հեղի։

Ըսեց.—Գնա՛։

Գնաց։ Թագավորն հլա դեռ ճանապարհին ա, աղջիկն հեղավ ծանդր բաղդչան, հելավ հընդավ թագավորի քամկից ու գնաց։

Թագավորն որտեղ չայր զարկեց, հինքն էլ զարկեց, նստավ։ Հելավ սինին տարավ թագավորի մոտ։

— Թուլլ տուր օր ես առուտուր էնեմ։

Նստան, ըսեց.—Դիշեր երզար ա, չկոնանք սիրինք էլ, խաղալ դինա՞ս։

Ըսեց.—Դինամ։

Ըսեց.—Մարջավ պտի խաղանք։

Ըսեց.—Ես բաղդչան մարդ եմ, ինձ էլ փեշակ ունեմ, քի էլ ունիս, ես կդնամ իմը, դու էլ քունը, որն տարավ՝ տարավ։ Աղջիկս զանեց տարավ, դրեց ջեր։ Մեկ էլ խաղցան զաղարի վրեն. էդ էլ տարավ։ Մեկ էլ՝ ձիու վրեն, էն էլ տարավ։

Ըսեց.—Էլ ի՞նչ։

Ըսեց.—Ես իմ կյանք, դու քու կյանք։

— Լավ։

Թագավորին էլ տարավ։

— Դե, ըսեց.—հելի՛։

Հելավ թագավորին էրեց հառաջն ու գնաց դրեց չայր, ձին տարավ քալեց ղսրղի մոտ, զաղար քալեց էգի մոտ, քիսիկ լիք օսկի լցեց, փեջատն էլ զարկեց, էկավ շորերը փոխեց, էկավ մըտավ թագավորի ծոց։ Աղոթարանն առավ, ադամամուին ա, հելավ գնաց։

Թագավորին ըսեց.—Ցամա՛ն, մուի ա, հելի, էսա քո ձին, էսա քո փեշատ, էսա քո զաղար, գնա՛, քանի քո ժողովուրդ չէկած ա։

Թագավորն ուրախցավ։

Աղջիկն հելավ բեռը բարձեց, դարձավ։ Ինն ամիս քամավ՝ մե տղա բերեց, զաղարն ցնդնավ, ձին քունիկ բերեց։ Ծոթ տարին քամավ, թագավորն էկավ։ Հելավ խեծավ ձին, տղին քունկի վրա նըստըցուց, զաղարն էլ հիդկեց հետևն, գնաց։

Թագավորն մոուի-մոուի ա, նստավ, սինորներ լցվածե։ Մնաց, ուր ժողովուրդ դարձավ, ըսեց.—Ջալլա՛ի։

Ըսեց.—Հընչի՞։

Ըսեց.—Օր քու գլուխ կտրի։

Ըսեց.—Հորի՞։

Ըսեց.—Դու բիչ էս բերե։

Ըսեց.—Ես բիչ չեմ բերե, քու տղեն ա։

Ըսեց.—Ես յոթ տարի շեմն էլ չեմ մտե։

Ըսեց.—Դինա՞ս, էն բաղդչան օր էկավ խաղցավ, էն աղջիկ գիշեր քավ քո ծոց, էդ ես ի։

Թագավորն մատ կկծա, կըսա։ —Աբրիս, դու կարող ես իմ տեղ թագավորել։ Ընդոք խասան հուբանց մուրազին, դու էլ խասես քո մուրազին։

## 21(30). ԼԱՎՆ ՈՒ ՎԱՏԸ

•Մե օր թագավոր հայտարարութիյուն կուտա, օր քաղքի մեջ լուս չվառնե։ Լալան[1] թագավորի խնտ կհելնի կերթա պատռելու։ Իրեք օր կպատռանե, գուքան, կաշեն՝ մե փոքր սենյակի մեջ լուս կվառե։

Կամանեն ներս, կանե։ —Ա՛յ մարդ, ես հրաման տվի, որ լուս չվառնե, էս ինչդ է կվառե՞ս։

Թագավոր կտենա օր՝ մի երիտասարդ՝ գլուխ դրե կնգա ծնկին, կնիկ երես կշփա։

Թագավորը կսե.—Լա՛վ, էքանք։

Հառավոտ մե պառվում կգտնե, կուղարկե, կսե,—Գնա՛, էն կնկան ըսե, թագավոր քեզ գուզե առնե։

Ինչ կսե՝ կնիկ կհամաձայնի։

Թագավոր կսե.—Թող մարդուն փեջացնե, նոր առնիմ։

Պառավ կերթա կսե կնգան, կնիկ կսե.—Լավ, սարախատն թագավոր թող իգա։

— Լալա՛,—կսե թագավոր,—հասի՛, թե չէ էն անառակ կնիկ հուր մարդ կփեջացնե։

Լալեն կերթա, կտենա կնիկ մարդուն սպաներ ա։

Գուքա կսե.—Թագավոր ապրած կենաս, հարի ես գնացի, մարդուն փեջացրեր էր։

— Լալա՛,—կսե թագավոր,—հըմեն կանանց գլուխ պտի կտրես։

Էդ օր լսավ լալի հերը (Լսիկ թագավորի հոր լալեն է եղել), կսե.—Տղա՛, ընձի տար թագավորի կուշտ։

Կերթա կսե.—Ես քո հոր լալեն էի, կերթեի իմ սենյակ կպառզեի, մեկըմ գուքար կճվար, հարի, ես կերթեի, կերթեի կտեսնեի՝ մարդ չկեր. մե օրմ՝ չէր, երկու օր չէր։ Օրմ՝ էլ ձին պատրաստ կպահեի, էտի էկավ ճվաց, ես խեծա, հետևից ընդա, գնացի խասա մե դարբասի։

— Ա՛յ մարդ, ամո՛ր, կայնի, ասավ.—ես էս դարբասեն ներս կմտնիմ, թե հելա դուս՝ լավ, թե չէ՝ էս օսկին ա՛ռ, գնա։

[1] Լալա—թագավորի օգնականը (ծանոթ. ասացողի)։

Էտի մտավ, մե ժամ հետո մե մարդու գըլուխ առավ էկավ, առանք գլացինք մե մեշու մեջ, նստանք, մե գերեզման կար, բացինք, ջանտակը խանեց, ըսավ.—Ա՛յ մարդ, էսիկ իմ նշանածս է, էն օր օր մեզի պսակին, էս գլխու տերն էկավ իմ գլուխ կտրեց, ինձ թողեց մամռալեն։ Էսիկ իմ նշանածս է, էս էլ ուխտ եմ էրե, օր էտոր գլուխ կտրեմ, հետո ինձ սպանեմ, ջանդակս կդնես իմ նշանածի խետ։ Էտի ըղմալ էլ կէնա։ Էդ մարդ կըթաղա հուր նշանածի խետ, օսկին կառնի կերթա։—Բա թագավոր, էման վատն էլ կա, էման լավն էլ կա, հընչի՞ գուշես թաց ու չոր մի տեղ վառես։

## 22(31). ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱԴ ԹԱԳԱՎՈՐԻ ԽԵՔԱԹԸ

Սուլթան Մուրադ իր ողրին կկանչա, դավրեշ գլղի կխաքեն, կհելնեն քաղքի մեջ։ Հելան էկան քաղքի մեջ, ուլիցով հընցան, տեսան օր մեկ հարուստ մարդու շենք, իրիկ-կնիկ նստած հիրար խետ ղսա կէնեն, իրար խետ պռոշտ կէնեն։

Թագավոր խարցուց,—Ողի՛ր, ըստոնց սիրուբյուն որի՞ց ա։

— Թագավոր ապրած կենա մարդուց ա, կնգան խիղճ չկա։—Ըսեց.—Ողի՛ր, իս էտի կփորձեմ. քե քու խոսքն էղավ, քեզի մե լավ խալաթ կիտամ։

Դարձան էկան, թագավոր բերեց նամակի մեջ գրեց. «Ես տեսա՝ դուք իրիկ-կնիկ քաղցր սեր կէնիք, ես էլ կուզեմ իմ կնգան վերջացուցեմ, դու էլ քո մարդու գլուխ վերջցու, քե բերեմ էնեմ ընձի թագուհի։ Ես քեզի շատ խավնա»։

Նամակ տվեց, ըսեց.—Կտանես, ակուշկեն կթխկցուս, խանում կհելնի, կսես.—Խանո՛մ, ա՛ն նամակ, կարդա, պատասխան մեջ գրա։

Էլեն նամակ կբերա, կտա էդ կնգան։ Կնիկ խասկցավ, օր Սուլթան Մուրադ թագավորն ա, աշխարհի տերն ու տիրակալն ա։

— Հըբը խող ու փոշին վըր իմ գլխուն, հո՞րի չէրթամ հըլեմ թագուհի։

Գրեց մըջ թղթին. «Սուլթան Մուրադ թագավոր ջան, ես այսինչ օր, այսինչ ժամին իմ մարդուն կվերջացում, դու էլ քու կնգան, արի ընձի տար, էրա քեզի թագուհի»։

Պատասխան գրեց տվեց, լալեն տարավ։ Սուլթան Մուրադ կարդաց, տեսավ օր ողրի խոսքն ա։

Ամեն թագավորի ողիր թագավորից խելոք ա հնդև։

Էս մարդ միտք արեց ըսեց. «Հա՛յ, հա՛յ, էս ինչ անխիղճ գործ բռնի, էդ կնիկ անասուված ա, կարող ա սպանա հուր մարդունց»։

Կեսօրին մարդը էկավ ճաշի, տեսավ զատ էլ չի էփե։

— Ա՛յ կնիկ, էս ինչ բախս ա՞։

— Դու կերթաս դուքան դուքանդ կբանաս, խորոտ կնգտիք գուքան, առևտուր կէնես խըտ հուրանց կզըաղվես։ Ես կնստիմ տուն, կիշկեմ դուռ։ Կնիկ կսի.—Քեֆ անենք, ուտենք խմենք, օր մենք իրար իրիկ-կնիկ ենք, վայելչություն ա կէնենք։

— Ա՛յ կնիկ, դե էդ ի՞նչ ա կըսես, խելագարվեր էս, ի՞նչ ա, գուշես քեֆ, քեֆ անենք։ Մենք էրեխա չունենք, էս ապրուստ վի՞ խամար ա, ես ու դու արի ուտենք։

Մարդ միամիտ ա, քեֆի պատրաստություն ա կտենա։

Դառնանք Սուլթան Մուրադ թագավորին։

Ուր որած փոշմնավ, ըսեց.—Ողի՛ր։

Ողիրն էկավ կայնավ, հուրանց դարվեշնական շորեր խաքան, իրա բռնած գաղտնի գործն ա, ըսեց ողրին, խաքան գացին։

Էդ կնիկ էրկու խատ փալնչի եղդու բերե, փողով գրավե, քե. «Հիրիկվան քաղաքն օր կխախընդի, արեք կայնեք իմ լուսամուտի տակ, ես ձմմի շրիդ կսապռնեմ, թալեմ իմ իրկու վիզ, կըխեղդեմ, դուք քաշեք կորսուցեքը»։

Էդ մարդ օր ըսեմ, օր էկավ տուն, կնիկն ըսեց.—Մա՛ղ, կերթաս դուքանդ կբանաս, կուտես, կխմես, հետո քեֆի թաղարևք կտենաս։

Ըղմալ էլ էրեց, հըմեն բան բերեց, կնիկ պատրաստեց, մարդուն էլ խմցուց, հալից քցեց։

Թագավորն, իր ողիրն էկան գաղտնի տեղ կայնան, տեսան օր էրկու չհնել տղա էկան, լուսամուտ թխկցուցին։ Էս կնիկն լուսամուտն բացեց, շրիդ թալեց իրկու վիզ.—Դ՛ը քաշեք,—ըսեց.

Տղեկ քաշին, խոխռուն ընդավ մըջ իրկուն։

— Ողի՛ր, խեղդին, խասի՛։

Ողիր խասավ, էդ էրկուսն փախան, էս մարդ հընդավ, կնիկ շատ վախեցավ քե՝ էս ի՞նչ բախս էր։

Էդ դարվեշներն էկան, դուռ ծեծին։

— Տանտե՛ր, տանտե՛ր,—էկան կայնան դռան հետև։

Տանտե՛ր, վերև աստված, ներքև դու, մենք պտոտող դարվեշներ ենք, եկանք օր էթինք Սուլթան Մուրադ թագավորի կուշտ, գացինք, ժամից դուրս էր։ Մըրկը էկեր ենք, տեղ չունենք, մի դիշեր մեզի տեղ տու, սաբահսան հընկինք էթանք։

Էս մարդն էլ միտք էրեց. «Էսոնք կարիր դարվեշ են, նա գինան իմ մարդու գլուխ ի՞նչ ա կխանեմ, բերեմ տեղավորեմ, չուր լուս բացվի, էդ քնթափուկի քեֆն էլ կթողա, մենք էղինք էլի էրիկ-կնիկ։

Դուռ բացեց։

— Բարի հիրդուն, քուլրիկ ջան։

— Վա՛յ, բարով դավրեշներ ջան։

— Քուլրի՛կ ջան, մենք հանգստանանք, լուս բացվի վրը մեղ, էրթանք թագավորի մոտ։ —Էս ի՞նչ մարդ ա պղին հնդուվ։

— Է՛, իմ ցավ մի տվեք հիրուր։

— Հորի՞։

— Էսի հուրիշ մարդ ա, աչք դուս մարդ ա, գործակատար ա, ընձի աչքաթող ա էրե, սիրողներ բերած համած, թալած ա դուռ, գացած ա. էրկու խորի նոր բերին թալին, մնա վրը պոլերուն, շուր սատկի։

— Ա՛յ քուլրիկ, քի մեռիմ, քո վարձ Քըխ չկորի, չէ՞ քո մարդն ա, արի բուռ օդներ խան, շորեր խան, քիթ ու բերան բե փշում պաղ ջրով լվա, պառկցու Քըխ քնի։

— Շէ՛, կարևմ էդոր պատանք, Քըխ մնա սատկի, էդոր խորի չկա։ Հելավ ոդիր դրեց տեղ։

— Քուլրի՛կ, մե բան կխնդրենք, մենք էկանք քու տուն հիմցանք, քո մարդն էլ հիմցանք, քի էստուց դեն քու մարդուն վնաս պատախի, մենք կէղնինք վկա, քի կիտանք կախարան կախել հաա՞ա...

— Հորի՞։

— Ըրա քո մարդն ա.

Թագավորն ըսեց.—Ոդիր, լսո՞ր։

Էս ոդրի խերն էլ Թագավորի խոր հառեջ ա եղե ոդիր, անուն Ասկիկ ոդիր ա, խարիր տարեկան ա, պառկուկ ա, տեղաց նե։

Ոդրին ըսեց.—Հառեջ էէրթաս քու տուն, քո կնիկ կսպանես, էրկրորդն էլ քաղաք ինչքան էգեղնե կա՝ կկտրես։

— Հընչի՞ Թագավոր։

— Քի հրաման կիտամ։

Ոդրի կնիկն էլ շատ խորոտ ա, ոդրի հերն էլ, իմալ օր ոդիրն ա, Ասկիկ ոդիրն էլ շատ ուժեղ ա հնդե, էդոր գետին դնող չհնդե։ Ոդիր օր գուքա, կնիկ կընի հառեջ, Քուր քաշա օր սպանա, կնիկ փախի մտի կեսրերի քամակ։

— Ա՛յ տղա,—ըսեց.—էդի ի՞նչ բան ա։

Ըսեց.—Հայրի՛կ, Թագավորի հրաման ա։

Պատմեց խորն։

— Ա՛յ բալա, չի կարելի յա, դարձի Թագավորին ըսա իմ խեր՝ Ասկիկ ոդիր կուգա խոսա հուր խետ։

Թագավորն կանչեց Ասկիկ ոդրին, բերեց, ըսեց.—Թագավոր ջան, բարկացեր էս, բան չկա, որդի ջան։—Ըսեց.—Իմ մեջք գետին դնող չի հնդե, Ալափաշա ձին Արաբստանա գալիս էի խեծուկ, բուխարի փափախ գլխուս ա, կէրթամ ավղուշի, կբերեմ, էրկու բաժին կիտամ քո խոր, մեկ բաժին կտանեմ իմ տուն։ Էն մեկ էլ օր խեծուկ եմ իմ Ալափաշա ձին, համ ուժեղ եմ, համ ոդիր եմ, համ էլ ավչի եմ, մնկ էլ տեսա մե խատ ձիավոր էկավ ընձի, անբարև, անբարիլուս հընցավ։

— Ցա՛, բարևն օր կէր, ասսուն էր, էս ի՞նչ մարդ էր, օր էկավ ընձի բանի տեղ չդրեց։

Զին քշեցի խասա, զանի չբռնավ։ Դուրզ վերցի, քշի խասա, զանի, հուշիկ շորերուն բռնեց։ Մնկ էլ տեսա էս մարդ ձին քըշեց կայնցուց, ձեռ թալեց էս իմ վիզ, կուզա ընձի ձիուց վերցա։ Իմ օտներ զանգուի մեջն ա, ես չկռնամ օր իմ օտներ ազատեմ զանգուից։ Դողուն ընգավ իմ ջանս, ընձի խանեց դրեց հուր հառեջ, իմ ձին բերեց կապեց հուր զանգուից ու քշեց։ Յարաբ էս ընձի դո՞ր ա կտանես։ Գացինք մե խատ քաղաք, քաղքի գլոխ մե խատ Թագա ննջեցելի գերեզմնի կուշտ կայնավ, ընձի վերցուց հիջուց գետնին, հինքն իջավ ձիուց, խուրջին լիքը ապրանք ա։ Էդոր ձին իմ Ալափաշից լավ ձին ա, էդոր մաղեր օսկու պես կփելփլա, ըդոր Թամբ ու դյամ հմեն օսկուց ա։

— Տղա՛.—ըսեց.—էս ձիանք կբռնես, կկայնես էսա տեղ, չշարժվես. դոր էիաս, քի կբռնեմ, ես էրկու ժամից կգամ։

Էս էդոր զաղլան տեսեր եմ, դիշխնա՞մ լըբտամ, բռնի կայնա։ Էդ հիջավ մըջ քաղքի, էրկու ժամ եղ էկավ—Տղա՛, կայնո՞ւկ էս—ըսեց.

— Բը ինչ։

Ըսեց.—Մե խատ բախ, քլունգ ա՛ռ, էսա նրնջեցյալի գերեզման բաց։

Բախով, Թագա գերեզման էր, քանդի, հա՛ լացեց, հա՛ քանդեցի, մե խատ ղոբուլ չբացե՛ց. երիտասարդ տղեմ, քիթ ու բերան բոլորնուկ, չուտես-չխմես, էդոր երիտասարդությենին նայես։

— Տղա՛, տեսա՞ր էսա երիտասարդ, քո սիրտ կմռմռա՞ վրեն։

— Ես մկա կմեռնիմ։

— Տղա, ես էստոր կնիկն եմ, ես աղջիկ եմ, հլա իմ ծծեր տես (ծծեր տվեց նշանց), սևհնսպին ընձի տարան դարձ, իմ խոր տուն, իմ խուրջնի մեջ իմ շորերն ա, իմ օսկին ու իմ խացն ա, էսի ծուռկ էր վըր ընձի, ես աստծու առեջ հուխատ ենք էրե, ոն որ իմ քամակ դներ գետին, ես ընդոր առնիմ։ Էս տղեն ընձի դրեց գեղնի։ Էս քաղքի նե յոթ ախպեր են, օր ես գացեր եմ իմ խոր տուն, իմ մարդու խետ կռիվ են էրած, իմ մարդ զանե էրկսին սպանե, ընդոնք էլ զանած իմ մարդուն են սպանած, բերած խողին ամանաթ ա տրված։ Ա՛ռ իմ խանչալ, ղա՛ն իմ սրտին, իմ քիկըընքից Քըխ հըլնի դուս, ինձ դի իմ մարդու մոտ, մեղի ծածկա, մեր վրեն մի կուճղին կապա, օր

անձրև, ձուն չիգա վըր մեզի. էդ ձին էլ քեզի, էս խուրջինս էլ, իմ շորերն էլ, օսկիքն էլ։

Ես չկրցա էրի։

Հինք խանչլով ղանեց սպանեց հուրին, չաբալամիշ հելավ։

Ես էդ թաուր կնիկ տեսա, դու էլ էդ թաուր էս տեսե։ Ըքա մեկ կնգա համար քաղաքի էգեղեն կկտրեն, մնա որձեղե՞ն։

— Մկա, մեռնիմ ձեզի, էն թավուր էլ կա, էն թավուր էլ։

## 23(32). ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱԴԻ ԽԵՔԱԹԸ

*Մե թագավոր գընի՝ անուն Սուլթան Մուրադ։ Մի օր կկանչա հիրա ոզրին, կասա.—Քեզի վեց տարի ժամանակ, դու պտոտա, մեր դատավորների բարք ու վարքի մասին ընձի զեկուցա։*

*Ոզիր ըսեց.—Լա՛վ։*

*Դարձավ էկավ տուն, նիաթ կախուկ, կնիկ ըսեց.*

— *Հը՛, ի՞նչ կա, հընչի՞ ես նիաթդ կախե։*

— *Կնի՛կ,—ըսեց.—ինձ վեց տարի ժամանակ են տվե, պտի անից բացակայեմ. ես պտի վեց տարի քաղաքե-քաղաք պտոտեմ, գյուղից գյուղ, թագավորի խոսք կատարեմ։*

*Ըսեց.—Ի՞նչ ա թագավորի խոսք։*

*Ըսեց.—Կասա. գնա գյուղեր, ռեսներիդ, գլավվիքներու, պրիստավներու խիղճ ու խոքին հիմացի տե՛, ինչպե՞ս ա կկառավարեն ժողովուրդ։*

— *Մա՛րդ,—ըսեց.—ըսկի ժամանակ առեր ես,—ըսեց.—Դնա՛, համ ժամանակ առ, համ էլ ըսա՝ քու զորքով իմ տան բոլոր քոփով, չաբախանով կփագես, սավայի ընձի՝ իմ տան բոլոր ոզոք իրավունք չունենա էթա, ես էլ դամ վեց տարի հետո, ինչ տեսել եմ, քեզի հայդնեմ։*

*Էկավ ըսեց, սինողներ կալին, ըսին,—Ոզիր սխալ խոսք չըսեց։*

*Էդպես էլ էրեց։ Էս մարդ հելավ ձին խնծավ, վերցնց իրան փող բոլ, հընդավ գեղրանք։ Քշելով՝ էկավ խասավ մի ծանոթ քաղաք, գնաց մե տուն։*

— *Տանտե՛ր, տանտե՛ր։*

*Տանտեր մե խատ քյասիբ կծկուկ մարդ, հելավ էկավ, տեսավ՝ էս մարդ ոզիր ա, գեստն էլ լավ ա, ձին, քամք հըմեն բան սարքի չյա։*

— *Է՛,—ըսեց,—գալող ղոնաղ ջան, ես դուռ կբանամ՝ քեզի կտեղավորցնեմ, միայն քո լայտին չէ, աղքատ մարդ եմ, կամչնամ։*

— *Մի՛ ամչցի, իմ ուտելիք իմ խետն ա, իմ յափունջեն իմ խետն ա, իմ ձիուն եմ կա, առավոտ հլեմ էթամ։*

*Բացեց դուռ, մտան թավլեն, ըսկավ պոլուկ ա սալով, ինչ որ օթաղի պոլ հեղի, հլա դուռմ՝ էլ մըչ թավլին կա։ Իրեկվեց էս մարդու տեսքին, էս մարդու գեստին, էս մարդու թավլեն, ոզիր զարմըցավ։ Ջին կապին, ձիուն խոռում՝ խոտ դրին, եկան տուն։ Ճժեր, յոթ-ութ ճիժ, տկլոզ են, բերին էս մարդին նստացուցին վըր քեչին, էս մարդ ըսկավ փիս խոքոց խանեց, ըսեց.—Ես կիրիչկեմ էս քու հայաթ, քու թավլեն, դու իսկական մարդ ես հեղե։*

*Էս մարդ, էս կնիկ, լացին, հուրանց թալին վըր էս մարդու օտաց։*

— *Է՛, մեր ցավից վա՛զն արի. իմ խեր շատ խարուստ էր, իմ խեր մեռավ՝ իմ ախսորդություն պատեց ընձի, արդերս հընգն խլղի ձեռ։ Իմ բաժինն էլ բերեր եմ, կանչուտ կերել եմ, հողս հընգն խլղի ձեռ, ես էլ էս օրի մեջ եմ։ Տուրք ու տալիքն էլ հնգն վրես։*

— *Ա՛յ մարդ, ես քո խետ որ կանդրախտ կապեմ, քեզի ջուխտա՝ լավ եղ առնիմ, քո արտերն առնիմ՝ քե տամ, քեզի տարին սերմացու առնիմ տամ, ես քու խետ պահման կկապեմ. էրկու եղն, գութան կառնիմ կանձնեմ քե, վեց տարի չի գամ. դու հեղես՝ քու ասաված, դարման քու վարելեն ցանելեն՝ իմ եղներուն, իմ խաց բազմացուս, լցես քու ամբրներ, քու բաժին խաց կվերցուս, վեց տարուց հետ նոր ես գութամ։*

*Պահման բերին կապին, խոսացին. էն օր մարդու կնիկն էր, կսեր.—Էսի երազ ա, էդի ճշգրիտ չի...*

*Հելան առավոտ, բարի լուս բացվի վըր ձզի, բացվավ վըր էդ մարդկանց, հմլա օր ասել ին, էկան բազառ, եղներ, գութանն էր, խառոր էր, հըմեն առավ, տվից հիրուն, սերմացուն առավ, ուտելու խացն էլ չոկ։*

*Ու էս մարդ ձին խնծավ, գաղտնի հետ եկավ ուր տուն, վեց տարի ուր կնգա խետ սեպրեզ արբին, թագավորից քաքուն։ Վեց տարին հա՛, էրկօր-իրեք օր մնաց օր պտի քըմի, ձին խնծավ էկավ, տեսավ էս մարդ հարստացե՛, գոմ լցն օշխա՛ր, թավլեն լցն տավա՛ր, էդոր եղներ քալե բուրդաղի, բալա եղներ ա առե, էրկու խատ էլ կծատող ա բռնե, գութնի մնջլներ դրե՝ ձին ձիավորից բերեն ցած։ Էկավ, դուռ տվից. օր չտեսա՛վ էս մարդու, իմա՛ պտի գա հասնչ, չոքնչոք էկավ.—Ի՛մ ասաված, ի՛մ կյանք ազատող տեսանք։*

*Կնիկ խաքուկ, տղեքներ ուսում ա կսովրեն, ըսկավ ուրխացան, ըսկավ ուրխացան։*

*Ձին կապից,—Դը՛,—ըսեց,—հելի էրթանք, իմ եղներ տենանք, նստինք գանք, նոր սկսենք դառ էնենք։*

Հելան, եղներ տվեց նշանց, ձեռ բցեց՝ ըմ՛ալ ևն չաղցն, երկու կոտոշն ա կերևա.

— Լա՛վ,—ըսեց,—էս մալ քեզ դուրբան, էս իմ եզ, տարին էրկու հորթիկ կբերե, իմ տավերկու հորթիկն հո՞ւր ևն։

— Վա՜յ, ա՛յ մարդ, ծռա՞ր, եզն էլ հորթիկ բերի՞։

Ըսեց.—Քա եզ տարեկան մե հորթիկ կբերա։ Ղալմաղալ դրին թավլի մեջ։

Կնիկ անից լսեց.—Ա՛յ մարդ,—ըսեց.—էս ի՞նչ ղալմաղալ ա։

— Տո՛ կնիկ,—ըսեց.—լա՛ աբի տե՛ս, լա՛ աբի տես, մեր կոնախ ծռավ, կա՝ նղներու հորթեր դո՞ր ևն։

— Բան չկա, բան չկա,—ըսեց.—իմ ախպեր ջան, արի՛, սաբահատան գացնք ռեսի մոտ, որ ռեսն բսի՝ եզ կծնի հորթիկ, մենք էլ կիտանք։

Սաբահատան Հելան գացին ռեսի կուշտ, տանտիրոջից գաղտնի մե խաս իրեքնոց խանեց մըջ ձեռաց, էկան ռեսի հողին։ Հողն լիք լցվուկ, ռես վերին տեխ նստուկ, պլեխներ պատից կախուկ, բարև տվին։

— Համեցե՛ք,—ըսեց։

Իրեքնոց գոդատու ճխտեց ռեսի ձեռ։

— Նստե՛ք, նստե՛ք,—քաշեց հողի վերին ըրլոխ, նստցուց։

— Հա՛յ,—ըսեց.—էկեր ևնք քու մոտ գանգատու։ Վեց տարուց հառնջ էդ մարդ հա՛յ-հա՛յ էր սովի մատնվեր, պատեր խողից էր, անասվար, անլուս, ղոնախամ՝ էկն ևս մարդու տուն, դուքանմ՝ ոտվն, խարոր ա ոտվն, ուտելիք, ցանքի խաց ա ոտվն։

Ըսեց.—Լավ մարդ էր էդ մարդ, տանուտեր,—Ըսեց.—Էսուց էլ լա՛վ, կո՛ ևս եմ։

— Տանուտեր ջան, շատ շնորհակալ եմ էս մարդուց. իմ խաց բալմացուցեր ա, գարին՝ գարու տեղ, ցորեն՝ ցորենու տեղ, կտավատ՝ կտավատի տեղ, հըմեն բան. շատ շնորհակալ եմ, իմ եզ օր վեց տարին մեկ՝ մեկ հորթիկ բերա, տարին մե խաս, էդ եզան կենա՞ վեց հորթիկ։

— Խա ա՜...

— Երկու եզան կենա՞ տրավերկու հորթիկ։

— Խա՜ ա..

— Իմ հորթեր կայնե, չիտաս։

— Տո՛ շան տղա, էդ էլ էդոր լավութի՞ն։

Պլեխ իջուց, դանից՝ կսպանաս։

— Ցամա՞ն, տանուտե՛ր, քու ոտքն պաչեմ, բոլ ա, կէրթանք, կիտաս։

Հելան, նիաթ կախ հնգան հետև, կնիկ տեսավ օր մարթ հալից իյկե ռես։

— Հը՛ էդոր պատանք կարեմ, էդի մեր խեռ չունի. լուսուն գացնք Ադիաման Մնոյ մոտ, գլավի յա էնի. դիվան կէնա։

Հելան սաբահատան, խնդնոցմ խանեց, խեծան ձիեր, դե գլավիներ բանցր պաշտոնի ա, օդեք լցվուկ. էդոր պլեխն էլ իրեք ձղեն ա, մարալի օդն էլ պլեխի կոթն ա։

Իմալ օր էնտեղ ռեսին ըսեց, էդ թավուր խոստովանալ գլավուն, խնդնոց ճխտեց ջեր։

Ըսեց.—Տո՛ շան որդի, էս մարդու էսքան լավութենի դեմ դու հորի՞ ա վաղութեն կէնես, էս մարդու հորթեր չիտաս։

Պլեխն հիշուց, որ սապկներով կզանա, որ պլեխով։

— Լա՛վ, լա՛վ,—ըսեց.—արի՛ հէրթանք, էս էլ ձեր գլավին։

Էկան տուն։

— Մա՛րդ,—ըսեց.—քու տոք պաքեմ, ախպեր ջան, գլավին էլ մեր խեռ չունի. սաբահատան գացնք Քյավառ, պրիստավն Քըխ վճռա, կիտանք։

Լուս բացվավ, Հելան։

Մենք դառնանք վի՞ վրեն, մենք դառնանք մեկ տղի վրե,—ուրեն առենակալ բռնե, պախակ բռնե, գալող-էկողի դեմ կկորա, կասա.—էկնք մեր խոտաղ թագավորի մոտ։

Էս մարդիկ էկան,—Ա՛յ հա՛յ, դո՞ր ա էկերթաք։

— Արի քե փարա տամ, մենք կէրթանք քաղաք՝ պրիստավի մոտ։

— Տո՛ շան տղնք, հորի՞ թագավորն ա մեծ, թե՝ պրիստավ։

Ողիր պռունգ կծեց, հընդավ հետև, էկավ թագավորի մոտ, թամանդար էղավ, գոդատու տասնոցն ճխտեց ձեռ։

— Հա, հորի՞ կէրթաք պրիստավի մոտ։

Իմալ օր էղել էր, էնթավուր բացատրեց, թագավորն ըսեց.—Կայնենք ընձի խերմ կա, դրեր եմ իմ արտին պահապան։

Ըսեց.—Հորի՞։

Ըսեց.—Իմ արտ ծովուց մե կիլոմետր հետու ա՝ սևավոր խող, ուժեղ արտ ա, ցորեն գլոխ չըբըռնա, գարի կցանեմ։ Կցանեմ, հըմեն տարի ծովու ձկներ գելնին, կիքան կուտեն. ծոփերն ա կէրթանք քաշենք բերենք, իմ խերն պահակ ա, քըխ իմ խեր դա, ձեր դատ կկտրեմ։

Ողրի փորն առավ.—Ա՛յ մարդ, սութ էլ կա՝ սութ, ձուկն օր խանեն ափ, խրեղեն ա, ալբալ կսատկի. իմ՞ալ չորով սողացին մեկ կիլոմետր, էկան, քու գարին կերան։

Թագավոր տարավ-բերավ՝ մե՛ խաս չափալախմ վըր ըտոր բերնին, ըսեց.—Քու ֆլան բհևվան, բը իմ՞ալ էս տասնոց դրե իմ ձեռ, եզ կծընցուս։ Ես գինամ՝ դու Սուլթան Մուրադ թագավորի ողիրն էս, կէրթաս կըսես. Խոտաղ թագավորն

կասա՝ էնտեղ օր հինգ դիվան չկանա էնա, ընձի տանա, ես դիվան էնեմ, հինգ թամաշա էնա։

Գրեց.—Դը՛ դարցնք, դացնք։

Էկան, էս մարդ վեց տարին թմե, հըմեն ինչ դրեց, առավ էկավ, տվեց թագավորին։

Թագավոր ղարմացավ, ըսեց.—Կեցցե՛ս դու, խոտաղ թագավոր, էս խմա՛լ դատ էս էրե։

Մնաց։ Մենք հո՞ լատ խաբար տանք՝ էս մարդու թագավորի քաղքից. մեկ կին, մեկ մարդ ժառանգություն չունին, կապրին խըտ իրար՝ ասսու ծանոթ մարդ. թագավորի քաղքի մեջն են, զանգն էլ կզանա, գուզե եղ հեղի կնգա ձեռի մեջ, պտի իրիկ-կնիկ դուռ կոխպեն, մալ թողեն, էրթան, ուրանց ծունդր-աղոթք էրկանով դնան ու գան։

Ջար հեղավ մարդու օրինակին, հիրգուն ա, կին գացե թավլեն կով կթելու, մարդ տուն նըստուկ ա՝ էս շար։ Մարդ դռնեն մտավ, սատանեն ըսեց.—Բարով քե, տանտե՛ր, ղարիբ մարդ եմ, փարա էլ չունեմ, էկեր եմ, պտի տեղ տաս ընձի, էսօր սթրվեմ։

Հինք ռահմով մարդ էր, հելավ օր գնաց ծալքից քեչեն բերեր, էս մարդ ալբալ ուր չարոխ խաննեց, նստեց վըր էդ մարդի տեղաց։ էն մարդ քեչեն բերեց, ըսեց.—Ղոնախ ջան, հելի նստի քո տեղաց վրեն։

— Ցա՛, քյոփողլի՛,—ըսեց.—կոնախ ես ե՞մ քե դու ես։ Կոնախ դու ես։

— Ցա՛,—ըսեց.—Կոնախ դու ես։

Էդ երկուս վժվժացին, կնիկ էլի թավլեն լսեց, ըսեց.—Էս հորի՞ ա կվժվժան, էս ո՞ն ա մտե մեր տուն։

Էս սատանեն էս մարդու օրինակին ա, էդ մարդու շորերից ա վրեն։ Էկավ, ըսկի լխանեց քե ո՞ն ա իրա մարդ. կնիկ խելոք էր, ըսեց.—Դու երկուսդ էլ էսօր իմ ախպերն եք, ընձի ջուլ շատ ունիմ, իրեք տեղ կթալեմ, կքնեք։ Սաբախտան հելնինք էրթանք Սուլթան Մուրադ թագավորի կուշտ, թագավոր ընձի որիդ տվեց, էս ընդոր կնիկն եմ։

Խա՛։

Սաբախտան հելան էկան թագավորի մոտ;

— Թագավորն ապրած կենա,—ըսեց.—դու ընձի կճանչնաս, ես քու երգրից եմ. մկա էս մարդ էկե ընձի ղոնախ, մկա տուն էլ, կնիկն էլ ընձնից կխլա։

Թագավորը էն մեկին տվեց խոսալ, էն էլ խեղճ-խեղճ էլի էտա կսա։

Թագավոր վերցավ էդոնց դիվանն էներ, ըսեց.

— Տարեք էդոնց ջոկ-ջոկ բռնեք։

Տարան, ըսեց.—Ջուր լուս սալդու պես կէքաք, դուբաք, չուր առավոտ ես դրանց դատը էնեմ։

Էկավ, խոտաղ թագավոր հընգավ մտեն, ըսեց.

— Էստուց էլ զոռ դատ չկա, էս ըսոնց դատ չեմ կանա կտրի։

Սաբախտան ոզրին ըսեց.—Գնա՛, խոտաղ թագավորին բեր։

— Վա՛յ, — թագավո՛ր, — ըսեց,—էնի ըմալ խիտրի թագավոր ա. չուր քու գնստ չի տաս, չուր էնոր սինոտներուն գնստ չիտաս, էնի չի գա։ Բերեց հըմնու գնստները, էկավ կայնավ բռաց, քըշին էկան, խոտաղ թագավոր նստուկ ա։

— Հա՛,—ըսեց,—ոզի՛ր, հորի՞ ես էկե։

Ըսեց.—էկեր եմ քեզի կտանեմ։

Ըսեց.—Բերե՞լ ես շոր։

Ըսավ.—Խա՛։

Խաքան էկան, թագավորին խոնարավ, թագավոր կանչեց ուր կուշտ, ըսեց.—Էս դատ դու կտրա։

Գացին թագավորներ բերին։ Խոտաղ թագավոր տվեց խոսալ՝ ալբալ հիմցավ.—Թագավո՛ր, շատ հեշտ դատ ա։—Ըսեց.—Տո՛ւ, քո դռան հառնչ քյառսուն գյաղ խոր փորեն։

Բերին փորին։

Ըսեց.—Ճամփա՛ պողպտե ձգում բե։

Բերին։

— Ըսեց.—Ճամփա, մե ջոջ զաղան քլթքլթան արջիջ բե։

Ժողովուրդ հելած պալատի դուռ կայնած են. կանչեց էդ երկու մարդկանց, ըսեց.—Ով որ էս խոր քառավ հնցավ էն յան, էն յանից քառավ հնցավ էս յան, կնիկն էնդորն ա։

Է՛, խողածին չի կանա. սատանեն քառավ էն յան, քառավ էս յան։

Ըսեց.—Կնիկ քոնն ա—Ըսավ.—Ոն օր բարկըցավ մտավ էսա ձեմի նե, կնիկ էնդորն ա։

Սատանեն բարկցավ մտավ։

Ըսեց.—Արջիջ լցնք վրեն, քալնք խոր, քար դրնք վրեն։

Ղփրտուն հնդավ ու գնաց անդունդ։

Հըմեն տեսան էնի չար էր։

— Բա դու իմա՞լ թագավոր ես, օր չկռնաս դատ ու դիվան էնես։

— Խոտաղ թագավո՛ր,—ըսեց.—կստորադրեմ, անուն իմ ադի, դատ ու դիվան քուն հեղի։

Ըդմալ էլ էրին։ Հըմեն խասան իրանց մուրադին, դու էլ ուրախությենով էքաս քո քոմ ու քոչի վրեն, խասես քո մուրադին։

## 24(33). ԱՂՔԱՏՈՑ ԵԿԵՂԵՑԻ

Մեկ մարդուն ուներ էրկու տղա. էրկու տղից մեկը դրագետ, ուժեղ առևտրական էր, խանութ ուներ, էն մեկն՝ ըռնջպար էր, վար ու ցանր էր։ Ջոջ աղպերն պսակվուկ էր, տղեքներ էլ ու-

ներ, աղշիկներ էլ ուներ. միայն մերն մահացած էր. մնացակ խերն էլ մեծ ծեր մարդ էր։

Էն մեկ օր հինիկ մտավ մարդու քելագ.—Ա՛յ մարդ,—ըսեց,—դու հորի՞ չըսբաժվի քո ախպոր մոդեն. հիմա պտի քո ախպերն էլ կարգես, ահագին ծախս էննեք. դու առուտուր կէնես, փարեն մեր մոտ ա, քու ախպեր չդինա. էրեխեն մերն ա, հողն կըհնդնի մեզիկ, շենքերու շատն մերն ա։ Էնա ծեր ա, էսօր-էգուց ա կմեռնի, մկա հորի չրաժվի՞նք։

— Ա՛յ հինիկ, այ անասված հինիկ, ուտող մննք, հագնող մննք, իմ խեղճ ախպեր կնթա չուր հիրգուն չոլ, գուբա խրտ մըշկուն. ինչ էփես, էնի կուտա անձեն-անձու, կելի կպառկի, իմա՞լ ես թուլ տամ ընձի անաստվածութուն էննեմ, օր բաժվիմ։

— Չէ՛, ես ըմալ ա՝ քեզի կնդութուն չէննեմ։ Վերջ, էննելով, էնելով, ըսեց, համոզեց մարդուն։

Հիրգուն օր էկավ, ըունջպար օր գիքեր, չուր իր աղբեր, ճժեր չնատին, խաց չէր ուտի. էդքան բարեխիղճ էր։

Հիրգուն օր էկավ, տավրին բան տվին, էկան նստան խաց ուտելու, ջոջ ախպերն չէկավ վըր խացին։ Օր չէկավ վըր խացին, էս մարդ ըսեց.

— Հընչի՞ չի գա խացի վրեն։

Ըսեց.—Ինչ գամ խացի վրեն, մեր խաց խարմեր ա։

— Հորի՞։

— Հորի՞,—ըսեց,—խարմեր ա մեր խաց։

— Ա՛յ ախպեր, ընչի՞, ասսուն փառք, դու կաշխատես, ես կաշխատեմ, նոքյարն ունինք, մեր խերն հլա մեր գլխու վրեն. ասսուն փառք՝ քե տղա էլ ունիս, աղշիկ էլ ունիս, իմ խարս լավ հագուստ, լավ օսկե, արծաթե երեք վիղ, քյամար մեջը։

— Չէ՛, չէ՛, ես կրաժվիմ։

Մեկ օր ըսելով, երկօր ըսելով, հելավ ամոթե էս մարդ թողեց գնաց հօդեն քնավ։ Օրըմ, երկու, էն մեկել հիրգուն նստան հուրանց արրուտան ա կկիսեն։

Էն ջոջ ախպերն էլ ըսեց.—Փոքր ախպեր ջան, ինչ կիտաս՝ ես վերցուամ. ես օր կիսեմ, իրեքի շատն իմն ա, ապրուստի շատն իմն ա, դու կիսա, իմալ կկիսես, կիսա։

Ըսեց.—Ես ինչ օր կէննեմ, չխոսաք, իմ ըսած դրա։

— Թուղթ վերցեց, կալամն առավ ուր ձեռք, ըսեց.—Քու գուբան ուր պարագայքով, մեր օչխար գոմուց չելնի, մնա, տավար մնա, էս շենքեր մնա, էն ձին, իմ խեր, ուր ձեռք ջուլ, իմ ձեռք ջուլ մեծ փայ, էս ունեցած մեծ փայ, որ կվերցուս՝ վերցու։

Ախպեր ըսեց.—Իմ ախպեր խելք թռուց, էս ի՞նչ ա կէննա, ուրին ապրուստ չվերցա։

Կնիկ մարդուն խփեց սեգրետ.

— Տո վերցու,—ըսեց,—ըրխ տանա տեսննենք էդ խայուց ինչ կխասկնա։

Բերին բաժանութուն հաստատեցին։

— Խա՛րս,—ըսեց պղղիկ տեքրն,—մուննադ կէննեմ, հելի մեզի խմոր շաղա, պաշար թխա, օր իմ խեր առնեմ, քոշեմ գեղիցս։

Խառն հելավ ուրախ-ուրախ, խմոր շաղեց, գաթա էլ թխեց, խավ էլ մորթեց, ուրախութուննից հելավ գիշերով չլեր կապեց, խետ դրեց վըր ձիուն։ Փոքր ախպերն լալով ախպոր մոտեն, ճժերուն խամբուրեց, ուր խերն առավ, տնից դուրս էկավ։

Մննք խասունք ըստոր թաղավորանիստ քաղաքը։ Քաղաքի կրաղ.

— է խեր ջան սոված ենք.—ըսեց,—դու էլ չլեր թալ գետին, նստի վրեն, հիրգվան ես մտիմ մեջ քաղքին, մե մարդ ջարիմ, տանեմ քե տեղավորեմ։ Քե առնեմ քաղքի մեջ պտոտեմ, ամո՞թ ա։

Խոր դրեց գետին, չլեր թալեց խոր տակ, ընցուց, ձին լարեց ըրխ էթա, մննք գանք քաղքի մեջ։ Էկավ քաղքի մեջ, եկեղեցուց ժողովուրդ տուն կթա։ Մե լավ մարդ՝ տեսքով, բուխարի փափախ գլոխ, խոսավ հառնջ, բարև տվեց։

— Բարի հիրգուն,—ըսեց,—հայրի՛կ ջան։

— Բարո՛վ, որքի ջան։

— Հայրիկ ջան, ընձի մե ծնող կա, քե պես հասակով մարթ ա, մե խատ էլ ձի ունեմ, բերել եմ քաղքի գլոխ. խնդրում եմ քե՝ մե տեղ տաս, տեղավորինք, ես ֆայլություն կէննեմ, բերեմ, իմ խոր կպաշտպանեմ։

Խղջով մարդ էր էս մարդ.

— Արի էթանք,—ըսեց,—իմ տուն տամ ընշանց, գնա՛,—ըսեց։

Էկավ, ուր տուն տվեց նշանց։ Տղեն ուրախուրախ դարձավ խոր յան։

Բերեց.

— Մի թավլի տանք հուրեն։

Էս մարթուն ըսեց.—Էս հօդեն փեշքեշ հեղի ձեզի, կաշխատիս՝ դու գինաս, չաշխատիս՝ դու գինաս։

Էս մարթուն էլ տղա չունի, համա մե լավ աղջիկ ունի։ Էս մարդ էնքան խղճով մարդ էր՝ ուր օղուշաղին, ուր էրեխին թամբախ էրեց.—Բիձի տեղաշոր թախտպա, բիձի տախտ ջրջնա, ավլա։

Ինչ ճաշ էփեն, առաջին քյասեն պտի կնիկ ճամփա՝ բիձեն ուտա, նոր հիրանք լնան էս կերակուրից, կուտեն։

Տղեն կերթա քաղքի նե կաշխատի, օր կա՝

կեղի, օր կա՝ չի էղի։ էն մեկ օր էնքան պատահեց, մեկ բռնող չեղավ, մեկ տանող չեղավ։ էս քաղքին մեկ խատ եկեղեցի կա, շուտվա խունարակ եկեղեցի, գնաց էդ եկեղեցու դուռ նստավ, լաց։ էս մարդ լաց, աստված կանչից—է՜, եկեղեցի ջան, էս ի՞նչ բան էր էրի ես իմ ծերունի խոր գլուխ, պրզի հուր ապրուստից, բերի էս օտար տեղ, ես մե կիլո խացի փող էլ չվաստկի էսօր։

Էնքան լաց, օր թմրութուն թափեց վրեն, գըլուխ դրեց մեկ խատ ննջեցելի քարի վրեն ու քընավ։

Օր քնավ, մեռնիմ էնդոր ղորքին, ղորք կանդնավ ևղվնակի պես տղի գլխի վերև, տղին ձեն տվեց.—Բալա՛, —ըսեց,—քո ձեն, քու աղմուկ հասավ առ աստված, ընդունեց աստված։ Գելնես 10 քայլ էդ գերեզմանաքարից կշափես, մեկ մարմառ քար կա, մե խատ տասնոց օսկի վըր էն քարին ա, վերցուս կբերես, կտանես քո խոր ինչ որ ուզես՝ կառնես, էնա տասնոցն էլի կհնվելնաս։

Տղեն հանկարծ զարթնավ, օր աղոթքրան ա։ Հելավ խաչ խանեց հերես, ծունդր աղոթք դրեց էդ եկեղեցու դուռ.—եկեղեցի՛,—ըսեց,—քե էս բան ճշդրիտ էղավ, ես քեզի շիքեմ էլ ավելի լավ եկեղեցի։

Հելավ գնաց, տեսավ օր՝ ճիշտ օսկին դրուկ ա, հերթվավ եկեղեցու դեմ։

Էս խոսկն է՛լ ըսեց։ էկավ գնաց ճաշարան, մե լավ չանախ առավ, էդ տասնոց օսկին տվեց փունչուն, ուր խասանելիքն առավ, խաց առավ, էլի տասնոց օսկին տվեց։ Տղեն առավ էկավ, խերն շատ էր իշկի ճամբա։ Խաղեն ըսեց, քե.—Հայրի՛կ, մի դեմ հընկի, քո տղեն կգա։

Մեկ էլ տեսավ, տղեն աման ձեռ, խացն հունեի՝ նեղս մտավ։

— է՜, հայրի՛կ,—ըսեց,—մեկ խատ խաղեն էկավ ինձի ռաստ, գիշերվա բան էր, գացեր եմ բաներ եմ, տաս մանեթ առեր եմ, գացեր եմ փուռ քեզի խաց ու ճաշ եմ բերե։

Խանեց խաց կերան։ Խանեց փարեն հանձնեց խոր մոտ, տասնոց օսկին էլ տակը։

Խերն ըսեց.—է՜ բալա՛, դու գողութուն էս դիբեր էս, աչի՛ դու ճշմարիտ ընձի ըսա։

Խոր խոսք չմերժեց.—Հայրի՛կ,—ըսեց,—քեզնն պախեմ, աստուծ իմալ պախեմ. հերեկ չուր հիրկունն պատահեցի, մեկը ընձի բռնող չեղավ. ա՛յ հա՛յ ըսի, գացի եկեղեցու դուռ, մեկ խատ խին եկեղեցի կա, գացեր եմ խամբուրեր եմ էդ եկեղեցին, քունս քաշել ա, քնել եմ, էլ խաբար չըմ եղե։ Պատմեց ուր խոր իր գլխի էկած, ըսեց.—Հայրի՛կ ջան, որոշեր եմ եգեղեցին էլ շիքեմ, վերանորոգեմ ու անունն էլ տը դրեն «Աղբատաց եգեղեցի»։

Խեր ըսեց.—Բալա՛, իմ սոլեր բեր. տասնոց օսկին տու ինձ, քե փորձեմ՝ ճի՞շտ ա կասես։

Խերն առավ էկավ մե դուքան։

Ըսեց.—Հայրի՛կ ջան, քո արխալուղ կտրտուկ ա, քեզի մե պալտո պտի առիմ, չուշտ առնիմ։

Առան հընձեն ինչ, տասնոց ձգեց բիձեն հինըը հուր ձեռով, վերջ խուրդեց, հնվելի փող տվեց բիձին հիքը հուր ձեռով, բիձեն դրեց հուր ծոց, էկավ տուն։ Էկան տուն, նստան։

— Հայրի՛կ,—ըսեց,—հլա քու խուրդեն խան։

Խանին օր՝ էն տասնոց օսկին էլի էն ա։ Խասավ տղի ճակատ պագեց։ էն տեղ խասավ, եկեղեցին իմալ կառուցեց, անուն դրին Աղբատաց եկեղեցի. ժողովրդից շատն օր կերթան, ծունդր աղոթք են տալի և կաղաղակեն, կաղոթեն։

Էս մարդն ըսեց.—Հայրի՛կ ջան, աստուն փառք, մեր փողն կա, չխլսի, մե լավ շենքեր սարքենը։

Հելավ խոսեց, խնդրվավ, լալով էս մարդիկ իրարից անջատվան, հուրանց տուն գացին։

Էս մարդն ըսեց ուր խոր.—Էսբան տարի էն մարդիկ մեզի լավութուն էրին, ես կկթամ լավ պալտոմ՝ էդ մարդու համար կառնիմ, լավ դեյր, շալ կնգան կառնիմ, օտնաման ու շոր աղջկան կառնիմ, ֆայտոն կառաննք, ընանց բերենք մեր տուն պատիվ։

Ըդմալ էլ էրին, բերին խալաթներին, տղեն գնաց բերեց, պատրաստեց։

Մարդն ասաց.—Ա՛յ մարդ,—ըսեց,—հորի՞ ա դու ծախսի տակ կմտիս։

Հելան իրեքով էկան էս մարդի տուն, կերան, խմեցին, էս մարթ բերեց խալաթներն դրեց էդոնց հառաջ։ էս մարդիկ զարմացան, առան, հելան էկան հուրանց տուն, հընդան մարթի տակ։

— էս տղեն լավ տղա չա, չուր մեռնի՝ խաց չմուրա, պտի մեր աղջիկ տանք ըտուն։

Հելան էկան տղի տուն։

Ըսեց.—Հելի էրթանք, մեր կռնախն էր։

Հելան էկան, լավ սեղան էր պատրաստած, քեֆ էրին։

Աղջկա խերն ըսեց.—Իմ աղջիկ ալաչ է, մենք կցանկանանք իմ աղջիկ տանք քու տղին։

Համաձայնվան, խարս բերին, նշանին։ էկան տոլով, դուռնով առան գացին։

Մենք խաբար հո՞ւստ առնինք, խաբար առնինք ախպոր մոտեն։

էն օրի հընդան մալն էլ սատկավ, դուքանն էլ փակվավ, էս խատ տկլոզ, բորիկ, էն տեղ խասավ.—Ո՞ւր էրթանք,—ըսին։

Տղեն դուքներ բերե լցն ապրանք, առուտուր ա կէնա։

Էս մարդ պատահելով էկավ ուր ախպոր քա-

ղաք, ձմերուկն օր կերած թալած, կվերցի կկրծա, հընդև ուլիցի խաւ։ էն օր հինքն էր՝ ախպորհանչչաւ, էն օր ախպերն էր՝ հո՞ւատ ճանչնար, խերն էլ չուշչեր աւ։

Զևն ուվնց.—Ա՛յ ախքատ, արի էստեղ։

Էկավ։

Ըսեց.—Էս հո՞րի էդ կռճոններ կվերցուս։

Ըսեց.—Նայար նմ։

Ըսեց.—Էդ իմալ աղքատ էս, օր չվալ էս քցե քու վիզ։

Բշերու մնկին կանչեց, փող ուվեց, ըսեց.—Ըսուր կտանիք բաղնիս, լավ քիսա կնգաք գահնել, տանիք պախրիմախրի մոտ կթրաշեք, շորեր հրմեն կփոխեք, կխաթուկ ու կառնիք կգաք։

Ինչ որ խաղեն ըսեր էր՝ էրեց ու առավ էկավ, հանձնեց ախպորն։

Մե օթաղ տարավ, ըսեց.—Պուվրն օր կերակուրներ կնգիս, ընձի կռնախ ունիմ, առավոտ էս ճաշն կտանես, հիրկուն՝ էս, ճաշին՝ էս։ Ջլերն էլ տարտախ ու դումաշիչ քցի։

Էս սրան տարավ, հրմեն ինչ արեց, մեկ ամիս ախպորն պահեց, էն մեկն էլավ ավալվա ախպեռն էն մեկիլ օրն խորն ըսեց.—Մենք ղոնախ ունենք, հելի գնա խրտ էնոր գլա էրա, մինչև գամ։

Խեր օր մտավ օթաղ, խեր տղին ճանչցավ, տղեն խոր. լացին, փաթթվան իրար, խարս տեսավ.—Վա՛յ,—ըսեց,—էս ի՞նչ ա էլե։

Մարդը էկավ, կնկին ըսեց.—Մա՛րդ, օչին էկե մեր գլխին,—քո խեր ու մեր կռնախ փաթթվան հիրար, հիրուր քիթ ու բերան ա կկրծին։

Ըսեց.—Յա՛ւ։

Մտավ, նոր հինքն էլ խասավ ախպորն։ Փող ուվեց խոր, ախպոր ըսեց.—Կերթաս իմ խարս, իմ ճժիր կխաթուս, կառնիս գուգաս։

Գնաց, բերեց տուն։

Հըմնուն կանչեց քեֆի, ղոնքաչ, աներ հելան էկան, քեֆ էրին։

Մեկ կարճ ժամանակ հետո, իր աներ ուվեց ախպորն, հինքն գնաց աներոջ տուն։ Նսաան էնտեղ ուրանց դովլաթ վայելեցին։ Վայելե՛ն ձեր որդիք։

## 25(34). ԱՂՔԱՏ ՄԱՐԴԸ

Շատ վաղ ժամանակով մի աղքատ մարդ ա հլնում, ունենում ա մի կին, էրկու տղա. էդոնց դրութուն շատ ծանր կլի։ Ըստիպված մարդ գլնի որ էթա օտարություն։ Սաբահտան գլի կեթա ճանապարհ, շատ կեթա, քիչ կեթա, կհնցի աշխարհաշխար, կհասնի մե խաղենի, կպատմա հուր դրութունը։

Խաղեն կասա.—Ես տաս տարով կընդունեմ։ Տարի խարիր մանեթ պայմանագիր կկնքա, մարդն կվերցու խինդ խարիր մանեթ, կուղարկա հիրանց դեղ։ Ժամանակ երբ կլրանա, դուքյա կասա.

— Խաղե՛ն ջան, իմ ժամանակ լրացեր ա, մունեթ կհենեմ՝ իմ հաշիվ փակես, ես էթամ։

Խաղեյն կըսա.—Շատ լավ, նստի խաց կե։

Խաղեյնի կնիկ դյաթա կշաղա, կուղեն թխեն, խաղեյն կասա.

— Վայ կնիկ, հելի դյնա հարևանից էս ինչ բանը բեր։

Կնիկ գլնի կեթա, խաղեյնը կբերա, հիրա սնտուկ կրացա, մե քիչ օսկի կլցա դյաթի գնտի մեջ, կղանա թունդրա կղղ, կնիկ գուքյա, կասա.

— Ա՛յ մա՛րդ, էդ ի՞նչ ա կէնես։

Կասա.—Ջուր դու էկաը՝ մե դյաթա էլ իմ կողմից թող հըլնի նվեր։

Խաղեյն կէթա, կնիկ դյաթեն կպոկա, կտեսա օսկին. մե դյաթի մեջ մե կուց օսկի էլ հինքն կլցա, կխփա թունդրան կղղ։ Կեփեն կպրծնի, մե խուրջին կբերեն, քե թայ ճամփու խաց, մե թայըն էլ էրեխեքի համար կլցեն, օր տանա տուն։ Ու կպարտավորցուն, օր էս էրկու դյաթեն նվեր կտաս քո տղերքին. փողն էլ կտա, ճամփու կըդնա։ Մե ձի, մե հրացան, մե յափունջի կտա, կհնգի ճամփա, մե քանի մետր հետ չի հետացե, խաղեյն կկանչա.

— Հլա դարձի՛, բան ասեմ։

Կդառնա կգա, կասա.—Ինձ,—կասա,—խարիր մանեթ տու, քե մե խելոք բան ասեմ։

Հասնա կտա. խաղեն կըսա.—Ինչ կլի կլի, դու քու դուզ ջաղդեն չծռես, դի՛ տեր խրտ քեղի, գնա՛։

Էս մարթ կեթա կմտածա, որ խարիր մանեթ խափեց առավ։ Հետ մե հարիր մետր չհետացե, նորից կկանչա, կասա.—Խարիր մանեթ տո՛ւ, քեղ մե խելոք բան էլ ասեմ։

Կառնի, կասա.—Ինչ օր կլի, կլի, ուրիշի գործերուն չխառնվես։

Էլի կեթա, կմտածա.—Խարիր մանեթ էլ տարավ։

Մեկ էլ կկանչա, խարիր մանեթ էլ կառնի, կասա.—Ինչ կտենաս, համփերա։

Կեթա էլի կմտածա.—Իրնք խարիր մանեթ առավ։

Կեթա, մեշի կխասի, կտեսնա մարդիկ են գալիս, ասում են.—Ղաշաղներ կան, թեքվենք էս ջաղդից։ Ժողովուրդ կոլբվի հուրիշ ջաղդով, էսի կհիշա հուր խաղեյնի խոսքերը, հուր ջաղդով կեթա. դուզ ջաղդով մեշից գլի դուս, կնստի կհանգըստանա, կտենա էն մարդիկ թալանված էկան, ըսին.—Էդ ասողներ հենց ղաշղներ են, մեզ խափին, տարան էդ ջաղդով, թալնին։

Կգա, կգա, կհասի մի գյուղ, կերթա մի խանդեյնի մոտ կքնի։ Կտենա մե կնիկ կա, արաբու գլոխ կախած վրից՝ չոքյով ա, շունն հելե ջլերու վրեն, գլոխ դրե վըր բարձին։ Էս ի՞նչ բան ա,— կմտածա, կհիշա հուր խազեյնի խոսքեր, օր «հուրիշի գործին չխառնվես»։ Իմ ի՞նչ գործն ա, հուրանք գինան։ Տեսավ՝ մե օշխրի ջանդակ էլ ա կախուկ, խազեյինն էլ կկանչա ծառային թե.— Մե օշխար մորթա։

Կզարմանա, համա ձեն չխանա։

Օշխարը կմորթե, կերխում կանեն, կքնեն, սաբահտան գլի, օր էթա, խազեյնը կըսա.—Բա դու ինչի՞ չխարցուցիր, էս ի՞նչ ա կտեսնես։

— Է՛, ախպե՛ր ջան, էդ քյո գործն ա, իմ ի՞նչ գործն ա։

Կասա.—Արի գնանք մարաք։

Կերթան կտենա՝ լիք մարդու ջանդակ, կասա. —Կտեսնե՞ս էսոնց, էսոնք քյո նման կոնախ ա էկած. էկել են, ասել են. Ա՛յ մարդ, էս ի՞նչ ա, էն ինչ ա, ես էլ հրմնուն մորթեր եմ։ Դու օր իմ գործին չխառնվար, էսոնց հարստությունից քեզ էլ կտամ։ Դու լավ մարդ ես։

Կգա, կգա հուր խազեյնից շատ շնորհակալ, կխասնի իրենց տունն։ Մութ ուվեր ա, կտենա, էրկու խատ ջահել տղա, մեկ էլ կնիկն կախվեր են թունդիր, կպաչվին։ Մոռացեր ա, օր տղաներ քըսան-քսանխինգ տարեկան են հեղե, հրացան կըխանա, օր էոնց խփա, մեկ էլ կհիշա խազեյնի խոսքերը. «Ի՛նչ կտենաս, համփերա»։

Ջրկրակա, մեկ էլ կլսա օր՝ տղեն կասա «մամա»։

— Վա՛յ, էս իմ տղեքն են։

Լուսամուտ կծեծա, կմտնի ներս, կըսա.— Խուրջին բացե՛ք։

Կբերեն կբացեն, գյաթեք կտա տղերքին, կըկիսեն, կուտեն, ոսկին միջից կթափվի։

## 26(35). ԱԽՊԵՐ ԹՈՒՄՈ

— Կուզեմ էթամ Ստամբոլ։

— Վա՛յ, մի՛ գնա, Ախպեր Թումո, մի՛ գնա. տե՛ս, ինչ էկավ իմ գլխին։ Ես էլ կուզի էթի, հմա ես մացի մի տախտակի, ծովն ընձի վերցեց ու տարավ, իրեք օր ընձի պտոտցուց, իրեք օրից հետո տարավ բցեց ծովու կրաղ։ Իմ աշխատած ոսկին մե տոպրակ էր, դրի վեր էդ տախտակին, հելա։ Էդ ծովու քնարի խետ մե մեծ պալ կա, ոչ կանամ հլնեմ, ոչ բան, մացի լալով, մռմռալով։ Մե խատ խանչալ կար վրես, քաշի էդ խանչալ, էդ պալի հերես ծակի, օտաց տեղ շիքեցի, բարձրացա հելա գլուխ։ Հելա գլուխ, տեսա՝ մե խատ քաղաք ա, մեծ քաղաք. էդ քաղաքի նե պտոտի, ոչ մե հատ բնակիչ չկա, բոլոր խանութներ լիքը, համա բնակիչ չկա։ Գնացի, գնացի՝ տեսա գետնի տակից ծուխ ա կբարձրանա, քանդեցի մտա նե, տեսա մե հատ աղջիկ նստուկ ա էնտեղ։

— Ախչի՛, էս ի՞նչ բան ա, էս գետնի տակ դու ի՞նչ գործ ունես։

Բա.—Մեր քաղաքի վիշապն բոլորին կուլ ա տվե, ես թագավորի աղջիկն եմ, իմ խեր գետնի տակ շինություն սարքեց, ես ըստեղ ա կապրեմ։

(Ախպեր Թումո՛, դու հանդաճ էրա տես, էն ցավերն եմ տեսե, օր սիվտակեր եմ, դու արի ընձի հանդաճ էրա, Ստամբոլ մի գնա,—ըսեց)։

Մացի էդ ախճկա կուշտ, ամուսնացա, յոթուխ տարի ապրանք, մեզի էրկու երեխա հեղավ՝ մե տղա, մե աղջիկ։ էն մե օր ես տղի ձեռն եմ բռնե, իմ կնիկ աղջկա ձեռն ա բռնե, գացինք պալի կուշտ, ծովուն ա թամաշա կէննենք, հանկարծ աշկս առավ տախտակին, օր իմ օսկին էդ տախտակինն էր։

Ըսեցի.—Կնի՛կ, պտի հիճիմ էթամ իմ աշխատանք բերեմ, չթողեմ էթա խետ չրուն։

Կնիկս ըսեց.—Չէ՛, մի գնա, էս քաղաք քե չբավարարա՞, մի՛ գնա։

— Չէ՛,—ըսի,—պտի էթամ։

Հիջա, ոտներս դրի հիջա, գացի խատա տախտակի մոտ, ոտս դրի վըր տախտակին, պտոր ա իմ տոբրակն վերցեմ, շրիդն փեթ էր մըլ ջրուն, ութ տարի ա անցե, շրիդ կարավ, տախտակն ընձի քաշեց ու տարավ մըջ ծովուն։ Տարավ մըջ ծովուն, ես էդտեղնա դիլամ, կինս էնտեղ գուլա, ծամերն ա կփիտա (Ախպեր Թումո՛, դու հանդաջ էրա)։ Ծովն ընձի վերցնց տարավ, տարավ ու տարավ։ Գացի իրեք օր էդ տախտակն ընձի պըտոտցուց, էն մե օր քշեց տարավ մե կողմից դուս տվեց։ Հելա դուս, տախտակ կապի, օսկին թողի վրեն, մե հեռու քաղաք կերևեր, դեմ էրի էդ քաղաքն ու գնացի։ Խատա քաղաք՝ էլի ըղմալ բնակիչ չկա, էդ քաղաքն էլ ա վիշապն ավերե։ Էս յան պտոտի, էն յան պտոտի, գացի մտա խանութներն, սիրտս կմմռա իմ կնգա, էրեխերներուն խամա։ Գացի մտա մե խանութ, տեսա՝ մե լավ բլուլ կա, ես էլ չոբան շատ եմ հեղե, վերցեցի բլուլ, ըսկսեցի փչել։ Տեսա՝ իրեք խատ փարի դռռալեն էկան հիջան իմ դեմ, բրկկեղեն շապկիներ խանեին, էղան իրեք խատ աղջիկ, ըսկըսեցին պարել։ Ես փչի, նրանք պարին, էկան ընձի մոտցան, ձեռ թալի էն մեկեին բռնի, էն էրկուսն փախան, հուրանց շապկներ խաքան ու գնացին։ Էտրան բռնեցի, շապկիը պախի, նորից էդրա խետ ամուսնացա։ Վեց-յոթ տարի էլ էդրա խետ ապրա, էլման էրկու երեխա հեղավ, էլի գնացինք ծովու ղրաղ պտոտելու։ Էլի պատայա էդ

տախտակին՝ իմ օսկին էլ վրեն, հիշա գացի օր բերեմ, էլի շրիդ փտուկ էր, տախտակն ընձի վերցնեց ջրու վրեն, տարավ ու տարավ, խանեց կանուչ. տավար, օչխար կարածան։ Դեմ էրի էդ գյուղին, գացի տեսա մե խատ մարդ, չոքեր քշտեն, էրկու հատ թաղի լծեն, չորոց վար ա կէնա։

— Բարև, ախպե՛ր։

— Վա՛յ,—ըսեց,—խաղար բարի, Թումո՛։

— Ախպե՛ր, դու ի՞նչ դիտես, որ իմ անուն Թումո յա։

— Ես Ոկոն հեղիմ, չգինա՞մ օր դու Թումոն էս.—Դո՞ր ա կէթաս։

— Անտեր, անտիրական կպտտանեմ։

— Ախպեր Թումո՛, կէթաս մեր տուն, ես հիրկուն գիքամ՝ քե կկարգեմ։

— Ա՛յ մարդ, ես գարիր, անտեր մարդ եմ։

— Չի՛, անպայման պի էթաս մեր տուն։

Հելա գացի գեղի մեջ, մտա տուն, բարև տվի, կնիկ մտաես առավ, բերեց խաց տվեց, կերա, նստա մինչև հիրիկուն։

Ոկոն էկավ ըսեց.—Քեզի կարգեմ, ախպեր Թումո։

Հելավ գնաց, ախչիկ ճարեց, կարդեց, տուն տվեց, մնացի, հելա էդ գյուղացի, սկսեցի ապրել։ Աշխատա, էդ գեղի մեջ ապրա, էդ գեղի շալրաքն ինչ ա, դինա՞ս. օր կնիկ մահանա, մարդն կտանեն խատ, կհիջուն, օր մարդն մահանա՝ կնիկ կտանեն խատ, կհիջուն։ Մնաց մի ատ ժամանակ՝ իմ կնիկ մեռավ։ Էհ, օրենք ա, բերեցին ինձ էլ կնդա խատ թաղին, իմ պաշարն իմ խատ, դռա-լեն հիջա գացի գետնի տակ, օր սաղ մեռել ա։ Վա՛յ լըմեն, էս գետնի տակ ես իմ՛ պտի ապրի, մացի էդտեղ մռմռալով։ Կերա էն պաշարն մի ամիս, երկու, պաշարն վերջացավ, անոթություն ինձի հաղթեր ա, հա՛, հա՛՝ մեռնելու եմ։ էն մե օր տեսա՝ վերևից խոսելու ձեն ա կիզա։ Հա՛, ըսի, մարդ ա մեռե։ Բերին հիջուցին, կնիկ սաղ հիջուցին։ Թագավորի տղեն մեռե, կնիկ հիջուցին, արի տե՝ ինչ պաշար ա դրած հետ։ Սկսեցի էդտեղ լավ ապրել, խաբսի հետ պսակվանք։ Մնաց, օրերից մի օր էդ կնիկն էլ մեռավ, մացի մենակ, շատ տանջվա։ (Ախպեր Թումո, շատ տանջվա, դու արի ընձի լաս, Ըսատմբոլ մի գընա, ես գացեր եմ, էդ ցավնեք տեսեր եմ)։ Մնաց մի ատ ժամանակ, մի օր գիշեր էդ մեռելներ հա կգաժրանան, կհիջին գետնի տակ, ես էլ խեռնեը, կհիճինք, մեկ էլ տեսա, գռալեն գացի անդունդ, մեռելներ կթափին գետ, պտի ես էլ հընպի, իմ կնիկ փարին, առավ ընձի հուր թևերին, խանեց դրեց չոր, ըսեց.—Իմ լավություն էսի թըխ հընկնի, հելի գնա, ապրի. ես կերթամ իմ աղգերամի խատ։

Պառկա քնա, քունս առա, հելա տեսա՝ ոչինչ չկա, ամայի երկիր ա։ Գնացի, գնացի տեսա մե խատ վայրենի թափագյող-քյալլագող՝ մե խատ ծառ քյոթախան էրե, դրե վըր ուսին, մե ճղից՝ դել, մեկից՝ արջ ու գազան ա կախե ու գուքա։ Էկավ ծառն շարժեց, ես հընգա, իմ օտեր-ձեռներ կապեց, քաշեց մե ճղի վրեն, դրեց վըր թևին ու էկավ խասավ հուր բնակարան։ Դուռ բացեց, էդ ջանավարներին լոպկեց, խորովեց, կերավ ու վըր քամկին պառկավ ու քնավ։ Առավոտ լուս բացվավ, հելավ, իրեք խոզի էլ էդտեղ դրել ա մանդալեն. ինձ էլ դրեց մանգալեն. էն մեկին օչախ վրեն խորովեց, բերեց կերավ։ Գնաց, հիրկուն էկավ, շիշ խթեց վըր օուց՝ բերնից հելավ, էն մեկ խորովեց կերավ, վըր քամկին պառկավ, քնավ։ Մնաց, էն մյուս օր մնացի ես մենակ. ըսեցի՝ հիրիկուն էկավ, ընձի կուտա։ Ի՞նչ էնեմ, քաշեցի օտս խանի, բայց ձեթխծի քար տվե դռան դեմ, քառսուն մարդ չկանա հիրար տա, չըկանամ դուրս գամ։ Ի՞նչ միջոց գտնեմ. մե տատ տրսխինդ խատ օչխար ուներ, մե խատ էլ ների կա մեծ կուտշներով։ Հելա գացի էդ ներին մորթի, տիկ խանի, մտա մըջ էդ տկին, օչխրի խետ կպատռեմ։ Թափագյողն հելավ տեսավ՝ չկամ, ըսեց.—Յավաշ քե բռնեմ, օրական մե թիքա ուտեմ։ Է՛ հա՛, չմոռնամ ըսեմ, քնուկ տեղ հաշկն խաներ եմ, փջացրեր եմ։ Էկավ մտավ մըջ օչխըրին, չդտավ, էկավ ձեթխծի քար տվեց դեն, մաժեց, քողեց դուս, նորից դուռ փակեց։ Օր փակեց ըսի.

— Թափագյո՛ղ, ես քո ըսենց-ընենցը, ես տկի մեջ ի, փախա՛։

Թափագյողը կսկծու թռավ գալավ վեր, տփվավ գետին ու սատկավ։ Ես հելա ու գացի։ Գացի մե տեղ տեսա մե խատ ձիավոր գյուղի նման գուքա։

Էկավ խոսավ.—Բարև։

— Աստու բարին։

— Ախպե՛ր, ըսկի օչխար չտեսե՞ր ես. ինձ տրսխինդ օչխար, մե խատ ների քյալլագողը տարել ա։

Տեղն ըսեցի, պատմեցի։

Ըսեց.—Ես Իմանի Ձեխախն եմ, կէթաս մեր տուն, չուր ես իգամ,

Գացի տուն, նստա, կնիկն էկավ, մե խատ իսանի չոր կոտ կախուկ ա վղից, մե խատ բիձա էլ կապուկ ա անից՝ մե սլա խաց գլխին ա դրուկ, մի սլա խաց էլ հառեչն ա դրուկ։ Գնացի ըդրանց գոմ, տեսա՝ քառսուն-հիգուն խավի մե օդ կդրուկ, մե օտն ա թողուկ.

— Խաց կերեր ե՞ս, ախպե՛ր։

Ըսի.—Ա՛յ մարդ, քո խաց կուտվի օր ուտեմ,

— Ընչի՞, ախպե՛ր։

— Բա՛ էս կնիկ ի՞նչ մեղաց տեր ա, օր իսնի չոր կոտ կախեր ես վղից։

— Է՜, ախպեր Թումո՛, օր պատմեմ դու ընձի չմեղադնես։ Էդ իմ կնիկն ա, էսի իմ ձիարած սեչիսի խետ սիրողություն կէներ։ Ըսեցի կայնի՛. բերեցի էդ սեչիսին սպանի, կոտ չորցուցի, կախի վրեն, օր իշկա վրեն, խավես խանա։ Էս բիձեն օր կապուկ ա սնուց, իմ խերն ա, իմ խաց երկիր կուտեն, կեթեր հարևանի տնից խաց կուզեր։ Մկա կապեր եմ սնից, մե սլա դրեր եմ գլխուն, մեկ՝ հառեջ, օր հառեջին ուտա, գլխի վրին կհիջու կուտա։ Էդ խավերի օտը կտրեր եմ, որովհետև ցորեն կլցեմ հառեջ հուրանց՝ չուտեն, կեթան հուրիշի բոստաններր, ընձի կքրֆեն, օտները կտրեր եմ, ցորեն լցեր եմ առաջ, ուտեն, ընձի խավկեթ ածան։

— Լավ ես էրե, բա՛։

Նստան, խաց կերան։

Ախպեր Թումո՛, տեսա՞ր իմ գլխի էկած, արի՛ դու Ստամբոլ մէ գնա։

Ըսմալ էլ էրեց, չգնաց։ Զար գնաց հնդի, բարին վըր ձեզի։

## 27(36). ԱԽՊԵՐ ԹՈՒՄՈՆ

Ժամանակով մի մարդ գլի, ծանր ընտանիքի տեր. կտենա օր դժար ա ապրել, կասա կնգան.— Էս էրեխեքին յոլա տար, ես էթամ աշխարհն-աշխարհ ֆայլություն անեմ, փող աշխատեմ։

Կնիկ գլնի մե էրկու խատ գյարե խաց կթխա, կդնա մարդու խետ, մարդ կընթա, կհասնի մի քաղաք։

Ման կգա, արև կմտնի, կթա մե դուռ կտփա։ Կընդունին, կխոսան դեսից-դենից, խաց կդնեն կուտեն, էսի կըտենա՝ վեց խատ ջահել քիֆ կանեն, էս ծեր մարդ էտոնց հառեջ կծառայա։ Կասա.—Ախպե՛ր ջան, խաց կե։

Կասա.—Ձեր խաց ուտելու չէ, ասեք տենամ, ինչի՞ համար դուք ջահել տղաներ, դուք նստած եք, էս ծեր մարդը ձեզի կծառայա, էսի մեղք չէ՞, օր կտանջեք։

Մերը մոտեցավ, ասաց.—Ախպե՛ր ջան, անունդ ի՞նչ ա։

— Իմ անուն Թումո յա։

Ասաց.—Թումո՛ ջան, դու խաց կե պրծի, ես իմ գլխու գյալած քե պատմեմ, դու տես։

— Չէ՛, չեմ ուտե, մինչև չասես՝ չեմ ուտե։

— Դու խաց կե, պրծի, ես կպատմեմ։

Խաց կերան վերջացուցին, էն մյուս ջահել ախպերներ գյացին քնելու։

— Արի, ախպեր Թումո՛, ես քե պատմեմ իմ գլխու գյալած, դու դո՞ր ա կեթաս։

— Ես կեթամ ֆայլության։

— Եթե դու ընձի կլսես, դու արի մի՛ գյնա ֆայլության, ես կպատմեմ դու լսի. դու տենաս մեր ապրուստ, մենք հարուստ ենք, էս իմ վեց ախպեր ինչ էրին, չկրցան իմ վրեն, ես հելա գյացի ֆայլության։ Մենք իրեք հնդեր ինք, գյնացինք աշխարհն-աշխար, մի քաղաք հանդիպանք։ Աշխատեցինք մե էրկու-իրեք տարի, բավականին ոսկի ստեղծեցինք, ու որոշինք տուն դառնալ։ Հելանք էկանք, նստանք մի լոտկա, էկանք հասանք ծովու մեջտեղ, մե փոթորիկ բռնեց. մեզի փոխարեն բերա ափ, տարավ հեռու, հելանք մի քաղաք՝ լի առատ խանութներով, բայց ոչ մի մարդ չկա, տներ դատարկ։ Վա՛յ վավիլեր, ա՛յ մարդ, էս ի՞նչ բան ա։

Ջոմ հիրիկուն ման էկանք, հիրիկուն գյնացինք մե տուն քննանք, առավոտ վեր կեցանք տեսանք՝ մեր մի հնդեր չկա։ Վա՛յ վավիլեր, վավիլեր, էս ի՞նչ օյին էր էկավ մեր գլուխ։ Ախպեր Թումո, դու լավ լսի, օր չեթաս ֆայլության։ Հելանք էս յան ման էկանք, էն յան ման էկանք, մեր հնդեր չգտանք։ Գյացինք մտանք մե պայհաս, լիքը կտոր, հըմա փղուկ ա, վա՛յ վավիլեր, վավիլեր։ Հոգնանք, հիրիկուն էկանք քննանք։ Հառավոտ հելա տեսա՝ իմ մի հնդերն էլ չկա, մացեր եմ ես մենակ։ Ջոմ իրիկուն ինչքյան շուռ էկա իմ հնդերոջ, չգյտա, հիրիկուն գյացի մի հուրիշ տուն քննեմ։ Մե ձեռս կտրի, աղ լցի, օր չքնեմ, մե խանչալ գյաշի դրի կողքս, սպասեցի։ Սպասեցի, մեկ էլ հերթսից նայեցի տեսա, տեսա՝ մե վիշապ լեզուն պարզեց, որ ընձի տանա. բրթեցի էդ վիշապ, էտոր արուն գետ հելավ գյնաց։ Լուս բացվավ, հելա գյնացի, մե շուշաբանդ հանդիպա, խանչալս թալի՝ շուշաբանդի մե յան քանդի, տեսա մի խրեղեն աղջիկ դուս էկավ։

Ասաց.—Իմ յոթ ախպորից ինչ խաբար։

—Էս քաղաք մարդ չկա, մե ճնջուղ էլ չկա, յուրդդ քանդվի։

Վերջապես, մե էրկու օր մացի էդտեղ, էդ աղջկա հետ ամուսնացա, մեզի մի աղջիկ ունեցանք, էս աշխարքի հարստությունն իմ աչք չի գա, էն լոդկի օսկին օր մնաց, իմ հաշկ մացե էդ օսկու վրեն. կնգաս կասեմ, որ էթանք էդ օսկին բերենք։

— Հեսա քեզի չվլներով օսկի կա, ինչի՞դ ա հարկավոր։

Մեր աղջիկ հելավ իրեք տարեկան։ Մի օր հելանք գացինք ման գյալու, գյացինք խասանը լոդկին։

— Այ կնի՛կ, լա՛ տե, յավաշ հըլնեմ էն օսկին բերեմ։

— Այ մարդ, գյործ չունես, քյո ասալած, գյործ չունես։

Չլսա կնգաս, հելա ոտ թալի լոտկեն, մե քիսկն բերի, մե ոտ էլ դրի՝ մեկն էլ բերի, էդ հրն-

դևրներու օսկին էր. կայնի, ասի, հելեր եմ, հելեր եմ, իմն էլ բևրեմ։ Մե ոտ էլ թալի, դու մի ասի, էդ լոսկին փռուկ ա, լոսկին փրխավ, ես մացի մե տախտկին նստուկ, քյամին կայնավ ընձի տարավ։ Իմ կնիկ, աղչիկ լալով մնացին, ես էլ լալով կիթամ, չնմ դինա դոր ա կիթամ։

Ախպեր Թումո, հանդյամ էրա, ընձի լսի, օր չկիտա ֆալլություն։ Վերջապես տարավ, տարավ աշխրհի մե ծերից խանեց. տեսա՝ մե մարդ էրկու շուն լծե, վար կէնա։ Դյացի բարև տվի, ըսեց.— Բարո՞վ, խաղար բարի, ախպեր Թումո՞։

Ըսի.—Վա՜յ վավիլեր, վավիլեր, էս ինչ դինար, օր իմ անուն Թումո էր։

— Ախպեր Թումո՞, արի դու մանճ բռնա՞ վար էրա, ես էթամ բևդի կնիկ ուղևլու։

— Ա՜յ մարդ,—ասի,—բալի ես չեմ կարդվի։

— Չի՜, քևդի կկարդվմ։ Իրիկուն դու չորոց թալես լծան հետև, դու հնդի շներու հետև արի, էտոնք դուբան, մեր դուռ կկայնեն։

— Շատ լավ։

Արևմտոց ա, բևրի չորոցն անջատեցի, էկանք խաստանք մե դուռ։ Էդ մարդ հելավ, ընձի տարավ ներս, ըսեց.—Էսի քեզ կնիկ։

Տեսա մի կնիկ, ատմներ թափած։ Ընձի տվին մե սենյակ, իմ կնգա խետ կապրենք, ֆալլություն կէնեմ։

Մի օր հիրիկուն ասաց.—Ախպեր Թումո՜, դինաս ի՞նչ կա, մեր երկիր էպես ա՝ մարդ մեռավ կնիկ խետ կթաղենք, կնիկ մեռավ՝ մարդը խետը սաղ-սալ կթաղենք, էս բան հիմացի։

Վա՜յ վավիլեր, վավիլեր, ախպեր Թումո, դու լավ լսի, որ դու չնթաս ֆալլությին։

Էրկու տարի հնցավ՝ իմ կնիկ մեռավ։ Բևրին մե քսան օրվա հաց թխին, ճաշ դրին, ջուր դրին, ինձ էլ խետը թաղին. տարան խանին մե սարի գլոխ, քանդին ծակ բացին, խացն հիշուցին, ինձի իջուցին, հետո էլ կնգան հիշուցին, ծակ փակին, գնացին։

Անցավ մի քանի վախտ, տեսա էլի մեռել հիշուցին, կնիկն սաղ ա։ Մարդն դրինք էն չան, էդ կնգչա խետ ամուսնացա։ Տեսա ձեն գուբա, դու մի ասա, աղվսներ սար ծակած, գուբան ջանդրկներուց կուտեն։

Ասի.—Արի էտ ծակից դուրս գանք լուս աշխարհ։

Աղվսներ էկան ջանդակ քյաշելու, ես ջանդակ գոշտի, ես էլ հելա դուս, փակեցի ծակ ու չալա փախա։ Դընացի, գընացի՝ տեսա մի սուրու օշխար, գյացի խասա օշխրին, տեսա մի քյոռ քյալադյող ընձի բռնեց, թևերս կապեց, թալեց ծառի վրևն, ծառ խանեց դրեց ուսին տարավ։ Տարավ խասուց Մհերի դուռ, տարավ էրի մեջ, ընտեղ էլ էրկու խորի կային, օշխարն էրեց ներս, քյար տվեց հերի դեմ։ Ծառը ջարդեց, կրակ տվեց փուռն, էն մեկին կարմրցուց, կերավ, ջուր խմեց, էկավ պառկավ ու քընավ։ Առավոտ վեր կացավ, օշխար քյաշեց գընաց։ Էդ հնգերոջս խետ ատմներով մեր կապեր բացինք, նստանք։ Արևն առավ մտել, Քյալագյողն էկավ, էն հնգերոջս խորոշեց, կերավ, քընավ։ Մտածեցի հընեմ Թամոյ մորթեմ (օշխրի մերին ա). տիկ խանի, շիշը դաղի, խթի հաշկը, քյոռացուցի։

Բռռաց.—Հա՜յ, քե խումխում կուտեմ։

Տիկը խյաքա, լուս բացվավ, հելավ էթելու. դռան մեջ կայնավ, ես որպես Թամո՝ հնցա փախա, գյոռացի։—Քյոռ քյալագյող, Թամոյ ես մորթի, հաշկդ ես խանի, հելա դուս։

Էդ բռավ երկինք, հիջավ գետին, պլթաց։ Ախպեր Թումո՜, դու լավ հանգաճ էրա, օր ինձի լսես, չնթաս ֆալլություն։

Փախա, մեկ էլ տեսա մե կապուտ ձիավոր հընդև իմ հետև. էկավ, էկավ բարևեց,—դո՞ր ա կեթաս։—Դու քյոռ քյալագյողի ի՞նչն ես։

— Ըսացի.—Ոչինչ էլ չեմ։

— Էն հառացի սիվտակ օշխարն կտեսնե՞ս, էն օշխրներն իմն են։

— Ես սպանել եմ ընդուն։

— Օր ըմալ ա, դու նստի իմ ձին, գնա մեր տուն, Սուբաթան[1] Իմանի Չիլախի տուն։

Նստա, խնծա դյացի Սուբաթան, գտա Իմանի Չիլախի տուն։ Տեսա օր էդ տուն խավեր հընմեն մե ոտնեն են, մե բիձա կապած սնին՝ խաց սլով լիք, ջուրն կողի խետ, մե կնիկ էլ կա արաբի գըլոխ վրից կախուկ ա։ Սպասի չուր հիրիկուն, տեսա Իմանի Չիլախն էկավ։ Նստանք սկսինք խոսել,—էս կնիկ իմ կնիկն ա, իմ կնիկ ինձի կթողեր, կեթեր արաբու խետ սիրով կէներ։ Ես էլ նրա գլոխ կտրեր, կախեր եմ վրից։ Էսա մարդ իմ խերն ա, ես հարուստ մարդ եմ։ Էս մարդ իմ հեռած չնլած կթողեր, կերթեր խլրի տուն, վրիկ կխմեր. էնտոնք էլ ընձի կանպատվին, կըսին.— Գետին մտնես դու, քո խոր հընչի՞ չես պախի, օր կգա մեր վրևները կուտա։

Ես էլ կապեր եմ սնից, թող ուտա, նստի։ Տենաս մեր խավեր՝ մե ոտնեն են. մեր կուտ կթողին, կեթին հարևանների խավերու կուտ կուտին։ Ես էլ հմնու ոտներ կտրի, որ մնան մեր դռանը։

— Թումո ախպեր, ես իմ կապուտ ձին կըբախշեմ քե, դու նստի գնա ձեր գեղ։

Էդ մե ձին տվեց ինձ, նստա էկա մեր գեղ։ Ես ըմալ ի ծերացեր ի՝ ոչ ոք չճանչցավ ինձ։ Էս

---

[1] Ադրբեջանական գյուղ Վարդենիսի շրջանում (Ծ. Կ.)։

իմ ախպերներ՝ ճոլ ախպերներն են, ես պստիկն եմ, դու արի, իմ ձին տես։

Ընձի տարավ գյոմ, ասաց.—Դու ընձի լսի, մի գյնա ֆայլության, ես էլ էս ձին կտամ քեզ, դարձի ձեր գեղ, ձին ծախա քյո երեխեքին պահա։

Ես լսա էդ մարդուն, դարձա էկա, կարողացա միջոց ստեղծել ապրել։ Ասուց իրեք խնձոր՝ պատմողին կհեղի, մնացածն էլ ում որ հավանությունն կտա, թող նրանք ուտեն էդ խնձոր։

## 28(37). ԷՐԿՈՒ ԱԽՊԵՐ

Ավալ ժամանակ էրկու ախպեր ղլնեն, մեկը քյասիբ, մեկն էլ հարուստ։ Ջմեռ էդ քյասիբ ախպերն ասաց.—Ախպե՛ր ջան, մուննաթ կչնեմ՝ ձին տաս, էթամ աշխատեմ։

Ախպեր տվեց, ասաց տա՛ր. իսկ ընդհանրապես ասուված քյասիբի խելք կառնի հառնչ, նոր հետո ապրուստ։ Քյասիբ ձին տարավ մեշեն, մե խաստ ծառի բյոթուկ կապեց ձիու պոչից, շատ էկավ, քե քիչ, հնդյավ մե փոսի մեջ, ձիու պոչ բյոթից կտրավ, թողեց ըտե, էկավ ախպորն ասաց։

Ախպերն ասաց.—Դու իմ տուն բյանդեցիր։

Բռնեց դյոռծն տվեց դատարան։ Էդ ժամանակ էլ դատարան հուրիշ ոայոն էր, կանչեցին դատարան։ Վեր կացան էրկու ախպրով դատարան էթալու, դյացին խասան մե ուրիշ ոայոն, մութ տվեց. դո՞ր էթան. դյացին մե տերտերի տուն՝ հեղան կոնախ։ Էդ տերտերի կինն էլ պատկի, թազա տղա յա բերե։ էն օր հարուստ ախպերն էր, բերին ճաշ տվին, կարդին հարգեցին, ինչ օր քյասիբ ախպերն էր՝ խացի փշրանք, ժամիկ-մաժիկ դրին ըտոր հառնչ, կերավ։ Տեղերը քալին փոի դյլոխ, ջոջ ախպորն էլ կարդին տեղաշոր քյցին, քյնան։

Պղղի ախպերն շատ մտածեց, տրտրվավ, դլորվավ հընգավ էրեխու օրրոցին, էրեխեն մռավ։ Տերտերն էլ տվեց դատարան։ Հասան մե մեծ կարմունջ, կարմունջի բարձրություն մոտ խարիր հիցուն մետր ա, ասաց.

— Էսդուց լավ բան չկա, յավա՛շ ընձի թալեմ էս կարմունջից, մեռնեմ, վերջանամ։

Դու մի ասա էդ գեղի գլավու խեր հիվանդ ա, դրած սել, կարմունջի տակով կտանեն։ Էդ մարդ թռնելու բաշտեն՝ հընգավ էդ մարդու վրեն, էսի մեռավ։ Էդ էլ հուր գործ տվավ դատարան։ Ախքատը մտածեց, օր հուրին կգնդակահարեն, ճամփուց մի հատ կլոր ջոջ քյար գտավ, դրեց մե շորի մեջ, դանեց ղոլթուղ։ Դատարան լսավ, էդ մարդը քարը հանեց շորով ցույց տվեց, դատավորն հիմցավ օսկի յա, հաշկով էրեց, յանի պախա։ Դատավոր լսավ բոլոր գործերը, ասաց.—Ձին մնա էս մարդու մոտ, չուր պոչ բուսի (այսինքն ձին մնաց քյասբին)։

Տերտերոջ գործ լսավ, ասեց.—Թող էթա, քնի տիրուխանու կուշտ, չուր տղա հեղի.

Ռեսի տղեն էլ ասաց.—Թող էս մարդ էթա կարմունջի տակ կայնի, դու կարմունջից քեզ թալ էտոր գլխի վրա, սպանա։ Որոշում վերջնական ա։

Ռեսի տղեն ասաց.—Էս մի քսան օսկին կըտամ դրան, ես չեմ կանա կարմունջից ինձ թալեմ, բալքի չհնգա էդ մարդու վրա, հընգա գետին։

Ախպերն ասաց.—Էսա մե ճանդ օսկին ա՛ռ, իմ ձին տու, պոչն հո՞ւսա բուսի։

Տերտերն էլ ասաց.—Էս մի քիսակ օսկին առ, ես նամուսի տեր մարդ եմ, էդ խայտառակությունից վազն արի։

Տվին էդ մարդուն։

Դատավորն կանչեց էդ մարդուն.—Արի տեսնամ, ախպե՛ր ջան։

Ասաց.—Պարոն դատավո՛ր, էթե դու ընձի որոշիր գնդակահարության, հուրիշ իլաճ չկար, էս քյար դրեր ի ծոցս, պտի տի քյո ճայտի մեջ, զանի քեզի սպանի։

Դատավորն ասաց.—Փա՛ռք քե ասուված, օր ես փրկվեր եմ։ Ա՛յ տղա, արի մի քիսիկ օսկի տամ քե, գնա քյո էրեխեք պահա, քե ես փրկվա։

Էս աղքատը հարստացավ, սկսեց լավ ապրել։ Ջարն ընդե, բարին ըստե։

## 29(38). ԵՐԳՈՒ ԱԽՊԵՐ

Էն օր մեծ ախպերն ա, կարդված ա, էն օր փոքր ախպերն ա՝ ալար ա։ Ջոջ ախպեր տուն կկառավարա, պղղիկ ախպերն խոսաց վրեն.—Քու տուն ակոլի, դու կտանես մեր մալ էժան կկորցուս, կիպաս։

— Ախպե՛ր, էսա մեկ նդն էլ դու կտանես ծախնես։

Հելավ տարավ մի քաղքի մեջ։ Դու մի ասա՝ ըզտեղ իրեք ախպեր են, քոսութեն կչնեն, դալալ են, էժան ապրանք կառնեն։

Էն օր մեկ քոսն հանդիպավ, ըսեց.—Ախպեր ջան, էն հորթիկ չծախե՞ս—Իմա՛լ,—ըսեց,—հորթիկ։

Բա էսի հորթիկ ա՞։

Ջծախեց. առաջ անցավ։ Էն մեկել ախպերն ըսեց.—Էս կովը չծախե՞ս—Իմա՛լ,—ըսեց,—կո՞վ ա։

Էն մեկել պղղիկ ախպերն ըսեց.—Ախպեր, էդ էծ չծախե՞ս։

Վերջ, էդ մարդու խելքն առան, էժան տվեց, էկավ։

Ախպերն ըսեց.—Իմա՛լ ծախիր։

— Էժան։

Հելավ գնաց մեկ հարուստ մարդու մոտ խընդրվավ, ըսեց.—Ինձի մեկ խատ օսկի տուր, խինդ օրից եղնա կրերեմ։

Էս մարդ մեկ խատ տասնոց օսկի տվեց, ըննաց մեկ բյավառցու հանդիպավ, որ մեկ խատ լավ էշ կծախաու։ Առավ էկավ բաղա փալանով։ Հելավ սարախտան էկավ։

Ջոջ քոսն հելավ հառնջ, ըսեց.—Էշ ծախու յա՞։ —Ի՞նչ ա դին։

— Երկու խարիր օսկի։

—Հորի քու էշ օսկի յա կիրքա՞։

— Այո՛։

Դնաց ախպոտոցը կանչեց, չուր կգան, էս մարդ օսկին դրեց էշու ու, եկան քոման վրեն։ Էշին դանեց, էշ ադռեց, օսկին օձն թռավ, վերցին՝ օղորթ օր օսկի յա։

Ըսեց.—Ավադացի՞ք։

Ըսին.—Խա՛։

Դու մի ըսե օր էդոնք թագավորի խաղինեն կգողանան կրերեն։ Տարան, շուտ խամբրին, էրկու խարիր օսկին տվին, էշն առան։ Բերին ջոջ ախպոր տուն, ըսեց.—Տարեք լավ չոնջա դրեք հառնջ, կուշտ ուտա, նոր օսկին կիտա, անորի չիդա։

Բերին էմա՛լ կերցուցին, էշ կանղա, առան վարցն հընդան վրեն։ Է՛, օսկին դո՞ա կիրքա, օսկին չկա ինե։—Հելեք էրթանք, բռնենք սիրոջ սպանենք։ Էշ ծախողը գնաց, տեսավ մոտբներ աղվես ա բռնած, էրկու աղվես առավ, էկավ տուն։ Էսի ևը էլ առավ։ Մե աղվես տարավ խետ, մեկն էլ կապեց ամբարու էդ իրեք քոսեն դոնեն մտան, կնիկն ա տուն,—բարի լո՛ւս, քո մարդ հո՞ւր ա։

— Դացե վար կէնա։ Դարի դլսեն ա, մեռնիմ իմ աղվսուն, խոքունդ ա, քե չէ՝ կճամբեխ, կկանչի (հինք սովրցուցեր ա կնգան)։

Ըսեց.—Աղվես ջան, գնա՛։

Քաղբի շներ հընդան աղվսու հետու էդ մարդ խասկցավ, աղվես շլթեց, եղներ տվեց հառնջ էկան։ Տեսան, աղվեսն, հավատացին։

— Ոսոտ ջան, քու աղվես պտի տաս ընձի։

— Ա՛յ մարդ, իմ ձեռ ու ոտ իմ աղվեսն ա, ես իմա՛լ կիդամ։

Էրկու խարիր օսկի տվին, առան։

— Ըսեց.—Մի՛ քիլցուցնք, նեղացուկ ա, գրկնք տարեք։

Առան տարան, հիրդուն մութ տվեց, ըսեց.—Ախպե՛ր, մենք էրթանք մեշոկ դանենք, խապինեն կլլնանք, աղվսուն դու ճամփա, առնենք գանք։

Էնտոնք գացին, աղվես թողեց, գնաց՛, գլնա՛ց։ Էս մարդիկ հելան էկան,— տեսան՝ աղվես կուրխուկ ա։

Էս մարդն էլ գնաց մեկ խատ եզան փուչիկ առավ, արուն լցեց, առավ էկավ, նեշուն դուդուկ մ՝ առավ, ըսեց.—Կնի՛կ, ես գինամ, էնդոնք մկա կիդան. օր դուքան, ես էս փուչիկ կկապեմ քո վզի լալիկներու տակ. օր էկան, դու խառվի հիրար, ես կերստեմ, քի կմորթեմ, դու խոխռա, հետո ես դուդուկ դնեմ քո օռուն, կիչնեմ, դու քոի հելի նատի։

Համլա, համլա էրեց։

— Ախպե՛ր ջան, էդ դուդուկ ծախա մեզի։

Առան էկան, տարան ջոջ ախպոր կնգան մորթին, դուդուկ փչին. ի՞նչ սաղնալ, ի՞նչ բան։ Հելան էկան դոր մոտ։

Սա փախավ, էդոնք հընդան հետևից։

— Հորի՞ ա կկախես,—մի հովիվ խարցուց։

— Մեր թագավոր մեռե, էսոնք հնգած իմ հետև օր բռնեն, տանեն էնեն թագավոր, ես չուդիմ։

— Ա՛յ մարդ, արի դու հելի չորան, ինձի քցե տանեն։

Շորերը փոխին։ Չորնին բռնին, կզանեն կըսպանեն։ Հետո դարձան էկան չորնի կուշտ, տեսան էդ մարդն ա, ըսին.—Յա՛, քի Թալինք չո՞ւր։

—Ձեր տուն սուքլի, պտի օրմ՝ էլ հառնջ Թալիք, խրեղեն թագավոր ծովու տակ օլխար էր կցրվեր, տվեց ինձ առա, էկա։

— Դը՛ արի, մեզ էլ տար Թալ ջուր։

Տարավ Թալեց, սըկան, խեղդվան, պրծավ դրանցից։

## 30(39). ԱԼԵՔՍԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ

Առաջ ժամանակով մե խատ քյասիբ պառավ կլի։ Էնի կունենա մե տղա, անուն Ալեքսան, էրկու խատ էլ ղալ։ Էդ Ալեքսանի սովորությունն ի՞նչ էր. հմնօր սարախտան գլներ, իր էրկու ղալն կանեներ չոլ կարածցուցեր, կրերեր։ Մե օր էլ հեղավ, կախվավ Թունդիր, չդնաց։

Մերն ասաց.—Բալա՛ ջան, ախար օրն հելավ կիսօր, հելի էդ ղալերն տար չոլ։

Տղեն ասաց.—Ջայնմուն հլնի, իմ հնգրներ հիսօր կէթան քեֆի, դու կասես ղալեր տար պախա, չի՛մ էթա։

Մերն տեսավ օր հնարք չկա, ասաց,—Օր ըթար ա, հելի էս մի ղալ տար ծախա, գնա քո հնդերներու խետ քեֆ էրա։

Ալեքսան հելավ, ուրախ-ուրախ ղալու մեկն վերցնց, տարավ բաղառ, օր ծախա։ Բաղառով մեկ բոռաց.—Լավ ղա՛ղ, լավ ղա՛ղ։

Վաճառականներից մեկը կանչեց հուր խանութի, ասաց.—Տղա՛, ղազ քանի՞ ա, կասես։

Ալեքսանն ասաց.—Խազի՛ն, դու գիտես, ինչ կտաս՝ տուր։

Վաճառական ղազն վերցրեց, տնտղեց, դրեց դախլի տակ, ձեռն տարավ հետև, բերեց՝ մե՛ սիլա տվեց տղի հերսին։ Ալեքսան լալակինուկ թողեց հելավ դուս։ Գնաց էստեղ, էնտեղ, մի կտոր խաց ճարեց, կերավ, չուրի օր մինավ, գնաց տուն։

Մերը ասաց.—Բալա՛ ջան, կերխումդ անուշ հլնի։

Ալեքսան ասեց.—Ադե՛ ջան, սաղ հլնես, լավ կերա-խմեցի։

Էն մեկել սաբախտան մերն ասեց.—Ալեքսա՛ն ջան, դը՛ եկի էս մե ղազ բռնե, տար պախա։

Ալեքսան ասաց.—Ջայնմուն հլնի, էն վախտ հլա երկու խատ էր, կտանի. մկա էս իմ եքա ջանդակն առնեմ, հնդնեմ էտ մե ղազու հետևի՞ց. չե՛մ էքա, հեսօր իմ հնգերներ կէքան ֆռալու։

Մերն տեսավ օր հնարք չկա, Ալեքսանին ասաց,—Օր էքար ա, հելի էս մե ղազն էլ տար ծախա, գնա՛ քո հնգերներու խետ ֆռա։

Ալեքսանն հելավ ղազ վերցեց, գնաց համան վաճառականի մոտ, ասաց.—Լավ ղա՛զ, լավ ղա՛զ։

Վաճառական ասաց.—Տղա՛, ղազն քանի՞ս կասես։

Տղեն ասաց.—Խազի՛ն, դու գիդես, ի՛նչ կուտաս՝ տուր։

Վաճառական ղազն առավ, դրեց դախլի տակ, ձեռն տարավ, բերեց՝ մե՛ սիլա տվեց տղի հերսին։

Ալեքսան լալակինուկ դուս եկավ, մե կտոր խաց ճարեց, կերավ, կայնավ իրիշկեց, չուրի վաճառական խանութ փակեց։ Վաճառական խանութ փակեց, էդ երկու ղազն վերցեց, գնաց տուն։ Ալեքսան ընդավ վաճառականի հետևից, գնաց մըտավ վաճառականի տուն՝ սրախ։ Վաճառական օր մտավ տուն, կնգան կանչեց, ասաց.—Կնի՛կ, էս երկու ղազն սաբախտան կմորթես, մեկն թաքավորի լայաղի կեփես, մեկն էլ վալիրի լայաղին կէփես, կդնես ոսկե թասի մեջ, աբռշումն շորն էլ կքաշես վրեն։ Ես սաբախտան խանութի աշկերտներուց մեկին կուղարկեմ, կուտաս, բերեն։

Ալեքսան էս խոսակցությունն օր լսավ, թողեց հելավ դուս։ Սաբախտան, երբ օր մե քիչ արև բանցրցավ, Ալեքսան գնաց վաճառականի տուն, վաճառականի կնգան ասաց. —Խանը՛մ, խազեն կասեր հէրեկվա ղազեր, օր տվեր եմ էփելու, եթե հազր ա թո՛ տաս։

Խանըմն հելավ ղազերն դրեց ոսկե թասի մեջ, աբռշումն շորն էլ քաշեց վրեն, տվեց տղին։ Ալեքսանն էլ հելավ դուս, մտածեց, ասեց.—Օր էս ձևի էքամ տուն, ճամփեն կարող ա ժողովուրդ տփեն, ձեռքցս առնեն։ Լավն էն ա՝ թասն ու շորը դնեմ ծոցս, ղազերն էլ բռնեմ ձեռներս, էքամ։ Թասն, մեկ էլ շոր դրեց ծոց, ղազերու մեկն բռնեց մե ձեռ, մեկն էլ մեկել ձեռ, վազավ տուն, տվեց մորն ու ասաց.—Ադե՛, բռնա, ղազերու մե մաս բերեր եմ։

Թո Ալեքսան ղազերն ուտա, մենք խաբար տանք վաճառականին։ Վաճառականն էլ հելավ, ծառաներուց մեկին օղորկեց տուն, օր ղազեր բերա, հինքն էլ գնաց թաքավորի ու վալիրի հետից։ Գնաց վալիրին, մեկ էլ թաքավորին կանչեց, բերեց խանութ։ Էկավ ի՞նչ տեսավ. տեսավ օր ծառան ղազեր չրերե։ Կանչեց ծառային, եղելություն հիմցավ, մե թարով թաքավորին, վալիրին հարգեց, պատվեց, ճամփու դրեց։

Ալեքսանն էլ ղազեր կերավ, հելավ կպավ մոր յախեն, մորն ասաց.—Ընձի մե ձեռ ախչկա շոր ճարա։

Մերն էլ հելավ էս հարևանից, էն հարևանից, մե ձեռ ախչկա շոր ճարեց, բերեց տվեց տղին։ Տղեն շորեր խաբավ, դառցավ մե չտեսնված ախչիկ, գնաց մտավ համան վաճառականի խանութ։ Վաճառական տեսավ էդ աղջկան՝ աղլխման գնաց, ասաց.—Ախչի՛ ջան, ի՞նչ ա կուզես։

Ախչիկն ասաց.—Ի՞նչ պտի ուզեմ, եկեր եմ օր հիրուր խետ էքանք բաղնիս, լողկնանք, հիրուր առնենք։

Վաճառականն էլ չնացավ, հելան ապրանք առնողներուն շուտ ճամփու դրեց, ախչկան ասաց. —Ի՞նչ կուզես, ասա։

Ախչիկն մե քանի ատրեղ լավ դեյրի կտոր վերցեց, մե դալիր սապոն, վաճառականի խետ գնաց բաղնիս։ Լողկնալու վախտ վաճառականին լավ տփեց, չանդակ կապտցուց, շորեր խաբուց, խանեց դուս, բերեց թալեց բաղնսի քուշեն, հինր էկավ տուն։

Վաճառականի կնիկ շատ բանդ հելավ, տեսավ օր հուր մարթն չկա, հելավ գնաց թաքավորին խաբար տվեց, օր մարթն չուրի մկա չէկե տուն։ Թաքավոր հուր պահականերուն օղորկեց վաճառականին շուտ գալու։ Պահականեր հելան ընդան շուտ գալու, էկան տեսան՝ բաղնսի մոտից մե մարթու աքոց ա կուքա. լուս վառին տեսան օր վաճառականն ա, վերցին, տարան, տվին վաճառականի կնգան։ Սաբախտան լուս բացվելու պես, Ալեքսանն հելավ կպավ մոր յախեն, թե.—Ընձի մե ձեռք բժշկի շոր ճարա։

Մերն հելավ ընկավ էս հարևանի, էն հարևանի տուն, մե ձեռ բժշկի շոր ճարեց, բերեց տվեց տղին։ Ալեքսան շորեր խաբավ, հելավ գնաց վա-

ճառականի դռան մոտով ֆռաց։ Էդ վախտ վաճառականի կնիկ հելավ դուս, տեսավ օր ճամփով բժիշկ ա կինգնի, ձեն տվեց բժշկին, բժիշկ հետ դառցավ, խառցուց.—Ի՞նչ ա կասես։

Կնիկն ասաց.—Պարոն բժիշկ, մե խիվանդ ունեմ, էրթանք, տե՛ս։

Բժիշկն ասաց.—Մենակ տենալու համար հարիր մանեթ փող պտի տաս։ Կնիկն ասաց.—Ի՞նչ կուլես՝ կուտամ, մենակ արի, տե՛ս։

Բժիշկն մտավ ներս, խիվանդին տեսավ, ասաց.—Սեն կուզես էս խիվանդ լավնա, պտի հիցուն օր ընձի վախտ տաս, քաղաքից էլ դուս մե խաս շենք քրնես, հիցուն խաս էլ պահակ տաս, օր ըս մարթուն լավցում, տամ քեզի։

Կնիկն համաձայնվավ, քաղաքից դուս մե խաս շենք քրնեց, էրկու ձեռք տեղաշոր տարավ դրեց շենքի մեջ, հիցուն խոքի էլ սալդաթ վերցեց պահակություն էնելու համար։ Դե խիվանդն ի՞նչ խիվանդ էր, օր Ալեքսան չկանար սաղցուցեր. հինք տփեր էր, հինքն էլ պտի լավցուցեր։ Խիվանդին տարավ քաղքից դուս, քառասունին օր պախեց, հիցուններորդ օրվա վրեն սալդաթներուն ասաց.—Դացի՛ք վաճառականի կնգան խաբար տվիք, ըս սաբահատան գա, հուր մարդուն սաղ-սալամաթ տանա։

Սալդաթներ եկան քաղաք, դե հիցուն օր հուրանց աներ չին դացած, հիրար խետ պայմանավորվան, օր սաբահատան շուտ ժողվինք մեկտեղ, էքանք վաճառականի կնկան ասինք, օր վաճառական լավցեր ա, դնա՛ բեր։

Ըս սալդաթներ էքան հուրանց գործին, մինք խաբար տանք Ալեքսանիցյ։

Ալեքսանն էլ, օր սալդաթներուն ճամփու դրեց, հելավ մե խաս առջի լավ արեց, բերեց վաճառականին մոռթեց կոր-կոր էրեց, կախեց շենքի պատերուց, տեղաշորեր, կառավաթներ կապեց հիրուրից, շլկեց, դնաց տուն, տվեց մոր։

Սաբահատան շուտ, բարի լուս բացվավ ձեր վրեն, գոռ-գոշում, լաց-կոծ վաճառականի կնգա վրեն, վաճառականի կնիկն էլ հելավ ուրախ-ուրախ դուխդմուլիկան վերցեց, դնաց մարթուն բերելու։ Գնաց, ինչ տեսավ, օր մարթուն մոռթած ա, կոր-կոր կախած ա պատերուց։ Լալով հետ դարձավ, էկավ թաթավորին դառ էրեց։ Թաթավոր շատ հեռոտավ, հելավ գնաց խաղինի դուռ բացեց, ընդամեն ութ խաս անգին քար ուներ, բերեց տվեց ութ սալդաթի ձեռ, ասաց—էս քարեր կառնեք, գնեք ճամփեներու վրեն, կկայնեք. ոն օր էկավ, կդավ վերցեց, կուտաք հառեչներդ կբերեք, մեր դռեն էնիկ ա։

Սալդաթներ հելան քարեր վերցին, տարան դրին ճամփեներու վրեն, կայնան։ Ալեքսան էկավ, տեսավ ժողովուրդ քոմած ա, թամաշայա կէնեն։ Մեկիկ խառցուց, թե.—էս ի՞նչ պատմություն ա։ Ասեցին օր՝ թաքավոր հրաման ա տվե սալդաթներուն, ոն օր էս քարերուց կդի վերցա, էնի թաքավորի դռեն ա, ընդոր կբռնեն, կտանեն։

Ալեքսան գնաց մե ջուխտ քոթոթ չարոխ ճարեց, տարավ ճխտեց մազութի մեջ, խաքավ, էկավ ութը սալդաթի հառեչով հնցավ, ութը անգին քարն էլ դողցավ, գնաց մե խավլաթ տեղ ոտներու տկից պռծուց, տարավ տվեց մոր։

Հիրիկուն օր էրը մթնավ, սալդաթներ իրիշկին տեսան՝ անգին քարեր չկա, շատ զարմացան։ Հելան, շատ տխուր գացին, թաքավորին եղելություն ասացին։ Թաքավոր շատ յեհոտավ էտ սալդաթներու վրեն, անպատվեց, աշխատանքից ազատեց, կարգադրեց, օր ըտոնց բռնեն, թալեն զառներ։ Հիրիկուն օր ժողովուրդ քաղաքից խախընդան, գացին քնան։

Թաքավոր մե խաս սիսնոյ դավա ուներ, դավեն խանեց Թողեց դուս։ Դավի սովորությունն էլ էն էր, ոն օր էդ օր գողություն էր էրե, կէթեր, կնստեր եդ մարթու դուռ։

Գիշերվա մե վախտ Ալեքսան քնուց հելավ, մոր խանեց վեր, ասաց.—Ադե, կուզեմ հընեմ դուս, բայց շատ ա կվախենամ։

Մերն ասաց.—Բալա՛ ջան, ինչի՞ յա կվախենաս, լուսնակ գիշեր ա, հելի, արի։ Տղեն մոր շատ ղոռեց, թե կվախենամ, մենակ չեմ կանա հընեմ դուս, մերը ստիպված հելավ, տղին տարավ դուս։ Օր դուռ բացին, տեսան դավեն չոքուկ ա հուրանց շեման հառեչ։ Մերն ասաց.—Բալա՛ ջան, հնչի էսի ի՞նչ ա, օր կվախենաս։

Տղեն ասաց.—Ադե՛, էսի թաքավորի սիսնոյ դավենն ա, սաբահատան օր տեսան դավեն մեր դուռն ա, ընձի կղանեն կսպանեն։

Մերն ասաց.—Բա՛ բալա ջան, իմա՞լ էննեք։

Տղեն ասաց.—Ադե՛, պտի մոռթենք։

Ալեքսան բերեց դավեն, մոռթեց, տարավ լցեց տան մեջ խոր, էկավ, դինջ քնավ։ Սաբահատան լուս օր բացվավ, թաքավոր հելավ տեսավ՝ դավեն էլ չկա, հրաման տվեց.—Ոն օր հուր դավու մսից մե կտոր բերա, բերողին հուր կշռով մեկ օսկի կուտամ։

Դու մի ասա, տղի մորքուր խաբար էր, օր թաքավորի դավեն հուր քրոջ տղա Ալեքսանն ա մոռթե, ասեց.—Հընեմ էքամ, իմ քրոջ խափեմ, մե կտոր միս բերեմ տամ թաքավորին, էդքան օսկի առնեմ. ընդուց հետո ինչ կընի, ըս հընի։

Ալեքսանն էտ վախտ բաղաո կֆռեր, բայց հաշկն տան յանն էր. մեկ էլ իրիշկեց տեսավ, օր հուր մորքուր վռաղ-վռաղ կէթա հուրանց յան։

Տղեն հնգավ կասկածի տակ, ասաց.—Էս

ի՞նչ բան ա, օր հեսօր իմ մորքուր գնաց մեր տուն, էսքան վախտ հնչի՞ չէր էթե։

Քո տղեն հուրին խամար ֆռա ու մտածա, մենք խաբար առնենք տնից։ Էրկու քրոր, օր հանդիպան հիրուր, շատ ուրախացան։ Ալեքսանի մորքուր հուր քրոչ շատ ստիպեց թե.—Պտի մե քանի կտոր միս տաս, տանեմ՝ խառսն խիվանդ ա, միս ա կուզա։

Քուրն չուվեց, ասեց.—Ջունեմ։

Օր շատ ստիպեց, սիրտն մոմռաց, մտավ խորից մե քիչ միս կտրեց, տվեց քրոչ ու քամխեց օր հանգարծ Ալեքսանին նշանց չիտաս։ Ալեքսան մեկ իրիշկից տեսավ, օր մորքուր տնից հելավ, էկավ հուրանց տան յան։

Ալեքսան գնաց հառնչ կտրեց, ասաց.—Մորքուր ջան, էտ ի՞նչ ա թևիտ տակ։ Մորքուրն ասաց.—Հե՛չ, բալա՛ ջան, խարսն շատ խիվանդ ա, հելա գացի մեր էս քամբախ բազառ, բան չկառցա ճարի, մե քանի խատ քիշմիշ եմ առե, տանեմ խարս չայ խամ։

Ալեքսան ասաց.—Մորքուր ջան, զաթի սիրտըս քիշմիշ էր կուզեր, մե երկու խատ տուր՝ թալեմ բերանս։

Մորքուր չուվեց, օր Ալեքսան շատ դոռեց՝ մորքուրն ասաց.—Ալեքսա՛ն, քեզնից պախեմ՝ ասուց ի՞նչ պախեմ, ձեր տնից ա գուրամ, մե էրկու կտոր միս ա կտանեմ։

Ալեքսան ասաց.—Ի՞նչ միս։

Մորքուրն ասաց.—Դալի մսից ա։

Ալեքսան իրիշկից կող-կուշտ, տեսավ՝ մարթ չկա, շատ եռստավ մոր վրեն, ասաց.—Քուր եք, բայց քաֆր եք. ես հիրիկուն թաքավորի դավեն մորթի, լցի խոր, ուտող ո՞ն ա, օր էտ մի թիքեն ա տվե։ Դառցի էթանք, մե բուլ դնեմ թևիտ տակ, տար քո ճժեր ուտեն։

Մորքրոջ դառցուց տարավ տուն, մոր վրեն հեռստավ, ասաց.—Ես ձեր պես քաֆր քուր չի տեսե, բա՛ էտ եքա դավի միս ո՞ն ա կուտա, օր դու քո քրոչ մե թիքա միս ես տվե։

Մերն ասաց.—Բալա՛ ջան, դուղն ասած՝ քեզնից եմ վախեցե, ըտոր խամար քիչ եմ տվե։

Ալեքսան ասաց.—Դը՛ մոի, խորից միս կդրա խան, ես մեքիչ իմ մորքրոջ խետ խոսամ։

Մեր օր մտավ միս խանելու, Ալեքսան մորքրոջ յախալամիշ էրեց թե՝ պտի լեզուտ խաննես պաքեմ։ Շատ օր ըստիպեց, մորքուր լեզուն խաննեց, Ալեքսան բերան թալեց լեզուն, քոքանց կտրեց, միս ձեռից առավ, լավ ափեց, տնից խաննեց դուս։ Մորքուր լալով, բերնից արուն չռալով գնաց կայնավ թաքավորի դանգտաբարի մոտ։ Պահակնեք գացին թաքավորին դլոխ վեր բերին, կայնան, ասին.—Թաքավոր ապրած կենա, մե կնիկ լալով էկե կայնե գանգտաբարի մոտ, բերնից էլ արուն ա գուգա, կուզա գա քո մոտ, մկա ի՞նչ կասես, թողնք գա՞, թե՝ չէ։

Թաքավոր ասաց.—Գացե՛ք, մե էրկու խատ էլ դուք զարկեք վզին, քո քողա էթա, էս իմ սըրտի փիս վախտ՝ ըտոր գանգատ կնգնի՞ հիրուր։

Էտ ձեն գնաց խասավ հուրիշ թաքավորություն։

Հնցավ մե առժամանակ, հուրիշ թաքավորություններուց անընդհատ նամակ ա գուբա էտ թաքավորի վրեն, թե՝ «Դու իմա՞լ թաքավոր էս, օր մե խատ գող չես կանա բռնես»։

Էտ թաքավոր ստիպված հրաման տվեց. «Ոն օր էտ գողություն էրեր ա, գա պարզ ասա, իմ աչիկ կուտամ հուրին»։

Ալեքսան հիմցավ օր թաքավոր հրաման ա տվե, հելավ գնաց թաքավորի մոտ, մանրամաս ինչ օր ես ձեզի եմ պատմե, հինքն էլ էտ հմեն պատմեց թաքավորին։

Թաքավորն ասեց.—Ալեքսա՛ն, եթե էտ հմեն դու էս էրե, էն վախտ դնա, էս մեր հարևան թաքավորի խողից մե խատ գոնե քար գողցի բեր, ես օր հավատամ։

Ալեքսան ասաց.—Թաքավոր, կուզես հուրին գողնամ բերեմ, բայց մենակ իմ պահանջ պտի բավարարես։

Թաքավորն ասաց.—Քո պահանջն ի՞նչ ա, ասա։

Ալեքսան ասաց.—Ես կուզեմ մե խատ իծու փոսա, օր ամեք մե մաղից մե խատ գանդուլակ կախուկ հընի։

Բերին էտ փոսան շինեցին, տվին Ալեքսանին։ Ալեքսան հելավ մե ձեռք խին շոր խաթավ, էտ փոսան դրեց մեշոկի մեջ, բորիկ ընկավ ճամփա, գնաց՝ արևմտից խասավ էտ թաքավորի շենքի մոտ։ Էտ վախտ, էտ թաքավոր հուր բալկոն կայնուկ էր. տեսավ օր բասիր տղա յա, կանչեց բերեց տուն, խաց տվեց, կերավ, վագիրին կարքագրեց՝ բոխերիկի մոտ ջուլ թալեն, ինք սարխատան քողա էթա։ Բերին ջուլ թալին, տղին տարան քնացուցին, հուրանք էլ գացին քնան։ Գիշերվա մե վախտ տղեն հիմցավ, տեսավ օր պալատի ժողովուրդ քնուկ են, մտավ թաքավորի քնելու տեղ, տեսավ օր թաքավոր քնուկ ա, յավաշ մեշոկի մչից փոսա խաննեց քաշեց պլոխ, մե խատ ժիշվավ, օր ժիշվավ՝ գանգուլակներ ձեն ավին։

Էտ վախտ թաքավոր ասաց.—Հիսո՛ւս Քրիստոս։

Տղեն ասաց.—Զարհումա՛ր, սուս մ'աց, Գափրել խրիշտակն եմ, էկեր եմ քո խորին կատնեմ։

Թաքավորն ասաց.—Դաբրիճել խրճշտակ չան, դոնն քող տան օսյաթ էննեմ, նոր խոքիս առ։

Տղեն ասաց.—Չէ՛, ոչ մե օսյաթ, արդեն խոքիդ կառնեմ։

Էս վաղդ տղեն իրիշկեց տեսավ՝ մե խատ շոշ սնդուկ ա էտտեղ. բերեց թաքավորին, դրեց սնդկա մեջ, շալակեց ու շենքից դուս եկավ դրա իրանց չերկիրը։ Ճերկ հասավ ուրանց ժամու մոտ։ Դնացին թաքավորին ասին, թե.—Ալիքսան եկեր ա ժամու մոտ, քեզի կկանչա։

Թաքավոր հելավ հուր ժողովրդին ժողվեց, եկավ ժամի մոտ։ Ալիքսան էս վախտ փոստ քաշեց գլոխ, ժխշվավ. որ ժխշվավ՝ թաքավորն ասաց.—Հիսո՜ւս Քրիստոս։ Թաքավորն որ ասաց հիսուս քրիստոս, Ալիքսան ասաց.—Ցա՛, պահրեմա՛ր, մե հայչքատ բաց տես՝ որտեղ ես։

Էս թաքավոր աչքեր բացեց, տեսավ հուրիշ երկիր ա. էս վախտ էս մեկնել թաքավոր մոտցավ էս սնդկա մեջ պառկած թաքավորին, ասաց.—Տեսա՞ր, էս էլ մեր քաղքի գողն ա, որ դու ամոթանք կուտիր ընձի, կասիր, թե ի՞նչ մարդ ես, որ մե գող չես կանում բռնես։

Էս թաքավորն ասաց.—Ապրի՛ էս տեսակ գող, ի՞նչ օր խոսք ես տվե, էրա՛։

Բերին թաքավորի աղջկան տվին էս տղին, յոթ օր, յոթ դիշեր խառնիխ էրին, Ալիքսանին դառցուցին թաքավոր։ Ընդունք խառան հուրանց մուրադին, դուք էլ խառնեք ձեր մուրադին։

## 31(40). Է Ր Ի Կ

Գլխի-չլխի, յոթ ախպեր դլխի էն մեկին պըտիկ գլխի. ջոշ ախպերներ դոր կեթան, դլնգնի հետևներ, ընդոնք էլ չեն քողե։ Կեթան մե խատ չոլ-չիման տեղ, չայիրն կքաղեն։

Մե խատ դև դուբա (դա դևին էր պատկանում), տղեներուն կասա.—Էդ ի՞նչ ա կէնեք։

Տղեներ կասեն.—Լավ ա կէնենք։

Կասա.—Ձեր մեջ դրագտա չկա՞։

Կասեն.—Չէ՛։

Մե խատ նամակ կգրա, պատի ախպոր՝ էրիկին, կասա.—Էս նամակ ատր, ատր իմ կնդանու։

Էրիկ կարթալ դիտեր, ճամփին կկարթա օր՝ գրուկ ա. «Հիրկուն խասի՝ հիրկուն մորթա, սաբախատան խասի՝ սաբախատան մորթա»։

Տղեն նամակն կփոխա. «Հիրկուն խասի, բալաք եղ հիրկուն մորթա, սաբախատան խասի՝ սաբախատան կմորթես, կեփես, կօղորկես»։

Էդ կնիկ եղ կմորթա, կեփա, տղեն կրերա։

Դև կասա.—Էդ ի՞նչ բան ա։

Տղեն կասա.—Էփեր էր, բերի։ Հետո քնելու վախտ դև յորդան կթալա յոթ քրոջ վրեն, կարդնտ՝ յոթ ախպոր, որ ջոկվեն, գիշեր մորթա։

Էրիկ ախպերներուն կասա.—Հելե՛ք փախենք, դև գիշեր մեզ կմորթա։ Ախպերներ չեն համաձայնվեն։ Էրիկ դլնի կարպետ կփռխա ախչկներու վրեի յորդնի խետ։ Դև չիմնալով՝ քրերուն կսպասնա, կեթա յոթ օր կքնի։

Էրիկ կասա.—Հելե՛ք փախենք, դև հելավ, մեզի կսպասնա։

Կփախեն ըտեղից կեթան։ Էրիկի ջոշ ախպեր կնախանձի ընդոր գոշտուքյան վրեն, կուզա գլոխն ուտա։

Կեթա թաքավորի մոտ, կասա.—Դիվուն մե ձի կա, իսկական քո լայազին ա, էն էլ մինակ էրիկ կանա բերա։

Թաքավոր գ'րամայա էրիկին, օր ձին բերա։ Էրիկ կեթա տենա, ձին դիվու հոգեն կապուկ ա։ Կխանա ճար, ոտներուն քեչա կկապա, օր ձեն չլնի։ Դռան մոտ ձին կխրխնջա։ Դև կասա.—Պառա՛վ, էրիկ ձին տարավ։

Էրիկ ձին կթողա, կփախի կմտնի փոստերու տակ։ Դև գլնի տենա, ձին հուր տեղ կայնուկ ա, ձիուն կտփա, թե հնչի՞ սթից ձեն խանիր։ Սրկրորդ անգամ էրիկ ձին կխանա, կխեծնի, նոր ձին ձեն կխանա։

Դև կասա.—Նոր տարավ։

Գլնի տենա՝ էրիկ տարավ, կասա.—Կերար չայիրս, բալաք եղա, կերար յոթ քուրս, կերար ձիս, խմուն քոնուն քո մնա։

Էլման ախպեր կեթա թաքավորի մոտ, կասա.—Բա՛ որ համայիլ բերա՞։

Թաքավոր գ'րամայա որ բերա։

Կասա. ծոց դրուկ ա, իմա՞ր բերեմ։ Ստիպվածի կեթա, տենա՝ լույս հնցուկ ա, հուշիկ ձեռ կմտու դիվու ծոց, դև պառվուն կասա.—Պառա՛վ, քո խերն անիծես, հեղի, էրիկ համայիլ տարավ։ Էրիկ կփախի։ Մեկ էլ դևն սութ քուն կդնա։ Համ էրիկ ձեռ կմտցու, որ վերցա, դև կբռնա։ Կապկեն սնի։ Սաբախատան գևն համայիլ կդնա տուն, կնդան կասա.—Էտոր լավ կեփես, որ քրքրվի, դամ՝ ուտեմ։

Կնիկ փուռ կդնա, գազան թալա վրեն, էրիկն սնից կհարձկա, կուզա թալա մեչ, էրիկ կասա.—Նանե՛, եման գլնի, կկռտեմ, հլա տե՞ս։

Կուզա համ տենա, էրիկ պառվուն կթալա ջուր, կեփի, խանա փեստերով, կտնգա պատի հեռնա։ Կասնի համայիլ կտանա, կուտա թաքավորին։

Դև գուբա կդնդան կտենա, կասա.—Շան տղի կնիկ էրիկին համ՞լ ա կերե, ատմներ մացի դուս։

Ձեռ կուտա, պառավ գնդնի, կասա.—Վա՛յ, էրի՛կ, կերար չայիրս, կերար բալաք եղա, կերար

յոթ քուրս, կերար ձիս, կերար համալիկս, կերար պառավս, իմուն քոնուն ըո մնա։

Ախպեր կկթա թագավորի մոտ, կասա.—Ըա՜ որ դիվուն բերա՜։

Վերջ, տղեն ստիպված կկթա, թագավորից կվերցու մըխ, մե խատ ուրաք, մե խատ սղոց, հուր շորերն էլ կփոխա, կմտնի դիվու մեշեն, կշխկշխկցու։ Դև գուբա, կասա.—Ձա՜, ղուշն հուր բևով ըստեղ չեկեր, դու ի՞նչ գործ ունես ըստեղ։

Կասա.—Մե խատ կոտն անիծած էրիկ ա մեռե, կասեն դիվու մեշից դագաղ շինա։

Դև կկդրա բետ-բետ ծառներ, տղեն կսարքա, բայց կասա.—Ասես ինչքա՞ն հլնի ընդօր բոյ։

Դև կասա.—Իսկական իմ բոյին ա, ես կճանչնամ։

Տղեն կասա.—Դ՚ը մե խատ մտի մեջ, տենամ։

Հմա՜ դև կմտնի մեջ, տղեն կմխռնա։

Դև կասա.—Դը՚ բացե՜մ։

Կասա.—դո՞ր բացեմ, կո՝ էկեր եմ, քե տանեմ։ Ճոպան կթալա, կշկա, կկթա կդնա քաքավորի հառեչ։ Հաշկի տեղ էլ էր թողե, քաքավոր հալկեր որ կտենա, կվախենա, կասա.—Տարե՜ք։

Տղեն կտանա, բենդին կլցա, կվառա։

Էրկու խնձոր հընգավ, մեկն ընձի, մեկն էլ քե։

## 32(41). ՔԱՋԱԼ ՏՂԵՆ

Դեղի, չեղի, մե կնիկ գեղի, ըտոր Քաչալ անվոր տղա գեղի։ Էտ տղի քառու կնիկ սիրող կէնա, հուր տան լավ ուտելիքներ կվլեցու սիրողին, իսկ փշրներ կդնա մարդուն։ Քաչալի քառին դուբա քըրոչ մոտ կպատմա, որ հինքն ինչքան ալուր կբերա, կնիկ կէնա կուտ-փշուր։

Քուր կասա.—Ըն քեզի ճար էնա, Քաչալն կէնա։

Քաչլուն քառին կտանա հուրանց տուն։

Էտի գուբա կասա.—Քառու կնիկ, հաշկերս բան չտենա, որ կթաս ժամ, ասա բալե հաշկերս բացվի։

Քառու կնիկ կթա ժամ, Քաչալն էլ գոխտու կթա հետևից։

Քառու կնիկ կասա.—Ժա՜մ, ջան, Քաչլու հաշկեր լրիվ բովի, էլ ըսկի բան չտենա։

Քաչալ ցածր կասա.—Բովավ, բովավ, գատ չտենա։

Վաղի գուբա տուն, մեկ էլ քառու կնիկ կասա.—Ասեցի ժամուն, հաշկերս կբացվի։

Քաչալ կասա.—Սաղ հլնես։

Մե օր էլ քառու կնիկ հուր սիրողին կբերա տուն, Քաչլուն կասա.—Նստի ըունդրա շուրթ։

Հետո եղ կդնա ըունդրան շուրթ, կթա ջրու, օր գա սիրողին ճաշ էփա։ Քաչալ գլնի ըունդրա վրևի տալցուկ եղ կլցա քնուկ սիրողի բերնի մեջ. սիրող, հեսօր էս մեռե, ըե վաղ, կմեռնի։

Քառու կնիկ գուբա ճաշ կթփա, կուգա սիրողին խանա վեր, կտենա՝ մեռուկ ա։

Կասա.—Քաչա՜լ, էս ի՞նչ բան ա, մեր հերթից մե խատ մեռուկ մարդ ա բերած ըալած, իմա՞լ էննեք, բա էս ի՞նչ շիվարուրեն էր։

Քաչալ կասա.—Քառու կնի՜կ, հաշկերս բացվան, ես կանամ օգնեմ։ Քառու կնիկ էտ լավ ճաշեր կդնա տղի հառեչ, լա՜վ կուտա։

Քառու կնգան կասա.—Տե՞ս ինմա ըալեմ հերթից, մի վախեցի։

Քաչալ գիշերվա ժամու 12-ին էդ սիրածին, կառնի կթա ըտոց դռան կուշտ, կասա.—Դուռ բացեք, ես Ալոն եմ, ըե չէ՝ հերթից ընձի կթալեմ։

Կտանա, վռազ հերթից կթալա, կփախի։

Սաբախտան կթան հմեն ժամ, կասեն.—Ախչի՜, Ալոն հուրին հերթից ըալե, դուռ շուտ չբացած։

Կնքներուն էլ էտ պիտի։

Լուս օր կբացվի քաչալ քյառու կնգան կասա.—Բեր դեչրիտ տակից փոստ կապենք չոքերտ, օր լաս, տաս չոքերուտ, կասեն.—Էս ի՞նչ ջիգերով կնիկ ա, չոքեր ջառքնեց։

Քառու կնիկ կթա մեռլի տուն, կսկսա լալ, չոքեր տփել։

Քաչալ կթա ըտէղ, կասա.—Դռան մոտ մեկտ կայնեք, բան ասեմ. ոչ ներսից դուս էկող հլնի, ոչ էլ դրսից ներս մտնող, բան կասեմ։—Կասա.—Ոն էրեց, ոն չէրեց, փոստով չոքեր կնիկն էրեց։

Քառու կնիկ կասա.—Դննե՛ք, դննե՛ք, ես էքամ։

— Կասեն,—նստի-նստի։ Դուքան կատուկեն՝ ըտոր կբռնեն։ Քաչալն էլ քառուն կպրծու ըտրուց։

Խերն ընդեղ, բարին էլ ըստեղ։

## 33(42). ԱԴԱՀ ՏԵՐԴԵՐ

Ավալ ժամանակ մե տերդեր ղլնի, շատ ժլատ, համ էլ ագահ։

Օրերուց մե օր դուկա տիրուխնուն կասա.—Տիրուխնի, ես կթամ հուրիշ աշխար աշխատեմ, ըստեղից բան դուս չիգա։

Տիրուխնին կուզա խաց սարքա, օր դնա խետ, տերդեր հուր ժլատությունից հուրանց տնից խաց չվերու, կասա. «Ուրեմ, չկարցա մեկին խափի, խաց առնի, օր տնից տանե՞մ։ Անոթի-ծարավ ղրնգի ջադեն։ Շատ կթա, ըե քիչ կթա, մեկ

էլ հանգչին ձեն կառնի, օր մեկն կբռնա.—Տերդե՛ր, տերդե՛ր, կայնի էքանք։

Տերդեր կկայնեի, էտ մարդ դուկա խասի, կասա.—Օրշնա ի տեր։

— Տերդեր կասա,—Աստված օրշնա։

Տերդեր կխաբցու ըտոր.—Ի՞նչ մարթ ես, դո՞ր ա կնթաս։

— Կասա,—ես բժիշկ եմ, կնթամ աշխատելու։ Տերդե՛ր—Բա ես էլ կնթամ աշխատանքը։

Կնդերանան, շարունակեն ջաղդեն։

Տերդեր կխաբցու.—Ի՞նչ խոնար ունես, օր բժիշկ ես։

Դոխտուր կասա,—ես որ ուզեմ, մեռել էլ կըսաղցնում, մինակ դու աղոթես։

Տերդեր հուր մարթի մեջ կասա.—էս ի՞նչ լավ հնդավ, բոլ փարա կաշխատենք։

Մե քիչ էթալուց հետո էտ մարթ կասա.—Տերդեր, տերդե՛ր, էտա խացեր բռնա քո մոտ, փորս ցավաց, դու յավաշ-յավաշ դնա, ես գումամ կխասեմ։ Տերդեր խաց կվերցու, մեկ էլ գիշկա՝ էտ մարթ չկա, լայլող բացա, տենա օր իրեք բոքոն ա։

Տերդեր վռաղ-վռաղ մեկն կուտա, կասա.—էնի գիտա,—մե յանեն էլ կգնչա, մեկ էլ կտենա՝ հընգերն էկավ։ Մե քիչ էթալուց հետո խասան մե հահպրի։

Դոխտուրն ասաց.—Տերդե՛ր, անոթի չե՞նք, մե քիչ խաց ուտենք, էքանք։ Նստան հահպրի մոտ, խաց բացին, օր ուտեն, մարթն տեսավ, օր էրկու բոքոն ա, մեկն չկա։

Ասաց.—Տերտե՛ր, ես տնից իրեք բոքոն ի վերցն, մեկն հուր ա՞, դու կերա՞ր։

— Որթի՛, վալա-բիլա, աստված, քրիստոս, իմ կարք վկա, ես խաբար չեմ։—Տերդե՛ր, բոքոններ ես եմ վերցն, կապն բերե, մեր մոտն էլ հուրիշ մարթ չնդի, օր ուտա, բոքոններն էլ տվեր եմ քո մոտ։

— Վալլա-բիլլա, իմ կարք վկա, ես խաբար չեմ։

Վերջապես, ջաղդեն շարունակեն։ Գացին խասան մե ծովու, պտի ծովու վրավով հնցնեն, բայց ոչ լոդկա ունեն, ոչ նավ։

Բժիշկն ասաց.—Տերդե՛ր, պտի ծովու հերևով թևլանք, էքանք։

Տերդեր ասաց.—Կխեխտվենք որթի։

— Չէ՛,—ասաց,—տերդե՛ր, ես էթամ, դու իմ հետևից արի, քո գործ չէ։ Խասան ծովու մեջտեղ, տերդեր տեսավ, օր չթաղվի։—Ասաց.—Որթի՛, էս ինչ դուբան ջաղդա ա, ոչ քար կա, ոչ էլ թուփ։ Հընգերն կայնավ ասաց.—Տերդե՛ր, դուդն ասա, բոքոն դու ես կերե՞, թե չէ՝ կխեխտեմ քե։

Ասաց,—Որթի՛, իմ կարք վկա, ես խաբար չեմ։

Էրկու անգամ տերդրոշ մտուց շրու տակ, խանեց խեխտամախ էնելով, ասաց.—Տերդե՛ր, մի՛ հորթվա, ճիշտն ասա, թե չէ՝ կխեխտեմ։

— Տերդեր կխախեխտ նորից հորթված,—Աստված, քրիստոս վկա, ես խաբար չեմ։

Շարունակին ճամփեն։ Ծովուց դուս եկան, մտան քաղաք, տեսան օր խազարավոր մարդիկ ժողված՝ մեռել ա կտանեն թաղելու։ Խառցուցին, թե ի՞նչ բան ա, պատասխանին, օր թաքավորի թաք տղեն նագաստան մեռե։ Գացին գերեզմներ։

Բժիշկ տերդրոշն ասաց.—Տերդե՛ր, ես ըտոր կլավցում, միայն, որ ապերացի էնեմ, դու աղոթա։

— Հո՞ւր ա ըթա բան էնես, որթի՛,—ասաց տերդերն։ Բժիշկն մոտցավ թաքավորին, ասաց.—Ես քո տղին կսաղցում, ես բժիշկ եմ։

Թաքավորն ասաց.—Եթե դու իմ տղին սաղցուս, իրեք ղանդուլուկ դավա բեռ օսկի, դավեքն էլ խետ, կուտամ։

Տերդեր քիչ էր մացե ուրախությունից պատռե։

Բժիշկն բերեց տղի փոր եղեց, ինչ-որ բաներ հեռացուց ու փորն կարեց։ Տերոշ ասաց.—Արի՛ աղոթա։

Տերոշ աղոթքից հետո թաքավորի տղեն հելավ նստավ։ Քեֆ-ուրախությունից հետո թաքավորն իրեք նիշուն դավարեռ օսկի տվեց, վերցին գացին։

Տարբեր քաղաքներու, մեկել գեղերու բազա մեռյներ սկսեցին սաղցուցել ու ստացան յաբա փող-փարա։

Ժլատ տերդեր հուրին-հուրին միտք էրեց, թե որ ես պտի աղոթեմ, օր մեռել սաղնա էլ հնչի եմ ըտոր էրե ինձի հընգեր, հազր ես փորն էլ կեղեմ, կկարեմ։ Բաժվան հիրարուց։

Մե գեղի մեջ իշխանի տղա էր մեռե, տերդեր դնաց, ասաց.—Ես կլավցում։

Բավականին մեծ դումար խոստացան ու սկսեց մեռլի փոր եղել։ Ձղեց հիշկեց ժողվեց կարեց, սկսեց աղոթել, ինչքան աղոթեց, ինչքան չորավ հելավ, մեռել չսաղցավ։ Իշխան կարգադրեց ըտոր կախել, ասելով՝ քանի օր մեղի խաչտառակեց։ Տերոշ տարան կախաղանի մոտ, շրիդ քցին վիզ, տերդեր մնաց կախ թփրտալեն։ Էտ մոմենտին հուր հնգեր բժիշկ խասավ բռնեց, բանցըրցուց, ասաց.—Տերդե՛ր, դուդն ասա, բոքոն դու ես կերե՞, օր ճիշտն ասես, քե կփրկեմ։

Տերդերն ասեց.—Աստված, քրիստոս, երկինք, գետին ես խաբար չեմ, մունաթ կչենամ՝ ընձի փըրկես։

Շրիդ կդրեց, տերոշ ձեռ բռնեց, տարավ իշխանի մոտ, խնդրեց, որ առանց հուրին ա էրե

էտ գործողություն, դուց չփրկվե տղեն, մկա ինքն կսաղցու։ Բերեց թագա տղի փոր ճղեց, հիշկեց, ինչ որ բան հեռացուց, նորից կարեց։ Տերոչ ասաց.—Աղոթ՛։

Տերդերն աղոթեց, տղեն ծմրկտաց, հելավ վեր ասկոտվ.—Վա՛յ էս ինչքան եմ քնե։

Ուրախությունն հընգավ գեղով մեկ, մեծ գումար տվին տերոչն ու բժշկին ու գացին։

Բժիշկն ասաց.—Բոլ ա, ինչ օր աշխատեցինք, էթանք մեր երկիր։

Տերդերն ասաց.—Ա՛յ բալա, հաղր կաշխատենք, դո՞ր էթանք։

Տերոչ ծակ հաշկ լա չէր լցվե։

Էկան, սաղ փող-փարեն բարցին դավեքին ու հընդան ճամփա։ Էկան, էկան խասան ծովափ, օր ծովուց հընցնեն։

Բժիշկն ասաց.—Տերդե՛ր, հիճի՛, դավեքի բեռներ հիճունք, դավեք բաց թողենք էթան, օսկին էլ մենք առնենք էթանք, քանի օր դավեք չեն կանա ծովն հընցնեն, կթաղվեն, կխեխտվեն։

Քիչ էր մացե ժլատ տերոչ սիրտ պայթեր, ասեց.—Դոնե մարթ ճարինք ծախինք, ափսոս չե՞ն։

Բժիշկն ասաց.—Մարթ հո՞ւր ա ըստեղ, փո՞ղ ենք տվե, սիրտդ կցավա։

— Բա օսկին իմալ տանենք,—ասաց տերդեր։

Բժիշկն ասաց.—Ես կշկնամ, քեզ էլ կդնեմ վրեն, կառնեմ կթամ։

Բերին սաղ օսկիք ջվլներով կապոց էրին, բժիշկ շկնց, տերդերն էլ նստավ վրեն, ծովու հերսով էկան։

Տերոչ հաշկ մնաց դավեք.—Վա՛յ որթի, էս ինչ օյին էր խանկր իմ գլոխ, լուսս քոռներ։

Բժիշկն հաշվի չառավ, էկան մինչև ծովու հորթլախ, բժիշկ տերոչ մե քանի դան մտուց ծովմ մեջ խեխտախտ էնելով, խանեց, ասաց.—Տերդե՛ր, դուն ասա, րոքոն գո՞ւ ես կերե, քե կխեխտեմ։

— Իմ կարք վկա, աստված, քրիստոս վկա, ես խաբար չեմ, մունաթ կչնեմ՝ ընձի չխեխտես։

Մովուց դուս էկան, գացին մինչև խասան հուրանց հանդիպուկ տեղ։

Բժիշկ բեռ շկնն դրեց գետին, ասաց.—Տերդե՛ր, մենք ըստեղ հիրուր հանդիպանք, ճի՞շտ ա. դը՛ բեր կիսենք, ես առնեմ իմ բաժինք էթամ, դու էլ քոնն, որովհետև տարբեր ա արդեն մեր ջաղդնն։

Տերդերն ասաց.—Որթի՛, բա ես կանա՞մ տանեմ,—ասաց.—Էդ քո գործն ա։ Բժիշկն ըսկսեց կիսել փող-փարեն, օսկին։ Բայց իրեք տեղով ա կիսա։ Տերդեր գընդի մոթի տակ, աքե հնչի՞ ա իրեք տեղով կկիսա, մեկն ընձի, էրկու հուրի՞ն ա կիսա, թե ինչ ա կէնա, չեմ գիտե, գոյնե էրկուսն ընձի տեր։

Կիսելուց հետո տերդեր խարցուց.—Որթի, մենք էրկու մարթ ենք, հնչա՞ իրեք տեղով կիսես։

Բժիշկն ասաց.—Ջի՛, մենք իրեք մարդ ենք։

Տերդեր խառցուց.—Ո՞ն են էտ իրեք մարդ։

— Տերդեր, մեկ դու, մեկ ես, մեկն էլ բոքոն գողցող։

Տերդերն ասաց.—Որդի՛, քեզնից պախեմ, աստուց ինչ, իմ կարք վկա, քրիստոս, աստվածծ, բոքոն ես եմ գողցե կերե։

Մեկ էլ տերդեր հիշկեց տեսավ՝ բժիշկ չկա, հինքն ա, իրեք կուճկա էլ ավազ։ Տերոչ սիրտ պաղռավ, տեղտեղ մեռավ։

Ջարը՝ տերդեր տարավ, բարին մնաց մեզի։ Իսկ էդ բժիշկն հրեշտակ էր։

## 34(43). ԽՈՐ ԽՐԱՏՆԵՐԸ ՓՈՐՁՈՂ ՏՂԵՆ

Մե հարուստ մարդ կանչեց տղին, խրատ պտի տա։ Մե լավ խորոտ խարս ուներ, շատ խորոտ էր։

Ուր որդուն կանչեց.—Բալա ջան,—ըսեց.—ես մեռնելու եմ, ես խրատներ կիտամ քեզի, իմ խրատ պահես մտեդ.—ըսեց.—քո կնիկ չիողես էթա խոր տուն, էս մեկ. քո տկի ձին չի տաս ուրիշ խեծի, էս էրկու. քաղա փողի տիրոջ մոտեն չէթաս փող վերցուս. քու խին բարեկամ քավորն, չիողես, էթաս քաղա բռնես։

Էս խրատներ տվեց տղին։

Տալուց հետո էս մարդ մեռավ։

Տղի օղլուշաղ մնաց երկու խոթով. իննն ամիս, իննն րոպե, իննն պաղպեղն՝ չոք զարկեց գետին, մեկ խատ բալաբան տղա բերեց։

Դու ինչ կասես օր՝ հընդեր տղեկներից մեկը քուշ եղավ էդոր, քե.—Իմ խոր քավորմ՝ կա, լավ անունվոր, հարուստ մարդ ա, վեց խատ էլ լավ տղա ունի։

Էս մարդը քուշ էղավ էդ տղին քե.—Քու տղեն գնես վըր իմ բևերուն, ես էղիմ քի քավոր։

Ըսեց.—Ջանըմ, իմ խեր ըսեր ա, բայց լա կայնի փորձեմ։

Ճժուն տվեց էդ մարդու գիրկ, էրին հուրանց քավոր։ Քո տղեն մննձնա, էս հեղի քավոր։

Մենք դառնանք քաղա փողատիրոջ վրեն։

Տղեն կըսե.—Լա՛ յավաշ, էրթամ տնեսմ՝ ինչքա՞ն փող կկրա շահով։

Գնաց, առավ բութիլկեմ էրաղ, դնաց.

— Բարի իրիկուն.—ըսաց։

— Աստու խեր ու բարին, հը հորի՞ էս էկե, էս ի՞նչ էրաղ ա։

Թե.—Քավորութենի եմ, ձեռս, դինա՞ս, փող

չկա, ինձի տաս մանեթ փարա ձեռ բռնա, էդո իմ մալ-օշխար կծախեմ, բերեմ կիտամ։

— Է՛,—ըսեց.—Տաս մանեթ փարա չա մաչկ, մենակ թաղա փարա չա, տասնոց ա, չուղեմ ծախեմ. դու կառնես, խին ու մին կբերես, կիշնա կեթա։

Ինիկ խըտ մարդուն կռավ.—Ա՛յ մարդ,—ըսավ,—փարեն փարա չա, գնա, բե, տու։

Դնաց։ Հավալ կոոր կար, անուն տիդոս կսին, սև հմլա կոոր էր, կարմիր պուտ-պուտ ուներ մեջ, էդի կառնին կնդա ախլդցու, դնաց, էդոր նե փաթթավ, բերեց, ուր անունն էլ դրե վըր էդոր ճոթուն, ավեց տղին, տղեն առաջ էկավ, էդ տասնոց դրեց տուն։

Իրան մե լավ կսրաղ կա, օր հա-հա չա ծննլու ա, տաս ամիս թիմմե, տրսվմեկ ամսվան ա, կսրաղ կծնի։ Ախպոր տղեն էկավ, թե՝ քավոր ա, կնթա, խոսկի Ադիաման խուր, էկավ էրաղ տրեց, ըսեց.

— Հառնջ պտի քու շորեր, քու չափունչեն, քու բյամար, քու խանչալ, քու փափաղ, չսեր, սապոններ պտի տաս խաթնեմ, ձին էլ տաս խնձեմ, էթամ։

— Ա՛յ մարդ,—ըսեց.—ինչ օր ուղիս կիտամ, համա ձիս չի կարելի չա, կտանես կբշես, ձի ա, կբցա քուռակ. տանես էնդեխ՝ կապեն մսուր, ձիս կքուռկոտի։

— Դու էդ ի՞նչ ա կըսես, ես աղ ու հաց ուտող մարդ, չուր հիրգուն քո սեղանի վրեն. ես ոտ-ոտ դհոլչու, դուռնաչու խետ կերթամ։

Ձին էլ ավեց, ըսեց.—Կայնի խորս խրատ փորձեմ։

Էս մարդ ձին էլ տարավ, էմալ էրեց։

Էս մարդ մշկուն քամբրսեց, ըսեց.—Մշա՛կ, հառավոտուն ձին շուտ կկորմտես, քամքես, դյամես, էս մարդն օր կուզա, ձին կքաշես տակ, քըխ խեծի, էրթա խուր։

Մշակ հելավ, դիշեր ձիուն եմ տվեց, առավոտ ի՛մրեց, բերեց քամքեց, խորոտ դյամ դրեց գըլուխ։ Դհոլի ձեն հելավ։ Դհոլ զանեց, քոման խրվորներ էկան։ Էս մարդն էլ էկավ, շորեր խաքավ, ծանրաքավոր ա, հելավ, խեծավ։ Էս մարդ հելավ կայնավ խոր օթաղի տանիս, քաղմնա՝ ձին իմալ ա կքաշա։ Ձին օր հելավ դուս գեղից, էրկու պլեթ քաշեց վըր ձիու օտուն, ու զանգուլ տվեց, ձին լցեց, էրկու գլուխ գնաց, էկավ, ձին ճապղավ, կարմիր բաշ քուռակը քցեց։ Ձին խանեց ջաղդից դուս, մեկ արտ կար, նշնով արտ էր, քալեց էդոր կորին ու խեծավ ձին գնաց։

Ուր մշկուն կանչեց, ըսեց.—Էսա մեծ չվալ վերցու, էն արտի մեջ ղսրաղ քուռկտավ, անխիղճ ի տղեն չղարցուց ղսրաղ բերեց, ղսրաղն էլ կփիցու. քուռակ, մուննաթ կէնեմ, դի չվալ. բերան կապա, շկա. խլղը օր կխարցու, ըսա՝ տարեր եմ Ադիաման աղուն եմ աղցե։

Նորչար վերցուց չվալ, գնաց, քուռակ դրեց, բերեց ըղոր օթաղի հառիք մըխ էր զարկեր էր, որ կախան էնին, կախեց քուռկուն ըղուց, էն տաս մանեթին օր առեր էր, էն էլ բացեց, կապեց քուռկու պղչից։ Մնաց էդ հիրկուն ըսեց.—Կայնի, ես իմ թաղա բավուրջն էլ փորձեմ, տենամ՝ իմ սըռ կպախա՞, իմա՞լ ա, իմա՞լ չի։

Հուրանց հին քավոր, ինչքան վատ բան հեղի, դղած, խասած ա, օդնած ա։

Դանչեց ուր չորնին, ըսեց.—Ֆլան ըստերջ տար տուր փուռ, փունչուն էսքան փարա տուր կարմրցու, առ արի։

Ջորան տարավ, ինչ օր կարդն էր էրեց, բերեց։ Դնաց էրաղ առավ, բիշմիշ կամփետ, ճամփին վերցուց, էդ կարմրցուկ օշխար դրեց ջլի մեջ, բերան կապեց, դրեց նորրի շլակ, էկան կայնան թառ քավուրջ դուռ։ Դուռ դանկին։

— Քավո՛ր, քավո՛ր, քավո՛ր։

Քավոր հելն պառկն շապիկ-փոխանով.

— Հա, ի՞նչ ա.

— Քավո՛ր, վերև աստված ներբև դու, դիմեր եմ քե, դու ես իմ սըռ պախող, իմ կանաչ մեռոն դու էս։ Բասարգևշարա Ջոթ ընձի ծանոթմ՝ կաո, էկն հիրդուն իմ տուն, օշխար էլ մորթեցի, բերի լավ հարբի, պատվի։ Մկա քու սանամերն օր տեսեր ա, դու դինաս օր թուրքն վըր խայուն զոռա, մկա կսա դիշեր պտի բերես իմ մոտ քնի։ Մկա մշակս թասիր ու հընդգ, ինչ էրեցի, չկրցա վրեն, բերդանդեն առե, հելե հօդի հերթկից դանե, թուրքին սպանե։ Մկա ձեռ ու օդն չբռնա, օր տեսանք դո՞ր պախենք։ Ես ըսի իմ հավատարիմ օր կա, իմ քավորն ա, իմ հավատարիմն օր չկա՝ իմ քավորն ա, տանեմ տենանք իմա՞լ կորցունք էդոր ջանդակ։ Ձին էլ կբրախենք դուս, դիլանք կուտեն, ինչ կեղնի, քըխ եղնի, էդ շառն իմ դռնեն կհնռանա։

— Տո՛ քոփօղլի, դու մարդ սպանես, շատ էլ քո քավորն եմ, դու բերես արուն թալե՞ս իմ անձ, դան իմ տնեն խանեն, ընձի տանեն քո տեղ բանտարկե՞ն, գնա՛։

Կպավ, մե լավ քֆրտեց։ Ի՞նչ էրեց, դուռ չբացեց. դարձավ գնաց։ Դինա, օր ուր ջոջ քավորն հօդեն ա կքնի, իսկ տղեկներ տուն ա կքնեն, վեցն էլ կարգով երեխա, հարգանքով, պատվով։ Դնաց էդա օշխար վըր շալակ, հերթիկի դեմ քյաշեց ձեն,—Քավո՛ր, քավո՛ր.—ըսեց։

— Վա՛յ, դո՞ւ ես սանախաբ ջան։

— Խա.

Իման էդտեղ պատմեց, ըստուն էլ պատմեց։

— Վա՛յ,—ըսավ,—յավաշ հոդի դուռ բանամ։

Շուտ-շուտ դուռ բացեց.

— Տար ջվալ ներս, մինչև ես խաքեմ։

Հելան էկան, մատակ քշին դեն, ըսեց.—Թուրք ա, պուպուղմանց խորենք։

Ջվլի բերան բացին, տեսան օշխար ա. կերան, խմին, չուր լուս քեֆ արին։ էդ քավորին էլ փորձեց, հուր հավատարիմն հիմցավ, էկավ տուն։

Էքսի օրն աներձագն էկավ, ըսեց.—Փեսա ջան, էկեր եմ իմ քուր տանեմ խառնիս։

— Է՛, աներձագ ջան, ես քու խաթր չեմ կոտրի, համա շուտ կօղորկես հետ, ես էլ եղու փող կխալաթեմ։

Տարավ լավ հարգեց աներձագին, ջոկ օթաղմ քնցուց, իրի-կնիկն էլ ջոդ օթաղ քնան։

Կնդան ըսեց.—Կնիկ ջան, դու բանից խո պակաս չես, կերթաս քո խոր տուն, հուրիշ բան չըլսեմ, ին լսեմ՝ քո ծծեր մըջ քո ծոցուն կկտրեմ, քեզ էլ կթողեմ։

— Վա՛յ մարդ, էդ ի՞նչ ա կասես, հըմեն դուրբան կլենեմ քո էնա օդաց տգի խողուն, հորի՞, քու ի՞նչն ա պակաս, որ ես աչք դնեմ, դու արևային մնա. շատ էլ իմ խորանց տուն ա, ծանդր կնստիմ, ծանդր կկայնիմ, բա էս իմ նեշուն տարեկան տղե՞ն...

Սարախտան հելան, էլի խրատից կնդան։ Զին քաշեց դուս, քամբխեց, հելավ խեծավ, խրտ ախպոր գացին։ Մնաց, էդ հիրիկուն հարաղատ մշկուն ու խովվին կանչեց, ըսեց.—Տուն կթողեմ ձեր իրավունքին, ես էլ էրթամ էդ քեֆին մասնակցեմ, իմ աններձագ դիլխոր չըընդի։

Հելավ գնստ փոխեց, խեծավ ձին, դնաց, հասավ աներոջ քաղաք. տեսավ՝ մե պառավ նանե դուռ կայնուկ ա, բարև տվեց, բարև առավ. Ըսեց.—Նանե՛, դիշերս ընձի տեղ կիտա՞ս։

— Խա՛, բալա ջան։

Ձին կապեց, նստան կերան, խման, աներոջ ոհոլի ձեն կիդա։

— Նանե ջան, էս ի՞նչ դհոլի ձեն ա։

— Մեռիմ արևուդ, մեր գեղից մե սևավոր աղջիկ մարտունեցու խարս ա, էդ իմա՞լ շորեր ա, արծաթ, օսկի ա էդոր վրեն, յարաբ էդ մարտունեցին էլ հմլա յա՞։

— Տո նանե, էդ օր ըսիր, իմ ղուդումն էլ կոլրավ, նանե, քո բախտն հընդեմ։

Ըսեց.—Թողած խարսնիս, էդ սևավորին ա քամաշա կէնեն, նեշուն տարեկանմ՝ տղեն էլ դիրկն ա։

— Վա՛յ նանե, էդա խարսնիս ընձի տար։

— Խա՛, մեռիմ քե, կէթանք։

Հելան գացին.

Նանե, էդա աղջիկն օր կսեն, մուննաթ կէնեմ քենե, տաս իմ նշանց։ Էկան խաղտուն լցվան, խարսի մեր շալեր ռանգ-ռանգ կապե, էն նեշուն տղեն գրկե, ուր մարդու ու քավորջ հետև նըստե։ Պար ա բռնած ուր կնգա ձեռ էն մեկ կճըխտա վըր ընդոր, էն մեկ կճխտա վըր ընդոր, խըմացուցած, կարմրեր ա*։

Դարձան էկան տուն ըսեց.—Նանե՛.

— Ջանե,

— Նանե՛, ըսկի աղջիկ տղա ծովըցուցե՞ր ես վըր հիրար։

— Վա՛յ, մեռնիմ քե։

— Նանե՛, իմ ղուդում կոլրավ. Նանե, կեղիս ընձի պարտական, օր էդ բան չէնես։

— Ի՞նչ։

— Տասնոց օսկին կխանեմ կիտամ քե, գնա՛ տուր Թագավորի մորը, ըսա՝ լուսուն կեղիս խարսի տեր, կոնախ տղեն իմ տուն ա, դու էլ գինաս՝ իմ տուն քաղքից կրաղ ա, աղջիկն հիջու, բե, տանեմ փշում չել են, հորի՞ մե ծաս հեղի, բամի չառնի՞, քալամոստես բերես, փշում քնեմ ըստու ծոց, առավոտուն հելնի, գնամ։

— Եսի՛մ, լա՛ւ, հլա փող տու։

Առավ, գնաց։

— Դեննե՛ք, դեննե՛ք, կեթամ Թագավորու մամու մոտ, բան ա կսեմ, դեննեք։ Դե՛, ծեր կնգա պատիվ կպահեն չհեղներ. Հելան ճամբես տվին։ Հասավ Թագավորու մամու մոտ, ըսեց ինչ օր պետք էր։

— Իմ դլխով էլ ա հելե, քո դլխով էլ, մկա բա... մարտունեցու ֆլան-բեհվանին, էնի Մարտունի, քո աղջիկ մեր դեղ, հինքն տարուկ աղջիկ խա՛, տաս մանեքն առ. լուսուն խառադ օր հելավ, հացի բալնիս էլ կառնի քու ձեռից։ Հըմա իրիգունն էլ քու ձեռնեն կառնի, քո տասնոց կպահես քեղի, հետին ավալ պետք գուբա, տանեմ իմ տուն, փշում քնեք անեն, դամ։

— Նանե՛, հմլա բան կեղի՞։

— Վայ, հորի՞ չհեղի, ես հըմլա էնիմ, հիճում բերեմ ախճիկ։ Աղջիկն օր գուբա, ծղի ճուռ կճմլթա, տղեն օր վժա, մոր ջիգյար ա, կհնցի կիդա։ Ասա՝ արի, տղին ծիծ տու։

Ըդմալ էլ էրեց։

Ադեն առավ քարոզել։

— Նանե՛, հմլա բան կհեղի՞։

— Վա՛յ, սևավոր, հորի՞ չհեղի, հորի՞ Մարտունեցին պրաֆեսոր ա, խո՞տ կառնի։ Տղեն էլ ա՛ռ, էթանք։

* Ավալ օր ապար աղջիկեր խարսնիս կէթին, շալե ջեջիմ կար, կոբբին, օր քիթ ու բերեն նրանց, քշներ, կփիլեր։ Նան. բանաստեղծ։

Տղեն տեսավ օր կնիկն էկավ. հինքն հելավ տարորնակին վերցուց, հելավ դուս էկան, նանել դուռ բացեց, կնգա ձեռ բռնեց, թաշեց նանել պըստի սաթուն, նանեն դնաց տաք թունդրա շուրթ դամխավավ։ Բերեց դրեց հոդի թմբան վրեն, հելավ հուր տգեն վերցուց, հուր ձին խնծավ, դռներ դրեց ու հա՛յ ուր տուս։ Նոքարն հելավ դուռ բացեց, ձին կապեց, տգեն առավ մտավ օթաղ։ Տղեն խոր կճանչներ, տարևկան եքյա տղա էր, կքևլեր սաքի, կեցուց պառկուցե։

Դառնանք Քրխ Նանել։

Նանեն քունն առավ, փշում՝ օռն էլ ճանդռեց, հելավ.—վա՛յ,—ըսեց.—բներ, մացեր եմ քնուկ։

Հելավ վադավ տեսավ օր՝ աթջիկ լխկուկ քնուկ ա, նա ձին կա, նա տգեն կա, նա էլ դռնախ, կա։

— Քա աղջի՛, աղջի, սևավոր,—ըսեց.—Հո՞ւր ա քո տգեն։

— Վա՛յ նանե, հո՞ւր ա.

— Դը՛, սևավո՛ր, ձեն մի՛ էնա, ես տատմեր շատ եմ հեղե, ես խորուստ կչնեմ, կշնցի կչթա։

Դեննե՛ք,—ըսեց.—Դեննե՛ք։ Բերեց տուն։

Մերն ըսեց.—Աթջի՛, հո՞ւր ա քո տգենն։

Լաց, մոր դանդռվավ։

— Դը՛ ձեն մի էնա,—ըսեց.—կտոր-մտոր շատ ունես, սաթքենք, դնենք օրորոց, կըսենք մեր՝ տգեն ծծով ա էրե, խնդռեր ա, տանենք թաղենք։

Սաբահտան հելան, նանեն էկավ կոնտախ սարքեց, տերտերջ բերին։

— Տերտե՛ր,—ըսին.—տգեն ծծով ա հնգե, տաննենք խորենք, պտակ կա, չիպա վըր մնովին։

Տերտերն գլոխ բացեց, աղոթք ըսեց.

Ձեր ապրուստ խլավ, գնաց։

Տեր ողորմյա՛, տեր, ողորմյա՛,

Տեր ողորմյա՛,

Դը՛ վերցնք։

Վերցին, տարան խորին, կարդը կատարեցին։

Մնկէլ օրն տգեն հելավ գնաց կնգա հետևից։ էկավ տեսավ՝ լաց ու կոծծի մեջ, մեր կուլա։

— Քա լա՛ր ջան, լաո ջա՛ն։

Ըսեց.—Ադե էս ինչ բաներ ա։

Ըսեց.—Մեռիմ քե՛, փեսա ջան։

Ըսեց.—Ձեն մի՛ էրա, ես տղա եմ, դու էլ աղջիկ։

Մնկ էլ տերտերն էկավ, ըսկսեց կարդալ։

— Տերտեր ջան,—ըսեց.—բալա առ էս 10 մանեթ, էթանք իմ մեռլի գերեզման տենանք, էթամ տուն։

Առան էկան, կնիկ ու մերն էլ հընդան վըր թմբան, կպտեն քեթ-մութ, կխնչեն, կքսեն վըր ուրանց օռ։

— Վա՛յ լաո ջան, իմալ մուրազ մնաց մըչ քո փոր, վա՛յ լաո ջան, վա՛յ լաո ջան։

Տերտերջ դրին ջաղդի։

Ըսեց.—Ադե։

Ըսեց.—Ի՞նչ ա։

— Ադե՛ ջան, դու դինաս՝ քո աղջիկն էլ շաբաթմ չսթրի, դիլա, թաղա մեռլի տեր ա։ Ես էլ իմ թաղավորի խալաթ, իմ ձեռով չըմ տվեր իմ. հլե դու իմ թաղա թաղավոր, իմ կնիկ, օղորմի մեռնողին, էնի դուրբան հեղի իմ բալա թագավորին։ Հելեք խնծենք էրթանք իմ տուն, շաբթմ էլ, տգե ջան, մնա իմ տուն, քու աղջկա սիրտ քրխ կայնի, դիլա շատ։ Լավ էլ չի մեր գեղացիք լսեն, ամոթ ա, ու փեսին էլ կըխալաթնեմ, քրխ դառնա դա։

Խնծուց հրմնուն, էկան իջան տուն։

— Զորա՛ն,—բոռաց.—Զորա՛ն, ֆլան կարմիր զոր մորթա, մորթա՝ տիկ խան, րրթա, էնա ջոջ կապան դի, լիյ նե։

— Ադե՛ն, հելի էնա մեշոկի ալուր, քյանի որ կտանա, խմոր շաղա, քեֆ կչնեմ, բա՛ ես աներձագ կարդեմ, քեֆ չչնե՛մ։ —Կնիկ՛, բե՛ թունդիր վառա։

Գնաց էն փողի տիրոջ մարդ բերեց, ձի խնծնողին, քավորին, օր դուռ չբացեց վրեն, բերեց, հուր խին քավոր բերեց, ջերդով նստուց, կերան, խման։

— Կնի՛կ, առ օթղի բալնիք, գնա՛ ամերուկ էլ բեր։

Կնիկն առավ գնաց, դուռը բացեց, տգին տեսավ, գրկեց տգին ու նստավ։

— Ադե՛—ըսեց.—ադե՛, հորի՛ օթաղ դո՛ր ա, հելի գնա տե՛ր, ի՞նչ հելավ։

Մերն էկավ դուռ բացեց, տեսավ տգեն աղջկա գիրկ՝ ծիծ ա կուտա.

— Արի՛.—ըսեց.—խնդը լսողաց, արի՛ ք... քու մեռլին, արի՛, էս ի՞նչ սևհերևսութուն էր բերիր իմ գլոխ։

— Սևավո՛ր,—ըսեց.—ըսկի բա չճանչցա՞ր, օր քո մարդն էր։

— Մութ տվեց, ի՞նչ ճանչնինք, դևստ փոխուկ, հինք փոխուկ։

— Բա ըսկի բանից չհիմցա՞ր։

— Չէ՛.

— Է՛, աներձագ ջան, քո մեր, քո քուր ի՞նչ հելան. հելի՛, հելի՛ գնա, բե։

Էն էլ գնաց, մնաց։

— Հելի՛,—ըսեց քուռկատիրոջը,—դու գնա բե՛։

Էն էլ էկավ՝ քուռակ տեսավ, սևցավ։

— Փողի տե՛ր.—ըսեց.—դո՛ւ գնա բե՛։

Էն էլ էկավ՝ տեսավ իր տասնոցն քուռկի պո-

չից կախուկ, էն էլ հելավ սևերես։

Տղեն հելավ էկավ, հըմնուն ժողվեց, ըներեց։

— Արեք նստեք սեղան։ Ջոջ քավո՛ր, այսինչ օր այսինչ դիշեր օր էկա քո հերթկի վրեն, քեղի ձեն տվի, օր ըսի Ջոթա թուրք ա էկե, զաներ ենք սպաներ ենք, դու էլ հելար քո տղեկներ խանիր, քու մատակ քաշիր, ծալքը շտկիր, դու հեղիս քու էն կանաչ մեռոն, էսա քու վեց տղի դլոխ, ի՞նչ թուրք էր։

— Ես հեղիմ իմ կանաչ մեռոն, մե կարմըրցուկ օշխար էր չվլի նե, չուր լուս կերեր ենք, խմեր ենք։

— Տո՛, բա, թագա քավո՛ր, հլա դուռ չբացիր, հորի՞ իմ խեր ու մեր կըրվիր։ Դե հելի՛, քո ոտ մեկ էլ իմ շենք չդնես, ես իմ խոր խրատն եմ կատարեր եմ։

— Փողի տե՛ր, բալի մենք քո փող հանըրցուցինք, ուշ տինք, դո՞ւ էլ ընձի խայտառակ կէներ։ Դե հելի՛, էս ա քու փող, էս իրեքնոցն էլ հեվել։

— Չի խեծնո՛ղ, շատ էլ ես իմ ձին տվի քե, իմ ձին հորի՞ խարկցիր օր քուռկատավ, իմ զորաղն էլ կսատկցուցիր։ Դու էլ հելի՛ իմ տենն։

Նոր դարձավ աներձագին.— Քու քուր կիողեմ, մենակ քե անվնաս խմար չիողեմ։ Ադե՛, դու իմա՞լ քու նամուս, բլըմ խլղի տղա եմ, իմա՞լ քու էրևիևն կիդիր խլղի ձեռ. կիողեմ, մենակ իմ անվան չիողեմ, օր ես եմ էրե, գամփերեմ։ Էսդուց դեն հելի խնձի ձին, առ քո տղին, դարձի, մենկել քու աղջկա անուն չիտաս, իմ դուռն էլ չճանչնաս։

Ընդորն էլ դրեց ճամփու։

Ջուր հիրիկուն հինքն, իր խին քավոր կերան, խման։ Քավորն էլ գնաց, էնի նստավ հուր դովլըթին. քու որդիք նստին քու դովլըթին, ի՞նչ նպատակ ունես, բարին կատարվի։

## 35(44). ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐ

*Մե երիտասարդ տղա մե մարդու տուն մշակ էր. խնդ տարի կծառայա, կիդա կղանա ջախչի քարին, կասա.—Աստվա՞ծ, էս քյարի դատա ընձի օսկի տու։*

*Էդ մարդ կղանա ըտոր մեջքին, կասա.—Տո՛ շան տղա՛, քեղ աստված էնքան օսկի հո՞ւստ տա։*

*Էդի կհոգի, կասա.—Էլ չեմ մնա քո կուշտ, կէթամ։*

*Կէթա Պոլիս, ճամփին կտենա մե մարդ։*

*Կասա.—Տղա՛, էդ հո՞ւր կէթաս։*

— *Հորի՞ կխարցուս,—կասա տղեն։*

— *Կխարցում, ի՞նչ կեղնի։*

— *Կէրթամ Ըստամբուլ։*

— *Տղա՛, ես էլ կիդամ, էդնինք հընդեր, էթանք։*

*Կէթան, կէթան կխասին թագավորի պալատ, կնստին շենքի հատեչ։*

— *Տղա՛ք, դուս էրեք, շուտ լուսնա։*

*Մի տղեն կվերցու կասա.*

— *Երանի թագավոր հուր աղչիկը տար ընձի, հըլի ընդոր փեսա։*

*Էն մեկը ըն՝*

— *Երանի ընձի թագավոր տեր, օղորկիր Մշու դաշտ փաշա։*

*Մեկն էլ կասա.*

— *Օր աստված տա, ձեր ուղելն ի՞նչ։*

*Հառավոտ թագավոր կանչա, կխարցու ըտոնց.*

— *Դու ի՞նչ ուղեցիր։*

— *Թագավո՛ր, մեղա,—կասա տղեն,—ես քո աղչիկն ուղեցի։*

— *Վեղի՛ր,—կասա թագավոր,—կանչա աղչըկան։*

*Աղչիկ դուբա։*

— *Աղչի՛կ, դու էսա տղին պտի առնես։*

*Մյուսին կխարցու, էդ էլ կասա։*

*Հերթ կխասի պատկին, կասա.—Օր աստված չտվեց, քո տալն հնչ, թագավորն ապրած կենա։*

*Թագավոր կհրամայա էտա պատկին բռնել, բցել ջրու մեջ։ Իրեք օր էդի ջրում մեջ կմնա, վրա չորրորդ օրը կղանչա, կբևրա կխարցու։*

— *Ա՛յ տղա, դը ուղա, ի՞նչ կուզես, ասա՝ տամ, տեսար ջրի մեջն իր։*

*Տղեն կասա.—Չեմ ուզե, ես ջրի մեջ չի։*

*Թագավոր կասա կախարան տանել։ Ըմալ փոթորիկ կկայնի, որ փաշուխյուն ուղողին կխառնեն էտա տղի խետ կասնեն, վիզ կթոցնեն։*

*Թագավորի աղչիկն էլ հէչնի կասա.—Ես կեթամ Մուշ։*

*Ըստու մարթ կառնի կէթա, պատիկ տղեն էլ կլի կէթա, ախպեր կճանչնա կխարցու.*

— *Էդ հո՞ւր ի կէթաս։*

— *Կէթամ Մշու կրկիր։*

— *Արի իմ ձիաչանն եղի, ես թագավորի փեսա եմ, քեղ էլ կպահեմ։ Կէթան կխասին Մշու մեջ։ Տղեն ձիանք կառնա դաշտ։*

*Աղչիկ, տղեն նստան չաղրի տակ։*

— *Տղա՛, քո անուն ինչ ա,—կասա աղչիկ։*

— *Արշակ։*

— *Արի մե բան էնինք, մարդս մեռի, արի ընձի առ։*

— *Չէ՛,—կասա տղեն,—դու իմ մերն ես, իմ քուրն ես։*

*Աղչիկն էլ խելոք աղչիկ էր, ասավ.—Ես էլ ընդուն քուր ըլնեմ, տենամ մարքին ի՞նչ ա։*

*Հետո հելան խասան Մշու դաշտ, տեսան մե խատ խելառ մարդ գութա։*

— *Արի իմ ձիաններըը պահա,—կասա.—Ես*

Էրթամ տուն Հարեմ, դամ քրոջս տանեմ, քզի մե խաս օսկի կուտամ։

Կէթա կտենա՝ դալալ տուն կծախա, կէթա բլանիր կվերցու, կառնի, կէթա քյրոջ կբերա, ձիապան կասա իր մարում։

— Ախոռս էս տղեն, կմնանի։

— Արշակ, կխնդրեմ էրթամ իմ տուն, քնեմ, նորեն իդամ։

Ըտի, էսի օր գնաց, պառկան ըտնը։ Դիշերվա մե վախտ աղջիկ դյուռաց.—Արաբ մեզի կըսպանա։

Տղեն ձգորավ արաբին։

Արաբ ասավ.—Տղա՛, դու ղոշախ տղա էս, դե արի ասեմ, Քե դու ինձ չկսիր, քյո վիզ կթռցնեմ։

Շենքի մեջ մտավ.—Տղա՛, դուռ հիրուր տուր։

Դուռ բացին, օսկին պատից իջավ։

— Տղա՛, ձեր երկիր ձիթխծի բյարն ա՞ քոնը, քե էս օսկին։

— Էս օսկին ասծու օղորմություն ա։

Կնթան, արաբը կգտնա, դեռնից կեղնի բաղ ու բախչա։

— Տղա՛, ձեր երկիր կա՞ ըտենց բաղ ու բախչա։

— Արա՛ր, էսի ասսու օղորմություն ա։

Տղեն ասավ, շոջվնցավ, տեսավ՝ արաբ չկա։

Կէթա կնգան կպատմա, կնիկ կուլա փորձա, կխաբցու։

— Էս օսկին, բաղ ու բախչեն ա լավ, քե՝ քո խոր։

— Էս ասծու ավածն ա, աղջի՛։

Առավոտ ձիապանն էկավ, տեսավ օր տղեն սաղ ա, մտածեց. քե ախ մարդ ո՞նց է սաղ պրծեր ա՝ էկավ մտավ ներս, ասեց.

— Ջիապա՞ն, սալամաթ էկա՞ր։

Կասա.—Էկա։

Բալորն հիմցան, օր էս մարդ չի մեռե։ Մարդն կսկսա սաղին օղնել, փող բաժնել ու Մշո դաշտ շինցնել, ինքն էլ դառավ թագավոր։

Հարևան թագավոր օր լսավ, ասեց.—Վաղի՛ր, դերվշու շորեր խաքի, տեննք ո՞նց ա, օր Արշակ թագավոր բդմալ հարուստ ա։

Կնաքեն, կկթան Մշու դաշտ, կտենան մե դյուղացի փոր կչնա։

— Էդ ի՞նչ կչնես,—կխարցուն։

—Հող է կվարեմ հարորով։

— Ընչո՞ւ գոմեշ չառես, քեզ ինչքա՞ն տակի տամ, որ առնիս։

— Է՛, բդմալ բան չասես, սաղ մնա մեր Արշակ թագավոր։

Վեղիր, թագավոր գնացին մտան թագավորի տուն, տեսան օսկի կբաժնեն։

Թագավորն ըսավ.—Վաղի՛ր, էս ինչքա՞ն ունեն, օր կբաժնին։

Աղջիկ տեսավ, օր էդ թագավորն հուրա խերըն ա, ասավ.—Մաբախտան էդ դերվիշներուն ուղարկա իմ կուշտ։

Դերվիշներ դյացին նստան մե քիչ, չուրի աղջկա մարդն՝ Արշակ թագավորն էկավ, թագավորն ուղեցավ կանչել։ Արշակ չիողեց։

— Վաղիր, էստեղ սատանայ բան կա, արի փախինք,—ասավ թագավոր։ (Աղջիկ կասա Արշակին, որ հուր խերն ա)։

Աղջիկ կտանա հորն ու վաղրին ցույց կուտա կասա.—Էս խալխեն ասծու օղորմություն ինչքան վերցու կլցվի։

Կտանա բդմալ բաղ ու բաղչեն ցույց կուտա, աղջիկ կասա, օր ինքն հուր խերն ա, ու կպատմա դլխու էկածը։

Կանցնի բավական ժամանակ էդ հարուստը դուքա թագավորի կուշտ օղորմություն կուգա, էդի կասա դյնա քե համր ապրի խաղաղությամբ։

## 36(45). ԿԴՐՈՒԿ ՈՏՆԵՐՈՎԻ ԱՍՏՎԱԾ

Իրենք հարևան գնլին աշխատանքի կերթան. Ջաղդեն կըսեն.—Ուր էրթանք աշխատենք, դանք էստեղ, հանդիպենք հիրար խետ։

Մե տղեն գնաց աշխատավ, օր տաս, քսան շայով աշխատավ։

Էս մյուսներն գացին, հբարտացած ին, Քե տաս շայով չաշխատենք, մենք պղի բերբով-բարով էթանք տուն, էդոնք գացին։

Էս մեկը դանանդան խելոք, էս էրկուսը՝ շորագլուխ, կոբիտ, անտաշ քար, գացած կերած խմած, գողու տված, բողու տված, իսկ էս խեղճ խելոք տղեն էնքան փող ու փարա յա ճամփել ուր տուն, լավ կերե, խմե, խագե։

Իրենք տարի լրացավ, էկան հանդիպեցին։

— Իմա՛լ ես։

— Ըհը տեսնք, էնքան փող ու փարա եմ ճամփե, էս էլ կտանեմ տուն։

Էս էրկուսը կզարմանան, կըսեն.—Մենք գացինք գեղ, կլինք խայտառակ, արի էդ մարդուն սպանենք։

— Չէ՛, չուղա,—խղդով կլի, կըսի,—արի՛ տաննենք անտառ, օտներ չարդենք, տանք գիլաներուն, հլենք էրթանք։

Տարան օղներ չարդին, թողին էդ տեղ։ Էդ մարդ կբոռա.—Հավա՛ր, փրկություն։

Բաղրգան ուր բեռով էկավ, որ էրթա ուր ատուտուրին, մե նոքար լավ։ Էտի կերթա կվազա, կտենա մե մարդ՝ օղներ չարդած ա, գրկած կբերա չաղդի վրան։ Բաղրգան տեսավ՝ մե նոքյար չկա,

շուտ էկան տեսան դրանց։ Վերջին դրին ջորու վրեն, կտանեն կիտան վաճառականին։

— Լավ տեղ դրեք, էրթանք։

Կտանա ուր տուն, կաղցու, հըմա կմնա թոփալ։ Էս մարդ կնայա բազրգան կաշխատա, խորհուրդներ կիտա, վաճառականից գլխով ա, կնշանակա էսոր պայեստապետ, յոթ տեղով աշխատանք կէնա։ Վաճառական շատ կարդալվրվեց, հարստացավ։ Վաճառականի կմեռնի, աշխատողներ կուզեն վաճառականի կնգան։

Էսի էլ կայնավ ըսեց.—Ես կառնիմ էնոր, էն մարդին, բռնենք քե իմ բախտից այիբլու չա, իմ վաճառականն ա։

Ադա չա, էլի յոթ տեսակի գործ ա կանա, խելացի մարդ ա։ Թանգություն հընդավ, ուրիշ քաղաքներից կիգան դրանից խաց ա կտանեն, բոլոր սերմեր բաց ա կթողա։ Երկու մարդ իշվանքով էկան էդտեղ, էսի տեսավ՝ ճանչցավ, ըսեց.—Էսօր ուշ ա, առավոտ մնաց։

Տարավ տուն, հարգեց, պատվեց, կերցուց, խմցուց չուր առավոտ։ Ամեն ինչ էրին, լավ շորեր խազուցին։ Ախպերն էկավ, կնիկ քռավ հելավ կայնավ, նստան կերան, խման, հելան քնան։ Հառավոտն հելան, սարի սաբահատն էդ մարդն հելավ, առավ դրանց, տարավ էշերին բաց տվեց, մի կոտ էլ հավել լցրեց, գարձավ փողն էլ կնդան ըսեց.—Դիր բեռների մեջ, ասում մոտ չկորի։

Կնիկը լցրեց, փողն էլ դրեց մեջ, էտոնք հելան, էկան տուն։ Կնիկը հետ գարձավ, հետևներից հընդավ, խարցուց,—Դուք իմ մարդու ի՞նչն եք, որ իմ մարդը ձեզի կերցուց խմցուց, հըմեն ձեր փողեր ձեր բեռներու մեջ։ Քող վերևի կապուտ ասպածն դատն էնա (էսոնք էլ ին ճանչցած)։

Օր էդմալ ըսեց, գետին ճղավ, էդ մարդիկ գացին գետնի տակ։

Էդ կնիկն էկավ եդ. լաց, մոմռաց, իմ մարդու ձևրից իմա՞լ պրծնիմ, իմ օղորմութուն ընչի կորցուցի։

Աղեն էկավ, կնիկն հելավ հմա լաց կլի. հիմցավ.—Վա՛յ էս ինչ էրիր, հընչի իմ խեր կորցուցիր, բարին՝ բարով, չարին՝ բարով, հընչի խարցուցիր, էդի էն մարդիկն ին, օր իմ օղներ ջարդած ա։

Մկա օր մեկի դաղա, կըսեն.

— Վա՛յ, կղրուկ օտներովի ասպված խասի մեզի։

## 37(46). ՆՀԱԽԻ ՀԱՒՐ ԴՈՒՍ ԿԳԱ

Իրեք խոքի մի գյուղից դուրս են գալիս, որ գնան աշխատանքի, ճանապարհին հնգերներով խոսում են.—Միասին գատենք, բաներ, կիսենք, գառնանք մեր տներ։

Մեկը կասա.—Քանի՞ աշխատենք, օրական ինչքա՞ն առնենք։

Մյուսը կասա.—Մե մանեթ։

Էն մեկելը կասա.—Բալքի 50 կոպեկ կառնենք, հընչի՞ մե մանեթ։

Էդ մարդիկ էթում են ֆայլա բազար, ըտոնց 50 կոպեկ են տալում օրական, մե մանեթ ովոզի հըլում։ Ըտոնցից մեկը համաձայնվում ա ու սկսում ա աշխատել, իրեք տարի կաշխատա։ Իրեք տարուց եղը գալիս ա դեղը, տենում ա՝ հընդերները բրջոտ, խացի կարոտ, զարմանում ա։

Ասում ա.—Հընչի՞ եք էդ օրի։

Կասեն.—Մե մանեթ տվող չեղավ, մենք էլ չաշխատեցինք։

Էն մեկն կասա.—Ես 10 կոպեկով էլ ա աշխատել եմ։ Հիմի 3000 ռ. փող ունեմ, էկեք կիսենք, ձեզ էլ տամ, գնացեք տուն, տղիս շատ եմ կարոտեր։

Ըտենց էլ անում են։ Գնում են, բիչ կեթան, քե շատ, հայտնի չի, հընդեր կտենա, որ էնոնք հետ կհնդեն։

Կասեն.—Քեզի պտի սպասենք։

Էդի կասա.—Հընչի՞, քե գիտում եք, օր ես հավել եմ վերցրել ինձ, էկեք սուտեք։

Կասեն.—Չէ՛, դյուղ տեղ ա, կեթաս հմնուն կպատմես, մեզի սևերես կանես։

Էդի կասա.—Չէ՛, կուզեք բոլորը առեք, ես կդառնամ քաղաք, էլի կբանեմ։

Դրանք կասեն.—Չէ՛, պտի սպասենք։

— Որ սպասում եք,—կասա էնի,—ես կըխնդրեմ՝ տղիս սովրցրեք էս երգը.

Վար արդը կանչում ա
Շահին շահ դու խոսես մեզ,
Աստված էլ ասում ա,
Նհախին հախը հասնի
Հոռովել, հո՛։

Դրանք գալիս են դյուղ, կնկտիք կուրախանան, իսկ էն մեկելի կնիկ իր տղի խետ գուրա ջուղաբի; Ըտոնք երգը կասեն տղին ու հուրիշ ոչինչ։

Դարուն կըացվի, հարևան էտա տղին խետ կտանա նոքարության։

Տղեն հոր երգը սովորած ա ըլում, հորիկ բշելիս կերգա։ Մեկ օր էլ թագավորը անցնելիս կլսա, վազրին կուղարկա, տղին կբերա պալատ։ Թագավոր կերգացու տղին.

— Ումո՛ւդ,—կասա,—էդ ի՞նչ սովորցրեց քեզ։

Կասա.—Իմ տղեն։

Կօղորկա, ադուն կբերա, ադեն կպատմա, օր խոր հնդեւրանքն են սովրցրե։

Թագավոր կօղորկա հնդեւրներին կբերա։ Էրկուսին առանձին-առանձին կխոսցու, կպարղա, օր ըսոնք սպանած են երեխու խորը։ Չհնվորներ կդնա՝ տիկ կխանա ու կթալա։ Ըսոնց աշխատանքըն էլ կտան կնգան, ու ըսենց նհախի հախը դուռ էկավ, անխղճ մարդու հախից էկավ։

## 38(47). ԻՐԵՔ ՀՐՆԴԵՐ

Կեղի, չեղի, իրեք խատ հրնգեր կհեղին։ Էդ իրեք հրնգերն գելնին, կրսեն.—Էթանք աշխատանքի։

Կելնեն պաշար կվերցուն, կթեն. էդ էրկուս հմեն պաշար կուտեն, էն մեկին չի տան, կտփեն, կդնեն ճամփու։ Մեկի անուն Սիծն, մեկին Ֆասըլ, մեկին Քյոթուլ։ Էդ Սիծով կտփեն, կելնի մե յանով կթեթ, բարոնք էրկուսով՝ մե յանով։ Էդ Սիծեն գնաց, գնաց մտավ մի հէրի մեջ, տափավ, չոր լուս բացվի։ Մեկ էլ տեսավ՝ հիրիկուն մե խատ աղվես, մե խատ արջ, մե խատ գել էկան, նստան էդտեղ։

Էդ աղվեսն ըսեց.—Ա՛րջ ախպեր, դու հորի՞ էմամլ գվարթ ես։

Ըսեց.—Քու ի՞նչ գործն ա, թուլի մայի։—Ըսեց.—Ես գվարթ եմ, օր ֆլան թագավորի գուլի բաղի մեջ մե խատ խոր կա, էն խորու մեջ ոսկի կա. ես կերթամ էնտեղ կպառկեմ, կիշկեմ, կուրխրնամ, կիդամ, էնտուր գվարթ եմ։

Գիլուն կրսա.—Բա դո՞ւ։

Գելն կրսա.—Ֆլան խովվու դաստկի տակ մե խատ կարմիր մաքի կա. էդ մայուն կիշկամ, կուրխնամ, կպապանեմ, օր մորթեն, ֆլան թագավորի տղեն խիվանդ ա, էտու թոք-պլոճիկ օր տանեմ ուրան, կփրկվի։

— Բա՛ թուլի մայի աղվես, դու հորի՞ հրմլա ես։

Կրսա.—Ես էլ օր գելեմ մեր տան նստ, մե խատ մուկ կա, օսկի կխանա ծակից, կկոլոնա, կդառնա մե խատ բիշի-բիլիք կդնա էդ օսկուն։ Ես կիշկամ էդ օսկուն, էդով ես ուրախ եմ։

Էդի կլսի, առավոտ կելնի կթեթ, կտեսնա աղվսուն տան հետև մուկն օսկին կկոլոնա։ Հասավ էդ օսկիք ժողվից, հելավ գնաց, գնաց տեսավ՝ խովիվն էկավ։

Ըսեց.—Խովի՛վ, էդա քու դաստկի տակի մաքին մորթա, մե շիշ խորոված ուտեմ էթամ, քի օսկի կիտամ։

Մե ճանգ օսկի տվեց, մորթեց, էդրա սիրտը, պլոճիկը վերցեց ու գնաց։ Գնաց խասավ էդ ֆլան թագավորի երգիրը, գնաց կայնավ թագավորի պալատ, խիվանդ տղին սիրտ-պլոճիկ տվեց, սաղացավ։ Թագավոր ուրախությունից աղչիկ տվեց դրան, թագավորության կեսն էլ խնդրե։

Ըսեց.—Թագավո՛ր, էս քու գուլի բաղի մեջ ընձի շենքմ՝ կիցկես։

(Օր էդ խորի օսկին մնա շենքի մեջ)։

Շիքին, էդի հարստացավ, հելավ լորդ։

Խաբար տանք էն էրկու հընգերոջ. ֆռացին, ֆռացին, էկան հելան հորթարած՝ քուչոտ, կեղտոտ։

Մեկ օր տղեն կայնե կնայա, կտեսնա նախիրը բերին։

Կհիշնի կրսա.—Դուք ընձի կճանչնա՞ք։

Ըսին.—Ա՛յ մարդ, դու թագավոր, թագավորի տղա, Քող մեր հորթեր տաննք, մեր խաց կկըտրենն։

— Չէ՛,—ըսեց,—կայնեք, ես ձեր հընգեր Սիծեն եմ։

Էդոնք զարմացան։ Բերեց էդոնց շոր տվեց, կերցուց, խմցուց, պատմեց։ Էդոնք հելան գացին, հէրի մեջ տափան, օր հիրանք էլ հարստանան։ Դիշերվա մե վախտ տեսան արջն էկավ մե յան ընդավ, գել՝ մե յան, աղվես՝ մե յան։

Էլման աղվեսն խարցուց։

Գելն ըսեց.—Շան տղի աղվե՛ս, էն օրն էլ մենք քե լսինք, հելանք գացինք՝ օսկին չկեր, մաքին մորթած, խորի վրա էլ շենք ա շիքած։

Ըսեց.—Հելե՛ք, ըստե ըմամլ ա, մարդ կա տափուկ։

Հելան շուռ էկան, գտան էդոնց, քյաշին բերին, էդոնց ճղեցին, կերան, գնացին հելան շան գիլու բաժին։ Մաղը գլխուն չկուրխի։

Դու ինչ կամենաս ընձի, ասուված էլ կկամենա քեզի։

## 39(48). ԿՇԵՌՔԻ ՈՐ ՅԱՆ ԾԱՆՏՐ Ա, ԷՆ ՅԱՆ ԿՔՅԱՇԵՆ

Գեղի, չեղի, մե թագավոր գեղի, մե տղա կունենա։ Տղեն սաղ օր հուր հընգերներ կբերա, կերխում կէնա։

Ներն կհերսոտի, կասա.—Ա՛յ տղա, ըթա բան չլնի, սաղ օր բերես, կերցուս, խմցուս, օղորկէս։

Ներ մեռնելուց հառչ տղին կասա,—Որ ես կմեռնեմ, դու կքասպնաս, կթթաս հօղեն, ժընջիլ կա կախուկ, կթալես վիզդ, կխեխտվես։

Ներ մեռնելուց հետո, տղեն էլի հնդրներուն կբերա հուրանց տուն, կուտեն, կխմեն,—կասա.—Տղենե՛ր, հետո դիշեր մեր գութնի խուփ ի՛մալ մկնէր կերած։

Կասեն.—Օղորթ ա, օղորթ, կուտեն, կուտեն։

Մե վախտ գնցնի, տղեն կըքսապնա, հնգրներ էլ հաշվի չեն առնե տղին։ Մե օր տղի հընգրներ կեթան քեֆի, հուրին չեն ասե։ Կնիկ հուրանց մե խավ կմորթա, տղեն կվերցա, օր էթա քեֆի։

Ճամփեն կծարվնա, կուզա հախպրից ջուր խմա, խավ կդնա գետին, մինչև կխմա, կոլրվի, տենա՝ բաղեն խավ տարավ։ Ամոթ-զամոթ կեթա հընգերներու մոտ։

Օր քեֆն կսկսվի, տղեն կասա.—Մե խատ խավ ի բերե, էն էլ ճամփեն բաղեն խավ տարավ։

Հընգրներ չեն ավատա, կասեն,—էկեր ես կե՛ր, էլ ինչի՞ սուտ կխոսաս։

Տղեն կեթա տուն, կմտնի հօդեն, ձեռ կթալա ժնջիլ, կուզա կախվի, կպրծի՝ մե յաշիկ օսկի գընդի գլխուն, խելը կեթա։ Կնիկ դուքա տենա մարդու վիճակ, ջուր կթալա մարդու հերես, կընստի։ Ըտոնք էլի կհարստանան։ Տղեն էլի հընգրներ կգանչա հուրանց տուն։

Կնիկ կասա.—Սե գա վրետ, հլա չե՞ս խըրատվէ։

Հընգրներ դուքան տուն։

Տղեն կասա.—Տղնե՛ր, մեր խոփի մեկն էլ հնսօր ա մկներ կերած։

Կասէն.—Օղորթ ա, օղորթ, կուտե՛ն։

Տղեն կասա.—Հելեք, ես ձեր...

Ըտոնց կլարա։

Բա՛, կշեռքի որ յան ծանդր ա, էն յան կքաշեն։

## 40(49). ՇԱՆ ՋԻԳՅԱՐ

Մե մարդ մեռնելիս՝ իր քեֆի տղին կկանչա, կըսա.—Իմ դառը քրտինք տվիր քամուն, վերջ տուր, որ ապրես։

Էդ մարդ կսկծից տմբլա կապեց, մեռավ։

Ըսեց.—Ես օր մեռա՝ տու աղքատցար, հինքնասպանությունն կկատարես, դու չկանաս ապրես. կեթաս էստեղ, ես մե շրիդ կկախեմ, տու էդ շրիդով խեղդվի։

Հերն մահացավ, արև տվեց ձեղի։ Մե ժուկ ժամանակ էլ կերավ խոր փողեր, վերջ տվեց։ Էկավ, հուր հընգերներ պտի քեֆ էնին բախշեն, էկավ հընգավ սնդուկ բանդրանց, զատ էլ չդատավ. ճանդ մը գոռշ գտավ, տարավ առավ օխշրի ջիգյար, էփեց խորովեց, մե գավ էլ գինի առավ, տարավ հնգերների մոտ։ Սրանք հուրանց քեֆ կերե, խմել էին։ Էդ տղեն գնաց, դարվազի դուռ փակ էր, ըսեց.—Հելնիմ պատով, դուռ բանամ, երթամ նեռ։

Հելավ, չուր դուռ կբացեր, շունն էկավ վերցնց ջիգյարն ու փախավ։ Տղեն հնգավ շան հետև, ի՛նչ էրեց, չկրցավ առներ, դարձավ էկավ գնաց հընգերների մոտ, պատմեց գործի եղելություն։ Գինին դրեց, էդոնք կծծդան, կսեն.—Շուն ջիգյար կուտա՞, շուն ջիգյար չուտա։

Ծծդացին, տղեն առավ հերա գավ գինին էկավ տուն։ Շատ տվեց, շատ առավ, ըսեց.—Հե՛ր ջան, ես քու օսյաթ կորցուցի, էթամ իմ հոր օսիաթն էնեմ, շրիդից կախվեմ։

Տղեն գնաց, զմբլներ շարեց, հելավ կայնավ.—Շրիդ թալեց վիզը օր խեղդվի։ Հելավ կայնավ ձեռ թալեց շրդին, իմա՛լ օր ձեռ թալեց շրդին, օսկին լցվավ գետին։—Վա՛յ,—ըսեց,—հեր ջան։

Օսկիք հավաքեց։ Էս օսկիքը պտի կանչցու հոր տուն։ Շատ աշխատեց, տունը կարգավորեց, մեկ օր մտածեց՝ ոխը հանեմ իմ հընգերներից։

Տղեն բերեց քեֆ սարքեց, հմնուն հավաքեց ընկերներին։

Էդոնք ըսին.—տղա՛, էդ իմա՞լ հելավ, քո հոր օսկիք պրծեր էր։

Տղեն գնաց, եկավ, մոռացե։

Տղերքը ըսին.—Ի՞նչ ա հեղև, ախպեր ջան, օր ըղմալ կմոռանաս, ըսա՝ օդիններ։

— Տո՛ մուկն մեր դուքնի բնատին ա կերե, ժնջիլն ա ծամե։

— Հա՛, հա՛, էդ մուկ կուտա ժնջիլ, կուտա ժնջիլ։

Կասա.—Տո՛ շան որդինե՛ր, հելեք իմ տանն դացեք, հընչի՞ շուն օշխրի ջիգյար չուտեր, հընչի՞ մուկն դուքնի ժնջիլ կուտեր, հը՞։ Դե՛ հելեք ռա՛դ հեղեք մեր տնից։

Հարուստի խոփը մուկը կուտա, բյասրի սապոն մուկ չուտա։

## 41(50). ՀԱՐՈՒՍՏԻ ԽՈՓ ՄՈՒԿ ԿՈՒՏԱ, ՔԱՍՊԻ ՀԱՎ ՃՈՒՆ ՉՈՒՏԱ

Մե հարուստ մարդ կընի, ու մե խատ դոլվաթ փշացնող տղա կունենա։

Էս տղեն տաս-տասէրկու տղա կպախա հուր խոր հաշվին, քեֆ կէնեն, կուտեն, կխմեն։ Էդ հարուստ մարթ ինչ կէնա-չէնա՝ տղի վրեն չկարա։ Վերջը կմտածա, հինքն հուրին կասա.—Ես ջոջցր եմ, որ մեռա, էդ բնդովլաթ տղեն իմ սաղ կարողութեն կփջցնա, ինքն էլ անոթի կմեռնի, ի՞նչ էնեմ, ի՞նչ չէնեմ։ Կրեբա օսկին կլցա մե ջոջ փարչ, բերան շրդով կկապա, շրդի ծեր կկապա հառրից, Տղին կասա.—Տղա՛, ես գինամ, օր դու տուն դրող չես, ես ջոջցր եմ, կմեռնեմ։ Ինձնից եդ օր շատ նեղ հընգես, էսա շրիդ քցա վիզդ, խեղդվի, քե էլ հուրիշ ճար չունես։

Մնա, էս տղի խեր կմեռնի։ Էս տղեն խոր կարք ու կարողութեն հուր հընգեր տղերքի խեսա

կուտա, կխմա, հըմեն կըփչցու, կմնա օրվա խացի կարոտ։ Մե շոշ տունական օր էս տղի հընդերները կեթան դեղից դուս քեֆ կէնեն, էս տղին մարթ չեն հաշվի, որ քյասբցեր ա։ Էս տղեն գյուքյա կրնդան կասա.—Բա ես ի՞նչ էնեմ, իմ ախպեր-տղերք դացեր են քեֆի, ընձի բան չունիմ որ էբամ։

Կնիկ կասա.—Մ՛րթ, ի՞նչ էնեմ, սաղ խաբրսումեն կևրցուցիր ընդոնց, մկա մե խատ խալ ունենք, մորթա, էփեմ, առ դյնա։

Էս տղեն էփուկ խալ կառնա, կեթա կխասի դեղի կրաղ, խալ կդնա գետին, կնստի, օր դուս հընչի, նոր էթա։ Հանկարծ մե շուն խալ կառնի կփախչի։ Էս տղեն կմտածի. «Էթա՞մ, թե նե դառնամ։ Հուրին-հուրին կմտածա, կասա.—Իմ սաղ դոլյաթ ընտոնց եմ կևրցուցե, պտի էթամ։

Նիաթ-դիաթ կեթա, հընդեր տղերքն կասեն.—Հա՛, էկա՞ր, արի՛։

Էդ տղեն կասա.—Մե խալ ի էփեր, անտեր շուն առավ, փախավ։

Հնդեր տղեք կծծդան, կասեն.—Ա՛յ մարթ, էկել ես, էկել ես, էլ հընչի՛ սուտ կասես, բա հավատալո՞ւ բան ա, որ շուն խալ տանա։

Էդ տղին թառնա կէնեն, կծծդան։

Տղեն ընտեղից նիաթ-նիաթ դեյա տուն, կընդրնից դյոխտու կեթա կմտնի էն օթախ, որտեղ խեր շրիտ կախե։ Տղեն շրիտ թալա վիդ, օր կախվի, շրիդ օր կձգվի, հառքից օսկին կկըվի տղի դյլխուն։ Տղեն կժողվա օսկիք, գյուքա կյնգան կասա.—Էս շրիդ իմ խոր խաղինի բալնին էր։

Սաբահտան գնդի ճոխ սեղան կբացա, էս քեֆ էրող տղերքին հըմեն կհանչա, հնդեր տղերք կպարմանան, կնստեն սեղանի բոլոր։

Տղեն կասա.—Մեր գյուքնի խոփ զարկել էի հասիք, մկներ հըմեն կերեր են։

Հըմեն խրտ հիրուր կասեն.—Խա՛, մուկ կուտա, ճի՛շտ ա։

Էս հարուստի տղեն կասա.—Տո՛ քյոփօղլիք, հընչի՛ խալ շուն չուտա, հընչի՛ գյուքնի խոփ մուկ կուտա։ Իմ սեղնից ոչ մի բանի ձեռք չտաք, դի՛ հայդա, հնչեք գյացեք։

Ըզմալ ա՝ քյասերի խալ շուն չուտա, հարուստի էրկաթ մուկ կուտա։

## 42(51). ԽՆԼՔ ՊՏԻ ԸԼԻ, ՈՐ ՂՍՄԱՔ ԸԼԻ

Էրկու կույր մարդ գնում են թագավորի պատի տակը փող հավաքելու։ Թագավորի անունն էլ Մահմուդ ա ըլում։ Էդի կլսա, օր ըստոնք ամեն օր գքան հիրա պատի տակ, կնստեն. մեկը հիրա անունով ա երգվում։

Ծառային կկանչա, կասա.—Գնա՛ էն մի քոռին բե, օր իմ անունով հերթում կուտա։

Երկու ղազ կմորթա, մեկի փոր լիք օսկի կլցա, կկարա, մեկն էլ դատարկ կլի, փլավ կլցա, կկարա։

Կկայնի բալկոն, կտա ծառային, կասա.—Էս ծանր ղազ էդ մարդին կտաս, օր իմ անունով հերթում կուտա, էդ մեկել ղազն էլ հնգերոջ կտաս։ Էդ քոռեր կառնեն ղազեր, ճամփա կընդեն տուն։

Էդ ծանր ղազու տեր ճամփին կասա.—Էսա ղազ ես կծախեմ, կառնե՞ս։

Հընգեր կասա.—Վեց շահով կառնեմ.—Մոտ կնայա կտենա՝ խինդ շահ ա, կասա.—Մե շահին էլ վազ կտամ։

Կտանա տուն, կնիկ ղազ կչարդա օր ուտեն, միջից օսկին կշռա գետին։

Առավոտ էսի չի էթա ողորմության։ Մյուս՝ առավոտ ափալ-թափալ կեթա ժողովրկունութենի, հիր տեղ կխասի, կասա.—Ձա՛ Մահմուդ, դու օդնական կայնես։ Ու կուզա նստի, թագավոր կըղարմանա, կկանչա դրան դիվանխանա։

Կասա.—Հերկե՞ս ես քեզի ղազ ի օղորկե, կերա՞ր։

Կասա.—Չէ՛, ծախեր եմ քոռ հնգերոջ վրեն։ Ըտե թագավոր կասա.

*Որ չիտա աստված,*
*Ինչ անա թագավորը։*

Ես քեզի ոսկի տվի, դու տվիր հնգերոջդ, թագավորն ի՞նչ անա. խելք պտի ըլի, որ ղսմաք ըլի։

## 43(52). ՃԻՇՏ ԽՈՍՈՂԻ ԲԵՐԱՆԸ ԲԱՑ Ա

Մե թագավորի մե տղա գլի, հա՛մ կուր, հա՛մ կյաս, հա՛մ էլ լալ։ Թագավոր շատ դարդ կէնա, կմտածա՝ մե ժառանգ, էն էլ էս օրի՛։

Մե դարվիշ կգա ըտու կուշտ, կտենա թագավոր նիաթներ կախուկ, կխարցու.—Ի՞նչ ա հելե, ի՞նչ դարդ կտանջա քեզ։

Կասա.—Բա ես ի՞նչ հող տամ իմ գլխին, մե տղա ունեմ, էն էլ էս օրի։

Դարվիշ կասա.—Թագավորն ապրած կենա, նեն դու, թագուհին ու վազիր ճիշտ խոսաք, ձեր տղի հաշկերն էլ, հանդչնեն էլ, լեզուն էլ կբացվի։

Թագավոր կասա.—Ի՞նչ ասեմ քե, ես դանձերի, կարողության, մալ ու մուլքի տեր եմ, համա որ դռնից մե մարդ ա գալիս, հաշկս նրա ձեռն ա։

Տղի հաշկեր տեղ-բա-տեղ կբացվենե։

Դորը վազիրինն ա։

Սա էլ կասա.—Ես էլ վազիր եմ, չէ՞, համա

Հաշկս էն ա թե իմ թագավոր երբ պտի մեռնի, որ նրա տեղ նստեմ։

Տղի հանգչներ կբացվի։

— Թագուհի՛, հերթ քունն ա, խիղճ ունես ճիշտ խոսա որ, տղի լեզուն բացվի։

Թագուհին կասա.—Դերվիշ բաբա՛, օր մի զորավոր ա գալիս, ասում եմ՝ թաքնի էդ ըլեր իմ մարդը։

Տղի լեզուն էլ կբացվի։

Ճիշտ խոսողի բերանը բաց ա։

## 44(53). ԱՍՏՈՒ ԳՐԱԾԸ ՉՆՉՆՉ ՉԻ ԼԻՆԻ

*Մի մարդ երեխա չի ունենա, շատ կտրտրվի, շատ դարդ կէնա։*

*Օրերից մեկ օր դարվիշ կգա ըտունց կուշտ, կասա.—Ի՞նչ ա քո դարդ, հընչի՞ էս դիլխոր։*

*Էդ մարդ կասա.—Օր ծերություն, անտերություն, մե էրեխա էլ չունեմ, բա ի՞նչ անեմ։*

*Դերվիշ կասա.—Դարդ մի արա, ես քեզ մի խնձոր կտամ, դու էլ, քու կնիկն էլ կուտեք, մե տղա կունենաք, համա տավերկու տարեկան որ դառնա, կհնգնի ջրխոր, կմեռնի։*

*— Է՛,—կասա էդ մարդ,—Թող հըլի, թող հընգնի մեռնի։*

*Ըտոց մե նախշուն տղա կըլի, տավերկու տարի դրանք ուրախ, երջանիկ կապրեն։ Տավերկու տարին, օր կԹմի, հենց հիրան ծնվելու օրը, էրեխեն կհնգի կմտի, շատ անհանգիստ կլի։ Խեր մի ամիս առաջ ջրխորի բերան փակ-բալնիք ա դրած հըլում, բալնիքն էլ հիրա մոտ պախած ա հըլում։*

*Մե խելի վախտ էրեխեն չի երևում, խեր գլի կտենա, տղեն գլոխ տրե ջրխորի կափաղին ու մեռեր ա։*

*Ըտենց ա՝ ասածու գրածը չնչնչ չի լինի։ Մախ որ գա, բալնիքով էլ փակես, կիգա։*

## 45(54). ԻՆՉ ԱՆԵՍ, ՔՆՉ ԿԱՆԵՍ

*Մի դարվեշ գլի, էդ դարվեշ գեղի մեջ չուր հիրիկուն ման կիգա, չում հիրիկուն կասի.—«Ինչ անես, քեզ կանես, ինչ անես, քեզ կանեսա»։*

*Մե խատ կնիկ գըլա, կասա.—Ի՞նչ անեմ ըտա ձեն կտրեմ, յավաշ ես դրա գլխին ինչ օլին դնեմ։*

*Էտա կնիկ խաց. կԹխա, մե խատ կլոճ կանա, էտ կլոճի մեջ Թույն կլցա, կեփա, կպախա, որ դարվեշ իգա տուն, տա ընդուն։ Դարվեշ կիգա, կշոքա Թունդրա շրԹին, կնիկ Թունդրա կլոճ կխանա, կտա դարվեշին։*

*Էդ օր էդ կնգա մարդ կեԹա հուր մեկուճար տղին նոքարությունից տուն բերելու։*

*Տղին կառնի կիգա, ճամփեին կխորչնեն, մե օրԹուղ տեղ կնստեն, որ դինջանան։*

*Տղեն կասա.—Ա՛յ խեր, ես անոթի կոտորվա։*

*Էնդեխեն դարվեշ գալում ա, կասա.—Էդ տըղեն ի՞նչ ա կասա, ընչի՞ ա նստե։*

*Խեր կասա.—Անոթի ա, խաց կուզա։*

*Էդ դերվիշ կլոճ կխանա, կիտա էդ տղին։*

*Տղեն կուտա էդա կլոճ, կհնչնեին խոր խետ տուն կեԹան։*

*Տղի փորի սանջուն կբռնա, կբռռա.—Ես մեռնում եմ, յաման օղնեք...*

*— Ա՛յ բալա,—մեր կասա,—հընչի՞, ի՞նչ ա հելե...*

*Տղեն կասա.—Ճամբեին խոգնած ի ու սոված, դարվեշն էկավ, կլոճ ավից, կերա ու հիմա փորացավ ա։*

*Մեր կասա.—Վա՛յ, վա՛յ, ես իմ տուն քանդի իմ ձեռով, իմ տղին սպանի, կուզի դարվիշին սպանի, ձենը կտրի էս գեղի միջից, էդ սև զուլումն էկավ իմ վրեն։*

*Ըտեղ են ասե օր «Ի՞նչ կանես՝ քեզ կանես, ինչ փրթես հուրիշի բյասեն, կիգա քյո գլա»...*

## 46(55). ՀԱՐԻՒ ՆԱՋԱՐԻ ԽԵՔԱԹԸ

*Մեկ մարդ, թագավոր էս մարդու վրեն կազաբ կտանա, կասա.—Ինձի իրեք դևու բեռ ֆերխու Թեփ պտի քաշես, տաս. օր չտվիր ինձի, հառավոտ քե կկախեմ։*

*Էս Հարիբ ձեռներ կդնա ծոց, կուգա տուն, կնիկ կխարցու.—Հարի՛բ, հորի՞ ըղմալ ես էսօր տխուր։*

*— Է՛, կնիկ,—կասա,—իմ ցավից վազն արի. թագավոր վըր ընձի կազաբ արե, եԹե ես չկատարեմ, հառավոտ ընձի կտանա կախարան։*

*— Ի՞նչ կախարան։*

*Կըսե.*

*— Է՛, մարդ ջան, աստված օղորմած ա։*

*Հարիբ հելավ, Հարբի քուն գուքա։ Մեկ էլ տեսան, կես գիշեր ա, էրկու խոքի էկան Հարբի վրեն..*

*— Հարի՛բ, Հարի՛բ։*

*— Վա՛յ էդոր յուրդ ու յուվեն քանդվի, չՔողից լուսն էլ բացվի։*

*Հարիբ.—Հա՛, ի՞նչ ա։*

*— Հարի՛բ,—ըսեց.—քո աստվածն եմ կանչի, հելի արի, թագավոր մեռեր ա, հելի արի, դագաղ շիքա։*

*Ընդուց ա կասեն՝ Հարիբ Նաջարի աստված ղանչա։*

## 47(56). ԸՍԹԱՎՈՒ ԷԼ ԶՄՆԱ

Ավալ վախտին էրկու քասիբ ախպեր գլնեն, մեկին ազար, մեկն կարքուկ։ Կարքուկ ախպոր ճիժ շատ գլնի, համարյա թե ապրելու միջոցն կկորվի։

Պատի ախպեր ճոշին կասա.—Ընձի տար ծախա, բե քու ճժեր պահա։

Ջոլ ախպեր կասա.—Ի՞նչ ա կասես, ըսթավու բան գնդի՞։

Որ նեղություն շատ կտիպի, ստիպված պըտի ախպոր կտանա բազար։ Իրեք օր տանա բազար, բերա, միևնակ մե մարթ գլնի ուղղ, էն էլ կասա.—Տանեմ եղան խետ լծեմ, եղան քայ չունեմ։ Պատի ախպեր կտիպա ջոչին, որ ծախա,—Ըսթա էլ չմնա։

Ջոլ ախպեր պատի ախպոր կծախա էտ մարթուն, մե քանի օսկի կառնի, կէրթա։

Ախպոր առնողն կտանա կապա եղան մոտ, ինչ վախտ եղան դաբր կուտա, էն վախտ էլ տղին կեր կուտա, ինչ վախտ եղան ջուր կուտա, տղին էլ ջուր կուտա։ Գարուն էդ տղին կլծա եղան խետ, կէրթա վար կէնա։ Մե օր վար անելու ժամանակ մե դավրեշ գուկա ջաղդով գնցի, կտենա, խիղճն չառնա, կմոտենա բարևա։

Կասա.—Ախպե՛ր ջան, էտ մարթ ի՞նչ ա էրև, որ տավրի խետ լծեր ես, կաշխատցուս։

Կասա.—Օսկի ես տվև առև, վար էլ կէնեմ, ցանք էլ կէնեմ։

Դավրեշ կասա.—Մե կով ունեմ, մե եզ, իմ եզ կուտամ քեզի, էտ տղին բաց թող, թեկուզ ես քասիբ եմ։

Էդ մարդ չ'ամաձայնվի։

Դավրեշ կասա.—Կովն տամ, ասու խաթրին թաք բաց թող։

Էլի մարթ չ'ամաձայնվի։

Տղեն լծան տկից վիզ կոլրա կասա.—Շնորակալ եմ, դավրե՛շ բաբա, գնա, էսպես էլ չմնա։

Դավրեշ կէրթա, մե երկու տարի հետո էլի գանդիպի ըտեղրանք։ Ջաղդեն հնցնելուց կտենա՝ համան արտ կքաղնեն։ Կասա. «Մոտ գնամ խաթցամ տենամ՝ էն տղեն սա՞ղ ա, թե մեռեր ա»։ Մոտնա խաթց-փորձ էնելու խաթար, տղեն դավրեշին խոխետուն կճաշնա, գուկա.—Վա՛յ դավրեշ բաբա, բարով ես էկել, ֆլան-բեխլան։

Դավրեշ կասա.—Տղա՛, էն վախտ տավրի տեղ կլծվիր, մկա խաղեն ես դառցե, ֆայլեք կաշխատցուս։

Կասա.—Հա՛, դավրեշ ախպեր, շնորակալ եմ։ էն խաղեն մեռավ, ընդոր կնիկն ուեր եմ, մկա տանտեր ես եմ։

Դավրեշին կհարդա, կպատվա, կասա.—Գնա՛, ըսթավու էլ չմնա։

Դավրեշ կէրթա։ Մե էրկու տարի գնցի, քաղաքան գուկա էտ երկիր։ Գուկա, ըտենց տուն խարց-փորց կէնա, որ տենա էտ տղի գրություն իմա՞լ ա, գրկցներ կասեն.—Դավրեշ ախպեր, քաքավորի վաղիր մեռավ, ըսօր տարած էրած վաղիր։

Դավրեշ գնաց քաղաք, մարքերու միջոցով խաբար էրց քաքավորի վաղիրին, որ ըսթա դավրեշ էկե, քեզի կխարցուս։

Վաղիր ալրալ կզորկա, դավրեշին կտանա մոտ, որովհետև ուրին տեր ա կայնե նեղ օրին։

— Վա՛յ,—կասա,—վաղիր ապրած կենա, էս ի՞նչ բանա։

Վաղիր դավրեշին մեծ պատիվ, փող, փարա կուտա, խետն էլ կասա.—Գնա՛, ըսթավու էլ չմնա։

Դավրեշ հուրին-հուրին կասա.—Եղից էկե հելե վաղիր, հլա կասա ըսթավու էլ չմնա։

Դավրեշ կէրթա հուր գործին, շատ, քիչ վախտ գնցի, քաղդան կդառնա գուկա վաղիրին տենալու։ Խարց-փորցի ժամանակ կասեն,—Քաքավոր մեռավ, վաղիրին ընտրին քաքավոր։

Դավրեշն նորից խաբար կէնա քաքավորին, օր հինք էկեր ա, ընթունա։

Քաքավոր ալրալ կգանչա դավրեշին։

Դավրեշ խրտ մտնել կասա.—Վա՛յ, փառք ասու, էս ի՞նչ լավ բախտի ես տիրացե, ես շատ ուրախ եմ։

Քաքավոր գ'րամայա՝ դավրեշին բոլ փող-փարա կուտան, կասա.—Գնա՛, ըսթավու էլ չմնա։

Դավրեշ կէրթա։ Բավականի ժամանակից հետո, գառնա գուքա, քաքավորին տեննալու, կխարցու, կասեն քաքավոր մեռեր ա։

Դավրեշ կասա.—Մունննաք կէնեմ՝ ընդոր գերեզմնի տեղն ասեք, էթամ ընդոր գերեզմնին։

Տանեն գերեզմնի վրեն։ Դավրեշ շատ գուլա, վերչապես գիշկա գերեզմնին, կկարթա. «Ըսթավու էլ չմնա»։

Կասա.—Մեռնելուց հետո էլ իմա՞ ըսթավու չմնա, էս ի՞նչ ա գրե։

Դավրեշ կէրթա։ Մե վախտ գնցի, քաղդան գուկա էտ երկիր, կասա.—Յավաշ էթամ, քաքավորի գերեզման մե խատ էլ տենամ, էթամ։

Կէրթա տենա՝ սելալն էկե, քաքավորի գերեզմանն էլ ա տարե, քարն էլ ա տարե, ըտեղով էլ գնա կէրթա։

Ինչ գինաս մարթու ավալն ի՞նչ գեղի, ախրն ի՞նչ գեղի։

## 48(57). ԴԱՆԱԴԱՆ ԲԱԼՈՒԼԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Թագավոր ամեն օր իր օսկե թախտի վրա բմբլե բարձեր դրուկ՝ աղոթք կասեր։

Մե օր աղոթ կասեր, մեկ էլ տեսավ Դանադան Բալուլ։

Զայն տվեց, ասաց.—Դու ո՞վ ես, որ իմ պարսպի վրա ման գյուքյաս։

— Իմ դավեն ա կուրիսել, քյու պատի վրա ման գյուքյամ։

— Ա՛յ մարդ, խո դու խելառ չե՞ս,—կասա թագավոր,—իմ պատու վրա ղուշ չի իջնի, քյու դավեն իմա՞լ կորավ իմ պարսպի վրա։

Հրեշտակ կասա.—Հընչի՞ դու օսկէ թախտի, բմբլե բարձի վրա աղոթ կանես—աստված քյո ձեն կլսա, հընչի՞ իմ դավեն քյու պատի գլոխ չի՞ կորի։

Ասաց ու էլ չերևաց Դանադան Բալուլ։

Թագավորն ասաց.—Էլ ես թագավոր չեմ մնա։

Ու հիրա ախպոր տղեն կդնա թագավոր, հինքն հիրուն կդնա ծուռ տեղ, կխածի ձի, կըհնդը քյուչեք, ման գյուքյա։

## 49(58). ԴԱՆԱԴԱՆ ԲԱԼՈՒԼԻ ԽԱՐՍ ՈՒՉԵԼԸ

Դանադան Բալուլ կթեա մե հուրիշ թագավորի կուշտ խարս ուղելու հուր ախպոր տղուն։

Ես եկել եմ, օր քյո աղջիկ տանեմ իմ ախպոր տղուն։

Թագավոր կբարդնա, կասա.—Քյո ախպոր տղեն, որ իմ աղջիկ կուզա, հուրին վազեր վաքիլ ունա՞, մի խելք գըլխուն մարդ ուղարկա, ուղի, էդ ծռին ես աղջիկ չեմ տա։

Դանադան Բալուլ դարձավ գյնաց, վազիրին ուղարկեց թագավորի աղջկան ուղելու։ Աղջկա խեր կուտա հուր աղջիկ Դանադան Բալուլի ախպոր տղին։

Հարսանիք արին, կերան, խմին յոթ օր, յոթ գիշեր։ Դանադան Բալուլ ախպոր տղին կասա.—Դու գնաս, օր ես երկինք գետին կքննեմ.

Ախպոր տղեն կասա. —Ինձ խմար օրենք ա։

Կասա.—Խարսի մոտ չքնես, չուրի ես չասեմ. քե իմ ասած չէնես, րոպեում կմեռնես։

Տղեն էլ չքնավ կնգա մոտ։

Կնստին, կխոսան, կասեն.—Հըմա չյոկ քըյննենք։

Հնցավ մե խելի վախտ, աղջիկ նամակ գրեց հուր խոր, ասաց.—Դու էլ չըլես, քյու թագավորությունն էլ, ինձի տվիր մե ախչկա, ես ախչիկ, էնի ախչիկ, շո՛ւտ արի, ընձի տար, քե չէ ես ընձի կսպանեմ։

Թագավոր ղոշուն կապեց, էկավ փեսի քաղքի ղրաղ, ասավ.—Էկեր եմ իմ ախչիկ տանեմ, քե չեն տա, քաղաք տակնուվրա կանեմ։

Դանադան Բալուլ գյնաց, ասաց.—Խնամի՛ ջան, էս ժողովուրդ ի՞նչ մեղք ունա, օր կոտորես. արի էթանք կեր ու խում անենք էս գյշեր, սաբախտան քյո աղջիկան առ, գյնա։

Աղջկա խեր համաձայնավ, էկան սկսին կեր ու խում։ Դանադան Բալուլ դանչեց ախպոր տղին, ասաց.—Կանա՞ս էս գիշեր ըմալ էնես, օր խարս սաբախտան չկանա տեղից հընչի։

Ախպոր տղեն գյնաց ախչկա կուշտ, քյնան մեկտեղ, ախչկան էֆն օրը քյցեց, օր սաբախտան չէր կանա շարժվեր։

Դանադան Բալուլ գյնաց խարսին ասաց.—Էլի՛ խաքյի, որ գյնաս։

Խարսն ասաց.—Էլ չեմ գյնա։

Գյնաց ախչկա խոր բերեց աղջկա մոտ, ասաց.—Էս դու, էս քյու աղջիկ, ա՛ռ, գյնա։

Խերն ասաց.—Աղջի՛կ, հելի էթանք։

Ախչիկն ասաց.—Է՛լ չեմ գյա։

Ասաց—Հընչի՞, ախր ինձ նամակ իր գրեր։

Աղջիկն ասաց.—Հեսօր էկավ իմ մոտ՝ խսկական մարթ էր։

Դանադան Բալուլը մտավ ներս, ասաց.—Դե՛ տար քյու աղջիկ, հընչի՞ չես տանի, ես օր նկա քյու աղջիկ ուղելու, ասի՝ տուր տանեմ իմ ախպոր տղին, չտվիր, կասիր Դանադան Բալուլ ծուռ աս։ Մկա ծուռ ես՞ եմ, քե դու։ Դը՛ տար, էլի՛, քյու աղջիկ։

Նոր աղջկա խեր կասա.—Խնամի՛ ջան, քյու խոսքն ա։

## 50(59). ՇԱՀ ԱԲԱՍ

Պարսկական շահի մայրաքաղաքը եղավ մի ժամանակ, որ գողությունն ու մարդասպանությունը շատացավ։

Շահ Աբասը կանչեց ոդրին, ըսեց.—Մեր պալատական սովորություններին հակառակ ա գընում կյանքը, ոչ մի երկիր էսքան ավազակություն չկա. ո՞նց անենք, որ դեմն առնենք։

Ոդիր կանչեց գիտնական մարդկանց, խորհուրդ արեցին, քե.—Շահ Աբաս, լավ կընի, որ գիշերը ոչ մի շարժում չթողնք, մինչև առավոտ լուս բացվի։ Քաղաքի դրսից պահապանությունն ուժեղացնենք, որպեսզի ավազակներ ներս չգան մեր քաղաք։

Շահն ըսեց, քե.—Գիշեր լույսեր չվառեն։ Քաղաք էլի տարածված էր։ Մի անգամ Շահը իր ղըլըղը փոխեց, հագավ գեղացու շորեր, հելավ դուս։ Անձրևային գիշեր էր, շահը ման էր գալիս, տեսավ՝ մի տեղ լուս կա, գնաց էդ ուղղությամբ. մի լուսամուտից նայեց ներս, տեսավ մեկ տղամարդ՝ նստած գաղտնի խորհուրդ կչնա։ Ներս մտավ, ոչ ոք նրան չճանչցավ, տեղ տվին, նըստավ, էս չորս հոգու ղեկավարն հարցրեց, քե ո՞վ ա ինքը։

Ըսեց.—Ես մի որսկան մարդ եմ, անձրև տվեց վրես, էկա ձեզ մոտ, մի գիշեր մնամ, մինչև անձրևը կտրի, կգնամ։

Ղեկավարն ըսեց.—Բա տու Շահ Աբասի հրամանից տեղյակ չե՞ս, որ գիշեր դուս գալ չի կարելի։

Շահն հիմացավ, որ դրանցից մեկը գող աւ Շահն ըսեց.—Էս գիշեր ի՞նչ պլան ունեք. խոսք եմ տալիս՝ ախպոր նման հըլենեք։

— Դե՛ լավ,—ըսին,—մենք փորձառեղ ունենք, գնանք, քե փորձենք, տեսնանք՝ մեզ հըլնգեր կանա՞ս հըլնես։

Հելան գնացին հինգ հոգով, հասան մի փոքր գետի կամուրջի. առաջ խմբի ղեկավարն անցավ, հետո մյուսները։ Երբ վերջում շահն անցավ, ընկերներից մեկն ըսեց.—Դու ո՞ր կողմով էկար։

— Ա՛յ, էն կողմով։

— Ախր, չէ՞, մենք էս կողմով էկանք։ Երկրորդն էլ ըսեց, որ էդ կամուրջ ա, չեն անցել։

Շահն մտածեց՝ ինքն ի՞նչ ասի. բայց գլխի ընկնելով, որ պտի նրանց նման պատասխանի, ստիպված շահն էլ երդվեց, որ.—Մենք էդ կամուրջով չենք անցել։

— Ահա՛,—ըսեցին, դու կարող ես մեզ հըլնգեր լինել։

Վերադարձան էկան, ըսին.—Մենք էսօր գընում ենք Շահ Աբասի խաղինեն կտրելու, ոիսկ կէնե՞ս գաս, մեզի մահապատիժ աւ։

Շահն ըսեց.—Կգամ։

Ընկերներից մեկն ըսեց.—Մենք ամեն մեկս մե գործ կէնենք, դու ի՞նչ կանաս էնես, որ գաս։

Շահն ղեկավարին ըսեց.—Դու ինչ պտի անես։

Ըսեց.—Ես, էս իրեք ընկերներս ի՛նչ նեղ պայմաններ հնգնեն, դրա ելքը կգտնեմ, իմ շընորհքն էդ աւ։

Մյուսը.—Ինչպիսի փակ դուռ ըլի, կբացեմ։

Երրորդ հըլնգերը ըսեց,—Էս իրեքով ինչքան բեռ ունենան՝ ես կշալկեմ։

Չորրորդ էլ.—Հողի երեսին ինչ կենդանի կա, ես նրանց լեզուն կհասկնամ։

— Բա քո շնորքն ի՞նչ ա, որ մեզ հետ գալիս ես։

Շահն էլ ըսեց.—Ես էլ մի ուժ ունեի, քանի ավազակ չէի, երբ աշխարհի կեսը ավեր լիներ, ձեռ տանեի իմ աջ բեղ օլրի, կշինվեր. եթե աշխարհ շեն լինի, ես ձեռ տանեմ ձախ բեղ՝ էդ շեն աշխարհ կկործանի։ Ինչպիսի հըլնգերի հետ էլ հըլնգերություն եմ արել, ինձանից շնորհակալ են եղել։

— Դե՛ գնացինք։

Երբ մոտեցան խաղնի պալատին, բակի մեջ երկու կծատող կային, մեկը մի տարեկան էր, մյուսը դահեցած էր։ Էս մեկ տարեկան շունը մի ղալմաղալ քցեց, կխաչա։ Հընկերներից մեկ ըսեց.—Էս փոքր շունը ասում ա, վեր կա՛ց խինդ էնպիսի ավազակ են էկել, որ մինչև հիմա տեսած չկանք։ Մեծ շունն էլ գլուխ բարձրացրեց, ըսեց.—Անտեղի վատամարդ մի հելի, տիրոջ մատը խնան աւ։

Շների ձայնը կտրվեր էր։ Երրորդ հընգերը փակը բացեց, մտան ներս, խաղինային հասան, լցին կես խալվար, վերցրին, ովին էն հնգերոջ շալակ. էնպես ա թռնում, շահը վազելով հետևից չկանա խասնի։ Բերին հասան տեղ, շահն հալալ կխնեց։ Լուսը բացվելուն պես՝ ամենք հիրանց տուն գային, պայման էն արեցին, որ որին բռնեն, ըսեն որ որսորդության ենք հելել։ Գացին։

Շահ Աբաս հելավ էկավ պալատ, ոդիրն ըսեց, որ խաղինեն կտրել են։ Շահն հմնուն բանտարկել տվեց. ով որ կասկածելի ա, բանտարկեցին։

Շահն ըսեց.—Ես ինքս կգննեմ։

Մաս-մաս բերին քննության։

Ավազակապետին էլ բերին, սա ըսեց.

— Ճիշտ է, ես գիշեր չեմ քնե, ես որսորդության էի դուրս էկել։ Շահը կարգադրեց դրան բանտարկել։ Էդպես երկրորդին, երրորդին։

Չորրորդին քննելիս հարցրեց.—Գիշերն ո՞ւր էիր։

— Գշերը ես որսորդության եմ եղե անտառում։

Շահն ըսեց.—Քեզ ասում եմ ճիշտ ասա։

Սա վիզ չառավ, շահը ջղայնացավ, ձեռ տարավ բեղ՝ որ ոլորի, ավազակն ձեռ քցեց քե, բռնեց, ըսեց.—Շահ Աբա՛ս, հաստատ մնաս, խնդրում եմ ձախ ձեռդ ցած դի, աչը բարձրացրու, չէ՞ որ քո հատկությունը էդ աւ։

Շահը զարմացավ. ավազակն ըսեց, որ.—Դուք էլ էդ ըսիք, որ ուզենանք՝ կքանդենք, կուզենք՝ կշինենք. ի՞նչ ես կարծում, մի տարեկան շան լեզուն հասկցող՝ Շահ Աբասի լեզուն չըխասկնա՞։

Շահը բոլորին ներեց։

## 51(60). ՇԱՀ ԱԲԱՍ

Մի անգամ Շահ Աբասը ոդրին կանչեց հուր մոտ ու խարցուց.—Ո՞ն ա մացե պարզևից դուս։

Ոդիրն ասաց.—Երեսուն տարի մի չորան ունինք, որ ըզգրից իրեք խաղար ոչխար տվինք նրան պահելու, ամբողջ ընտանիքով աշխատել ա սարերում, չոլերում, անձրևի տակ, արևի, ձան տակ. մենք նրան չենք գնահատել, քանի որ օշ-

խարն էլ դարձուցեր ա եռասուն հազար, ինչքան էլ որ ծախսեր ենք։

— Լա՛վ,—ըսեց Շահ Աբասը,—մի իմացիր տե՛ս, էդ չոբանը ի՞նչ փափագ ունի։

Ոզիրը գնաց սարերը չոբնի մոտ, կերավ, խմեց և ուշ երեկոյան հարցրեց.—Ի՞նչ փափագ ունես, չոբա՛ն, որ չի կատարվել։

Չոբանը լգիտեր, որ էդ շահի օզիրն ա, էդ պատճառով անկեղծ կերպով պատմեց.

— Եռասուն տարի անկեղծ աշխատել եմ շահի համար, միայն մի փափագ եմ ունեցել, մի օր մտնեմ շահի պալատը, իմ աչքովս պալատը տեսնեմ, նոր մեռնեմ։ Էդ ա իմ փափագը։

— Է՛, ըտեղ քեզ ի՞նչ օգուտ ունես,—ըսեց օզիրը։

— Դե՛ ի՞նչ օգուտ պտի ըլնի։

— Շատ բարի,—ըսեց հյուրը,—հնարավոր է, որ քո փափագը կատարվի։

Վերադարձավ ու շահին ըսեց, թե.—Չոբանի միակ նպատակն է մեր պալատը տեսնելը։

Միայն թե ես շահի պալատ պտի մտնեմ,—ըսեց,—իմ չոբնի շորերով, իմ կլավը, իմ չոմախը ու իմ հավատարիմ շունն ինձ հետ։

Շահը իմանալով չոբանի ցանկությունն, ըսեց.—Ասե՛ք, որ իր փափագ այսինչ օրը կկատարվի։

Օրերից մի օր չոբանին կանչեցին պալատ։ Սա իր խետ վերցեր էր շահի համար մի նվեր, հինգ տարի պահած զարթ։ Նկավ պալատ, բարև տվեց, բարև առավ, շահն էլ ոզրին ըսեց.—Ես չոբան ինչտեղ օր կուզի, իրավունք եմ տալիս բոլոր պաղտնարանները; բոլոր տեղերով քող տեսնի չոբան, երբ կվերջացնի, կբերես ինձ մոտ։

Ոզիրը պատիվ տվեց, և չոբանն ըսկսեց ման գալ հըմեն տեղ, տեսպանատուն, հյուրանոցներն, հարեմը։ Հինգ օրից հետո ոզիրը բերեց շահի մոտ։ Չոբանը մի շենք էր նկատել, որ չորս կողմը պատ է ու դուռ չկա, ըսեց.— Էս շինությունը ընձի ցույց տու։

Ոզիրը մտածեց.—Է՛, չոբան ջան, էդ հետաքրքիր չի։

— Չէ՛, ես շահից իրավունք ունեմ, որ ամեն բան տեսնեմ էս պալատի մեջ։

Ոզիրն ըսեց օր—Դա մեր չալլաթխանեն է։

Չոբան հասկցավ, օր չալլաթխանեն ամենահետաքրքիր տեղն ա։

Ոզիրը տարավ չոբանին, բարձրացան պատի գլխին և ի՛նչ տեսան. տեսան մի մեծ շենք, առանց դռան, չորս անկյուններում շղթաներով կապված են չորս գամփռ, էնքան երկար շղթա է, օր կարող էր հասնել մեջտեղը։

— Ո՞ւր են ձեր չալլաթներ։

— Էդ շներն են շահի չալլաթները պալատի կարգ ու կանոնով. ով որ դատապարտվում է մահվան, էս աստիճաններով իջեցնում են մեջտեղ և ձեռ ենք քաշում, էդ գամփռներ չորս պատառ են անում։

Չոբանն մտածեց ու զարմացավ, թե.

— Էս ի՞նչ անխիղճ դատ ու դատաստան կա էս աշխարհում։

Դուրս էկավ ըսեց.—Էն մի շենքն էլ կուզեմ տեսնեմ։

Տարան դիվանխանա։ Երբ դիվանխանի դուռ բացին, չոբանի շունը տեսավ, օր էն կողմից մի գամփռ գալիս ա. գաղափար չունենալով հյուղու մասին, որ պատով մեծ հեյելի ա, շուտ թռավ հասավ, հյուղին փշրվեց, շահի ամենաթանկագին հյուելիներից մեկը։

Վերադարձան էկան, ոզիրն շահին ըսեց, որ մեծ դիվանխանի հյուելին կոտրվել է։

Շահը մտածեց և ըսեց.—Մեղավորը ոչ թե չոբանն ա, ոչ էլ իրա շունը, մեղավորը շահն ա, որ չոբնին պալատ ա հրավիրել։

Չոբանին պատվով, հարդանքով ճամփու դրին, չոբանն ըսեց.—Ես մի տարուց հետո կգամ իմ շահին տեսնելու։

Մյուս տարին վերցնեց մի գառ, մորթեց, չորս հատ հոդչ առավ, էկավ շահի մոտ։

Շահին բերեց մի գառ, օր խարիր կիլո էր. չոբանը հպարտանում էր ըզորով։ Շահին նվեր տվեց, դնաց քնելու, երբ բոլորը քնած էին, չոբանը վերցրեց ոչխարի մարմին, բերեց դրեց ջալաթխանի գամփռների հառաջ, գամփռները ոչխարի մսի կարոտ էին, կերան, չոբնի հառաջ խոնարվան, շնորհակալություն հայտնեցին, չոբանը նորից բարձրացավ վեր։ Հաջորդ օրը չոբանին ճամփու դրին։ Երկու տարուց հետո գառունը ուշ բացվեց, աշունն էլ ձուն շուտ էր եկել, արոտատեղերը մնացել էին ձան տակ, օշխարները կոտորվեցին և քսան հազար օշխար կոտորվան։ Շահը հրամայեց սպանել չոբանին։ Երբ նրան իջեցրին չալլատների մեջ, երեկոյան եկան տեսան, որ չոբնին չալլատներ ձեռ չին տված։

Շահը հարցրեց թե.—Էդ ո՞նց եղավ, եթե ճիշտ ասես, իմ վճիռը կփոխեմ։

— Շահ Աբաս, եռասուներկու տարի ծառայել եմ քեզ, քո պատիվ բարձր ենք պահել, եռասունրնք տարում եղել ա աղետ, որի պատասխանատուն ես եմ։ Էդքան ընթացքում մի օր էլ ծառայել եմ չալլաթներին, որոնք չմոռացան էդ։

— Ազատ ես, չոբա՛ն, մենակ ասա՝ ո՞նց ես ծառայել։

— Շահ Աբաս, եթե քեզ մեկ տարեկան դառն եմ բերե նվեր, մի անգամ էլ նրանց բերի ոչխարի միս, նրանք չմոռացան իմ լավությունն։

## 52(61). ՇԱՀ ԱԲԱՍ

Մի անգամ Շահօղլի Շահ Աբաս Մեծը կխաքի դերվիշի շորեր և դուս դյուքյա, կսլաուսի հուր երկիր, կուզա հիմնա, թե ժողովուրդ ի՞նչ կըմտածա հուր մասին։ Ճամպխին կտենա իրեք ջահել, լավ խաքյուկ տղեքի։ Շահը հանդըզնեներ կկախա կլսա։ Ընդոնցից մեկը կասա.—Թե շահը ինձ տաս հազար օսկի տար, ես մի խաս դյուքյան կբացի, առուտուր կենեի, աղի նման կապրեի։

Էն մեկն էլ կասա.—Թե ինձ տեր, ես կառնեի փողեր, կեթայի կպտտսեի սաղ աշխարհ։

Էն երրորդը կասա.—Շահից մե բան կուզեմ, որ Բորդյա հուր մեծ կնգյա կուշա քյնեմ մե դիշեր, Բող սաբախտան ընձի կախարան խանա։

Շահ գյուքյա հուր պալատ, սաբախտան տղեքին կղանչա հուր կուշու։ Հառջի տղեն կխոստովանա, թե ինչ ա ասե. Շահ կհրամայա՝ բուռն տաս հազար մանեթ կուտան։ Երկրորդ տղին էլ կուտան։ Հերթ կկասի երրորդին, էսի կլսխենա, տաք ու պաղ քյրտինք կտա վրեն, բայց ճշմարտութիւնն կասա։

Շահ կղանչա հուր մեծ կնգան, կասա.—Ըստու խեռ գյնա, սաբախտան ըստուր պըտի կախենք։

Կնիկ կվերցու էտ տղուն, կտանա հուր խեռ։ Էտա կնիկ կբերա իրեք ձու՝ ներկուկ-նախշուկ. մեկը՝ կարմիր, մեկը՝ կանաչ, մեկն էլ վարդի դույն։

Բագուհին կասա.—Կե՛, այ տղա՛, կե՛։

Շատ որ կասա, էդա տղեն կուտա, բագուհին կասա.—Է՛, ի՞նչ խամի ենն։

Էդի կասա.—Հըմեն մե խամի ենն, ոչ մի տարբերութիւն չկա։

Բագուհին զայրացած կասա.— Դու հիմա՛ր, կնիկ՝ կնիկ ա, ի՞նչ տարբերութիւն կա կնոջ մեջ. կնիկը՝ կնիկա ա, հընչի՞ ես ուզե անպատճառ մեծ կնոջ խեռ գիշեր քյնեիր։

Ընդուց դեն գյուքյա Շահի կուշա, կասա.—Ընձի ներես Շահ, քյու դուռն եմ հընգյե։

## 53(62). ՇԱՀ ԱԲԱՍ

Շահօղլի Շահ Աբաս Մեծը՝ Իրանի բագավորը, մե օր իր մեծ վեզիրի ու հուր հառջի կնոջ խեռ դուս գյուքյան, ժողովրդի մեջ ման գյուքյան։ Մե գեղի միջեն հընցնելիս կտեսնան մե տուն, կտրին աղուն կա փռած, մե ցից փայա տնկուկ ա, գլխուն էլ փալաս Բալուկ. հինգն հիրան էդա ցից կշարժվի ու խավերին և Բոչունները կքյշա։ Շահ կհրամայա վեզրին.—Գյնա՛, տես էտա ցցի շարժվելու պատճառը։

Վեզիր էն սահաթին կեթա ներս, կտենա մե ջուլակ նստուկ, շալ կգործա, Բուր կզարկա շալին, կտոր պնդցնելու, ցցի ծեր կապած կըլնի Բևեն՝ հերթիկից խանած, կսկսա շարժվել, իսկ մեկել Բևեն կապած դլնի մե կարճ պարան ու կօրորա երեխին։

Վեզիր կտենա, կասա.—Շա՛հ, մե ջուլակ իրեք գործ կանա։

Շահ գյուքյա, վրան կղանչա գեղի հախպերի մոտ և կդինջնա։

Էդ ջուլակին մե չար կին կըլնի, որից շատ կվախենան։

Գործի գյախ մե խավ գյուքա կհնդյի Բեյի մեջ, կխճճա։ Էսի Բուր կզանա, խավ կխատուե։

Վեր կկենա, խավ կմորթա, կմաքրա ու կնդի տխուր մտածմուն մեջ, Բե ի՞նչ Բաուր ազատվի էդ չար կնգյա ձեռքից։

Հարևաններից մեկը ներս դեքյա, ջուլակին կտենա, կխաբցու.—Հնչի՞ էս ըդմալ նիաթ կախուկ։

Ջուլակ կպատմա հուր դլխու էկածը։

Էտա հարևան կասա.—Շահն էկե, հախպերի կուշա վրան ա դանե. էտա խավ տար ընտրան փեշքյաշ, էնի փեդ մե քսան կոպեկ կրաշխա, կուտաս, խավ կառնես, կպրծնես բնաբուռ կնգա ձեռից։

Ջուլհակ ըդմալ էլ կէնա, խավ կտանա։

Շահ կխաբցու.—Ի՞նչ դյուդես դու, այ դեղացի՛։

— Շահն ապրած կենա,—կասա ջուլհակը,—քե համար մե խավ եմ բերիր։

— Դե՛ լավ,—կասա շահ,—բաժնա՛, ուտենք։

Էտա ջուլակ դլլոխ կդնա Բագավորի հառջը, Բևերն ու ոտները վեզիրի, դոշի փափուկ մասը Բագուհու, իսկ մեջքի չոր տեղը իր հառջը։

— Հընչի՞ ըդմալ բաժնեցիր,—կասա Բագավորը։

— Շատ լավ եմ բաժնել, Շահն ապրած կենա, դլլոխ տվեր եմ Շահին, էնի մեր դլլոխն ա, Բևեր և ոտները տվեր եմ մեծ վեզիրին, որը քո Բևերն է և ոտները, ու դոշը տվել եմ քո կնդյան՝ էն էլ քյո փափկութիւնն ա, իսկ ջանդակը Բողի ընձի, քյո քյասիր ջուլակին։

— Կեցցե՛ս, ջուլակ,—կասա շահ և կհրամայա վազրին տաս օսկով պարգևատրել։

Ջուլակ կառնա, գյուքյա տուն։

Էդ բախս կլսա մե ջհուդ։ Տաս զաղ կունենա և կմտածա. «Մորթեմ տանեմ, ջուլակ մեկ խավ տարավ, տաս օսկի բերավ, ես որ տաս զաղ տանեմ, խաթիր կբերեմ»։ Կասա, կառնի կենա մորթուկ զաղեր։ Շահ էլի ըդմալ կհրամայա բաժնել։

Ջհուտ կվերցու իրեք դազ կդնա շահին, իրեք շահի կնգյան, էրկու վեզրին, էրկու հիրան։

— Ջեղավ,—կասա շահ,—դու լավ բաժնել չդինաս, դանշիք ջուլակ, Թող գյա, բաժնա։

Ջուլակ գյուքյա, կբաժնա ընենց, որ ջհուտին բաժին չհանա։

— Ա՛յ ըտենց, կբաժնեն հա՜...

Կասա շահն ու էլի տաս օսկի կուտա ջուլակին։

Թագուհին էդ որ կտենա, կյեռստի, կասա.—Էսի հուրին գործ ա գյտե, դինա՞ս, գյուքյա նույն բան կէնա, օսկին կտանա։

Ջուլակ կասա.—Դե որ ըդմվա ա, թագուհի՛, տու էս վեց ձուն մեր վրա բաժնե էնպես, որ ամենքս իրեք ձու ստանանք. Քե կարացա՜ր, զաքի տաս օսկի կուտամ, քե չէ՝ զաքի իմ գլոխ կտրել կուտաս։

Կվերցու ջուլակ վեց ձուն, կբաժնա։

Երեք խատ թագուհուն, մե խատ թագավորին, և կասա.—երկու քյո մոտ կա, հելավ իրեքը, մեկ կուտա վեզրին, կասա.—երկու դու ունես՝ հելավ իրեք, մեկ հուրին կվերցա, կասա.—Երկու ես ունեմ, իմս էլ հելավ երեքը։

— Բա ջհո՞ւդ.—կասա թագուհին։

Ջուլակ կասա.—Ջհուտն մեկ, մտրակը էրկու, թագիչը իրեք։

Շահն կասա, կբռռա.—Ջհուտին ջարդե՛լ, հմա ջուլակին տաս օսկի տալ իր յանեն, տասն էլ թագուհու։

## 54(63). ԹՈՒՐՔԻ ՏՂԱՆ*

Մի օր Քրիստոս, Մշու Սուլթան Սուրբ Կարապետ, մեր բոլ ձիավոր Սուրբ Սարգիս, հելան իրեքով, հեղան հընգեր, օր էթան աշխարհք պըտուտեն։ Հելան, շատ պտուտելուց եղո էս մարդկանց պաշար պրծավ։ Գացին մեր սար, բանըր սար ա, անուն Աղմաղան ա, գացին, էդոր գլոխն էլ մե խատ սուրբ կա, սուրբն էս ա, քե հայտնեմ։

Մե թուրքի լամուկ խայու տղեկներու խետ տավար կպախա, խայու տղեկներ էն թուրքի լամկուն կխաբեն, կտանեն մեր եկեղեցին, սրբուքեն կիտան էնել։ Էդ երեխա յա. լամկու խեր կիմանա, անունն էլ Աբդուլ Հասան, կառնի թըվանք, կհնգի լամգու հետև, քե դու էթաս խայու եկեղեցին, սրբություն առնես դառնաս խա՞յ։ Էս լամուկ կփախի, կփախի, կփախի գելնի էդ սարի գլոխ, որ խեր չհենա հելնի։ Խերն գելնի, կգանա կսպանա։ Խայերը կերթան էդ տեղ, գոլ ա, կթքան կլողկնան։ Ջորներ կերթան, օչխար կտանեն կշրեն, կտենան օր էդ լամուկ գերեզման օր թողած՝ լուս աստուծ կիջի վրեն։ Մկա էրած հխատատեղ, մատաղ կէնեն։

Էս իրեքով գացին, էդ Աղմաղանա սարի տակ նստան։ Կեսավորն էլ իշկին, օր չորան էդ սարի գլոխ օչխար ա կպախա։

Սուրբ Սարգիսն ու Սուրբ Կարապետը ըսին.—Դու հոչակավոր անուն ունիս, մեռնինք քե, հելի գնա, բալիմ մի օչխար բերես,—Քրիստոսին ա կսեն։

Քրիստոս բանըրցավ վեր, ըսեց.—Բարև քե, չորա՛ն։

— Բարո՛վ, հազար բարով։

— Ջորան ջան, մե խատ օչխար տաս՝ ուտենք։

Ըսեց.—ես չեմանչնամ դու ոն ես. իմ խեր ընձի խրատ ա տվե, բլիմ դու խարդախ մարդ ես, չուր քու անուն դուղ չտես, ես քեզի օչխար տվող չեմ։

Դե՛ Քրիստոսն էլ, կարելի՞ ա սուտ ըսա, որ Քրիստոս սուտ ըսա, մենք իմալ կեղի՞նք։

Ըսեց.—ես ժողովուրդի Քրիստոսն եմ։

— Վայ,—ըսեց,—աստված քու տուն քանդա՛, դու չամչնա՞ս, էկեր էս ընձենից օչխար կուդես։

Ըսեց.—Հորի՞։

Ըսեց.—Դու հարուստին ա կօդնես, ե՞փ էս քյասբին օգնե։

Ջոմախ վերցուց օր զաներ, անջախ Քրիստոս փախավ, դառավ էկավ։

Ըսեցին.—Հորի՛ չբերի՞ր։

— Ա՛յ տղեկներ, էդ իմալ շանորդի չորան ա, չոմախ քաշեց՝ «Դու հարուստին ա կօգնեաս», —ըսեց։

— Մշու Սուլթան Սուրբ Կարապե՛տ, ճլա դու գնա։

Հելավ էկավ.—Բարև քե, չորա՛ն։

— Բարո՛վ, հազար բարի։

Ըսեց.—Մե խատ օչխար տու մեր փողով։

Ըսեց.—Իմ խեր ընձի խրատ ա տվե, դու ո՞ն էս։

Ըսեց.—ես Մշու Սուլթան Սուրբ Կարապետն եմ։

Ըսեց.—Վա՛յ քու յուրդ ու յուվեն քանդվի, յոթ տարի ես քու պախս պախի, ըսի՝ բլիմ ընձի էնա փայլևան, ուր անուն էլ վըր շրդին հայատան խալ խանեմ իշնամ. Հորի՞ հարուստի տղին կաշառքվար, էրիր փայլևան, ընձի չէրիր. ես քե օչխար կիտա՞մ։

Փետ վերցուց, էն էլ փախավ։

Էկավ բռնավ ձիավոր Սուրբ Սարգիս։

— Բարև քե, չորա՛ն.

— Աստծու խերն ու բարին.

---

* Վերնագրված է կազմողի կողմից։

— Տո՛ չոբան, լավն չիտաս, էն զաբուն, կոռ օչխարն տուր, քանդ էլ հաշվա վըր մնդ.

Ըսեց.—Դու ո՞ն ես։

Ըսեց.—Բոզ ձիավոր Սուրբ Սարգիսն եմ։

— Խասավ ուրին քալեց վըր օտանց.—Էտա սուրուն էլ քի փնշքնշ, ես էլ քի զուրբան, քո օղներուն մնռնիմ Բոզ Ձիավոր Սուրբ Սարգիս, սրուն օր կուզես, ա՛ռ, տա՛ր։ —Ըսեց.—Ինո՞ւս քի հորի կիտամ. նա՛ դու հարուստին կիշկես, նա՛ քյասբի, իրեքին էլ կխեղդես, օր դուք կկայնըցուս։

Հելավ մեկ խատ լավ ստերջ տվեց, առավ էկավ։

Էս էրկուս,—Հա՛յ, հա՛յ,—ըսին,—մենք ամոթով մացինք ըստու հառեջ։

Էս մարդիկ հելան մորթին, կերան, մութ տվեց վըր ուրանց։

Ըսին.—Էկեք օչարնտով իրար պաշտպաննենք, չանավար չուտա մեզ, հելննենք սաբախատան, ջաղդա հընդենք։

Քրիստոս կայնուցին հառչին սֆթա, էնօր ժամ տվին, պառկան քնան։

Քրիստոս հելավ ասածու խետ խոսաց։ Սուրբ Սարգիս հանգաջ կախ պախեց, չքնավ։

— Աստված հայրիկ, քեզնն գուշեմ՝ էս տարի ինն ամիս ձմեռ էննես, տեննամ էդ խոլիվ հուր օչխար իմա՛լ կպախա։

Ըսեց.—Խա՛, քու խոսք կկատարեմ։

Էս մարդն լսեց։ Քրիստոս պառկավ, հելավ Սըբ Սարգիս պահակ հելավ ու խասավ չոբնին։

Ըսեց.—Չոբա՛ն, Քրիստոս ասածու խետ խոսաց, էս տարի ին ամիս ձմեռ կէնա, քո օչխար քաշա, սաբի-բաբի ծախա, էրա փող, փողդ էլ բեր էրա ցորեն, տարիմ էլ չորություն կէնա, քու ամբրներ խացով լիցւ։

Չոբան ԹԹխ ուր օչխար ծախի։

Ին ամիս ձմեռ էրեց, քյասպի օչխարն էլ, կովն էլ փիծավ, զարուն էկավ աշխարհ, Քրիստոս ուր ըսած փոշմնավ։

— Ա՛յ հա՛յ,—ըսեց,—մե չոբանի խմար էս սաղ գեղն ավիրի։ Կայնի հելիմ ասածուց խընդրիմ, օր մեկ սեյ՝ մեկ խալվար ցորեն տա, չոբնի սեյ՝ էրկու խալվար ցորեն տա։

Հելավ էդմալ էրեց։ Մենք դառնանք վըր չոբնին։ Գարուն հելան դուս, էկած չոբնից խաց ա կխնդրեն, հետո կիտանք։ Քրիստոսն էլի զարմացավ։ Չոբան հեղե երդրի տեր։

Բոզ ձիավոր Սուրբ Սարգիս խասավ չոբնին։

Ըսեց.—Քրիստոս խըտ ասածու խոսեց՝ հուրիշներու սեյեր մեկ խալվար կիտա, քո սեյն էրկու դիտար տա։ էրկու խուրց տի վըր քու սեյուն։

Ըմալ էրեց։

## 55(64). ՀՈՒՐ ՄԱՐԹՈՒ ՍԸՌ ՊԱՀՈՂ ԿՆԻԿԸՆ

Մե կնիկ սաղ օր մարթուն կասա.—Դու քո սըռ հնչի՞ ընձի չես ասե։ Մարթ դիտա հուր կնգա բնավորութենն, որ հլա մե բան չլսե, սաղ թաղին կասա։

Մարթ կասա.—Ի՞նչ էննամ որ ըստոր ձեռից պրծնմ։

Դիշերվա մե վախտ մարթն մե խատ ձու կդնա ծոց, կսկսա խավու նման կրկրալ։

Կնիկ կասա.—Էտ ինչո՞ւ կէնես։

— Մարթ կասա.—կկրկրամ։

Հետո ձուն ծոցից կխանա, կուտա կնգան, կասա.—Ա՛ռ, ածեր եմ։

Կնիկ կավատա, ձուն կուզա մարթուց։

Մարթ կասա.—Ա՛ռ, ի՞նչ կէնեմ։

Լումթախտա կնիկ կենթա հախտրի գլոխ հուրանց հարևանի կնքներուն՝ Աչեյ Քնար, Ժանդոյ Անայիտ, Նալրնդի Հարութի կնիկ, Նալրնդի Օսկիտատ կասա, որ մարթն ձու յա ածցն, չեն ավատա։

Կասա.—Վա՛յ, սև գա ձեր վրեն, հէս ա, չէ՞։

Վերչ ըտոնք էլ կավատան։ Մարթ հիրիկուն աշխատանքից գուքա, ճամփեն կլսի, որ կասեն.—Հէս ա չէ՞, ձու ածող մարթն։

Կասա.—Վա՛յ, էս ինչ սև էր։

Կնգան կասա.—Բա կասես քո սըռ ընձի ասա՞։

Կառնի չբուխ, գընդնի ըտոր վրեն, լա՛վ, քո ասածին, կտփա,—կասա.—Դը՛ մեկ էլ ասա՝ քո գաղտնիք ընձնից մի պախա։

## 56(65). ԹԱՄԲԱԼ ՄԱՐԹ

Գեղի, չեղի, մե թամբալ մարթ գեղի։ Ըտոր կնիկ պաշող կէնա, կասա.—Մա՛րթ հելի, հմեն հուրանց դաշտեր խերկած, գնա դու էլ ցանա։

Մարթ կասա.—Հո՞ւր ա սերմ։

Կասա.—Ես բերեր եմ։

Մարթ կասա.—Իմալ բերեր ես, ընթար էլ տար ցանա։

Կնիկ կտանա կցանա, գուքա կորի թալելու վախտ։

Կասա.—Մա՛րթ, գնա կորի թալ։

Մարդ կասա.—Չէ՛, իմ բան չէ, իմալ ժողվեր ես, ցաներ ես, ընթար էլ կորատա,—կնիկ կկորատա։ Ջրելու վախտ՝ էլի մարթն չջրա։ Կնիկ կենթա դեսից-դենից մարթ կբերա, կուտա ջրել։

Քաղելու վախտ կասա.—Ա՛յ մարթ, հելի էթանք քաղենք։

Մե կերպ մարդուն կտանա չոլ, մե քիչ մարթն

կէաղա։ Կնիկն լավ ճաշեր կեփա, կբերա, մարթն կուտա։

Կասա.—Կնի՛կ, քող մե քիչ քնեմ, դինջանամ, կուշտ կերեր եմ։

Կնիկ կէքա քավրոչ մոտ, կասա.—Ընձի քող տղամարդու շոր խաթեմ, մե խատ էլ ձի տու ես խնծնեմ, դամ արտի մոտ, ասեմ.—Ցավ ա հնդի դուս, թաթավորի դռշուն կվատի. թամրալ մարդու սիրտ-քոք ա դեղ էրած, տեղն ասեք, խանեմ տանեմ։

Որ ես կասեմ, դու ասա «հէս ա-հէս ա», իմ մարդուն ցույց կուտաս՝ բալև հլնի գործ էնա։

Էտ ձևի կէնա, քավոր կասա.—Հէս ա-հէս ա։

— Կնիկ կմոտնա էդ մարդուն։

Կասա.—Սիրտդ, քոքա տուր։

Մարթն կասա.—Աղա՛, լա կայնի։

Գլնի, կսկսա շուշուտա քաղել։ Կնիկ հիրիկուն կէքա տուն, գլնի գիշեր, հլա մարթն արտի մոտից չիգա։ Կնիկ կէքա մարդու յան, տենա՝ մարթն դուզ ծովու յան, դոր ես, կէքա։

Կասա.—Մա՛րթ, դոր ա՞ կէքաս։

Կասա.—Քադեմ՝ չեմ կանա, չքաղեմ՝ գուքան ընձի կսպանեն։

Կնիկ կասա.—Քելա, քելա, ես դաս եմ, հընչո՞ւ կվախենաս։

Մարթուն կատնա տուն, մարթն գիշեր հախու կմեռնի։

Կնիկ գլնի կասա.—Իմ մարթ մեռե։

Տանեն դնեն ժամ։ Կնիկ մե խատ փլթա կէնա, կդնա ժամու խունցից, կասա.—Ախն մեռելնե՛ր, քաղա մեռելնե՛ր հելեք վեր, ես Գաբրել հրեշտակն եմ, էկեր եմ ձեզի կերեցնեմ։

Մարթն կասա.—Կայնի՛, կայնի՛։

Գլնի պատանք կճղա, չիլաղ՝ տուն։

Կնիկ կասա.—Ցա՛, մարթ էկե՞ր ես։

Մարդ կասա.—Խաբա՞ր ես, Գաբրել խրեշտակն էր էկե, ընձի կերեցներ։

Կնիկ կասա.—Դու գիտես, ջրու յան էքաս՝ չես պրծե, մեռնես՝ չես պրծե, գործ էնես՝ նոր կպրծես։

Արտն կէքա կփորա, էդ ձևի էլ կպրծի։

## 57(66). ԿՆԳԱՆ ՏՓՈՂ ՄԱՐԴԸ

*Գլի, չըլի, մե մարդ գլի, էտա մարդ հուր կնգան շատ կծեծա. խելոք կնիկ գլի, կծառայա ընդուն։*

*Մե օր կնիկ խաց կտանա, ճամբին կտենա էրեխեքը ձուկ կբռնեն, կխարցու.—Ձուկ կծախե՞ք։*

*Երեխեք կասեն.—Սոված ենք, մե խաց տու, իրեք ձուկ տանք։*

*Էդ իրեք ձուկն առավ, գնաց, մոտիկ էր արտը, տարավ ձկներ քալեց ակոսների մեջ։*

*Ասավ.—Բարև քե, մա՛րդ։*

*Ասավ.—Բարին քե խեռ, դնա էն յան, շան կնի՛կ, եղ կխոտի։ Մարդ չկանա աղթի եղներուն, կնայա, կնայա, կտենա ակոսների մեջ իրեք խատ ձուկ, հավաքեց, տվեց կնդան, ասեց.—Կնի՛կ, տար կարմրցու հիրիկուն գամ, ուտեմ։*

*Կնիկ առավ, գնաց տուն։*

*Քավորի կնգան կանչեց տուն, ասավ.—Քավորկին, սանահարդ գժվել ա։*

*Մարդը իրիկուն էկավ տուն ասեց.— Կնի՛կ, ձկներն հո՞ւր ա, քե ուտեմ։*

*Կնիկն կասա.—Ի՞նչ ձուկ։*

*Ասավ.—Ակոսների միջից չդտա՞ տվի քեզ, որ կարմրցնես՝ գամ ուտեմ, դե՛ բեր։*

*Քաշեց կնգան ծեծեց, կնիկ փախավ քավորին բերեց։ Մարդն օր ըսավ քե ակոսների միջից ձուկ էր բռնե տվի, որ կարմրցնի, քավորը ըտուն կապեց սնից, ասեց, գժվեր ա, ու մի լավ ջարդեց։*

*Անտեր մներ էն արտը,*
*Որ չծեր իմ մարդը,*
*Իմա՞լ էնեմ, իմա՞լ չէնեմ,*
*Մարդս ծեր ա, շվարեր եմ։*

*Մարդ կխնդա, կասա.—Չեմ ծռե, չեմ գժվե, ընձի ազատաս։*

*Կնիկ շրիդ կհարձկա։ Մարդ կխելոքնա։*

*Առավոտուն կնիկ փլավ կեփա, ձուկ կդնա մարդի հառեջ, չան կասեն, չան կլսեն։*

*Մնկ էլ որ ձուկ կտենա, կասա.—Կնի՛կ, աչքիս էլի ձուկ ա էրևում, բեր ինձ կապա, էլ քավորին մի՛ կանչա։*

## 58(67). ՎԱՅ ՊՍՏԻԿ ԽԱՐՍ, ՎԱՅ ՊՍՏԻԿ ԽԱՐՍ

*Էրկու ախպեր են հընչում. մեծ կնիկ ա բերում, համա ըտու կիսուրը ըսկի օր չի տալում էդ խեղճին։*

*Պստի ախպերն էլ ա կարդվում, համա խարսը շատ սատանա յա ըլում, տենում, որ ջոջ խարսն որ ձմռում ա քցում, կիսուրը գալի խջվում ա ձմմին։*

*Խեղճ ջոջ խարս, խոքին գալիս ա բերան, էդ էլ քիչ ա, հելնում նստում ա ջոջ խարսի շլակ։*

*— Ըսենց ձմռանը լավ կէքա-կգա։*

*Պստի խարսը նստում ա, նստում, ասում ա.—Ջի՛, ես ըստու գլոխ մե օլին պտի խանեմ։*

*Մե օր էլ պստի խարսն ա ձմռում զանում, պառավը գալիս խեծում ա ձմռում։ «Դրա համար են ասում՝ ձմռում խեծող պառավ)։*

*Նստում ձմմին, էդ խեղճ խարս տանում-բերում, կարագն հընչում ա։*

Պատի խարս կասա.—Ադե, մե քիչ էլ խնծի, քեզ Քալեմ ձմմի տեղ։

Պառավ կխնծի ձմոմ, խարսը կտանա-կբերա, տանա էս պատ, էն պատ կդանա։

— Տո՛ Քող, մնոա, ճարմո՛ւ։

Խարսը հո՛ չ, դանում էս պատ, դանում էն պատ, էնդա՛ր, կխսուրի ճարր կտրում ա, տանում խանում-խաթուն պատկացնում չլերը։ Հիրկուն տղերքը գալում են, Քև.—Էս ի՞նչ ա հելե։

Քև—Ադեն բև քեֆ ա։

— Ադե՛, ի՞նչ ա հելե։

— Վա՛յ պատի խարս, վա՛յ պատի խարս—էս պատ, էն պատ։

Յուց ա տալի պատի խարս։

Չեն խասկնում, ասում են.—էս ի՞նչ ա կասա։

Պատի խարս ասում ա.—էն օթաղ, էն տունը հըմեն տվեք պատի խարսին։

## 59(68). ԿՆԻԿՆ ԻՄԱԼ Ա ՄԱՐԴԻՆ ՍՊՌՅՆԸՄ

Մի կնիկ ասմ ա.—ես իմ մարդին կծոցնեմ։

Ասում են.—Չես կանա, քո մարդ ծանդրմախիկող մարդ ա։

Ասում.—Չէ՛, կծոցնեմ։

Էս կնիկն հըլում ա մարդից զաղտնի, հաբևանից բոլ ձուկ ա առնում, Քալում փոսեր՝ ակոսներ, մարդին ասում ա.—Գնա՛ մեր արտը, զործ արա։

Մարքն էթում ա, էթում տենում՝ ակոսների մեջը ձուկը շարան-շարան շարուկ ա։

Գալում տուն ասում—Ա՛յ կնիկ, ակոսներից ձուկ եմ բռնե։

Կնիկն ասում ա.—Քա՛ աստված վկա, Սրբ. Օվանեսը վկա մարդ ծռեր ա։

Էս կնիկ կանչում հարևաններին.—Էկեք, իմ մարդ ծռեր ա, ո՞ն ա տեսե չոր արտի միջից ձուկ բռնե։

Էնքան ա ասում, չուր էս մարդն օղորթից ծըռում ա։

## 60(69). ԲԱՐԻ ԽԱՐՍ

Մեկ մարդ՝ մե լավ խարս ունի։ Էս մարդիկ՝ իրիկ-կնիկ, հուխտ ա խոստացած որ պտի էթան։

Խարս կըսա.—Ինձ էլ տարեք ձեր խետ։

Ղըսեն.—Իմա՞լ տանենք, գարուն ա, մալի վախտ ա, կովեր ծնուկ են, օչխար ծնուկ են, դու երիտասարդ խարս ես. մենք էրթանք՝ աստված կանչենք, ձեզի շանսաղութլուն, չի կարելա, պտի մնաս տուն։

Էս մարդիկ ուրանց պաշար վերցին, դացին։ Հարևանի կին ուր պես երիտասարդ կնիկ, էրկու խոդով ա, միս կուզա, աղքատ են, մալ չունեն։ Էս մնկել խարսին մե դել կա, ցրքե՝ էրկու խատ լավ Քուլա ունի։ Էս կին էկե էդ Քուլեքներուց մեկ վերցի, որ տանա մորթա, ուտա։

Հարևանի կնիկ տեսավ, խասավ դեմ կտրեց.—Ա՛յ խարս, մատղաշ Քուլեն օր տարար, կապրի՞։

Գիլա, կըսա.—Քող տանեմ, Քող։

Կըսա.—Ղընչի՞ կտանես, դուն ըսա՝ Քողնի։

Կըսա.—Իմ սիրա միս կուզա, տանեմ մորթեմ, դաղտնի ուտեմ։

Քուլեն ձեռնեն կառնի, մե խատ լավ դառ կիատ։

Էս կնիկ կտանա, կմորթա, կուտա։

Կեսուր, կեսեր խասան մտան ժամ օր՝ հուրանց խարս խաբուկ խփուկ, շորեր խազած հելե բեմ, խըտ քահանին կայնուկ ա։ Զարմացան, ամոթու չխոսան։ Ուրանց ծուռը ազոթք կչենեն։ Առավոտ կթեան՝ խարս դատ, հիրկուն՝ խարս դատ։ Էրկու օր կմնան, էրկու օր էլ խարս դատ։ Դարձան էկան տուն, տեսան՝ խարս ուր սովորաբան շորեր վրեն, տուն ա։

— Տո՛ խարս լաո, դու հորի՞ մեր խետ չեկար, էկել կայներ իր բեմ, տերտրոչ մնե։

— Ա՛յ կեսրեր, ծո՞ր եք, ես տեղ չըմ դայի։

Կեսրեր խելոք մարդ էր, ըսեց.—Խա՛րս, արի դու դուն ըսա, դու բարութում՝ մը արեր ես։

Ըսեց.—Ի՞նչ խարեմ, մե դառ եմ տվե հարևանի խարսին։

Կեսրարք խարսի ճակատն խասան պագին, ըսին.—Հուխտն քումն ա։

## 61(70). ՉԱՐՄ ԿՆԻԿ

Մի կնիկ շատ ա մարդու զայլեն տանում, Քե գործ շատ կչենեմ, շատ կչենեմ։ Մարդու խոքուն խասնըմ ա ասըմ ա.—Ա՛յ կնիկ, չըլնի՞, որ դու էսօր վար էթաս, ես նստիմ տունը՝ խացն էլ Քըխեմ, գրՔնին էլ կուտ տամ։

Ասում ա.—Լա՛վ։

Կնիկն էթում ա, մարդը Քոնդիր վառում, խմոր անում, խմորն հըլում ա որ տաշտից ըհը՛, ըհը՛ Քափի, մարդը էթում գրՔնին կուտ տա, չկանում, խրտնում ա։ Էդ մարդն չի հիմնում՝ ինչ անա, շալվար խանում, նստում գրՔնի տեղ։ Կնիկ գալում տենում, Քունդիրն հընցե, պաղե, խմորն հելե տաշտից Քափե, մարդն էլ շլվարն հանե, նստե գրՔնի տեղը։

Էդ որ տեսնում ա կնիկն, ասում ա.—Հը՛ մարդ, իմա՞լ էս, դժվա՞ր ա, Քե չէ։

Մարդն ասում ա.—Խա՛, կնիկ, զորք որ քու գործն շատ դժվար ա։

## 62(71). ԱՄՈԹՈՎ ԿՆԻԿԸ

*Մե խաւտ կնիկ բիչ կբերաւ Հերես կմրեն, ճիժ կդնեն գիրկ, ցախավել կկապեն հետևից, պոչ կուտան ձեռ, ճժէր կբզեն, կքշեն, կասա.— Խելո՛ք, խելո՛ք, գընգնեննք, գլնեննք փայտառակ։ Սև՛ դա վրեռ, գվա չելև խայտառակ, հընդնի՝ նոր գլնի։*

## 63(72). ԽՆԱՄԱԽՈՍ*

*Էկան խնամախոս, մեկ աղչիկ դուզեն, աղչկան տեր ֆևեր վերցուց խաղցավ, օր խաղցավ տղի տեր խառցուց ըսեց.*

*— Քու տուն ակոլի, քու չիդրին. էսա քու աղչիկ կտանեմ, դու պտի լաս, դու կխաղա՞ս, էդ իմա՞լ բախս ա։*

*Ըսեց.—Դու անգետ մարդ ես, չխասկնաս։*

*Ըսեց.—Հորի՞։*

*Ըսեց.—Իմ հերսի սև մուր՝ կքանմ քու հերես։ Բա աղչիկ ծնողին սև հերես ա, ի՞նչ ա**։

## 64(73). ԵՐԿՈՒ ՔՈՒՐԴ

*Երկու քյուրդ մե պատի տակ նստուկ կխոսին։*

*— Դու որ դառնաս թագավոր, ի՞նչ լավ կերակուր կուտես,—կասա քյաչալ քյուրդ։*

*— Թե դառնամ՝ գլլոխ սոխի մըշի կանաչ զոլա կա, ա՛յ թե ինչ կուտեմ։*

*— Բա դու ի՞նչ կուտես։*

*— Է՛, տնաքյանդ, էլ ի՞նչ թողիր, որ ինչ ուտեմ, ինչքյան լավ բան կար, դու կերար....*

## 65(74). ՄԻ ՔՈՒՐԴ

*Մի քուրդ հանդում ման գալած ժամանակին մի եզան մաշված նալ ա գյըտնում։ Երեկոյան կբերա գյուղ, ցույց կտաւ։ Գեղի գիտուն մարդկանցից չեն խասկնա, թե էդ ինչ զադ ա։ Կառնա էտա նալ, կտանա Հալեբ քաղաքը, որտեղ կապրեր քյուրդական շեյխը, անշուշտ կխասկնա թե ի՞նչ ա։*

*Ճամբեու պաշար կթխա ու տասվեց օր ու գիշեր ոտքով կերթա, կխասնա Հալեբ, կխարցու, կգըտնի շեյխի տուն։ Երբ կերթա շեյխին կասա հընդնի ա էկե, շեյխ գուզա, կիրիշկա, կասա.—Որտեղից ես 16 օր էկել խասել ես դաս, բա ձեր գեղում մեկը չկար, որ հիմնար, թե էս ինչ ա.*

*Էտի կասա, թե—Չէլավ էլի, ըտտու խամ էլ եկել ենք քյու կուշու։*

*— Պա՛հ, ձեր տուն չակոլի, հա՛.—կասա շեյխ,—էսի մեր լուսինն ա, մաշվի, հնգեր ա ցած։*

*Գյընացող քյուրդերը կափսոսան, որ իրենք չեն խասկցել էտա դատարկ բան։*

## 66(75). ՄԱՐԴՈՒ ՉԻ ՄԱՆԵԼԸ

*Մե մարդ հիրա ձին կտանա բազար, կուզա ծախաւ։ Մե հուրիշ մարթ գյուքյա առնելու, կասա.—Ախպե՛ր, ի՞նչ տամ ձիուդ։*

*— Ութ թուման,—կասաւ։*

*Սա կթխա մե մարթ կկանչա, կասա.—Արի տե՛ս, բալքի մե թուման քի բախշաւ։*

*Չիտերը կբախշա մե թուման։ Չի առնողն կուրխնա, կէթա բազար, նորից մե մարթ էլ կբերա, ձի ծախողը էլի կտա մե թուման։ Մեկ էլ կբերա, էս անգամ ձի առնողը, որ կտեսնա էլի հիջավ, կծծղա.*

*Ծախողը կխարցու.—Հնչի՞ կծծղաս։*

*— Բը՛ ի՞նչ էնեմ, էտքյան բախշեցիր, բա տակը զատ չմնաց, ի՞նչ մնաց, որ տանես տուն։*

*— Հընչի՞ չմնաց, տակը մնաց իմ ձին, խեծնեմ, կէթամ տուն։*

## 67(76). ՏԵՐՏԵՐՈՋ ԱՂՋԻԿ

*Տղեքը հավաքվում են մի տեղ ու ըսկսում են պատմություն անել։ Մե մարդ հիրա հարսից.*

*— Կրակ ու պատճե ա, ոչ մի բանի պետք չէ, թամբալի մեկն ա, մարդն էլ ընդուն շատ կսիրաւ։*

*Մի օր էլ կնիկս խիվանդցավ, ասաւ՝ գնամ ջրի, կնիկս ասաց.*

*— Ամեն մա՛րդ, տղամարդիկ օրենք չի՝ գընալ ջրի։*

*Քաշքշենք հիրուր, կնիկս ասեց.—Ջայնամ ես խիվանդ եմ, ես կէթամ։*

*Խարսն էն կողմից վեցրեց թե.—Հընչի՞ եք կռվո՞ւմ, հերթի դրեք. մե օր դու գնա, մե օր էլ էնի, էլ հընչի՞ եք կռվում։*

*Էս աղչիկ տերտերոջ աղչիկ ա։*

*Մե օր տերտերն էկավ թե.—Խնամի՛, ես կէթամ էդա գեղրանք, ձի չունեմ, ձիդ տու խեծնեմ, էթամ.*

---

* *Այս և հետագա 63/73, 64/74, 67(26), 70(79), 71(80), 72/81, 23(82), 75(84), 76(85), 77(86), 78(77), 79(88), 80(89), 81(90) զրույցների վերնագրերը դրված են կազմողի կողմից։*

** *Մեր վախտին՝ իրիգուն, օր արև մտեր, խերն օր դունեն գեր ու բաղմեր, ուր աղչիկ տուն չի, մոր կըսեր.— Քու աղչիկն հո՞ւր ա, քու ֆլան ու բեհվանու։ (Ման. վիպասացից)։*

Ես էլ մի թալնջի ձի ունի, ասի՝ կայնի կապեմ բստու գլոխ, ծախեմ։

Էկա ձիուս ձվերը խանձեցի, մե լավ թավիցի, ձինը ծառս հեղավ կրակի նման, տվի խնամուս։ Տարա գինի խմցուցի, դոմի դուռը բացի, տվի, փողը հաշվեց, տվեց, գնաց։

Էն մեկել օրը հիշում, որ խեծի, ձին կպի գետին, չի պոկվում։

Գալի խնամու կուշտ, կասա.—Էդ ի՞նչ ձի էր, կպե գետնին, չպոկվի...

Քելե քո ձին տար, թամբալ ա։

— Բա չե՞մ գա, քե դու էկար քո աղջիկը տարար, ես էլ կգամ ձինը կտանեմ։

## 68(77). ԽՄՈՂ ՔՅԱՎԱՌՑԻՆ

Մի քյավառցի լավ խմող ա էլում, դը՛ բնական ա, քյավառ ո՞նը չխմում։ Էս մարդս մի օր հիրա ուզածի պես լավ լավաթին խմում ա, ու էլի հիրա էն խին օլոր-մոլոր ճամփեքով տուն ա գալում։ Գալում ա, բայց դե՛ էդ մարդու կնգա խոբուն արդեն խասուկ ա էլում։ Էս կնիկն մե լավ դագաղ ա շինել տալում, էս մարդը հենց տուն ա գալում, ըստուն պառկցնում ըղտեղ, կախաղան էլ դնում վրեն։

Գիշերվա մի վախտ էս մարթս օյաղշում ա։

Մեկ էլ ասում ա.—Ցա՛, էս որդի՞ եմ։

Մեկ էլ մեկը կողքից ձեն ա տալում.

— Տո գերեզմանոցն էս ախպեր, որդի՞ պտի հըլես։

Ասում ա.—Էս ո՞նց եմ հընգե ըստե։

— Վա՛յ, ախպեր ջան, մեռեր ես, բերած թաղած, էլի՛։

Ասում.—Դո՞ւ էլ ես մեռել։

— Տո՛, բը ինչ եմ։

— Դու քանի՞ տարվա մեռել ես։

— Դե՛ մի քսան-քսանխինգ տարվա գլիմ, էլի։

— Վա՛յ, ախպեր ջան, դու խին մեռել ես, ըստե մի տեղ չկա՞, էթանք, մեկ-մեկ թաս թալենք։

## 69(78). ՔՅԱՎԱՌՑԻՔ

Քյավառցիք էթում են բանակ։ Մեկ էլ հրամանատարը կանչում ըտոնց կխարցու ով ինչ հուշում, կրթություն ունա։ Ամեն մեկ ջոկ-ջոկ կասեն։

Մեկ կասա.—Ես համատարան եմ գացե։

Մեկ կասա.—Ես տեխնիկում եմ գացե։

Կասա.—Ո՛ն կրթություն ունա, մե քալլ հառնջ թող գա։

Ասողները գալում են, նայալնիկ կտեսնա, որ ըստոնց մեջ մեկը չասեց, որ կրթութուն ունա, բայց հառաջ ա էկե.

Կասա.—Ախպեր ջան, բը դու բան չասիր, դու ի՞նչ կրթութուն ունես։

Էնի կասա.—Ես՝ կրթութուն չունեմ, ընկեր հրամանատար ջան, բայց քյավառցի եմ։

## 70(79). ԲԱՅԱԶԵԴԻՆ

Մե բայազեդցու կբռնեն, կտանեն բանդ, ընտեղ կխարցուն, թե.

— Բա քե հընչի՞ ա բռնած։

Կասա.—Մե՛շու ձգան խամար։

— Ինչքա՞ն ա տված։

— Տսվխինգ տարի։

— Հընչի՞ մե՛շու ձգան խամար տսվխինգ տարի՞ կուտան։

— Դը՛ խա էլի, գացի պինամիտ թալի՝ մե՛շու ձուկ դուս էկավ, էրկու խատ էլ խեսը վաղալեզ։

## 71(80). ՎԱՆԵՑԻ ՊԱՌԱՎԸ

Մե վանեցի պառավ ձգան հերթ ա կայնած ըլում. մինչև հերթը հասնելը, կամաց-կամաց ներունդով ձգան հաշկեր կխանա. ևի հերթ կխասի հուրին, կասա—Բալա ջան, էսա ձուկ ի՞նչ արժի։

— Վնց ռուբլի, մայրիկ ջան։

— Ի՛, էսա քյոռ ձո՞ւկ։

## 72(81). ՄԱՐԴՆ Ա. ՇԱՏ ԹԵ ԿՆԻԿ

Մե ժողովում մեր գյուղի գիտուն մարդուն խարց կուտան թե՝ մա՞րդն ա շատ, թե կնիկը։

Էդ մարդ կասա.—Կնիկը։

— Իմա՞լ գինաս, որ կնիկն ա շատ,—կխարցուն ըաղաղրուն։

— Կնանիք զաթի քիչ են. էն մարդիկ, որ հուրանց կնգյատանց ապրեցության տակ են, ընդունենք կո կնիկ են, աղամարդ չեն հաշվում։ Ըտունց էլ գինամ, որ աղամարդիկ քիչ են, իսկ կնգտիք շատ։

## 73(82). ԵՐԿՈՒ ԳԵՂԱՑԻ

Էրկու գեղացի իրար խետ նստուկ կխոսին։ Մեկը խարցուց, ասաց.

— Աղարե՛կ, քյանի՞ մատակ ունես։

Ասաց.—Տասից ինը պակաս։

— Լա՛վ,—ասաց,—Սեփա՛ն, բյա դու քյանի՞ խատ մատակ ունես։

Ասաց.—Քյունից մե խատ պակաս։

## 74(83). ՔՅԱՎԱՌՑՈՒ ԷՇԸ

*Մե խատ քյավառցի ճամփա յա էքում, մեկ էլ մի հուրիշ մարդ հանդիպում ա դրան, ասում ա.—Էկեք ըստոր ծոցննենք։*

*Գալում են նստում էդ մարդու կուշտը, ուտում են, քյավառցու էշի կենացն են խմում, բա.—Է՛շ ջան, քու կենացը, քե առողջություն, հաջողություն։*

*Էս քյավառցու խոքուն խասնում ա, վերցնում թասն, ասում.—Բը՛ ախպեր ջան, ձեր կենաց, ես չգիտամ, որ իմ էշը ըսենց լավ շրջապատ, ըսենց լավ հընդկրներ ունի։*

## 75(84). ԱՐԱՄԸ ՀԱՅՏՎԱՃԱՌ

*Պատերազմի վախտը Արամ խաց կծախեր. մե կնիկ երկու կիլո խաց կուղա հուր դրքուլկնելով։ Արամ մե կիլո խաց կքյաշա, կտա ընտուն։*

*Կնիկ կասա.—Վա՛յ, եղբայր Արամ, հընչի էսի էրկու կիլո յա՞։*

*Արամ կշեռքի վրայից խաց կվերցու, կասա.—Ջաղամա՛ղ, հընչի էսի էրկու կիլո չըհընչի՞...*

## 76(85). ԱՐԱՄՈՒ ԽԱՇ

*Արամու կնիկ մե օր խաշ կդնա, Արամ հընգեր տղերք կհավաքա, կգյա խաշ ուտելու։*

*Կասա.—Արո՛ւս, լի՛ց քող ուտեն։*

*Հըմնուն կլցեն, հիրան չհասի, կասեն.—Ա-բա՛մ, դու էլ կե։*

*Կասա.—Արուսն ընտե էրկու շերեփ տվեր ա, ես կերեր եմ։*

*Ճժերին էլ չխասի, կսկսեն լալ։ Արամ կասա.—Շան տղի ճժեր, ընձի էլ չխասե, մի քիչ սպասեք՝ ղոնխներ էքան, մե տեղ լանք։*

## 77(86). Ա Ր Ա Մ

*Մե օր Արամ կթքա էրաղ առնելու։ Էրաղը կիսատ կլցա, կտա Արամին։*

*Արամ կասա.—Հընչի՞ էս կիսատ լցե։*

*Վաճառող կասա.—Արամ ջան, բա դու չե՞ս գինում, որ ես քոռ եմ։*

*Արամ կասա.—Որ քոռ ես, դե լից, քող հընչի թափի, էլի՛։*

## 78(87). ԱՐԱՄԻ ՀՅՈՒՐԸ

*Մե մարդ կթքա Արամու տուն ղոնախ։ Արամի օղլուշաղ սեղան կքալա, խաց կդնա, խավ կմորթա, էտա ղոնախ հըմնեն կուտա, կսրփա, կկայնի։*

*Արամ կասա.—Ա՛յ կնիկ, խաց բե, ամոթ ա, մարդը հալբաթ սոված ա։*

*Նորից սեղան կբանա, նորից էդա ղոնախ կսրփա սեղան (զուլում բլի ըտու փորին)։ Մե անգամ էլ, որ սեղան կբանա, Արամ ղոնախին կխարցու.—Հարցնելն ամոթ չլի, ախպեր ջան, որտեղից էս գալի, ո՞ւր կթթաս։*

*Ղոնախ կասա.—Ախպեր Արա՛մ, խիվանդ եմ, ախորժակ չունեմ, կթթամ բողազավանք՝ Սուրբ Կարապետ, հուխտ էնեմ, բալքի ախորժակը բացվի։*

*Արամ կասա.—Վա՛յ քո դուռն եմ հընդե, հետ գալուց մեր տուն չմտնես։*

## 79(88). ԱՐԱՄԸ ՀԱՅՏՎԱՃԱՌ

*Մե անգամ Գառղոյ Արամ խաց կծախեր, մե էրեխա մե մանեք կուտա, էրկու կիլո խաց կուղա։ Էդա էրեխեն խաց կառնի, կսպասա, կտենա՝ ղդալին չի տա, կթթա տուն մոր կասա։ Մեր, դու մեր, կհընի կգա Արամի կուշտ, կասա.—Եղբար Արամ, հընչի՞ ճժու ղդալին չտվիր։*

*Արամ կասա.—Վա՛յ, տնաշեն, խո՛ գյուռս չեմ տանի, ըհը՛,—կխանա դախլի տակից մե շիշ արաղ, կլցա մե բաժակ կասա.—Սաղ ըլես,—ու կխմա։*

## 80(89). ԱՐԱՄԻ ԿՈՎԸ

*Արամ հիր կով կծախա Մամիկոյ վրա։ Մամիկոն կթթա տուն՝ կովը տենալու, կտենա, որ Արամու կնիկ կթեց կով, բարաքյաթով կաթ տվեց կովի։*

*Կառնի, կբերա տուն, էդա կով կաթ չի տա։ Կթթա Արամուն կասա. —Ա՛յ ախպեր, ես տեսա՝ քո կնիկ կով կկթեր, կով շատ կաթ տվեց, հընչի՞ իմ տուն քո կով կաթ չի տա՞։*

*Արամ կասա.—Է՛, կովս ծախեր եմ, կնգանս էլ հե՞տը ծախեմ, որ կով կաթ տա...*

## 81(90). ԱՐԱՄԻ ԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Արամ հիրա մենձ ախպորից կբաժվի։ Էդ վախտը հիրա երեխաներ պստիկ կհընեն, ախպորը՝ մենձ։*

*Բաժանվելու վախտ Արամ կասա.*

*— Ախպե՛ր ջան, էս ի՞նչ արեցիր. մեծեր քեզ վերցուցիր, պստիկներ ժողվիր, ընձի տվիր։*

## 82(91). ԿՈԼՈՏ ՀԱՅՐԱՊԵՏ

### 1

*Կոլոտ Հայրապետ վաճառական էր, հմա կարդացվոր, խասկցվոր մարդ էր. շատ ազնիվ ու*

բարի էր։ Մե օր կէթա Թիֆլիս առուտուրի, ոնց կըղնի, ոնց չըղնի, մի կոպեկ յալնիշ ա հնգնում։ Գալումա հիրանց գեղը՝ Բայազետ, տաս կոպեկ տալում ա, հետագիր ա դանում, ասում ա. «Մե կոպեկ յալնիշ հընգա, չասեք որ Կոլոտ Հայրապետ խափվավ»։

## 83(92)

### 2

Էտի Բայազետա մեջ համբավավոր, հարուստ վաճառական կ'ընի։ Մեկ օր Կոլոտ Հայրապետ մե քյանի վաճառականներու խետ կէթա Թիֆլիս առուտուր անելու։ Ի՞նչ կէնեն, ի՞նչ չէն էնե, հուբանք են գինում, հետ գալուց կնստեն հախպրի կուշտ, խաց ուտելու։

Համա ուտելուն բաշտան Կոլոտ Հայրապետի ձեռից մե գիլլա՝ խաղողի գիլլա կ'ընդնի։ Էտա պատվավոր վաճառական հավասթաթ կէթա կըվերցու, կուտա։ Հըմեն վաճառականներ կնայեն հիրուր հերես, թե էտ ինչ բախս ա՞։ Կոլոտ Հայրապետ կ'խասկնա ըտոնց միտք, կ'խանա մե խաբրիրնոց (էն վախտվա խարիրնոց 10 օսկի էր) ձեռներ կսրփա, կ'թալա։

Հըմեն արմանք-զարմանք կ'կարեն։

Մեկ կասա.—Մե գիլլա վերցիր գետնուց, մե խարիրնոցով ձեռներդ սրբիր թալի՞ր, էդ ի՞նչ բախս ա, վաճառակա՞ն։

Կոլոտ կասա.—Գիլլեն իմ զամաթն էր, զամաթ պըտի վերցուս, հըմա փող աստված չունա, փող ձեռի կեղտ ա, էսօր կա՝ էգուց չկա։

## 84(93). ԿՌՈՒՆԳՆ ՈՒ ԱՂՎԵՍ

Կռունգն ու աղվես հընգերացան, աղվես մըներ տնպայ։ Կռունգ գնաց ավ էնելու, աղվեսն կըսա.—Մեկ ձագու վիզ օլրեմ, անուշ էնեմ, չուր կռունգ քուչրիկս գա։

Համա էրեց, բերան սրբեց, կաչնավ էնտեղ։ Կռունգն չոլից էկավ տուն, ըմալ ա գիլա աղվես, ըմալ ա գիլա, ըմալ ա գիլա, հուրին կկտրտա.

— Վա՛յ նանանա,
Աչքս կուրանա,
Իմ փափլամազիկ,
Հաշկս քոռնա։

Կըսա.—Էդ ընչի՞ գիլաս։

— Ձագերուց մեկ չկա։

Հինքն էլ կնստի գիլա։

Երկրորդ օր էլի գնաց չոլ, աղվեսն հելավ ձագերուց մեկի վիզն էլ օլրեց, կերավ։ Կռունգ քուչրիկ էկավ, էլի գուա, գուա, հիրան կ'քրքրա։ Կռունգը նստավ, հելավ, լաց գլի։ Երրորդ օրն էլ էն վերջին ձագին կերավ։ Կռունգն էկավ, էդի ավելի ուժեղ ա գիլա,

Վա՛յ նանանա
Աչքս կուրանա
Իմ փափլամազիկ,
Իմ երգրավզիկ,
Իմ բոյ բարցրիկ,
Վայ ձենդ քաղցրիկ։

Կռունգն ասաց.—Մի՛ լա, մի՛ լա։

Կռունգ խասկցավ օր ձագեր ուտողն աղվեսն էր, հիրան չիմացողի տեղ դրեց։

Մյուս օրն ըսեց.—Աղվես քուչրիկ ջան, հելի էթանք ման գանք, սիրտ մեղի չարա չա։

— Դո՞ր էրթանք, դու թե ունիս, ես հմլաս։

Կռունգ աղվեսին դրեց իր մեջքին, թռավ, գնաց պըտրեց, պըտրեց, տարավ, ետ բերեց, էդ ձորի մեջ թալեց. «Աղվես քուչրի՛կ, էդ էլ մեր բախտից,

Էդ էլ մեր բախտից»։

## 85(94). ԷՐԿՈՒ ԱՂՎԵՍ

Էրկու աղվես կեղին, մեկն էն կողմից գուքա, մեկն՝ էս կողմից, կհանդիպեն իրար։ Էն մեկն կըսա.—Արի հելինք ախպեր։

Կըսա.—Արի։

Կեղին ախպեր, էն մեկ կըսա.—Դու քանի՞ ֆանտ գիտես։

Կըսա.—Ես մե ֆանտ գիտեմ։

Կըսա.—Մե ֆանտն ի՞նչ ա, ես քառասներկու ֆանտ գիտեմ։

Կեղին ախպեր, կէթան սարեր կպատահեն, կխասնեն Ալաջատաղ սարին։ Կտեսնան՝ մե խատ թալաք ա դրուկ, մեջն դմակ ա զարկած։ Կայնան, չկանան ձեռ տան։ Էն մե ֆանդի տերն ըսեց.—Դու քառասն էրկու ֆանդ գիտես, մե ֆանդ խըոջա, էդ դմակ խան, բե, ուտենք։

Ըսեց.—Բերեմ, ախպե՛ր։

Թաթն պարզեց, քաշեց, չտացվեց։

Թաթն տարավ՝ չրի՛կ, թալաքն բռնեց թաթ։ Էն մե ֆանդի տեր եկավ նստավ, սկսեց դմակն ուտել։ Կերավ, պրծավ, ըսեց.—Էդ թալաք դրող մըկա գուքա զարկա՝ աշկերդ գա դուս. քառասն էրկու ֆանդ գիտես, մե ֆանդ խըոջա, թալաքից տուս հելի, էթանք։

Ըսեց.—Ախպե՛ր, քառասն էրկու ֆանդն էլ վրես կուրե։

— Դե՛,—ըսեց,—ըտմալ ա, մեկ էլ գլուխ չդովես, խպարտանաս։ Մե ֆանդ գիտեմ՝ խըոջամ, ազատավար՝ ազատվար, չազատվար՝ քու բախտն ա։—Ըսեց.—Հիմա հիրիկուն ա, դու մեկ

կողին պառկի, աշուն ա՝ կռավ դնա վրեդ, հիրար չիգաս։ Ես էլ կեթամ, կպառկեմ էնտոնց գալած ճամփու վրան՝ վըր կողիս։ Էնտոնք օր էկան, կտենան ինձ, իմ պոչից կբռնեն, կքաշեն քամակ հուրանց ու գուքան. քեզ էլ տեննան՝ կառնեն քեզի, կխանեն, քալաքը կսարքեն, մենք էլ կհելենենք կփախենենք։

Ըտմալ էլ կէնենն Աղվեսներ կլենն կփախենեն, փոր-փոշման դրանք կնայեն հիրար։

## 86(95). Ս. ՍԱՐԳՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*Սուրբ Սարգիս շատ առյուծ տղա դլի, էտի քյամով կպատառա։ Շատ պատռտելուց, մեկ օր կհանդիպա ջհուդի աղջկան, կսիրահարվի։ Շատ կսիրեն հիրուր, քիչ՝ չեմ դինա, գուշեն հիրուր առնեն, էտ ջհուդի աղջիկ, էտի խայ քրիստոնյա։*

*Խայուն օրենք չեուչլատնա։ Ս. Սարգիս շատ կմտածա, կտենա հուրիշ փրկություն չկա, կփախցու։ Ս. Սարգիս ձմեռվա մի սաստիկ օր, փետրվար ամսուն կփախցու էդ աղջկան։ Էդ օր ըմալ քյամի կանա, բուք կանա, բորան կանա, կո էտի էլ Ս. Սարգսի պասի օրն ա։*

## 87(96). ՀԱՋԻ ԿԱՏՈՒՆ

*Մե անգամ մուկը դուս կհելնի հուր բնից և կմտնի գեղցու խացատուն։ Կատուն կբռնա, կասա.—Հնչի՞ կդողաս, ես քե չուտեմ, ես կեթամ մուխսի, կդառնամ հաջի, իսկ եփ դառնամ, էլ ձեզ չեմ դիպչելու։ Գնա մկներին ասա թող գյան, ընձի ճամփու դնեն, մաքուր սրտով հաճ էթամ։*

*Մուկ կեթա, հուր գլխու էկած կպատմա, հըմնուն կըժողվա կբերա, փոսի մեջ կհավաքյա։ Մե թուխալ մուկ կմտնի պատի ծակի մեջ, մկներ կասեն.—Արի դուս, ինչի՞ էս մտե դատ։*

*Էտի չի գյա։*

*Կասա.—Չեմ կանա, թուխալ եմ, կվախենամ, ըստուց էլ կանամ մախթեմ ընդոր բարի ճամփա։*

*Կատուն դյուրյա, կբարևա, կասա, որ հինք էլ մկներու խաթրին չի կպչի,—Համա դուք,—կասա կատուն,—պտի ընձի ասեք, խեղճ դյուղացու չվալով լիքը ցորնի բերանը բաց ա, հը՞նչի դուք տակը կծակեք, ուկուց կտանեք, հը՞նչի էդքյան վնաս կուտաք ընդոր, հա՛մ ցորեն կտաննեք, հա՛մ չվալ կծակեք թե ասեք հընչի՞, զաթի իմ պահմանը պահման ա, թե չէ ձեզի կկոտորեմ,—կասա կատուն։*

*Մկներ հըմեն կխառվեն հիրուր, կիրիշկեն հիրուր և չեն կանա խոսան։ Թուխալ մուկ կասա.—Ես գյացի, դե՛ դուք գինեք, հաջու պատասխանը կանաք տա՞ք։*

## Ե

# ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 88(97). ԱՂՋԻԿ-ՏՂԻ ԴԵՐԵԶՄԱՆ*

*Ախին ժամանակ մե խաա աղջիկ ու մե խաա էլ տղա գլնի։ Էդ աղջիկ խարուստ գլնի, տղեն՝ քյասիբը։ Աղջիկ շատ սիրուն գլի։ Ըտոնք կսիրեն հիրուր։ Մե հուրիշ տղա էլ կսիրա էտա աղջկան։ Էդ տղեք քունդ մուշտարի գլեն։ Ըտոնցից մեկը՝ բարզի գլնի, մեկելն էլ լավ գերընդի քյաշողւ։*

*Աղջկա խեր կտենա, որ էտա տղեք շատ գայլա կտանեն, կեթան-գյուքյան, մե օր կասա.— Թե իմ աղջկան գյուղեք, մե պայման կդնեմ. էդա գերընդի քյաշողը՝ քե չուր սաբահտան իմ ջոջ արտ գերընդա, կո աղջիկ կտամ քե, իսկ դու էլ, այ թարզի, ընձի համար մե ձեռք շոր պատի կարես, ըմա՛լ կարես, որ ոչ ասեղ, ոչ էլ մկրատ բանցուս. կո, ոն որ շուտ պրծավ, ընդորն էլ կուտամ իմ աղջիկ։*

*Թաղին դես կզանվի, դեն կզանվի, իլլաջ չգտնա, կեթա մե ջադու պատվու կուշտ, կպատմա հուր դլխու էկած ու. կասա.—Պատա՛վ, ընձի չտան աղջիկ։*

*— Քյո գործ չէ, դու դյնա դինջ քնի։*

*Պատավ գլնի կտենա, որ գերնդի քյաշող տղեն կո՛ էնա հա՛ պատ պրծնի։*

*Կասա.—Քյոռ տղա՛, սևամեռիկ տղա՛, քյո տուն քանդվեր ա, Թարզին շուտուց ա պրծե, աղջիկն էլ տարե, հընչի՞ կզարկվես։*

*Տղեն էս որ գլսի՝ տեղբստեղ կմնա։ Աղջիկն էլ, որ կսիրեր գերընդըզուն, մտենա տղին մեռուկ, հինքնել կըթմի։ Էդ էրկուսին էլ մե տեղ կթաղեն ու չուրի հեսօր կասեն՝ էսի էն քյասպներու գերեզմանն ա՝ աղջիկ-տղա գերեզմանը։ Էս խաչքյարն էլ, կո աղջկա խերն ա քյաշե հուր աղջկա վրեն։*

### 89(98). ԱՂՋԻԿ-ՏՂԻ ԽԱՉ-ԳԵՐԵԶՄԱՆ

*Մե գեղ մե քյասիբ տղա գլնի, կսիրա մե հարուստի աղջկա։ Խեր չուզա, որ աղջիկ էդ չլութ-չիլաղ տղին առնի։ Շատ միջոցներ ձեռ կառնի որ աղջկան տղից կտրա, բայց իլլաճ չի ըլում, ըտոնք ուժիղ կսիրեն հիրար։*

*Խեր ասըմ ա.—Սպասի՛, ընենց պայման դընեմ տղի հառաջ, որ հնար չունենա կատարելու, հինք ձեռք կբյաշա։*

*Էտա մենծ արտ ա ունենում, տղին կկանչա, կասա.—Թե էդ արտ մե օրում քաղիր, աղջիկ քյոնն ա ու քյոննն, քե չէ՝ գլոխդ կտրեմ։*

*Տղեն հիրա սիրուց քե կառնի, մե քյանի գերանդի սրել կտա, առավոտ արևածագին կսկսա քաղ, մինչև արևու մտնել պատ վերջացու։ Քաղ կէնա էնքան, մինչև արևու մտնելուն իրեք մարդարոյ կմնա, որ պրծնի, արան էլ իրեք մարդարոյ կմնա, որ վերջացնի։*

*Խարար կտանեն հարուստին, քե.—Տղեն իրեք մարդարոյ ա մնում, որ վերջացնի, արևուն էլ՝ իրեք մարդարոյ, որ մտնի։*

*Էս հարուստ էլ՝ չի իմանում, քե ինչ անի, մե պատվու փող ա տալիս, ասում ա.*

*— Գնա՛, տղին խարար տար, քե աղջիկ հույս չունենալով քե կպրծնես, հիրան սպանեց, խփեց։*

*Պատավ կգա տղին կասա։ Տղեն արտը կվերջացնու, մե գերանդի էլ սուր կպախա, որ վերջացու. գերանդին կտնկա ու հիրան կթալա բուռ վրեն։*

*Խարար կնեթա աղջկան կհասի, քե տղեն արտը չվերջացուց, արև մեր մտավ, էնի չկարցավ,*

* Ավանդությունների այս շարքը վերաբերվում է Կամոյի ճանապարհին գտնվող խաչքար գերեզմանին (Ս. Կ.)։

չքաշարեց վերջացնել, հույսը կտրեց, հիրան զանեց, սպանեց։

Աղջիկ կասա.—Վա՛յ վավիլեր, էլ իմ սաղ մնալն ինչի՞ս ա։

Հիրան կսպանա։

Ու էդ էրկուսի գերեզման էդ անտեր արտի գլխին կփորեն ու կթաղեն։

Ջուր մկա մենք հուխտ կէքանք, մոմ կվառենք, խունկ կծխենք, էդ անբախտների գերեզմանի վրա։ Էս վերջերս էլ գյուղի ջահելներից մեկը մի խաչքար քաշեց էդ գերեզմանին. ամեն կիրակմանին կէքանք էդ նահատակ ջահելներու գերեզմանին։

## 90(99). ԱՂՋԻԿ–ՏՂԻ ԳԵՐԵԶՄԱՆ

Բայազետի կուշտ մե գերեզման կա. մեկ աղջիկ կծռի հայու տղի վրեն, օր կծռի հայու տղի վրեն, աղջկա խեր էնտեղ մե արտ կա, իրեք հեկտար տեղ ա, կըսա.—Տղեն օր գնաց էդ իրեք հեկտար արտն միանգամից մի օր քաղեց, տվեց ընձի, նոր իմ աղջիկ կիտամ էդ տղին։

Էս տղեն, աղջկա սիրուբյան խամար, կառնի գերընդին, կերթա, էս արտ գուզա հնձել։ Էնպես գ'նձա էդ տեղ, համարա մացեր ա կես հեկտար տեղ։

Էն կողմից գուքան, կըսեն.—Քու տուն ակտի քեզի, դու եկեր ես գլոխդ կախեր ես էդ արտ գ'նձես, էդ աղջիկ հուղին տարան հուրիշներ։

Տղեն կշիտկի, խըտ շիտկելուն՝ տղի մեջք կկոտրի։

Դու մի՛ ըսե՝ գալղեն սուտ ա ասեր ա, տղեն խափեր ա։ Տղեն կմեռնի։

Աղջկան գուքան խաբար կբերեն, քե.—Քու տուն սուքվի, դու խլղի տղեն ճամփեր ես քո խոր քաղ կէնե, արդեն մեջք կոտրե, հանե դրած է բրիշկի վրեն, կբերեն։

Աղջիկ կծծու էն էլ էն տեղ կպատռի։ Բերեն էդ էրսկին կխորեն։

Կա՝ փուշ ա բուսե էրկսի մեջտեղ, յանի էն հանդեն էլ չհասած հիրար մուրալի։

## 91(100). ԱՐԱՄՈՒ ՍԱՐ (ԱՐՄԱՍԱՐ)

Արամու խումբ եռհսունինը խոքի է եղեր, մեկ լե հինք քյառասուն։

Էդիկ հիրան զինվորներով կիգա փաշի հերգիր, զանում ա, կոտորում ա։ Փաշեն լե աբավլենի կիտա, որ բռնեն, սպանեն Արամուն։

Արամ լե հիրան զորքերով քառսուն ֆուրգուն ցորեն կքյաղա, թվանքներ լե մեջ կթաղա, խեր կգտնի կասա,—Հելեք փախեք, փաշեն օր լսավ, հմնուն սրի կքյաշա։

Ջուր էտոնք կեթին, փաշեն լցվավ Արամու տուն, Արամ քաշվե սարեր։

Փաշեն կկանչա քրոջ, կասա.—Օտերս իմ լվա։

Գոհարիկ էր էնոր անուն, կլվա։

Փաշեն կասա.—Արի իմ կուշտ, խոսենք։

Գոհարիկ կասա.—Դուս հըլնեմ, գամ։

Դուս հլելու բաշտեն՝ կփախի սարեր, կեթա Մասսաց սարերի նման սարի գլոխ։

Խաբար տանք խորն ու փաշին։

Փաշեն կասա.—Բե աղջիկդ իմ կնիկ դառնա էսօր, ընձի էսօր կնիկ ա պետք։

Խեր կասա.—Աղջիկ չկա։

Փաշեն լե կկատղի, մլեր կղանա, խոր հաշկեր կխանա, էնի էնտեխ կմեռնի։ Իրեք խազար զորք կօղարկա Արամի հետևից՝ Արամու սարի չորս բոլոր պատել։ Ջուլում էկավ վրա Արամու, դոման կապեց անխրճ սարուն։

Սա՛ր, սարի վրա մե ղուշ դնես, կերևա։ Արամ հետատես դրեց, քուրջ տեսավ, գացին, քուր բերին, հեղան քառսունմեկ խոքի։ Քառսունմեկ խոքով սարի գլխից լավ կոտորեցին, համա փաշի զորք շատ էր, կոտորեց հելավ սար։ Արամ հըմնին խրկեց, մենակ հինք մնաց։ Փաշեն կբռնա Արամուն, սարի գլխուն կկախա։ Էդ օրվանից սար կասեն Արամասար։

## 92(101). ՋՈԼԱՔԱՐ

Կսեն, մե վախտ էս մեր Գոգչեն էնքան ձուն ա էկե, օր ամբողջ էրկու իրեք տարի մացե ձան տակ, ու բնակչությունն էլ ստիպված թողե հեռացե։ Որոշ ժամանակ հնցնելուց հետո մարդիկ իրենց երկրի կարոտն զգալով, հիրանց ջահելներից կօղարկեն, կըսեն.—Գացե՛ք, տեսեք ձուն հալե, թե՞ չէ։ Երիտասարդներ ձիանքներ խեճած գուքան, կխասեն մինչև Ջոլաքար, կտեսնեն օր էլի նույն ձունն էդ գեղի գերեզմանոց մե տապանաքար կա, էտի ընդամեն մի թիվ գլոխն ա կերևա, էդ ջոջ քար՝ ձնի մեջ։ Էդ ժամանակից ժողովուրդ կեթան ու կվերադառնան, ու կմնա անմարդաբնակ մինչև մեր գաղթելը Ալաշկերտից։ Էդ քարի անունով էլ Ջոլաքար ա կոչվե գյուղը, մեծ, երկար տապանաքար ա։

## ԽԱՂԻԿՆԵՐ

1(102).

Վերին հոդեն սալուկ ա
Բոզ ձին մեջը կապուկ ա,
Բոզ ձի ի՞նչ կհնես նալը
Ցար ջան ինչ կհնես խալը։

2(103).

Իմ թավլենը սալուկ ա,
Բոզ ձին մեջն նալուկ ա,
Մեռնիմ ձիուն խեծնողին,
Դո՞ր էլ էրթա, տուն դուքա։

3(104).

Ջոջ տան թավլեն սալուկ ա,
Բոզ ձին մեջն նալուկ ա,
Բոզ ձին ինչ կանե նալն,
Սալդաթն ինչ կանի յարն։

4(105).

Ջուր ջրի դեմ առեք ա,
Դալամ ձեռես տարեր ա,
Դալամ զարկողին մեռնեմ,
Ուշք ու միտս տարեր ա։

5(106).

Սարը ձունը բռնել ա,
Արևն հելել, հալել ա,
Լաել եմ՝ հիվանդ ես,
Դարդդ ընձի տարել ա։

6(107).

Էրկանք կաղամ՝ մի լար ա,
Դուշմնի աչքերն խավար ա։

7(108).

Բարդի ծառը շատ հով ա,
Տակն Սևանա ծով ա,
Աշխարհն ինչքան որ ման գաս,
Իմ սիրածս սրտով ա։

8(109).

Ջախչի դուռը ջոջ փոս ա,
Քար կթալեմ կսոսա,
Քար թալողին բան մը ասա,
Տղամարդը ափսոս ա։

9(110).

Մեր արտերը ջրով ա
Իմ յարոն էլ քրով ա,
Էգուց կգա խանի դուռ,
Խոսքերն օսկի ջրով ա։

10(111).

Բոզ ձին թամքեմ՝ բոզ ա,
Ցողրան կբցեմ, ջաղդեն քոզա,
Լայլուշդն ընգավ, ես վերցի,
Ընենց դիցա, քե սազ ա։

11(112).

Էսօր գությանը մերն ա,
Մաճկալն էլ իմ խերն ա,
Ղալաթեն էրած ջահելներ,
Միջի ֆիտանն իմ յարն ա։

12(113).

Հնսօր գութան իմ դրն ա,
Մաջի բռնող իմ յարն ա,
Ղալադ էրած խոտղներ,
Միջի ֆիդան իմ յարն ա։

13(114).

Քուչեքը պաղ ու պուղ ա,
Իմ խոր տուն դուրան-դուզ ա,
Էկան ընձի ուղելու,
Իմ խեր խրբրնոց գուգա։

14(115).

Բարդի ծառն բանցր ա,
Սիրած յարն քաղցր ա,
Գնա նանին խարցրա,,
Օր չտվնց, փախցրա։

15(116).

Ջոլի սինձն վայ ի՞նչ ա,
Կաթն ու բրինձն ի՞նչ ա,
Ես սիրեր եմ, ես կառնիմ,
Էդ գեղի խաբարն ի՞նչ ա։

16(117).

Պարտեզ ունեմ դրախտ ա,
Ծաղիկ, ծաղկունքի վախտ ա,
Շեկ աղջիկ, զամար տղա,
Էն էլ մեկ ուրիշ բախտ աւ

17(118).

Ջուր ջրի դեմ առեր ա,
Ալափատս տարեր ա,
Կալամ պանող էն տղեն,
Ուշք ու միտս տարեր աւ

18(119).

Միզարս լիք ա, լիք ա,
Ես կառնիմ, ադեն չի տա,
Ադե, մեռնեմ քո հոգուն,
Ուրիշի իղլար մի տաւ

19(120).

Էս մատիս մատանին քավորին ա,
Թազա յար իմ բռնե՝ քադավորին աւ

20(121).

Խաց եմ թխել գարի ա,
Իմ յարը սաֆարի ա,
Սաֆար ճամփեքիդ մեռնեմ,
Խոսքերդ շաքարի աւ

21(122).

Էն առուն ջուր ա կեթա,
Մի տեսնք ո՞ւր ա կեթա,
Քենին մախանա բռնե,
Ցարոջ տեսնելու կեթա՛

22(123).

Էս առվով ջուր ա գնում,
Հարց արեք, ո՞ւր ա գնում,
Քենին մահանա բռնեց,
Ցար տեսնելու ա գնում՛

23(124).

Ալ տղա, ո՞ւր ես գնում
Էս ձորով ջուր ա գնում,
Մահանա քենին արել,
Նշանածին ա գնում՛

24(125).

Աղջի, թունդիրը մուխ ա,
Իմ տեսած աղջիկը թուխ ա,
Շատ էլ մի կոտրուվի
Մի հայվադա գյադա յաւ

25(126).

Ջայ եմ դրել նռով ա,
Ախպերս հետս խռով աւ

26(127).

Ջաղջի դուռը չիման ա,
Ախպերս չիմանա,
Էկան քրոջը տարան,
Մեկ անդամ չասեց ամա՞ն՛

27(128).

Դուշմանը դարդտել ա,
Նանըն քեզ կարոտել ա,
Իմ որդու անուշ փեսա
Արի մեր տունը խոսա՛

28(129).

Քյամին ճռճռալիս ա,
Դուռը շկակ-շկակ տալիս ա՛,
Աղջի, հելի դուռը բաց,
Գլխավորդ գալիս աւ

29(130).

Վանքի դռնով ես հնցա,
Վանքի շուշպեն ես գողցա,
Ցոթ տարի խիվնդցա,
Ցարիս տեսա, լավացա՛

30(131).

Էս ի՞նչ թավուր արև ա,
Բալիս ղրգած բարև աւ

31(132).

Ախպեր ունեմ բանակն ա,
Ցոթը սարի քամակն ա,
Ցոթը սարը քըխ փուլ գա,
Բարով իմ ախպեր տուն գա՛

32(133).

Սարի սմբուլ ծոցիս ա,
Դարդ ու բալեն խորքիս ա,
Պաքեմ էդ նխշուն ծծեր,
Դուշմանը պադռելիս աւ

33(134).

Ոտներս հերկի մեջն ա,
Ձեռներս ներկի մեջն ա,
Էնպես մի ախպեր ունեմ,
Սալդատի պուլկի մեջն աւ

34(135).

Ծաղիկ ունեմ ալանք ա,
Սրտի միջի սալանք աւ

35(136).

Մատնիքը մատովս ա,
Սիրածը սրտովս ա,
Սաբըբի բալեն ապրի,
Շորերը վրովս աւ

36(137).

Հա սև՛ ա, սև՛ ա սիրտս,
Ճրնջղոտ քև ա սիրտս,
Քանց լալը կարմիր չկա,
Բաց սրա՝ սև ա սիրտս։

37(138).

Վատ տղին տուն մի սարքա
Գևլնի էն տուն կքանդա։

38(139).

Հելա սարն, սար տեսա,
Սար վըր սարին ես տեսա,
Քևզի մեռնիմ, բանցր սար,
Իմ սիրած յարին տեսա։

39(140).

Հելա սարեր սար տեսա,
Նարինջ կուլկով յար տեսա,
Հելա սարերն ու զարձա,
Սարը վըր գլխիս բարձա։

40(141).

Հելա, սարը, սար տեսա,
Ճերմակ չուլքով յար տեսա,
Գնա քո մորը ասա,
Ինձի անա քև փեսա։

41(142).

Հելա սարը, սար տեսա,
Թուխ մաքուր տեղ լոր տեսա,
Ասի բռնեմ ու բերեմ,
Քնա ու երազ տեսա։

42(143).

Հելա սարը՝ սար տեսա,
Սարն վըր սարին ես տեսա,
Քևզի մեռնիմ, բանցր սա՛ր,
Իմ սիրած բալին տեսա։

43(144).

Ջայիր լիման ադա յա,
Ցարի բռնել խաթա յա,
Քյոփօղլի, մի ուռի, պադվի,
Մեկ Բուլնջի գյադա յա։

44(145).

Ջուր ջրի դևմ առեր ա,
Ալափաստս տարեր ա,
Ղալամ զանող էն տղեն
Ուշ ու միտքս տարեր ա։

45(146).

Երկանք ադամ մի լարա,
Փլավ էփեմ բիրար ա,
Ցարս Քյավառա գիքա,
Ջևրն բիթուն խիյար ա։

46(147).

Ամպել ա բութա-բութա,
Իմ կևրած կարմիր թութ ա,
Իմ սիրած քըխ ինձ տան,
Բիրադի՝ ասևն սուտ ա։

47(148).

Ամպել է բութա-բութա,
Իմ ուզած կանաչ թութ ա,
Պարի միջի շևկ աղջիկ,
Քևզ կրռնեմ ինձ բութա։

48(149).

Ամբևրն բութա, բութա,
Իմ ուզած կանանչ թութ ա,
Պարի միջի շևկ տղեն,
Բռնևր եմ ընձի բութա։

49(150).

Ամբևրն բութա-բութա,
Իմ ուտած կանաչ թութ ա,
Պարի միջի շևկ աղջիկ,
Քևզ բռնեմ ախպորս բութա։

50(151).

Ամպևրը բարա-բարա,
Իմ սիրտն ա կապույտ յարա։

51(152).

Ջևբիս բևրանը օյա,
Ցարս մարալի սոյ ա,
Ջևբիս բևրանը ճաշա,
Աշխարք յարիս թամաշա։

52(153).

Ժամու դռնեն դուս հելա,
Իմ յար շիվար տեսա,
Ջուխտակ հաշկևր մոմռուկ,
Ջևռը ծոցին տեսա։

53(154).

Ամպևրն փարա-փարա,
Իմ սիրտը՝ մորուց յարա։

54(155).

Ամպևրն բարա-բարա,
Ես իմ սրտով յար չառա,
Աստված, դիվանիս մեռնիմ,
Յան օլում տուր, յան չարա։

55(156).

Կանդնել ես ափսոս բախ ա,
Լայլուղիդ ճոթը կախ ա,

Ծիրեցի, չառա փախա,
Ամեն տենալն մախ ա։

56(157).

Կայնել ես ախա-բախա,
Լաչակիդ ճոթը կախ ա.
Ապարանը քարոտ ա,
Առ յարիտ, ծոցդ պախա։

57(158).

Դուն քելե բախա-բախա,
Շաղմախու ճոթեր կախա։

58(159).

Դուն քելիր քուչա, քուչա,
Ջերիդ փամփուշտներ փուշ ա
Դու խորոտ ես, խելքդ քիչ ա։

59(160).

Դու քելիր բախա-բախա,
Լաճակիդ պխեր կախ ա։

60(161).

Կանաչ արտեր հաց տարա,
Ցարիս տեսա էդ դառա։

61(162).

Գուլթանը հոլա-հոլա,
Հորիկ քշողն էլ բոլ ա։

62(163).

Դուն քելիր քուչա-քուչա,
Ջերիտ պոպոկներ փուշ ա։

63(164).

Ջուր ջան, բարև էրա,
Էլման մի չարա էրա.
Ջուր ջան, գուկաս բանցր սարից,
Կիգաս կթափես մառմառ քարից,
Ոն որ դառնա հուր իրղարեն,
Գոտու յարեն՝ հուր վրեն։

64(164ա).

Գուլթանըս լա, հո լա,
Գուլթնի տակը հոլա,
Շեկլիկ աղջիկ խաց կտանա,
Մեկ կքելա, մեկ կկայնա,
Մարդու աղլիման կանա։

65(165).

Սարեր ման էկա, լոլեր ման էկա,
Իմ յարի պես յար չգտա։

66(166).

Սարի ծրթնջուկ թազա,
Մեղր ու կարագ քեզ մազա,
Ինձ պես նազելի աղջիկ,
Քեզ պես գյադին ո՞նց սազա։

67(167).

Բախտս ղարա յա,
Սիրտս յարա յա,
Ա՛խ մալս յաղմա յա,
Սիրտս դաղմա յա։

68(168).

Արի, մի գնա,
Դարձիր, մի գնա,
Աշխարհս մեռնել կա,
Ջահել չենք մնա։

69(169).

Տեղ եմ թալե փոնթ գուքյա,
Բարձի տակից խոտ գուքյա,
Մեռնեմ միջի քնողին
Անուշ խնգյա խոտ գուքյա։

70(170).

Դոշակ ձգի, փոթ էկավ,
Տեղիդ տակից խոտ էկավ.
Մեռնիմ էդ խաս բռչամիտ,
Մեջեն անուշ խոտ էկավ։

71(171).

Տեղ եմ գցե, փոթ էկավ
Բարձ եմ դրել, խոտ էկավ,
Մեռնեմ մեջի քնողին,
Մեջից խնկախոտ էկավ։

72(172).

Տեղ եմ թալե՝ քունտ գուքյա,
Բարձի տակեն խոտ գուքյա,
Մեռնեմ մշի քյնողին,
Անուշ խնկա խոտ գուքյա։

73(173).

Կանաչ արտը խաց տարա,
Ցարիս տեսա ետ դառա.
Խնձոր տվեց, ես առա,
Գլուխ տվի, ետ դառա...

74(174).

Գյանջու քամին գուքյա,
Դուռը ճըռ-ճըռ գուլա,
Ախչի, հելի դուռը բաց,
Գլխավորդ գուքյա։

75(175).

Հօդի տկով ջուր կէրթա,
Ղատար օսկին ղուր կէրթա,
Ջայնամ էն ղատար օսկին,
Ախպերս բանակ չէթա։

76(176).

*Հոդի տակով ջուր կէքա,*
*Ղաթար օսկին ղուր կէքա,*
*Ջայնամ էն ղաթար օսկին,*
*Իմ յարը սալղաթ չէքա։*

77(177).

*Բարդի ծառին բար չկա,*
*Սիրտով սիրող յար չիկա,*
*Աստվա՜ծ, դիվանդ մեռնիմ,*
*Սիրտով սիրող յար չիկա։*

78(178).

*Վիճակ, վիճակ, վիճակի բարա,*
*Դու հելար բերդի բարա,*
*Ջա՜ն վիճակ ու նաղարա,*
*Ես հելա բերդի բարա։*

79(179).

*Բամբակը լուլա բարա,*
*Իմ յարն մինուճար ա,*
*Մինուճար բոյին մեռնեմ,*
*Աշխարին բարեմբար ա։*

80(180).

*Էն սարը բանցր սար ա,*
*Տակն ժնջլված քյար ա,*
*Ես քե գյոխտու սիրեցի,*
*Բա ո՞ն էրեց աշքյարա։*

81(181).

*Մի բարձ կարել եմ, իմն ա,*
*Մեկն էլ կարել եմ, իմն ա,*
*Քյաղքի քարվան գալիս ա,*
*Մեջի ապրանքը իմն ա։*

82(182).

*Ջաղչի դռնով ես հնցա,*
*Անձև էկավ, ես թռչա,*
*Արև զանեց, ես չորցա,*
*Վարդի նման ես բացվա։*

83(183).

*Սարերը հեշտացել են,*
*Ջրերը շատացել են,*
*Խաբար տարեք իմ յարին,*
*Մուշտարիք շատացել են։*

84(184).

*Արազը հեշտացել ա,*
*Ճամփեքը կոշտացել ա,*
*Խաբար տարեք իմ յարին,*
*Առնողս շատացել ա։*

85(185).

*Արազը հեշտացեր ա,*
*Ճամփեքը կոշտացեր ա,*
*Ջուղաբ արեք մայրիկիս,*
*Մուշտարին շատացեր ա։*

86(186).

*Ծառի տակը տալտա յա,*
*Քանի կայնեմ ֆայտա յա,*
*Մի մեղադրեք դրկիցներ,*
*Ես ի՞նչ քավուր ղայդա յա։*

87(187).

*Էրկանքը գրգռում ա,*
*Սարերը սարսռում ա,*
*Նկան սալղաթ տանելու,*
*Իմ սիրտը մռմռում ա։*

88(188).

*Էրկանքը գըռգըռում ա,*
*Սարերը սըռսըռում ա,*
*Ես իմ սիրածը չառա,*
*Սիրտս մռմռում ա։*

89(189).

*Փոսը լցվել, սառում ա,*
*Էս էլօղլու խորաքեն,*
*Ինձ մոմի պես հալում ա։*

90(190).

*Ալաշկերտ բարձր տեղ ա,*
*Ջուրը խիվնդի դեղ ա,*
*Սիրած սիրածի չեն տա,*
*Էս ի՞նչ տնավեր տեղ ա։*

91(191).

*Մեր տան հետև արտըմ յոնջա,*
*Ձեր տան հետև արտըմ յոնջա,*
*Դաթա թխեմ, ճամփեմ խոնջա։*

92(192).

*Էն սարի տակը խով ա,*
*Սիրտս արնով ծով ա,*
*Սարից էկավ ձիավոր,*
*Հարցրեք՝ յարար ո՞վ ա։*

93(193).

*Ծառի տակը արոտ ա,*
*Քուր՝ աղբորը կարոտ ա։*

94(194).

*Էն սարը բանցր սար ա,*
*Իմ յարը մեկուճար ա։*

95(195).

*Մեր սարերը բանձր ա,*
*Աղբեր, լեզուդ քաղցր ա,*
*Կրակն ընկե, ինձ կերի,*
*Աբի ընձի փախցրա։*

96(196).

Էրկանքս աղի վրա,
Շամամս թաղի վրա։

97(197).

Ջաղցի դուռը տաշած ա,
Յարս ղալամ քաշած ա։

98(198).

Ջաղցի դռներ դագուկ ա,
Պատկերքդ վրեն քաշուկ ա,
Յարս ընձի չճանցցավ,
Ջիգյարս փորիս էրուկ ա։

99(199).

Սարերն ամպն, ձուն չիգա,
Յարիկ խռովե, տուն չիգա։

100(200).

Ծովի ջուրը սառել ա,
Ղամեն ձեռքս տարեր ա,
Բաղի միջի շեկ տղեն,
Ուշք ու միտքս տարեր ա։

101(201).

Ձեր դռնով հընցա,
Անձրև տվավ, թոչա։

102(202).

Էն սարերը ամպել են,
Իմ յարն իր ձին թամբել ա,
Հնդե խըտ յարոջ խաղցեր ա,
Անձրև էկե թոչեր ա,
Արև դանե չորցեր ա,
Քյաֆուր վարդեր բացվեր ա։

103(203).

Իմ յարը կըռնել ա,
Վարդը ձեռին բռնել ա,
Ամեն ծառին մի փշատ,
Իմ յարի ոտքըը շատ։

104(204).

Ադես ընձի տփել ա,
Դուռը վրես շիքել ա,
Խարար տարեք իմ ադուն,
Սերըն ընձի հաղթել ա։

105(205).

Թշիտ վրեն ջուխտ խալ ա,
Քեզի նայելով վառա,
Խումար բերե ջուխտմ բալա։

106(206).

Ամպել ա, դուսը մութ ա,
Քո կերած՝ կանաչ թութ ա,
Թե դու ինձի խաբում ես,
Խոսքդ ինձ ի՞նչ օգուտ ա։

107(207).

Ջաղցի դուռը տառի ա,
Կտուրը լիքը մարդ ա,
Հրես էկավ իմ յարը,
Գոտիկը լիքը վարդ ա։

108(208).

Ջաղչի դուռն մե փոս կա,
Քյար կքալեմ կսոսա,
Քյար քալողին բան մ'ասա,
Տղամարդ ա, ափսուս ա։

109(209).

Մեր սրախը ավլած ա,
Իշխան ձուկը խաշած ա,
Շուտ էնեմ, փլավ իցկեմ,
Քանի յարս կայնած ա։

110(210).

Առվներ պաղ ու բուղ ա
Իմ խոր տուն դուրան-դուզ ա,
Էկան ընձի ուզելու,
Իմ խեր խըրըրնոց գուզա։

111(211).

Աշխենի դուռը դուզ ա,
Աշխեն կայնե Անտոն կուզա.
Էրկու հարուր ի՞նչ անի,
Իմ խերը խազար կուզա։

112(212).

Մեր կալի տեղը փոս ա,
Քար կքալեմ՝ կսոսա,
Իմ դինը խազար մանեթ,
Ո՞ն կանա ընձի ուզա։

113(213).

Սարից հիճար փիսադա,
Թըվանքն ուսիդ, այ գյադա,
Ես, տու իրար սիրեցինք,
Վերև ասված շհադ ա։

114(214).

Լուսնակը բոլորել ա,
Ամպի մեջ մոլորել ա,
Յար ջան, ծոցիդ մեջ,
Դոշերդ բոլորել ա։

115(215).

Թավան ծակ ա, եղ չկա,
Փեսեն նկավ, տեղ չկա,
Փեսին շատ հերես մի տա,
Փեսին էյթիպար չկա։

116(216).

Էս վարդն ինձ համար ա,
Մեջքին օսկի գլամար ա,
Քու հաշիկը խումար ա,
Յարար էս ո՞ւմ համար ա։

117(217).

Ես ծարավ եմ, ջուր չկա,
Սարևրին աղբյուր չկա,
Վախենամ՝ զարիբ մեռնեմ,
Վրես մեկ լացող չկա։

118(218).

Բաղչեն մտա, բար չկա,
Շատ խորոտիկ յար չկա,
Յարս բարդու նման ա,
Տեսնելու գլուման չկա։

119(219).

Ջաղցի դռնեն ջուր կիգա,
Աղջիկ տղին հուր կիգա,
Աղջի ջան, կանչա լսեմ,
Քանի սրտիս դուր կիգա։

120(220).

Թալա խացի խոտ կլիգա,
Յարը յարի մոտ կիգա.
Իմ սիրած նխշուն տղից,
Անուշ խնկախոտ կիգա։

121(221).

Ախ ըսիմ, արին կիգա,
Սև սրտին գարուն կիգա,
Վախիմ՝ զարիբ մեռնելուց,
Ոչ քիր, ոչ ախպեր կիգա։

122(222).

Բոյ-բուսաթիդ ես մատաղ,
Նոր գալած բեխիտ մատաղ,
Երեք օր ա չեմ տեսե,
Հետ եկած ճամփիդ մատաղ։

123(223).

Սարերի խովին մատաղ,
Իմ յարի աչքին մատաղ,
Երեք օր ա չեմ տեսե,
Բռչամին, բոյին մատաղ։

124(224).

Էթասեմ Հայքաղ
Աննեսեմ մատաղ,
Տանեսեմ յարիս.
Խասնի մուրադին։

125(225).

Այ հովն ընգավ, հովն ընգավ,
Մարալ եղը ծովն հընդավ։
Տարին էկավ բոլորավ,
Ջիգյարս փորիս խորովվավ։

126(226).

Օչխարը սարն ելավ,
Մեր բանը կովով հելավ,
Սաբաթի որդին մեռնի,
Դուշմանի սրտովն հելավ։

127(227).

Ջրերն հելան, ջուր չելավ,
Ջրերուն կարմունջ չելավ,
Վախենամ զարիբ մեռնիմ,
Վրես էլ ու գուն չելավ։

128(228).

Հավ թռավ, թառեն հելավ
Իմ բանը ըսկի չհելավ։

129(229).

Խնձոր դցի, նուռ էկավ,
Շապիկ կարի, կարճ էկավ,
Վարդ քալեցի, նուռ էկավ,
Ինչ կարեցի, կարճ էկավ։

130(230).

Երգանք էն սարովն անցավ,
Սինին խնձորով լցվավ,
Բոլորի յար տուն էկան,
Իմ յարն էն սարովն անցավ։

131(231).

Էրկանքը սարով անցավ,
Տունս խնձորով լցվավ,
Ամենքի յար տուն էկավ,
Իմ յարը սարով անցավ։

132(232).

Երկանքն սարով անցավ,
Սինին խնձորով լցվավ,
Ամենու ախպեր տուն էկավ,
Իմ ախպեր խոռով անցավ։

133(233).

Խավ թռավ, թառեն հելավ,
Իմ բանը ըսկի լավ չելավ,
Վայխս, քու բալեն մեռնի,
Դուշման, քու սրդովն հելավ։

134(234).

Խավ թռավ, թառեն հելավ,
Իմ բախտս ըսկի լավ չելավ,
Դուշման, քու բալեն մեռնի,
Քու խոսքովն հելավ։

135(235).

Հալանաթն էկավ, հուրն ի հետ,
Զնգզնգուն ջուրն ի հետ,
Թանգ հելա, էժան ծախվա,
Էդ դուշմնի խոսքի խափվա։

136(236).

Գացի խոշյան
Դառա Միրզաջան
Էնդեխեն Ջուջան*,
Բերի քթու թան,
Ուտա պաբեն,
Էթա գութան։

137(237).

Էթամ Սևան,
Բերեմ իշխան,
Դնեմ գոզան,
Ուտա իմ Շուշան։

138(238).

Էթամ Զորագեղ,
Բերեմ քոռ անձեղ,
Ճամփեմ խնամուս,
Թըխ մեռնի բենամուս։

139(239).

Էրթանք Խտանքոլ,
Դառնանք Առղրոտմ,
Պիրենք փարա բոլ
Առնենք ջուխտմ սոլ
Խակենք դորեդոր։

140(240).

Ցորեն եմ արե աշան,
Իմ բոյ, քո բոյ բարիշան
Արի էթանք սուրբ նշան,
Օսկե մատնիք տամ նշան։

141(241).

Աղջի, անունդ Շիշան,
Դեյրեմ ունես խշխշան,
Արի էթանք Սուրբ նշան,
Իմ մատնիքս քե նշան։

142(242).

Ալ տղա, անունդ Ուռուշան,
Բոկիդ տկին թուխ նշան,
Արի եթանք սուրփ նշան,
Օսկե մատնիք քե նշան։

143(243).

Հելա սարերը սելրան,
Ջա՜ն գյուղում, ջա՜ն, ջա՜ն,
Զգտա քեզ, ջելրան,
Ջա՜ն ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն։

144(244).

Հելա գյացի Սևան սելրան,
Դեմս հելան ջուխտմ ջելրան,
Պատիկ բերան՝ յարիս նման
Ցար տարողի տունը վերան։

145(245).

Բերդի դուռ չայիր-չիման,
Ախպեր օղլան բե իման,
Քուր բռնին, տարան դիվան,
Մեկ բերան չասեց յամանե։

146(246).

Խանե՜ յաման, ջանե յամա՜ն
Դիլբար յամա՜ն, յամա՜ն, յամա՜ն.
Խաննեն կայնե դեմ ամրոցի,
Ջուխտմ նոններ մըջ հուր ծոցին,
Խանե՜, մատաղ ճերմակ ծոցիդ
Խանե՜ յաման, յամա՜ն, յամա՜ն։

147(247).

Պռկներդ շուշան, լեզուդ քիշմիշ ա,
Ուզում եմ եռանալ, սերտ անուշ ա։

148(248).

Ամբեր եմ ամբի նման,
Շաքար հընդե շան բերան։

149(249).

Ամպել ես ամբի նման
Շաքյար էս դանտի նման։

150(250).

Քամին էկավ երան-մերան,
Դարդս հելավ, խասավ բերանս,
Խափռտելով յարս տարան,
Ցար տարողի տունը վերան։

151(251).

Ջուխտմ գյութան, վար կը էնեն,
Սոնա խաթուն խաց կտանե,
Խաց կտանե, թուղ կխանե,
Հաշկով-հընքով մարդ կսպանե։

152(252).

Ես ինչ կենեմ քերեկան,
Ցարս տասվեց տարեկան։

153(253).

Վիճակ դըրին վըր թելին,
Պրծավ հընգավ վըր սելին։
Պատի քարեր կոտրտվան,
Քու ալ ջուբեն կտրտավ։

---

* Այս գյուղերը գտնվում են Ալաշկերտի և Դիադինի գավառներում (Ը. Կ.)։

154(254).

Ակուս վերև ամպել էր,
Անձրև էկև, թուշեր էր,
Արև ղարդեր, չորցեր էր,
Քյանց քյաֆուր վարդ բացվեր էր,
Իմ Աշոտ ձինը թամքեր էր։

156(256).

Կռունկ պահ մի կաց, կարոտ եմ տեսքիդ
Մի քուի հընցի, ծարավ եմ ձննիդ։

157(257).

Գյնացի չայիր լվացք,
Թեշտ ծակվեց, ջուր գնաց,
Յարիս շապիկը մնաց,
Յարս էկավ, խռով գյնաց։

158(258).

Ես գնացի չայն վլացք,
Թեշտը կոտրավ, ջուրը գնաց,
Իմ մեկ ախպոր շաբիկ մնաց։

159(259).

Գացի չայիրը վլացք,
Թեշտ ծակվավ, ջուր գնաց,
Յարիս շապիկը մնաց,
Յարս էկավ, եռսոտ գյնաց։

160(260).

Գնացել եմ չայը լվացք,
Թեշտը ծակվավ, ջուրը գնաց,
Սապոնը էս է ոսկեջրած։

161(261).

Կռունկ, կանչա սարերաց,
Սրտիկ խովցու ղարիբներաց,
Թխել եմ թաղա խաց,
Սրտիկն իմ մղկտաց։

162(262).

Էլի աչքս մնաց էդ անտեր հոբեն,
Կրակն հնգնի վառի վատ մարդու ղուբեն։

163(263).

Էլի աչքս մնաց Ախտիյա յանը,
Կրակ հնգի վառի վատ մարդու ջանը։

164(264).

Էրեսիս հայեն գնաց,
Միսս հալավ, օսկոռս մնաց,
Միսս հալավ, օսկոռս մնաց,
Ջինար, չինար եմ, անբախտ յար։

165(265).

Նախրագնեն ուռի ծառ,
Խնձոր թալեմ, արի տար,
Լավ տղա էր փախցուցեր,
Լավ տղա ես՝ փախցու, տար։

166(266).

Նախրակնեն ուռի ծառ,
Խնձոր թալեմ, արի տար,
Խնձորի կես կխուկ էր,
Ջորս դոշեն արծաթուկ էր։

167(267).

Նախրագնեն ուռի ծառ,
Նախիր տանեմ հելնեմ ծառ,
Խնձոր թալեմ արի տար.
Խնձորի կես կխուկ էր,
Մեջ լայլղին փաթթուկ էր,
Յարոջ դոտին դրուկ էր։

168(268).

Ամբեր ա կամար-կամար,
Քուր մեռնի ախպոր խամար,
Հիցուն օր պախս եմ պախե
Ղարիբիս խաթրի խամար։

169(269).

Լուսունկան կամար-կամար,
Ես կլամ քեզի համար,
Ուզում եմ քուշտ պագեմ,
Իմ նանի խաթեր համար։

170(270).

Ժամու դռան մարմառ քյար,
Ես չեմ առնե զատ յար,
Զատ յարը հաշկի փուշ ա,
Սրտով սիրածն անուշ ա։

171(271).

Ձեր դռանը կլնեմ նոքար,
Յար, ինձ մի դցի քարեքար։

172(272).

Ես կքելի դիդար-դիդար,
Քառսուն քեզ պես կհեղներ շիվար։

173(273).

Արաղչին տալաշ-տալաշ,
Համ խորոտ ես, համ քյալաշ։

174(274).

Արաղչին տալաշ-տալաշ,
Հա՜մ խորոտիկ, հա՜մ քյալաշ,
Ջեբս բանամ փարայլու,
Սիրտս բանամ յարայլու։

175(275).

Դու մտեր ես ծով, կլողաս,
Հելեր ես ափներ, կդողաս,

Քանց նռան հատիկ կշաղաս,
Իմ խին դարդեր իրար կուտաս։

176(276).

Բարակ ճամփեն մտեր ես,
Կորցրածդ դտեր ես։

177(277).

Տղա, դու եզարած ես,
Մեր տնեն բեզարած ես։

177ա(278).

Տղա, դու հուր էս, մուր էս,
Ինձանեն բեզարած էս։

178(279).

Լուսնակ բոլորել ես,
Մազերդ օլրել ես։

179(280).

Տնեն հեվար, խաց կտանես,
Հաշկով-հնքով մարդ կսպանես։

180(281).

Յարա-յարա սիրտս,
Տանիմ կարոտ ա սիրտս։

181(282).

Ի՞նչ կանեմ ոսկի, արծաթ,
Ի՞նչ կանեմ մալ ու դովլաթ,
Էն տղեն էր բեխաբար։

182(283).

Քո յարն եմ ես,
Հիվանդ եմ ես,
Ա՛ռ խնձոր,
Արի ինձ տես։

183(284).

Ա՛յ աղջի, հուր ես, մուր ես,
Ես ծարավ եմ, դու ջուր ես։

184(285).

Ա՛յ տղա հուր ես, մուր ես,
Ես ծարավ եմ, դու ջուր ես,
Էս համբուրձման գիշերը,
Ես ման կգամ, դու ո՞ւր ես։

185(286).

Յարիս ճվները բարակ,
Փրջամը՝ ուլունք բալաք,
Էկավ մտավ իմ ծոցը,
Սիրտս գցեց սև բոցը։

186(287).

Քերիր կերար կաթի տակ
Սիրիր թողիր պատի տակ։

187(288).

Մառմ ունեմ Հնդա քաղաք,
Ճոտ տվե քաղբև-քաղաք,
Ամեն ծառին՝ մեկ փշատ,
Իմ մեկ ախպոր ոսմբր շատ։

188(289).

Կարմիր փափախ, թուխ փուշի,
Ջուխտդ իրար կույմշիք։

189(290).

Ես կմեռնեմ, օր դու կաս,
Ոչ հիվանդնաս, ոչ տքաս,
Ըխտատեղրանք ման կգաս,
Խարսնատներ պտտիս,
Կանֆետ ուտես, թղթերը շպրտիս։

190(291).

Առվի ափերն ա ղչի,
Մարդ չի խավնի բշի,
Գտեր եմ իմ սիրուն յար,
Կայներ եմ խետ գյալաշի։

191(292).

Առվի ափերն ա ղչի,
Դարդման չեմ խավնի բշի,
Գթեր եմ իմ թուխ քյանքյուռով,
Կայներ եմ խետ գյալաշի։

192(293).

Ես քեզ սիրեցի, որ մարդ չիմաներ,
Վերև աստված, ներքև միջնորդն
իմաներ։

193(294).

Ես քեզ սիրեցի, հերու խերեզնամ,
Եթե ընձի չառար, իշնես գերեզման։

194(295).

Ամպել ա, ձուն չի գալի,
Կայնել ա, տուն չի գալի.
Ով իմ սիրածին առնե,
Ջուխտ աչքերը խավարի։

195(296).

Ամպել ա, ձուն չի գալի,
Մթնել ա, տուն չի գալի,
Սիրտս կրակով լցված,
Աչքերիս քուն չի գալի։

196(297).

Գնացի հանդը կըրակի,
Ոտս դիպավ փըռանքի,
Շան գյադեն հըռակեր ա,
Ջի գա մեր տուն կիրակի։

197(298).

Ծառ մը ունեմ ծիրանի,
Քամին թել-թել կառնի,
Արի գնանք դիվանի,
Ում ղամաբն ա թող տանի։

198(299).

Ծառ եմ տնգե շաֆթալու,
Ցարս եկե ման գալու,
Էդ շան տղայի քյանքյուլ,
Ընձի արև սավդալու։

199(300).

Ուռի ես, կռնալ մի,
Բարդի ես, չորնալ մի,
Թև ասուլած ունես,
Սիրածիդ մոռնալ մի։

200(301).

Մատուռս կա մատանի,
Չեմ տա խազար թումանի,
Ի՞նչ կէնեմ խազար թուման,
Կտամ մե բազրդյանի։

201(302).

Քյաշկա ես նալբանդ հըլնի,
Վերի քուչեն բանտ հըլնի,
Տեսնեի՝ յարս գալիս ա,
Ջոքի, չաքմաքը քյաշի։

202(303).

Բարդի ծառին բար չըլնի,
Առանց քյաբյուլ յար չըլնի.
Սիրաը որ կա շուշա յա,
Որ կոտրնց՝ ճար չըլնի։

203(304).

Մածուն մերի, սեր չունի,
Ջուկ եմ խաշնել, փոր չունի,
Ղուլ ու ղարդաշ շատ ունեմ,
Մի ջան-ջիգյար յար չունեմ։

204(305).

Վանքի ձորում խաղ ասի,
Խաղի մեջ քե բան ասի.
Ինձի էգուց տանում են,
Սուրբ Սարգսի պես հասի։

205(306).

Ջայիր-չիման սաղ պիտի,
Իմ օրտակը ղալ պիտի,
Ի՞նչ եմ անում թուընջին
Իմ յարը շահբազ պիտի։

206(307).

Դաշտից ծաղիկ քաղեցի,
Խորոտ փնջեր կապեցի,
Անուն դրի մանուշակ,
Ընձնից քեզի հիշատակ։

207(308).

Խըմբարձման կիրակի,
Խամբարձում դելաքդ կատարի,
Խա՜րս, խան վիճակ բարի։

208(309).

Բանջը սարից ծուխ կըլնի,
Մե բարալիկ մուխ կըլնի,
Քուրն ախպորը կուրբան կլընի,
Կարիր տեղի խուրն կըլնի։

209(310).

Կայներ եմ ծառի խովի,
Աչքս բշերի ճամփին,
Սաբիբ, բալեդ վա՜յ մնանի,
Ջիողար խասիմ մուրազիս։

210(311).

Նարոն կայնե կարմնջին,
Խալ-խալ դինտերն ակնջին
Խաբար տարեք զոքնչին,
Թըխս գա խասի Մկրտչին։

211(312).

Ախպերս կայնե կամրջին,
Օսկե դնդերն անգճին,
Էրանիկ տամ էն քվորն,
Ախպերն կայնե քագավոր։

212(313).

Նախիրն էկավ մեջ գեղին,
Նախրի պուլիկն էր գեղին։

213(314).

Գեղ եմ դրե իլանչի,
Էս իմ գլուխն դիվանչի,
Ընձի դանկի մոռի արեք,
Ես էդ քուլին հավան չեմ։

214(315).

Գութանը մանի-մանի
Շեկ աղչիկ խաց կտանի.
Իմ յարը հանդում, չոլում,
Իմ քունը ո՞նց կտանի։

215(316).

Հելա դիղնոց, խոտ քափի,
Կարմիր խնձորով քափի.
Հավ աղչիկ էր, չխաբվեր,
Կարմիր թշեր չպագվեր։

216(317).

Կաքավ ջան, արի, արի,
Քուքուջդ օսկի գարի։

Թե խերու ես, շուտ արի,
Թե շառու ես, էդ դարձի,
Կաքավ ջան, ղալթան գործա՝
Ախպորս չուխի բերանին։

217(318).

Աղջի՛, աղջի՛, ջա՛ն աղջի՛,
Աչքերդ սև-սև, աղջի,
Ցա դու կգաս մեր տունը,
Ցա ես կառնեմ քո քուրը։

218(319).

Սելվո՛ր, սարերը հելի,
Կանաչ դարերը հելի,
Իմ յար սարեր ա գյացե,
Ջոլերու մեջ տուն դրե։

219(320).

Լվամ, լվամ չիստկի,
Վարդի ջրով կիստկվի,
Փուք տամ, քամին չորցնեմ,
Մալեմ ու ծոցս դնեմ,
Հիրգուն գաս տուն՝ հագցնեմ։

220(321).

Ծառ եմ տնկե ծիրանի,
Քամին թել-թել կտանի,
Ոն որ իմ խեյրաթ կանի,
Հինք աստծուց առնի։

221(322).

Ծառ եմ տնգե ծիրանի,
Քամին թել-թել կանի,
Ով որ իմ ղեյբաթ կանի,
Լիք օրորոց չտեսնի։

222(323).

Հելա սարն սար սնձի,
Ոտքս առավ քոլմ գնձի,
Բռչամ ջան, դու կռնձի,
Աղջիկներու լավն ընձի։

223(324).

Հելա սարերը սնձի,
Պապե մուրուտդ կռնձի
Էկան մեր տուն ուզելու
Հորի՞ չուվիր ընձի։

224(325).

Թարթաբները կարնցի,
Լցի տոպրակ, կարնցի։

225(326).

Ավետարան ուխտ արի,
Իմ ծամերը ջուխտ արի։

226(327).

Գյնացի սարը սնձի,
Ոտս դիպավ քյոլ գյնձի,
Մազեր ջան, դու կռնձի,
Տղեններու լավն ընձի։

227(328).

Ոտս առավ քոլ գնձի,
Պապե, մորուտդ կռնձի,
Էկան մեր տուն ուզնդան,
Հորի՞ չուվիր ինձի։

228(329).

Իմ յարն ընձի յար պտի,
Զեռումը ֆանար պտի,
Իմ յարի կայնուկ տեղը,
Մե չինար ծառ պտի։

229(330).

Հելա սարի գլոխ, քաղի ծաղիկն ու վիճակ,
Քաղցր ախպերս տարան, ես մացի միջակ։

230(331).

Ես մեկ թառլան ի կուշ ի,
Ձեր թաղում բուսած նուշ ի,
Աստված վկա, սուտ չկա,
Դուն ինձնից անուշ իր։

231(332).

Բուլվարը ման արի,
Բալիշ դնեմ, օթաղի յան արի։

232(333).

Կանչում եմ արի՛, արի՛,
Արի՛, մոտս ման արի։

233(334).

Ծաղիկ ունեմ նարնջի,
Աղա՛, վեր արի փնջի,
Ծաղիկ Ծաղկեվանա ես,
Ասլից Հերևանայ ես։

234(335).

Ես մի չոր ծառ էի, դու գարնան արև,
Քո սիրով ծաղկեցավ, իմ թուփ ու տերև։

235(336).

Ճամփեն բռնեք լուս հըլնի,
Իմ նորահարս դուրս հըլնի։

236(337).

Արև էր ամպի տակին,
Սուրբ Հակոբա ճամփի տակին.

Մի էնպես ախպեր ունեի,
Խրճղան ձին՝ թամբի տակին։

237(338).

Արևը առև վըր բադանին,
Մամեն մեռնի հուր Վարդանին։

238(339).

Նստել եմ օսկե սինին,
Խմել եմ նռան գինին։

239(340).

Բլբուլ եմ բաղի միջին,
Տերև եմ թաղի միջին
Մի աննման յար ունեմ,
Իմ բոլոր խաղի միջին։

240(341).

Կաքավ եմ քարամիջին,
Ձեն կուտամ ձորամիջին,
Աստված ջան, մուրազս տու,
Գալող շաբթվա միջին։

241(342).

Արև առավ գերանին,
Ես ղուրբան ավետարանին,
Ջուխտակ ղշեր դուս հելան,
Կանաչ խոտը բերանին։

242(343).

Դու նստեր ես օսկե գյամին,
Կղզղզա սիրուդ քամին,
Էրնեկ քո կուշտ նստողին,
Շամամ ծծեր գրկողին։

243(344).

Բաղչեմ եմ դրե դարին,
Պայման եմ արե յարին։

244(345).

Կայներ ես վարդի հովին,
Քամին տա կրծքիդ մովին։

245(346).

Բոստան եմ դրե վեր էնա դարին,
Աստված ավերի էս տարվա տարին,
Ձելավ մեկ շամամ, օղորկի յարին։

246(347).

Աչքս քցել եմ յարին,
Ոտս տվել եմ քարին,
Էրթա՝ ու էլ հետ չգա։
Քեզ ինվոր տարած տարին։

247(348).

Կայնեմ քարին ու սարին,
Գիր գրեմ ղարիբ յարին,
Արցունքով գրեմ կանչեմ,
Անտեր մնա ըսենց տարին։

248(349).

Հելանք գեմ արինք սարին,
Աչքս ընկավ դիմաց քարին,
Դուշման մեղ քյաշեց սուր,
Ետ չգա էն տարին։

249(350).

Կաքավը կայնե քարին,
Կատուրը լիքը արին,
Մե լայլուղ վարդ եմ քաղե,
Կը ղրկեմ իմ յարին։

250(351).

Ակը դեմ առավ քարին,
Էկավ բոլրավ տարին,
Խոսկիցդ քե ետ դառար,
Ջխասնես քու մուրազին։

251(352).

Դու կայներ ես մըջ ամրոցի
Ջուխտակ շամամ մըջ քո ծոցին,
Մեկ տու զանեմ վըր իմ խոցին։

252(353).

Ջուրն հելե արտին, արտին,
Էկե թալե վըր թախտին,
Եռի քուր մեռնի մեկ ախպոր,
Հա՜մ գլավին, հա՜մ թախտին։

253(354).

Կայնել ես ծառի խովին,
Ծամերդ գեյրի բոյին,
Էրնեկ քեզի առնողին,
Շամամ ծծեր գրկողին։

254(355).

Կայներ եմ բալկոնի խովին,
Ծամերս ա գեյրի բոյին,
Էրնեկ ընձի առնողին,
Շամամ ծծեր գրկողին։

255(356).

Կաքավ կայնե գերանին,
Ոսկի բլուլ բերանին,
Կաքավ ջան, ղայթան գործա,
Ախպորս չուխի բերանին։

256(357).

Կաքավ կայնե վեր քարին,
Կձենցու ձորա միջին,
Կաքավ ջան, դու կռկռա,
Հիրգուն յարս տուն գիքա։

257(358).

Կաքավ կայնե դերանին,
Ոսկե բլուլ բերանին,
Կաքավ ջան, գործա օսկին,
Ցարիս չուխի բոլորին։

258(359).

Կաքավ կայնե վըր քարին,
Ոսկի դանակ բերանին,
Խնձոր կիսա, տա յարին,
Կես՝ ընձի, կես՝ Շուշիկին։

259(360).

Ջալըմ, զուլում տեքերկին,
Գնա խասի քո շրկին։

260(361).

Ջվածեղ՝ խփի տկին,
Մանուշակ՝ թփի տկին,
Կուրսուկ յարս գտեր եմ,
Խնձորի ծառի տկին։

261(362).

Վիճակ նստե վըր պատին,
Աղապնները վըր լակին,
Վիճակի խաքի զարպապին.
Ջան վիճակ, ջա՜ն ջա՜ն։

262(363).

Ամի, մեռնիմ քու բեղին,
Ընձի կարկա մըջ գեղին։

263(364).

Ջուրն հէլե արպին-արպին,
Հելե թալե մեր թարպին։

264(365).

Ավլի թափի փոշին,
Հելա կայնի շոշին,
Տեսնամ ախպերս ե՞ր գա,
Վարդեր շարեմ դոշին։

265(366).

Ծաղիկ եմ քաղել դեղին,
Դրել եմ քարակողին։

266(367).

Ծաղիկ եմ քյաղե դեղին,
Դրել եմ դարա կողին.
Իմ ծաղիկը լուս կուտա,
Դուշմնի հաչք դուս կուտա։

267(368).

Պստի աղջիկ, լավ աղջիկ,
Դու իմ խամար դավ, ախչիկ,
Ես քե գողտու սիրեցի,
Էս ո՞ն էրեց ցավ, ախչիկ։

268(369).

Դուն կայնար բանցր սարին,
Աչքով կանես քո սիրածին,
Նոր թմմավ քո քսանչորս տարին,
Ղալամ զարկիր դավըրին։

269(370).

Սարի արագին մեռնիմ,
Գինու կարասին մեռնիմ,
Ջաղդի գալող, յարո ջան,
Սրտիդ մուրազին մեռնիմ։

270(371).

Մերեր եմ սերն էրեսին,
Անթառամ թեր երեսին.
Ով որ իմ սիրած չիտա,
Ասսու կրակ երեսին։

271(372).

Սիրեր եմ սերն հերեսին,
Անթառամ թերն հերեսին.
Ով իմ սիրածն ինձ չտա
Աստծու կրակն հերեսին։

272(373).

Մանուշակ թփի տկին,
Ջվածեղ խփի տկին,
Կորած յարս գյտեր եմ
Խնձորի ծառի տկին։

273(374).

Բերանդ ֆռանդ, ծծերդ ծոցիդ
բալնիս,
Գյացեք յարիս ասեք, թող կայնի
տանիս։

274(375).

Ամբեր ա, ձուն չի գալիս,
Մթներ ա, տուն չի գալիս։

275 (376).

Կայնել՞ա, տուն չի գալիս,
Աչքիս էլ քուն չի գալիս։

276(377).

Ջաղաց ջաղացին մոտիկ,
Էրեսն էլ նռան խատիկ,
Շեկ աղջիկ, ծոցիդ մեջը,
Հա՜մ խամբարձում, հա՜մ զատիկ։

277(378).

Ջաղացը՝ ջաղցին մոտիկ,
Երեսդ՝ նռան հատիկ,
Շեկ տղեն ծոցիս պիտի,
Հա՜մ համբարձում, հա՜մ զատիկ։

278(379).

Ժանդրաքթիկ կնգտիք,
Կուտիք, չուդիք կովտիք։

279(380).

Ջուրն ա հելե առվներ,
Գրող տաներ պառվներ,
Վարդ մանիշակ խարտներ,
Կարմիր խնձոր ախչիկներ,
Դալար վարոց տղեկներ։

280(381).

Տղա՛, արևուտ մեռնիմ,
Օսկե մաղերուդ մեռնիմ,
Էկել ես ինձ տանելու,
Օսկե կոզրանդիա մեռնիմ։

281(382).

Վիճակ կասեմ, կամչնամ,
Չլեմ, ծաղկեմ, կանչնամ,
Ոն որ դյա մեր վիճկի գող,
Արնաշաղախ մտնի խոզ։

282(383).

Ցաման ադե, դու արեցիր,
Թամախ արիր խարրնոցին,
Ընձի տվիր գրկանոցին։

283(384).

Սարի լանջին մե հախպուր,
Մեջն էրկու բաժակ ջուր,
Մեկ ես խմեմ, մեկը՝ դու,
Ջմոռանանք մեկ մեկու։

284(385).

Սարի տկի պաղ ախպուր,
Արծթե թաս, օսկե ջուր։

285(386).

Բոստնի բոլոր մանդր ուռ,
Բոլ ա կայնես դուքնի դուռ,
Հըմեն կասեն քեզի ծուռ։

286(387).

Գյանջուց էկավ բեռմ՛ նուռ,
Էկավ, հիճավ ժամու դուռ.
Ժամու դռան ավելը,
Ես կշոկեմ լավերը։

287(388).

Բոլ ա կայնիր դուքնի դուռ,
Սիրած ունես, կասեն ծուռ.
Իմ սիրած ընձի տվեք,
Կերթամ թալեմ քաղքի քուռ։

288(389).

Արազն ընցամ են կուռը,
Քաղեցի Գյանջի նուռը,
Թեկուզ քցեն սև ջուրը,
Ես չեմ առնի էն ծուռը։

289(390).

Կանցիլլարի դուռը՝ տասերկու խսիր,
Ախ իմ ախպորն ա տարած,
դերմանու հեսիր։

290(391).

Կանցիլարի դուռը, կվառի փուռը,
Վեց տարեկնուց տեսանք, մեր մոր
մոմուռը։

291(392).

Կանցիլարի դուռը, կվառի փուռը,
Նորից տեսա, ախպորս մոմուռը։

292(393).

Բոբիկ մի քելե, փուշ է,
Յարի պադիկ անուշ է։

293(394).

Երկինքն էր ամպե, կուգեր մառմառ
ձուն,
Կուգեր կթափեր, վըր ղարիբ
մարդուն։

294(395).

Ջաղցի դռներ տաշուկ է,
Ղալամով նախշուկ է,
Ղալամ քաշողին մեռնիմ,
Ղալամ քաշողն իմ յարն է։

295(396).

Ջան գյուղում կասեմ, կշարեմ,
Ջան գյուղում, ջա՛ն, ջա՛ն,
Լցնեմ տոպրակ, կկարեմ,
Ջան գյուղում, ջա՛ն, ջա՛ն։

296(397).

Թավեն բերեք, ձու խաշեմ,
Ելնեմ կտուրը՝ աշեմ,
Տեսամ՝ յարս գալի՞ս ա,
Ջոքեմ, չաքմեքը քաշեմ։

297(398).

Ջուն գնեմ թավեն, խաշեմ,
Հելնեմ երթիկը աշեմ,
Տեսնամ՝ յարս գալի՞ս ա,
Ջոքեմ. չաքմեքը քյաշեմ։

298(399).

Գացինք նորաշեն
Բլղուր կխաշեն,
Խորոտիկ յաշին,
Թափած քամաշեն,

Կոլխոզ կքյաշեն։

299(400).

Սաղ տարին ծոմ ու պաս եմ,
Քեզ համար օսկի թաս եմ,
Սրտիս միջի դարդերը
Հալբաթ մի օր քեզ կասեմ։

300(401).

Ես մի անղալադ ղուշ եմ,
Թայերիս մեջ նմուշ եմ,
Ինչ հարսն ու աղջիկներ տեսնես,
Ես բոլորից անուշ եմ։

301(402).

Բախշա ունեմ, լոր չունեմ,
Նխշուն աղջիկ, յար չունեմ,
Անտեր-անտիրական եմ,
Աշխատող աղբեր չունեմ։

302(403).

Ես խորոտիկ տուն ունեմ,
Միջը օսկե սուն ունեմ,
Սունը, գերան, քար պիտեր,
Իմ ուզած յարը պիտեր։

303(404).

Ես մի պուտ ջուր եմ,
Գեղ մարդկանց թուք ու մուր եմ։

304(405).

Ես մի զարիբ ղուշ եմ,
Թայերիս մեջ նմուշ եմ։

305(406).

Վիճակ, վիճակ, վիճակի դուռ,
Էկե նստե մամու դուռ,
Կալե-կապե կուռ ու ճուռ,
Ջանե թշին կարմիր նուռ։

306(407).

Ծաղիկ, ես քու ծառն եմ,
Վիճակի միջի խաղն եմ,
Քամին զանեց գլորեց,
Վաթանս մոլորել եմ։

307(408).

Ախպեր, առածիդ մեռնեմ,
Գինուդ, կարասիդ մեռնեմ,
Ճամփա գացող մեծ ախպեր,
Թուրիդ-թվանքիդ մեռնեմ։

308(409).

Դու ելել ես կերթաս ի բեր,
Ոչ բերն էղնի, ոչ բերատեր,
Խեր չտեսնին էս խերն ու մեր,
Ընձի չանին էս դարդին տեր։

309(410).

Բարձի տակն խոտ կուգեր,
Տեղն իցկեցի՝ փոնթ կուգեր։

310(411).

Իմա՞լ էնեմ բեդ-բեդ դարդեր,
Ջուն ա դրե աշնան արտեր,
Ջուն ա դրե բանցրիկ սարեր,
Հալեր, թափեր մարմառ քարեր։

311(412).

Էս գշեր, սիրուն գշեր,
Ես կպաքեմ քո թշեր։

312(413).

Օրեր, օրեր,
Ո՞ւր ևք կորեր,
Էրնեկ էն օրեր,
Օր կլնինք սարեր։

313(414).

Խարս խան վիճակն ի բարին,
Շուտ խասնես քու սրտի մուրազին։

314(415).

Սարերի հովին մեռնեմ,
Իմ յարի բոյին մեռնեմ,
Ես սիրել եմ ես կառնեմ,
Ով կուզա ինչ ասա։

315(416).

Կռունկ, կռմանիդ մեռնեմ,
Ջայիր-չիմանիդ մեռնեմ,
Կռունկ, կռմանիդ մեռնեմ,
Օսկն կտուցիդ մեռնեմ։

316(417).

Կռունկ, սիրես քո մեկ բալի արևը,
Ցարս մնաց Ջանգեղուրա ձորերը։

317(418).

Սինու միջի թուրն եմ,
Գիվիտոնի քուրն եմ։

318(419).

Ծառի տակին պաղ հախպուր,
Ախպեր, արի տար քո քյուր,
Քյո քյուրն ընձի հավան չի
Տար ընձնից լավին տուր։

319(420).

Ծառի տակ մացեր եմ,
Թառ լաչիկ լվացեր եմ,
Ա՛յ սարի սիրուն ախչիկ,
Դարդովդ գյացեր եմ։

320(421).

Սարի սինձը ի՞նչ կէնեմ,
Կաթ ու բրինձ ի՞նչ կէնեմ,
Ես սիրեր եմ, ես կառնեմ,
Խոսկն ու խաբար ի՞նչ կէնեմ։

321(422).

Պստի-պստի իլիկ եմ,
Բազրգանի կնիկ եմ,
Բազրգան, աստված սիրես,
Որ մի քաղաքը մտնես,
Իմ յարին հետդ բերես։

322(423).

Պստի-պստի իլիկ եմ,
Բազրգյանի կնիկ եմ,
Բազրգյան նստե թախտին,
Հաշկով կէնա խանըմին։

323(424).

Գյուրանին խաց կրերեմ,
Բերանը բաց կրերեմ,
Տես քեզ ինչքան կսիրեմ,
Ջուկ տապակած կրերեմ...

324(425).

Հերեվան երթալու եմ,
Քերեկան կարթալու եմ,
Ես ի՞նչ կէնեմ քերեկան,
Իմ յարն ա տաս տարեկան։

325(426).

Ծառի տակին էլ ունեմ,
Ըռանգ-ըռանգ թել ունեմ,
Տղա, օչխարդ քաշա,
Ես քու վերա սեր ունեմ։

326(427).

Բերդի գլոխ էլ ունեմ
Ըռանգ-ըռանգ թել ունեմ,
Ախպեր կըսա քուր չունեմ։

327(428).

Նստի դուռը, էլ ունեմ,
Ըռանգ-ըռանգ թել ունեմ,
Քուր նստե, արցունք թափե՝
Իր կորած ախպոր հապով։

328(429).

Դեղ եմ դրել, հավան չեմ,
Ես իմ գլխին դիվան չեմ,
Փետե դանկով մարդ ըլնեմ,
Ես էն տղին առնող չեմ։

329(430).

Կերթամ ախպորս կասեմ,
Դուքա վարգա խանջլով,
Խանչալ կեղի պուտ արուն
Կթափի քու թևերուն։

330(431).

Ես մի պուճուր էրկաթ եմ,
Բազրգանի մկրատ եմ,
Դուռդ բաց, բարի մարդ եմ,
Սիրո մոլորված վարդ եմ։

331(432).

Սարերի հովին մնունեմ,
Ձորերի հովին մնունեմ,
Իմ բալի բոյին մնունեմ,
Բալա զուրբան, բալա ջան։

332(433).

Ես աղջիկ եմ՝ ալ կուզեմ,
Գլխիս օսկե շալ կուզեմ։

333(434).

Ես\ աղջիկ եմ՝ ալ գուզեմ,
Բարակ բոյիս շալ կուզեմ,
Երբ օր գացի կեսրանց տուն,
Օսկի ու արծաթ կուզեմ։

334(435).

Ես աղջիկ եմ ալ կուզեմ,
Բարակ մեջքիս շալ կուզեմ,
Եփ որ մտա էդ տնիկ,
Օսկին ծալըն-ծալ կուզեմ։

335(436).

Ես աղջիկ եմ ալ կուզեմ,
Գլխիս քիրմա շալ կուզեմ,
Պալատ-մալատ պետքը չի
Մի պստիկ զալ կուզեմ։

336(437).

Ես աղջիկ եմ, էլու եմ
Նշանելու եմ, բելու եմ,
Եփոր գացի էլու տուն,
Ոսկին խաբըրով կուզեմ։

337(438).

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,
Բարակ բոյիս շալ կուզեմ,
Եփ որ գացի կեսրանց տուն,
Քյամար իմ մեջքով կուզեմ։

338(439).

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,
Գլխիս օսկե թաս կուզեմ,
Երբ որ մտնեմ էն տունն,
Բարակ քիրմա շալ կուզեմ։

339(440).

Ես էս սարեն չեմ,
Ղարիբ բլբուլ եմ,
Ղարիբ բլբուլ եմ,
Ցարիս կարոտ եմ։

340(441).

Ցարիս ղանչեցեք, դուրս բերեք,
Տասթմալ մեջքին կապեցեք,
Թուխ-թուխ հաշկեր լացուցեք։

341(442).

Էլի էս յարն եմ,
Քո սիրահարն եմ,
Քո մեկուճարն եմ,
Դառնամ քե կառնեմ։

342(443).

Վիճակ ասեմ, ամանչեմ,
Ծլեմ, ծաղկեմ, կանանչեմ,
Բալկոնի դռներ բացեմ,
Ես իմ յարը ճանաչեմ։

343(444).

Ախպեր, հանաքիդ մեռնեմ,
Ջեքիդ դանակին մեռնեմ։

344(445).

Ախպեր, հանաքիդ մեռնեմ,
Ջեռքիդ դանակին մեռնեմ։

345(446).

Ծաղկավանա գալիս եմ,
Քրտներ եմ, լալիս եմ,
Հո՞ւր ա իմ խեղճ բալեն,
Էս տարի լալ եմ դարձեն։

346(447).

Թռի, թռի, թռցնեմ,
Կայնակ-արախ խմցնեմ,
Սև խավու միս կերցնեմ,
Ջինարի խով քնցնեմ։

347(448).

Սարի արագին մեռնեմ,
Դինու կարասին մեռնեմ,
Շեկ տղա, ղամար աղչիկ,
Սրտիդ մուրազին մեռնեմ։

348(449).

Ասեղս թելեմ,
Քովս ի պայեմ,
Դուշմանս մեռնի՝
Պադանքը կարեմ։

349(450).

Ես մի ղարիբ ղուշ եմ,
Թայերիս մեջ նմուշ եմ,
Ցարս էկավ, անց կացավ,
Ես ամենից անուշն եմ։

350(451).

Ջահել եմ ընկեր չունեմ,
Ընկել եմ, վայ տեր չունեմ,
Ոչ լավ ըսեք, ոչ էլ վատ,
Հարստություն, սեր չունեմ։

351(452).

Սրտովս եմ սիրեմ,
Մարդ չարեն զոռով,
Արի բարըշնենք,
Մի մնա խռով։

352(453).

Սարերի սինձն ինչ կանեմ,
Կաթով բրինձ ի՞նչ կանեմ,
Թող իմ սիրածն ինձ տան,
Ոսկի, արծաթն ի՞նչ կանեմ։

353(454).

Խնձորը գլորել եմ,
Ճամբեքը մոլորել եմ,
Իրեք տարի ա, յար ջան,
Քե վրեն սովորեր եմ։

354(455).

Ցար սեֆիլ եմ, տուն չունեմ,
Ճնճղկա պես բուն չունեմ,
Ոն որ իմ յարը տարավ,
Սև անհնծքով անիծեմ։

355(456).

Գնալու եմ Երևան,
Կարղալու եմ քերեկան,
Ի՞նչ եմ անում քերեկան,
Ցարս է տասնութ տարեկան։

356(457).

Երկարասոյիդ մեռնեմ,
Ջանալլու բոյին մեռնեմ,
Նկած ա քաղ անելու,
Էկող ջահելին մեռնեմ։

357(458).

Կանչա, հավեսիդ մեռնեմ,
Նախշուն մուրազիդ մեռնեմ։

358(459).

Էթամ սուդը դատ կանեմ,
Իմ բալին շահդադ կանեմ։

359(460).

*Արագ, ջրերիդ մեռնեմ,*
*Կանաչ մուրազիդ մեռնեմ,*
*Յոթ տարի ա չեմ տեսե,*
*Սրտով սիրածիս մեռնեմ։*

360(461).

*Ծաղիկ ասեմ ու շարեմ*
*Լցնեմ տոպրակն ու կարեմ,*
*Տանեմ Հերևան ծախեմ,*
*Մի այլուխ առնեմ, փախնեմ։*

361(462).

*Բաղչա ունեմ ծառներով,*
*Մեջը լիքն ա գառներով,*
*Գառներ մատաղ արեցի,*
*Աղիվ յարիս ձեռներով։*

362(463).

*Աղջիկ կայնե քմրան հով,*
*Ծամեր փռե գոտու բոյ։*

363(464).

*Խաց եմ խորե խորերով,*
*Ձենս ա հընգե ձորերով,*
*Ճրագ շեմանն ա վառում,*
*Դուշման դռանն ա պատռում.*
*Խարս, խան մի բարի վիճակ։*

364(465).

*Խաց եմ քխե խորերով,*
*Ձենս ա ընգե ձորերով,*
*Ասված ջան, մուրազս տու,*
*Մի քող ընձի խոցերով։*

365(466).

*Խաց եմ խորե խորերով,*
*Ձենս ցրվե ձորերով,*
*Աստված տվե մալ դովլաթ,*
*Դուշման մացե պադռելով։*

366(467).

*Կանաչ արտեր խճերով,*
*Իմ ախպերն նխշուն բջերով,*
*Ելա սարն ու դարձա,*
*Սարեր վը գլուխս բարձա։*

367(468).

*Ղուշըմ քռավ էս արտով,*
*Նրգեց իմ սազի ղայտով,*
*Սազըն էլա, սազ դառա*
*Կուրիսուկ յարիս դարդով։*

368(469).

*Ղուշըմ քռավ էն արտով,*
*Դրեց իմ սազի ղայտով,*
*Սազըն էղա, սազ ա՜ա՜,*
*Կուրիսուկ աղբորս դարդով։*

369(470).

*Ղուշըմ քռավ էս արտով,*
*Ջարկի դցի էն քարով,*
*Տարանք էփինք բիբարով,*
*Նստանք կերանք ջուխտ յարով։*

370(471).

*Մեռնիմ, մեռնիմ, մեռնելով,*
*Քեռիդ կուգա բեռներով,*
*Բեռներն ի՞նչ ա՝ քարուբար,*
*Դու էլ վրեն սար ու բար։*

371(472).

*Թոռ քալած քևերիդ մեռնիմ,*
*Նոր գալած քեղերիդ մեռնիմ։*

372(473).

*Թալեր եմ դուգուն-դուգուն,*
*Իմ սիրտ քեզի չի ուզում.*
*Ոտս դրի կալասկեն,*
*Ես կպադռիմ ձեր ազկեն։*

373(474).

*Ախ մեր տուն, ձեր տուն, հիրար դիմաց,*
*Աչքով կէնեմ, ընքով իմաց։*

374(475).

*Ծաղիկ քյաղեմ մաղերով,*
*Դնեմ դուռը շաղերով,*
*Իմ ծաղիկն լուս կուտա,*
*Դուշմնի հաշկ դուս կուգա։*

375(476).

*Կաթավհատի հնդկերը*
*Մենք ջոկել ենք ծանդրը։*

376(477).

*Ոչխարն արել եմ բակը,*
*Սիրել եմ Ալագյազը,*
*Դեմ տվեք սելի ակը,*
*Յալլուղը գցի, քող գա։*

377(478).

*Ջրի ղրաղն աղ պիտեր,*
*Իմ օրտակին ղազ պիտեր,*
*Ի՞նչ եմ անում քուլնջին,*
*Իմ յարը շալբազ պիտեր։*

378(479).

*Ախ իմ օրեր, օրեր,*
*Դու դո՞ր եք կորեր,*
*Ախ իմ օրեր, օրեր,*
*Հո՞ւր ա իմ բալու շորեր։*

379(480).

Էս ֆայտոնը մեզ լիներ,
Ակները սարքին լիներ,
Հեղնեմ էրթամ յարիս մոտ,
Ողջ դիշեր երգար լիներ։

380(481).

Մեր դուռը պաղ ու բուղ էր,
Իմ սիրտն էն տղին կուզեր։

381(482).

Էլա սարը սաստիկ էր,
Ցարիս խաքածն լաստիկ էր։

382(483).

Հելա սարը սաստիկ էր,
Ցարիս խաքածն լաստիկ էր։
Հելա սարըն ու դարձա,
Սարը գլխիս բարձր ա։

383(484).

Հելա սարը սաստիկ էր,
Քո խաքածը լաստիկ էր,
Իմ աղու անուշ փեսա,
Արի՛ մեր տունը, խոսա։

384(485).

Այս տներ, պուճուր տներ,
Երազ է օսկե սներ։

385(486).

Քանաքեռ բանցր գյուղ ա,
Ջուրն խիվնդի դեղ ա,
Էդ ինչ կռապաշտ գեղ ա,
Սիրած սիրածի չեն տա։

386(487).

Սիբեխը ղոխ ա դառե
Իմ յարը բոխ ա դառե։

387(488).

Ախպե՛ր, ախպե՛ր, ջան ախպե՛ր
Ջանս քե ղուրբան, ախպե՛ր։

388(489).

Ախպե՛ր, ախպե՛ր, ջան ախպե՛ր,
Տամս քե խարզան, ախպեր,
Ջարկ բուզ եզան, ախպեր,
Դարձի՛ արի՛, տուն, ախպե՛ր։

389(490).

Ախպե՛ր, ախպե՛ր, ջան ախպե՛ր,
Շաքյար մաղեմ՝ կեր, ախպեր,
Տամերս քե խարզան, ախպեր,
Ջարկ բուզ եզան, ախպեր,
Գնա՛ զոզան, ջան ախպե՛ր։

390(491).

Էլա տեսա՝ մեկ չկեր,
Մեկի գլոխ կտրած էր,
Վերցրի դրի կրակին,
Հելավ թափավ ճրագին։

391(492).

Ջայի կրաղ արփա էր,
Մեր բերածն քոռփա էր,
Բարի լո՛ւս ջան, բարի լո՛ւս,
Ասլած պախա մեր էրկուս։

392(493).

Գացի չայը՝ բուղ էր,
Իմ դարդ խաղար էր,
Գացի շաքյար առա, տուղ էր
Վա՛յ իմ սև բախտից։

393(494).

Կտըրներ պաղ ու բուղ էր,
Իմ խոր դուռ դուրան-դուզ էր,
Էկան ընձի ուզելու,
Իմ խեր խարրնոց կուզեր։

394(495).

Շիվ կա՝ շվի նման չէ,
Բաղ կա՝ բաղի նման չէ,
Կամաց-կամաց դուս գուքան,
Մեկ իմ յարին նման չէ։

395(496).

Գուքանը ման եմ տվե,
Սիրել եմ, ջան եմ տվե,
Օխտը տարի սիրելուց,
Մե օր իրաղար եմ տվե։

396(497).

Ցոնջեն յան եմ տվե,
Սիրել եմ, ջան եմ տվե,
Օխտը տարի սիրել եմ,
Մեկ ուրիշին եմ տվե։

397(498).

Առու-առու եմ թռե,
Քառասուն կաքավ եմ բռնե,
Համրով թառն եմ դրե։

398(499).

Սարերը ձուն ա էկե,
Իմ յարը յան ա էկե,
Իմ մերը քեզ աղչիկ չի տա,
Իմ ճանը յան ա էկե։

399(500).

Հէրթիկը բուն եմ սարքե,
Տղեքին շուն եմ սարքե,

Նազ կանեմ, գալում չի,
Հակի թարգը տալում չի։

400(501).

Սարերը ձուն ա էկել,
Իմ յարը տուն ա էկել,
Մեռնեմ էդ քուխ աչերաց,
Սրտիս արուն ա էկել։

401(502).

Տեղ եմ գցե՝ մինդար է,
Մեջի քնողը ջինտար է։

402(503).

Կանչե՞ կռունկ, կանչե՞ քանի
գարուն է,
Աշխարհ արև է, ընձի դուման է։

403(504).

Հերևան բաղ եմ արե,
Ջիգյարս դաղ եմ արե
Դոստ ու դուշմնի խոսքով,
Լալս ծիծաղ եմ արե։

404(505).

Հերևան բաղ եմ արե,
Ջիգյարս դաղ եմ արե,
Դոստը դուշմանի մեջը,
Լացս ծածաղ եմ արե։

405(506).

Տղա, քո ֆասն էս ծռե,
Ոտդ մեր դռնեն կորե,
Հար ե՞րբ մնամ զարընջի,
Հաշկս ճամփեդ յարընջի։

406(507).

Հյուսիս քամին գալիս ա,
Խնամու դռան տալիս ա,
Խնամի ջան դուռդ բաց,
Թագավորդ գալիս ա։

407(508).

Քաթան շորեր եմ կարել,
Մանտր կոճակ եմ շարել,
Քնի, իմ ախպոր սիրած,
Քեզնից լավին եմ ճարել։

408(509).

Ամպեր, մի քիչ հով արեք,
Անձրև թափեք, ծով արեք,
Վատ մարդի էլը գյունը,
Սև հողի տակովն արեք։

409(510).

Մալուլ-մալուլ ման եմ գալիս
մայլերը,
Վախենում եմ, գուլով խփեն
գյադերը։

410(511).

Տնգոզ-տնգոզ ման ես գալի քուչերը,
Վախենում եմ քարով ղարկեն
գյադերը։

411(512).

Սարեր ջան, դուք կանանչեք,
Ճամփերը հաստատ բացեք,
Սիրած սիրածին տեսնի,
Ամբողջ երկիր ճանաչի։

412(513).

Խավքեր, քևանի արեք,
Ցարիս հովանի արեք,
Թող փչա բարակ քյամին,
Հետն էլ դուք օրոր արեք։

413(514).

Խավքեր, քևանի արեք,
Ղարիբիս դուք տուն բերեք,
Ընդոր էնքյան ես կուզեմ,
Ջուկ տապակած կպախեմ։

414(515).

Ջրի միջի տաշ քարը,
Ախպեր, ըլնեմ քո ճարը,
Էդ քո բոյի գյարդանը,
Արժե գովեն բիրդանը։

415(516).

Ջուր կա Թասով, ջուր բերեք,
Իմ մեկ ախպոր քուր բերեք։

416(517).

Կողբա լոթի գյադերը,
Ասել են լավ ղայդերը,
Խաբար տարեք իմ մորը,
Ես չեմ առնի գյադերը։

417(518).

Արազա խոր աղերը,
Կոխպա լոթի գյադերը,
Նատեր են դուքաններըը,
Ասես են լավ ղայդերը։

418(519).

Հերևանա հարեքը,
Կողբա տղա գյադերը,
Քոման լցվան միկիտան,
Կասեն սիրուն կայդերը։

419(520).

Ջուր բռնի՝ հելա սարն,
Ջգտա ֆիտան յարն։

420(521).

Կուժն առա հելա սարը՝
Ջգտա ֆիդան յարը։

421(522).

Փշատի ծառ ուռի բար մի տար,
Գյալա, արի քո սիրածին տար։

422(523).

Գարին ա հելե էրկու ճղեն,
Ես չեմ առնի ձեր տան տղեն,
Կերթամ կառնեմ, վերին թաղեն,
Համ չինար ա, համ էլ բարդու։

423(524).

Կայնել ես սարի ճամփեն,
Հիշում ես յարի ճամփեն,
Կտամ օսկի մատնիք,
Օր դնաս ջրու ճամփեն։

424(525).

Կաքավ թըռավ էն արտեն,
Ծրգեց իմ աղգի ղայտեն,
Աշըղ չեմ, աշըղ դառա՝
Կուրիսուկ յարիս դարդեն։

425(526).

Անձրև էկավ շըղալեն,
Յարս էկավ դողալեն։

426(527).

Ալաշկերտու թութրաղ կալեն,
Սավդով զարկեց սրտիս յարեն,
Յարս ընձի թորգեց լալեն։

427(528).

Ջուր գուքեր բանցր սարեն.
Կթափեր մարմառ քարեն,
Աղջի, մի դարձի կրարեն,
Կխանաես քո յարեն։

428(529).

Ջուր գուքեր բանցր սարեն,
Կթափեր մարմառ քարեն,
Աղջի՛, մի դարցի քո իրդարեն,
Կխանաես գոտու յարեն։

429(530).

Ջուր կիգեր վերին սարեն,
Կիգեր կթափվեր մախմուռ քարեն։

430(531).

Կոնգյուղ դարու փեշերը,
Էն արնախում գյշերը,
Ակռվներու բոլուքըը,
Խաներ թուրքի հաշկերը։

431(532).

Հալավ ճամփեքի ձունը,
Տարավ աչքերիս քունը։

432(533).

Հալավ ճամփեքի ձունը,
Յարս էկավ իմ տունը։

433(534).

Ժամի դռան ավելը,
Մենք ջոկել ենք լավերը։

434(535).

Տերտերի ձեռքի ղուշը,
Իմ յարի կարմիր թուշը։

435(536).

Մարալի մատի փուշը,
Տերտերի ձեռի ղուշը։

436(537).

Տանս տակին էրկու ղուշ,
Մեկը՝ վարթ ու մեկը՝ փուշ,
Աստված, իմալ աստված ես,
Մեկը կտանես, մեկն էլ՝ ոչ։

437(538).

Էկավ բոշի քյարվանը,
Գնաց ձեռնես դարվանը։

438(539).

Կամաց քշեք սելերը,
Կապեմ քըմբռնիս լմբկերը։

439(540).

Իմ յարի սև քաքուլը,
Ադեյ դռան սև ուլը։

440(541).

Տո էս գյուռը, էն գյուռը,
Քյաղեր եմ Վանա նուռը,
Ես չեմ առնե էդ ծուռը,
Կերթամ կընգյնեմ սև Քյուռը։

441(542).

Օչխարն էրեր եմ բակը,
Դեմ տալել սելի ակը,
Ով իմ սիրածն առնի,
Ջվայելա գյլխու քաղը։

442(543).

Կանանչ արտի քնարը,
Ո՞վ ա տեսել իմ յարը,
Էրնեկ յարիս տեսնողին,
Ջուխտըմ կաքավ բռնողին։

443(544).

Կանաչ սարի քնարը,

Ո՞վ ա տեսե իմ յարը,
Երնեկ իմ յար տեսնողին,
Ջուխտըմ կաքավ բռնողին։

444(545).

Ի՞նչ կանեմ դույնի մալը,
Ի՞նչ կանեմ վղի վղնոց,
Խելքով տղեն ա բանը։

445(546).

Ջոջ տուն լեն ու հերդեն,
Խորոտներն ա մեր ջերդեն։

446(547).

Նստեր եմ ակուշկեն,
Քուրոջ հետը լրթեր եմ շեմուշկեն։

447(548).

Աղբոր բըլուղի թևերը խաս են,
Աչքերին մեռնեմ, արաղի թաս են։

448(549).

Արև ծագեց սարեն,
Կաքավը կանչեց քարեն,
Իմ սիրածն ինձ տվեք,
Սաղանա սրտիս յարեն։

449(550).

Ճրագի տակի մուրը,
Աշոտ, տարան քո քուրը։

450(551).

Ես պուճուր, յարս պուճուր,
Ով կտա մեզ հաց ու ջուր։

451(552).

Սարի գլուխ պաղ հախպուր,
Միչին երկու բաժակ ջուր,
Մեկ՝ ես, մեկը՝ դու,
Ջմոռանանք մեկ-մեկու։

452(553).

Ծառի տակի պաղ աղբյուր,
Արծթե թաս ոսկե ջուր,
Աղջի, ընձի պուտըմ ջուր,
Հեդուց կիգան քեզի խուր։

453(554).

Ծառի տակի պաղ աղբյուր,
Արծթե թաս, օսկե ջուր,
Ես կվառիմ քո սիրուն,
Պագըմ կուշիմ, երկու տուր։

454(555).

Սարի տակի պաղ աղբուր,
Արծթե թաս, օսկե ջուր,
Թե սիրեր ես՝ թարկս տուր,
Ես քեզ՝ ախպեր, դու ինձ՝ քուր։

455(556).

Արև առե կընփնոց,
Արի էննենք գիրկ ու ծոց։

456(557).

Արևն առե կանփնոց,
Կանփի թփեր հերսնոց,
Ե՞ր կեղեր արևմտոց,
Ցարս գա տուն, քնիմ ծոց,
Օր խմրցու դարդ ու խոց,
Չեղի ընձի կրակ բոց։

457(558).

Արև առե կանփնոց,
Կանփի տակերն է շնոց,
Ե՞րբ կլի արևմտոց,
Իմ յար գա, մալ իմ ծոց,
Օր խմրցու խոց,
Օր չեղի ինձ կրակ-բոց։

458(559).

Արև առավ կանփնոց,
Կանփի թփերն հելլի շընոց,
Կոճակդ բաց, ես գամ քո ծոց,
Ջայնամ քո օրորոց։

459(560).

Կալը ցորեն եմ մաղում,
Սարը բանջար ես քաղում,
Ինձ օրե-օր խափելով,
Ախ, անպատանք ես թաղում։

460(561).

Հէջմածին ուխտ եմ անում,
Շեկ ծամեր ջուխտ եմ անում,
Շան գլադեն սիրելուց,
Գիդում ա թուխտ եմ անում։

461(562).

Ջաղջի դուռն էր դռում,
Իմ առած էր եթում,
Ա՜խ իմ չար բախտիցը,
Էն էլ բանակ ա գնում։

462(563).

Մուրադ գետի չայիրնները լափ տվեց
Սալամ կաքավ ձորերի մեջ ծափ տվեց,
Ա՜յ շան գյադան, մատը վրես թափ տվեց։
Մուրադ գետի չայիրների գոլերը,
Ես մե մարալ, դարդից հընգա չոլերը։

463(564).

*Էլի էկավ խամբարձում,*
*Տղեկ դարձած կատղուկ շուն։*

464(565).

*Դիլամ, դիլամ, սարեր կլացում,*
*Սարերն իմ դարդից տեղից*
*կփաղցում,*
*Բալքի իմ ղարիբ ախպեր օքնան*
*դարձուե։*

465(566).

*Քյավառա սար ձուն ա գալում,*
*Ուխտավորը տուն ա գալում։*

466(567).

*Ա՛յ տղա, անունդ Հովհաննես,*
*Սարերը սեյրան կէնես,*
*Նամուսիդ ղեյրաթ կէնես,*
*Դյուքյաս քո յար կտանես։*

467(568).

*Բարակ կաստոմդ մաշես,*
*Բալքի հետս բարիշես։*

468(569).

*Ջուրն հելե հերես-հերես,*
*Բաղրգա՛ն, աստված սիրես,*
*Քաղքե-քաղաք պտտվես,*
*Որ դուն գնաս Շոռագյալ,*
*Իմ ախպոր հետդ բերես։*

469(570).

*Ջուրն հելե հերես-հերես,*
*Բաղրգան, աստված սիրես,*
*Շատ քաղքներ պտոտես,*
*Իմ յար գդնես, հետդ բերես։*

470(571).

*Լոդկեն էկավ ծովու կես,*
*Ղամար ախչիկ շիտկի դես,*
*Քյե սիրեր եմ տարի կես,*
*Տանեմ պահեմ վարդի պես։*

471(572).

*Շախով-շուխով ախպերս,*
*Բոյով-բուսով իմ հարսը։*

472(573).

*Թալեր եմ դուգուն-դուգուն,*
*Իմ սիրտ ձեր ազգին չի ուզում։*

473(574).

*Բացվեր ա կարմիր գարուն,*
*Սիրտս լցվեր ա արուն,*
*Իմ խորոտ յարի սիրուն,*
*Կբացվի դուռ հարավ քամուն։*

474(575).

*Ջուն եմ՝ կիգամ սարերուն,*
*Հալվիմ, լցվեմ քարերուն,*
*Գլգլինք մըչ կժերուն,*
*Կաթկթինք մըչ ծծերուն։*

475(576).

*Արև դիպավ սարերուն,*
*Կաքավ կայնե քարերուն։*

476(577).

*Օձ մը տեսա ճլպտուն,*
*Փախավ մտավ Սալվու տուն,*
*Սալբին նստե նըխշ կէնա,*
*Հավեր բնին քըշ կէնա,*
*Մարդը մեռնե, ուշք կերթա։*

477(578).

*Հավեն ամբե, սարեր ձուն,*
*Ցար խռովե, չիգա տուն,*
*Արի՛, յարս, արի՛ տուն,*
*Արի՛, քինինք անուշ քուն։*

478(579).

*Արի՛ սիրուն, դնա սիրուն,*
*Հազար երանի քո տան սիրուն,*
*Ոչ երանի գիշու տիրուն։*

479(580).

*Լուսնակն հելավ լուսե-լուս,*
*Ե՞ր կբացվի բարի լուս,*
*Ես ու յարս հէլննենք դուս,*
*Դուշման տենա՝ քոռնա լուս,*
*Աստված պահա մեր երդուս։*

480(581).

*Ջեն տան՝ ձեռաց հելնի դուս,*
*Դուշման տենա՝ քոռնա լուս։*

481(582).

*Աշուն ա, աշնան թամուղ*
*Խասեր ա խնձորն ու գուղ։*

482(583).

*Համ գյո՛ւլ, համ վա՛րդ, համ*
*նարգիզ,*
*Գյուլի կռունդ հերկեն վիզ,*
*Պապե, մամե, կարգե զիս։*

483(584).

*Մեր տան հետև բուլըմ պնդուկ,*
*Ձեր տան հետև բուլըմ պնդուկ,*
*Առնեմ Ջուլոյ, մտնեմ սնտուկ,*
*Ջուր լուս օդներն մնա տնգուկ։*

484(585).

*Հախպրի գլուխ էրկու նուկ,*

Ընդուց հընցավ իրեք նուկ,
Ես չեմ առնի էդ խրբուկ,
Կեթամ կառնեմ իմ ծռուկ։

485(586).

Հախպրի վրեն էրկու նուկ,
Բռավ, հելավ իրեք նուկ,
Ես չեմ առնե էդ խրբուկ,
Կեթամ, կառնեմ իմ ծռուկ։

486(587).

Քյարվան էկավ, քար բերեց,
Երկու խորոտ յար բերեց,
Քամին էլավ՝ մեկ տարավ,
Էն մեկն էլ սրտովս չելավ։

487(588).

Դուքան դրի դիքնի տեղ,
Յարս ղըրդի ղարիբ տեղ,
Որ հարամին վրա տա,
Գըլոխս կիդամ գըլխոդ տեղ։

488(589).

Սարերը ձուն ա դրել,
Սիրտս աշուն ա առել,
Հեռու տեղեր յար ունեմ,
Աչքերիս քունն ա փախել։

489(590).

Պզդի աղչի, սևավոր,
Խալխի դռներին սովոր,
Գնա մորդ խարցրու,
Ընձի չանա մեղավոր։

490(591).

Էրնեկ իրան թառ քավոր,
Իմ Աշոտս թագավոր։

491(592).

Սարից էկավ ձիավոր,
Սողոմոն ծոցի սովոր,
Էրնեկ կուտամ էն քվոր,
Ախպեր կայնե թագավոր։

492(593).

Հելա սարի գլոխ, բուսեր էր ավել,
Քաղցր ախպորս տունը, դարձավ տնավեր։

493(594).

Ջեբս բանամ՝ փարալու,
Սիրտս բանամ՝ յարալու։

494(595).

Սիրտս էրված՝ յարալու
Յար թողնելը՝ բալալու։

495(596).

Աղչի՛, ի՞նչ էր դիլաքդ,
Օղակ-կոճակ բիլակդ,
Մի բանա ճերմակ դոշդ,
Ընձի էրեց կրակդ։

496(597).

Ծաղիկ եմ քաղե՝ հալալու յա,
Էս ինչպե՞ս ավալու յա,
Յար բռնել՝ լավ գըլի,
Բայ թողնել, բալալու յա։

497(598).

Հախպուր ունեմ՝ ուրու յա,
Մըչ ղընգղընգյան ձորու յա,
Ախչի՛, ինչ լավ ծիծ ունես,
Մըչ խալ-խալ խնձորու յա։

498(599).

Սարերն սնձոտել ա,
Օչխարն բրթոտել ա,
Սարերու սինձն ի՞նչ կչենեմ,
Իմ յարն խռովել ա։

499(600).

Հերևան ալմասատ շուշա,
Ախպե՛ր, քյո բարն անուշ ա.
Մե բան ասեմ չհավես,
Յարս քեզնից անուշ ա։

500(601).

Ա՛յ հոլա՛, հոլա՛, հոլա՛,
Դուքանի տակին ցոլա
Ինչքան տես ու տեն հընդնես,
Քեզի առնողըն ո՞վ ա։

501(602).

Ծաղկաման՝ ծաղիկ չկա,
Իմ յարին մայրիկ չկա,
Իմ յարի մայրիկ խորթ ա,
Վախենամ ընձի մորթա։

502(603).

Ակներուս ջուր պխտոր ա,
Յարս ինձնից խռով ա,
Գյուլլեն թուրքի չիգյարը,
Իմ յարն ընձնից խաներ ա։

503(604).

Իմ սիրտը շատ յարոտ ա,
Թուրքի մայլեն քարոտ ա,
Արի էթանք փողլսուն,
Պագեմ թուշդ չուր լուսուն։

504(605).

Հաց եմ թխել՝ լավաշ ա,

Հարս ենք ուզել՝ թամաշա,
Մեր կուբենը բանցր ա,
Մեր խառսը շատ քաղցր ա։

505(606).

Խնձորմ ունեմ կիսուկ ա,
Ջորս բոլորն արծթուկ ա,
Հերս ուղեց չտվի,
Մերս ուղեց չտվի,
Ախպերս ուղեց՝ բախշեցի։

506(607).

Խնձոր ունեմ կծուկ ա,
Ջորս բոլորը նխշուկ ա,
Ախպերս ուղեց չտվի,
Ասի յարի բախշուկ ա։

507(608).

Խնձոր ունեմ կծած ա,
Ջորս կողմն արծաթած ա,
Ախպերն ուղեց չտվի,
Ասի՝ յարի մաղա յա։

508(609).

Մեր բակըն մեծ բակ ա,
Թուխ գառ մեջըն կխաղա,
Ցան տվեք՝ իմ յարն գա,
Հա՛մ մելիք ա, համ աղա։

509(610).

Ջիմանի մեջ բաղ ա,
Թուխ գառ մեջը կխաղա,
Ճար արեք, բալես իքա,
Հա՛մ մելիք ա, հա՛մ աղա։

510(611).

Ջոջ չայիրը ջոջ բաղ ա,
Թուխ գյառ մեջը կխաղա,
Ցան տվեք, յարս էկավ,
Հա՛մ մելիք ա, հա՛մ աղա։

511(612).

Սարիրը սնձոտեր ա,
Օչխարն բրթոտել ա,
Ճամփա տվեք յարս գա,
Հա՛մ մելիք ա, հա՛մ աղա։

512(613).

Ջյանքուլիդ գալին մեռնեմ,
Հերսիդ խալին մեռնեմ,
Լսեր եմ կարթացել ես,
Սաղմոսիդ ծալին մեռնեմ։

513(614).

Ա՛յ տղա, անակիդ մեռնեմ,
Ջեքիդ դանակին մեռնեմ,
Փափախդ թեքյ ես դրե,
Դուքան, բաղարիա մեռնեմ։

514(615).

Ա՛յ տղա, յախինդ մով ա,
Սուրբ Կարապետ քեղ դյովա,
Ես քեղի խիստ եմ սիրում,
Քյո սիրտըն ընձնից խով ա։

515(616).

Ա՛յ տղա, դու հասրար հլնես,
Իմ ախպոր սաղար հլնես,
Թե ընձնից չոկ յար բռնես,
Դու սրտապատառ հլնես։

516(617).

Ա՛յ տղա, հասար հլնես,
Սև խավու կատար հլնես,
Քյե քողեմ, հուրիշ բռնեմ,
Դու լեղապատառ հլնես։

517(618).

Ա՛յ տղա, էդ իր, մետ իր,
Խանչալդ վրեդ բետ իր,
Ես գյիդի տղամարդ իր,
Ջգյիդի՝ փոսուկ փետ իր։

518(619).

Ա՛յ տղա, հուր իր, մուր իր,
Ես ծարավ ի, դու ջուր իր,
Էսա աշուն կտանեմ,
Մարալ ու ջեյրան կանեմ։

519(620).

Ա՛յ ախպեր, աղա ախպեր,
Արի էթանք բաղ, ախպեր,
Ես մարալ եմ, դու ջեյրան,
Հընդյեր եմ չոլեր, ախպեր։

520(621).

Ա՛յ տղա, բաղի միջին,
Ոտքերդ շաղի միջին,
Կանչիր, կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քյո խաղի միջին։

521(622).

Ա՛յ տղա, ախ ես անում,
Թևերդ կախ ես անում,
Միտք ունես ինձի առնես,
Աչքով, ունքով ես անում։

522(623).

Ա՛յ տղա, վերևով արի,
Օխշարի բերուվն արի,
Իմ հոր տուն ղալմաղալ ա,
Վերին թաղերով, դու արի։

523(624).

Ա՛յ տղա, տաղով արի,
Օտներդ շաղով արի,
Բոլ ա անցնես էդ պատով,
Պատի քարեր կողրտավ,
Քու ալ ջուբեն կտրտավ։

524(625).

Ա՛յ տղա, դու հերովն արի,
Օչխարի բերովն արի,
Իմ խոր քաղ ղալմաղալ ա,
Շուտ տուր են քաղովն արի։

525(626).

Ա՛յ տղա, էրովն արի,
Ոչխարի բերովն արի,
Խորս դուռն ա ղալմաղալ,
Տներաերի դռնով արի։

526(627).

Արխալուղս կարեր եմ,
Օսկե կոճակ շարեր եմ,
Նանի՛, ջան, դարդ մի անի,
Ես սիրածս ճարեր եմ։

527(628).

Սև չիր եմ, սիվտակ չիր եմ,
Վանքի դռան օգուտ եմ,
Ի՞նչ կուտաս իմ մուշտուլուղ,
Ես քյո յարի տեղն ասեմ։

528(629).

Ռեհան եմ, դարչին եմ,
Նորագյուղում յար չունեմ,
Ցարս էկավ, խռով գնաց,
Ղարիբից խաբար չունեմ։

529(630).

Սարերումը տուն ունեմ,
Մեջը օսկե սուն ունեմ,
Ա՛յ տղա, դու քիչ խոսա,
Քյո պես խաղար շուն ունեմ։

530(631).

Ծառի տակը խաղցեր եմ,
Լաչիկս լվացեր եմ,
Լաչիկս ըռու քյար ա,
Առածս մնկուճար ա։

532(633).

Սարի արագին մեռնեմ,
Գյինու կարասին մեռնեմ,
Ճամփով գյալող շեկ տղա,
Սրտիդ մուրազին մեռնեմ։

533(634).

Հերևան բաղ եմ էրե,
Ջիգյարս դաղ եմ էրե,
Դոստ ու դուշմանի խաթրին,
Լալս ծիծաղ եմ էրե։

534(635).

Հերևան ուխտ եմ էրե,
Թաքչ ծամս ջուխտ եմ էրե,
Շան տղեն սիրվե վրես՝
Գյիտա քե թուխտ եմ էրե։

535(636).

Խնձոր, խնձոր, տուն արի,
Կարմիր խնձոր, տուն արի,
Գիտեմ, որ յարս ա բաշխե,
Կպահեմ յոթը տարի։

536(637).

Ա՛յ տղա, բաղարբաշի,
Սապոկներդ վեր քաշի,
Արի, մեր դռնով հնցի,
Քյե ասեմ՝ բարով մաշի։

537(638).

Ա՛յ կռան, մանկան կռան,
Եղունեկ թևես թռան,
Ցար ջան, քե որտե՞ղ սիրի,
Քեղարդա վանքյի դռան։

## ՊԱՐԵՐ ԴԵՐ*

### 1(639). ՀԱԼԻՄԱՆ

Հալիման, հալիմա՛ն,
Հալ լայլուղը իմ մոտ չի,
Դոստըմ ադե ջան,
Դոստ ղոնախը մարալի**։

Ջարկե՛ք թող թողն հելնի,
Մեր միջի թողն հելնի։

Քանաքեռ բանցր տեղ է,
Ջուրն հիվանդի դեղ է,
Սիրած սիրածին չեն տա
Էս ինչ կռապաշտ գեղ է։

* Պարերգերը մեծ մասամբ եղանակային կրկնակներով միահյուսված անկախ խաղիկներով երգեր են, որոնք այստեղ դրվում են խաղիկներից անմիջապես հետո որոշ պայմանականությամբ, սոսկ ժողովրդական խաղիկներով կազմված երգերի ամենատարածված դրսևորումներից մեկը ցույց տալու նպատակով։

** Կրկնվում է յուրաքանչյուր տան սկզբում և վերջում (Ս. Կ.)։

## 2(640). ԹԵՄՈՒՐ ԱՂԱ

Ա՛յ Թեմուր աղա, ջա՛ն Թեմուր աղա՛,
Յոթ տարի կերցնեմ Բաղդատու խուրմա։

Վառեր ես լամպեն, կայներ ես ճամփեն,
Ա՛յ Թեմուր աղա, ջա՛ն Թեմուր աղա։

Քցեր էս շալն, կայներ էս կալն,
Ա՛յ Թեմուր աղա, ջա՛ն Թեմուր աղա,
Յոթ տարի կերցնեմ Բաղդատու խուրմա։

Մաշինեն էկավ, ակներն էր մանդր,
Սարմար ու սանդր,-բեռներն էր ծանդր։

Լոթի Արանը խուրդեց մանեքը,
Ես ու իմ քուրը նստանք կառեքը։

Կառեքի միջի սլսլան դուռը,
Իգդիրի խուրն տարավ իմ քուրն։

Ասեղը թելեմ, քովս ի պայեմ,
Կխսուրս մեռնի, պատանքն կարեմ։

Ա՛յ Թեմուր աղա, ջա՛ն Թեմուր աղա,
Յոթ տարի կերցնեմ Բաղդատու խուրմա։

## 3(641). ԲՈՒԼԵՅԼԻ
### 1

Բուլեյլի ջան, բուլեյլի, բուլեյլի՛
Ախպե՛ր, յարդ վայելի, հա՛ լեյլի,
Հարա՛յ լեյլի, բուլեյլի, բուլեյլի։

Հէլա սարը խաղ ասի, բուլեյլի՛,
Հնդա գլոր գնացի, հա՛ լեյլի,
Հարա՛յ լեյլի, բուլեյլի, բուլեյլի,
Ախպե՛ր, յարդ վայելի, մի բոյի*։

Վարդ եմ քաղե բաղերով, բուլեյլի՛,
Խարս եմ բերե ասկերով, բուլեյլի։
Սարերը լիք մասուր ա, բուլեյլի՛,
Մամաս քեզի կխսուր ա, բուլեյլի։

Խաց եմ թխե լավաշի, բուլեյլի՛,
Խալա եմ բերե թամաշի, բուլեյլի։
Դանակը մըջ բողկին ա, բուլեյլի՛,
Ախպերս մըջ պոլկին ա, բուլեյլի։

Սերն սարին սովոր ա, բուլեյլի՛,
Ախպերս խաչին քավոր ա, բուլեյլի։

## 4(642).
### 2

Ա՛յ բու լեյլի, բու լեյլի,
Առնողը Թող վայելի, ջան լեյլի,
Էսօր լավ էր, քանց էրեկ, հա՛ լեյլի,
Վառվում եմ դիշեր-ցերեկ, ջա՛ն լեյլի։

Լեյլի յարս մրսել ա, հազում ա,
Օսկի զուրը դրել ա, սաղում ա։

Հայրի՛կ, մեռնեմ քու բեղին, բո՛ւ լեյլի,
Ընձի չի տաս մըջ դեղին, հա՛ լեյլի,
Լեյլի, լեյլի, ջա՛ն լեյլի, բու լեյլի,
Ընձի տվեք ավըճուն, ջա՛ն լեյլի։

## 5(643). ՅԱՐ ՋԱՆ

Հանդից բանջար բերող չեմ, յար ջան,
Կալն աշան էրող չեմ, յար ջան,
Բոյով եմ ու սոյով եմ, յար ջան,
Ես ձեր տունը գալող չեմ, յար ջան,
Արի գնանք, ո՞ւր գնանք, յար ջան,
Ճամփեքը շանց տու գնանք, յար ջան։

## 6(644). ԴԵՐՈՅ ՆԱՐՈՅ ՆԱՅ

Մի քամ դու էլ աղջիկ ես, դերոյ նարոյ նա՛յ,
Պառվու էփած քոճիկ էս, դերոյ նարոյ նա՛յ,
Ջևրիս ծիրանը պուտ-պուտ, դերոյ նարոյ
նա՛յ,
Քեզի կկանչեմ կուտ-կուտ, դերոյ նարոյ,
նա՛յ,
Լագան դրի վըր պատին, դերոյ նարոյ, նայ,
Քեզի կանչեմ վըր լակին, դերոյ նարոյ, նայ։

## 7(645). ԴԱԼԻԼ

Դալիլե, դալիլե, դալիլե, յար ջան,
Թե բերիր մարջան, քեղ կառնեմ, յար ջան.
Դալիլե, դալիլե, դալիլե, յար ջան,
Շողշողուն մարջան, անգին գոհար ջան.
Դալիլե, դալիլե, դալիլե, յար ջան։
Թե բերիր ասեղ, քե կասեմ Բարսեղ,
Դալիլե, դալիլե, դալիլե, յար ջան.
Թե բերիր մարջան, քե կասեմ յար ջան,
Դալիլե, դալիլե, դալիլե, յար ջան.
Թե բերիր մատնոց, կմտնեմ քո ծոց,
Դալիլե, դալիլե, դալիլե, յար ջան։

## 8(646). ՆԱՐՈՅ, ՆԱՐՈՅ
### Ա

Նարոյ, նարոյ, նարոյ ջան,
Դալի-դոլի յարո ջա՛ն*։
Նարոն կայնավ կարմնջին,
Օսկե դինտերն հակնջին։

* Այս երկտողը կրկնվում է յուրաքանչյուր տան վերջում (Ծան. կազմողի)։

*Այս երկտողը կրկնվում է կամ յուրաքանչյուր երկտողից հետո, կամ տողընդմեջ (Ծան. կազմողի)։

Հոդի տկով ջուր կերթա,
Շաբար, օսկին դուր կերթա,
Ջայնամ քե օսկին կերթա,
Թըխ իմ յար սալդաթ չերթա։
Նարոյ նարնջու աղջիկ,
Նարոն դուռնալու աղջիկ։

Կանաչ հավկսիդ մեռնեմ,
Նարոյ, նարոյ, նարոյ ջա՜ն,
Նախշուն մուրապիդ մեռնեմ,
Դալի, դալի յարս ջա՜ն։

Ըլա սարը ոնց անեմ,
Քարը դնեմ հարս անեմ։
Ըլել եմ սարի փեշը,
Ջեմ առնի յարի գեշը։

Նանին քանաք ա ղրգե,
Յարիս նամակ եմ գրե։

## 9(647).
## Բ

Նարոյ նայեցու աղջիկ,
Նարոյ վանեցու աղջիկ*.
Հեսօր ուրբաթ ա, պաս ա,
Սիրտս արծթին քաս ա,
Սրտիկ մալուլ մի մնա,
Աշխար մեկի չի մնա։
Գացի սարն ախպուր տեսա,
Յար վրեն թիկնուկ տեսա,
Կխոսեր ինչպեսո բիլբուլ,
Իմ նանու անուշ փեսան։
Հեսօր գութանը մերն ա,
Գութնի մաճկալն իմ յարն ա,
Ղալաթ արած խոտղներ,
Միջի լավն իմ յարն աւ
Գութանը խաց եմ տարե,
Բերանը բաց եմ տարե,
Ջեմ գիդում ինչ եմ տանում,
Դուշմնի հաշկը խանում։

## 10(648). ՆԱՐՈՅ, ՆԱՐՈՅ, ՆԱՐԸՆՋԻ

Նարո՜յ, նարո՜յ, նարընջի,
Յարս ա մացե Ջարընջի։
Էրկանքը աղով լցվավ,
Նարո՜յ, նարո՜յ, նարընջի,
Իմ սիրտը տաղով լցվավ,
Նարո՜յ, նարո՜յ, նարընջի,
Բոլորի յարն տուն էկավ,
Նարո՜յ, նարո՜յ, նարընջի,
Իմը՝ սարերով հընցավ,

Յարս ա մացե զարընջի։
Ջի չեմ նստե, քուռակ ա,
Նարո՜յ, նարո՜յ, նարընջի,
Նարո՜յ, նարո՜յ, նարընջի,
Ընձի թողիր Ջարընջի։

## 11(649). ՀԱՅ ԼԵՋ ՆԱՐԵ

Հայ լեջ նարե ջանե՜, հայ լեջ նարե ջանե՜*
Ճնշխներ էկան աշար-մաշար,
Ես եմ թխե յարիս պաշար,
Յարիս ջամբին զարիբ աշխար։

Գարուն ա էկե էրկու եղեն,
Յարս ա զարճե հուր իրղարեն,
Ընձի թողե եթիմ բալեն։

Ճնշխնե՜ր, գյացիք զարիբ աշխարք,
Յարիս ասեք թող շուտ տուն գյա,
Մերն հուրա, արուն գուլա։

Խերն խալիվոր հուր մեռեր ա,
Ախպրտինքին թուրք զաներ ա,
Մերն հուրա, արուն գուլա։

Ճժերն հմեն որփցեր են,
Ճժերու մեր թուրք տարեր ա,
Աստու կրակ քրքյու գլխուն,
Ճժերու վիզը զաներ ա...

## 12(650). ՀԱՆԸՄՆԱ ՆԱ, ՆԱ

Ո՞ւր գնացիր, ուր էկար,
Հանըմնա, նա՜, նա՜,
Ջանըմնա, նա՜, նա՜,
Դուն իմ սրտին դուր էկար,
Հանըմնա, նա՜, նա՜,
Ջանըմնա, նա՜, նա՜**,

Արփաչայի քնարը,
Վառիր սրտիս ֆանառը։
Էրևան բաղ եմ արել,
Ջիգյարս դաղ եմ արել։
Էրկանքս աղի վրա,
Շամամս թաղի վրա։

## 13(651). ՀԱՆԸՄ ՆԱՅ

Արի գնանք, ո՞ւր գնանք,
Հանըմ նայ, հանըմ նայ,
Ֆանառ վառենք, դուս գնանք.
Հանըմ նայ, ջանըմ նայ։
Քարը քցի քթոցը,
Հանըմ նայ, հանըմ նայ,

* Այս կրկներգը կրկնվում է յուրաքանչյուր երկտողից հետո (Ծան. կազմողի)։

* Կրկնվում է յուրաքանչյուր տուն ակզբում (Ծան. կազմողի)։

** Երկտող-կրկներգը կրկնվում է յուրաքանչյուր տողից հետո (Ծան. կազմողի)։

*Մաշինի զըրընգոցը*
*Հանըմ նայ, ջանըմ նայ։*

### 14(652). ՀՌե Լե, Լե

*Էս սարին սար չեմ ասի,*
*Հռե լե՛, լե՛, հռե լե՛,*
*Շան տղին յար չեմ ասի,*
*Հռե լե՛, լե՛, հռե լե՛։*

*Կապուտ ձին խնծել եմ,*
*Հռե լե՛, լե՛, հռե լե՛,*
*Արագին մոտեցել եմ,*
*Հռե լե՛, լե՛, զուրբան։*

*Իմ յարն ընձի թարգել ա,*
*Հռե լե՛, լե՛, հռե լե՛,*
*Ով իմ դարդը իմանա,*
*Մուրազը սրտում մնա։*

### 15(653). Լելե ՋԱՆ

*Դիվու դարեն ծուխ կլներ,*
*Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ ջան,*
*Մե բարալիկ մուխ կլներ,*
*Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ ջան,*
*Քուրն աղբոր ղուրբան կլներ,*
*Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ ջան,*
*Հեռու տեղից խուր կլներ,*
*Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ ջան։*

### 16(654). ԴՈՒՋՔԱՆԴԻ ԴՈՒՐԱՆԸ

*Դուզքանդի, դուզքանդի դուրանը,*
*Ընձի վառեց յար քո տված նամակը, նշանը, նկարը։*

*Արագին մոտեցել եմ,*
*Դուզքանդի, դուզքանդի դուրանը,*
*Դարդերս շատացեր են,*
*Ընձի վառեց յար քո տված նամակը, նշանը, նկարը։*

### 17(656). Լ Ո Ւ Ր Կ Ե

*Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,*
*Խանըմ է լուրկեն,*
*Դու կայնել էս Վրթոյ տանիս,*
*Ջանըմ է լուրկեն,*
*Ոչ կդատիս, ոչ կբանիս,*
*Խաթուն է լուրկեն,*
*Առանց գրող խոքիս կառնիս,*
*Խանում է լուրկեն։*
*Հեյ լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛*
*Խանըմ է լուրկեն,*
*Աղջի էդ քո վղի վղնոց,*
*Խաթուն է լուրկեն,*
*Ինձ էրեցնց, ընձի մրկեց,*
*Խանըմէ լուրկեն,*
*Մեկ օր սրտով ինձ չգրկեց,*
*Խաթուն է լուրկեն։*

### 18(657). ԱԿՈՒԱՎ ԹՈՒԱՎ

*Ակռավ թռավ, արտս մնաց խերկելու,*
*Քունս քաշնց, յարս մնաց գրկելու։*
*Ցարիս չուխեն տարան Մոսկով ներկելու։*
*Ցանա՛-յանա՛, յան բլուղիդ օղերը,*
*Գիշերը տարան յարիս վղի դողերը։*
*Կանաչ ու կապուտ տերևը, տերևը,*
*Կռունգ սիրիր քո մե բալիդ արևը,*
*Ցարս տարան Ջանգյաղորա սարերը։*
*Մուրադ գետի չայիրների գոլերը,*
*Ես մե մարալ, սավդից ընկա չոլերը։*
*Մուրադ գետի չայիրները լափ տվեց,*
*Էդ շան դյադեն, մազեր գլխին թափ տվեց,*
*Ղարսա յուխանում դիլինի՛, դիլինի՛,*
*Դիլինի պայման, դիլինի՛, դիլինի՛,*
*Դիլինի սայման, դիլինի՛, դիլինի՛։*

## ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

### 1(657). ԿԱՐԳԱ ՋԻՍ

*Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ,*
*Ջոլի կռունկ հերկեն վիզ,*
*Կակ՛ե, մամե՛, կարգա զիս,*
*Ջոբան մարդու մի տու զիս,*
*Կեթա չոլն մոռնա զիս։*
*Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ,*
*Կակե, մամե կարգա զիս,*
*Մշակ մարդու մի տա զիս,*
*Մաճ կբռնա, մոռնա զիս։*
*Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ։*
*Կակե՛, մամե՛, կարգա զիս,*
*Ջուլակ մարդու դու տու զիս,*
*Մբուռ թալա, պաքա զիս,*
*Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ,*
*Գոլի կռունգ հերկեն վիզ։*

### 2(258). ՀԱՐՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ ԾՆՈՂՆԵՐԻՆ

*Բեր ձեռդ համբուրեմ, մայրի՛կ,*
*Կերել եմ կաթդ անուշիկ,*

Ինչ լա՜վ է, ա՛յ սիրուն աղջիկ,
Մնաք բարով, ես գնում եմ։

Օրոր ասելով անդադար,
Քունդ կտրեր ես ինձ համար,
Ո՜վ իմ ճշմարիտ, բարի մայր,
Մնաս բարով, ես գնում եմ։

Գնա՜ որդի ջան, մի՛ տխրի,
Տերն ա օրհնեն իր բերանով,
Գնա՜ որդի ջան, մի տխրի։

Փեսեն կիքա, դու ոսկի էլ,
Նա էլ քեզանից առավել,
Հարգի՛ր, սիրի՛ր, կիսուր-կեսեր,
Գնա՜ բալա ջան, մի տխրիր։

## ՀԱՐՍՆԱՒՈՒ ԵՐԳԵՐ

### 3(659). Ա

Արի մեզի, մեռիմ քեզի,
Ձեռիդ թասով ջուր տու մեզի,
Մենք էկեր ենք, լաց չըլես,
Սիրով սրտանց խարս կըլես։

Ջարսաբի ծալին մեռիմ,
Էրեսիդ խալին մեռիմ,
Մենք էկեր ենք, լաց չըլես,
Սիրով սրտանց խարս կըլես։

### 4(660). Բ

Արի մեզի՛, մեռիմ քեզի՛,
Ձեռիտ թասով, ջուր տու մեզի։
Մենք եկել ենք լաց չլինես,
Հերեսդ պարզ հարս կլինես։
Ջարսաբի ծալին մեռնեմ,
Էէրեսիդ խալին մեռնեմ։

### 5(661).

Մենք մեր խարսին լացացրինք,
Խոր տան ճամփեն մոռացրինք,
Արի մեզի, մեռնեմ քեզի,
Ձեռիդ թասով ջուր տուր մեզի։

Հարսին տարանք վերին կալերով
Շորերը բերինք օսկե ծալերով։
Հե՛յ հաքի, հե՛յ կապի էկել ենք տանենք,
Ձե՜ս հազնի, չե՜ս կապի ղոռով կտանենք։

### 6(662). ՀԱՐՍՆԱԲԵՐԻ ԵՐԳԵՐ

Խարսին տարանք վերին կալերով,
Շորերդ բերինք թխտան ծալերով,
Ե՛յ հաքի, ե՛յ կապի, եկել ենք տանենք,
Ձես հազնի, չես կապի, ղոռով կտանենք։
Հորդ խարեցինք՝ մի թաս արաղով,
Մորդ խափեցինք՝ մի քիշմիր շալով,
Հախպորդ խափինք՝ մի բաժակ դինով,
Քրոջդ խափինք՝ մի վիզ ուլինկով,
Քեզ էլ խափեցինք՝ մեր սիրուն տղով.
Ե՛յ հաքի, ե՛յ կապի, եկել ենք տանենք
Ձես հազնի, չես կապի, ղոռով կտանենք։

Սեղանը պատրաստ, քեզ ենք սպասում,
Ե՛յ հաքի, ե՛յ կապի, եկել ենք տանենք,
Ե՛յ հաքի, ե՛յ կապի, եկել ենք տանենք...

### 7(663).

Խաժախին բերին վերին Թաղերեն,
Նա գործած էր վարդի կարմիր Քելեքեն,
Բախտդ լավ է, արի դու մեր եղեից,
Թող դուշմանի աչքը մնա աշելեն,
Աշելե՜ն, աշելե՜ն, աշելե՜ն։

Հեր, մեր ունես, զույգ ախպերդ սաղ ըլեն,
Կիսուր, կեսար, ամուսինդ սաղ ըլեն,
Բախտդ լավ է՝ արի դու մեր եղեից,
Թող դուշմանի աչքը մնա աշելեն,
Աշելե՜ն, աշելե՜ն, աշելե՜ն։

Հույսով եմ, որ լավ սիրուն խարս կլինես,
Մեր տան միջի Թագն ու պսակը կլինես,
Բախտդ լավ է, արի դու մեր եղեից,
Թող դուշմանի աչքը մնա աշելեն,
Աշելե՜ն, աշելե՜ն, աշելե՜ն։

### 8(664).

Թագավորի մե՜ր, դուս էլի՜,
Տե քե ինչե՜ր եմ բերե,
Տախտդ ավլող եմ բերե.
Թագավորի մե՜ր, դուս էլի՜,
Գլխիդ բամբող եմ բերե.
Թագավորի մե՜ր, դուս էլի՜,
Տե քե ինչե՜ր եմ բերե,
Վարդը, ռեհան եմ բերե,
Ինչե՜ր, ինչե՜ր եմ բերե,
Շերեփ առնող եմ բերե,
Մաղեր պոկող եմ բերե։

### 9(665).

Հարան վարթ ա,
Կիսուր դարդ ա,
Տալ չաման ա,
Յամա՜ն, յամա՜ն։

## ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԽԱՂԻԿՆԵՐ

### ՔՐՈՋ ԳՈՎՔԸ ՓԵՍԱՅԻՆ

### 10(666).

Էրնեկ կտամ էն քվոր,
Ախպորն անա թաքավոր,

Ախպե՛ր, արևիտ մեռնիմ,
Անուշ բարևիտ մեռնիմ,
Կանանչ արևիտ մեռնիմ։

Ախպե՛ր, ախպե՛ր, չա՛ն ախպեր,
Ջանս քե կուբան, ախպե՛ր,
Էրնեկ կտամ էն քվոր,
Կանաչ կապի իր ախպոր։
Լամփեն բռնեք լուս հըլնի,
Իմ նորախարս դուս հըլնի։

## 11(667).

Էրնեկ կտամ էն քվոր,
Ախպորն անա քագավոր,
Ախպե՛ր, արևիդ մեռնիմ,
Կանաչ կապածիդ մեռնիմ։

Ժամի դռան ավելը,
Դու չոկեցիր լավերը։

Խաղում եմ, խաղս առնիմ,
Էկել եմ, խարսս տանիմ։
Խարսիս տանիմ սարերը,
Ծաղիկ շարիմ ծամերը։

Մինար, մինար էն ախպեր,
Կանանչ չինար էն ախպեր,
Ախպե՛ր, հանաքիդ մեռնիմ,
Ջևրիդ դանակին մեռնիմ։

Մե՛ր չան, վեր կաց դուռը բաց,
Հարսն ու փեսան գալում են։

## 12(668).

Արևը սարի դոշին,
Արևը սարի դոշին,
Ով կզանա կոզբանդը,
Իմ միակ ախպոր դոշին։

Ազապ քուրը ե՛ս եմ,
Ազապ քուրը ե՛ս եմ,
Կոզբանդ խփողն էլ ես՝ եմ։

Մեր սարերի լալեն,
Մեր սարերի լալեն,
Պսակում ենք մորս
Պրատլի բալեն։

Մեր Թոնդրի մուխը,
Մեր Թոնդրի մուխը,
Ով շաղ կտա աղբորս
Կոզբանդի վրի դուխը։

Մեծ քուրը ե՛ս եմ,
Մեծ քուրը ե՛ս եմ,

Կոզբանտի դուխը
Շաղ տվողը ե՛ս եմ։

Մեր սարերի խովը
Մեր սարերի խովը
Ախպորս ուզածը՝
Մորս սրտովը։

## 13(669).

Արևը սարի դոշին,
Արևը սարի դոշին,
Ով կխփի կոզբանդը
Ախպորս դոշին։

— Ազաբ քուրը ե՛ս եմ,
Ազաբ քուրը ե՛ս եմ,
Կոզբանդ խփողը
Ես ես եմ, ու ե՛ս եմ։

Արևը սարի փեշին,
Արևը սարի փեշին,
Ով կառնի պալը,
Էն շոշի դոշին։

— Մեծ քուրը ե՛ս եմ,
Մեծ քուրը ե՛ս եմ,
Ախպորս պաշ առնողը
Ես ես եմ, ու ե՛ս եմ։

Մեր սարերի լալեն,
Մեր սարերի լալեն,
Պսակում ենք մորս
Պսակի բալեն։

## 14(670).

Խասանք խնամոնց դուռը,
Խմինք խնամոնց ջուրը,
Ջուրը մեր խարսի բերածն էր,
Էն էլ մեր ախպոր սիրածն էր։

Ծովի մեջի Թուրն եմ,
Ազաբ ախպոր քուրն եմ,
Հեսօր ամսու քսանն ա,
Ազաբ ախպոր պսակն ա։

Հաց եմ Թխել՝ լավաշ ա,
Գեղով կայնած Թամաշա,
Մեր չան, հելի դուռը բաց,
Թաքը՝ չխտե, գալում ա։

Հորս դուռը լայլան ա,
Մեր ուզածը չեյրան ա,
Ախպերս կայնե Թագավոր,
Գեղով կասեն բախտավոր։

Ճրագի տակի մուրը,
Խաչիկ տարան քո քուրը։

### 15(671). ՀԱՐՍԻ ԵՎ ՓԵՍԱՅԻ ԳՈՎՔ

Բարով հասնեք ձեր մուրազին,
Գովամ հարսին, նորափեսին,
Մլեք, ծաղկեք, աշխարհ տեսնեք։
Նորահարսն նման լուսնակ
Աչքերն փայլուն արեգակ,
Բոյն նոճի, բարձր ու բարակ։

Նորափեսեն նման բարդի,
Խելքն ընտիր իշխան մարդի,
Բացված, քան մայիսյան վարդի,
Գովամ հարսին, նորափեսին։

Նորահարսն անգին քար է,
Ու թանկագին ղուտ գոհար է,
Այսպիսի ծախսին արժան էր,
Գովամ հարսին, նորափեսին։

Բաժակ ձեռին կայնե քավոր,
Աստված անա շնախավոր,
Մլեք, ծաղկեք հարս, թագավոր,
Գովամ հարսին, նորափեսին։

### 16(672). ՆՈՐԱՀԱՐՍԻ ԳՈՎՔ

Ասեք շնավո՛ր, ասեք շնավո՛ր,
Մեր նորախարսի շապիկ շնավո՛ր.
Ասեք շնավո՛ր, ասեք շնավո՛ր,
Մեր նորախարսի դեյրեն շնավո՛ր.
Ասեք շնավո՛ր, ասեք շնավո՛ր,
Մեր նորախարսի ոտնամաններ շնավո՛ր.
Դու նորախարս էս, ալվան ծաղիկ էս,
Շաքրից քյաղզր էս, մարալ-ջեյրան ես։

### 17(673).

Ասեք շնհավո՛ր, ասեք շնհավո՛ր,
Մեր նորահարսի շապիկ շնհավո՛ր.
Ասեք շնհավոր, ասեք շնհավո՛ր,
Մեր նորախարսի դեյրան շնհավո՛ր,
Ասեք շնհավոր, ասեք շնհավո՛ր,
Մեր նորահարսի սոլեր շնհավո՛ր.
Ասեք շնհավոր, ասեք շնհավո՛ր,
Մեր նորախարսի բախտը շնհավո՛ր։
Դու նորահարս ես, մի փունջ ծաղիկ ես,
Շաքյարից քաղցր ես, մարալ-ջեյրան ես։

## ՈՂԲԵՐԳԵՐ

### 1(674). ՄՈՐ ՈՂԲԸ ՋԱՎԱԿԻ ՎՐԱ

Անուշ քնով քնած բալա,
Հելի՛, քո յարն ա էկև,
Սարի ղմրուխտ ղուշ ես դառև,
Հելի՛ բալա, յարդ ա էկև։

Հալվեցյավ սարերի ձունը,
Սև լուրը բերին մեր տունը,
Կոտրվավ կռներս, կուռս,
Ջարթնի, բալա՛, յարդ ա էկև։

Վեր կենամ շորերդ բերեմ,
Բերեմ ու դոշիդ դնեմ,
Սրտիս ցավը քե պատմեմ,
Ջարթնի, բալա՛, մերդ ա էկև։

### 2(675).

Իմ բալես նշանլու ա,
Ժամ կտանեն, պատկերիդ մատաղ,
Էդ կռումձ մազերիդ ղուրբան,
Ղալամքաշ հնքերիդ ղուրբան,
Իմ նշանլու բալա ջան,
Կոտրած արևուտ ղուրբան,
Անդուռ, անակուշկա ապարանքիդ ղուրբան։

### 3(676). ԿՆՈՋ ՈՂԲԸ ԱՄՈՒՍՆՈՒ ՎՐԱ

Գլխավորի մախ ա, յամա՛ն, յաման,
Մանր բալեքդ անտեր են, մեռնեմ
ձյարդանիդ.
Գրողի լուսը քոռնար, ումուտ ջան,
Քե չտաներ մեզնից, յամա՛ն, յամա՛ն։

### 4(677). ՈՂԲ

Քա յամա՛ն, յամա՛ն, մարդ ջան,
Իմա՛լ էնեմ, քու ձագեր իմա՛լ պահեմ,
Յամա՛ն, յամա՛ն,
Մենք կոտրան, յաման, յամա՛ն,
Ձմեր մային յաման, յամա՛ն։

### 5(678). ՋԱՎԱԿԻ ՈՂԲԸ ՄՈՐ ՎՐԱ

Ադե՛ ջան, ադե՛ ջան, մերո՛ ջան,
Իմա՛լ էնեմ,
Իմ օսկի մատներով մերո ջան,
Իմ ադե՛ ջան,
Իմ տանջված տրորված ծնող ջան,
Իմ ադե ջան,
Պարտական հեղիմ քեզ,
Իմա՛լ էնեմ, իմ քաղցր, խաղինա ջան,
Մերո ջան, իմ ադե ջան, իմ ադե ջան։

## 6(679).

Գնա՛ նոր հարսանաց տունը,
Գեղեցիկ էր զարդարված դույնով,
Կարեր ա իմ աչքի քաղցր քունը,
Գնա՛, մեր ջան, գնա բարով։
Ինձ թողել ես մորմոքալով,
Արտասվելով, մղկտալով
Գնա՛, մեր ջան, գնա՛,
Բարիքները քե արժան ա,
Գնա, քաղցր մեր ջան, գնա բարով։
Ճանապարհդ թող հարթ լինի,
Բարիքներին արժան լինես,
Գնա՛, մեր ջան, գնա բարով,
Բարի օրհնությունդ ինձ թող՝
Գնա՛, մեր ջան, գնա բարով։

## 7(680). ՔՐՈՋ ՈՂԲԸ ԵՂԲՈՐ ՎՐԱ

Լա՛յ, լա՛յ, լա՛յ, լա՛յ,
Անտեր տանդ մատաղ, լայ է՛,
Դռներդ բաց ա մնացել,
Աչքդ տանդ վրա յա մնացել, լա՛յ,
Բույիդ մեռնեմ, ախպեր ջան,
Բալես, տատի, ախպեր չի ունեննալու,
Քեռակին, աչքը տան վրա յա մնացել,
Քեռու աչկը տան վրա յա լայ է՛յ.
Տանողի վիզը թող կոտրվի,
Տանողի աչքը թող փչվի,
Լայ, լայ, լայ է՛.
Իմ ախպեր ղարիբություն ա գնում,
Աղեն մատաղ լայ է՛յ,
Քուրը ղարիբ ախպոր ջանին մատաղ,
Արած, դրած, կամաց գնացած ջանիդ
մատաղ,
Արած դրած, դատարկ նստած ջանիդ
մատաղ,
Լա՛յ հե՛յ,
Աշխարհից կուշտ գնացած, ախպեր ջան,
Էրեխեքդ անտեր են մնացե,
Դռներդ փակ ա մացե,
Դռներն ընկած, չոլերն ընկած ջանիդ
մեռնեմ,
Շարավ, սուված ջանիդ մեռնեմ։

## 8(681). ՔՐՈՋ ՈՂԲԸ ՔՐՈՋ ՎՐԱ

Ա՛խ, անուշ բալա ջան,
Բախտս էր չարա, սիրտս էր յարա,
Ես ո՞նց դիմացա,
Կոմաշ կտրեմ, առանց չափել,
Ես ի՞նչ անեմ դարտակ փլեր,
Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ։
Անիրավ բախտն ի՞նչ էր արեց,
Անամոթ թշնամին, դռներս քարեց,
Արունս պակասեց, սիրտս դադարեց,
Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, գա՛ռ ջան։
Եղանակն ամպեց քուր ջան
Տեկն ու կրակ քցեց քեզի էրեց
Քուր ջան, քուր ջան վույ,
Կանչեցին, բերեցին,
Ցավերու դեմ դարման չէրեցին,
Իմ քուր ջան, իմ մեր ջան։
Սրտիս մեջ թողիր անհնցնելի կրակ,
Թողիր վառվելով, վառվելով,
Մշտական խնկի պես ծխելով,
Ծուխն էլ երեսիս մոտ տալով,
Քուր ջան, մեր ջան վո՛ւյ, վո՛ւյ։
— Ցավալի անձս, վշտալի գլուխս,
Քարին ես եմ խփել ով էր մեղավոր,
Իմ կյանքին տվել եմ վնաս,
Խավարեց աստղս, ես ինչպես էնեմ,
Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,
Անշափ դժվար է, ի՞նչ էնեմ։
Բախտ կա՝ երկար, բախտ կա խիստ կարճ,
Բախտ կա՝ գնում դեպի առաջ,
Բախտ կա՝ մանի գարնան կանաչ,
Իմ բախտն էլ քար էր, ի՞նչ էնեմ,
Քուր ջան, ընչի՞ դառար լեռ քար։

## 9(682). ՈՂԲ

Ախ՛ բալա ջան, ցավդ տանեմ,
Բախտս էր դարա, սիրտս էր յարա,
Ես ինչպես անեմ,
Ախ՛ քուր ջան,
Իմ ասել, քու արցունք թափել,
Ղումաշ ասեմ առանց չափել,
Ես ի՞նչ անեմ, դարտակ փլեր,
Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ։
Տեսեք իմ անիրավ բախտը ինչե՞ր արեց.
Վ'անամոթ թշնամին,
Իմ դռներ քարեց
Վ'արյունս պակասեց, սիրտս դադարեց,
Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,
Վո՛ւյ գառ ջան, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ։

# ՎԻՊԱԿԱՆ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ՋԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ*

## 1(683). ՀԱՍԱՆ ՂԱԼԱ

### 1

Դացինք հասանք Հասան Ղալեն,
Մեռներ էնվեր փաշի բալեն,
Յարս մնաց տունը լալեն։
Հասան Ղալի դռները բացինք,
Հրամանատար դերմանացին,
Խայոց տղեք կայնան, լացին,
Բոլոր սեպրետներ բացին,
Բալա՛, բալա՛ Հասան Ղալա,
Բալի, բալեն, Հասան Ղալեն։
Յոթ գիշեր ոտի կայնանք,
Հասան Ղալի բերդեր չառանք,
Վիրավորվանք ու հետ դառանք,
Բալա՛, բալա՛, Հասան Ղալա,
Բալի բալեն, Հասան Ղալեն։
Հասան Ղալի ջուրն էր աղի,
Խացն ու կերակուրը լեղի,
Շատեր մեռան անտեղի,
Բալա՛, բալա՛, հասան Ղալա։
Հասան Ղալի ճամփեն փուշ է,
Գիշերվա քունն անուշ է,
Բալա՛, բալա՛, Հասան Ղալա,
Բալի բալեն, Հասան Ղալեն։
Դիրքը մտած ժամանակը,
Լալով գրեցի նամակս,
Սիրեցի, չառա փափագս,
Բալա՛, բալա՛, Հասան Ղալա։
Կարմիր բանակ մեզի սար ա,
Աստված դիլքն կատարա,
Հասան Ղալա, դարդ ու բալա,
Բալա, բալա, Հասան Ղալա։
Հասան Ղալեն քար ու քոա,
Գյուլլեն մեջը կֆոֆոա,
Գյուլլի յարեն կմռռա,
Բալա, բալա, Հասան Ղալա։
Մշու Սուլթան, սուրբ Կարապետ,
Քյոմակ կանգնես Անդրանիկին,
Էթա խաթի Մշու Թախտին,
Որ ազատի մեր Հայ ազգին,
Բալա՛, բալա՛, Հասան Ղալա։

### 2(684). 2

Աստվածածին մեզի պաշտպան,
Օսմանցին կայնե կռիվ կուզա,
Ամբողջ Կովկազն ա էնի կուզա,
Վերան դառնար Հասան Գլեն։

Հասան Գլեն բանցր սար ա,
Ջորս բոլորն մենձ-մենձ քար ա,
Կռիվ էթողն բոլորն հայ ա,
Վերան դառնար Հասան Գլեն։

Դացինք խասանք Հասան Գլեն,
Մեռներ թուրքի աղիվ բալեն,
Յարս թողեց տանը լալեն,
Վերան դառնար Հասան Գլեն։

Ջունը էկավ ոտս սառավ,
Թուրքը էկավ, օլքին չառավ,
Վերան դառնար Հասան Գլեն։

## 3(685). ՁԱՐԹՆԻՐ, ԼԱՈ՛

Դարդս լացեք սարի ամբուլ,
Սարի ամբուլ, բաղի բլբուլ.
Ճժեր մնացին չոլու դռներ,
Էրթամ վերցնեմ մեր խեղճ գառներ,
Տանենք ջրենք բարե ծառներ,
Ձարթնի՛ր, լաո՛, մեռնիմ քեզի,
Ձարթնի՛ր, լաո՛, օգտե մեզի։
Գնանք հասնենք մեր Հայաստան,
Մենք էլ փրկենք մայր Հայաստան,
Խեղճ մշեցին չոլու բերան,
Թափառելով մնացել ա.
Թուրքի դեմը միշտ կռվեցանք,
Թուրքի պարտքը դուրս տվեցանք.
Խեղճ հայերը լալով մացին,
Ձարթնի՛ր, լաո՛, մեռնիմ քեզի,
Փրկի՛ր, լաո, օգնեք մեզի։
Գնանք հասնենք մայր Հայաստան
Մենք էլ փրկենք մայր Հայաստան։

## 4(686).

Օգոստոսի տասին բանակ գնացի,
Ելանք ճանապարհ քաջ հրնդերներով։
Ինքս քաջգնդյա մեջն էի, կայնա,
Դիմացի կռվի՝ սիրտս բոցավառ։

Դացինք հասանք Ջիմանքյանդի սարերը,
Բոյուր էրմանի, ըսին թուրքերը,
Օրը շատ խավար էր, ինչպես ալքերս,
Այնտեղ միտքս հընգան իմ եղբայրներս։

---

* Այս շարքի երգերի մի մասը բնույթով ներկա վիպական են, բայց նկատի ունենալով դրանց ընդհանուր ձևը՝ երգ լինելու հանգամանքը, ինչպես նաև շատերի մեջ եղած քնարական տարրերը, նպատակահարմար համարվեց, որոշ պայմանականությամբ, դրանք ևս տեղադրել քնարական բանահյուսության բաժնում (Ծան. խմբագրի)։

Մյուս առավոտյան կռիվն ըսկսվավ,
Տաճիկի գնդակը ճակատիս դիպավ,
Մարմինս թուլացավ, չիդյարս վառավ,
Ուզեցի խոսել, լեզուս փաթ առավ։

Ըշտաբե՛ք, ընկերնե՛ր, վերցրեք, տարեք,
Ջորս հրացան բերեք, նասիլկա արեք,
Վերքերս շատ վատ ա, մի հնար արեք,
Ճակատիս է դիպել, շուտով կմեռնեմ։

Ըշտաբե՛ք, ընկերներ, վերցրեք տարեք,
Բժիշկներ բերեք, վերքերս կապեք,
Խնդրեմ՝ իմ փոխարեն մի նամակ գրեք,
Գրելով հայրիկիս՝ տեղս հայտնեք։

## 5(687).

Օգոստոսին հելանք հընգանք ճանապարհ,
Ըշտապեք հընգերներ խասենք Այրուվանք,
Անունս Վռոն էր կռվի սիրահար,
Խոսիր, Արա՛մ, խոսիր, բանակից լուր տուր.

Տեր Մեսրոպն էլ ասաց ինձ էլ խետդ տար,
Ըշտապեք հընգերներ խասինք Այրուվանք,
Անունս Վռոն էր, կռվի սիրահար,
Ջինվոր եմ գրվե, ուխտ ունեմ կռիվ։

Գացինք խասանք Վանա պատիճ սարերը,
Էրևացին Հասան-ղալի Թուրքերը,
Օրը շատ խավար էր, ինչպես հաշկերս,
Էնտեղ միտս հընգան իմ եղբայրներս։

Օգոստոսի միչին կռիվն ըսկսվեց,
Տաճկի դյուլլեն ճակատիս դիպեց,
Մարմինս թուլացավ, չիդյարս վառավ,
Ուզեցի խոսեմ՝ լեզուս չդառավ։

Ըշտապեք հընգերներ, վերցրեք, տարեք,
Ջորս հրացան բերեք, նասիլկա արեք,
Ճակատիս ա առև կմեռնեմ շուտով։

## 6(688). Ա Ր Ա Մ

Նանի՛, նանի՛, նանարա՛,
Նանար, նի՛, նի՛, նանարա,
Մայրիկ, զենքերս պիս տու
Քույրիկ, զենքերս պիս տու,
Հայաստան գնալու եմ
Մայր Հայաստան փրկելու եմ.
Ես Արամն եմ, քաջ Արամ,
Ազգիս համար զոյվեցա։
Առավոտյան արշալույսին,
Բանտիս չորս կողմ գում պատեցին,
Ջորսը բոլորը թուփ կապեցին,
Ես Արամն եմ, քաջ Արամ,
Ազգիս համար զոյվեցա։

Հառավոտյան արևքացին,
Բանտիս դռներ բացեցին,
Սանդուխտ ոտքիս դրեցին,
Ֆյանդիր վզիս քցեցին.
Ես Արամն եմ, քաջ Արամ,
Ազգիս համար զոյվեցա։
Գանձերն էկեք վերցուցեք,
Խնդացուցեք, խնդացուցեք,
Խեղճ հայերին լացուցեք,
Տաճկներուն խնդացուցեք.
Ես Արամն եմ, քաջ Արամ,
Ազգիս համար զոյվեցա։
Ջորս հրացան միացրեք,
Իմ դիակը վերցուցեք,
Խեղճ հայերուն լացուցեք,
Տաճկներուն խնդացուցեք.
Ես Արամն եմ, քաջ Արամ,
Ազգիս համար զոյվեցա։
Արևելքից, արևմուտք,
Բոլոր մ՛ացին էլի սուգ,
Ես Արամն եմ, քաջ Արամ,
Ազգիս համար զոյվեցա։

## 7(689). ՍԵՐՈՐ ՓԱՇԱ*

Տալին փաշեն հո՞ւր էր,
Տալին Սերորին մատներ էր.
Աստված քանդեր Տալու տուն,
Ինչի՞ Սերորին մատնեցիր,
Հայ քաջերուն լացուցիր։
Խափին տարան Շուն Ավագին
Մոտեցուցին պատը քաղքին,
Լուրեր տվին ժամանակին,
Էլան մատնին Սերոր փաշին։
Սերոր փաշեն զառեզառ էր,
Ջհերկեն վզին լալ ու կուռ էր,
Փաշա Թուրքին կհնարեր,
Կմտածեր՝ չկար չարա։
Գեղու բոլոր մանդր ուռ,
Բոլոր գեղին մանդր ուռ,
Ասքյար քոմած ժամու դուռ,
Ըսավ՝ Սերոր ջան, դյուրբին տուր։
Սերոր փաշեն դյուրբին տվեց,
Ջարգե՛ք, տղերք ջան, դե շուտ ղարդե՛ք,
Ծուխ ու դոման և կրակեք.
Սերոր փաշեն զառ էզառ էր,
Ջհերկեն վզին լալ ու զառ էր,
Փաշա Թուրքին կհնարեր,
Կմտածեր, չըկար չարա։

* Ասացողը հարյուրամյա մի կին էր, որը շատ բան չիմոմ էր և որոշ բառեր ցրված, անհասկանալի էր արտասանում (Ծան. կազմողի)։

Ասքյարն էկավ Մասիս քովից,
Թուխերը զարկեց յան,
Զարկե՛ք, տղեք ջան, էլի՛ զարկեք,
Մուխ ու դուման ու կրակեք։
Սերոբ փաշեն կանչեց Սոսին,
Սոսեն էկավ, Սերոբ ջան...*

## 8(690). 1

Սասմա բոլոր չալիր-չիման,
Վըր Սասըմա մըժ ու դուման,
Զուլո՛ւմ ա, զուլո՛ւմ, խեղճ սասունցիք,
Զուլո՛ւմ ա, զուլո՛ւմ, քաջ սասունցիք։

Թագավորից հրաման էկավ,
Հետո կրկին ռահմ էկավ,
է ի՞մալ էնեն քաջ սասունցիք,
Զուլո՛ւմ ա, զուլո՛ւմ, խեղճ սասունցիք։

Քառասուն մանկան խոր փորեցին,
Մոր-մանուկին մեջ լցրեցին,
Զուլում ա, զուլում, խեղճ սասունցիք,
Զուլո՛ւմ ա, զուլո՛ւմ, քաջ սասունցիք։

## 9(691). 2

Հե՛յ վախ, հե՛յ վախ խեղճ սասունցիք,
Զուլում է, զուլում, քաջ սասունցիք**.
Սասնա բոլոր չալիր, չիման,
Վըր Սասըմա մըժ ու դուման,
Թագավորից վայ ռահմ էկավ,
Հայոց հերեսը ռանդ էկավ,
Քառասուն մանգան խոր փորեցին
Մեր-մանուկներ մեջ լցուցին,
Քառասուն մանկան ծծից կտրին,
Նորանց հըմնուն խոր լցուցին։
Ճրագ կալոց Թնդիր վառին,
Ալ ու ալվան դան թաղեցին։

## 10(692). ՍԱՍՄՈ ԳԱՎԱՌԻՆ

Սասմա գավառին, ծնավ նոր մանուկ,
Անուն էր Վանո ինքը քաջազոր,
Ա՛խ սարեր, ձորեր, դուք սուգ պահեցեք,
Վանոիս մարմինը ձեր մեջ թաղեցեք։

Օրն հինգշաբթի Սերոբ գյուղն հասանք,
Գորեյն հուր վիճվորներով, մարգի մեջ
քոմին,
Կրակ դրեցին,
Հայ զինվորներին մեջը վառեցին։

Ա՛խ սարեր, ձորեր, դուք սուգ պահեցեք,
Վանոիս մարմին ձեր մեջ պահեցեք։

## 11(693). Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ

Անդրանիկն էր քաջ հուր հընգերներով,
Գոռում էր, գոչում, կուզեր պատերազմ,
Կովեք տղեք ջան, կովենք քաջ, արի,
Ճամփին էր կանգնած, թշնամու առաջ։
Դեպ հառա՛ջ, հառա՛ջ, Ավդալ խմբից քաջ,
Դեպ հառա՛ջ, հառա՛ջ, Ավդալ խմբից քաջ,
Գնացինք Սասուն, կանչեցինք ասածուն,
Թափեցինք արյուն, հայ ազգի սիրուն։
Քաջ Թումանով, քաջ Ավդալ,
Հիրար խեռ խորհուրդ էրեցին,
Արյուն դաշտում գընացին,
Ըռշո եղբարին կորցուցին.
Կովեցեք տղե՛ր, կովեցեք քա՛ջ, քա՛ջ,
Ճամփենին կանգնած թշնամու առաջ։

## 12(694). Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ

Ջով Սասունի մովեն գուգաս,
Վանա ծփան ծովեն գուգաս,
Անդրանիկիս մոտեն գուգաս,
Նոր գալած ճամփեքիդ մատաղ։
Սերոբ փաշի գերեզմանը,
Տեսել է ողջ Հայաստանը,
Տեսել է ողջ Ախթամարը,
Քո հընցած ճամփեքիդ մատաղ։
Դու կովում ես արի-էրի,
Մորըդ ասա մեկ էլ բերի,
Քնզ պետա հերոսներ շատ լինին,
Հայի պաշտպան, ջան Անդրանիկ։

## 13(695). Ա Ռ Ա Ք Ե Լ, Մ Ո Ւ Շ Ե Ղ

Առաքել, Մուշեղ դեմ տվին Խնուս
Ջորքը շափառ էր դիշեր մացին դուս։
Ոչ դիշերն հանգիստ, ոչ ցերեկն զով
Այլ մեր կյանքով, ուրախ ենք այսօր։
Առաքել, Մուշեղ սարերից հիջան,
Ավերակ ջաղաց օթևան եղան։
Ավերակ ջաղաց օգնեց մեզի շատ,
Ավերակ ջաղաց օթևան եղան։

## 14(696). Բ Ա Տ Ա Ր Ի Ք Ա Ջ Ե Ր

Դև լսնք տղե՛րք, են քաղցրիկ ձայներ,
Մահից վախող չեն Բասարի քաջեր,
Կարկուտից առաջ գնդակ թափեցին,
Կեցցե՛ք, դուք կեցցե՛ք,
Բասարի քաջեր,
Թուրքերը եկան ուռա կանչելով,

---

* Զարդին Սերոբ փաշին սպանեցին (Ծան. բանաստաց.)։
** Այս կրկներդը կրկնվում է յուրաքանչյուր երկտողից հետո։

Էլի ետ փախան Ալի կանչելով,
Հիրանց Ալին էլ օգնություն չարավ,
Թալանի փոխան դիակներ տարան։
Հովհաննես* ամին զենքը հիր ձեռին,
Խրախուսում էր հայոց քաջերին,
Դե կռվեք տղեք, ձեր հոգուն մատաղ
Հաղթանակ մերն ա, մեզ էլ կմնա։

## 15(697).

Լոդկեն հնգավ ծովու հերես,
Սևա՜ն, դու էլ քո ղորք սիրես
Իմ օխտ բալեն թամամ բերես,
Իմ օխտ բալեն թամամ բերես։

Նստա լոդկեն, գացի Շոռժեն,
Շոռժա մեջտեղ հանգստացա,
Իրիշկի վերև՝ կրակ ամբ ա,
Իրիշկի ներքև՝ ջուր ու շամբ ա։

Թող լան մայրեր և էլ քույրեր,
Զարկեք տղեք վատ վիճակ ա.
Մալականներ հեղան վայիս,
Ըսպանեցին զինվոր Սարգիս։

Արևն հելավ, արև մտավ,
Քամբախ Քավառա հավար չեկավ,
Կիրիշկեմ վերև՝ կրակ ամբ ա,
Կիրիշկեմ ներքև՝ ջուր ու շամբ ա։

## 16(698).

Սուսան գացեր ա Ջախուլու զոզան,
Աղաբեկ ջան, Ջախուլու զոզան,
Աղաբեկին սպանեցին ջուխտ արտի խոզան,
Աղաբեկ ջան, ջուխտ արտի խոզան։
Մի քելիր, լուլ ա, Սուսան յար ջան, գուքա գուլուլա.
Մի քելի, լուլ ա, Աղաբեկ ջան, գուքա գուլուլա։

## 17(699).

Իշխանավան գյուղ հողն ու ջուր,
Գյրող կայնե Անդոյի դուռ,
Կասա Անդո իմ սուրուն տուր.
Սուրուն չիտաս կմտնեմ տուն,
Կառնեմ Արամին, կլնեմ դուռ։
Իմ Արամն էր տաս տարեկան,
Գեղով կկանչին խաս բարեկամ։
Ձիրոյ հօղին քյառասուն գյազ էր,
Արամ մեջն քրնդազ էր։

Մեշու փետերն բերեցին,
Արամին թաբութ շինեցին,
Անդոյի դռնով հնցուցին,
Բալասանին շատ լացուցին.
Ալ բաղդադի ձեռին տվին,
Բալասանին սգուց խանին,
Բալաք հաշկեր շատ լացուցին։
Իմա՞լ էնեմ իմ Արամ ջան,
Իմա՞լ էնեմ խաս-գլաղ ջան։

## 18(700).

Գոլա դուրան բռնե դուման,
Ցա՜ր, յանարդ ըլնեմ,
Խաբար արեք Մուխսու վերան,
Գյուլ, ֆանտադ ըլնեմ*։

Էս ո՞ն արավ, էս ո՞ն չարավ,
Թևաթափ տերտերն արավ.
Վանոն նստե լոդկի խովն,
Խշտկով գանեք քըխ էքա ծովն.
Մուխսու հօղեն քյառասուն գյազ էր,
Վանոն մեջն քրնդազ էր։

## 19(701). ՍԱՐԻ ՎԱԹԱՆ

Աղնիվ մեռավ սարի վաքան ասելով,
Հարուքն էկավ քրտինքը վեր քաշելով
Հա՜յ, վա՜յ, վայ, վա՜յ, ո՞ն սպանեց իմ մարդը։
Հայկանուշ ջան, ո՞ն սպանեց քո մարդը,
Հելնի գարուն, կտրինք օչխրի տարքը,
Հայկանուշ ջան, ո՞ն սպանեց քո մարդը։
Հա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, շատ կցավեն յարևքս,
Անաստվածներ նրում թողին բալեքս,
Հա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, ո՞ն սպանեց իմ մարդը։

## 20(702).

Ես Արտաշն եմ մարմար քարեն,
Նոր արմատ եմ կանաչ ծառեն,
Բեղոյ ճակատ օսկի շարեմ,
Ցամա՜ն դարդո՜, յաման դարդո՜։

Դարդո ջան, ելա գնացի մարագ,
Ոտս առավ մի մեծ քարափ,
Բեղոս զիս մոռըցեր է,
Ցամա՜ն դարդո, զուլում դարդո։

Կալի ճամփեքն օլոր մոլոր,
Արտաշ բերին արնակոլոր,

* Հովհաննես Արզոյան. «Բասաբյարա հերոս մարդ էր, հայոց տղերքին ոտի կխաներ...» (Ծանոթ. բանասացի)։

* «Ցաղ յանարդ ըլնեմ, գյուլ ֆանտադ ըլնեմ» կրկնվում է յուրաքանչյուր մեկ տողից հետո (Ծան. կազմողի)։

Ցամա՞ն դարդո, քյաֆուր դարդո,
Սևալաչիկ, անմարդ Բեզո։

Գեղի բոլոր մանր ուռ էր,
Գեղով կասեն Բեզոն ծուռ էր,
Էլ չեն ասի սավդալու էր,
Ցամա՞ն դարդո, զուլում դարդո։

Էլա գայի ղշլե մառան,
Մե մարդ ասեց ո՞ւր ա Արտաշ,
Ցամա՞ն դարդո, յաման դարդո,
Զուլում դարդերս պատմելու չէ։

## 21(703). ԿԱՆՑԻԼԱՐԻ ԴՈՒՌԸ

Կանցիլարի դուռը կվառի փուռը,
Վեց տարեկնուց տեսանք, մեր մոր մամուռը։
Կանցիլարի դուռը, տասներկու խսիր,
Ա՜խ, իմ ախպորն ա տարած՝ Գերմանու հեսիր։

Արի՛, մի՛ գնա, դարձի՛ր, մի՛ գնա,
Աշխարհս մեռնել կա, ջահել չենք մնա։
Կանցիլարի դուռը կվառի փուռը,
Նորից տեսա ախպորս մամուռը։

Էլի աչքս մնաց էդ անտեր հոքեն,
Կրակն հնդնի վառի վատ մարդու դուքեն։
Էլի աչքս մնաց Ախտիյա յանը
Կրակ հնգի վառի վատ մարդու ջանը,
Որ հանգիստ չթողնց իմ ախպեր, նստեր հուր տանը,
Տարավ արեց նրա դիվանը։

## 22(704).

Տղեք ջան հետ գացեք կամաց,
Նաչալնիկին արեք իմաց,
Արշակն էնտեղ հնգած մնաց,
Հայրենիքից զրկվա, մայրիկ։

Քիչ ջուր տվեք՝ ես խովանամ,
Գոնե աշխարհքից գոյանամ,
Սուսան քրոջ չմոռանամ,
Հայրենիքից զրկվա, մայրիկ։

Գարասիմ եղբայր, ինչ գյուղ գնաս,
Նշանածիս չանես իմաց,
Հայրենիքից զրկվա, մայրիկ։

# ՋԱՆԱՉԱՆ ԵՐԳԵՐ

## 1(705). ՀՈՐՈՎԵԼՆԵՐ

Պոպոն պո՞. Բլնդո ջան,
Սևոն սամադ քյշա, Բլնդո՞ ջան,
Վար աննենք, ակոս աննենք,
Մեր արտերը խոշ ցանենք,
Պոպոն պո՞ Բլնդո ջան,
Սևոն սամանդ քյշա, Բլնդո ջան։

## 2(706).

Ռևվել ա բաշ ա՜,
զուրբանդ գլեմ,
Դարդերս շատ ա,
արևոտ մեռնիմ,
Ո՛լ, ո՛լ, ո՛լ, ոլա՜,
սարխոշ ջան,
Ռևվել ա բաշա՜,
չոբանդ գլեմ,
Դարդերս շատ ա,
սարխոշ ջան,
Արին-արցունք ա մեր խաց,
եզո ջան,
Ո՛լ, ո՛լ, ո՛լ, ոլա՜։

## 3(707). ՕՐՈՐՈՑԱՅԻՆՆԵՐ

Ա՜յ էնիմ, օրորոցալին,
Քունն անուշ ա, գրկանոցին,
Գրկանոցի բնտեր խառ ա,
Մեջի քնողն անուշ գառ ա։

## 4(708).

Շիշն օրորոց ծալեր բնդեր,
Ձիս կևրեցեր էդ քո գնդեր,
Քու գնդերի ճուշն եմ ես,
Հովհաննեսի քուրն եմ ես,
Աղա ծովու ձուկն եմ ես։

## 5(709).

Ա՜ էր, ա՜ էր, ա՜ էր,
Լուրի՛կ, լուրի՛կ, լուրի՛կ,
Քեզի դնեմ դեռ դուտուրիկ։

## 6(710).

Իմ գառն ա Հնտա քաղաք,
Ճուղ տվե քաղքե քաղաք,
Ամեն ճղին մեկ փշատ,
Քու մեկ տղի ոսքը շատ։

## ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԵՐ

### 7(711). ԿՈՒՆԿ

Կանչա, կռունգ, կանչա, տակդ ա չիման.
Աշխարքին արև ա, ընձիկ ա դռման։
— Կռունգ. ո՞ւտից կիգաս.

— Աճեմու սարեն.
— Ի՞նչ լուրեր կբերես իմ ղարիբ յարեն։
Ալագյոզ աչքերդ, կամար ունքերդ,
Ուզում եմ նռանման չի թողնըմ սերդ։

## 8(712).

Կո՛ւնկ, կռանիդ մեռնեմ,
Ձայիր-չիմանիդ մեռնեմ,
Կո՛ւնկ, կռանիդ մեռնեմ
Օսկե կտուցիդ մեռնեմ։
Կո՛ւնկ, սիրես քո մեկ բալի արևը,
Յարս մնաց Ձանգեզուրա ձորերը։

## 9(713). ԿՈՒՆԿ

Կռունկ ուստի՞ գուքաս,
Բաղդադու սարեն,
Ասա խաբար բերիր,
Իմ մեկ ախպերեն։
Կանչի՛ կռունկ, կանչի՛՛՛՛,
Քանի գարուն ա,
Ջրերը բղդրվե,
Սիրտս արուն աւ
Կանչի՛ կռունկ, կանչի՛՛՛՛,
Բանցրիկ սարերեն,
Արտասուքս թափվի,
Մառմառ քարերեն։
Կանչի՛ կռունկ, կանչի՛՛՛՛,
Աշխարին արև ա
Ընձի դուման ա,
Լոխման հեքիմ բերեք,
Դարդս հիմանա։
Ախ, կանչի կռունկ կանչի՛՛՛՛,
Տակդ չիման ա,
Աշխարքին արև ա
Ընձի դուման աւ։
Ախ, կանչի կռունկ կանչի՛՛՛՛,
Թող ղարիբս գա
Սրտիս յարեն սաղնա
Վ'աչքերիս քուն գա։

## 10(714).

Դատախազ կարիբ էր, չիմացավ ցավս,
Ջոկեց տարավ յարս, վա՛խ վառեց ջիջգյարս։
Քյարամ ջան արի, սինորով անցի,
Վա՛խ կերթաս էն աշխարհ, կարիբ ջան, ինձ
մի մոռացի։
Մաշինեն էկավ սև սարի քամակ,
Վա՛յ, չիկեր թուղթ ու թանաք, կարիբ ջան,
գրենք մեկ նամակ։
Նստա նավը, դեմ արի Սևան, դեմ արի
Սևան,
Խաթր էրա, սուրփ Սևան, վա՛խ, կարիբ ջան,
դառնաս օթևան։

## ՍԻՐԵՐԳԵՐ

## 11(715). ՋՈՒԼՈ

Արտըմ ցանի բիթուն յոնջա,
Առնեմ Ջուլոյ շրջեմ Դյանջա,
Ամա՛ն Ջուլո, յամա՛ն Ջուլո։
Մեր տան հետև արտըմ պնդուկ,
Ջեր տան հետև արտըմ պնդուկ,
Ամա՛ն Ջուլո, յամա՛ն Ջուլո։
Ջուլոյ առնեմ, էքսամ բաղաո,
Ջուլոյ կտրեմ լաստիկ միզար.
Մեր տան հետև արտըմ դյազար,
Ջեր տան հետև արտըմ դյազար,
Առնեմ Ջուլոյ, շրջեմ բազաո։

## 12(716). ԴԱՐԴՈ

### 1

Ախչի, դու կանգներ ես ջուխտ ամրոցին,
Դարդո յամա՛ն, յաման դարդո, յամա՛ն,
Ջուխտակ շամամ մըջ քյո ծոցին.
Դարդո յամա՛ն, յամա՛ն դարդո, յամա՛ն,
Մեկ տու զանեմ վըր իմ խոցին,
Դարդո յամա՛ն, յամա՛ն դարդո, յամա՛ն։
Էկան ասին բերի վախտ ա,
Բերի սաթը քեից կախ ա.
Դարդո յամա՛ն, յամա՛ն դարդո, յա՛ման,
Էկան ասին յարոյ մախ ա,
Դարդո յամա՛ն, յամա՛ն դարդո, յամա՛ն,
Սիրտս փշրուվ, հաշկս կուլա,
Դարդո յամա՛ն, յաման դարդո, յամա՛ն։
Բանցր սարից ես ցածըցա,
Թուխ մաքուռ տեղ, թուխ լվերն ա,
Դարդո յամա՛ն, յամա՛ն դարդո, յամա՛ն։

## 13(717). 2

Դարդո, յամա՛ն, դարդո՛,
Դարդո, յամա՛ն, դարդո՛։
Բանցր սարից ես ցածըցա,
Թուխ մաքուռ տեղ, թուխ լվերն ա,
Դարդո, յամա՛ն, դարդո՛։
Դու կայնել իր ջուխտ ամրոցին,
Ջուխտակ շամամ մըջ քուռ ծոցին,
Մեկ տու՝ զանեմ վըր իմ խոցին,
Թո խամբրի դարդ ու բոցին,
Դարդո, յամա՛ն, դարդո՛,
Հելա գացի սարը սեյրան,
Դեմս հելան ջուխտ ջեյրան,
Դարդո, յամա՛ն, յաման
Պստիկ բերան, կամար ունքեր,

Քո տարողի՝ տունը վերան,
Դարդո յամա՜ն,
Էկան ասին յարոյ մախ ա,
Դարդո յամա՜ն,
Էկան ասին բերի վախտ ա,
Բերի սաթը թևիս կախ ա,
Դարդո յամա՜ն։

## 14(718). ՎԱՅ ՎԱՎԻԼԵՐ

Գարուն բացվի՝ ճամփեմ սնձի,
Բերենք ուտենք, ինչպես դյնձի,
Վա՜յ վավիլե՜ր, վա՜յ վավիլե՜ր,
Քո տարողի տունն ավիրեր*։

Արտըմ ցանի կանանչ խիար,
Կարկուտն էկավ, բիթուն տարավ։

Գարուն բացվի, հելնենք սարը,
Հելնենք էրթանք դիմաց դարը։

## 15(719). ԴՈՒԼԻ ՋԱՆ

1

Ա՜խ Գուլի ջան շատ մի ցանի բամբակ,
Գնամ սուղը վրեդ կիտամ գանգատ։
Ա՜խ Գուլի ջան, պերվի պրախողը,
Շոշով գնամ, դուզովը գամ քու մոտը։
Գուլի ջան, ֆայտոն զանիթ կանեմ,
Ջա՜ն Գուլի ջան, քեզի մեր տուն տանեմ։
Գուլի ջան խնձորի ղութի եմ,
Մերդ մեռնի, քեզանից լոթի եմ։

## 16(720). 2

Հոպ, Գյուլի ջան, մեռնեմ էն օրերուն,
Հոպ Գյուլի ջան, սիրիր քողիր յանա,
Ջան Գյուլի ջան, իմ ջահել ջան քե
ղուրբան ա.
Ալ բլուզիդ մեռնեմ, շալ բլուզիդ մեռնեմ,
Մադիսկի կարած բլուզիդ մեռնեմ**։
Գյուլի ջան ֆայտոն զանիթ կանեմ,
Ախ գյուլուլի ջան, քեզի մեր տուն կտանեմ,
Ջան Գյուլի ջան, մեծ հարսանիք կանեմ։
Հոպ Գյուլի ջան, մեռնեմ էն օրերուն,
Յարս գուբա պալտոնը թևերուն։
Գյուլի ջան, շատ մի ցանա բամբակ,
Կեթամ սուղը վրեդ կտամ գանգատ։

## 17(721). ՋԱԼՈՍ ԱԼՈՒՐ ՄԱՂՑՑ

Ջալոս ալուր մաղեց,
Մե խոսք ասավ յար ջան,
Իմ սիրտը դաղեց։
Պատից էլավ օձը,
Թև պուճուր ես յար ջան,
Դնեմ օրորոցը։

Խալվարը խալվարին,
Նշանլու ես, յար ջան,
Դուխին շաղ տամ,
Քո կաստոմ, շալվարին։

Օթախի պոլերը,
Տուֆլին քանդ ա, յար ջան,
Կհագնեմ սոլերը։

Իմ վրի շալվարը,
Դուղն եմ ասում յար ջան,
Դու ես իմ հարմարը։

Արի էթանք ուխտը,
Ուխտը տա դիլաքդ,
Որ ինձ չառնես, յար ջան,
Կոտրվի բիլակդ։

## 18(722). ԱՐԻ ԳՆԱՆՔ

Արի գնանք քո ման գալած արտերը,
Թաժացել էր սրտիս միջի դարդերը,
Սավվի գուղալ, սավվի ծամերուդ մեռնեմ։
Կանաչ ու կարմիր տերևը, տերևը,
Պաքեմ ծծերուդ վերևը, ներքևը,
Սանդրի, գուղա՜լ, սանդրի, ծամերուդ
մեռնեմ։

## 19(723).

Հելա գացի յարիս դուռը,
Տեսա յարս կայնած դուռը,
Ա՜խ թուլացավ կուռս ու ճուռս,
Ասի յար ջան ճարս էս ա.
Ասի յար ջան ճարս էս ա,
Շուտով դառնալու եմ փեսա,
Շուտով դառնալու եմ փեսա։

## 20(724). ՍԱՔՈ

Աղջի՜ ջան, աղջի՜,
Արի քեզի տամ,
Խոջի տղին,
Սև խալիչին,
Սաֆարի բողչին,
Գլազ դեյրին,
Սիվտակ դոտուն։
Նանի՜ ջան, նանի՜,
Սևավոր նանի՜,
Ես ի՞նչ կանեմ խոջի տղեն,
Սև խալիչեն,
Գլազ դեյրեն։

---

* Այս կրկներդը կրկնվում է յուրաքանչյուր երկտողից հետո (Ծ.Ն. կազմողի)։

** Կրկնվում է յուրաքանչյուր երկտողից հետո։

Խազար էդպես խոշի տղա,
Ղուրբան կէնեմ իմ Սաքոյի
Ջարխներին,
Ջարխի թելին,
Ջորքներին,
Ջորբի թելին,
Շակ քոլոզին,
Պապիրոզին,
Գուզմե չուխին,
Նանի՛ ջան, նանի՛, սևավոր նանի՛,
Սգավոր նանի՛, սգավոր նանի՛,
Էրնեկ էն օր, գարուն գուկա,
Իմ Սաքոն էլ քոչ կտանա,
Քոչ կտանա,
Էլ կխանա,
Հո՛, հո՛, կէնա,
Նաո՛ կէնա,
Բաշ մատկներ,
Բեդ պտկներ,
Կաթնով կովեր,
Ղալլ եզներ,
Նաո՛ կէնա,
Կոժո՛ կէնա,
Ջոշո՛ կէնա,
Սար կխանա,
Իմ Սաքոյի տունը տեննաք,
Ջմե չոխտիկ,
Քարե քողտիկ,
Մեջըն էլ կա
Մե բաշ հորթիկ,
Պոչըն ա բաշ,
Հաշկերն ա շաշ,
Էն էլ ղուրբան իմ Սաքոյին,
Էրնեկ էն օր՝ իմ Սաքոնը կէքա ջաղաց,
Ընձի բերա կարմիր բաղարջ։

## 21(725).

— Ջաղացպան ջան, ցավդ տանեմ,
Ինչ որ ասես, ականջ կանեմ,
Ի՞նչ որ ասես, ականջ կանեմ,
Քու անհարմար սիրտն կառնեմ,
Աղա՛ ցորենն ու տուր տանեմ։

— Ինչի՞ս է պետք կապել սերը,
Թե չուզենա ինձ քո մերը,
Ուզում եմ քո սրտի սերը,
Ցորենն աղամ, դու տուն դարձիր։

— Ջաղացպան, դու թառլան ղուշը,
Երբ որ լինես դու իմ նուշը,
Քեզ կնվիրեմ կարմիր թուշս,
Աղա՛ ցորենս ու տուն տանեմ։

— Առանց սիրո ի՞նչ է թուշը,
Առանց երգի ի՞նչ է նուշը,
Թե գտել ես մեկ ուրիշը,
Ցորենդ առ ու տուն դարձիր։

— Ջաղացպան, քեզ պայման կտամ,
Արի՛ դարձիր հորս փեսա,
Գիտեմ սրտիդ փափագն էս ա,
Աղա՛ ցորենս ու տուն տանեմ։

## 22(726). ԽՆՋՈՒՅՔԻ ԵՐԳԵՐ

Ես խարբուկ եմ, վերից գուքամ,
Ջան տո՛ւյ, տո՛ւյ, տուլտո՛ւյ, տուլտո՛ւյ*,
Աներոջս տնից գուքամ,
Խորովածը շատ լավ բան ա,
Քեֆ անելը շատ լավ բան ա,
Տկճոր ախպորս դնեմ ծնգանս,
Բաժակը լցնեմ ու տամ կնգանս։

## 23(727).

Ա՛խ, տիկ, տիկ, վա՛խ, տիկ, տիկ, ջա՛ն տիկ, տիկ, տկճոր,
Առանցի քեզի չունեմ ես մե օր։
Ձեռքս կառնեմ գինու տկճորը,
Լցնեմ բաժակը, քաշեմ իմ փորը,
Ա՛խ տիկ, տիկ, ջա՛ն տիկ տիկ, վա՛խ տիկ, տիկ, տկճոր,
Առանցի քեզի չունեմ ես լավ օր։

## 24(728). ՄԵԼԻՔ ԴԱՎՈՆ

Ես էլ գուզեմ, դու էլ գուզես, Մելիք Դավոն լավ լինի,
Սուջրա, սինին, խավ, խորոված, Մեջլիսի։
Մելիք Դավոյ բշի փողեր հերգեն էր,
Մելիք Դավոն իշխաններու ջերգեն էր։
Մելիք Դավոն, Մելիք Դավոն լավ լինի, լավ լինի,
Սազ ու դափով, Մեջլիսներում խաղ անի, խաղ անի։

## 25(729). ԵՐԳԻՄԱԿԱՆ ԵՐԳԵՐ

### 1 Լվեր

Հա՛յ լվեր, հարա՛յ լվե՛ր,
Բիզ մոթներ, բարակ ճվներ։
Գացինք պառկանք հօդի թմբան,
Լվերն էկան կտնգտնգան,
Փափխով զանի՝ հրմեն հրնգան,
Հնլան թափան վրր քո կնգան։
Գյացինք պառկանք գյոմու տանիս,
Վրրես քաշի քառսուն թաղիս,
Լվեր ծակին, խասան ջանիս,
Հա՛յ լվե՛ր, հարայ լվե՛ր։

Ղարաքյանդա բեդ-բեդ լվեր,
Ցերեկ գլեն սներնը վեր,
Գիշեր գլեն ճվերնը վեր։
Էկավ լվերու յուզբաշին,
Լվեր մտան գյոմշու կաշին,
Հա՛յ լվեր, հարա՛յ լվեր։

## 26(730). 2

Հա՛յ լվեր, հարայ լվեր,
Կարա կնգուղ, կարմիր լվեր.
Գիշեր կհելնեն ճըղվերն ի վեր,
Ցերեկ քաշվեն սըներն ի վեր.
Հա՛յ լվեր, հարա՛յ լվեր,
Բոզ մատկներ, ճլտուզ վզներ։
Հելանք գացինք Ղումլի պուճախ,
Լվեր հելան, կերան մըր ջան,
Հա՛յ լվեր, մադա՛թ լվեր։

## 27(731). Թ Ո Ւ Թ Ո Ւ Ն

Էրվա, վաուվա ես անթութուն.
Թութուն չկա մըջ իմ ղութուն,
Էրվա, վաուվա ես անթութուն։
Արտըմ խերկի, ցանի թութուն,
Շախտեն էկավ, տարավ բիթուն,
Էրվա, վաուվա ես անթութուն։
Թութուն քյաշողի ո.ն բաց էր,
Ուտածըն էլ գյարե խաց էր,
Էրվա, վաուվա ես անթութուն։
Բալաք եղ քաշին դույնի դուռ,
Տվեցին թութունի ջուռ,
Էրվա, վաուվա ես անթութուն։

## 28(732). Ա Ք Լ Ո Ր Ը

Իմ աքլորը կերավ Իվան,
Նոր էր հնգե խայու դիվան,
Աստված էներ ուտողի դիվան,
Տարան կերան իմ աքլորը։
Խո աքլոր չէր, գյոմշու ձագ էր,
Մե քյասիբի պատարագ էր,
Տարան կերան իմ աքլորը։
Վարսենիկ ջան, դու նստի լաց,
Թառի մե յան դատարկ մնաց,
Քյաչալ խավը մենակ մնաց,
Տարան կերան իմ աքլորը։
Իմ աքլորը կայնավ ձեր դուռ,
Չկտրվավ սրտիս մրմուռ,
Խո աքլոր չէր, բուրդաղ եզ էր,
Ամեն թեբուռն իրեք գյազ էր,
Հաշկեր բացեր մե լուսնակ էր։
Իմ աքլորին քառսուն կնիկ,
Առավ մտավ հիրան բնիկ,
Աստված քանդեր ուտողի տնիկ,
Տարան կերան իմ աքլորը։

## 29(733). Ս Ե Փ Ո

Ես Սեփոն եմ Բասարշարցի,
Տուն՝ գեղի վերև շինեցի,
Ջին քյաշի, հառուն ջրեցի,
Ջիյու աշխատանք գյրեցի։
Հըմեն մարդու բախտ չբերա,
Յարուն աշխատանք կբերա։
Ես Սեփոն եմ՝ յոթ ճժու խեր,
Հանգարծ հելա յաբուլի տեր,
Մեռներ յաբուլ ծախողի խեր,
Ես ի՞նչ էնեմ, սեֆիլ Սեփո։
Էթալ ու գալով էր Գյանջեն,
Կառատավ չտերուս փանջեն,
Սուրտուկս հելավ, հընգյավ (լ)անջեն,
Ես ի՞նչ էնեմ, սեֆիլ Սեփո։
Գյացինք Գյանջուց էրաղ բերինք
Միլիցեքներ էկան բռնին.
Էկանք խասանք Մազրի գետին,
Տկեր վերցինք, դրինք գետին,
Տկերու գլոխ ջուր լցինք։
Միլիցեյներ կոմունիստ էն,
Էրաղ բռնելու շատ բիստ են,
Էկան մեր էրղներ վերցին,
Ես ի՞նչ էնեմ, սեֆիլ Սեփո։

## 30(734). Ք Յ Ո Լ Ա Ղ Ռ Ա Ն

Կեցցես, հա՛ կեցցես, Քյոլա ղռան,
Բոզ-բոզ իշվանք մորթին, կերան,
Ոսկոռներն էրին, սուն ու գերան,
Հառճին պրտուճ ռեսին բերան։
Ջանդեր քյաշեց Մալոյի Սարիբեկ,
Պատարագի մեջ իշացեք,
Կեցցե՛ս, հա՛ կեցցես, Քյոլա ղռան։

## 31(735).

Առեյին՝ քոլոզ գդակ,
Մեջոյին՝ աբրշում,
Իսկ Անային՝ շալե շապիկ,
Փեշեր չունենա,
Փեշեր չունենա,
Դարդ ու կրակ ա։
Մայրիկին՝ ավտոմոբիլ,
Քույրիկին՝ ֆայտոնը,
Իսկ հայրիկին՝ էշի կաշկա,
Ակներ չունենա,
Ակներ չունենա։

## 32(736). ԱԴԵՆ ԹՈՒՄԲԱՆ

Ադեն թումբանը վշաց,
Փռեց քյարին ու դյնաց,
Քամին էկավ ֆռֆռաց,
Ադեյ հետև մնաց բաց։

Ցաման աստված կսիրեք,
Թե որ քյաղաք կգնաք
Ադեյ մե թումբան էրեք,
Մեզի չէնա սևհերես։

Թումբան հընգյավ գյուխնե-գյուխան,
Գյնաց հելավ փուշն ու հռհռան,
Ջոբընները կսվսվան,
Ճնջղներ կծլվլան,
Ասեք՝ «մեղաա»
Որ ձեր ծնողների մեղքը թողա։

## 33(737).

Թե սև եմ՝ նը սիրուն եմ,
Թե կոլոտ եմ՝ նը խորոտ եմ,
Թե գեշ եմ՝ նը աոլսու փեշ եմ,
Թը քոռ եմ՝ նը քյաշալ չեմ,
Թը շիլ եմ՝ նը շիրին եմ։

## 34(738).

Մե խաց կերանք՝ քյարթու խաց,
Մե խաց կերանք՝ թաժա խաց,
Շան տղի կիսուր չիգա ուտենք՝ խալալ խաց։

## 35(739).

Քամին էկավ էրան-էրան,
Թորոյենց տունը տակն ու վերան,
Թորոյենց թունդիր մե կճուճ յախնի,
Դռները բացեք, նոյեմզար փախնի,
Կալոշներ տարեք՝ Լևոնը խաքնի։

## 36(740).

— Ա՛յ սիրուն աղջիկ, նազ մի՛ անի, նազ մի՛ անի,
Քանի որ ես կամ դարդ մի՛ անի, դարդ մի՛ անի։


Բաժակ վերցեց մեր քավորը,
Ասավ՝ դուք եք բախտավորը,
Լավ կլսեք խորն ու մորը,
— Ա՛յ սիրուն աղջիկ....
Երեք մեսր կտոր առա,
Ուստա Գարսոյի մոտը տարա,
Ուստա Գարսո կաստամ կարա,
Շաբաթ օրը խառնիսս ա։
Ա՛յ սիրուն աղջիկ, նազ մի՛ անի, նազ մի՛ անի,
— Ա՛յ սիրուն տղա, նազ մի անի, նազ մի անի,
Քանի որ դու կաս, դարդ չեմ անի, դարդ չեմ անի։

# ԵՐԳԵՐԻ ՆՈՏԱԳՐՎԱԾ ՆՄՈՒՇՆԵՐ

## ՈՂԲ


(Մարտունի-Ալաշկերտ)

♩. = 100 վշտահույզ




## ՍԵՓՈՅԻ ԵՐԳԸ

♩. = 88 կենսախինդ (Վարդենիս-Դիադին)





## ՅԱՐ, ՅԱՆԱՐԴ ԼԱՆԵՄ

♩. = 58 (Վարդենիս-Դիադին)




## ԿԱՆՉԻ ԿՈՒՆԿ

♩. = 104 ջերմիրեն (Մարտունի-Մուշ)




## ՈՂԲ

♩ = 126 լալահառաչ (Մարտունի - Ալաշկերտ)





## ԽՆՁՈՒՅՔԻ ԵՐԳ

♩. = 100 աշխույժ (Վարդենիս - Դիադին)



## ԿԱՆՑՒԼԱՐԻ ԴՈՒՌԸ


(Մարտունի-Մուշ)



## ԹՈՒՄԱՆԻ ԵՐԳԸ


♩ = 108

(Վարդենիս-Դիադին)




## ԱԴԵՐ ԹՈՒՄԲԱՆԸ


♩. = 100 աշխույժ (Վարդենիս-Դիադին)



## ԷՐԻՐ ԼՈՒՍ ՋԱՆ, ԲԱՐԻ ԼՈՒՍ

♩. = 96 կենսուրախ


(Մարտունի-Ալաշկերտ)




## ԼԵՌՆ ԵԿԱՇ


♩. = 80-84 երգիծանքով

(Վարդենիս-Դիադին)



## ՎԱԳՈՆ ՄԻ ԺԱԺԱ

(Վարդենիս-Դիադին)





Ասացող՝ Կ. Բարսեղյան

Նոտագրող՝ Կ. Ջալիկյան

## ՕՐՈՐ

(Մարտունի-Մուշ)




Ասացող՝ Ս. Հովհաննիսյան

Նոտագրող՝ Կ. Ջալիկյան

# ԲԱՆԱՁԵՎԵՐ

## ԱՌԱԾ-ԱՍԱՑՎԱԾՆԵՐ

1(741). Աբրշում էկեր ա լու, լուն բագլամիշ չեղնի աբրշումին։
2(742). Ադամ պուպուզ ա տեսե։
3(743). Ալնի էր, խանձրախամն էլ տվեց վրեն։
4(744). Ախ քաշողի սրտի վրեն եղ չըլնի։
5(745). Ախը լավ ա, քան մախը։
6(746). Ախպեր ախպոր գոտուքոմն չուզա։
7(747). Ախպեր սպանողդ էլ օր տունդ գա, դուռը բաց։
8(748). Ախչիկ ախչա յա՝
Բաղնսի բոխչա յա։
9(749). Ածան հավը կչկչան կեղի։
10(750). Աղքտի մուխն էլ կծու յա։
11(751). Աղքտի փեշն էրեցուկ ա։
12(752). Ամառ պառկավ խովերը,
Ձմեռ փիծուց կովերը։
13(753). Ամռան մի օր տարի կպախա։
14(754). Ամեն կնիկ կնիկ ա, պատերն հըմեն պըլնիկ ա։
15(755). Ամեն մարդ կրակն հուր բաղարջի տակ կքյաշա։
16(756). Ամեն փայլուն՝ օսկի չի։
17(757). Անբախտ մարդ վըր ծովերումն ծարավ ա։
18(758). Անեծքն էրկու ծերե ա։
19(759). Անխաստկացողին խաստկցնել դժար ա։
20(760). Անհախ կհեղի, անխաց չեղի։
21(761). Անճար,
կերե բանջար։
22(762). Անձրևը ծով ա սիրում։
23(763). Ան ձի առնել, մսուր կշինքյա։
24(764). Անողը պրծել ա, ասողը՝ չէ։
25(765). Անջուր տեղ մի բռնկցի։
26(766). Անծին էրինջ ա։
27(767). Անտեր մեռել քուչեն չթողեն։
28(768). Անսովրցուցել մի սովորցրնք, սովորցուկ մի կտրնք։
29(769). Անունը տուր, փեսեն առ։
30(770). Աշխարհն աղով,
Աղն էլ խամով։
31(771). Անոթի փորում,
Ջուր տուր օտում։
32(772). Աշխարհն արոտ,
Մենք մեջն կարոտ։
33(773). Աշխարքն աշխրով,
Դու քո նայնայով։
34(774). Աչառ քաշեն, տակ հորթ ման կիգան։
35(775). Աչքը սարին,
Ոտը քարին։
36(776). Աչքն աշխարհք կտեսնա, հուր ճակատ չտեսնա։
37(777). Աջալն էկել ա, մաջալ չի տալիս։
38(778). Առսըզ առջին ա, չոլն էլ կերթա առջին ա։
39(779). Ասողի էրես քքին։
40(780). Աստված Քրիս նախիր պախա, մեջն էլ մեր մոզին։
41(781). Աստված եդ եռու պախա մանտրիկ շնեն, բեդ ձնեն։
42(782). Աստված սար կտեսնա, ձուն կդնա։
43(783). Աստված ցավ կտա, դարմանն էլ հետը։
44(784). Աստծուն եղով փլավ ա տարել։
45(785). Ասված անձրխուն օր հանգյաջ էնա, վարդեվրին ձուն կդնա։
46(786). Ասված քյասբի խելք կառնի, հետո ապրուստը։
47(787). Ասսու պախած ա։
48(788). Ասսու պահած գառը գելը չուտե՞։
49(789). Ասին առ ու տուր,
Ջասին՝ առ ու կուլ։
50(790). Առամից էլ պրծա, առմի ցավից էլ։
51(791). Առմի դեղ, սրտին դեղ չէնա։
52(792). Արատավորի արատը ճակտին չեն իսա։
53(793). Արհեստը կաթ-կաթ ախպուր ա, չվարարի, չպակսի։
54(794). Արուն ջուր չդառնա։
55(795). Արուն արնով կլվան։
56(796). Արունքտեր ա դառե։
57(797). Արնի տեր մեկ,
Արուն էրեր ա հազար ու մեկ։
58(798). Արտը խախուտ,
Մահճանն կարկուտ։

59(799). Արտումը տեղ.
Պուլիկը եղ։
60(800). Արև բանցրցե,
Կորեկ քաղցրցե։
61(801). Արև արեգակ ա,
Բոլորի վրեն զարգուկ ա։
62(802). Բախտը ոտի տակից կփախնի։
63(803). Բախտի խետ, չախտ էլ ա պետք։
64(804). Բախտը հուրնից հառեջ կէքա։
65(805). Բախչի սիրուն, բախչի պադեր
կհամբուրա։
66(806). Բաղդս գիլու չընս ա, դոր գացի՝
հայ-հույ էրին։
67(807). Բարի որդի ում ուրթի,
Մուկն ու կատուն էլ կցրթի։
68(808). Բեդ հաշկ՝ լուս չկա։
69(809). Բերանս խունջան չի, որ քաշեմ կապեմ։
70(810). Բերնե-բերան,
Ջոզմ գերան։
71(811). Բերնից կաթախոտ ա գուքյա։
72(812). Բերնով ուզեմ,
Ի՞նչով ուտեմ։
73(813). Բերնե-բերան,
Խազար բերան։
74(814). Քիչ բարցի,
Շուտ հասի։
75(815). Բորիկ ոտ սոլկրի դուռն ա։
76(816). Բոզ-բոզ ձիանք նալեցին,
Դռոտ իշվանք էլ օտներ պարզեցին։
77(817). Բոշից՝ աղա չտեսանք։
78(818). Բոշու աղջիկ տամազլըղ չըլի։
79(819). Բոշու աղջիկ գերուքյո՞ւն։
80(820). Գարին՝ փարին ջոկեց հիրուրից։
81(821). Գառ քոզի մեջ բելու կէնա, օսկին՝
կավու։
82(822). Գառը քոզի մեջ բելու կէնա։
83(823). Գառը գիլուն պախ տվին։
84(824). Գել էղա, նրա ոչխարը կերա, քեզ ի՞նչ
արի։
85(824). Գելը տամազլը՞ղ.
86(825). Գելն ամպ օր կպտոտա։
87(826). Գելն անոթի եղն չհելնի կըսեն,—
մերաթ իմալ ա կերե՞։
88(827). Գելի պե՞տքն ա, որ գառը քանկ ա։
89(828). Գելն ամպ օր շուռ գուքյա։
90(829). Գեղ կայնի, գերան կկոտրի։
91(830). Գեղի օսկոռ, գեղի շան կխասի։
92(831). Գեղի տերտերուն՝ «օրհնյա ի տեր չկա»։
93(832). Գեղցու փոր քաղքում չկշտանա։
94(833). Գեղ եմ, դարբնի փեղ եմ։
95(834). Գիլի գլխին ավետարա՞ն։
96(835). Գիլու խետ գառ կուտա, գիլու խետ
վավուլեր կէնա։
97(836). Գիլու ձագ տամազլըղ չըլի։
98(837). Գիլու բնից օսկոռ չպակսի։
99(837ա). Գիլուն ավետրան խևին խրատ։
100(838). Գիլու փոստ ա հիջե վրեդ։
101(839). Գիլուն՝ հախու բաբել կըսենք։
102(840). Գիլուն նախիրն ա պախ տված։
103(841). Գիտուն աղվես երկու ոտով կհնգի
թալաք։
104(842). Գիտունին կհեղիմ գերի,
Անգետին չեղիմ սիրելի։
105(843). Գյադից նախագահ՝ գեղ խարաբ,
Եղից-աշաուից գյուքան՝ գյուքան
խարաբ,
Աղջկից տան ղեկավար՝ տուն խարաբ։
106(844). Գյադից ու քրդից փաշա՞։
107(845). Գյազըմ չքաշա,
Մազըմ կգյաշա։
108(846). Գյուղ մոի մարդու տուն, չար աչքը
չմոի։
109(847). Գոմեշ մորթի՛, արուն դուս գա։
110(848). Գոմշու նստած տեղն արժի մի գոմեշ։
111(849). Գրմշու գլուխ պոտուկ չմոի։
112(850). Գոմփով մեխի գլխուն չեն զանի։
113(851). Գող գողից գողացավ, աստված վերև
զարմացավ։
114(852). Գող կսե՝ հըմեն գող են։
115(853). Գողն օր տնից հեղի, եղն հերթիկից
կհելի։
116(854). Գողի, բոզի ումբրը կարճ ա։
117(855). Գողությունն, չգաս արքայությունն։
118(856). Գռոտ էծ աղբրի ակն ավերեր ա։
119(857). Գովացին ալուխան,
Հելավ թշկավ պատուխան։
120(858). Գրողն հիջե վըր խոքուն։
121(859). Գուլենք հարուստի կատուն,
Ջուլենք քե պես ախքտի խախուն։
122(860). Դանակն ուր կոթ չտաշա։
123(861). Դանակն օսկուն խասավ։
124(862). Դառ ծիրանը կուտվի, դառ կուտը
չկըվի։
125(863). Դաշտի առվի մեջ օր կըվացվես, մի՛
քքա, քեզնից ցած հալերթ մեկն էլ
կըվացվի։
126(864). Դավի պոչի պես հետ չերկարի։
127(865). Դավեն նստե, կուզե-կուզ ա կեթա։
128(866). Դավին չանգալով կկերակրա։
129(867). Դատիմ, բանիմ, տամ շներուն։
130(868). Դատին խոզեր,
Ուտեն բոզեր։
131(869). Դարդակ կարասը կզնգա։

132(870). Դմկով օչխար ես՝ քե ծածկա։
133(871). Դաստուիմունով՝ դուշմանություն կէնա։
134(872). Դանդ շունն էլ մարիֆաթու պտի ըլի։
135(873). Դրկեցվոր հնդի, քըս քաֆր հնդի։
136(874). Դրկցի խարան խորոտ ա։
137(875). Դու ասեղ, ես լե թելիդ։
138(876). Դու պուխ ես, քո պատին կախվի։
139(877). Դու իմ փետե դուռ ծեծա, ես քո էրկթե։
140(878). Դու օր իմ փետե դուռ չծեծես, հընչի՞
ես քո էրկթե դուռ ծեծեմ։
141(879). Դույնի պոչն հերգեն ա։
142(880). Դուշմնիտ աղջկան էլ վատ չըսես։
143(881). Դուշմնիդ դուռն ընչի՞ ես կայնե։
— Ջիգրիս խաթեր։
144(882). Դուռ տփողի դուռը կոփվի։
145(883). Դուռ-դրկից օր կամենան,
Ջոլախ ու քոռն կսաղնան։
146(884). Դուռ վըր դռան,
Դրկից կնայա բռան։
147(885). Դևեն խեծե՝ կուղնկուղ կփախի։
148(886). Եղ կկայնցուն, հորթիկ տկից կքաշեն։
149(887). Եգն ընկավ՝ դանակավորը շատցան։
150(888). Յոթ արխալուխ ղուրբան լինի մի
շապիկի, յոթ խարս ղուրբան լինի մի
կատվի, որ ամեններ կլպստա։
151(889). Եռուն դհոլի ձեն անուշ գու քյա։
152(890). Ես գիցա մարդ էր, քուրքով էր,
Չգիցա շուն էր, փոստով էր։
153(891). Ես աղա, դու աղա,
Բա մեր ցորենն ո՞վ աղա։
154(892). Զարկի լորուն,
Կպավ ջորուն։
155(893). Զմփզմփան գնտեն մի վախեցի։
156(894). Զոռ էշու վրեն չբռնա, փալնին կտփա։
157(895). Զռալով օր տուն շիքվեր, էշի տունը
պալատ կհելեր։
158(896). Զուռնի ձեն հեռվից անուշ կիգա։
159(897). Զուռնի ձենը զատնա քաղցր ա։
160(898). Էժան ըլի,
Շան միս ըլի։
161(899). Էժան մսի շոռվեն շունը չկերե։
162(900). Էժան մսի շոռվեն շներն ա կերած։
163(901). Էծն օր էծ ա, հուր տեղ կքերա, նոր
կնստի։
164(902). Էծն ուր օտով կկախեն, մաքին ուր
օտով։
165(903). Էծու խամար մի գոռտ էծն լավ ա, քանց
մի սուրու օչխար։
166(904). Էն աչք քոռնա, օր ուրիշի աչք իր աչքի
տեղ լուս կտա։
167(905). Էն առուն, օր ջուր ա էկե, էլի կգա։
168(906). Էն տունը, օր մեծ չըլնի, մե քար կդնեն
տեղ։
169(907). Էն տեղը, օր փորդ չկշտնա, անոթի
ըլնելդ մի ասա։
170(908). Էն վախտ օր մենք բեռ ինք, դուք մեր
տ..ն իք։
171(909). Էնքան գալ ա կոտրե կժի դե՞մ։
172(910). Էշ մի սատկի, չուր չոնջեն խասի։
173(911). Էշն էլի էն էշն ա, փալան ա փոխվե։
174(912). Էշն ի՞նչ գինա նուշն ի՞նչ ա։
175(913). Էշն արևուն կխավնի՞։
176(914). Էշն հընգե գարու խոր։
177(915). Էշը ջրու մոտ յոթ լողն էլ կմոռնա։
178(916). Էշի վրա ուժ չպատա, փալան կտփա։
179(917). Էշին փալան, մարդուն հալավ։
180(918). Էշու խեծնելն մի այիբ ա, հիշնելն՝
էրկու։
181(919). Էշու քարվան,
Կնգա դիվան։
182(920). Էշվանք գացին, մենք մացինք։
183(921). Էշուց հառնջ ախոռ մի մտի։
184(922). Էշուն ըսին՝ շնորհգդ ցույց տու,
կայնավ ղռաց։
185(923). Էրկու վախ՝ մի մախ ա։
186(924). Էրկու իշու գարի չկանա ջոկա։
187(925). Էրկու կնիկ մի դիվան,
Էրկու քուրդ մե քարվան։
188(926). Էրկու ոտով ք..ն ընկնել։
189(927). Էրկու գմշու գլոխ՝ մե ղազան։
190(928). Էրկու ոտ՝ մըջ մե սոլ։
191(929). Էրկու չափե, մեկ կտրե։
192(930). Ընդոր մաղն ուտողը գերան կք...ա։
193(931). Ընկներ շիքելու տեղ, հաշկն էլ խանեց։
194(932). Ըշկուշ մացի, մոխրի տակ կրակ կա։
195(933). Թաղավորու քասեն լե ճանճ կպատի։
196(934). Թամբալ խարս օդ-օդաց տեղ չկոխա։
197(935). Թանկ հելանք,
Հեժան ծախվանք։
198(936). Թավեն հընգի՝ չջարդվի, ձեն կըլնի։
199(937). Թաց՝ չորի խետ կվառի։
200(938). Թե էնի պղնձի տակն ա, ես՝ էրեսը։
201(939). Թըխ ըսեն գեշ ա,
Թըխ չըսեն էշ ա։
202(940). Թըխ հրմեն զորանան, մեջն էլ մերոնք։
203(941). Թթու յա, թան չի,
Ամեն մարդու բան չի։
204(942). Թիլ ու կես՝
Հինքը դվնդ։
205(943). Թմաքար մարդու դագաղ կես մետր էլ
կարճ հեղի, մենակ ձրի հեղի։
206(944). Թռի՛, նոր հոպ արա։

207(945). Թքեմ վերև՝ ունքս ա,
Թքեմ ներքև՝ միրուքս ա։

208(946). Թքու իմ ձեռ,
Չարգեմ քու հերես։

209(947). Ժամից ես գուբյամ,
Տեր-օղորմին դու ա կասես։

210(948). Ժուկմ վարդ, ժուկմ գյուլ,
Ժուկմ էլ եղանք սև իշվանքին ջուլ։

211(949). Իմ ցեց՝ իմ անձից ա։

212(950). Իմ որձ կատուն հընգավ քու խոզ՝ դու կտրա, քու որձ կատուն ընկավ իմ խոզ՝ ես կտրեմ։

213(951). Իմալ գեղի նախիրն ա, էմալ պառվու մոզիկն ա։

214(952). Ինատ կէնա էլերուն,
Քամակ կտա գելերուն։

215(953). Ինչ օր տվեր ես քասախառ, էլ մի տուր անոսկոռ։

216(954). Ինչ օր բրդես հուրիշի քյասեն, գուբա քու գդալ։

217(955). Ինչ աղբրից ջուր կխմես՝ մի պղտորա։

218(956). Ինչ կամենաս ինձ, աստված կբերա քո հառեջ։

219(957). Ինչ կբերիր ծածկած, հընմի բեր բաց։

220(958). Ինչ փրթես՝ էն կուտես։

221(959). Ինչ շուն բռնինք, թաղի դուս էկավ։

222(960). Ինչ էշ նստանք, տ...ն դուս էկավ։

223 (961). Ինչ օր կովն ա, էն էլ հորթն ա։

224 (962). Լավ դրկեց վատ ախպորից լավ ա։

225 (963). Լավ ա գեշ, քան՝ էշ։

226 (964). Լավին՝ լավ, վատին՝ վատ։

227 (965). Լավին վատ չսես, վատին՝ լավ։

228(966). Լավ կնգա տեր հընմեն օր խարսնսի մեջ ա, վատի տեր՝ սգի։

229(967). Լավություն էրա քցա ծով, ձուկ չըհիմնա, աստված կհիմնա։

230(968). Լավության դեմ լավություն հընմեն մարդ էլ կըրնա էնա, վատության դեմ լավութեն՝ իգիթ մարդու գործ ա։

231(969). Լայեղ բը լայեղ,
Ախ չարոխ բը տրեխ։

232(970). Լեզուն չլնի՝ ագռավները աչքերը կըհանեն։

233(971). Լեզվի տակ օսկոռ չկա։

234(972). Լեզուն դանկից սուր ա։

235(973). Լինինք՝ չմոռնանք, ուտենք՝ չուրանանք, ասենք՝ չփոշմանենք։

236(973ա). Լցվան կժեր,
Ապրին ճժեր։

237(974). Խաչ տեր կենա զորավոր։

238(975). Խաչն իմն ա, զորությունը ես գիտեմ։

239(976). Խասից հիչա խամ,
Խամն էլ չծածկեց ծամ։

240(977). Խասկացողին՝ մեկ,
Չխասկացողին հազար ու մեկ։

241(978). Խավ էրազին կուտ կտենա։

242(979). Խավերուն՝ խավարած,
Քոռ անձղներուն էլ՝ քըչջած։

243(980). Խարամն կգա, խալալն կտանի։

244(981). Խաց դրած՝
Բանն անիծած։

245(982). Խացին փափա յա կասա։

246(983). Խայու օրորոց կոտրուկ ա։

247(984). Խայու փեշ վառուկ ա։

248(985). Խեր ըրիր էս, խերակորուս մի էրա։

249(986). Խեր կամեցի, օր խերու ռաստ գաս։

250(987). Խելոք գառն էրկու մոր կաթ կուտա։

251(988). Խելոք տղին տուն մի շիքա, հինք կլինի տուն կշինա,
Անխելք տղի տուն մի քանդա, հինք կհելնի տուն կքանդա։

252(989). Խզմաթ օր կիտաս մարդու, ըմալ տու, օր քեզի ցավ տա, առնողին էլ՝ խամ։

253(990). Խըլղի հաշկ որ մեզ լուս տա, մեր հաշկ ըզխ քոռնա։

254(991). Խինգ մանեքնոց իշուց, տաս մանեքնոց քուռակ չհեղի։

255(992). Խնձոր քիս ի,
Տանձը միս ի։

256(993). Խոսք մեկ, աստված մեկ։

257(994). Խոսկերու մեջ 61 առակ կա։

258(995). Խորուտ կնիկ կտիկ էրա,
Օրորոցին մտիկ էրա։

259(996). Խպարտ մարդ աստու դուշմանն ա։

260(997). Խրատ խնուն ի՞նչ կէնա, սապոն՝ սևուն, գրաբար՝ տղուն ի՞նչ կէնա։

261(998). Խրատին հանկաջ դնող ա պետք։

262(999). Խունկ ու մոմ ինք սրբերուն,
Ջուխ ու ծամոն հելանք բողերուն։

263(1000). Խուփ գլորավ վըր պտկին։

264(1001). Խուփ գլորվավ գտավ պուտուկ։

265(1002). Խուփը գլորավ, վըր կճճին առավ։

266(1003). Խևին՝ խրատ, սևին՝ ջուր։

267(1004). Ծակ քամկին՝ յորղան-դոշակ։

268(1005). Ծաղիկ գարնան օրով կբացվի։

269(1006). Ծաղիկ վըր քյոթքին կբուսի։

270(1007). Ծառի դառնութենից, պտուղն էլ կըդառնանա։

271(1008). Ծնողի կաղրն հիմցող, աստու կաղրն էլ կհիմնա։

272(1009). Ծուռ մարդու ջաղաց՝ աստված կաղա։

273(1010). Ծուռ գնաց խարսնիստուն,
Ըսեց.—էսի լավ ա, քանց մեր տուն։

274(1011). Ծոու խաց՝ խելառու փորն ա։
275(1012). Ծոու բախտ կուր ա։
276(1013). Կուզա՝ մի տա,
Կառնի՝ չի տա։
277(1014). Կամով նգն օր կով հեղի, կալի բոլոր կղդոդ կհեղի։
278(1015). Կառկառ դնաց բազար չոփ բերեց։
279(1016). Կարկուտ ծեծած տեղը կծեծա։
280(1017). Կարմիր կովը իր կաշին կփոխա՞։
281(1018). Կեթան օրերս,
Կապեք շորերս։
282(1019). Կիսուրն էկե՝ ծամ կուզա,
Կեսրարն էկե՝ խելք կուզա։
283(1020). Կնիկ՝ կնիկ ա,
Պատեր հրմեն պլիկ ա։
284(1021). Կնգա ֆելը
Բարձած սելը,
Ջքաշն ելը։
285(1022). Կնգա պուճուճակ սատանեն բուն ա դրե։
286(1023). Կնգա սևքն ու սեղան,
Մեկն էլ էկե կայնե փոխան։
287(1024). Կնիկ կա՝ մալը մուլք ա,
Կնիկ կա՝ սամուր քյուրք ա,
Կնիկ կա՝ հրթլի մուկ ա։
288(1025). Կոյրուկ շուշեն՝ էլ չկպի։
289(1026). Կոտկիրիրեն կոտից հելավ, կթքա վըր կոտին։
290(1027). Կոտրի քյասեն,
Ապրի փեսեն։
291(1028). Կրակ տաս՝ խանձրախոտ չիգա։
292(1029). Կուժը ջրի ճամփին կկոտրվի։
293(1030). Կուշտը սովածին չհասկնա։
294(1031). Համ նալին, համ մեխին կխփա։
295(1032). Հասոն շատ սիրուն էր, ծաղիկն էլ հանեց։
296(1033). Հավկիթ հուր ծերին չկայնի։
297(1034). Հարդն ա հուրիշին, խո՞ հարդամանն էլ քոնն ա։
298(1035). Հարուստի՝ խենթ, ախքտի՝ խիվանդ։
299(1036). Հարուստի՝ կատուն,
Քասբի՝ խաթուն։
300(1037). Հաց վըր ծնկան,
Հաշկ վըր կնկան։
301(1038). Հելնի սիրտ՝ կտրա գլոխ,
Հիջի սիրտ՝ չգտնի գլոխ։
302(1039). Հեռունգն ու միսը հիրարուց պոկվան։
303(1040). Հեռվանց էլու աչքն ա խանե, մոտվանց՝ տիրու։
304(1041). Հերեսանց հալլի, տկից ածըլի։
305(1042). Հըմնօր իծու օռն ա բաց, մեկ օր էլ՝ օչխրի։
306(1043). Հըմնուն ծով,
Վըր ընձիկ սով։
307(1044). Հըմնին՝ ծով,
Մեղի՝ սով։
308(1045). Հըմնեն հավք՝ հուր երամի խետ։
309(1046). Հընգավ սով,
Պախեց կով։
310(1047). Հընգերնենք ծով, օձին ա կփաթըթվենք։
311(1048). Հին էշին՝ թազա փալան։
312(1049). Հնցուկ տարվա ձան նման խալեր ա։
313(1050). Հորի մե ծառ հեղի՞ քամի չառնի։
314(1051). Հում կաթնակերին էյթխպար չկա։
315(1052). Հուր թանին թքու չի ասի։
316(1053). Հուրիշ տեղրանք մեկ-մեկ ծուռ,
Մշեցիք հըմնեն ծուռ։
317(1054). Հուրիշի աշկ՝ քո հաշկի տեղ լուս լիտա։
318(1055). Հուրիշի հաշկի մաղը կտենա,
Հուր հաշկի գերան չտենա։
319(1056). Հուշիկ քելիմ կըսեն՝ թուլ ա։
Շուշուռ քելիմ կսեն՝ ծուռ ա։
320(1057). Հուս տվող շատ կա, խաց տվող չկա։
321(1058). Ձառ ձառ կլվա, էրկու ձառ՝ հերես։
Ձառ ձառին մուխթաջ չհընգի։
322(1059). Ձեռաց խանգուց մի իցկա առմուն։
323(1060). Ձին ձիուն օր կապես, կամ կծան կլի, կամ քյուֆտան։
324(1061). Ձիանք նալեցին,
Կիրիրեքն էլ ոտ վերցուցին։
325(1062). Ձկի ումբրը ջրի մեջ ա։
326(1063). Ձվի գողն, ձի էլ կգողնա։
327(1064). Ձվածեղի սիրուն՝ թավի պոչ կլիզա։
328(1065). Ձուկ՝ ծով բաղաո մի էրա։
329(1066). Ձուկ բռնողի օռ կտղկի։
330(1067). Ձուկ ջրեն զատես, խոքին կիտա։
331(1068). Ձուկը ջրում կշոջնա։
332(1069). Ճիժ մահանա՝ մեր կշտանա։
333(1070). Ճրագ ա հուրիշի լուս չի տա։
334(1071). Ճրագն անձեթ չվառի։
335(1072). Ճրագն հուր տակ լուս չի տա։
336(1073). Ճուտը ձվից բալու կչնա։
337(1074). Մալը կուրհաավ, խոգին խետը։
338(1075). Մալին՝ տեր,
Տղին՝ խեր։
339(1076). Մալը գլխուն չկուրհսի։
340(1077). Մարդ կա շալ կխաքի շամի տեղ,
Մարդ էլ կա շամ կխաքի շալի տեղ։
341(1078). Մարդ կա մարդու բաղըմ կիտա,
Մարդ կա մարդու ճուքըմ չի տա։
342(1079). Մարդ շուն ըլնի,
Տան պուճուրը չըլնի։

343(1080). Մարդ հուրա կարպտի գյորա ոտը կպարզա։
344(1081). Մարդն օր կա՝ կնգա գլոխն ա,
Կնիկ օր կա՝ մարդու օտն ա։
345(1082). Մարդն հուր կաշուց կվախնա։
346(1083). Մարդի տփոց,
Վարդի տփոց։
347(1084). Մարդուց օր էշ չծնվի, էշու խատ մե միլոն կըլի։
348(1085). Մարդու մախ՝ հանգչի հետևն ա։
349(1086). Մարդու բալաք ներսն ա, տավրու բալաք՝ դուս։
350(1087). Մարդու հաշկ չկշտնա փողով,
Մինչև որ չլցվի մե բուռ խողով։
351(1088). Մարդամիջի մարդս ըլի,
Խաղար թիման պարտքս ըլի։
352(1089). Մաղ վըր գլխուն չկորի։
353(1090). Մալն օր տիրուն նման չհեղի՝ յա գողածուրիկ ա, յա գտածուրիկ։
354(1091). Մածուն ուտող շուն հետևից բելու կէնա։
355(1092). Մախն հընդերովի խառնիս ա։
356(1093). Մե փուտ մեղրով չտավի։
357(1094). Մե փուշ խոսք՝ մե մարդու տուն ա քանդում։
358(1095). Մե եկեղեցի քանդել, մե աղչկա անուն ավրել՝ մեկ ա։
359(1096). Մե մատով մեղր ա կլիզա, մեկով՝ եղ։
360(1097). Մեր շուն խըլղի դուռ կկոնգըստա։
361(1098). Մեր բաղի խաս մեյվեն էլ չոլի առջերը կերան։
362(1099). Մերը՝ մանուկն ուրացավ։
363(1100). Մեծ էշը ախոռն ա մացե։
364(1101). Մեծ ծովու ճամփեն մեծ կհեղի։
365(1102). Մեծի ըսած՝ Պղտկի լսած։
366(1103). Մեկ հաշկի սիրուն, հազար հաշկ կսիրա։
367(1104). Մեկ մեկու դարդ չգինա, կես դիշերին ժամ կասա։
368(1105). Մեկ տան գյմշտանք իրարուց չվախնան։
369(1106). Մեկ կա՝ հազար արժե,
Հազար կա մեկ չարժե։
370(1107). Մեկ՝ կնգա բան, մի կովի թան,
Մե տղի նան։
371(1108). Մեկու բախտ օր օղրի, ձին ախոռան էշ կդառնա։
372(1109). Մեկուճար՝
Ուտա բանջար։
373(1110). Մեկի օռն է էկե դուս, էն մեկ կասա տու տանեմ իմ ձագերն ուտեն։
374(1111). Մեղր ծախողն մատ կլիզա։
375(1112). Մեղրիկ՝ մատ-մատ,
Ջամշիկ՝ խատ-խատ,
Մեկ էլ տեսար՝ տեղ դարտակ։
376(1113). Մեռնողի ձին վազկան կեղնի։
377(1114). Մեռնիմ էն տաշտին,
Օր մեկն էլ կա խըտ կշտին։
378(1115). Մեռնի էն գլոխ, օր հուրնից պատող չկա։
379(1116). Մեռնելն՝ մեռնել ա,
Էլ խոխռալն ի՞նչ ա։
380(1117). Մգրախով ք..ն քիին չխասի։
381(1118). Մի տնաղնա հարևնիտ, գյուքա քյո գլոխ։
382(1119). Մի կնիկ՝ շեն տնիկ,
Էրկու կնիկ՝ հարամիկ,
Իրեք կնիկ՝ ջուր գա տանի էն տնիկ։
383(1120). Միս ուտող հավքի կտուց կեռ կհեղի։
384(1121). Մինչև Շուշան զարդրվի, խարսնիս կպրծնի։
385(1122). Մկան կըսեն հընչի՞ էս էդ ղդար պզդիկ։
Էս կըսե՝ կատվու դարդից։
386(1123). Մկան շեռը ջաղցին օգուտ ա։
387(1124). Մկան ծակին խազար թուման կիդա։
388(1125). Մշկուն՝ մշակ,
Կեղտոտ մարդուն՝ յորղան դոշակ։
389(1126). Մշկուն՝ մշակ,
Կեղտոտ օռուն՝ աբրշումի դոշակ։
390(1127). Մոզուն՝ տեր,
Ճժուն՝ խեր։
391(1128). Մոզած հորթին էյթիպար չկա։
392(1129). Մոր տես՝ աղչկան ուզա։
393(1130). Մոր օհնանքը օխտը վարդապետի աննեծք կքանդա։
394(1131). Մոր բախտ՝
Ախչկա թախտ։
395(1132). Մորից խելառին սըր Սարգիսն ի՞նչ անա։
396(1133). Մորուս չունեմ խոսկս չհընցի։
397(1134). Մուկն ուր ծակու դեմ առյուծ ա։
398(1135). Մունդաո շուն յոթ փողոց կավերա։
399(1136). Մուխը ոն քյաշա, փլավը ոն ուտա։
400(1137). Մուկն հընգե եղի կարաս։
401(1138). Յարան՝ տիրոջը ցավ կտա։
402(1139). Յա աղն ա պակաս, յա մաղը։
403(1140). Նա մարդանման, նա մարդախավան։
404(1141). Նամուսով մեռնել, աննամուս ապրելուց լավ ա։
405(1142). Նաչար՝
Կերեր ա բանջար։

406(1143). Նախիր վըր ձան չտեսանք, դավին՝
բոստան։
407(1144). Նախրի մեջ՝ էշի ճակատն ա պաքե։
408(1145). Նախրի մեջ՝ ուր էշն ա կխեծի։
409(1146). Նստեմ գոգդ,
Փեթթեմ մորուքդ։
410(1147). Շահեն բազի տեղ բու ա նստե։
411(1148). Շան կզարկեմ՝ տիրուն խաթր կանեմ։
412(1149). Շան հետից քաղցր ի՞նչ։
413(1150). Շան սատկելիքը օր գա, կնեա ժամի
դռանը կը..ա։
414(1151). Շան փեշակն ի՞նչ ա՝ օսկոռ կռծել։
415(1152). Շան՝ օլում չկա։
416(1153). Շան ոտ՝ Մշու դաշտ։
417(1154). Շան բերան ա՝ չիակվի։
418(1155). Շան պոչի պես կնեա-կիգա։
419(1156). Շան պետ ա, օսկոռ կուզա։
420(1157). Շուն օր կոնգստա, օսկոռ կթալենն։
421(1158). Շուն կապին պանրի տիկ։
422(1159). Շուն շնից հաղ կէնա։
423(1160). Շուն շան թաթ չծամա։
424(1161). Շուն նստե ծառու խով, գինա հուր
պոչի խովն ա։
425(1162). Շուն կոնգստալով կատակի։
426(1163). Շուն բնակուն Սողոմոնի տաճար։
427(1164). Շուն որ տուն օր լակ լկա, էնտեղ
էլ կկաշա։
428(1165). Շուն՝ շուն ա, յա բալաք ա,
յա նեշուն։
429(1166). Շուն՝ շնից,
էրկուսն էլ մե ջնսից։
430(1167). Շունը տիրոջը կճանչնա։
431(1168). Շունն էլ տեր պտի ունենա։
432(1169). Շնից մե մազմ էլ՝ օգուտ ա։
433(1170). Շատ բանողին՝ շալե շապիկ։
434(1171). Շատ ուտելը շան փեշագ ա։
435(1172). Շատ խորոտ էր, ծաղիկն էլ խանեց։
436(1173). Շատ խաղ գինամ, ձենս չի գա։
437(1174). Շատ լսե՝ քիչ խոսա։
438(1175). Շաքար հընգգ շան բերան։
439(1176). Շորերս խին ա,
Խոսկերս անգին ա։
440(1177). Ոն օր քե կծծղցու,
Էնի քե հետո կլացցու։
441(1178). Ոն լաչիկ թալեց՝ բաջի յա՞,
Ոն փափախ դրեց՝ հաջի յա՞։
442(1179). Ոն տուն չշինե, գինա սուն ու գերան
մեջն ա բուսե։
443(1180). Ոն օր չծեծա ճժուն պստի վախտ,
Հետո կծեծա հիրա ծնկեր։
444(1181). Ոն կերավ եղե ճմուռ,
Ոն քաշեց ջիգրի մրմուռ։
445(1182). Ոչ բռնեմ պահեմ, ոչ քցեմ՝ լամ։
446(1183). Ոչ կխամեմ ձեր վռիկ,
Ոչ կքշեմ ձեր խորիկ։
447(1184). Ով կերավ եղ ու ճմուռ,
Ով զարկեց գլուխն ի դուռ։
448(1185). Ոտդ յորղանիդ գյորա մեկնա։
449(1186). Որ հախպրից օր ջուր կխմես, էն
հախպրին քար մի թալ։
450(1187). Որբը գողության գնաց, լուսնակը
հիրիկվորե հելավ։
451(1188). Զգինա որն ա մեռե,
վայ վավլե՜ր կասա։
452(1189). Զիգա հետին, չհիշվի հառջին։
453(1190). Զլութ ջանին, կատու յա շլկե։
454(1191). Զկերանք փլավին, խելռանք խոտեն։
455(1192). Զոտողաց մալն, ոտողաց հալալ ա։
456(1193). Ջուր դժոխք լիգաս, արքայության
ճամփեն չճանչնաս։
457(1194). Ջուր Շուշան զարդրվի, ֆայտոն դռնեն
կհէլնի։
458(1195). Ջուրի կամուրջ հնցնելդ, շանն ասա
քեռիս ես։
459(1196). Պապեն շլոր ուտա, թոռի ատմներ
առվի։
460(1197). Պապը փլավ չուտա համաշա։
461(1198). Պառավու տղի մարիֆաթ ի՞նչ կհեղնի։
462(1199). Պասն էլ պաս հեղեր, քըխ մարդու
լիզուն էրեցեր։
463(1200). Պարտքը՝ տալով,
Մեղքը՝ լալով։
464(1201). Պետքն ի հող,
Անպետք ի շող։
465(1202). Պինդ բերնին, պինդ խմորին զավայ
չուրթի։
466(1203). Պինդ խմորին թայ չկա, պինդ բերնին
էլ թայ չկա։
467(1204). Պտուկ՝ քար թալե խոր,
ջոջ չկրցե խանի։
468(1205). Պուտուկն ըսեց,—ես օսկի եմ,
Սերոբն ըսեց,—Բա ես դո՞ր եմ։
469(1206). Ջաղաց էթողի գլոխը կալրտի։
470(1207). Ջիգրի մամուռ հորեն ա։
471(1208). Ջրի բերած ա, ջուրն էլ քըխ տանա։
472(1209). Ջրերն հընգան առվներեր,
Սերերն հնգան պառվներ։
473?1210). Ջրից հընել, ջրխղեղն հնգնել։
474(1211). Ջուր պստկին,
Խոսկը ջոջին։
475(1212). Ջուր հնգող, փրփռին ձեռք կթալա։
476(1213). Ջուր օր ջուր ա, հառջ չկապես՝
կցամքի։
477(1214). Ջուր օր գոլի՝ կնեխի։

478(1215). Ջուրը շատութենե կճապղի։
479(1216). Ջուրն ջաղացն ա տարե, էնի հնդե
ջախչխների հետև։
480(1217). Սաղ վըր սաղին,
Իշու պոչն էլ ախկտին։
481(1218). Սաղ չթողա, օր հիվանդ տնքա։
482(1219). Սատանի խաղը կամրջին ա բռնե։
483(1220). Սատանից փախա, դիվու ռաստ էկա։
484(1221). Սար ու ձոր,
Տերտրոջ փոր։
485(1222). Սերը սովորն ա կերե։
486(1223). Սերը սովորն ա կերե, ձվաձեղը՝
քավորը։
487(1224). Սոված փորին,
Ջուր տուր վըր օրին։
488(1225). Սոված ը հաց կտեսնի էրազում, ծա-
րավը՝ ջուր։
489(1226). Սովն օր հիջի, հառեջ թագավորի
փոր կհիջի։
490(1227). Սոխ ուտողի սիրտ կմռմռա։
491(1228). Սոխ ու հաց,
Սիրտդ բաց։
492(1229). Սերը՝ սուր,
Արունը՝ ջուր։
493(1230). Սերն աթարին ա կպե, աթարն էլ՝
պատին։
494(1231). Սար մանգիլը կարճ ա։
495(1232). Սուտ կասա, մեռածներին էլ շահադ
կբռնա։
496(1233). Սև շան ղարադուշ կկանչա։
497(1234). Սևին էլ նալլաթ, սիվտակին էլ։
498(1234ա). Սև հղ՝ ջրի մեջ պաղ կտենա։
499(1235). Սևին՝ սապոն, խևին՝ խրատ։
500(1236). Վայ փարա, բև չարա։
501(1237). Վատ դրկեց՝ մարդու ապրուստի տեր
կդարձու։
502(1238). Տալի շուշտակն հնդավ հերթկից ներս,
խառսի լեղին ճաքավ։
503(1239). Տանդ կատուն էլ պիտի սիրուն ըլի։
504(1240). Տանտիրոջը օրհնյա ի տեր չկա։
505(1241). Տաշուկ քար դեսին չմնա։
506(1242). Տարի կա՝ օր չարժե, օր կա՝ տարի
արժե։
507(1243). Տքա խիվանդ, ճոճա գդալ։
508(1244). Տղեն՝ գուլման, թոռ՝ գրկըթող։
509(1245). Տղին խեր,
Մալին՝ տեր։
510(1246). Տնե տուն՝ տուն կավիրի։
511(1247). Տունը չունի թանապուր,
Հինք կքելա հաքյաբուր։
512(1248). Տունս Սողոմոնի տաճարն էր, շուն
բնակռավ։
513(1249) Տուր՝ մի վախեցի, ա՛ռ՝ մի ամչցի։
514(1250). Տուն օր ջոջ չհեղի, մի ջոջ քար կղնեն
տան մեջտեղ։
515(1251). Ցորեն խացին կուտոշ կա։
516(1252). Ցռան մողին նախրի անունն ավի-
րեր ա։
517(1253). Ուլ մկմկալով ապրե, դառն անրռալ
սատկի։
518(1254). Ունեցողին մի զարդ, չունեցողին՝
հազար ու մի։
519(1255). Ուրբաթ շուտ էկավ, քան շաբաթը։
520(1256). Ուրագ դբա հուրան կքյաշա։
521(1257). Ուրիշի չվնով խոր մի մտի։
522(1258). Փախի քոռից, քյաչալից, թութալից։
523(1259). Փայ անողին՝ փայ չխասի։
524(1260). Փայտը ծուռ ա, վարպետը հմուտ։
525(1261). Փափախը դրեր ա, կուզե-կուզ կեթա։
526(1262). Փարեն՝
Փրկա չարեն։
527(1263). Փեշագի տեր՝ շուր կեսօր կմնա անոթի։
528(1264). Փեշքեշ ձիու ատամներ չեն հաշվի։
529(1265). Փիծուկ էշ ման կուգան, օր նալեր
քյաշեն։
530(1266). Փլավ վի՞ն ա տված, իշտահ վի՞ն։
531(1267). Փլավ ուտողի ք...ն կեր, ք...ք ուտողի
փլավ կուտվի՞։
532(1268). Փող ձեռի կեխտ ա։
533(1269). Փուշ՝ փուշ ա, հըմա մարիֆաթն
անուշ ա։
534(1270). Քամու բերած ա, քամին էլ կտանի։
535(1271). Քամակը քյաշել ա հերեսին։
536(1272). Քանի պզտիկ ինք՝ ջոջերուց
կվախնինք, մկա ջոջցեր ինք՝
պզտիկներուց կվախնանք։
537(1273). Քանց ջուր դացինք, քանց ավազ
մացինք։
538(1274). Քանի կեր օխլիկն ու ճաշիկ,
Ես ու տու կայան-կարդաշիկ.
Օր կտրավ օխլիկն ու ճաշիկ,
Բռնինք հիրուր բաշիկն ու քաշինք։
539(1275). Քար ուր գինն ունա։
540(1276). Քարն հիրա տեղն ա ծանդր։
541(1277). Քաշալ դեղ անող ա, հուր չոր գլխուն
կէենա։
542(1278). Քառասուն տարվա էշ ա,
ջաղջի ճամփեն էլ չճանչնա։
543(1279). Քեղնից արո՞ւն կեթա, ընձնից ջո՞ւր։
544(1280). Քիչ կար Ալոյ տուն,
էն էլ էկավ հընգավ շողտունն։
545(1281). Քյասբի մուխն էլ կծու կհեղի։
546(1282). Քյասպի մեկն՝ երկու չդառնա։
547(1283). Քյասպի տղեն վռկից կխոռա։

548(1284). Քյանի փոքր են՝ կծծեն,
Որ ջոջցան կկծեն։
549(1285). Քոռ իշուն՝ քոռ նալբանդ։
550(1286). Քոռ հառեջ կաս՝ քոռ, սաղին,
օր հուրին չանեն։
551(1287). Քոռու վե՞րչն ա, օր մամ քանկ աւ
552(1288). Քունը՝ քուն կբերի։
553(1289). Քուրդն իր քանին թքու չի ասի։
554(1290). Քրդից փաշա՞։
555(1291). Քրիստոսին քավոր հեղի, բեհն ինձանից ուզե։
556(1292). Քրիստոսի ավետրնին չավատան, էշի զռզռալուն կավատանե։
557(1293). Քրիստոսի դուռ խաց կուտա,
Մահմատի դուռ կխաղա։
558(1294). Քու փորձուկ քան՝ մի տու հուրիշի անփորձ մածնին։
559(1295). Օձն օր օձ ա, ջրու վրեն չկծա։
560(1296). Օձի կծած կլավնա, լեզվի կծած չսաղնա։
561(1297). Օղարթ խոսողի ձին քամբած կհեղի։
562(1298). Օջախն հեղավ պուճախ։
563(1299). Օսկին հեղե ձիավոր։
564(1300). Օսկին կավի մեջ կփելա։
565(1301). Օսկին մըչ կավուն էլ կփիլա։
566(1304). Օր մդիս գեղ, բան խառցու՝ ճժուց ու ծռուց։

## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1(1305). ԵՐԿԻՆՔ
Տունըմ կա
Սունըմ չկա։

2(1306). ԵՐԿԻՆՔ, ԱՍՏՂԵՐ
Մաղով խավկիթ՝
Հերթսի վրեն դրուկ աւ

3(1307). ԵՐԿԻՆՔ, ԱՐԵՎ, ԼՈՒՍԻՆ
Թավեմ, էրկու ձուկ,
Մեկ տաք, մեկ պաղ։

4(1308). ԱՐԵԳԱԿ, ՍՏՎԵՐՆԵՐ
Պապին նստե վըր հերթկին,
Ձեռ ֆսե վըր մորուք։

5(1309). ԱՐԵՎ ՇՈՂ
Ավլեցի,
Օսկե սուն կայնցուցի։

6(1310).
Դռներ բոլոր փակ գյտան,
Ակռչկից ներս մտան,
Մինչև հիրկուն մացին,
Մութ տվեց հելան գյացին։

7(1311). ԱՄՊ
Թևեր չունի թռչում ա,
Բոլոր երկիր շրջում ա,
Որտեղ իշնի, էնտեղ թրջում աւ

8(1312). ՏԱՐԻ, ԱՄԻՍՆԵՐ
Մի ծառ՝ տասվերկու ճղեն։

9(1313).
Ջորս չորթան,
Տըսվերկու սուլթան,
Հելան հիրուր կերթան։

10(1314). ԳԻՇԵՐ
Սև արաբն բեղն օլրեց,
Խազար մարդ գլորեց։

11(1315). ՔԱՄԻ
Խոքի ունա,
Քանդակ չունա։

12(1316). ՈՐՈՏ
Սարեն, ձորեն կգոռգոռա։

13(1317). ԿԱՐԿՈՒՏ
Նստիմ հով,
Կրտիմ կով,
Ջմփիդ գարգիմ,
Պադիմ ծով։

14(1318). ԾԻԱՄԱՆ
Էն ի՞նչն ա յոթ գույնանի աւ

15(1319).
Լուս թռավ լուս կարպտին,
Ճվտիկ կապեց դիվանխանին։

16(1320). ՆՈՒՌ
Ուլուլիկ, պուլուլիկ,
Մեջը լիքը շողան ուլինգ։

17(1321).
Քառասուն խաթուն,
Մեկ տուն։

18(1322).
Աման ունեմ՝ պուլիկ
Մեջը լիքը ուլինգ։

19(1323). ԶԱՐՈՒԿ
Էն ի՞նչն ա,
Շրիդ չրին, հորթ ուռավ։

20(1324).

*Դրսից կանաչ գմբեթ, ներսից՝ ոչ։*

21(1325).

*Նեղ փողան,*
*Հերկեն սողան,*
*Սարկավագներ մեջ կդողան։*

22(1326). ԲԱՆՋԱՐ

*Խանելիք,*
*Խանմանելիք,*
*Մերը՝ ծաղիկ,*
*Տակն ավելուկ։*

23(1327). ՇԱՂԳԱՄ

*Պապեն խող՝*
*Միրուք շող։*

24(1328). ԿՈՐԻՉ

*Ջին՝ ձոր,*
*Քուռակը՝ փոր։*

25(1329). ԿԱՂԱՄԲ

*Քըրչ վըր քըրչին,*
*Քըրչ վըր քըրչին։*

26(1330).

*Մի պաբեխ քառսուն քուրք հագեր*
*ա, կդողա։*

27(1331).

*Պառավն կա,*
*Ցոթ յորղան կքյաշա վրան։*

28(1332). ԾԱՌ, ԱՅԳԻ

*Մե կով ունեմ, ամառ կկթվի,*
*Ձմեռ ըսկի տուն չի գյա։*

29(1333). ՄՐԳԻ ԾԱՌ

*Նստիմ վրեղ,*
*Քեղի թեթվցում,*
*Ընձի ծանդրցում։*

30(1334). ՓՇԱՏ

*Մեջը փետ՝*
*Վրան ալյուր։*

31(1335).

*Կաշին՝ շեկ, միսը՝ սպիտակ,*
*ոսկորը՝ սև,*
*Շատ ժամանակ կաշին կթափա,*
*մերկ ոսկոր կմնա։*

32(1336).

*Շորեր ա, կարուկ չէ,*
*Փետ ա տաշուկ չէ,*
*Ալուր ա, աղցուկ չէ։*

33(1337). ԿԱԿԱՉ

*Սրտիկ սևավոր,*
*Մաղիկ թևավոր։*

34(1338). ՀԱՎ, ՁՈՒ

*Բրուտ, բրուտ, բրման,*
*Նա օռ կա, նա՝ աման։*

35(1339). ՁՈՒ

*Հինք մե պուչուր քաղաք,*
*Բոլոր արծաթ, մեջ ոսկի,*
*Որ ավիրավ՝ չսուրվի։*

36(1340). ԲԱԴ

*Էն ինչն ա, բալես ջուր չքրչի։*

37(1341). ՍԱԳ

*Թալեմ ջուր, չքրչի։*

38(1342). ՁՈՒԿ

*Փլստան,*
*Հերկեն լեսան,*
*Ջրեն հընցան,*
*Ջտեսան։*

39(1343).

*Գեղով հընցա չտեսա։*

40(1344). ՋՈՐԻ

*Մնվում ա, հըմա չի ծնում։*

41(1345). ՁԻ-ՁԻԱՎՈՐ

*Ջորս ոտ վըր հողին,*
*Երկուսը վըր կողին։*

42(1346). ԿՈՎԻ ԿՈՒՐԹՔ

*Փուլըմ կա,*
*Փլի տակ չորս հրեշտակ կա։*

43(1347).

*Ջորս հրեշտակ,*
*Մեկ բլրի տակ։*

44(1348).

*Ջորս ախպուր*
*Մեկ փլի տակ։*

45(1349). ՓԵԹԱԿ, ՄՈՄԱԹՈՐԹ

*Անջուր ջաղաց,*
*Անկրակ բաղարջ։*

46(1350). ՄՐՋՆԱՆՈՑ

*Գում մը ունիմ,*
*Խաղար գլուխ օչխար կտանա։*

47(1351).

*Մե տուն ունեմ՝*
*Խաղար ջան։*

48(1352) ՕՁ

*Սլե, սլե, սլեման,*
*Նիշուն թեբուր, թարքաման,*
*Ոչ կնգնի, ոչ չիման։*

49(1353).

*Օլրման, նիշուն թումբան*
*Նա դին ունի, նա իման։*

50(1354).

*Արծթե կըրման,*
*Նա գյավուր, նա մուսուլման։*

51(1355). ԱՁՔԵՐ

*Երկու հղ ունեմ՝ աշխարհ կվարի,*
*կցանի։*

52(1356). ԲԵՐԱՆ, ԱՏԱՄՆԵՐ

*Մարագ ա,*
*Մեջը լիքը ուրագ ա։*

53(1357). ԱՉՔԵՐ, ՔԻԹ

*Երկու քույրիկ հուխտ կերթան,*
*Ես էլ գիտեմ ջուխտ կերթան,*
*Մի բլուր նրանց կբաժանի։*

54(1358).

*Սև սալա, սիվտակ սալա,*
*Խաթուն միջին կխաղա։*

55(1359). ՇՐԹՈՒՆՔՆԵՐ

*Արի, արի, չի գա*
*Մի գա՝ կիգա։*

56(1360). ԲԵՐԱՆ–ԱՏԱՄՆԵՐ

*Մութ ախոռ,*
*Ճերմակ ձիանք։*

57(1361). ԲԵՐԱՆ–ԱՏԱՄ

*Լեզու*
*Պատիկ մաշիկ՝*
*Դոմշու կաշի,*
*Ոչ կհալի*
*Ոչ կմաշի։*

58(1362).

*Ջուռնի տակ մարագ,*
*Մարագ՝ լիք ուրագ։*

59(1363). ԳԴԱԼ–ԲԵՐԱՆ

*Բևռնով, բարձով, հղ*
*Նև մտավ մարագ։*

60(1364). ՈՋԻԼ–ԵՂՈՒՆԴՆԵՐ

*Սարեն թալեմ՝ չկոդրի,*
*Ձորեն թալեմ չկոդրի,*
*Թալեմ էրկու քարի արանք*
*կկոդրի։*

61(1365). ԱԿԱՆՋ

*Ինչ օր թալիս՝ մեջն ա կեթա։*

62(1366). ՔՈՒՆ

*Կշեռքով չեն քյաշի,*
*Բազառ չեթա,*
*Նրանից քյաղցր բան չկա։*

63(1367). ՔՈՒՆ, ԱՂ, ԿՅԱՆՔ

*Աշխարքիս մեջ*
*Ի՞նչն ա քաղցր,*
*Ի՞նչն ա խամով,*
*Ի՞նչն ա քանդյ։*

64(1368). ՄԱՀ

*Ի՞նչն ա որ դու չգինաս, ոչ ես,*
*Ի՞նչն ա դուն էլ գինաս, ես էլ։*

65(1369).

*Համ գինա, համ չգինա։*

66(1370). ՄԵՌՆԼ

*Էն ի՞նչն ա, միսը կտրես՝ չզարքի։*

67(1371). ՏՐԵԽ

*Կապեմ՝ կվազի,*
*Արձակեմ՝ կկայնի։*

68(1372). ԳԼԽԱՐԿ

*Կատվից ցածր,*
*Մարդից բարձր։*

69(1373). ՅԱՓՆՋԻ

*Սև սատանեն՝*
*Պատեն կախ։*

70(1374). ՏՐԵԽ

*Կապես՝ կեթա,*
*Արձկես՝ կկայնի։*

71(1375). ՄԱՇԻԿ

*Երեսը՝ օչխար,*
*Տակն՝ գյոմեշ,*
*Կոլքուղ տվեց*
*Ջուրն հընցավ։*

72(1376). ԿՐԾՔԻ ԿԱԹ

*Գինը բանդյ ա,*
*Շատ էլ անուշ ա,*
*Բազառ չէթա,*
*Բաղրդյան չծախա։*

73(1377). ԱՂԱՆՁ

*Քարե գոմ,*
*Տռճկան իծվանք։*

74(1378). ՕՂԻ

*Էն ի՞նչ բան ա, առաջ մեղր ա,*
*Հետո թույն։*

75(1379). ԼԱՄՊԻ ՊԱՏՐՈՒՅԳ

*Օտուց կիտան,*
*Բերնից կքաշեն։*

76(1380). ՊԱՏՐՈՒՅԳ, ԲՈՑ

*Էն ի՞նչն ա,*
*Օձ՝ բերնին ծաղիկ։*

77(1381). ՃՐԱԳ

*Գոլմ կա,*
*Գոլի նե վարդմ՝ կա,*
*Վարդի նե օձմ՝ կա։*

78(1382). ՃՐԱԳ, ԼԱՄՊ

*Մեր դուռ գոլ մի կա,*
*Գոլի մեջ օձ մը կա,*
*Օձու բերան վարդ մը կա։*

79(1383). ԾՈՒԽ

*Էն ի՞նչն ա.*
*Դավայեն ճոշ, ալրեն մանդր։*

80(1384). ԹՈՆԻՐ, ԳԱԹԱ

*Ջանեմ ափին,*
*Հնգնի խփին,*
*Գեզն՝ օչխարին,*
*Դառ՝ կրակին։*

81(1385). ՅԼՍԱԽՈՏԻ ԳԼԱՆԱԿ

*Ինչքան քաշես՝ կկարճանա։*

82(1386). ՍԵՂԱՆԻ ՈՏՔԵՐ, ՆԱԽՎ ԱՌԱՍՏԱՂ-ՍՅՈՒՆԵՐ

*Ջորս եղբայր մի գդակ ա դրած։*

83(1387). ԱՎԵԼ

*Քստաց հիդա,*
*Քստաց հինա,*
*Հռկավ, նստավ հինա։*

84(1388). ՁԻԹԱՀԱՆՔ

*Ալաջա միզար,*
*Դիվանա գյաղար,*
*Ճլճլիկ հախպուր,*
*Բարձր ա մարատուզ։*

85(1389). ՍԱՅԼԻ ԱՆԻՎ

*Մեկ կա՝ երկու դուռ ա, մեկ տուն ա,*
*Տավերկու սուն ա, մե գերան ա։*

86(1390). ՋՐԱՂԱՑՔԱՐ

*Ունեմ քարե զավակ,*
*Քանի գաղի՝ փորն ա դատարկ։*

87(1391). ՄԿՐԱՏ

*Մատ դնեմ օձին՝ օրոճա։*

88(1392). ՄԿՐԱՏ

*Թազի,*
*Վըր պատին կվազի։*

89(1393).

*Էրկու գլոխ՝ մե պոչ։*

90(1394). ՋՐՀՈՐ

*Էրկեն աղչիկ՝ շուք չկա։*

91(1395). ԱՍԵՂ–ԹԵԼ

*Կոկոլ խավմ կա,*
*Քանի էրթա դարի հետև,*
*Պոչն օռեն կերևա։*

92(1396). ԽՆՈՑԻ

*Խևցե տուն,*
*Կաշե դուռ,*
*Մաղե պալիս։*

93(1397).

*Կպուն փուլ ա,*
*Կէրթա, գա,*
*Փորիդ բարև կէնա։*

94(1398). ԵՐԿԱՆՔ

*Մենի մե հավ ունենք*
*Պորդից կուտ կուտա։*

95(1399).

*Ջուլմ թալմ տակդ,*
*Ջմփղմփուն քցեմ ծակդ։*

96(1400). ԻՆՔՆԱՏՈ

*Ջորս կրաղ չուր,*
*Մեջը կրակ։*

97(1401). ԿՇՆՈՔ

*Երկու տուն,*
*Վեց սուն,*
*Մե գերան։*

98(1402). ԳԵՐԱՆԴԻ

*Էն ի՞նչն ա,*
*Ամա՜ն, ամա՜ն, գել ա գալի,*
*Սարեր ամրողջ վեր ա տալի,*
*Աչեր չունի ման ա գալի,*
*Ոտքեր չունի, տուն ա գալի։*

99(1403). ԴԵՐԱՆ ՔԱՇԵԼՈՒ ՄԵՔԵՆԱ

*Ջաղաշ ա, ջաղաշ չի,*
*Ալուր կաղա, ալուր չի,*
*Բերնից կիդան, օտուց կքաշեն։*

100(1404). ՍԱՋ

*Առնեմ ձեռս՝ ձեն կուտա,*
*Դնեմ գեղին՝ ձեն կկտրա։*

101(1405). ԹՄԲՈՒԿ

*Բուխերիկ,*
*Քյո մոր խերիկ,*
*Ինչքյան ղանես,*
*Ջասա խերիկը։*

102(1406). ՀՐԱՑԱՆ

*Մխսը էրկթից*
*Հագուստը՝ փայտից։*

103(1407). ԳԻՐ

*Ձեռով գրեմ,*
*Աչքով քաղեմ։*

104(1408). ՈՍԿԻ

*Էն ի՞նչն ա խողի մեջ չփթի։*

105(1409). ՆԱՎ

*Կէքա, կէքա, իզ չկա,*
*Դառնա հետ՝ քոզ չկա։*

106(1410).

*Կէրթա, կէրթա, կիրիշկա,*
*Իշկեմ հետև՝ քոզ չկա,*
*Պախեմ՝ ջան չկա,*
*Մորքեմ՝ արուն չկա։*

107(1411).

*Նստա հով,*
*Կքի կով,*
*Ջմփիկ զարկի,*
*Գացի ծով։*

108(1412).

*Երկնքին սյուն չկա,*
*Թավին ծածկոց չկա,*
*Ձկան մազ չկա,*
*Ծտին ոսկոռ չկա։*
*Հավք մը կիջի երկնքուց*
*Ոսկե լազան էր կտուց,*
*Հա էրեց, դու էրեց,*
*Աշխարքից չորս բան չտարավ։*

109(1413). ԱԴԱՄ, ԵՎԱ

*Ամպն էկավ՝ խով բերեց,*
*Եզն ծնավ՝ կով բերեց։*

110(1414).

*Երկինք՝ խով, գետին՝ ծով,*
*Եզն ծնավ, բերեց կով։*

111(1415). ՀՈՎՀԱՆ ՄԱՐԴԱՐԵ

*Էն ո՞րն էր՝ գրին գերեզման,*
*Գերեզման շարժուն և գնայուն*
*եղավ։*

112(1416). ԵԼԻՍԵ

*Էն ո՞ն էր՝ քյսան խացով,*
*խարիր մարդու գոհացուց,*
*Գոհացուց, լիացուց,*
*Երկինք բարձրացուց։*

113(1417). ԱԲԵԼ

*Էն ո՞ն է, գրին խող,*
*Խողն ասաց. ես կույս եմ...*

114(1418). ՄԱՐԴ

*Էն ինչն ա. խող էր*
*Խող դառավ։*

## ՕՐՀՆԱՆՔՆԵՐ

*1(1419). Ախրդ խեր հէղի։*
*2(1420). Աշկի լուսով ծերնաս։*
*3(1421). Աստված բլակներիդ ուժ տա։*
*4(1422). Աստված քեզ շինի հազար ճղեն։*
*5(1423). Աստված պահի քեղ քո հոր համար։*
*6(1424). Աստու աջը քի պահապան։*
*7(1425). Աստու օրհնություն լավ մարդկանց վրա հեղի։*
*8(1426). Աստուն դիլաք եմ էրեր, օր քու կյանքում վատ օր չտեսնաս։*
*9(1427). Աստու օրընիք թափի վըր քեղի։*
*10(1428). Աստու բերանն օրընի քեղ։*
*11(1429). Արեգ հէրկեն ըլի։*
*12(1430). Դուռդ փակես, հերթկից լցվի,*
*Հերթիկ փակես, դռնից լցվի։*
*13(1431). Դրախտի արքայության բաժին հըլնես։*
*14(1432). Երգրին խաղաղություն։*
*15(1433). Ջորանաս, փառավորվես, հէրկեն արև ըլնես։*
*16(1434). Թասն ընձի, աստու բարին ձեղի։*
*17(1435). Էն հանդեն դրախտն էքաս։*
*18(1436). Էն սըբ խաչ, սըբ Ավետարան քի պահպան։*
*19(1437). Էն անղնեկի տակով հընցնես։*
*20(1438). Էնա Մարութա սըբ Աստվածածին քի օգնական։*
*21(1439). Օխտը որդով սեղան նստես։*
*22(1440). Խոքիդ Հերուսաղեմա աջակողմին դասվի։*
*23(1441). Խոքիդ դրախտի դռնով մտնի։*
*24(1442). Մլես, ծաղկես, ղորանաս։*
*25(1443). Մլես, ծաղկես, մեջը նստես։*

26(1444). Հայր Աբրահամու օրհնանքն առնես։
27(1445). Հայր Աբրահամու օրշնիքը վրդ։
28(1446). Հակոբ Հայրապետի օրշնիքը վըր քզի։
29(1447). Ձեր ծառ ու ճղեր կանչնան։
30(1448). Ձեռդ քարի քալես՝ օսկի կտրի։
31(1449). Մե պատդ օսկի հըլնի, մեկն՝ արծաթ։
32(1450). Մե բարձի ծերանաք։
33(1451). Մեկ դնես, հազար վերցնես։
34(1552). Մուրազդ գետի կարմնջով հնցես։
35(1453). Մուրազդ արևով հըլի։
36(1454). Պատերդ օսկով շարես։
37(1455). Ջրի պես երկար կյանք ըլնես։
38(1456). Սիմոն ծերունի հըլնես։
39(1457). Սիվտակ մորուս ըլնես։
40(1458). Ուրախ սրտով, ցամաք աշկով սեղան նստիս։
41(1459). Քար քալես, օսկի բռնես։
42(1460). Քու հալալ ճակտի քրտինքը քեզի խսմաթ հէղի։
43(1461). Քրիստոսի օրշնիքը քու տոհմի վրա էղնի։
44(1462). Քու ծնող դրախտեն հէղի։

## ԱՆԵՄՓՆԵՐ

1(1463). Աղոթեմ՝ աղ առնես,
Բարակ-բարակ ցավ առնես,
Ջարծնես ատամացավից,
Գլխացավով տապակվես։
2(1464). Ախրդ ոչ ու փուշ ըլի։
3(1465). Աղ ու հացը հաշկդ բռնա։
4(1466). Անձդի կատար ըլնես։
5(1467). Անիծում եմ.
Կերդ կորնկ ըլի,
Գարին հետը կողդ։
6(1468). Անիծում եմ. չգտնես խամ կտավ,
անես արխալուղ։
7(1469). Աչքիդ սևը սպիտակ անես։
8(1470). Անտակ ծովին ռաստ գաս։
9(1471). Առնողդ չտեսնի քու խերը։
10(1472). Աստված քոր տա, եղունգ չտա։
11(1473). Աստու անիծք վրդդ հէղի։
12(1474). Աստված քո տուն ավրի։
13(1475). Արևդ խըմբի։
14(1476). Արևն օր դուս կիգա, քեզի չդիպչի։
15(1477). Բաբելական կրակ թափվի վըր քե։
16(1478). Բալի երես չտեսնես։
17(1479). Բախտեբախտ ընկնես։
18(1480). Բերանդ կոտրվի, չորանա։
19(1481). Բերնիցդ դուս գա, ծոցդ լցվի։
20(1482). Բեմուրազ մնաս։
21(1483). Բկիդ կայնի։
22(1484). Բռնողդ մեկ ըլի, փրթողդ՝ հազար ու մեկ։
23(1485). Գաբրիելը քեզ տանի։
24(1486). Գելերու, շներու փայ դառնաս։
25(1487). Գեհինը մտնես։
26(1488). Գիշեր-ցերեկ խաչվես, իմ դեմ կայնես։
27(1489). Գլոխդ ցավեմ։
28(1490). Գլխիդ գլխավոր չըլի։
29(1491). Գլխիդ կրակ թափվի։
30(1492). Գյարդանդ խըխմի։
31(1493). Գյոռբագյոռ ըլնես։
32(1494). Գյոռին չմնաս, շան, գելի փայ ըլնես։
33(1495). Գյուլլախորով ըլնես։
34(1496). Գրողի գիլլեն զանեմ ջիգրիդ օրթլաղ տեղը։
35(1497). Գրողի դավթրում գրեմ անունդ։
36(1498). Գրողի փայ դառնաս։
37(1499). Գրողի ծոց գնաս։
38(1500). Դատաստան չմտնես, պատասխան չի տաս։
39(1501). Դժոխքի ծնունդ։
40(1502). Էլած-չեղածդ շան, գիլու բաժին դառնաս։
41(1503). Թաղա մնան շորերդ։
42(1504). Թունդիրդ անկրակ մնաս։
43(1505). Ժողովրկանություն էնես։
44(1506). Լավ օր չտեսնաս,
Կանաչ տեղ էթաս քար դառնա, վրդդ թափի։
45(1507). Լավ օր ու արևի կարոտ մնաս։
46(1508). Լեզուդ պապանձվի։
47(1509). Լեզուդ չորանա։
48(1510). Խող ու փոշին վըր քո արևուն։
49(1511). Խողը գլխուդ, փոշին՝ արևուդ։
50(1512). Խողը գլխիդ։
51(1513). Խոքիդ կպրև կարաս ընդնի։
52(1514). Ծակ ու պատրուք ապրես։
53(1515). Կանաչ թաբուքը դնեմ։
54(1516). Կանաչդ չորանա, չոր քարին կպչի։
55(1517). Կարոտ դավլաքիդ ու փափագով գանձիդ մնաս, բալքի։
56(1518). Հաղամ պուպուզ տեսնաս, լաս։
57(1519). Հաշկի լուսից հընգնես, խավարես։
58(1520). Հաշկդ բռնա։
59(1521). Հավուր դատաստանին ռաստ գաս։
60(1522). Հընկնավորես։
61(1523). Հորդ օջախը վարենք, ցանենք։
62(1524). Ձեռդ՝ ծոցումդ, աչքդ հուրիշին մնաս։

63(1525). Ձեռդ ծոցդ մեռնես։
64(1526). Ձեր մեռել շուն դառնա։
65(1527). Մեռնիս՝ քար քաշող չունենաս։
66(1528). Մահրդ թափվի։
67(1529). Մուխդ մարի։
68(1530). Մուրազդ փորդ։
69(1531). Մուրազդ հետդ խորեմ։
70(1532). Նաշդ կապել եմ։
71(1533). Նստես՝ միսդ թափվի,
կայնիս՝ օսկռներդ։
72(1534). Ո՛չ ծաղկես, ո՛չ կանաչես։
73(1535). Պատանքդ կարեմ։
74(1536). Պատերի տակ խորեմ քեզ։
75(1537). Սևալաչի՛կ, սև սի՛րտ։
76(1538). Սևավո՛ր, սևալաչիկ, սևաջրած։
77(1539). Սևավորուկ, սևալաչակ։
78(1540). Սևն ու սուգը բաժին ընկի քեզ։
79(1541). Սև գա քու հետքցողի ջանն։
80(1542). Վարամ խանես, վարամուտես,
Մռմռաս, մռմռավորես։
81(1543). Վարամ թալուկ։
82(1544). Վարամ կապես։
83(1545). Վիղդ ծուռ մնա։
84(1546). Տաք քնես, պաղ հելնես։
85(1547). Տերևաթափ ընկնես։
86(1548). Տիրամոր յարով տապակվես։
87(1549). Տնկի ընկնես, բնիդ չորնաս։
88(1550). Ցավ ուտես, մարգյամուշ ուտես։
89(1551). Փորդ լիք, ձեռդ դատարկ։
90(1552). Քյո օսկռներ շներու փայ դառնան։
91(1553). Քո բալեն քո գրկի մեջ թփրտաս։
92(1554). Քո խեր, ախպեր խորեմ։
93(1555). Քո բերան կոտրեր։
94(1556). Քո խոքուն խոքի չխառնվի։
95(1557). Քու խոքին կպրե կարաս վառի։
96(1558). Քու տարողի դուռը սև քարով շարվի։
97(1559). Օխտը շապիկ միս թափես։
98(1560). Օր ու արև չտեսնես, կուշտ փորով հաց
չուտես։

## ՀՄԱՅԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՂՕԹՔ ՆԻԵՐ

### ՁԱՐ ԱՁՔԻ ԱՂՕԹՔՆԵՐ

1(1561).

Օձեր էկան կչկչալով,
Կթեցի, մերեցի,
Խարկած կժեր լցեցի,
Անդ ու ծովեր քցեցի,
Ձար աչքի տիրոջ կերցուցի.
Թե աչքից, թե տակից,
Թե էգից, թե որձից,
Ձար աչքն, չար նազարն,
Գեղնի տակն էթա,
Անտակ ծովերեն հեղի։

2(1562).

Տեր ողորմյա,
Ներյա, քավյա,
Թողուն շնորհյա,
Մեղաց փրկյա,
Ձար աչքեն ազատե,
Ձար աչք՝ չա՛ր փուշ,
Հիսուսի ալմաստով
Կտրեմ չար աչքը։

3(1563).

Աղոթ կչենեմ ութ մատով, էրկու բթով,
Մաքուր Մայրամ Աստվածածնի
ծծի կաթով,
Ուսի, ուսին,
Տախտակը փակ Քրիստոսին,
Քյնար Դավիթին,
Գավազան Գափրելին,
Իրեք պիպեռ կա սուրբ Քրիստոսին,
Մեկ զանա չար նազարին,
Մեկ զանա ավեր բանին,
Մեկ զանա չար ճանապրհի։

4(1564).

Տեր աստված, մարդասեր,
Մարդասեր հոր որդին,
Պահապան և օգնական
Ի քո ողորմությամբ պահյա,
Ձար աչաց և չար լեզվից,
Երևելյաց և աներևույթից,
Եվ ամենայն որոգայթից,
Ձար աչքը՝ չար փուշ, բարկ կրակն,
Ձար աչքը պատռի և անատակ ծովն
ընկնի,
Ի ծառայկա (անունը) պահյա ի չար
աչաց
Եվ չար լեզվեն և ամենայն որոգայթից
Ամեն....

5(1565).

Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ,
Ձար աչք ի չար փուշ,
Ձար աչք ի դառնա ուր տիրու վրեն.
Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ։

6(1566).

*Ո՛վ Դանել Մարգարա,*
*Ջուրն ի գինին,*
*Ավազն ի գարին,*
*Ջար էրազ՝ դառնա բարին։*

7(1567).

*Քրիստոս գալած*
*Ջար խափանած,*
*Աջակողմին, ձախակողմին։*

ԳԱՅԼԿԱՊԻ ԱՂՈՐՔՆԵՐ

8(1568).

*Էրկու բթով,*
*Դիլու աստմ գուլ էղի,*
*Դիլու ակնջներ խուլ հեղի,*
*Ոտերը թուլ հեղի,*
*Ը՛ւ, ը՛ւ։*

ԾՆՆԴԿԱՆԻ ԱՂՈՐՔՆԵՐ

9(1569).

*Հելնք, տեսնք ոն գուքա,*
*Թազա խացի խոտ գուքա,*
*— Հիսուս Քրիստոս, Մայրամ*
*աստվածածին.*
*— Դո՞ր կերթա։*
*— Դուռն հիվնդին,*
*Հերթիկ տղացկնին,*
*Բալնիս թալին, դռներ բացին,*
*Չվախենաս, չուր Քրիստոս գա*
*դատաստանին։*

10(1570).

*Հելնք տեսնք՝ ո՞վ կուգա,*
*Թազա խացի խոտ գուգա.*
*— Հիսուս Քրիստոս, Մայրամ*
*Աստվածածին*
*Դո՞ր կերթաք*
*Դուռն ի վզին,*
*Հերթիս տղացկնին,*
*Բալնիս թալեմ,*
*Բոլոր բացեմ,*
*Չվախենա սիրտն ի փորին,*
*Ջուր Քրիստոս գա դատաստանին։*

ՁԱՐԽԱՓԱՆԻ ԱՂՈՐՔՆԵՐ

11(1571).

*Ճրագ, ճրագ ճշմարիտ,*
*Կոստանտինոս, Մարտիրոս,*
*Իմ սիրելի Քրիստոս*
*Հնծավ ուր ձին ու ջորին,*
*Գնաց Անդաբերդ քաղաք,*
*Քաղեց անթառան ծաղիկ,*
*Շիքեց մի պսակ,*
*Ջարկեց Մայրամու գլոխ.*
*Մայրա՛մ, դու ը՞ւն իս, թե՞ արթուն.*
*Ամեն չարից փրկա դիս։*

12(1572).

*Սուրբ Սարգիս, հո՞ւստ գուքաս,*
*հառնչ կերթաս.*
*Հովսեփ, Մովսես, քաղքից կգաս,*
*Փուռվառ ունես բոցեղեն,*
*Ժնջիլ ունես, օխտը տեղեն.*
*Հառչի բերան խավ խոսեցավ,*
*Քրիստոնյա, Քրիստոս գալես,*
*Ջար խափանես։*

13(1573).

*Սուրբ Սարգիս, անունդ պարիսպ,*
*Հո՞ւստ կգաս, հո՞ւստ կերթաս։*
*— Ալաժմվա քաղաքից։*
*Փուրվարթ ա լուսեղեն,*
*Դավազանտ էր հրեղեն.*
*Ավուր կանչա իրեք անգամ,*
*Ազատվես չարեն, չարքեն։*

14(1574).

*Սբր Սարգիս, դու հո՞ւստ գուքաս,*
*հառնչ կերթաս*
*Հովսեփ, Մովսես, քաղքից կիգան*
*Փուրվառ ունիս, բոցեղեն*
*Ջնջիլ ունիս պողպատեղեն,*
*Հառչի բերան խավ խոսեցավ.*
*Քրիստոներ գալ բարեցան,*
*Քրիստոս գալեն չարք խափանվան։*
*Ամեն....*

15(1575).

*Ալալոս, թալալոս,*
*Գերեզմնի տերն էր Քրիստոս,*
*Ո՞ւր գուքաս, հառնչ կերթաս,*
*Հովսեփ, Մոսես.*
*Հառչի բերան խավ խոսեցավ,*
*Ջար խափանավ, ամեն։*

ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՂՈՐՔՆԵՐ

16(1576).

*Երկնքու դռներ բացվեր ա,*
*Օսկի աթոռ դրվեր ա,*
*Քրիստոս վերեն նստեր ա,*
*Լուսավորիչ կայներ ա,*
*Մեծ ու փոքր գրում են,*
*Մեղավորները լալում են,*
*Արդարները խաղում են։*

17(1577).

Լուսացավ, լուսն ի բարին,
Կաղաչեմ տեր կենդանին.
Երկինք՝ ծով ա ծիրանի,
Մայրը նստն սուրբ սեղանին
Հոգով կերթա լուս տաճարին,
Քրիստո՜ս, դուռդ բաց դուս արի,
Հասիր աշխարհին, նեղյալներին,
սովյալներին, հիվանդներին,
Նրանց սադաղեն իմ միակ բալին։

18(1578).

Բարի լույս, քաղցր Քրիստոս աստված.
Հավուր գալած փորձանքից ազատ
պահեա։

19(1579).

Բարի լուսին մաքուր Մայր
Աստվածածին,
Իմ մեղք չ'իշվի դատաստանին։

ԵՐԵԿՈՅԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ

20(1580).

Հաչք հայրական,
Հրեշտակ պահապան,
Պահա անսասան
Մինչև առավոտյան։

21(1581).

Աղջի՛ Մայրամ, դու կուս ես,
Հոգով, մարմնով լուս ես,
Կապեր ես լուսեղեն կամար,
Հոգիս պայել եմ քեզ համար,
Ընձի տաս հիմաստություն,
Ես գովիմ քո բարություն։

22(1582).

Մեռիմ քե, աստամովիր Հայրապետի
սըբ կենդանի,
Քո սուրբ աղոթքն եմ կանչեր եմ,
Ջար էրազ՝ բարին դարձուս,
Անուշ քուն, բարի էրազներ տաս։

23(1583).

Հիսուսի սունն ա սրտիս,
Ավետարանն ա գրկիս,
Իմ տե՛ր, ազատիր դիս,
Ջմերձենան չարքերն զիս։

24(1584).

Էլ՝ մեջ,
Ավետարանը գրկին,
Գիրը գրին,
Մատնահատ ճակատին,
Էլ չվախնա իմ գառնուկ։

ԱՅԼ ԱՂՕԹՔՆԵՐ

25(1585)

Աստված նեղյալներին հասնես,
Նրանց սատաղեն՝ մեզ,
Հացին առատություն,
Հիվանդներին առողջություն,
Մեր ծնողներին արքայություն
Ջահելներին սեր, միություն,
Ծերերին մահով մահ,
Բոլորին նպատակի կատարում։

26(1586).

Աղաչում եմ, արի՛, Աստված,
Ողորմյա անճարին, Աստված,
Մի խփի մեզ քարին, Աստված,
Տուր մեզ բարի նշան, Աստված,
Տեր ողորմյա, տեր ողորմյա, տեր
ողորմյա։

27(1587).

Մեռնիմ քե, սուրբ Հակոբ ջան,
Քու զորավոր զորքին մեռիմ.
Մշու Սուլթան սուրբ Կարապե՛տ,
Քու անվան մեռիմ.
Մեռիմ քե, Ամենափրկիչ,
Քու անվան մեռնիմ.
Մեռնիմ քե, Հուրոյ ավետրան,
Քու զորքին մեռիմ.
Մեռիմ քե, մեր Վանքվա Սուրբ
Գևորգ,
Մայրամ Աստվածածի՛ն, Վաղաշենա
Ժամն, քե մեռնիմ։
Մեռնիմ քե, Սևանա Սուրբ նշան,
Մեռնիմ քե, Քյավառա Սուրբ
Հովհաննես,
Մեռնիմ քե, Վերին Կարանլխա
Թուխ մանուկ,
Մեռնիմ քե, մեր աղա Սուրփ
Ստեփանոս՝ վըր մեր սար։

28(1588).

Ամենայն փրկիչ, քեզ եմ կանչում,
Մշու սուլթան սըբ Կարապետ, քեզ
եմ կանչում.
Ձեռս ձեր փեշն եմ քցե,
Մայրիկ-մայր աստվածածին,
Քեզ եմ կանչում ու ապավինում,
Ղալթաղչիի սըբ Օհաննես, քեզ եմ
կանչում։

29(1589).

Հե՛յ, մեռիմ քե, Անհաղթ Դավիթ,
Սըբ Գևորգ եկեղեցի,

Ս֊ը զինավոր սբը Կարապետ,
Ձեր անվան մեռիմ.
Իրեք օր էր՝ տունս, օջախս
անվառել էր,
Մե կտոր խաց բերիր իմ զավակներին.
Աստված քեզի շատ տա, շուտ տա,
Քեզի մեռնեմ, Անհաղթ Դավիթ,
Դու խասես իմ բալիկներին։

## ՂՂՈՔ ՄՂՔՆԵՐԴ
## 30(1590).

Կուլիկներով, պուլիկներով,
Ժամ կշիքեմ սազի պես,
Ջուր կխմեմ կազի պես,
Մաքան-թաքան մաթուշկա,
Ջմփիկ-ջմփիկ լալան արի,
Տոշե տաշան արի,
Ես Կզըփի թոռն եմ,
Ջալ Մարանի խարան եմ,
Ճուտը թռավ գերանին,
Մեռնիմ շեգ ավետարանին,
Ալամ-զալամ տեքերկին,
Սուփ-սուփ եզեր, չալ կովեր,
Վազիր իշի քուռակին,
Ախմախ կադա,
Ջար խափանա։

## ԴԱՐՁՎԱԾՆԵՐ

### 1(1591)

Աբուռից ընկած։
Ագռավ հիշնի՝ մի թիքա միս չկանա
պոկա։
Ազատ շունչ քյաշել։
Ականջը գցել։
Ականջ դնել։
Ականջը սրել։
Ականջը դնջացավ։
Ականջը բամբակ ա դրել։
Ականջը ձենի ա։
Ականջը հիցկել։
Ականջով մեկ փոշի չաժի։
Ակնջի հետև թալել։
Ակռվու ձագ։
Աղոթած էշ։
Աղոթրնի քամի ա։
Աղուն աղալ։
Աղքատ Ղազարոս։
Աղցան անել։
Ամպերու խետ խաղալ։
Ամակը մոմի պես հալվիլ։
Ամոթով մնալ։
Անդանակ մորթել։
Անջուր տեղը բոբկանալ։
Անլեզու հայվան։
Անմեղ գառ։
Անվան տեր ա։
Աշխարքը մթնեց գլխիս։
Աշկիդ վերևը հոնք կա։
Աշկե ընկած։
Աչկիս լուս։
Աչկով անել։
Աչկը ջուր կտրել։
Աչքը մտնել։
Աչքի գալ։
Աչքին փոշի փչել։
Աչքի սուրմա թռցնող։
Աչքի փուշ։
Աչքը հանել։
Աչքերը չռել։
Աչքերը չորս անել։
Աչքը բռնի։
Աչքը վրան։
Աչքը խաղալ։
Աչքը ճամփին։
Աչքը լույս։
Աչքը արնխռնել ա։
Աչկերը ճակտին թռավ։
Աչք գցել։
Աչքից աչք չփոխել։
Առավ գլոխը փախավ։
Առակ դառնալ։
Առաջը կտրել։
Ասսու ծեծածն ա։
Ասսու գառ։
Ասսու պատիժ։
Աղի ծակով կհնցի։
Ասեղ գցելու տեղ չկա։
Ասսուն եղով փլավ ա տարել։
Ասսու աթոռի տակն ա քնել։
Ասսու օղորմութեն ա։
Ասսու մանանա չա։
Ասսու ցուցք։
Ասսու սիրուն։
Ասսու բախշածն ա։
Ասված ուրացած։
Ասված հիրա խետ։
Աստղը թեքվել։
Աստված մե դուռ կբանա։

Աստված մեկ ճար կէնա՝
Աստված ետ-եռուն պահա՝
Առամը չկտրա՝
Առամ սրել՝
Առամ կկտրա՝
Առամները խըմբրել՝
Առջի հիրիկվորե քնուկ՝
Արուն-քրտինք թափել՝
Արուն-արցունք թափել՝
Արևը բաշխեց քե՝
Արև ա առեր նամուսիմին՝

Բախտը հուրնից հառնէ կեթա՝
Բախտը ոտի տակից կփախնի՝
Բախտը ալլու յա՝
Բախտը քոռացեր ա՝
Բախտդ սիրեմ՝
Բախտդ հընգնեմ՝
Բանից բան խանողդ՝
Բանի նման չի՝
Բանը բուրդ ա՝
Բարցը փոխել՝
Բարցը բարի՝
Բարակ ա մանում՝
Բարի աստղի տակ ծնվածե՝
Բարի լուս բացվավ վըր ձեղի, բացվի վըր մըզի՝
Բեղի տակով հընցուց՝
Բեմիննաթ անել՝
Բեյնը մտավ՝
Բեյնը խարաբ ա՝
Բերանս բանամ, հաշկս փակեմ՝
Բերնի խամ կորեր ա՝
Բերանը քամուն տալ՝
Բերանը ցորեն չթրջվի՝
Բերանը շաղ տալ՝
Բերնից կաթախտա ա գուքյա՝
Բերանդ խերով՝
Բերնե-բերան գցել՝
Բեդ-բեդ ա կըրթա՝
Բիկին կայնել՝
Բուրդը զզել՝
Բուրդը բարեբար անել՝

Գարե խաց ա կերե՝
Գյամը ձեռքը պահել՝
Գելու փոստ ա հիճե վրեն՝
Գելի ճրագալիս՝
Գիլու գլխին ավետարան՝
Գլխից ոադ անել՝
Գլխից դուրս գալ՝
Գլխից ռուս խոսել՝
Գլխի տակ կակուղ բարձ դնել՝
Գլխին օչին բերել՝
Գլխին լաշակ կապել՝
Գլխին վայ տալ՝
Գլխին դնել՝
Գլխով պտուտ գալ՝
Գլխու ճարը տեսնել՝
Գլուխն ուտել՝
Գլուխն ազատել՝
Գլուխը ցավի տակ դնել՝
Գուլնը գցել՝

Դանակն օսկրին խասավ՝
Դանակ սրել՝
Դմկով ոչխար՝
Դուլնի պոչ շատ հերգեն ա՝
Դունչը ցցել՝
Դռներն ընկնել՝
Դռնե դուռ ընկած՝

Եղունգ եղունգի քսել՝
Երեսի մեռոնը գնացեր ա՝
Երեսին աբուռ չկա՝
Երեսը պարզ՝
Երեսը չբռնել՝
Երեսը թքում են՝

Ջահլա տանել՝
Ջուզա յա տալի՝

Էդ իմ խորակը չի՝
Էծերը էկել են՝
Էծերը քշել՝
Էշը ցեխից հանել՝
Էշի հանգըստ քնել՝
Էշի զատիկ՝
Էշիդ ով ա չոշ ասել՝
Էշի նահատակ՝
Էշին քեռի կկանչա՝
Էշը ցեխն ա հնգեր՝
Էս որ քամին ա քշե էս յան՝
Էս որ խաչիցն ա՝
Էսօր ա մեռե, Թե էգուց՝
Էրկու իշու գարի չկանա ջոկա՝
Էրկու ոտքով ք...ն ընկնել՝
Էրկու ոտը մի ամանի մեջ դնել՝
Էրկու քարի արանքը մնալ՝
Էրվել-խորովվել՝

Ընդու թարիֆն ա կքյաշա՝
Թախտից փախնեմ, բախտից ո՞ւր՝
Թանին Թթու չասել՝

Թանի մուկ։
Թևփուռները քամուն տվեց։
Թիփի անել։
Թիքեն բողազում մնաց։
Թողը հանել։
Թողը քամուն տալ։
Թրջված մուկ։
Թուղթ մրոտող։
Թուքը սառավ։
Թուք ու մուր։
Թքածը լիզել։
Թքով կպցրած։
Թևաթափ լորիկ։

Ժաժ գալ։
Ժանգերը բացվել են։
Ժանգոտ մարդ։

Իծի միրուք։
Ինձ նայի՝ քե խղճա։
Ինչ հող տամ գլխիդ։
Ինչ հորս ցավն ա։
Իշու չափ մարդ ա։
Իշու դրախտ։
Իշու տեղ կհնցի։

Լեզվի տակ օսկոռ չկա։
Լեղու կդարձու։
Լեզվին փակ չկա։
Լեն սիրտ ա։
Լուս ձեզ տեսնողին։

Խալալ կաթնակեր ա։
Խալած յուղի տեղ հընցավ։
Խաց վըր ծնկին ա։
Խաշը ուտել։
Խաշուկ խավը կծծղա՞։
Խաչ դնել մեկի վրա։
Խաչ քաշել։
Խացակից-քացակից։
Խաց ուրացող։
Խաց կորուցող։
Խացին փափա չա կկանչա։
Խեղճ ու կրակ։
Խելքի տոպրակ։
Խելքից հանել։
Խելքին դոռ տալ։
Խելքից պակաս։
Խելք հավաքել։
Խերն անիծել։
Խին էշ։
Խին գել ա։

Խոսքը կտուրը գցել։
Խոսքդ շաքրով-նշով կտրեմ։
Խոսքը մեր մեջ։
Խոսքի տակ չմնալ։
Խոսքաշեն մարդ։
Խոքին փառավորվեց։
Խորով-մորով անել։
Խունկ ու մոմ ենք։
Խուրջինը քափ տալ։
Խուփբերան։

Սակ հաշկ։
Սակ ու ծուկ։
Սազիկ հասակ։
Սամ կտրած։
Սանր տեղը թեթևացնել։
Սանրցեր ա։
Սով տանել, ծարավ հետ բերել։
Սուխը պնչից դուս տալ։
Սուռ հաշկով նայել։
Սռուկ ա։

Կալի վրա յա հասել։
Կալմեջ անել։
Կանաչ արև։
Կապից փախած։
Կատու տփել պատերը։
Կատվալվա։
Կատու ճղել։
Կարճ դարի ա քաղե։
Կարմիր արև։
Կարմիր կուլ։
Կարկտահար լինել։
Կերածը քթից բերել։
Կպրե կարաս։
Կոտկիրիրի ղայդին ա։
Կրակն հնդյա՞նք։
Կրակ տաս, խանձրախտա չիգա։
Կրունգը ցուլց տվեց։

Հակոն տանը չի։
Հանգչի ծերով լսել։
Հանգչիդ օղ էրա։
Հաշիվը փակել աշխրի խետ։
Հաշկից խեղճ։
Հաշկերի լուսը խավարեց։
Հաշկերի հառիջ մթնավ։
Հաշկերը փոշի փչել։
Հաշկերը դուս պրծավ։
Հաշկի լսի պես պախել։
Հետին հառջինն ըլի։
Հեղունգ ու միս հիրարուց պոկվան։

Հերկեն արև,
Հերիսը պարզ,
Հերկեն լեղու,
Հերևսից ժանդ ա կաթում,
Հերևս տվուկ,
Հերևսի փարդեն պատռել ա,
Հերևսի դռռով,
Հերևսին արուր չկա,
Հերևսից հնդուկ,
Հերևս-բերևս անել,
Հերևս դարձնել,
Հերևսատեղ թորգել,
Հերևկվա երևեն ա,
Հընցուկ-մռոցուկ,
Հինր հիրան իշու տեղ կդնա,
Հիրուր բերան են թքած,
Հիրուր յախա բռնել,
Հիրան կրակ կթալա,
Հշտահդ քացախ,
Հուր խոսքի տերն ա,
Հուր շքի խևտ յոլա չէթա,
Հուր խացին քացի ա կիտա,
Հուր շքից կփախնի,

Զառը ձառին մուխթաջ չհնգի,
Զեռքը քարի տակ,
Զեռ բռնել,
Զեռը դնել խղճին,
Զեռը դատարկ,
Զեռը ծոցը,
Զեռս կարճ ա,
Զեռները ծափ տալով,
Զթի պես կպչել,

Ղուլ ա,

Ճամփես ձախվել ա,
Ճամփեն պախել,
Ճանը ալլու յա,
Ճարը կտրած,
Ճիկ-վիկ անել,
Ճոռթուկ բերան,
Ճրագով մեն գալ,
Ճրագը մարավ,

Մազը կտրուկ,
Մազերը դքվեցին,
Մարտի կատու,
Մածնի մերան,
Մաղը խառը,
Մաղը մատին չզանա,
Մատներ մոմ դարձնել,

Մե փարա չաժի,
Մե մատ մեղր ա դառե,
Մեխի գլոխ,
Մեծ մեծ հաչալ,
Մեծ թիքեն հանգաճը մնաց,
Մեչքը պինդ ա,
Մերը չմեռնի,
Մի աչքով ա կնայես,
Մինդարը փռել,
Միսը ծամել,
Միսը կրծել,
Միսը բերանը տալ,
Միտքը ծուռ,
Մորե մերկ,
Մսերը թափվել,
Մտքին դնել,
Մտքի թելը կտրել,
Մուռը խանել,
Մուխը պինչներից դուս էկավ,
Մունեաթի տակ ընկնել,

Յախեն բռնել,
Յոթ սարի քամակ,
Յոթ կաշի տալ,
Յոթ հերևս խաքնել,

Նա շիշ, նա քյաբաբ,
Նաղը քաշել,
Նազ գալ,
Նալ տվեց եղ,
Նալլաթ քե, չար սատանա,
Նամուսի մեռուկ,
Նամուսը գետինը տալ,
Նաֆասի վրա նստել,

Շան ծեծ տալ,
Շան լափը թափել գլխին,
Շան էրես,
Շանը հաչացնել,
Շան ու գելի բաժին,
Շան չարչարանք,
Շան ծիծ կերած,
Շատ ջուր կվերցու,
Շեմքը կոխել,
Շնացեր ա,
Շնից մազ պոկել,
Շնից շատ,
Շուն ու կատու են դառել,
Շքի պես կհետևա,
Ոտաց տակ փորել,
Ոտաց գին կխանա,
Ոտը տեղ ա բռնե,

Ոտը կապէք։
Ոտը կախ գցել։
Ոտից թեթև։
Ոտն հնձնել։
Ոտները լվալ, ջուրը խմել։
Ոտները լիզել։
Ոտներ հերկնցուց։
Ոտերը տնգեց։
Ոտով-գլխով կրակն ընկնել։
Ոտքը խերով ա։
Ո՞ր ջուրն ընկնեմ։

Ջոր գլուխ։
Ջոր կոճ։
Ջոր գարկեց գետին։
Ջիլաղ ճնշղուկ։

Պաղ ջուր ածել։
Պատը չոփ կոխել։
Պատը ծակ ա։
Պոզավոր սուտ։

Ջանը դուրս գա։
Ջանդ սաղ։
Ջանի վրա կդողա։
Ջրի տարածել։
Ջրի ճամփա չա դարձել։
Ջրիկցեր ա։
Ջոջ-չոջ ա կբրդա։
Ջոջ բերան։
Ջուր ա կպղդրա։

Ռեխը ցրիվ տալ։
Ռեխը թթվցնել։

Սապնի փրփուր ա։
Սատանի մազ կա խետ։
Սարեսար ընկնել։
Սթարից, թութարից ընկնել։
Սիրտը բաց ա։
Սիրտը ճաքեց։
Սիրտը տաք ա։
Սիրտը ցավեց։
Սիրտը բացել։
Սիրտը էրել, խորովել։
Սիրտը չըխփաց։

Սիրտը կոտրվեց։
Սրտին եղ քսել։
Սև շան ղարա ղուշ կկանչա։
Սև կատու չա հընձե։
Սևը սիվտակ անել։

Վայ քու մեղքը։
Վեր ու դիր։
Վերին արտի ցորեն ե՞ս։
Վերև աստված, ներքև դու։
Վիզը կտրել։
Վիզը ծուռ թողնել։

Տարած, եղ բերած։
Տավարի ցավ։
Տաք հաշկով նայել։
Տղ....ել պաղ ջրուն։

Փաթ հնդել։
Փալան հընդեր ա փորի տակ։
Փարավոնի գերությունն ա։
Փափախը թեք դնել։
Փխրուն սիրտ։
Փորը լիքը։
Փորը քշել։
Փորը օձով լցվել ա։
Փոստահան ա էլել։
Փրփուրը բերնին։

Քամու բերած։
Քամակը ճղել։
Քամին տարավ։
Քարը քարին չթորկել։
Քարեր լացացնել։
Քեզնե պախեմ, ասսուց իմալ պախեմ։
Քեֆչի Հասան։
Քթի մազ։
Քո դուռն ընկնեմ։
Քո մեղք՝ քո վիզ։
Քու մուր՝ քու հերես։

Օխտը պորտ։
Օձը բնից կհանա։
Օձի կծած ա։
Օսկի ձեռքեր։
Օր ու արև չի տալիս։

## ԾԵՍԵՐ ԵՎ ՑՈՆԵՐ

### 1(1592). ԴԻԱԴԻՆԻ ՀԱՐՍԱՆԻՔ

*Մեր ժամանակ էս տեսակ էր—հեսօր ես խարս ուզեր եմ, իմ խարսնսի օրն ա, վերցում արաղ գուքամ քու տուն, լլնամ արաղի բաժակ, կսեմ.*

*— Հեգուց իմ խարսնիսն ա։*

*Թե դու վերցիր էն էրղի թաս, խմիր, զեթի կեղիս ինձի թասի մարդ, դու իմ խարսնսին կմասնակցես, եթե չէ, ես չկռնամ քու խարսնիս դամ։*

*Սդո քավորին մե լավ խոնչա կկապենք, ավալ էսպես գլոխ շաքրներ կար՝ ղանգ կսինք. կըդնինք սինին, դնինք քիշմիշ, կամփերտներ, մենք խաշլու կամփեթ կսինք (աղջկա սուրյաթ կեր վըրեն, ծակերով, հերկեն մոմի պես) կեթի քավորոջ մոտ, լավ կաստոմ, փոխնորդներ, կտանինք քավորոջ խալաթ։*

*Քավորն էլ ուր սանամոր խամար կառներ օսկի մատնիք, փող կըդներ ջեր։ Էս խարսնսի թարրիրն օր տեսանք, քանի մարդ էլ թասի մարդ ա, մե լավ կլավ տավար դնեն գետին, դհոլ գուքա զանա, էդ թասի մարդիկ ինչքան օր հրավիրված են, գուքին քոմին էդ մսացու վրեն, ըստոլն կկաբին, խավ, շարազ կար վըր ըստոլին. «Ուրախութենով հարդ հեղի» վերցին թաս կզանին թասի, կխմին «Շնախավոր հեղի», «Մեր խարս ու փեսեն մե բարձի ծերանան»։*

*Էն մյուս հիրգում, խաղտում պտի էրթան, մաջլիս կապեն, մե մեծ գոմ, տուն, հավալվա տներ շատ մեծ են հեղած, էնպես տուն կար մե տեղ օր հոլ կզաներ, էն ծեր՝ մարդ չլսեր. շատ ժամանակ որ անձրև գուքեր, կալ չկրնին էնին, էդ տան մեջ կէնին։ Ես իմ աչքերով եմ տեսե։*

*Սդո հիրգում կերթան էտտեղ, մաջլիս կապեն, ուտեն, խմեն։*

*Գելնին էն մյուս օր սաբախտան, գուքան խոմարբացիք, բրինձից սուպ, մսից կլորիկ մեջ, սամվորներ դնին, չայ կխմին, քցել չկեր, կծուվի էր, էնպես շաքար էր կաբուդ, օր կզաներ կրակ կթալեր դուս, էդիկ հառավոտն էր, կեսավուր գուքան թազադան տղի տուն էդ խրվորներ հըմեն կգոմեն, էլի կնստին, բաժակ քավոր կվերցու կասա. «Իմ ժողովուրդ ջան, զինաք ինչ կա, մենք մարդկութունով էրթանք, խաղաղ դառնանք, կռիվ, վիճ չլի, ես օր ինչ կսեմ լսեք, խամով էրթանք, խամով դանք, մեր խարս ու փեսեն բարով բերենք հիրար վայելեն»։*

*Դհոլ կզաներ, կեթին աղջկա տուն. մենք աղջկա տուն միս, բրինձ, եղ ենք ճամփե, էտոր զախիրա կսեն, մեկ մարդ էտի կառնի կերթա աղջկա տիրոջ տուն։ Կերթին կուտին կխմին, խաղ զանելով բերին տանին ժամու դուռ էկան ժամու դուռ խարսն ու թագավոր կմտին եգեղեցին, քավոր գուքա, տերդրոջ սիվտակ շաբիկ կբերա կթալա թագավորի ու խարսի գլխուն, քավոր թուրն էլ կդներ վրեն։ Տերդեր գուքեր խարսի ձեռ կըբռներ, թագավոր կմներ կայնուվ, կտաներ մե քարից սուն կար եգեղեցում, էտ սան տակ կշոքցուցեր, հինքն էլ խետ կշոքեր կսեր.*

*— Բալա ջան, քո ամուսնու տե՞րն ես։*

*Էն վախտ որ ըսիր «Տերն եմ»՝ լավ, օր ըսիր «Չէ՛, տեր չեմ, իմ խեր զորով ա ուվե, ես էդ տըղեն չառնեմ» տերտեր մոշլ կէներ, չպսակեր։ Սդո խարս կկայնցուցեր, փեսեն կբերեր. փեսին էլ էդ տեսակ կխոստովանցուցեր, էլի հրմլա կէներ, կերթին կայնին պսակվին, դհոլն էլ կզանա, կնգտիկ, աղջկներ, չել տղեկներ բռնած ա կխաղան, գովնդի կայդա, քոչարի, ձեռաց պար կզանին։ Պսակ բերեն դուռ, դուռն մաջլիս ա կապուվ, մի լավ ստոլ ա բացուվ, իշխան ձգներ, քուֆթեք, խավեր, գուքին կնստին, օր էկան դուռ խարսի կխուր, իրեք-չորս խատ խաց, խաղալով կբերեր, խարսին կհամբուրեր, թալեր խաշ ու իթաթ խարսի գլխու վրեն. թագավորին, աղբուն էլ կպագեր, կսեր «Աղաբ ջան, փոխանորդ քեզի հելի»։ Ու կուտին, կխմին, խարսին կտանին մառան, աղջիկներ կեթին խարսի մոտ, մաջլիս կապին, քեֆ կանին։ Էս խարսին պտի խալաթ տին. խարսի խերն էլ պտի խալաթ տեր, քավորն էլ, տան փեսեքն էլ, խորոխպրտինքն էլ, տան թասի առնողն էլ։*

*Կհաներ հառել քավոր «Շեն մնա մեր քա-*

վոր», կբռնին, տաս ռուբլի, տըսվախինգ ռուբլի, խոսկի՝ ինչքան տեր «Շեն մնա մեր քավոր աղեն, օր էս փոխանվորդ ուր տղին հեղի, էսքան խալաթ թագավորին ու խարսին նվեր տվեց, շե՛ն մնա, շե՛ն». լլնին էրաղ, դնին քավորոջ հառեջ, քավոր կվերցեր կխմեր, թաս կդներ գետին։

Կմտներ խնամին. «Շեն մնա խնամին, աղջիկ տվե, տղա յա առե, էսքան խալաթ էլ տվել ա հուր աղջկան ու հուր փեսին, շե՛ն մնա մեր խընամին»։ «Շե՛ն մնա խորոխպեր», «Շե՛ն մնան փեսեք»։

Մեկ, մեկ էդ սինին բավականին փարա լըցին. քավոր կկանչեր կեսրերին՝ տղի խոր, գուքեր. կիգեր կկայներ խըտ կշտին, մեկ, երկու, իրեք՝ մի խալվար յուղ գուզեր, կիտեր, կդներ քավոր, ուր ձեռով փարեք կհավաքեր. «Շեն մնա մեր ժողովուրդ, խարսին խալաթ ա տված. օր փոխանակն ուրանց տղեկներուն հըլի, շե՛ն մնաս, ու դհոլ կզանին, գելնին թագադան բռնին գյովնդ կխաղին, կուտին, կխմին, նոր գելնին ամեք հուր տուն։ Դհոլով քավորոջ կտանին ուր տուն, գուգին կնստին, հառավոտ փեսեն գելներ, արաղ կվերցեր, ուր աղաբ կվերցեր, կեթեր աներոջ տուն. էն էլ կսին. «խոմարբացեք ա գացե»։

Թագավորի վրեն խանչալ կկապեն, աղբու ձեռին էլ թուր կուտան։

Էն վախտ էլ օր խարս տնեն կխանեն, էնի էն թուր կզանա խարսի դուռն շեմ, օր գուգան եգեղեցին՝ էլի կզանա, որ խարս մտի եգեղեցին։ Էն վախտ էլ օր խարս կբերեն՝ տարելգա կդնան հարուստներ. էն որ քյասիբ ա՝ էն էլ պուտուկ. պտի թագավոր զանա օդ վրեն՝ ջարդա, օր նոր ներա մտնի։

Աղջիկներն էլ խարսնատնեն կխաննեն. էն խարսի տնեն խաց կվերցուն ձեռն հուրանց, բաժակ կվերցուն ձեռն հուրանց, արաղ կվերցուն, էն էլ խարսին իբրև ղսմաթ ա կվերցուն։

Մկա «շեն կենաս» չկա, բայց խալաթ կա։

Մկա մեկ հիրգուն ա խառնիս, իսկ ավալ վախտ իրեք օր էր խառնիսը. մաշլիսի վրեն խարսին կգովին, գալը բարի կսին, էրաղ կիտին խարսին. էնի կվերցեր, կտներ քավորոջ հառեջ։

## 2(1593). ԱԼԱՇԿԵՐՏԻ ՀԱՐՍԱՆԻՔ

Երբ կսկսեն խարսնիս, մեկ օր հառեջ կանեն փեսանստուկ։ Փեսեն գուքյա, ուր ընկերներով հիրիկուն կնստի աներոջ տուն, ամեն ինչ կբերեն. շաքյար, շարազ, ամեն ինչ, փեսի խետ գուքյա ազաբբաշին, կհավաքվեն էրկու կողմի բարեկամներու ջայլներ, փռեն քեչեն-խալին, շարքյով կնստեն։ Ետո գլնեն կեթան խորքյրոջ տուն, մորքրոջ տուն կվերցեն խավ կեփեն ազբաշիլա, կուտեն, կխմեն։ Մե շաբաթ հառեջ կեթան խնամու տուն խնամախոս, գայդնեն որ գուբյանք խարս կտանենք այսինչ օր, այսինչ ժամուն։

Մեր Ալաշկերտի օրենքով խարսնսի տուն կեթա տերտեր, կեսրեր, մե էրկու խատ էլ մեծ մարդ, մինչև էտոնք չեթան էնտեղ, խացկերութուն չըլնի։ Տերտեր կեթա խարսի հանդերձ կօրշնա, համ էլ սեղան կօրշնա, նոր կխաքցուն խարսին։

Թագավորին տուն կթրաշեն, խորքյուր, մորքյուր, քեռի, սանամեր, քյուր, մեր, ախպեր էկեք մեյդան։ Դալլայ գուքյա, ջուր կբերեն, էդոնց մազից ամենքին մե քիչ կկտրեն, կուտան։ Դալլայ կասա. «էսի ըռեհան ա, էսի ծաղիկ ա, էսի Թարխուն ա», կկտրա կտա, էնոնք էլ հըմեն էդ ամունու մեջ փող կլցեն. ժամեր կտևա, ասելով, խոսալով, ծաղրով փեսին կթրաշեն։

Թրաշին պրծան, կեթան աղբու տուն, տղեն կեթա լողկնալու, աղջիկն էլ մորքյուր ա, խորքյուր ա, քեռի ա, սանախեր ա կտանա հուր տուն, կոնախ, կեթան, գուբյան։ Տղին էլ կեթան սազանդարով ջահելներով կբերեն հուր խոր տուն, հուր խոր տնից նոր գուբյան աղջկա տուն նվագով։ Էտ տեղից էլ փեսին կթողեն խոր տուն, ջայլներով, կեթան՝ տեքեր, տեքերտղեն, աղջկա տնից կբերեն, բերին խոր տուն հուրանք կդառնան։ Էդ վախտ կտանեն շապիկ թումբան, որ խարս խաքի, կդառնան գուբյան, կեթան տերտեր կեսրեր, ախպեր քավորկին որ շորեր խաքցուն, տերտերն էլ որ սեղան օրշնա։ Մեր օրենքով չըթուլլատրվի, որ քավոր կին երկրորդ անգամ ամուսնացած հըլի։

Էնորից հետո շորեր կխաքցուն, խնամիներ կնստեն խաց կուտեն, կպրծնեն մեկի օջորկին, որ գյա ասա «էկեք», որ բազմություն էթա առնեն խարսին գյան։

Նվագ տղի տիրոջ տուն գլնի։

Տղի տիրոջ տնից նվագով կերթան խարս կբերեն, էն որ գուբյա խաբար կբերա՝ դրան կասեն աղվես, կբռնեն կտփեն. լա՛վ կտփեն. ոն կարցավ բռնեց, կտփեն, էդ մարդն հըմա դռնից կբռռա կփախի, որ չբռնեն, էդոնք գլնեն գուբյան խնամու տուն, աղջկան պտի տանեն էդտեղ «խընամապալյք» կառնեն, պատալի մեծ կոխվ գլնի, տղի տիրոջ քրոջն ա, աղբոր կնգան ա կբռնեն կպաքեն։

Էդտեղ կբերեն ոտի վրա էրաղ-բան կբաժնեն, կշնախավորեն, կխմեն ու դուս գուբյան։ Առանցի խացի, գյատի, խարսի ղսմքի դուս չեն գյա։ Աղբուն էլ կխասի մե խավ, մե գյատա, մե շաբյարլոխում, էդ էլ կտան ու կեթան։ Աղջկա աղպերն էլ դուռ կբռնա քավոր պտի փող տա։

Դուս էկան մինչի խասեն եկեղեցի, բարեկամներուց մեկն օչխար կխանա հառնչներ, ճամբուն վրայի տներուց քյավորից փող կառնեն, օչխրի հանգյաճ կկտրեն որպես մատաղ, քյավոյն էլ նվեր, փող կտա։

Էտոնց խնամու տունն է, որ ախպեր կբռնա էդ տեղն էլ նվեր կուտան։ Մինչև անգամ էն ճաշ էփողն էլ «քյավլեր աղջասի» կկոչվի, քավոր նըրան էլ նվեր կուտա։

Էկան խասան եգեղեցի, քավոր խաչ կբռնա, տերտեր կպսակա «արոտիք» (7 գուլնից թել) կկապա վիզ, գուբյա ճամբուն սեղաններ կդնեն, օչխար կխանեն նվեր կտան, մինչև կխասնեն տուն։ Խասան տուն կիսուրը պտի դուս գա լավաշ ձեռ պարելով տղին խարսին շնախավոր ասի, խացն էլ թալա թաղա խարսի գլխուն, որ կամաքով հեղի։ Էդ խնամու տան խացն էլ կտան խարսի կիսրոջ, որ «քու խարսի կամաքն ենք բերեն», «խուսի ենք բերե, որ խարսի բերան խուսի հըլնի» էդտեղ կերգեն.

*Խարսի կիսուր դուս արի՛,*
*Տես քի ինչեր եմ բերի,*
*Ինչե՞ր, ինչե՞ր եմ բերի։*
*Գլուխ ափող եմ բերի,*
*Քյո խեր բյաշող եմ բերի,*
*Ակ մուցող եմ բերի,*
*Ինչե՞ր, ինչե՞ր եմ բերի։*

Գուբյան կնստեն սեղան։ Խարսին կիսուր պտի «տեղ նստելա» տա, մինչև չտա, չեն նստի։ Մեկ էլ տեսար քյավորկին բերեց մե խատ ճիժ դրեց գլխրկ, պտի մե խատ չուլքի տա, որ քավորի կնիկ բարցի վրայից հընի՝ թագուչին նստի։ Ըստորից հետո կիսուր պտի դյա նվեր տա, մարդ կա մատնիքյ կտա, մարդ կա մաշեն կտա, մարդ կա սըքյա կտա, տեղ նստելու կտան խարս կնստի, սազանդար, թագավոր աղաբներ կդառնան խնամինեբրի հետև, խնամիներ կբերեն։ Խնամին էլ որ աղջկա ձեռք կբռնա կալցո կտա, օսկի կտա փեսին, կողբանդ տղի տնից կկապեն աջ, աղջկա տնից էլ ձախ, կասինկա բաղդատի կկապեն կդառնան, գուբյան։

Կեթան աղպեր, աղպոր կնիկ, քեռի, քեռկին գուբյան կնստեն խնամու տուն, քեֆ կենեն մինչև լուս, լուսուն կընեն դուս, կբռնեն շուրջ պար՝ գյովընդ, շուր լուս՝ շորոր լուրկե, նարոյ-նարոյ։

*Նարոյ, նարոյ, նարոյ ջան,*
*Դալի դոլու նարոյ ջան,*
*Նարոյ, նարոյ, նարոյ ջան,*
*Դալի դոլու յարո ջան։*

*Փեսեն ասաց աներոջ*
*Ես խավան չեմ քու քրոջ,*
*Ոտներ մանի անքրոջ,*
*Բերան մանի մի մատնոջ,*
*Աստներ մանի մի սղոց,*
*Նարոյ, նարոյ, նարոյ ջան*
*Իմ սիրելի յարո ջան։*

կամ՝

*Հասան աղեն գլավնի էր*
*Հանմ էր լուրկեն,*
*Լուրկե, լուրկե, լուրկե, լուրկե*
*Հանըմ էր լուրկեն,*
*Ջանըմ էր լուրկեն.*

Էս խառնոնիս որ պրծան հելան կեթան, խառնաքուր կմնա խառսի մոտ, հրաման չկա էտոնց քընել մինչև արոտիք չկտրեն, էրկու օր եդո տերդեր կբերա, տերդեր գյուքա ավետարան կկարդա, արոտիք կհարձկա, նոր խարս ու փեսեն կըմտնեն առագաստ, խարսնաքյրոջ նվեր կտան ճամփու կդնեն կեֆա։

Խառն որ աղնիվ հըլի կօղորկեն կարմիր խնձոր, խոր տնից նվեր կուտան տարողներուն ու կօղորկեն գուբյա։ Ուրախութիյուն կենեն կուրխնան աղաբ, աղաբ բաշի, քավոր կհավաքվեն քեֆ կենեն, մնա յոթ օր քմմի, յոթ օրից հետո գլխալվա տան։

Փեսեն կեթա ախչկա մոր կբերա, կբերեն մե ձեռք փոխնորդ, սանդր, սապոն խոր տնից խարսի գլոխ կլվան, մորն, քրոջը էդ վախտ լավ նվեր կտան, կուտեն, կխմեն կհավաքվեն կուրխնան էտոնք կդառնան կեթան։

Մե յոթ օր էլ գնցի, էս անգամ աղջիկ փեսեն կեթան խոր մոր տոնալու, էլի խոր տուն ախչկան նվեր կտան, էդ էլ հընցավ, գյարուն էկավ կտանեն դարձ։

Մեր մոտ միշտ ադաթ հելե, խառնոխ ամառ չհելե, ջոջ պախսից էրկու շաբաթ պախս կըբռնեն, Գիրքոր Լուսավորչուն կտանեն դարձ ծառզարդարին, կարմիր կիրակիին կմնան էդտեղ, պարտավոր են մի ամիս թողել, իսկական մի ամիս կմնա ախչիկը խոր տուն։ Մե ամսուց հետո մե էրկու խոքի էսոնց կողմից խոնջով-բոխչով, մե էրկու խոքի էնոնց կողմից, իմալ էկած տարած են էնքար էլ կեթան բերեն։ Մնա չուր աշուն, աշուն էլ նորից կեթան կբերեն դարձ, եփ որ երեխա ունենա կապեն բինդը-բարձ, եփ որ չունենա, հենց էնպես կբերեն մեկ ամիս խոր տուն ղոնախ, էլի խալաթով-բարաթով ճամփու կդնեն ախչիկ կեթա։

Էրեխա որ ծնվի ախչկա խոր տուն դոշակ, յորղան կկարեն, օրորոց, օրորոցի կալոց սարքյով կուտան։ Կդնեն, կառնեն կեթան աղջկա կուշտ։

Բաժինքը. կմնա խնամու խոսալու վրեն, կըպատահի մարդ կա մի ամսուց եդ, մարդ կա մե շաբաթից հետ կտա. բաժինք բերելուն օխչար կըխորթեն, քեֆ կենեն, նվերներ կտան։

Տրնդեզին էլ խարսին կխանեն դուս էլի նըվերներով թե խոր տնից, թե հուրանց, մե մեծ սինի նվեր կտան, շատ ժամանակ էլ տրնդեզին կտանեն բաժինքը։

Բաժինքի խետ կտանեն գյատա, շաքյար, լոխում, հալվա։ Նվերները տրնդեզին կտան։ Նշանդրեքի օր աղչկա տուն մենակ չուքի կտան կուղես դու նապալեոն տար, մեկ ալ համա տրնդեզի օրը շատ նվերներ կտան։

Նվերները հարսանիքին խին օրենքով ա հելե «կանչով», «շեն կենաս»-ով, էդտր վրեն անհամություններ գլխին։ Տրնդեզին փոխին նվեր տալը։ Ասատուր Համբարձումյանը* կկանչա գեղի մեծերուն, ավետարան կդնեն, տերոջ հառեջ կհերթվեն, կասեն. «մենք պորտից պորտ էդպես հարսանիք չէնենք», ու կվերանա «շեն կենասով» հարսանիքը, ինչի համար ես կտամ խինգ մանեթ ինձանից հետո կտան տաս մանեթ, էն մեկել կտա տասվխինգ մանեթ, կսկսեն դժգոհել, թե «հընչի դու ինձանից հավել կի՞տիր, որ բանցր կիտիր, թող հառեջ տիր, որ ես եմ տվե հառեջ «խինգ» եմ տվե, դու ընձնից պտի պակաս տաս, ընձնից ինչո՞վ ես հավել»։

Ըտմալ էլ «շեն կենասով» խառանիս վերացավ, էլ մկա «կանչով» չենենք խառանիս։

## 3(1594). ՄԱՀ, ԹԱՂՈՒՄ (ԱԼԱՇԿԵՐՏ)

*Մարդ օր մեռներ,—հավալ սովորութք չկեր ես թաբութ, նոր ա հիսկած դուս,—մեր եգեղեցու հառեջ մե խաստ տախտակից՝ նաշ կսինք, էդ նաշ դրուկ էր ժամու մեջ, յա ժամու դուռն էս նաշըն, ժամխար կար, ժամուն խզմաթ կէներ, ժամխար կշկեր, կտաներ մեռլի տուն։ Մեռել կըվշին, կըպատանքին, հավալ կաստում դո՞ր էր, շոր խաքուցել դո՞ր էր, ամիրգա, քաթան կբերին, կլողկացուցին, կըկարին, կփաթթին դնին իր նաշի նե, տերդեր կառներ էթեր ժամ։ Մարդիկ կէթին վրեն, կնգտիք ջոկ կէթին գիլին վրեն, տըղամարդիկ ջոկ կէթին օղորմի կիտին։ Մներ շուր կնստուր օր թաղին, տերդեր կայներ պատարագ կէներ։ Կնիկը լացում էր.*

*Վայ լըմն, իմա՛լ պտի էնեմ,*
*Շխվարեր եմ, մարդ չան,*
*Իմա՛լ օյին էր խաներ իմ գլոխ,*
*Քու ճմեր իմա՛լ պահեմ,*
*Վա՛յ-վուլ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ*
*Իմա՛լ էնեմ, էդ ինչ գուլում էր էկավ իմ գլոխ,*
*Վա՛յ յամա՛ն, յամա՛ն,*
*Յամա՛ն իմա՛լ քո ևքըմներ,*
*Վի՞ պատի տակ էքան քու ևքըմներ.*
*Յամա՛ն, յամա՛ն։*

* Վարդենիս (նախկին Բասարգեչար) գյուղի մեծահարուստ և առաջադեմ մարդկանցից մեկը։

*Կշտից կըսին.—Քա՛ կնիկ, բոլ ա, լա՛ու*
*Յամա՛ն, բա՛ ես չիլամ, բա ո՞վ լա*
*Վա՛յ յամա՛ն, վա՛յ յամա՛ն։*

*Գուքին տուն մխիթարանքի, էրազ կխմին «Աստված հոգին լուսավորա», «Հետին-հառչին տխրություն հեղի էս տան մեջ», շատ մոտիկ մարդիկ սքախան ա կէնեն։*

## 4(1595). ՓՈՔՐ ՁԱՏԻԿ

*Ձատկի առավոտը էրեխեք գելնին հերթսի վրեն մե բան կկախին հերթսեն, կասեն, «Ձեր տղի անուն ի՞նչ ա»։ Խոսքի կսինք՝ Սուրեն.*

*Սուրեն խեծավ պոթ-պոթ քուռակ,*
*Մեջքն գռնե պողրատ ուրագ,*
*Ալելույա, ալելո՛ւյա՛։*

*Աստված պախա ձեր Սուրեն,*
*Ձեր մալին դովքին աջողում հեղի,*
*Մեղի էսօր փայ ավեք։*

*Կար օր՝ փարա կղնին, ձավար կըլընին, կար օր՝ ալուր կըլընին, կար օր՝ եղ, կա օր՝ կամփեթ, մինչև անգամ՝ չիր, կանամփ կըլընին, էնի կբաշեր, հերթկեն կխաներ։*

## 5(1596). ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

*Սբ. Սարգսին պատանիներն ու աղջիկները աղի բլիթ են ուտում, իսկ կեսն էլ դնում են դուրսը քարին, երազում ով որ ջուր տվեց, նրա հետ պետք է ամուսնանան։ Դրսի դրված կտորը ագռավը ո՞ր կողմը որ տանի, փեսացուն այն կողմից կլինի։*

## 6(1597). ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

*Ս. Սարգսից հետո՝ բարեկենդան ա։ Բարեկենդանին ոչխար կմորթեն, հարսանիքներ, դաթա, աղջիկներն էլ, ջհհել տղեկներն էլ հոդերքում քեֆ կէնին. խումբ-խումբ երկու շարաթ քեֆ կէնին։ Բարեկենդանի վերջին հինգշարթին մեռելոցն ա։ Պախսի երկուշաբթի կոճոն մնացորդները կուտեն, որ պսպոր գայլին (ոչխարը, տավարը իրենց ճանաչեին)։ Երկուշաբթի կշեռք կընդնեին, թագա խառնի տերեր հերթիս պարան կըկախեին։ Հարսին դնում էին մի նժարի, փեսին՝ մյուս կշեռքին, հետո ակլատիզ էին խփում կարտոշկի վրա, կախում էին հերթսից, որպեսզի երեխաները հաց, յուղ, միս չուտեն և օրը մի բմբուլ կհանեին։ Բարեկենդանից հետո երեք շաբաթ կես Մեծ պախս կբռնին։*

## 7(1598). ՏԸՐՆՏԵՋ

*Քրիստոսի ծննդից կհաշվեն քառասուն օր ու կվառեն կրակ՝ տըրնտեղ։ Սննդականներ կառնեն կոնդախներ, դուս գուքան, էդ կրակի բոլորն ման գուքան, որպես երեխեն առողջ ըլնի, ցավն ու չորը թափի։ Տղամարդիկ խունջանը բռնին կրակի դեմ, կէրեցնին։*

*Տըրնտեղ կրակի մոխիր կլցեն հերթիկից խավերու վրեն, որ թուխս նստեն, կրակով տան ճըրագ կկպցնի։ Էտ կրակը պատայական կրակ չէ, էդ կբերեն եկեղեցուց։ Վի տուն որ թաղա խարս կա, թաղավոր կա, կէթա եկեղեցուց մոմ կվառի, կառնի գուքա։*

*Ամեն տուն հիր կտրի վրա կրակ կվառեր չոր փետերից, ջահելներ կպարին կրակի բոլոր կուրախանին, իսկ նորախարս կթռցուն կրակի վրայով։ Տըրնտեղի կրակի փոշուց շաղ կտային արտերի վրա, բերրի դարձնելու նպատակով։ Մոխրից կլցնին հավաբները և տըրնտեղի կրակ կըպուն ժամու կրակով, խավու պոչեր կխանձեն, մուրը կքսեն հերեխքու ճակատ։ Սերմերը տանում են ժամ օրհնում են, տարեկանը չեն տանում «սըբ սեղան չբանցրցե, սըբ սեղան չնստեէ»։*

*Կային կնգտիք, օր ավելվա ճրագ կրկպուցին, կղնեին ակներն, հիրանց մուրազին խաանելու համար։*

## 8(1599). ՄԱՌԶԱՐԴԱՐ

*Եկեղեցում ծառ կղարդարեն, ուռ կբաժանեն, կխփեն ձռումները, որ կարագ շատ ըլի։ Վերջի շաբաթը կկոչվի՝*

*— Հուշիկ, հուշիկ երկուշաբթի,*
*Իրեքշաբթի՝ քար քաշիկ՝*
*Չիք չորեքշաբթի,*
*Ավագի հինգշաբթի,*
*Հուդայի ուրբաթ՝*
*Ջտակի շաբաթ՝*
*Կարմիր կիրակի,*
*Երկուշաբթի մեռելոց,*
*Կիրակի-կանաչ կիրակի։*

## 9(1600). ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

*Քառասուն օր էտ կարմիր զատկից հետո, կընգըտիք չորեքշաբթի կէթին չոլեր նուվ կժողվին՝ իրեքնուկ (խոտ ա) կբերին, օխտ ախպրից ջուր կգողնին։ Համբարձման գիշերն էլ կհելնին կնային աստղերին, ձռում կլցանեն, էդ գողցուկ ջրից կլցին ձռում, որ եղ շատ հըլի։*

*Համբարձման վիճակի օր, օր ծաղկներ բուսած ա, աղջկներ կէթին վիճակ քաղին, մեկ խաս պուլիկի նե կղնեն, տաս աղջիկ գուքին՝ «Մեր վիճակին փայ տվեք»։*

*Վիճակի պուլիկն ա դեղին,*
*Առանք ընգանք մըչ գեղին,*
*Խոտղներն էկան կըկլին,*
*Ջա՛ն, վիչակ, չա՛ն վիչակ,*
*Երթանք բերենք մենք միչակ։*

*Վիճակին էդ կգտվին։ Ալուր, եղ կժողվին, կէթին սըբ Գևորգա մոտ, սարի դող չիման էր, լավ հախպուր կեր, կքոմին էդ տեղ, կնստին, խաղ կսին, կուտին, կխմին, չուր հիրկուն կզբաղվին, հիրկուն թողին գին տներ։*

## 10(1601). ԽՈՒՃԿՈՒՐՈՒՐԻ

*Անձրև օր չիգա, ցախավելը կզարդարեն, փետի վրա կկապեն ու տնեատուն կպտուցնեն, կասեն.*

*Խուճկուրուրին էկեր ա, ձեզի կկանչա,*
*Մարավ ա, չուր ավեք քըխ խա։*

*Կբերեն մե կուշկա ջուր, կլցեն վրեն «Էսի քեզի, դու մեզ էլ առանց անձրև չթողես, մեր կամաթ չկտրեսա»։*

## 11(1602). ՇՎՈՏ

*Օր էդ մարտը գուքա չէ՞, կառնին գոգնոցներ, հիրկուն տներուն տփին ու կսին.*

*— Շվոտն ի դուս,*
*Մարտ նեսւ։*

*Կլարեն դուս։ Ինչ որ իմ կիսուրն էր, չթողեց, ըսեց—Շվոտ մի տփեք, դուս մի հանեք «կսեր, խացի փշուր լցեք խեցկի վրա, մեկ էլ աղ, տարեք դրեք մեր թավլի պատի տակ, ըսեք.—Ա՛ռ դու, քու ձագերով կճուրի էտեղ։ Մի տփեք հանեք դուսա։*

*Գուքար մարտի օրերն, օր ըռնչքերներն հելին, ցանքս էնին, շվոտը ըսած վախտն էլ գելնին հերթսի բոլոր կշղդին։*

## 12(1603). Ա Կ Լ Ա Տ Ի Ջ

*Կվերցեն մե խաս կարտոշկա, կկտրեն, յոթ բբուկ, մեկն կարճ, վեցն սաղ, կխրեն էտոր մեջ, կախեն հերթիկից։ Երեխեքին շատ ժամանակ կըվախցուն թե. «Էդի ակլատիզն ա, գուքյա ձեր հաշկեր կխանաա, աղ չուտեն, շաբաթ մե խաս կքյաշեն՝ յոթ շաբաթ (չոջ պախս՝ յոթ շաբաթ ա)։*

*Կամ՝ մեկ խաս կուկու կչենք խմորից, կարտոլից, յոթ խաս բմբուլ կդանենք, չորս ըսպիտակ, իրեք սև, մեկի պոչն էլ կկտրեն, շարեն շաբաթը մեկ՝ մեկ-մեկ կքաշինք, հետո կուկուն կթալինք թունդիր։*

# ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ

1(1604). Ագռավն ու բուն որ կանչում են, ասում են. «խեր, խեր, ուտա քյո գլուխ»։

2(1605). Հավը որ կանչում է՝ վատ նշան է. հավը բռնում են հերթիքից գցում տուն, եթե դուրս ելնի դռնից՝ վատ է, եթե գնում է տան վերևը՝ լավ է։

3(1606). Եթե տեղ գնալիս կատու հանդիպի՝ վատ է, շուն հանդիպի՝ լավ է, նապաստակ հանդիպի՝ էլ ավելի վատ է։

4(1607). Կատուն հերես լվա՝ ղոնախ կգա։

5(1608). Կատուն հիվանդի անկողնին նստեց, հիվանդը կառողջանա։

6(1609). Կատուն աստծու թաշկինակն ա։

7(1610). Եթե կատուն գլուխն ու երեսը լվանում է, անձրև է գալու։

8(1611). Շունը ոռնա՝ տերը կմեռնի։

9(1612). Շունը պոչը խաղացնի՝ հեռավոր կգա։

10(1613). Մարդիկ լինում են չար ու բարի։

11(1614). Չար մարդուն տեսնելիս մրմնջում են՝ «Չար աչք, չար փուշ»։

12(1615). Մարդու ձեռքը եթե քորվի՝ փող կստանա կամ կծախսի։

13(1616). Ոտքը քորվի՝ ճանապարհ պիտի գնա։

14(1617). Աչքերը եթե սառում են, հյուր կգա։

15(1618). Եթե երեսը այրվում է՝ իր մասին են խոսում։

16(1619). Եթե քիթը քոր է գալիս՝ հեռավորի կը-տեսնի։

17(1620). Եթե ականջը կանչում է, իրեն են հիշել։

18(1621). Եթե հացը կուլ չի գնում, մոտիկ մարդիկ սոված են։

19(1622). Երբ ջուրը թռչում է կատիկը՝ բամբասում են։

20(1623). Եթե գիշերը փոշոտում են՝ խեր է։

21(1624). Երբ երեխան շատ է լաց լինում, ասում են գլխակեր է»։

22(1625). Հացը դետնին չեն թողնում, վերցնում դնում են բարձր տեղ։

23(1626). Հացը դանակով չեն կտրում, մեղք է։

24(1627). Լավաշ հացը թարս չեն կտրում։

25(1628). Կանայք հավ չեն մորթում։

26(1629). Կիրակմուտի երեկոյան գործ չեն անում։

27(1630). Աղ թափելը դիտում են կռվի նախանշան։

28(1631). Պառկած կամ նստած մարդուն չեն շեմքում անցնում։

29(1632). Դատարկ օրորոցը չեն օրորում։

30(1633). Երազում տուն քանդված տեսնելը տիրոջը մահ է։

31(1634). Երազում ատամ կորցնելը մահ է և տխրություն։

32(1635). Երազում ծամ կտրած տեսնելը մահ է։

33(1636). Թե առավոտյան աջ ոտքով են վեր կենում անկողնուց՝ խեր է, թե ձախ՝ չար։

34(1637). Հիվանդի գլխի վերևը չեն կանգնում։

35(1638). Գիշերով տունը չեն ավլում։

36(1639). Հողը, ջուրը, երկինքը սուրբ են համարվում. երդվում են «էն խող, էն ջուր, էն երգինք, էն գետինք»։

37(1640). Արև ժամանակ, երբ անձրև է գալիս, ասում են. «Գելն ա ցնկե»։

38(1641). Ականջ կանչելը նշանակում է բարի կամ չար լուր ստանալ։

39(1642). Հագուստի կոճակը հագած ժամանակ չեն կարում։

40(1643). Շերեփը երբ մնում է ճաշի մեջ, հավատում են թե «մեռելի հաշկ կմնա ճամփին, կասա՝ ինձ ճաշ կբերեն»։

41(1644). Երբ հարսանիքի օրը բուք է անում, ասում են «Աղջիկն աման ա լվատեր»։

42(1645). Թուխս դնելիս եթե տղամարդ ներս մտնի՝ աքաղաղ կլինի, եթե կին՝ վառեկ։

43(1646). Նորածին երեխայի բարձի տակ մկրատ են դնում՝ չարքերին քշելու համար։

44(1647). Մինչև քառասունքը լլրանա, երեխային արևի չեն հանում, միայն պիշերներն են հանում, կրծքին մի կտոր հաց դրնելով։

45(1648). Տղամարդը իրավունք չունի քառասունքի երեխայի երեսին նայել, թե չէ երեխան քառասունքակոխ կլինի։

46(1649). Մինչև քառասունքը երեխային լողացնելիս՝ ամանի մեջ երկաթի կտոր են դնում, որպեսզի չարքերը չմոտենան։

47(1650). Եթե երեխայի բերանից ջուր է գնում, քավորի մատը դնում են բերանը, որպեսզի ջուրը կտրվի։

48(1651). Չար աչքից պահելու համար կապույտ հուլունք են կախում երեխայի վզից, կամ կապում ձեռքին։

49(1652). Կերակրող մայրը տղամարդու ներկայությամբ չի կերակրում երեխային, եթե կերակրի, կաթը կցամաքի։

50(1653). Ատամները հանելիս՝ ատամնահատիկ են եփում և երեխայի գլխին լցնում։

51(1654). Մինչև երեխան չքնի, լողացած ջուրը չեն թափում, այլապես քունը կփախչի։

1(1655). Ականջացավի դեպքում—կտավհատի ձեթը տաքացնում և դոլ վիճակում կաթեցնում են ականջի մեջ։ Աղ են տաքացնում, դնում։ Սոխի ծիլը կտավհատի ձեթով եփում են, դնում են ականջը։

2(1656). Մեջքի ցավ — Ձյութից կամ խնկից յախու են դցում, բրդյա տաք շալ կապում կամ նոր մորթած ոչխարի մորքին տաք-տաք կապում են մեջքին։

3(1657). Գոռտնուկ — Լուանյակ դիշերին դուրս են գալիս նորալուսնի դեմ և ասում.

Նոր, նոր, նոր ապիզ,
Կատղե կոծոծ՝ կուտա գիս,
Կարե կոծոծ, չուտա գիս։

կրկնում են երեք անգամ, ապա վերցնում երեք զույգ գարու հատիկ և թաղում ճանապարհի մեջտեղը։

4(1658). Այրվածք — Չհանգած կիրը կես բաժակ ջրով բացում են, վրան ավելացնում կտավհատի ձեթ և քսում այրվածքին։ Լվացքի օճառ են քսում սպիտակ կտորի վրա և կապում վերքին։

5(1659). Առատնացավ — Փչացած առատի մեջ դնում են շիբ, տաքացրած աղ, օղիով ողողում են, բրինձը այրում են, յուղը բամբակով դնում են փչացած առատի արանքում։

6(1660). Հազի դեմ — Էշի կաթ են խմում. մեղր ու կաթ խառնում են իրար և խմում, տաքացրած այծի ճրագուն քսում են թիկունքին և կրծքին, խորոված սոխ կամ խնձոր են ուտում. ջրաղացի ջրի սառցակտոր են կուլ տալիս. ոչխարի կրծքավանդակի յուղոտ միսը խաշում են և ուտում։

7(1661). Վերֆի դեմ — Մահլամ են եփում և մեծ տաքսե կտորի վրա քսելով՝ քաշում են վերքին։ Իսկ մահլամը՝ սպեղանին, եփում են հետևյալ կերպ. մեղրամոմը հալում են, վրան ավելացնելով կտավհատի ձեթ կամ սոսկ մեղրամոմը եփում են, կրակից վերցնում, սառեցնում և քսում վերքին։

8(1662). Մազերը թափվելու դեմ — Դարնան սխտորը լավ ծեծում են և քսում մազերից թափված տեղերը, այնքան են քսում, որ մի քանի օրից հետո մաշկը այրվում, հաստանում և սկսում է թափվել, իսկ մազերը սկսում են աճել։ Նաև հինա են դնում, իսկ մազերը աճեցնելու համար՝ սագի ճարպ։

9(1663). Մատնաշուշ — Մեղրով խմոր են սարքում և դնում վրան, մինչև ուռուցքը հասունանա. երբ այն ծակվում է, եզան լեզու կամ մահլամ (սպեղանի) են դընում վրան։

10(1664). Մատը տաք կաթի մեջ են դնում։

11(1665). Կտավհատը կաթով եփում և դնում են վերքին։

12(1666). Մոլոխոր — Աղաջրով շփում են մարմինը կամ եղինջով խփում։ Հիվանդը գնում է նաև երեք կին առած տղամարդու երդիքից կռանում և կանչում. «Ամալաքյորի դեղն ի՞նչ ա»։ Ներքևից ասում են. «Մե կտոր խացա»։ Հացը երդիքից տալիս են, հիվանդը ուտում և իջնում է ցած։ Թոնրի ծխից գլխացավ առաջանալու կամ թունավորվելու դեպքում թթվի ջուր են խմում կամ թթու թան։

13(1667). Հաճախ միզելու դեպքում — Կաթն ու կտավհատը եռացնում են և հիվանդին նստեցնում վրան, աղյուս են տաքացնում դնում ոտքերի տակ. եփում են փիփերթ կոչված բույսը և ջուրը խմում։

14(1668). Միզակապության ժամանակ — Ավելուկը խաշում են և խմում։

15(1669). Քնաբեր միջոց — Օգտագործում են խաշխաշ բույսը։

16(1670). Վախենալու դեպքում — Մեզ են խմեցնում։

17(1671). Էրեթիկ կոչված հիվանդությունը բուժում են բրինձի յուղով. նախապես այրում են բրինձը, ապա անջատված յուղը քսում վերքին։

18(1672). Կողմացավի դեպքում — Խնկից յախու են դնում։ Խունկը մանրում են, կապույտ թուղթը գցում օղու մեջ, հանում, խունկը թանզիֆով մաղում, լցնում թղթի վրա և կապում, եթե ցավ է լինում, յախուն կպչում է, եթե ոչ՝ չի կպչում։ Բացի յախուից, նաև ցավոտ տեղը օղիով շփում են։

## ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

*Ժողովածուի նյութերը ծանոթագրված են աղյուսակ 3-ում, ուր տեղեկությունները տրվում են ըստ ժողովածուի բաժինների և ներքին ստորաբաժանումների ալբենական համարակալումների։*

*Հեքիաթները, զրույցները, ավանդությունները և երգերը համարակալված են և ծանոթագրված։ Տախտակում կրկնվող որոշ համարները հետևանք են արխիվային նյութերի խառը համարակալման, այսինքն՝ նյութերն այնտեղ համարակալված են ոչ ըստ որոշակի ժանրի, այլ խառը։*

*Ծանոթագրությունների տախտակում տրվում են նյութերի հիմնական ավյալները՝ նյութի ֆոնդի համարը, նյութի ծագումը, գրառման թիվն ու ասացողը, զուգահեռաբար տրվում են հեքիաթների-զրույցների մոտիվային զուգահեռները. ինչպես հայկական տպագիր այլ աղբյուրներում, նույնպես և հարևան այլ ժողովուրդների բանահյուսական ստեղծագործությունների հետ համառոտագրությամբ, նշված է նաև տվյալ ստեղծագործության կյանք-համարը։*

*Այնուհետև տրվում են նրանց մոտիվների միջազգային զուգահեռների համարներն ըստ ֆիննական ֆոլկլորիստ Առնի սիստեմի։*

*Տիպաբանական խմբավորման համար հիմք են հանդիսացել նույն ժողովածուում առկա հեքիաթների, զրույցների մոտիվները, հիմնվել նաև ամբողջական հեքիաթից և ապա դանազան միջադեպերում այս կամ այն մոտիվի առկայության փաստից։*

*Աղյուսակ № 3*

| Նյութի համարը | Ֆոնդի համարը* | Նյութի գրառման վայրը և ծագումը | Գրառման տարեթիվը | Ասացողը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ա 1(1) | FG։0089—0130 | Մարտունի<Ալաշկերտ Մանգասար գ. | 1973 | Մարուս Մելքոնյան |
| 2(2) | FG։0001—0056 | Մարտունի<Ալաշկերտ Մուշ | 1975 | Հայկուշ Մկրտչյան Տոլսեման Ագլեմանյան |
| | FG։0131—0164 | Մարտունի<Ալաշկերտ Բաքնոս գ. | | Հովհաննես Վրթոյան |
| 3(3) | FG։5917—5972 | Մարտունի<Ալաշկերտ Բաքնոս գ. | 1973 | Հովհաննես Վրթոյան |
| 4(4) | FG։0057—0084 | Վարդենիս<Դիադին | 1977 | Հակո Կոլոսյան |
| բ 1(5) | FG։0165—0212 | Մարտունի<Ալաշկերտ, Մանգասար գ. | 1973 | Դևոտմ Ավետիսյան |
| 2(6) | FG։5773—5786 | Մարտունի<Մուշ | 1974 | Հայկուշ Մկրտչյան |
| գ 3(7) | FG։0281—0300 | Մարտունի<Ալաշկերտ Մանգասար գ. | 1972 | Դևոտմ Ավետիսյան |
| 4(8) | FG։0327—0346 | Մարտունի<Ալաշկերտ Մանգասար գ. | 1973 | — » — |
| դ 1(9) | FG։0581—0590; ՀԺՀ II, 23, 501. VI. 224, mC № 1, AMC 101; БНС 44. СНД №51 ГНС 24, 42, AaTh№ 301 | Մարտունի<Ալաշկերտ | 1976 | — » — |
| 2(10) | FG։5971—5992, ՀԺՀ VI, 398, 274 AMC 145, AaTh № 449 | Մարտունի<Ալաշկերտ | 1973 | — » — |
| 3(11) | FG։0489—0494 | Վարդենիս<Դիադին | 1977 | Շողո Մելքոնյան |

* *Հեքիաթների ծանոթագրություններում (1(9)—59(68)) ֆոնդի համարին հաջորդում են այն աղբյուրների համառոտագրությունները, որոնք կան տվյալ հեքիաթի զուգահեռ մոտիվներում։*

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 4(12) | FG : 5847—5854, ՀԺՀ VIII, 348, 622, ՄՀ 191, mC № 7, ВНС 109, БНС 120, AaTh № 560 | Մարտունի<Ալաշկերտ | 1976 | Գեղամ Ավետիսյան |
| 5(13) | FG : 0379—0388, ՀԺՀ I, 161 IV, 105, VI 74, IX 92, СНД № 88, ÅaTh №707 | — » — | 1974 | — » — |
| 6(14) | FG : 0553—0580 ՀԺՀ I, 161, IV 105, 302, VI 74, IX 92, СНД №88, БНС, 111, AaTh №707 | — » — | 1973 | — » — |
| 7(15) | FG : 0507—0522, ՀԺՀ IV 274 V 490 VI 398, VIII 532 AmC 145, AaTh №449 | — » — | | Մարուս Մելքոնյան |
| 8(16) | FG : 5839—5846, ՀԺՀ VI, 285, VIII 20, ГНС 175, mC № 6, СНД № 68, Aa Th № 465 | Վարդենիս<Դիադին | 1974 | Կարինե Բարսեղյան |
| 9(17) | FG : 0467—0476, ՀԺՀ VI 285, VIII 20, ГНС 175, mC № 6, СНД № 68, Aaht № 465 | — » — | 1977 | Շողո Մելքոնյան |
| 10(18) | FG : 0495—0506, ՀԺՀ VI 285, VIII 20, ГНС 175, mC № 6, СНД № 64 Aath № 465 | | | |
| 10ա(19) | FG : 6001—6006, ՀԺՀ III 335, IV 271, X 80, AmC 243, Aath № 670 | Սևան<Բերկրի | 1971 | Հայկազ Գևորգյան |
| 11(20) | FG : 0465—0466, ՀԺՀ I 5, II 341, IV 126, VI 140, VIII 405, ԷՄ I, AmC 61, Aath № 671 | Սևան<Բերկրի | 1971 | Հայկազ Գևորգյան |
| 12(21) | FG : 5823—5831, ՀԺՀ VI 100, VIII 561, IX 92 | Մարտունի<Ալաշկերտ | 1974 | Գեղամ Ավետիսյան |
| 13(22) | FG : 0523—0538, ՀԺՀ I 216, ГНС 52, СНД № 66, 72, Aath № 706 | — » — | 1972 | — » — |
| 14(23) | FG : 0545—0552, ՀԺՀ II 295 | — » — | 1976 | — » — |
| 15(24) | FG : 0481—0488, ՀԺՀ II 286, 545, AmC 586, Aath № 894 | — » — | 1976 | — » — |
| 16(25) | FG : 253—0260, ՀԺՀ VI 49, VIII 523, IX 409, AmC 145, Aath № 449 | — » — | 1974 | — » — |
| 17(26) | FG : 237—0242 | | | |
| 18(27) | FG : 0539—0544, ՀԺՐԱ FG : 6015—6020, ՀԺՀ VI 46, VIII 748 ГНС 74, 112, 224, ОНС 400, mC № 39, ВНС 159, Aath № 510 | Վարդենիս<Դիադին<br>Մարտունի<Մուշ | 1974<br>1976 | Շողո Մելքոնյան<br>Սոփեր Հովսեփյան |
| 19(28) | FG : 0351—0364 | Մարտունի<Ալաշկերտ | 1972 | Գեղամ Ավետիսյան |
| 20(29) | FG : 5891—5898. КС 132 | — » — | 1973 | Նունիկ Հովհաննիսյան |
| 21(30) | FG : 5835—5838, ՀԺՀ IV 392 VIII 467, 634, ՄՀ 234, ԺՔ, AmC 453, КС 35 | Վարդենիս<Բուլանուխ | 1974 | Էլո Բաղալյան |
| 22(31) | FG : 5881—5890, AmC 586, Aath № 894 | Մարտունի<Ալաշկերտ | 1973 | Գեղամ Ավետիսյան |
| 23(32) | FG : 5855—5866 | — » — | 1977 | — » — |
| 24(33) | FG : 0619—0632, ГНС 183 | — » — | 1973 | — » — |
| 25(34) | FG : 0393—0398, БНС 96 | — » — | 1976 | — » — |
| 26(35) | FG : 0601—0610 ՀԺՀ III 360, IV 87, VIII 227, 572, IX 660, ОНС 275 | Վարդենիս<Դիադին | 1973 | Խանում Համբարձումյան |
| 27(36) | FG : 0591—0599, ՀԺՀ III 36, IV 87, VIII 227, 572, IX 660 | Մարտունի<Մուշ | 1974 | Մխիթար Կարապետյան |
| 28(37) | FG : 0399—0402, ԷՄ II 337 | Մարտունի<Ալաշկերտ | 1976 | Գեղամ Ավետիսյան |
| 29(38) | FG : 0243—0248, ԷՄ II, 337 AmC 551, Aath № 1539 | | | |
| 30(39) | FG : 0213—0228, ՀԺՀ I 512 VIII 268, AC 269, СНД №77 ГНС 194, 248, Aath № 950, 1737 A, ВНС 177 | Վարդենիս<Դիադին | 1972 | Բաան Բարսեղյան |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 31(40) | FG : 0475—0480 ՀԹՀ II 501, VI 244, mC №1, ÂmC 101, ГНС 24, 42, СНД № 51 | Վարդենիս<Դիադին | 1977 | Բաստ Բարսեղյան |
| 32(41) | FG : 0233—0236 ՀԹՀ VIII 642, AmC 554 | — » — | 1977 | Շողո Մելքոնյան |
| 33(42) | FG : 0365—0372 | Մարտունի<Մուշ | 1974 | Սուփեր Հովհաննիսյան |
| 34(43) | FG : 5867—5880 | Մարտունի<Ալաշկերտ | 1973 | Գեղամ Ավետիսյան |
| 35(44) | FG : 0407—0414 | Մարտունի<Մուշ | 1973 | Սուփեր Հովհաննիսյան |
| 36(45) | FG : 0389—0392 | Մարտունի<Ալաշկերտ | 1975 | Նունիկ Հովհաննիսյան |
| 37(46) | FG : 0457—0460 | Սևան<Բերկրի | 1971 | Հայկազ Գևորգյան |
| 38(47) | FG : 0301—0304, ГНС 97 | — » — | —»— | — » — |
| 39(48) | FG : 0439—0440, ՀԹՀ III 513 VI 172, 228, VIII 463, X 324, Մէ 183ե, mC № 48, Aath № 655 | Վարդենիս<Դիադին | 1976 | Շողո Մելքոնյան |
| 40(49) | FG : 0415—0418, ՀԹՀ III 513, VI 172, 228, VIII 463, X 324 Մէ 183ե, mC № 48, Aath № 655 | Մարտունի<Ալաշկերտ | 1972 | Գեղամ Ավետիսյան |
| 41(50) | FG : 0399—0402, ՀԹՀ III 513. VI 172 228, VIII 463, X 324, Մէ 183, b mC № 48, Aath № 655 | Վարդենիս<Դիադին | 1977 | Ֆրունզե Դավթյան |
| 42(51) | FG : 0471—0472 | — » — | 1971 | Կարինե Բարսեղյան |
| 43(52) | FG : 0451—0452 | — » — | 1972 | Գևորգ Մազմանյան |
| 44(53) | FG : 0453—0454 | Կամո<Բայազետ | 1972 | |
| 45(54) | FG : 0456—0466 | Սևան<Բերկրի | 1971 | Հայկազ Գևորգյան |
| 46(55) | FG : 0421—0422 | Մարտունի<Ալաշկերտ | 1975 | Գեղամ Ավետիսյան |
| 47(56) | FG : 0373—0378 ՀԹՀ II 497 | Մարտունի<Մուշ | 1973 | Սուփեր Հովհաննիսյան |
| 48(57) | FG : 0447—0450 | — » — | —»— | — » — |
| 49(58) | » | — » — | —»— | — » — |
| 50(59) | FG : 0269—0274 ՀԹՀ II 571 | Մարտունի<Ալաշկերտ | 1976 | Մկրտիչ Վարդանյան |
| 51(60) | FG : 0265—0270 | — » — | —»— | — » — |
| 52(61) | FG : 0271—0274 | | | |
| 53(62) | FG : 0275—0280 | — » — | —»— | — » — |
| 54(63) | FG : 0681—0700 | — » — | 1973 | Գեղամ Ավետիսյան |
| 56(65) | FG : 0229—0232, ՀԹՀ VIII, 645, Մէ 299 ժէ, Aath №1406A | | | |
| 57(66) | FG : 0455—0456. ՀԹՀ IV 443, ՀԹՀ VIII 645, VI 541, Մէ 229ժէ, ГНС 178 | Սևան<Բերկրի | 1971 | Հայկազ Գևորգյան |
| 58(67) | FG : 0425—0426, ՀԹՀ IV 443, VI 541 VIII 645, Մէ 229 ժէ, ГНС 178 | Կամո<Բայազետ | 1977 | Նազիկ Ղազարյան |
| 59(68) | FG : 0423—0424 ՀԹՀ VI 230, VIII 640 | — » — | 1972 | Աստղիկ Ղազարյան |
| 60(69) | FG : 0437—0438 | Մարտունի<Ալաշկերտ | 1974 | Գեղամ Ավետիսյան |
| 61(70) | FG : 0661— 662 | Կամո<Բայազետ | 1977 | Արփիկ Քեշիշյան |
| 62(71) | FG : 0473—0474 | Վարդենիս<Դիադին | 1976 | Շողո Մելքոնյան |
| 63(72) | FG : 0655—0656 | — » — | —»— | — » — |
| 64(73) | FG : 066901—066901 | Մարտունի<Ալաշկերտ | 1971 | Շուշիկ Ավետիսյան |
| 65(74) | FC : 0669—0670 | — » — | 1972 | — » — |
| 66(75) | FG : 0667,01—0667,01 | — » — | —»— | — » — |
| 67(76) | FG : 0657—0658 | Կամո<Բայազետ | 1974 | Արփիկ Քեշիշյան |
| 68(77) | FG : 0665—0666 | Կամո<Բայազետ | 1976 | — » — |
| 69(78) | FG : 0663—0664 | — » — | —»— | — » — |
| 70(79) | FG : 0647,01—0647,01 | — » — | —»— | — » — |
| 71(80) | FG : 0647,02—0647,02 | — » — | 1971 | — » — |
| 72(81) | FG : 0667—0668 ՀԹՀ IX 542 | Մարտունի<Ալաշկերտ | —»— | Շուշիկ Ավետիսյան |
| 73(82) | FG : 0649—0650 | Վարդենիս<Դիադին | —»— | Վանո Համբարձումյան |
| 74(83) | FG : 0651,01—0651,01 | Կամո<Բայազետ | —»— | Արփիկ Քեշիշյան |
| 75(84) | FG : 0673,01—0673 | Սևան<Խոյ | —»— | Մխիթար Դաուդյան |
| 76(85) | FG : 0677—0678 | — » — | —»— | — » — |
| 77(86) | FG : 0673,02—0673,02 | — » — | —»— | — » — |
| 78(87) | FG : 0671—0672 | — » — | —»— | — » — |


| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 79(88) | FG : 0671,02—0671,02 | | | |
| 80(89) | FG : 0675—0676 | Սևան<Խոյ | 1971 | Միհրան Գասպոյան |
| 81(90) | FG : 0075,01—0675,01 | — » — | —»— | — » — |
| 82(91) | FG : 0651—0652 | Վարդենիս<Դիադին | 1973 | Վանուշ Համբարձումյան |
| 83(92) | FG : 0653—0654 | — » — | 1972 | — » — |
| 84(93) | FG : 0431—0432 | Մարտունի<Մուշ | 1971 | Սոփեր Հովհաննիսյան |
| 85(94) | FG : 0433—0434 | — » — | —»— | — « — |
| 86(95) | FG : 0709—0710 | Մարտունի<Մուշ | 1971 | — » — |
| 87(96) | FG : 0441—0442 | — » — | —»— | — » — |
| 88(97) | FG : 0719—0720 | Վարդենիս | 1976 | Վարդուշ Մնացականյան |
| 89(98) | FG : 0721—0722 | Սևան<Խնուս | 1971 | Էլիզ Պետրոսյան |
| 90(99) | FG : 0723—0724 | Սևան<Ալաշկերտ | —»— | Սերոբ Մնացականյան |
| 91(100) | FG : 0725—0726 | Մարտունի<Ալաշկերտ | 1973 | Գեղամ Ավետիսյան |
| 92(101) | FG : 0727—0728 | — » — | —»— | — » — |
| II. 1(102)— 537(638) | FG : 0729—2148 | Մարտունի<Ալաշկերտ<br>Վարդենիս<br>Կամո<Բայազետ<br>Սևան<Խոյ<br>Մարտունի<Մուշ<br>Սևան<Բերկրի | 1971—1977 | Կարինե Բարսեղյան<br>Մաղիկ Ղազարյան<br>Գեղամ Ավետիսյան<br>Սոփեր Հովհաննիսյան<br>Շուշիկ Ավետիսյան<br>Հովհաննես Վարդանյան<br>Սիրուշ Մանուկյան<br>Հայկանուշ Պողոսյան |
| 1(639)— 20(655) | FG : 2067—2096 | Մարտունի<Ալաշկերտ | | Ծուղիկ Խոյան |
| | FG : 2099—2144. 5903—5906 | — » — | —»— | Շուշան Խոյան |
| 1(657)— 17(673) | FG : 0811—0836 | — » — | —»— | — » — |
| 1(674)— 9(682) | FG : 0183—2184, 2189—2196, 2203—2206, 2211—2232, 2287—2290, 5821—5822, 5807—6015 | — » — | | — » — |
| III. 1(717)— 37(740) | FG : 2273—2277, 2281—2284, 2293—2296, 4497—4498, 4501—4501 | Մարտունի<Ալաշկերտ<br>Վարդենիս<br>Կամո<Բայազետ | 1971—1977 | Կարինե Բարսեղյան<br>Մաղիկ Ղազարյան<br>Գեղամ Ավետիսյան<br>Սոփեր Հովսեփյան<br>Շուշիկ Ավետիսյան |
| 1(741)— 566(1304) | FG : 2467—6000 | — » — | —»— | — » — |
| 1(1305)— 112(1418) | FG : 4013—4125 | | | |
| 1(1419)— 44(1462) | | — » — | —»— | — » — |
| 1(1463)— 98(1560) | | | | |
| 1(1561)— 30(1590) | | | | |
| 1(1591) | FG : 2471—4876 | Մարտունի<Ալաշկերտ<br>Վարդենիս<Դիադին<br>Կամո<Բայազետ | 1971—1977 | — » — |
| IV. 1(1592) | FG : 5707—5712 | Մարտունի<Ալաշկերտ | 1972 | Գեղամ Ավետիսյան |
| 2(1593) | FG : 5737—5738 | Վարդենիս<Դիադին | 1974 | Կարինե Բարսեղյան |
| 3(1594) | FG : 3695—3698 | — » — | —»— | — « — |
| 4(1595) | FG : 5749—5758 | — » — | —»— | — « — |
| 5(1596) | FG : 5751—5756 | — » — | —»— | — « — |
| 6(1597) | FG : 5753—5726 | — » — | —»— | — « — |
| 7(1598) | FG : 5753—5754 | — » — | —»— | — « — |
| 8(1599) | FG : 5755—5758 | — » — | —»— | — « — |
| 9(1600) | FG : 5751—5751 | — » — | —»— | — « — |
| 10(1601) | FG : 5749—5720 | — » — | —»— | — « — |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 11(1602) | FG : 5749—5750 | Վարդենիս <Դիադին | 1974 | Կարինե Բարսեղյան |
| 12(1603) | FG : 5755—5756 | Մարտունի<Մուշ | 1978 | Սոփեր Հովհաննիսյան |
| բ. 1(1604)—52(1654) | FG : 5703—5706, 5713—5720 | — » — | —» | — » — |
| գ. 1(1655)—18(1672) | FG : 5733—5736, 5669—5702 | — » — | —» | — » — |

## ԲԱՆԱՍԱՑՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Կարինե Ասատուրի Բարսեղյան—ծնվել է 1905 թ. Բասարգեչարում (Ներկայումս՝ Վարդենիս), արհեստավորի ընտանիքում։ Նախնիները Արևմտյան Հայաստանի Դիադին գյուղաքաղաքից են, գաղթել են 1828 թ.։ Ասացողն օժտված է լավ հիշողությամբ և գեղեցիկ ձայնով, պատմում և երգում է իր նախնիներից լսած հեքիաթներն ու երգերը։ Նա մեզ հաղորդել է նաև բազմաթիվ բանահյուսական մանր ժանրի առեղծվածություններ՝ առած-ասացվածքներ, հանելուկներ, դարձվածներ, ինչպես նաև աղոթքային արժեք ներկայացնող որոշ նյութեր՝ Ալաշկերտի, Դիադինի հարսանիք, ծննդյան և մահվան ծեսերին վերաբերող արժեքավոր տեղեկություններ և այլն։



Բարսեղ (Բասո) Մնացականի Բարսեղյան—ծնվել է 1903 թ. Բասարգեչարում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Նախնիները գաղթել են Դիադինի գավառից։ Մասնակցել է Հայրենական պատերազմին, վիրավորվել. վերադարձել է և մինչև կյանքի վերջը (1973 թ. հոկտեմբերը) ապրել և աշխատել է Բասարգեչարում։ Շրջանի ճանաչված և սիրված հեքիաթասացն էր և համընդհանուր հարգանք էր վայելում։ Գյուղի բնակիչները ոչ միայն հավաքվում էին նրա մոտ, այլև հրավիրում էին նրան իրենց օդանները լսելու վարպետ հեքիաթասացին։ Նա փայլուն էր, նախ, բազմաքանակ նյութի իմացությամբ և ապա ավանդական վիպասացի մեծ շնորհքով։



Հովհաննես Սահրադի Վրթոյան—ծնվել է 1903 թ. Մարտունիում։ Նախնիները Ալաշկերտի Բաքնոս գյուղից են։ Ինչպես ինքն է վկայում, «էս բոլոր պատմություններ լսած եմ մեր ջոխերուց, իմ պապուց, էնի հլա Բաքնոս հնված ժամանակ, կըսին, կպատմեր Սաանա ծռերի պատմություններ։ Օժտված լինելով պատմելու, հաղորդելու հանգարտ ու վիպական ոճով, համադյուղացիները նրան «ստատա դանդաղ» էին կոչում։ Հատկապես համադյուղացի Հայկազ Մկրտչյանի հետ համատեղ նա գունեղ և գեղեցիկ պատմում էր «Սասնա ծռերը»։ Նա իր մահկանացուն կնքեց 75 տարեկան հասակում։



Հայկազ Մկրտչյան—ծնվել է 1903 թ. Մարտունիում։ «Իմ պապեր գաղթած ա Մանկասար գյուղից, Սասունա ծռերը լսած եմ Նղոյ Արշակից հլա էրեխա ժամանակ, սովրած եմ էնորից ու ես էլ սկսել եմ պատմելը։ Այս վիպասացը մեզ հաղորդել է նաև այլ բնույթի արժեքավոր բանահյուսական նյութեր։



Մարուսյա Երվանդի Մելքոնյան—ծնվել է 1910 թ. Ներքին Ղարանլուղում։ Նախնիները գաղթել են 1928—29թթ. Ալաշկերտից։ Աշխատել է բանվոր, բուժքույր և բրիգադիր, այժմ թոշակառու է։ Մեր հարցին, թե «ումից է լսել մեր ժողովրդական վեպը, նա պատասխանեց. «Սասնա ծռերը սովորել եմ անգրագետ հորիցս, նա էլ լսել է յուր պապերից...»։



Շուշիկ Գեղամի Ավետիսյան—ծնվել է Մարտունիում 1912 թ.։ Նախնիները Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Մանգասար գյուղի վերաբնակիչներ են։ Պատմելու և երգելու շնորհքը ժառանգել է իր բազմաշնորհ հորից՝ Գեղամ Ավետիսյանից, որի ձայնակցությամբ հաճախ երգում էր ժողովրդական երգեր, խաղիկներ (ջան-գյուլումաններ)։



Գեղամ Մավջութի Ավետիսյան—ծնվել է Մարտունիում 1880 թ. չքավոր հողագործ գյուղացու ընտանիքում։ Վաղ հասակում զրկվելով տնտեսությունից, դառնում է ավելի ինքնամփոփ ու խորախորհուրդ։ Նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի գավառի Մանգասար գյուղից։ Ասացողն օժտված էր գեղեցիկ ձայնով, լավ հիշողությամբ, պատմելու վիպական ավանդական ոճով։ Գեղամ Ավետիսյանից գրի են առնված բազմաթիվ հեքիաթներ, «Վաթսունմեկ հեքիաթ գիտեմ,—ասում էր բանասացը,—մեկը մեկու չկրկնա...» և իրավամբ նրա հաղորդած նյութերը, լինեն դրանք հեքիաթ կամ զրույց, վեպ թե առակ, աչքի են ընկնում իրենց ընդգծված ավանդականությամբ և հնաշունչ ոգով։

Շնորհաշատ բանասացն իր մահկանացուն կնքեց 1978 թ.։



Սոխեր Ավետիսի Հովհաննիսյան—ծնվել է Մարտունու շրջանի Վերին Ղարանլուղ (այժմ՝ Գեղհովիտ) գյուղում 1910 թ., հողագործի ընտանիքում։ Որբ մանկությունը և չարքաշ կյանքը իրենց կնիքն էին դրել այս ասացողի երգացանկի վրա. երգում էր թախծալի երգեր, խաղիկներ։ Մեծ ոգևորությամբ և սիրով էր հաղորդում իմացած հնագույն նյութեր։ Նախնիները արևմտյան Հայաստանի Մուշ գավառից են։

# ԲԱՌԱՐԱՆ

*Բառարանն ընդգրկում է ժողովածուի դժվար հասկանալի բարբառային բառերն իրենց բացատրություններով։*

*Բառերը բացատրվում են այն իմաստով, որով օգտագործված են սույն ժողովածուի մեջ։ Բառերի նշանակությունը ճշտելու համար հիմք է ընդունված ասացողների բացատրությունները, ինչպես նաև որոշ բառարաններ՝*

*1. Թուրքերենէ փոխառնված բառեր հայերէնի մէջ, էմինեան ազգագրական ժողովածուն, հ. Գ, Մոսկվա-Վաղարշապատ, 1862։*

*2. Հայերէն գաւառական բառարան, էմինեան ազգագրական ժողովածուն, հ. Թ, Թիֆլիս, 1913։*

*3. Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912 թ.։*

*Օգտագործվել են նաև մի շարք բանահյուսական ժողովածուների բառարաններ։*

*Արեշում—մետաքս*
*Ադախսող—անամոթ*
*Ադև—մայրիկ*
*Ալանի—հայտնի*
*Ալաջա—ծաղկավոր*
*Ալաշխի փետ—վրանի, օթայի փայտ*
*Ալբալ—խակուչն*
*Ալընջի—գնորդ*
*Ախալբրտանք—եղբայրներ*
*Ակ—աղբյուր*
*Ակնատ—թակարդ*
*Ակնդկլա—աչքալուլա*
*Ակռատ—կնսօրյա ճաշ*
*Աղոթրան—լուսաբաց, արևելք*
*Աղու—քույն*
*Ամագ—երախտիք*
*Ամանաք—1. պատվիր, 2. պատանդ, 3. ավանդ*
*Ամեղ տեղ—անմեղ տեղը*
*Այիբ—պախասություն*
*Այլոր, ակլոր—աքլոր, աքաղաղ*
*Անգյուման—1, անհույս, 2. անապահով*
*Անըղնակ, անըղ, անեղ—ծխածան*
*Անժուռ—անյուղ, կերակուր*
*Անմադաք—առանց օգնության*
*Անմախ—անմահ*
*Անջախ—հազիվ*
*Աշըղ—1. աշուղ, 2. սիրահար*
*Աչեք—1. զարմանք, 2. հրաշք*
*Ասսված—աստված*
*Աքյար—ղորք*
*Ալընղուշ—որս*
*Ավիրտվկ—ավերված*
*Ավոգ—օրվա*
*Ավուտա—հավատա*
*Արխալին—ապահով*
*Արնախում—վրիժառու*
*Արնախնղող—արյան հնդող*
*Ափախավար—կույր*

*Բարաք—համապատասխան, ներդաշնակ*
*Բաբելական կրակ—Բաբելոնի կրակ, երկրաշարժի հետ կապված*
*Բադյա—պղնձե չրաման*
*Բաղդգյան—վաճառական*
*Բալքի—գոնե*
*Բալեք—զավակներ*
*Բալքյամ—գուցե*
*Բանխս, բանխք, պանխք—բանալի*
*Բաղչա—պարտեզ*
*Բանդ հելա—կանգնեցի*
*Բանցր—բանծր—բարձր*
*Բառադալի—1. անգործ, 2. անպետք, 3. զուր*
*Բարխան—ունեցվածք*
*Բարնեբար—հավասար*
*Բրանճ—գիսախոտիվ*
*Բնդյումա—1. անօգնական, 2. անհույս*
*Բննամուս—աննամուս*
*Բնակռել—բնակվել*
*Բոլուք—խումբ*
*Բոպիյ—բոպնչիյ—ոտաբոբիկ*
*Բուխերիկ—օջախ*
*Բունքարակ ըլնի—վայելելի լինի, շնորհավոր*

*Գաբի տակ—բույսի արմատ*
*Դախ—ժամանակ*
*Դնատանք—գեղիններ*
*Գի—գայլ*
*Գիլու փոստ—գայլի մորթի*
*Գինդ, գլինդ—օղեր, ականջօղեր*
*Գմեղ—գյոմեղ—գոմեղ*
*Գյազ—երկարության չափ*

Գյաղան—գաղան
Գյախ—ժամանակ
Գյախ բը գյախ—տեղն ու տեղը, ժամանակ առ ժամանակ
Գյամչի—նավավար
Գյառմշու—ձկուն ձիպոտ
Գյարդան—վիզ, պարանոց
Գյառտ—վէրքոտ, քոսոտ
Գյողալ—գնդեցիկ
Գոլ—լիճ, լճակ
Գոմփ—բռունցք
Գոռեննալ—1. հիվանդանալ, անդամալույծ լինել, 2. անպետքանալ

Գուլա—լալիս է
Գփել—ընկնել, փռան ընկնել

Դան—1. այնտեղ, 2. հատիկ
Դանկտել—դանակով կտրատել
Դաբրադար—դռնեդուռ ընկնել, թափառել
Դարեր—բլուրներ
Դևե—ուղտ
Դիլաք—աղաչանք, խնդիրք
Դիվոտած—կատաղած, զայրացած
Դիք—բարձր տեղ
Դյուքան—խանութ
Դուշման—թշնամի
Դուբան—հարթ, հարթավայր

Եդո—հետո
Եթում—որը
Ելման—ելած, փոթորկած, վարարած
Եղունդ—աղավնի
Եսոտ—բարկացկոտ
Սախր—տե՛ս հեսիր
Սեհեռու—նո և հեռու
Սքյա—ահագին
Զարնել—նիհարել
Զաբուն—նիհար
Զալըմ—բռնակալ
Զալնջի—այրի
Զախախորել—զարհուրել
Զայ անել—փչացնել, ոչնչացնել
Զանել—խոել, հարվածել
Զանալու—1. գնդեցիկ, 2. հրաշալի
Զաու, զաուցել—հեռու, հեռացնել
Զաուանց—հեռվից
Զարդանդիլ—սաբսափել
Զարպապ—ոսկեկար բանվածք, գործվածք
Ձնշիլ—շղթա
Ձընդռուն—զնգզնգոց, աղմուկ, աղաղակ
Ձլֆեր—1. հյուսած մազեր, 2. խոպոպներ
Ձոզան—հով տեղ, ամառանոց
Ձուլում—աղետ, չարիք

Էդմալ—այդպես
Էլ—ուրիշ
Էլիկապար—պատիվ, նամուս
Էնդոր—նրան
Էնել—անել, շինել
Էնկդար—էնգաատար—այնքան

Էրաղ—օղի
Էրմունգ—արմունկ, բազուկ
Ըդմալ—այդպես
Ընդոր—նրան
Ըշկոլ—գպրոց
Ըռուսեք—ռուս

Թաբատուկ—քավիշե
Թադարեք—պատրաստություն
Թաղդրուն—նորից, կրկին
Թաղի—բարակ (շուն)
Թալել—նեաել, գցել
Թաղմնել—ապպոլրել, նկատել
Թամանդար էնել—գլուխ տալ, ողջունել
Թամուդ—մաքուր
Թևշի—իլիկ
Թմախքյաշ—աչքածակ, փափագել, ընչասեր
Թոանա—ծաղրել
Թուլա—շան լակոտ

Ժխշել—շարժել
Ժոամ—անգամ

Իբրուղ լադյան—լվացվելու հարմարանք
Իզ—հետք
Իլղար, իրղար—սիրո պայման, խոստում
Ինչ բաուր—ինչ կերպ
Ինչոր—ինչպես որ
Իշացնք—հիշեցնք
Իտա—այդ
Իրիշկել—նայել
Իրիկվորե—երեկոյան
Իցկել—գցել

Լագլագ—արագիլ
Լազաթ—հաճույք, համ
Լալա—1. Քաղաքորի օդնականն, 2. կակաչ
Լաշիկ—կանացի գլխաշոր
Լաստիկ—սաստիկ
Լեփ—տափակ քարի կտոր
Լրննել—լցնել
Լման—նման
Լմնցավ—լրացավ
Լուսու աստղ—Արուսյակ

Խա—այո
Խազնա—դանձարան
Խաթր—պատիվ, սեր, հարգանք
Խալած—հալած
Խալիվոր, խլիվոր—հալիվոր, պատռմլալ ծերունի
Խալվաթ—մենուսի, առանձին
Խամրել—համրել
Խամ—համ
Խայնել—հագնել
Խայան—մանրած հաշան
Խանք—շունչ
Խանչիմ—կանչեմ
Խառնկաթ—խաչերկաթ՝ քոների վրա դնելու
Խարամ—հարամ, պիղծ
Խզմաթ—ծառայություն
Խելքսուն—առավոտյան

Հին—հին
Հլսել—վերջանալ
Հլսուկ—վերջացած
Հղնդ—հնդող
Հմրել—համրել
Հորուկ—հորած
Հորթել—մաքրել, հարդարել
Հոնշել—ծախսել
Հորաթա—դրուցը, խոսք
Հոր—հոդի
Հրբուկ—փշացած, ալեփլած
Հրիսա—հարիսա
Հուրդա—մանրոն (դրամ), մանրադրամ
Հուրպեի—դարերութիւն, պանդխտութիւն
Ծծդալ—ծիծաղել
Ծոռր ա—սիրահարվիլ է
Ծուռկ ա—1. սիրահարված, 2. սիրահար
Ծուռ—խնձոր

Կաղան—տե՛ս գյաղան
Կանմադ—համառ
Կառկառ—ապուավ
Կաբրբ—պանդուխտ
Կինդ—տե՛ս դինդ
Կլել—խլել
Կյումաշ—տե՛ս գմեշ
Կնտուկ—խուզած
Կոտկերբրա—կրկա
Կոյրել—կոտրել
Կոտվ—եղյամ
Կոռթ—հանկ
Կոռնձ—պանդուր
Կրաղ—եզր
Կուրիսուկ, կուրսուկ—կորած
Կութի—կզակի

Հադիա—նվեր, պարգև
Հազ անել—ախորժել, սիրել
Հախ—1. վարձ, 2. իրավունք
Հախպուր, հախուր—աղբյուր
Հանդիկա—աշքալուս
Հանքչնալ—ուշանալ
Հայրան—դմայլած
Հաշկ, հրաշք—աշք
Հաշառ, աճառ, աշառ—արբյառ
Հառավդուն, հառանտուն—առավոտ
Հառնջ, հառնճ—առաջ
Հառիք—առաստաղ
Հառճին—առաջին
Հասրաթ—կարոտ
Հավա—օդ
Հափլփել—մեկի մեջ ձեռքով շորափել, խարխափել
Հնգիր—դերի
Հնաբ—հաշիվ
Հնքիմ—բժիշկ
Հղմեն—բոլոր
Հընցավ—անցավ
Հրրիկվորե—երեկոյից ի վեր
Հցկել—գցել
Համա—այգպիսի
Հոքլի մոտ—անբան, անանահա

Հռկել—նեղանալ, խռովել
Հուդա—այստեղ
Հուրա—իր (յուր)
Հուրին-հուրին—իրեն-իրեն
Հուքմաթ—իշխանություն

Զգյաբա—զգեստ
Զիաթողա—ձիաշալ
Զիթխած—ձիթհանք
Զձուա—հնոցի

Ղաբուլ անել—ընդունել, հանդուրժել
Ղայիմ—ամուր, պինդ
Ղանշա—կանչիր
Ղանչեք—կանչեք
Ղանչել—կանչել
Ղատար—այնքան շափ
Ղարավաշ—աղախին
Ղարթ—3—4 տարեկան մատղաշ ոչխար
Ղոսլաթ—ուժ
Ղըղըր—չափ
Ղլալ—դեր
Ղոդա—կլոր քար
Ղոլթուղ—կոնատաակ
Ղոշուն—ղորթ
Ղորթ—ուղիղ, ճշմարիտ
Ղուլա—կլոր քար
Ղուրբան, կուրբան—մատաղ
Ղաա էնել—զրուցել

Ճամպախա—ճանապարհ
Ճիժ—երեխա, ճժեր—երեխաներ
Ճիկ-վիկ անել—զաղտագողի նայել
Ճոթ—կատր

Մալ—1. անասուն, 2. ապրանք
Մալուլ—մոլոր, շիվար
Մախաման—մահվան
Մայլա—փողոց, թաղ, թաղամաս
Մայրում—ղուրկ
Մանզիլ—տարածություն
Մասլաթ էնել—զրուցել
Մեչկա—ժողով, խնջույք
Մզրախա—նիզակ
Միզար—գոդնոց
Միլաթ—ժողովուրդ
Միհլամ—սպեղանի
Մկա—այժմ, հիմա
Մկաուց—այժմվանից
Մուլք—կալվածք
Մուխտառ—կեղտոտ
Մունաֆաթ—խնդիրք, հանձնարարություն

Յախա—օձիք
Յարա—վերք
Յոնջա—առվույտ
Նա—ոչ

Նաղար առնել—չարահնել, աչքով տալ
Նախըգնա—նախրատեղ
Նաղըլ—զրույց
Նաֆաա—շունչ
Նիաթ-զիաթ—տխուր, անտրամադիր

Նոխազ—սիամոր
Նուկ—բույս

Շաֆթալու—դեղձ
Շխտկել—շտկել, ուղղել
Շխրիկ—կնասր, կնսրար
Շլկել—շալակել
Շհադ—վկա
Շրիդ—պարան

Ոսխաթ—կտակ
Ոտաց—ոտքերի

Չհշիդ—տնեսակ
Չոլ—ամայի դաշտ
Չուխա—գործվածք
Չում—մինչև
Չուրի—մինչև

Պաք—1. պահք, պաս, 2. համբույր
Պոյախչի—ներկարար
Պոյիկ—բոյ, հասակ
Պռինձեր—շրթունքներ

Ջալլադ—դահիճ
Ջախչի—շրաղացի
Ջահրա—ճախարակ
Ջաղամաթ—ժողովուրդ
Ջամդակ—մարմին
Ջանո—աղախին
Ջաֆա—նեղություն
Ջոջ—մեծ
Ջուխտ—մի զույգ
Ջուղար—լուր, պատասխան

Ռահմ—գութ
Ռամ անել—գուշակել—Ռամդար—գուշակող
Ռանդ—գույն
Ռավել—1. արտերի միջակը, 2. բաժանման կետ

Սաբախտան—առավոտյան
Սաբր—համբերություն
Սադաղա, սադաղեն—շնորհիվ
Սալվի—սոճի
Սախատ—հաշմանդամ
Սայսոն—ափսե
Սարխոշ—գինով, խմած
Սաքան—բաժակ
Սեֆիլ—խնդճ
Սթար—հնարավորություն, միջոց, ապրուստ
Սոյ—ցեղ
Սոլ—կողմ
Սրախ—սրահ, նախասենյակ
Սրմաթել—ոսկեթել

Վայխա—դավաճան
Վայխություն—դավաճանություն
Վասխաթ—կտակ
Վարամ—վերք, արյուն, թարախ
Վերան—ավեր
Վերու—վայրի
Վիր—ում
Վլալ—լվալ
Վլացք—լվացք

Տասթմալ—թաշկինակ
Տափել—թաքնվել
Տիլ—ցեխ
Տկեն—տակից
Տկլոզ—մերկ
Տոճկալ—թուկոտել
Տուտ—պոշ
Տուտաղ—բանտարկյալ, բռնավոր

Ցողալ—անձրև մաղել
Ցուցք—այլանդակ, տարօրինակ, խեղկատակ

Ուզնգան—խնամախոս
Ումբր—կլանք
Ումուտ—հույս, ապավեն
Ուշիկ—կամացուկ

Փաթ—ծալք
Փարա—փող
Փարշ—կուլա
Փեհլևան—քաջ, ըմբիշ, լարախաղաց
Փեչքեշ—նվեր
Փոշման—զղջալ
Փուտ—փտած
Քաֆուր—անաստված
Քիմի—հենց, պես (գալուն պես)
Քիսիկ—քսակ
Քյաշկե-Երանի քե
Քյոմել—հավաքվել
Քյոքյաշ—քարշ գալով, քարշ ընկած
Քրդու դուա—քրդի կին
Քուֆր—հայհոյանք

Օղրել—ծռել
Օլթղել—մեջտեղ հանել
Օլում—մահ
Օղմել—հենվել
Օղորթ—եշմարիտ
Օղուր—համար
Օրթլաղ—մեջտեղ

Ֆինջան—փոքր բաս
Ֆլան—այսինչը
Ֆշանդ—պարկուճ

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. АБС—Абхазские народные сказки, Сухуми, 1959
2. АС —Армянские народные сказки, состав. М. Шагинян, М , 1933
3. АТС—Азербайджанские тюркские сказки, состав. Багрия, М., 1935
4. БНС—Болгарские народные сказки, М., 1959
5. ВНС—Венгерские народные сказки, состав. А. Гидаш, М., 1953
6. ГНС—Грузинские народные сказки, состав. Н. Долидзе, Тбилиси, 1971
7. КС —Курдские сказки, состав. И. Фаризов, Руденко, М.. 1959
8. ОНС—Осетинские народные сказки, М., 1959
9. СНД—Сказки народов Дагестана, состав. Х. Халилов, М., 1965
10. ТС —Турецкие народные сказки, состав. Цветинович, Грюнбе,г, М., 1967
11. Aath—The Jypes of the Folkate. A classification and Bibliography Antti Aarne's, Translated and Elarged by stith Thompson, second Revision, Helsinki, 1961


*1. ԷԱԺԱ—Էմինյան ազգագրական ժողովածու, հ. 1, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901*

*2. ԷԱԺԲ—Էմինյան ազգագրական ժողովածու, հ. 2, Մոսկվա-Վաղարշապատ, 1901*

*3. ԷԱԺԸ—«Էմինյան ազգագրական ժողովածուն», հ. 8, Մոսկվա-Նախիջևան, 1911*

*4. ՀԺԲԱ—Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ռ. Գրիգորյանի ֆոնդ*

*5. ՀԺՀ —Հայ ժողովրդական հեքիաթներ. հ. I (Այրարատ), Երևան, 1958—1959*

*6. ՀԺՀ —Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. II (Այրարատ), Երևան, 1959*

*7. ՀԺՀ —Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. III (Այրարատ), Երևան, 1962*

*8. ՀԺՀ —Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. IV (Բասեն), Երևան, 1963*

*9. ՀԺՀ —Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI (Ղարաբաղ), Երևան, 1973*

*10. ՀԺՀ —Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VIII (Լոռի), Երևան, 1977*

*11. ՀԺՀ —Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. IX (Ալաշկերտ), Երևան, 1968*

*12. ՀԺՀ —Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. X (Մուշ, Բուլանըխ), Երևան, 1967*

*1. Մ. Աբեղյան, Երկեր, Դ, Երևան, 1970*

*2. Ռ. Հ. Բաղդասյան, Հայերեն բարբառներ, Սևանա լճի ավազանի խոսվածքները, Երևան, 1972*

*3. Կոստանեին Սրզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ և յուր ֆերթվածներ, Վենետիկ, Ս. Ղազար, 1905*

*4. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1961*

*5. Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910*

*6. Բ. Զուզասպյան, Հայ-իրանական գրական առընչություններ, Երևան, 1963*

*7. «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ», Վաղարշապատ, 1884*

## РЕЗЮМЕ


Фольклорно-этнографический материал сборника «Гегаркуник» (историческое название большей части Севанского бассейна) собран составителем в течение 1971—1977 гг.

В населенных пунктах районов Севанского бассейна (Севан, Камо, Мартуни, Варденис) было записано свыше 6 тысяч единиц фольклорно-этнографического материала. Весь материал был обработан и документирован по армянской системе доктора филологических наук И. Г. Левина, кодируемой в научной литературе—АСЛ, и хранится в фольклорном архиве Института археологии и этнографии АН АрмССР под номером FG № 0001—6080.

Из всего собранного материала в сборник вошли лишь 4273 фольклорно-этнографические единицы. Их сказители—потомки переселенцев из разных этнографических регионов Западной Армении. Поэтому фольклорно-этнографический материал данного региона исторически не совпадает с современными географическими границами его бытования, а корнями уходит в далекое прошлое и охватывает несколько этнорегионов Западной Армении—Муш, Алашкерт, Диадин, Баязет, Ван, Битлис, Хой и др.

Этим и обусловлена богатая многообразность фольклорного наследия армян Севанского бассейна, его традиционность и разнодиалектность.

Материал сборника «Гегаркуник» состоит из следующих разделов и подразделов:

*I Эпический фольклор*

а Армянский народный эпос (Сасна црер)

б. Армянские версии иранского эпоса (Рустам Зал)

в. Армянские версии курдских эпических сказаний (Алиф и Клеф, Абусет)

г. Сказки, притчи, басни, предания.

*II Лирический фольклор*

а. Песенки-четверостишия

б. Танцевально-хоровые песни

в. Свадебные песни

г. Песни-плачи

д. Рекрутские и патриотические песни

е. Разные песни

*III Формулы*

а. Пословицы и поговорки

б. Загадки

в. Пожелания и благословения

г. Проклятия

д. Заговоры и молитвы

е. Народные фразы

IV. *Народные обряды, верования, медицина.*

Сборник снабжен *Предисловием*, где раскрывается устойчивость фольклорных традиций в разных этнорегиональных группах, на фоне исторических перемещений. *Комментариями*, указывающими половозрастные данные сказителей, время и место записи, место происхождения фольклорных материалов; указываются также идентичные мотивы армянских сказок со сказочным репертуаром других народов по указателю Аарне-Томпсона, *Биографиями* сказителей. *Словарем* диалектных слов, нотными записями, фотоснимками сказителей, географической картой, таблицами и др.

Большинство материала сборника публикуется впервые. В песенный репертуар Гегаркуника привлечены неопубликованные песни, записанные в районах мало обследованных фольклористами, они иногда представляют лучшие варианты уже известных текстов. Эти неопубликованные записи преследуют цель, с одной стороны, привлечь внимание специалистов на интересные и ценные первоисточники, с другой—спасают от забвения и потери фольклорно-этнографическое наследие нескольких этнических групп армянского населения.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


*Առաջաբան* . . . . . 5

### ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

*ա. Հայ ժողովրդական վեպ*

*1(1). Սասունցի Դավիթի պատմություն* . . . . . 19
*2(2). Սասունա Դավիթ* . . . . . 28
*3(3). Սասունա ծռերի պատմություննեն* . . . . . 34
*4(4). Սասնա ծռեր* . . . . . 46

*բ. Իրաճական վեպ*

*1(5). Ջալի որդի Ռստամ* . . . . . 54
*2(6). Ջալի որդի Ըզատամ* . . . . . 62

*գ. Քրդական վեպ*

*3(7). Ալիֆն ու Ֆլեֆը* . . . . . 66
*4(8). Աբուսաիթ քեալալ* . . . . . 70

*դ. Հեքիաթներ, զրույցներ, առակներ*

*1(9). Թագավորի բաղը* . . . . . 74
*2(10). Սինամ թագավորի խնքաթը* . . . . . 76
*3(11). Թագավորի խնքաթ* . . . . . 81
*4(12). Կատվու քալիֆ* . . . . . 82
*5(13). Շերին շահ* . . . . . 84
*6(14). Անժառանգ թագավոր* . . . . . 86
*7(15). Աչեքսանդալի խնքաթը* . . . . . 92
*8(16). Թուշօղլու խնքաթը* . . . . . 95
*9(17). Իրնք աղա, մև մեր* . . . . . 96
*10(18). Կոտի խնքաթ* . . . . . 97
*10ա(19). Ավչի Ահմադ* . . . . . 100
*11(20). Իմաստուն աղեն* . . . . . 101
*12(21). Դինդրմազ խանում* . . . . . 102
*13(22). Քյաչլու խնքաթ* . . . . . 105
*14(23). Ղասաբն Ջամարդ* . . . . . 108
*15(24). Լպուտ* . . . . . 109
*16(25). Կզօղլան* . . . . . 111
*17(26). Աղքատի խնքաթ* . . . . . 113
*18(27). Խորթ մերը* . . . . . 114
*19(28). Պահվու տղեն* . . . . . 115
*20(29). Խունարուվ աղչիկ* . . . . . 118
*21(30). Լավն ու վատը* . . . . . 119
*22(31). Սուլթան Մուրադ թագավորի խնքաթը* . . . . . 120
*23(32). Սուլթան Մուրադի խնքաթը* . . . . . 122
*24(33). Աղքատոց հկհղնցի* . . . . . 124
*25(34). Աղքատ մարդը* . . . . . 127
*26(35). Ախպեր Թումո* . . . . . 128
*27(36). Ախպեր Թումոն* . . . . . 130
*28(37). Երկու ախպեր* . . . . . 132
*29(38). Երգու ախպեր* . . . . . 132
*30(39). Ալնքաանի հնքիաթը* . . . . . 133
*31(40). Երկ* . . . . . 137

32(41). Քաշալ տղեն . . . . . 138
33(42). Ագահ տերդեր . . . . . 138
34(43). Ետր խրատները փորձող տղեն . . . . . 140
35(44). Արշակ Թագավոր . . . . . 144
36(45). Կդրուկ ոտներովի աստված . . . . . 145
37(46). Նհախի հախը դուս կգա . . . . . 146
38(47). Իրեք հընգեր . . . . . 147
39(48). Կշեռքի որ յան ծանտր ա, էն յան կքյաշեն . . . . . 147
40(49). Շան չիգլար . . . . . 148
41(50). Հարուստի խոփ մուկ կուտա... . . . . 148
42(51). Խելք պտի ըլի, որ զամաթ ըլի . . . . . 149
43(52). Ճիշտ խոսողի բերանը բաց ա . . . . . 149
44(53). Աստծու գրածը չնչել չի լինի . . . . . 150
45(54). Ինչ անես, քեզ կանես . . . . . 150
46(55). Հաբիբ Նաչարի խեքաթը . . . . . 150
47(56). Ըսթավու էլ չմնա . . . . . 151
48(57). Դանադան Բալուլի Թագավորություն . . . . . 151
49(58). Դանանդան Բալուլի խարս ուզելը . . . . . 152
50(59). Շահ Աբաս . . . . . 152
51(60). Շահ Աբաս . . . . . 153
52(61). Շահ Աբաս . . . . . 155
53(62). Շահ Աբաս . . . . . 155
54(63). Թուրքի տղեն . . . . . 156
55(64). Հուր մարթու սըռ պահող կնիկն . . . . . 157
56(65). Թամբալ մարթ . . . . . 157
57(66). Կնգան տփող մարդը . . . . . 158
58(67). Վայ պստիկ խա՞րս... . . . . 158
59(68). Կնիկն ըմալ ա մարդին ծըռցնըմ . . . . . 159
60(69). Բարի խարս . . . . . 159
61(70). Ջալմ կնիկ . . . . . 159
62(71). Ամոթով կնիկը . . . . . 160
63(72). Խնամախոս . . . . . 160
64(73). Երկու քուրդ . . . . . 160
65(74). Մի քուրդ . . . . . 160
66(75). Մարդու ձի ծախելը . . . . . 160
67(76). Տերտերոչ աղչիկ . . . . . 160
68(77). Խմող Քյավառցին . . . . . 161
69(78). Քյավառցիք . . . . . 161
70(79). Բայազիդցին... . . . . 161
71(80). Վանեցի պատավը... . . . . 161
72(81). Մարդն ա շատ Թե կնիկ . . . . . 161
73(82). Երկու գեղացի . . . . . 161
74(83). Քյավառցու էշը . . . . . 162
75(84). Արամը հացավաճառ . . . . . 162
76(85). Արամու խաշ... . . . . 162
77(86). Արայ.... . . . . 162
78(87). Արամի հյուրը . . . . . 162
79(88). Արամը հացավաճառ . . . . . 162
80(89). Արամի կովը . . . . . 162
81(90). Արամի բաժանությունը . . . . . 162
82(91). Կոլոտ Հայրապետ . . . . . 162
83(92). Կոլոտ Հայրապետ . . . . . 163
84(93). Կռունգն ու աղվես . . . . . 163
85(94). Երկու աղվես . . . . . 163
86(95). Ս. Սարգսի պատմություն . . . . . 164
87(96). Հաչի կատուն . . . . . 164

Ե. Ավանդություններ

88(97). Աղչիկ-տղի գերեզման . . . . . 165
89(98). Աղչիկ-տղի խալ-գերեզման . . . . . 165
90(99). Աղչիկ-տղի գերեզման . . . . . 166
91(100). Արամու սար (Արմասար) . . . . . 166
92(101). Ջոլաքար . . . . . 166

ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

1(102).—537(638) Աղոթքներ . . . . . 167
1(639).—16(656) Պարերգեր . . . . . 193
1(657).—17(673) Հարսանեկան երգեր . . . . . 196
1(674).— 9(682) Ողբերգեր . . . . . 199
1(683).—22(704) Վիպական, հայրենասիրական և զինվորի երգեր . . . 201
1(705).—36(740) Զանազան երգեր . . . . . 205
Երգերի նոտագրված նմուշներ . . . . . 211

ԲԱՆԱՁԵՎԵՐ

1(741).—566(1304) Առած-ասացվածներ . . . . . 219
1(1305).—114(1418) Հանելուկներ . . . . . 227
1(1419).—44(1462) Օրհնանքներ . . . . . 231
1(1463).—98(1560) Անեծքներ . . . . . 232
1(1561).—30(1590) Համալսան և այլ աղոթքներ . . . . . 239
1(1591). Դարձվածներ . . . . . 236

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԵՍԵՐ, ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ, ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

1(1592).—12(1603) Մեսեր և տոներ . . . . . 241
1(1604).—51(1654) Հավատալիքներ . . . . . 246
1(1655).—18(1672) Բժշկություն . . . . . 247
Ժողովածուի նյութերի ծանոթագրությունների աղյուսակ . . . . . 248
Բանասացների կենսագրություններ . . . . . 252
Բառարան . . . . . 255
Համառոտագրություններ և օգտագործված գրականության ցանկ . . . . 259
Ամփոփում (ռուսերեն) . . . . . 260

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ
ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
14
ՌՈՋԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

*Հրատ. խմբագիր* Փ. Հ. Մադոյան
*Կազմը* Ն. Հ. Խանզադյանի
*Գեղ. խմբագիր* Հ. Ն. Գոբծակալյան
*Տեխ. խմբագիր* Հ. Մ. Մանուչարյան
*Սրբագրիչ* Ա. Ա. Ավանեսյան

ИБ № 422

*Հանձնված է շարվածքի 5.01.81 թ.։ Ստորագրված է տպագրության 17/05.83թ.։ ՎՖ 06815*
*Չափը 60×84¹/₈։ Թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական» բարձր տպագրության։ Պայմ. 30,0 մամ., տպագր., 16,5 մամուլ։ Հրատ.-հաշվարկ. 26,1 մամուլ։ Տպաքանակ 2000։*
*Պատվեր № 245։ Գինը 4 ռ. 40 կ.։*
*ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24 գ։*
Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
*ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։*
Типография Издательства АН АрмССР, 378310, г. Эчмиадзин.